Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Л. Н. Толстой

АННА КАРЕНИНА

В ДВУХ ТОМАХ

ТОМ ВТОРОЙ

Перевод Вагана Тер-Аракеляна

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН—1979

Լ. Ն. Տոլստոյ

ԱՆՆԱ ԿԱՐԵՆԻՆԱ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Թարգմանությունը Վահան Տեր-Հակոբյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1979

Р1 Индекс ББК 84.Р1

Տոլստոյ Լ.

Տ 80 Աննա Կարենինա։ Վեպ 2 հատորով, II հրատ.,— Եր.։ Սովետ. գրող, 1979.— (Ռուս դասականների գ-րան).
Հ. 2 (Թարգմ. Վ. Տեր-Առաքելյան). էջ

«Աննա Կարենինան» Լև Տոլստոյի գլխավոր ստեղծագործություններից է։

«Պատերազմ և խաղաղություն»-ից հետո սա հեղինակի երկրորդ ստվարածավալ վեպն է, որ ընթերցողի առաջ բացում է ամբողջ մի դարաշրջան։

Վեպում զուգահեռաբար զարգանում է երեք ընտանիքների՝ Կարենինների, Օբլոնսկիների և Լևինների ընտանիքների պատմությունը։ Այնուհետև այդ երեք գծերը զարգանալով իրարից անկախ և ուրույն հետաքրքրություններով, միահյուսվում դառնում են մի ամբողջություն, արտահայտելով հեղինակի խոհերը ընտանիքի ճակատագրի մասին՝ տվյալ հասարակության մեջ։

Տ $\frac{4702010100\ (675)\ 137}{705\ (01)\ 79}$ 79 «Տ» Р1
ԳՄԴ 84. Р1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1979

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Իշխանուհի Շչերբացկայան այն կարծիքին էր, որ անհնարին է հարսանիքն անել պահքից առաջ, երբ մնացել էր հինգ շաբաթ, որովհետև օժիտի կեսն էլ չէր կարող պատրաստ լինել այդ ժամանակամիջոցին. բայց նա չէր կարող չհամաձայնել Լևինին, թե պահքից հետո էլ կարող էր շափազանց ուշ լինել, որովհետև իշխան Շչերբացկու հարազատ հորաքույրը, շատ հիվանդ ու ծեր, կարող էր շուտով մեռնել, և այն ժամանակ սուգն ավելի կուշացներ հարսանիքը։ Այդ պատճառով, վճռելով օժիտը բաժանել երկու մասի՝ մեծ ու փոքր օժիտի, իշխանուհին համաձայնեց հարսանիքն անել մինչև պահք։ Նա վճռեց, որ օժիտի փոքր մասն ամբողջովին կպատրաստի այժմ, իսկ մեծը կուղարկի հետո, և շատ բարկանում էր Լևինի վրա այն բանի համար, որ սա ո՛չ մի կերպ չէր կարողանում լրջորեն պատասխանել նրան՝ համաձա՞յն է արդյոք դրան, թե ոչ։ Այս նկատառումն ավելի ևս հարմար էր այն տեսակետից, որ նորապսակները հարսանիքից անմիջապես հետո գնում էին գյուղ, որտեղ հարկավոր չեն լինի մեծ օժիտի իրերը։

Լևինը դեռ գտնվում էր խելահեղ այն կացության մեջ, երբ թվում էր նրան, թե ինքն ու իր երջանկությունը կազմում են գոյություն ունեցող ամեն ինչի գլխավոր ու միակ նպատակը, թե պետք չէ, որ այժմ ինքը մտածի և հոգ տանի որևէ բանի մասին, թե ամեն ինչ իր համար անում են ու կանեն ուրիշները։ Նա նույնիսկ չուներ ո՛չ մի ծրագիր ու նպատակ ապագա կյանքի համար. նա դրա որոշումը թողնում էր

ուրիշներին, իմանալով, որ ամեն ինչ կլինի հիանալի։ Նրա եղբայր Սերգեյ Իվանովիչը, Ստեպան Արկադևիչը և իշխանուհին ղեկավարում էին նրան այն բանում, թե ի՞նչ պետք է աներ նա։ Նա միայն լիովին համաձայն էր այն բոլորին, ինչ առաջարկում էին իրեն։ Եղբայրը նրա համար պարտք վերցրեց դրամ, իշխանուհին խորհուրդ տվեց հարսանիքից հետո մեկնել Մոսկվայից։ Ստեպան Արկադևիչը խորհուրդ տվեց գնալ արտասահման։ Նա ամեն բանի համաձայն էր։ «Արեք այն, ինչ ուզում եք, եթե դա ուրախություն է պատճառում ձեզ։ Ես բախտավոր եմ, և իմ բախտավորությունը չի կարող լինել ո՛չ ավելի, ո՛չ պակաս, ինչ էլ անելու լինեք», մտածում էր նա։ Երբ նա հաղորդեց Կիտիին Ստեպան Արկադևիչի խորհուրդը՝ գնալ արտասահման, շատ զարմացավ, որ Կիտին չէր համաձայնում դրան, այլ ուներ իրենց ապագա կյանքի համար իր որոշակի ինչ-որ պահանջները։ Կիտին գիտեր, որ Լևինը գյուղում գործ ունի և սիրում է այն։ Ինչպես տեսնում էր Լևինը, նա ո՛չ միայն չէր հասկանում այդ գործը, այլև չէր ուզում հասկանալ։ Սակայն դա չէր խանգարում նրան՝ համարել այդ գործը շատ կարևոր։ Այդ պատճառով իսկ՝ նա գիտեր, որ իրենց տունը կլինի գյուղում, և կամենում էր գնալ ո՛չ թե արտասահման, որտեղ չպիտի ապրի, այլ այնտեղ, որտեղ կլինի իրենց տունը։ Որոշակի արտահայտված այդ դիտավորությունը զարմացրեց Լևինին։ Բայց որովհետև Լևինի համար միևնույն էր, նա անմիջապես խնդրեց Ստեպան Արկադևիչին, կարծես թե դա նրա պարտականությունն էր՝ գնալ գյուղ ու կարգավորել այնտեղ ամեն ինչ գիտցածի պես և այն ճաշակով, որով այնպես առատորեն օժտված էր նա։

— Սակայն լսի՛ր,— ասաց մի անգամ Ստեպան Արկադևիչը Լևինին՝ գյուղից վերադառնալուց հետո, որտեղ նա ամեն բան սարքել, պատրաստել էր նորապսակների գնալու համար,— դու վկայական ունե՞ս, որ խոստովանվել ես։

— Ո՛չ։ Ի՞նչ կա որ։

— Առանց դրան չի՛ կարելի պսակվել։

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ,— բացականչեց Լևինը։— Կարծեմ, արդեն ինը տարի կա, որ ես չեմ ապաշխարել։ Մտքովս էլ չի անցել։

— Լա՛վ ես,— ծիծաղելով ասաց Ստեպան Արկադևիչը,—

իսկ ինձ անվանում ես նիհիլիստ։ Բայց չէ՞ որ այդպես չի կարելի։ Դու պիտի ապաշխարես։

— Էլ ե՞րբ։ Մնացել է չորս օր։

Ստեպան Արկադևիչը դա էլ կազմակերպեց։ Ու Լևինն սկսեց ապաշխարել։ Լևինի համար, որպես չհավատացող մարդու և դրա հետ միասին ուրիշ մարդկանց հավատալիքները հարգող անհատի, շատ ծանր էր ներկա լինել ու մասնակցել եկեղեցական բոլոր ծեսերին։ Այժմ, ամեն ինչի հանդեպ զգայուն, ոգու այն փափկացած կացությամբ, որի մեջ գտնվում էր նա, ձևանալու այդ անհրաժեշտությունը ո՛չ միայն ծանր էր Լևինի համար, այլև թվում էր բոլորովին անհնարին։ Այժմ, իր փառքի, իր ծաղկման կացության մեջ, նա պետք է կամ ստեր, կամ սրբապղծեր։ Նա իրեն ի վիճակի չէր զգում անելու ո՛չ մեկը, ո՛չ մյուսը։ Բայց ինչքան նա հարցուփորձ արեց Ստեպան Արկադևիչին, թե չի՞ կարելի արդյոք վկայական ստանալ առանց ապաշխարելու, Ստեպան Արկադևիչը հայտարարեց, որ անհնարին է այդ։

— Դե դա ի՞նչ է քեզ համար՝ երկու օր։ Եվ նա շատ համակրելի, խելոք ծերուկ է։ Նա քո այդ ատամը այնպես կհանի, որ դու չես էլ նկատի։

Կանգնած առաջին պատարագին, Լևինը փորձեց թարմացնել իր մեջ պատանեկան հիշողություններն այն կրոնական ուժեղ զգացման, որ ապրել էր ինքը տասնվեցից մինչև տասնյոթ տարեկան հասակը։ Բայց նա անմիջապես համոզվեց, որ դա իր համար բոլորովին անհնարին է։ Նա փորձեց այս բոլորի վրա նայել որպես ո՛չ մի նշանակություն չունեցող դատարկ սովորույթի վրա, ինչպես այցեր անելու սովորույթը. սակայն զգաց, որ դա ևս ո՛չ մի կերպ չի կարող անել։ Կրոնի խնդրում Լևինը, ինչպես և նրա ժամանակակիցների մեծամասնությունը, գտնվում էր ամենաանորոշ վիճակում։ Հավատալ նա չէր կարող, իսկ դրա հետ միասին հաստատ համոզված չէր, որ այդ ամենն անիրավացի է։ Այդ պատճառով, ի վիճակի չլինելով հավատալու այն բանի կարևորությանը, ինչ անում էր ինքը, ոչ էլ անտարբերությամբ նայելու դրա վրա, որպես դատարկ ձևականության, այդ ապաշխարության ամբողջ ընթացքում նա ուներ անհարմար դրության և ամոթի զգացում, անելով այն, ինչ ինքը չէր հասկանում, ուստի, ինչպես ասում

էր նրան ներքին ձայնը, կատարում էր ինչ-որ կեղծ ու վատ բան։

Ժամերգության ժամանակ նա մերթ լսում էր աղոթքները, աշխատելով վերագրել նրանց այնպիսի նշանակություն, որը չէր հակասի իր հայացքներին, մերթ զգալով, որ ինքը չի կարող հասկանալ և պետք է դատապարտի դրանք, նա աշխատում էր չլսել, այլ զբաղվել իր մտքերով, դիտողություններով ու հիշողություններով, որոնք չափազանց վառ կերպով պտտվում էին նրա գլխում՝ եկեղեցում այդպես պարապ կանգնած պահին։

Նա մինչև վերջ կանգնեց պատարագին, երեկոյան ժամասացությանն ու երեկոյան սաղմոսերգությանը և մյուս օրը, վեր կենալով սովորականից ավելի վաղ, առանց թեյ խմելու, առավոտյան ժամը ութին եկավ եկեղեցի՝ լսելու առավոտյան ժամերգությունը և խոստովանվելու։

Եկեղեցում ոչ ոք չկար, բացի աղքատ մի զինվորից, երկու պառավից և եկեղեցու սպասավորներից։

Երիտասարդ սարկավագը, որի բարակ կապայի տակից երևում էր հատորոշ կերպով երկու մասի բաժանված երկար մեջքը, դիմավորեց նրան և, անմիջապես մոտենալով պատի տակ դրած փոքրիկ սեղանին, սկսեց կարդալ եկեղեցական կանոնները։ Որքան նա կարդում էր, մանավանդ հաճախ ու արագ կրկնում էր միևնույն խոսքերը՝ «տեր, ողորմյա», որոնք հնչում էին ինչպես «տողորմա, տողորմա», Լևինն զգում էր, որ իր միտքը փակված ու կնքված է և որ հարկավոր չէ այժմ ձեռք տալ, շարժել այն, թե չէ կստացվի խառնափնթորություն, ուստի, կանգնած սարկավագի ետևը, առանց լսելու և խորամուխ լինելու, շարունակում էր զբաղվել իր մտքով։ «Զարմանալի շատ արտահայտություններ ունի Կիտիի ձեռքը», մտածում էր նա, հիշելով, թե ինչպես իրենք նստել էին երեկ անկյունի սեղանի մոտ։ Նրանք խոսելու բան չունեին, ինչպես համարյա միշտ այդ ժամանակ, և Կիտին, ձեռքը դնելով սեղանին, բացում ու փակում էր ափը, և ծիծաղեց, նայելով իր ձեռքի շարժմանը։ Նա հիշեց, թե ինչպես ինքը համբուրեց այդ ձեռքը և հետո դիտում էր վարդագույն ափի վրա իրար հետ միացող գծերը։— «Նորից տողորմա», մտածեց Լևինը, խաչ հանելով, երկրպագելով ու նայելով երկրպագող սարկավագի մեջքի հկուն շարժմանը։ «Կիտին հետո վերցրեց իմ ձեռքը և նայում էր գծերը. դու շատ լավ ձեռք ունես,— ասաց նա։ Եվ Լևինը նայեց իր ձեռքին ու սարկավագի կարճ ձեռքին։ «Այո՛, հիմա շուտով կվերջանա,— մտածում էր նա։— Ո՛չ, կարծեմ էլի սկզբից,— մտածեց նա, ականջ դնելով աղոթքներին։— Ո՛չ, վերջանում է. ահա նա երկրպագում է։ Այդպես է միշտ վերջավորությունից առաջ»։

Պլիսե թևածալքով բոլորած ձեռքով աննկատելիորեն ստանալով երեք ռուբլիանոց մի թղթադրամ, սարկավագն ասաց, որ կգրի, և, նոր կոշիկներն աշխուժորեն հնչեցնելով դատարի եկեղեցու սալերի վրա, բարձրացավ բեմ։ Մի րոպեից հետո նա դուրս նայեց այնտեղից ու ձեռքով կանչեց Լևինին։ Մինչ այդ փակված միտքը շարժվեց Լևինի գլխում, բայց նա շտապեց վանել այն։ «Մի կերպ գլուխ կգա», մտածեց նա և գնաց դեպի ամբիոնը։ Նա բարձրացավ աստիճանների վրա և շուռ գալով դեպի աջ, տեսավ քահանային։ Մերուկ քահանան, ալեխառն նոսր մորուքով, հոգնած, բարի աչքերով, կանգնել էր գրակալի մոտ ու թերթում էր մաշտոցը։ Թեթև ողջունելով Լևինին, նա անմիջապես սկսեց սովոր ձայնով կարդալ աղոթքները։ Վերջացնելով, նա երկրպագեց ու դեմքով դարձավ Լևինին։

— Այստեղ անտեսանելի ներկա է Քրիստոսը, ընդունելով ձեր խոստովանությունը,— ասաց նա ու ցույց տվեց խաչելությունը։— Արդյոք հավատո՞ւմ եք դուք այն բոլորին, ինչ սովորեցնում է մեզ առաքելական սուրբ եկեղեցին,— շարունակեց քահանան, աչքերը շուռ տալով Լևինի դեմքից և ծալելով ձեռքերը փորուրարի տակ։

— Ես կասկածում էի, ես կասկածում եմ ամեն բանում,— ասաց Լևինն իր համար անախորժ ձայնով ու լռեց։

Քահանան սպասեց մի քանի վայրկյան, թե արդյոք ուրիշ ոչինչ չի՞ ասի նա, և աչքերը փակելով, արագ ասաց, «օ» տառն[1] արտասանելով Վլադիմիրի նահանգի բարբառով.

— Կասկածները հատուկ են մարդկային թուլությանը, բայց մենք պիտի աղոթենք, որպեսզի ողորմած աստված ամ-

[1] Ռուսերենում «օ» տառը շեշտից առաջ արտասանվում է որպես «ա», բայց որոշ նահանգներում այն արտասանում են իր իսկական հնչյունով։

բացնի մեզ։ Ի՞նչ առանձին մեղքեր ունեք,— ավելացրեց նա, առանց ամենափոքրիկ ընդմիջումի, կարծես աշխատելով ժամանակ չկորցնել։

— Իմ գլխավոր հանցանքը կասկածն է։ Ես ամեն բանում կասկածում եմ և մեծ մասամբ գտնվում եմ տարակուսանքի մեջ։

— Կասկածը հատուկ է մարդկային թուլությանը,— կրկնեց նույն խոսքերը քահանան։— Ինչո՞ւմն եք գլխավորապես կասկածում դուք։

— Ես ամեն բանում կասկածում եմ։ Ես երբեմն կասկածում եմ նույնիսկ աստծո գոյությանը,— ակամա ասաց Լևինը և սարսափեց իր ասածի անվայելությունից։ Սակայն, ինչպես թվում էր, Լևինի խոսքերը տպավորություն չթողեցին քահանայի վրա։

— Ի՞նչ կասկածներ կարող են լինել աստծո գոյության վերաբերյալ,— հազիվ նկատելի ժպիտով շտապ ասաց նա։

Լևինը լուռ էր։

— Ի՞նչ կասկած կարող եք ունենալ արարչի մասին, երբ դուք նայում եք նրա արարածներին,— շարունակեց քահանան արագ, սովոր խոսելաձևով։— Ո՞վ է զարդարել երկնակամարը լուսատուներով։ Ո՞վ է պշրել երկիրն իր գեղեցկությամբ։ Ինչպե՞ս կարելի է առանց արարչի,— ասաց նա, հարցական նայելով Լևինին։

Լևինն զգում էր, որ անվայել է փիլիսոփայական վեճի բռնվել քահանայի հետ, ուստի, որպես պատասխան, ասաց միայն այն, ինչ ուղղակի վերաբերում էր հարցին։

— Չգիտեմ,— ասաց նա։

— Չգիտե՞ք։ Հապա ինչպե՞ս եք կասկածում, որ աստված է ստեղծել ամեն ինչ,— ուրախ տարակուսանքով ասաց քահանան։

— Ես ոչինչ չեմ հասկանում,— ասաց Լևինը կարմրելով ու զգալով, որ իր խոսքերը տխմար են և որ նրանք չեն կարող տխմար չլինել այդպիսի դրությամբ։

— Աղոթեցեք աստծուն և խնդրեցեք նրան։ Նույնիսկ սուրբ հայրերը կասկածներ են ունեցել ու խնդրել են աստծուն իրենց հավատն ամրացնելու մասին։ Սատանան ունի մեծ ուժ, և մենք չպիտի ենթարկվենք նրան։ Աղոթեցեք աստծուն,

խնդրեցեք նրան։ Աղոթեցեք աստծուն,— կրկնեց նա շտապ։

Քահանան մի պահ լռեց, կարծես մտասուզվելով։

— Ինչպես լսեցի, դուք պատրաստվում եք ամուսնանալ իմ ծխականի և հոգևոր որդու՝ իշխան Շչերբացկու աղջկա հետ,— ավելացրեց նա ժպտալով։— Հիանալի աղջիկ է։

— Այո՛,— քահանայի փոխարեն կարմրելով, պատասխանեց Լևինը։ «Նրա ինչի՞ն է պետք հարցնել այդ մասին խոստովանության ժամանակ», մտածեց նա։

Եվ, կարծես պատասխանելով նրա մտքին, քահանան ասաց.

— Դուք պատրաստվում եք ամուսնանալ, և գուցե, աստված վարձատրի ձեզ ժառանգներով, այդպես չէ՞։ Իսկ ի՞նչ դաստիարակություն կարող եք տալ դուք ձեր մանկիկներին, եթե չհաղթահարեք ձեր մեջ գայթակղեցումը սատանայի, որ դրդում է ձեզ անհավատության,— ասաց նա հեզ կշտամբանքով։— Եթե դուք սիրում եք ձեր որդուն, ապա դուք, որպես բարի հայր, ձեր զավակին կցանկանաք ո՛չ միայն հարստություն, շքեղություն, պատիվ, դուք կկամենաք նրա փրկությունը, նրա մտավոր լուսավորությունը ճշմարտության լույսով։ Այնպես չէ՞։ Ի՞նչ պիտի պատասխանեք նրան, երբ անմեղ մանկիկը հարցնի ձեզ. «Հայրիկ, ո՞վ է ստեղծել այն բոլորը, ինչ հրապուրում է ինձ այս աշխարհում՝ երկիրը, ջրերը, արևը, ծաղիկները, խոտերը»։ Մի՞թե դուք կասեք նրան. «չգիտեմ»։ Դուք չեք կարող չիմանալ, թե ինչպե՞ս տեր աստված իր մեծ ողորմածությամբ բացահայտել է ձեզ այդ։ Կամ ձեր երեխան կհարցնի ձեզ .«Ի՞նչ է սպասում ինձ հանդերձյալ կյանքում»։ Ի՞նչ կասեք նրան, երբ դուք ոչինչ չգիտեք։ Հապա ինչպե՞ս կպատասխանեք դուք նրան։ Նրան կթողնեք աշխարհի և սատանայի հրաշալիքներին։ Դա լավ չէ,— ասաց նա և կանգ առավ, գլուխը թեքելով կողքի ու նայելով Լևինին բարի, հեզ աչքերով։

Լևինը ոչինչ չպատասխանեց այժմ՝ ո՛չ այն պատճառով, որ չէր ուզում վեճի մտնել քահանայի հետ, այլ այն պատճառով, որ ոչ ոք այդպիսի հարցեր չէր տալիս նրան, իսկ երբ նրա մանկիկները կտան այդ հարցերը, դեռ ժամանակ կլինի մտածելու պատասխանի մասին։

— Դուք մտնում եք կյանքի այն շրջանը,— շարունակեց

քահանան,— երբ պետք է ընտրել ուղի և չշեղվել նրանից։ Աղոթեցե՛ք աստծուն, որպեսզի նա իր բարեսրտությամբ օգնի ձեզ ու ողորմա,— եզրափակեց նա։— Տերն մեր աստված Հիսուս Քրիստոս ողորմածությամբ և առատաձեռնությամբ մարդասիրության յուրո թողություն շնորհեսցե քեզ, որդի... — և ավարտելով թողության աղոթքը, քահանան օրհնեց ու արձակեց նրան։

Վերադառնալով այդ օրը տուն, Լևինը համակված էր ուրախալի զգացումով, որ անհարմար դրությունը վերջացավ ու վերջացավ այնպես, որ ինքն ստիպված չեղավ ստելու։ Բացի դրանից, նրա մեջ մնաց աղոտ հիշողություն այն մասին, թե այն,ինչ ասում էր այդ բարի և համակրելի ծերուկը, բնավ այնպես հիմար բան չէր, ինչպես թվում էր նրան սկզբում, և որ այստեղ կա ինչ-որ բան, որը պետք է պարզել։

«Հասկանալի է, որ ո՛չ այժմ,— մտածում էր Լևինը,— այլ երբևիցե հետո»։ Լևինն այժմ զգում էր, առաջվանից ավելի շատ,որ իր հոգու մեջ ինչ-որ բան մութ է, անմաքուր, և որ կրոնի խնդրում ինքը գտնվում է նույն այն վիճակում, որն ինքն այնպես պարզ տեսնում էր ուրիշների մեջ ու չէր սիրում և որի համար կշտամբում էր իր բարեկամ Սվիյաժսկուն։

Այդ երեկո անցկացնելով իր հարսնացուի հետ, Դոլլիի մոտ, Լևինն առանձնապես ուրախ էր և, բացատրելով Ստեպան Արկադևիչին հուզված այն վիճակը, որի մեջ գտնվում էր ինքը, ասաց, թե ուրախ է զգում իրեն, ինչպես այն շունը, որին սովորեցնում էին թռչել օղակի միջով, և որը, հասկանալով վերջապես ու կատարելով այն, ինչ պահանջվում է իրենից, վնգստում է և պոչը շարժելով, աշխույժ թռչկոտում է սեղանների ու պատուհանների վրա։

II

Հարսանիքի օրը Լևինը, համաձայն սովորույթի (բոլոր սովորույթների կատարումը պնդում էին իշխանուհին և Դարիա Ալեքսանդրովնան), չտեսավ իր հարսնացուին ու ճաշեց իր իշևանած հյուրանոցում՝ պատահմամբ իր մոտ հավաքված երեք ամուրիների հետ. Սերգեյ Իվանովիչը, Կատավասովը, համալսարանական ընկեր, այժմ բնական գիտությունների պրոֆեսոր, որին, պատահելով փողոցում, Լևինը քարշ տվեց իր մոտ, և Չիրիկովը՝ խաչեղբայրը, Մոսկվայի հաշտարար դատավորը, արջորսության մեջ Լևինի ընկերը։ Ճաշը շատ ուրախ էր։ Սերգեյ Իվանովիչը չափազանց լավ տրամադրության էր և զվարճանում էր Կատավասովի օրիգինալությամբ։ Կատավասովն զգալով, որ իր օրիգինալությունը գնահատված է ու հասկացված, սնափայլում էր նրանով։ Չիրիկովն ուրախ ու բարեսրտորեն սատարում էր ամեն խոսակցության։

— Հո գիտեք, թե ինչ ընդունակ տղա էր մեր բարեկամ Կոնստանտին Դմիտրիչը,— ասում էր Կատավասովը, ամբիոնի վրա ձեռք բերած սովորությամբ ծոր տալով արտասանելով բառերը։ — Ես ասում եմ բացակաների մասին, որովհետև նա այլևս չկա։ Ե՛վ գիտություն էր սիրում այն ժամանակ, համալսարանից դուրս գալուց հետո, և՛ շահեր ուներ մարդկային, իսկ այժմ նրա ընդունակությունների կեսն ուղղված է այն բանին, որ խաբի ինքն իրեն, մյուս կեսը՝ որ արդարացնի այդ խաբեությունը։

— Ես չեմ տեսել ամուսնության ավելի վճռական թշնամի, քան դուք եք,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ո՛չ, ես թշնամի չեմ։ Ես բարեկամ եմ աշխատանքի բաժանման։ Այն մարդիկ, որոնք ընդունակ չեն ոչինչ անելու, պետք է մարդիկ արտադրեն, իսկ մնացածները նպաստեն նրանց լուսավորությանն ու երջանկությանը։ Ահա՛, թե ինչպե՛ս եմ հասկանում ես։ Այդ երկու արհեստը շփոթող մարդկանց թիվը մեծ է շատ։ Ես այդ թվից դուրս եմ հաստատ։

— Ի՞նչ բախտավոր կլինեմ ես, երբ իմանամ, որ դուք սիրահարվել եք,— ասաց Լևինը։— Խնդրեմ, ինձ կանչեք հարսանիքի։

— Ես արդեն սիրահարված եմ։

— Այո՛, մաղասաձկան վրա։ Գիտե՞ս,— դիմեց Լևինը եղբորը,— Միխայիլ Սեմյոնիչը գրում է մի երկ սննդի մասին և...

— Դե՛, դե՛, մի՛ շփոթեք։ Միևնույն է, թե ինչի մասին։ Բանն այն է, որ իրոք ես սիրում եմ մաղասաձուկ։

— Բայց նա չի խանգարի ձեզ՝ սիրելու ձեր կնոջը։

— Նա չի խանգարի, սակայն կինը կխանգարի։

— Ինչո՞ւ։

— Ա՜յ կտեսնեք։ Ա՜յ, դուք սիրում եք տնտեսություն, որսորդություն, դե՜, կտեսնեք...

— Այսօր եկել էր Արխիպը, ասում էր, որ Պրուդնիում անհամար իշայծյամներ կան և երկու արջ,— ասաց Ջիրիկովը։

— Նրանց դուք առանց ինձ կբռնեք։

— Դե իհարկե,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Նախօրոք մնաս բարով ասա արջորսությանը, կինդ չի թողնի։

Լևինը ժպտաց։ Այն պատկերացումը, թե կինը չի թողնի իրեն, այնպես հաճելի էր, որ նա պատրաստ էր ընդմիշտ հրաժարվելու արջեր տեսնելու բավականությունից։

— Այսուամենայնիվ՝ ափսոս է, որ այդ երկու արջը առանց ձեզ կբռնեն։ Իսկ հիշո՞ւմ եք խապիլովում վերջին անգամ։ Հրաշալի որսորդություն կլիներ,— ասաց Ջիրիկովը։

Լևինը չէր ուզում հիասթափեցնել նրան, թե կարող է որևէ տեղ որևէ լավ բան լինել առանց Կիտիի, ուստի և ոչինչ չասաց։

— Իզուր չէ, որ սահմանվել է ամուրի կյանքին հրաժեշտ տալու այս սովորույթը,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Ինչպես էլ մարդ երջանիկ լինի, այսուամենայնիվ ափսոս է ազատությունը։

— Խոստովանեցեք՝ ունե՞ք այն զգացումը, ինչ ուներ Դոգոլի փեսացուն, որն ուզում էր դուրս թռչել պատուհանից։

— Հավանորեն ունի, բայց չի խոստովանում,— ասաց Կատավասովը և բարձրաձայն քրքջաց։

— Ուրեմն էլ ի՞նչ, պատուհանը բաց է... Գնանք հիմա Տվեր։ Մի էգ արջ է, կարելի է վրա տալ որջին։ Իսկապես գնանք ժամը հինգի գնացքով։ Իսկ այստեղ՝ ինչպես կուզեն,— ասաց Ջիրիկովը ժպտալով։

— Ա՜յ, աստված վկա,— ժպտալով ասաց Լևինը,— չեմ կարող հոգուս մեջ գտնել ափսոսանքի այդ զգացումն իմ ազատության մասին։

— Ձեր հոգում այժմ այնպիսի քաոս է, որ ոչինչ չեք զգտնի,— ասաց Կատավասովը։ — Սպասեցեք, երբ մի քիչ ուշքի գաք, կգտնեք։

—Ո՜չ, բացի իմ զգացումից (նա չէր ուզում նրա նիրկայությամբ ասել՝ սիրուց)... ու երջանկությունից, ես կղգայի, գեթ մի փոքր, որ այնուամենայնիվ ափսոս է ազատության կորուստը... ընդհակառակը, ես ուրախ եմ ազատության հենց այդ կորստի համար։

— Վա՜տ է։ Անհուսալի սուբյեկտ,— ասաց Կատավասովը։ — Դե՜, խմենք նրա բուժման համար կամ ցանկանք միայն, որ իրագործվի նրա տենչերի գեթ մի հարյուրերորդը։ Եվ դա արդեն կլինի այնպիսի բախտավորություն, որի նմանը չի եղել աշխարհիս երեսին։

Ճաշից անմիջապես հետո հյուրերը գնացին, որ կարողանան հագնվել հարսանիքի համար։

Մնալով մենակ ու վերհիշելով այդ ամուրիների խոսակցությունը, Լևինը մի անգամ էլ հարցրեց իրեն. կա՞ արդյոք իր սրտում ափսոսանքի այդ զգացումն իր ազատության նկատմամբ, որի մասին ասում էին նրանք։ Նա ժպտաց այդ մտքից։ «Ազատությո՞ւն։ Ինչի՞ համար է ազատությունը։ Երջանկությունը միայն այն է, որ սիրեմ ու ցանկամ, մտածեմ նրա՝ Կիտիի ցանկություններով, նրա մտքերով։ Այսինքն՝ ո՜չ մի ազատություն,— ահա սա է երջանկությունը»։

«Բայց գիտե՞մ արդյոք Կիտիի մտքերը, նրա ցանկությունները, նրա զգացմունքները», հանկարծ շշնջաց Լևինին ինչ-որ ձայն։ Ժպիտը չքացավ նրա դեմքից, և նա մտասուզվեց։ Ու հանկարծ նրան համակեց տարօրինակ մի զգացում։ Նրան համակեց ահն ու կասկածը։ Կասկած ամեն բանում։

«Իսկ եթե նա չի՞ սիրում ինձ։ Եթե նա ամուսնանում է ինձ հետ միայն ամուսնացած լինելու համա՞ր։ Եթե նա ինքը չգիտե այն, ինչ անո՞ւմ է,— հարցնում էր Լևինն ինքն իրեն։ Նա կարող է ուշքի գալ և ամուսնանալուց հետո միայն հասկանալ, որ չի սիրում ու չէր կարող սիրել ինձ»։ Եվ տարօրինակ, ամենավատ մտքեր Կիտիի մասին սկսեցին գալ Լևինի գլուխը։ Լևինը խանդում էր նրան Վրոնսկու հանդեպ, ինչպես մի տարի առաջ, և կարծես այն երեկոն երեկ էր, երբ ինքը տեսավ նրան Վրոնսկու հետ։ Լևինը կասկածում էր, որ նա իրեն ասաց ո՜չ ամեն բան։

Լևինն արագ վեր թռավ տեղից. «Ո՜չ, այդպես չի՞ կարելի,— մտածեց նա հուսահատությամբ։— Կերթամ նրա մոտ, կհարցնեմ, կասեմ վերջին անգամ. մենք ազատ ենք, և ավելի

լավ չէ՞ արդյոք կանգ առնել։ Ինչ էլ լինի ավելի լավ է, քան մշտական դժբախտությունը, խայտառակությունը, անհավատարմությունը»։ Սրտի մեջ հուսահատություն և զայրույթ բոլոր մարդկանց դեմ, իր դեմ, Կիտիի դեմ, Լևինը դուրս եկավ հյուրանոցից ու գնաց հարսնացուի մոտ։

Լևինը նրան գտավ ետևի սենյակներում։ Նա նստել էր սնդուկին և ինչ-որ բանի մասին կարգադրություն էր անում աղախնին, ջոկչկելով բազմերանգ զգեստների այն կույտերը, որ դարսված էին հատակին ու աթոռների թիկնատեղերին։

— Ա՜խ,— ճչաց նա, տեսնելով Լևինին և ամբողջովին փայլելով ուրախությունից։— Ինչպե՞ս դու, ախր ինչպե՞ս դուք (մինչև այս վերջին օրը Կիտին ասում էր նրան մերթ «դու», մերթ «դուք»)։ Բնավ չէի սպասում։ Իսկ ես ջոկչկում եմ իմ օրիորդական զգեստները, թե ո՛ւմ ինչ...

— Ա՜, դա շատ լավ է,— ասաց Լևինը, մռայլորեն նայելով աղախնին։

— Գնա, Դունյաշա, ես կկանչեմ հետո,— ասաց Կիտին։— Ի՞նչ է պատահել քեզ,— հարցրեց նա, որոշակի ասելով «դու», հենց որ աղջիկը դուրս գնաց։ Նա նկատեց Լևինի տարօրինակ դեմքը, հուզված ու մռայլ, և նրա սիրտը վախ ընկավ։

— Կիտի, ես տանջվում եմ։ Ես չեմ կարող տանջվել մենակ,— ասաց նա հուսաբեկ ձայնով, կանգնելով հարսնացուի դիմաց և աղերսագին նայելով նրա աչքերին։ Լևինն արդեն տեսավ նրա սիրող ճշմարտաշող դեմքից, որ ոչինչ դուրս չի գա այն բանից, ինչ մտադիր էր ինքն ասելու, բայց և այնպես՝ պետք էր, որպեսզի Կիտին համոզե՛ր նրան։— Ես եկա ասելու, որ դեռ ժամանակ կա։ Այս բոլորը կարելի է ոչնչացնել և ուղղել։

— Ի՞նչ։ Ես ոչինչ չեմ հասկանում։ Ի՞նչ է պատահել քեզ։

— Այն, ինչ հազար անգամ ասել եմ և չեմ կարող չմտածել... այն, որ ես արժանի չեմ քեզ։ Դու չէիր կարող համաձայնվել ամուսնանալու ինձ հետ։ Դու մտածիր։ Դու սխալվել ես։ Լավ մտածիր։ Դու չես կարող սիրել ինձ... Եթե... ավելի լավ է՝ ասա,— ասում էր նա, առանց նայելու իր հարսնացուին։— Ես դժբախտ կլինեմ։ Թող մարդիկ ասեն, ի՛նչ կուզեն. ինչ էլ լինի, ավելի լավ է, քան դժբախտությունը... Ավելի լավ է այժմ, քանի դեռ ժամանակ կա...

— Ես չեմ հասկանում,— վախեցած պատասխանեց Կիտին,— այսինքն՝ որ դու ուզում ես հրաժարվե՞լ... որ պետք չէ՞։

— Այո՛, եթե դու չես սիրում ինձ։

— Խելագարվե՞լ ես,— ճչաց Կիտին, կարմրելով որտնեղությունից։

Բայց Լևինն ուներ այնպիսի ողորմելի դեմք, որ Կիտին զսպեց իր սրտնեղությունը և հագուստները վայր գցելով բազկաթոռից, նստեց նրան ավելի մոտիկ։— Ի՞նչ ես մտածում, ասա բոլորը։

— Ես կարծում եմ, որ դու չես կարող սիրել ինձ։ Ինչի՞ համար դու պիտի սիրես ինձ։

— Աստված իմ, ի՞նչ կարող եմ ես...— ասաց Կիտին և լաց եղավ։

— Ա՜խ, ի՞նչ արի ես,— ճչաց Լևինը և ծունկ չոքելով նրա առաջ, սկսեց համբուրել նրա ձեռքերը։

Երբ հինգ րոպեից հետո իշխանուհին մտավ սենյակ, նա տեսավ նրանց բոլորովին հաշտված։ Կիտին ո՛չ միայն հավատացրեց նրան, որ սիրում է, այլ նույնիսկ, պատասխանելով նրա հարցին, թե ինչի՞ համար է ինքը սիրում նրան, բացատրեց, թե ինչի՛ համար։ Կիտին ասաց, թե ինքը սիրում է նրան այն բանի համար, որ հասկանում է նրան ամբողջովին, նրա համար, որ ինքը գիտե, թե ի՛նչ պետք է սիրի Լևինը, և որ լավ է այն ամենը, ինչ սիրում է նա։ Ու դա Լևինին թվաց լիովին պարզ։ Երբ իշխանուհին ներս եկավ, նրանք նստել էին իրար կողքի՝ սնդուկի վրա, ջոկչկում էին հագուստները ու վիճում։ Կիտին ուզում էր Դունյաշային տալ իր շագանակագույն այն զգեստը, որն ինքը հագել էր, երբ Լևինն առաջարկություն արեց նրան. իսկ Լևինը պնդում էր, որ այդ զգեստը ոչ ոքի չտրվի, որ Դունյաշային տրվի երկնագույնը։

— Ինչպե՞ս չես հասկանում դու։ Դունյաշան թխահեր է, և դա չի սազի նրան։ Այս բոլորը ես հաշվի եմ առել։

Իմանալով, թե ինչի՛ համար էր եկել Լևինը, իշխանուհին կես կատակով, կես լուրջ՝ բարկացավ ու նրան ուղարկեց տուն, որ հագնվի և չխանգարի Կիտիին սանրվելու, քանի որ հիմա գալու էր Շաուը։

— Առանց այդ էլ Կիտին ոչինչ չի ուտում այս քանի օրը

և տգեղացել է, իսկ դու քո անհեթեթություններով ավելի փչացնում ես նրա տրամադրությունը,— ասաց նա Լևինին։— Գնա՛, գնա՛, սիրելի՛ս։

Լևինը հանցավոր և ամոթահար, բայց հանգստացած, վերադարձավ հյուրանոց։ Նրա եղբայրը, Դարիա Ալեքսանդրովնան ու Ստեպան Արկադևիչը, ամենքն էլ ոտից գլուխ պճնված, արդեն սպասում էին նրան, որ օրհնեն սրբապատկերով։ Ուշանալու ժամանակ չէր։ Դարիա Ալեքսանդրովնան պիտի դեռ գնար տուն, որպեսզի վերցներ անուշահոտ յուղերով օծված և խոպոպիկներով զարդարված իր որդուն, որը հարսնացուի հետ պետք է տաներ սրբապատկերը։ Հետո պետք էր կառքերից մեկն ուղարկել խաչեղբոր ետևից, իսկ մյուսը, որ տանելու էր Սերգեյ Իվանովիչին, ետ ուղարկել... Առհասարակ խիստ շատ էին շափազանց բարդ նկատառումները։ Մի բան անկասկած էր՝ չպետք էր ուշանալ, որովհետև արդեն վեցից անց էր կես։

Սրբապատկերով օրհնությունից բան դուրս չեկավ։ Ստեպան Արկադևիչը կոմիկական-հանդիսավոր դիրքով կանգնեց կնոջ կողքին, վերցրեց սրբապատկերը և հրամայելով Լևինին՝ երկրպագել, օրհնեց նրան բարի ու ծաղրական ժպիտով և երեք անգամ համբուրեց նրան. նույն բանն արեց նաև Դարիա Ալեքսանդրովնան և անմիջապես շտապեց գնալ ու նորից խճճվեց կառքերի շարժման նախածրագրումների մեջ։

— Ահա թե ի՞նչ կանենք. դու մեր կառքով գնա նրա ետևից, իսկ Սերգեյ Իվանովիչը, եթե այնպես բարի լիներ, որ գնար խաչեղբոր ետևից, ապա ետ ուղարկեր կառքը։

— Ինչո՞ւ չէ, ուրախությամբ։

— Իսկ ես ու Կոստյան հիմա կգանք։ Իրերն ուղարկվա՞ծ են,— հարցրեց Ստեպան Արկադևիչը Լևինին։

— Ուղարկված են,— պատասխանեց նա և հրամայեց Կուզմային՝ բերել հագուստը։

III

Մարդկանց ամբոխը, մանավանդ կանանց, շրջապատել էր պսակի համար լուսավորված եկեղեցին։ Նրանք, ովքեր չէին կարողացել ներս մտնել, խռնվել էին պատուհանների մոտ,

իրար բոթելով, վիճաբանելով և նայելով վանդակապատերի միջից։

Ժանդարմները քսանից ավելի կառքեր արդեն շարել էին փողոցի երկարությամբ։ Ոստիկանական սպան, չնայած սառնամանիքին, կանգնել էր մուտքի մոտ, փայլելով իր համազգեստով։ Անընդհատ գալիս էին նոր կառքեր, և մերթ ծաղկազարդ տիկին՝ բարձրացրած շլեյֆով, մերթ տղամարդիկ, հանելով իրենց կեսին կամ սև գլխարկը, մտնում էին եկեղեցի։ Եկեղեցում արդեն վառել էին երկու ջահ և բոլոր մոմերը տեղական սրբապատկերների առաջ։ Պատկերակալի կարմիր ֆոնի վրա ոսկե փայլփլոցը, և՛ սրբապատկերների արծաթյա քանդակը, և՛ կանթեղների ու մոմակալների ադամանդը, և՛ հատակի սալերը, և՛ խաչվառները վերևում՝ եկեղեցու նախաբեմում, և՛ ամբիոնի աստիճանները, և՛ հին սևացած գրքերը, և՛ կապաններն ու ժամաշապիկները—բոլորը, բոլորը ողողված էին լույսով։ Տաք եկեղեցու աջ կողմում, ֆրակների ու սպիտակ փողկապների, համազգեստների և շտոֆների[1], թավիշի, ատլասի, մազերի, ծաղիկների, մերկացրած ուսերի ու թևերի և բարձր ձեռնոցների խայտաբղետ հավաքածուի մեջ տեղի ուներ զուսպ ու աշխույժ խոսակցություն, որ տարօրինակ ձևով արձագանք էր գտնում բարձր գմբեթի տակ։ Ամեն անգամ, երբ լսվում էր բացվող դռան ճռինչը, խոսակցությունը լռում էր ամբոխի մեջ, և ամենքը նայում էին այն կողմ, սպասելով որ տեսնեն ներս մտնող փեսացուին ու հարսնացուին։ Բայց դուռն արդեն բացվում էր ավելի քան տասն անգամ, և յուրաքանչյուր անգամ եկողը կամ ուշացած հյուր էր, որ հարում էր կանչվածների խմբին՝ աջում, կամ հանդիսատես մի կին էր, որ խաբել էր ոստիկանական սպային կամ շարժել էր նրա գութը, և միանում էր օտար ամբոխին ձախում։ Ե՛վ ազգականները, և՛ կողմնակի մարդիկ արդեն անցել էին սպասումի բոլոր փուլերը։

Սկզբում ենթադրում էին, որ փեսացուն ու հարսնացուն կգան այս րոպեին, ո՛չ մի նշանակություն չտալով այդ ուշացումին։ Հետո սկսեցին ավելի ու ավելի ստեպ նայել դռանը, խոսելով այն մասին, թե չի՞ պատահել արդյոք որևէ բան։

[1] Ծաղկազարդ մեռաքս։

Հետո այդ ուշացումը դարձավ արդեն անհարմար հանգամանք, և ազգականներն ու հյուրերը ձևացնում էին, իբր չեն մտածում փեսացուի մասին և զբաղված են իրենց խոսակցությամբ։

Ավագ սարկավագը, կարծես հիշեցնելով իր ժամանակի թանկարժեք լինելու մասին, անհամբերությամբ հազում էր, որից ցնցվում էին պատուհանների ապակիները։ Նախասենյակում լսվում էր ձանձրացած երգիչների մերթ ձայների փորձը, մերթ խնչոցը։ Քահանան անդադար ուղարկում էր մերթ տիրացուին, մերթ սարկավագին՝ իմանալու, թե չեկա՞վ արդյոք փեսացուն, և ինքը մանիշակագույն շուրջառով ու առեղնագործած գոտիով ավելի հաճախ էր դուրս գալիս դեպի կողքի դուռը, սպասելով փեսային։ Վերջապես տիկիններից մեկը, նայելով ժամացույցին, ասաց. «Սակայն, տարօրինակ է դա», և բոլոր հյուրերն անհանգստացան ու սկսեցին բարձրաձայն արտահայտել իրենց տարակուսանքն ու դժգոհությունը։ Հարսնեղբայրներից մեկը գնաց իմանալու, թե ի՞նչ է պատահել։ Կիտին այդ ժամանակ, վաղուց արդեն բոլորովին պատրաստ, սպիտակ զգեստով, երկար քողով և նարնջենու ծաղիկների պսակով, հարսանամոր ու իր լվովա քրոջ հետ կանգնել էր Շչերբացկիների տան դահլիճում և նայում էր պատուհանից դուրս, արդեն կես ժամից ավելի ապարդյուն սպասելով իր խաչեղբորից տեղեկություններ՝ փեսացուի եկեզեցի գնալու մասին։

Մինչ այդ Լևինը անդրավարտիքով, բայց առանց ժիլետի և ֆրակի, ետ ու առաջ էր քայլում իր համարում, անդադար գլուխը դուրս հանելով դռնից և դիտելով միջանցքը. սակայն միջանցքում չէր երևում այն մարդը, ում սպասում էր նա, և հուսահատությամբ ետ դառնալով ու ձեռները թափահարելով, դիմում էր հանգիստ ծխող Ստեպան Արկադևիչին.

— Արդյոք, մարդ երբևիցե եղե՞լ է այդպիսի սոսկալի հիմար դրության մեջ,— ասում էր նա։

— Այո՞, հիմար դրություն է,— հաստատում էր Ստեպան Արկադևիչը, մեղմ ժպիտով։ — Բայց հանգստացի՛ր, հիմա կբերեն։

— Ո՞չ, ինչպե՞ս կարելի է,— զուսպ կատաղությամբ ասում էր Լևինը։ — Հապա այս տխմար բաց ժիլետնե՞րը։ Անհնարին

բան է,— ասում էր նա, դիտելով իր շապկի ճմրթված կուրծքը։— Պատկերացնո՞ւմ ես, եթե իրեն արդեն տարել են երկաթուղու կայարան,— ճչաց նա հուսահատությամբ։

— Այն ժամանակ կհագնես իմը։

— Վաղուց պետք էր անել այդ։

— Լավ չէ ծիծաղելի լինելը... Սպասիր՝ կարգի կգա։

Բանն այն է, որ երբ Լևինը պահանջեց՝ ամեն ինչ բերել հագնվելու համար, Կուզման՝ Լևինի ծերունի ծառան, բերեց ֆրակը, ժիլետը և բոլորը, ինչ պետք էր։

— Հապա շապի՞կը,— ճչաց Լևինը։

— Շապիկը ձեր հագին է,— հանգիստ ժպիտով պատասխանեց Կուզման։

Կուզման չմտածեց մաքուր շապիկ թողնելու և հրաման ստանալով՝ ամեն բան դարսել ու տանել Շչերբացկիների մոտ, որտեղից հենց այդ երեկո նորապսակները մեկնում էին գյուղ, նա այդպես էլ արեց ու դարսեց բոլորը, բացի ֆրակից։ Շապիկը, որ հագել էր Լևինը առավոտվանից, ճմրթված էր և անտանելի էր բաց կրծքով ժիլետի մեջ։ Շչերբացկիների մոտ ուղարկելը՝ հեռու էր։ Ուղարկեցին նորը գնելու։ Լակեյը վերադարձավ, բոլոր խանութները փակ էին, կիրակի էր։ Ուղարկեցին Ստեպան Արկադևիչի մոտ, բերին շապիկ, բայց անտանելի լայն ու կարճ էր։ Ուղարկեցին վերջապես Շչերբացկիների մոտ՝ քանդելու իրերը։ Փեսացուին սպասում էին եկեղեցում, իսկ նա, ասես վանդակում փակված դազան, քայլում էր սենյակում, գլուխը հանում, նայում էր միջանցք և սարսափով ու հուսահատությամբ հիշելով թե ինքը ինչե՞ր ասաց Կիտիին, և ի՞նչ կարող է մտածել Կիտին այժմ։

Վերջապես հանցավոր Կուզման, ծանր շնչելով, ներս վազեց սենյակ՝ շապկի հետ։

— Հազիվ հասա։ Արդեն դարսում էին սայլի վրա,— ասաց Կուզման։

Երեք րոպեից հետո, առանց նայելու ժամացույցին, որ սրտի վերքը չքերքրի, Լևինը վազեվազ գնում էր միջանցքով։

— Դրանով արդեն գործը չես շտկի,— ասում էր Ստեպան Արկադևիչը ժպտերես, առանց շտապելու հետևելով նրան։— Կարգի կգա, կարգի կգա... ասում եմ քեզ։

IV

— Եկա՜ն. ահա՜ նա։ Ո՞րն է։ Նա, որ ավելի ջահել է, հա՞։ Մտիկ արեք հարսին, ո՛չ մեռած է, ո՛չ կենդանի,— խոսեցին ամբոխի մեջ, երբ Լևինը հանդիպելով հարսնացուին գլխավոր մուտքի մոտ, նրա հետ միասին մտավ եկեղեցի։

Ստեպան Արկադևիչը պատմեց կնոջը ուշանալու պատճառը, և հյուրերը ժպտալով փսփսացին իրար մեջ։ Բայց Լևինը ոչինչ ու ոչ ոքի չէր նկատում. նա նայում էր իր հարսնացուին, առանց աչք հեռացնելու նրանից։

Ամենքն ասում էին, որ Կիտին տգեղացել է այդ վերջին օրերը և պսակի ժամանակ բնավ այնպես գեղեցիկ չէ, ինչպես գեղեցիկ էր սովորաբար. բայց Լևինը այդ կարծիքին չէր։ Նա նայում էր Կիտիի բարձր սանրվածքին՝ երկար սպիտակ քողով ու սպիտակ ծաղիկներով, բարձր կանգնած ծալքավոր օձիքին, որ առանձին անարատությամբ ծածկել էր կողքերից ու բացել էր առջևից նրա երկար վիզը, նայում էր նրա զարմանալի բարակ իրանին, և Լևինին թվում էր, որ իր հարսնացուն ավելի լավ է, քան երբևիցե, ո՛չ այն պատճառով, որ այդ ծաղիկները, այդ քողը, Փարիզից ստացված այդ զգեստը որևէ բան էին ավելացնում նրա գեղեցկությանը, այլ այն պատճառով, որ չնայած այդ պերճազգեստի պատրաստած շքեղությանը, նրա համակրելի դեմքի, նրա հայացքի, նրա շուրթերի արտահայտությունը էլի նույն առանձնահատուկ արտահայտությունն էին անմեղ շիտակության։

— Ես արդեն կարծում էի, որ դու ուզում էիր փախչել,— ասաց Կիտին ու ժպտաց նրան։

— Ինձ հետ պատահածն այնպիսի հիմար բան է, որ քաշվում եմ ասել,— ասաց նա կարմրելով և ստիպված էր գիմելու մոտ եկած Սերգեյ Իվանովիչին։

— Լա՜վ բան է քո շապկի պատմությունը,— ասաց Սերգեյ Իվանովիչը, գլուխն օրորելով ու ժպտալով։

— Այո՛, այո՛,— պատասխանեց Լևինը առանց հասկանալու թե ի՛նչ են ասում իրեն։

— Դե՛, Կոստյա, այժմ պետք է վճռել մի կարևոր հարց,— ասաց Ստեպան Արկադևիչը շինծու-վախեցած տեսքով։— Դու հատկապես այժմ ի վիճակի ես գնահատելու դրա ամբողջ

կարևորությունը։ Ինձ հարցնում են. կիսավա՞ռ մոմերը վառել, թե՞ չվառվածները։ Տարբերությունը տասը ռուբլի է,— ավելացրեց նա, հավաքելով շրթունքները, ժպիտով։— Ես վճռեցի, բայց վախենում եմ, որ դու չհամաձայնես։

Լևինը հասկացավ, որ դա կատակ էր, բայց չկարողացավ ժպտալ։

— Ուրեմն ինչպե՞ս՝ չվառածներ՞ը, թե՞ կիսավառերը. ահա՜ հարցը։

— Այո՛, ա՛յո, չվառածները։

— Է՜հ, շատ ուրախ եմ։ Հարցը վճռված է,— ասաց Ստեպան Արկադևիչը ժպտալով։— Սակայն, ինչպես տխմարանում են մարդիկ այս դրության մեջ,— ասաց նա Ցիրիկովին, երբ Լևինը, նրան շվարած նայելուց հետո, մոտեցավ հարսնացուին։

— Տե՛ս, Կիտի, առաջինը դու կանգնիր գորգի վրա,— ասաց կոմսուհի Նորդստոնը, մոտենալով։— Լա՜վ եք դուք,— դիմեց նա Լևինին։

— Հ՞ը, սարսափելի չէ՞,— ասաց Մարիա Դմիտրիևնան, պատավ հորաքույրը։

— Հո չե՞ս մրսում։ Դու ոտքթնած ես։ Կա՛ց, կացի՛ր,— ասաց Կիտիի քույր Լվովան և բոլորաձև բարձրացնելով իր գեղեցիկ գեր թևերը, ժպտալով ուղղեց ծաղիկները քրոջ գլխին։

Մոտեցավ Դոլլին, ուզում էր մի բան ասել, բայց չկարողացավ, լաց եղավ և անբնականորեն ծիծաղեց։

Կիտին նայում էր ամենքին նույնպիսի բացակայող աչքերով, ինչպես և Լևինը։ Իրեն ուղղված բոլոր խոսքերին Կիտին կարողանում էր պատասխանել միայն երջանկության ժպիտով, որ այժմ այնքան բնական էր նրան։

Մինչ այդ եկեղեցու պաշտոնյաներն զգեստավորվեցին, և քահանան ու սարկավագը դուրս եկան, մոտեցան գրակալին, որ դրված էր եկեղեցու գավթում։ Քահանան դիմեց Լևինին, ասելով ինչ-որ բան։ Լևինը չլսեց այն, ինչ ասաց քահանան։

— Բռնեք հարսնացուի ձեռքից ու տարեք,— ասաց խաչեղբայրը Լևինին։

Լևինը երկար ժամանակ չէր հասկանում, թե ի՛նչ էին պահանջում իրենից։ Երկար ժամանակ ուղղում էին նրան և

ուզում էին արդեն թողնել,— որովհետև նա շարունակ բռնում էր ո՛չ այն ձեռքով կամ ո՛չ այն ձեռքը,— երբ նա հասկացավ վերջապես, որ պետք էր աջ ձեռքով բռնել հարսնացուի աջ ձեռքը, հենց առանց փոխելու իր դիրքը։ Երբ վերջապես նա բռնեց հարսնացուի ձեռքը՝ ինչպես պետք էր, քահանան մի քանի քայլ արեց նրանց առջևից ու կանգնեց գրակալի մոտ։ Ազգականների և ծանոթների ամբոխը, դժժալով խոսակցությամբ և շրշյուն բարձրացնելով շլեյֆներով, շարժվեց նրանց ետևից։ Մեկը կռանալով ուղղեց հարսնացուի շլեյֆը։ Եկեղեցում տիրեց այնպիսի լռություն, որ լսվում էր մոմի կաթիլների ձայնը։

Կամիլավկայով ծերունի քահանան, արծաթափայլ ճերմակ մազափնջով, ականջների ետևում երկու մասի բաժանած, ազատելով ծերունական ձեռքերը մեջքին ոսկե խաչով արծաթյա ծանր շուրջառի տակից, ինչ-որ բան էր ընտրում գրքակալի մոտ։

Ստեպան Արկադևիչն զգույշ մոտեցավ նրան, ինչ-որ բան շշնջաց և աչքով անելով Լևինին, նորից ետ գնաց։

Քահանան վառեց ծաղիկներով զարդարված երկու մոմերը, բռնեց ձախ ձեռքում՝ թեքած մի կողքի, այնպես որ մոմը հալվում, կաթում էր դանդաղ, ու շուտ եկավ դեպի նորապսակները։ Դա նույն քահանան էր, որ խոստովանեցրել էր Լևինին։ Նա հոգնած և թախծոտ հայացքով նայեց փեսային ու հարսին, հառաչեց և աջ ձեռքը դուրս հանելով շուրջառի տակից, օրհնեց նրանով փեսային և նույնպես, բայց զգույշ քնքշությամբ դրեց ծալած մատները Կիտիի խոնարհած գլխին։ Հետո նա մոմերը տվեց նրան ու վերցնելով բուրվառը, դանդաղ հեռացավ։

«Մի՞թե սա իրական է» մտածեց Լևինը ու նայեց հարսնացուին։ Նա մի փոքր վերևից տեսնում էր Կիտիի պրոֆիլը, և նրա շուրթերի ու արտևանունքների հազիվ նկատելի շարժումից իմացավ, որ Կիտին զգաց իր հայացքը։ Կիտին ետ չնայեց, բայց ծալքավոր բարձր օձիքը շարժվեց, բարձրանալով դեպի նրա վարդագույն փոքրիկ ականջը։ Լևինը տեսավ, որ հառաչանքը կանգ առավ իր հարսնացուի կրծքում, և բարձր ձեռնոցի մեջ ցնցվեց փոքրիկ ձեռքը, որ բռնել էր մոմը։

Շապկի հետ կապված ամբողջ իրարանցումը, ուշանալը, ծանոթների, ազգականների հետ եղած խոսակցությունը,

նրանց դժգոհությունը, իր ծիծաղելի դրությունը— այս բոլորը հանկարծ չքացավ, և նրան համակեց ուրախության ու սարսափի զգացումը։

Բարձրահասակ, գեղեցիկ ավագ սարկավագը, արծաթյա ժամաշապկով, երկու կողքի վրա սանրած կանգուն խոպոպիկներով, առույգ առաջ անցավ և, սովոր շարժումով ուրարը բարձրացնելով երկու մատի վրա, կանգնեց քահանայի դիմաց։

«Օրհ-նյա տեե՛ր», դանդաղ, իրար ետևից, տատանելով օդի ալիքները, լսվեցին հանդիսավոր հնչյունները։

«Օրհնյալ տեր մեր Հիսուս Քրիստոս այժմ և միշտ և հավիտյանս», հեզությամբ ու քաղցրաձայն պատասխանեց ծերուկ-քահանան, շարունակելով ինչ-որ բան ընտրել գրակալի վրա։ Եվ լցնելով ամբողջ եկեղեցին՝ լուսամուտներից մինչև կամարները, ներդաշնակ ու լայնալի, բարձրացավ, ուժեղացավ, մի վայրկյան կանգ առավ ու մեղմորեն մարեց անտեսանելի երգեցիկ խմբի լրիվ ակկորդը։

Աղոթում էին, ինչպես միշտ, ի վերուստ խաղաղության ու փրկության համար, սինոդի համար, կայսեր համար. աղոթում էին նաև այժմ նշանադրվող՝ աստծո ծառա Կոնստանտինի և աստծո աղախին Եկատերինայի համար։

«Վասն պարգևելո սոցա սեր կատարյալ և առաքինի վարս և օգնություն, զտեր աղաչեսցուք»,— կարծես շնչում էր ամբողջ եկեղեցին ավագ սարկավագի ձայնով։

Լևինը լսում էր այդ խոսքերը, և նրանք զարմացնում էին նրան։ «Ինչպե՞ս հասկացան նրանք, որ օգնություն է պետք, հատկապես օգնություն,— մտածում էր նա, մտաբերելով մոտիկ անցյալի իր վախն ու կասկածները։— Ի՞նչ գիտեմ ես, ի՞նչ կարող եմ անել ես այդ սարսափելի բանում առանց օգնության,— մտածում էր նա։ — Իրոք որ, այժմ ինձ օգնություն է պետք»։

Երբ սարկավագը վերջացրեց մաղթանքը, քահանան գիրքը ձեռքին դիմեց նշանվածներին.

«Տեր աստված հավիտենական,— կարդում էր նա հեզ, երգածորուն ձայնով,— որ զանազույգս և զբացորոշյալս զուգակցես միաբանությամբ սիրո և կապես անքակտելի. որպես օրհնեցեր զԻսահակ և զՌեբեկա և ժառանգ զնոսա քո ալետյացն երևեցուցեր։ Դո՛ւ տեր, ողորմած և մարդասեր աստված,

օրհնյա զծառայս քո Կոնստանտին և զաղախին քո Եկատերինա, առաջնորդելով սոցա ի գործս բարիս, գնալ ի ճանապարհս արդարության և առնել զհաճույսն առաջի քո, ողորմած և մարդասեր տեր աստված մեր։ Եվ քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»։—«Ամեն» նորից ձգվեց, տարածվեց օդի մեջ՝ անտեսանելի երգեցիկ խումբը։

«Զանգույցս և զբացորոշյալս զուգակցես միաբանությամբ սիրոյ»,—որքա՜ն խորիմաստ են այս բառերը և ինչպե՜ս համապատասխանում են այն բանին, ինչ զգում է մարդ այս րոպեին,—մտածում էր Լևինը։— Արդյոք զգո՞ւմ է Կիտին նույն բանը, ինչ որ ես»։

Եվ գլուխը շուռ տալով, նա հանդիպեց Կիտիի հայացքին։

Եվ այդ հայացքի արտահայտությունից նա եզրակացրեց, որ իր հարսնացուն էլ հասկանում է նույնը, ինչ որ ինքը։ Բայց դա ճիշտ չէր. Կիտին համարյա բոլորովին չէր հասկանում ծիսակատարության բառերը և նույնիսկ չէր լսում դրանք նշանդրհնության միջոցին։ Նա չէր կարող լսել ու հասկանալ դրանք, այնքան զորեղ էր այն միակ զգացումը, որով համակվել էր նրա հոգին և ավելի ու ավելի ուժեղանում էր։ Այդ զգացումն այն բանի լիովին կատարման ուրախությունն էր, որն արդեն մեկուկես ամիս կատարվում էր նրա հոգում և որն այս վեց շաբաթվա ընթացքում ուրախացնում ու տանջում էր նրանց։ Այն օրը, երբ Կիտին իր շաղանակագույն զգեստով Արբատյան տան դահլիճում լուռ մոտեցավ Լևինին ու հանձնվեց նրան, Կիտիի հոգում այդ օրը և այդ ժամին կատարվեց լիովին խզում առաջվա ամբողջ կյանքից, ու սկսվեց բոլորովին ուրիշ, նոր, նրան միանգամայն անծանոթ կյանք, իսկ իրապես շարունակվում էր հինը։ Այդ վեց շաբաթը նրա համար ամենաերջանիկ և ամենատանջալից ժամանակն էր։ Նրա ամբողջ կյանքը, նրա բոլոր ցանկությունները, հույսերը կենտրոնացել էին միայն այդ, նրա համար դեռ անհասկանալի մարդու վրա, որի հետ նրան կապում էր է՛լ ավելի անհասկանալի, քան այդ մարդն էր, մի զգացում, մերթ՝ մերձեցնող, մերթ՝ վանող, բայց այուհանդերձ նա շարունակում էր ապրել առաջվա կյանքի պայմաններում։ Ապրելով հին կյանքով, նա սարսափում էր ինքն իրենից, իր անհաղթահարելի բացարձակ անտարբերու-

թյունից դեպի իր ամբողջ անցյալը՝ դեպի իրերը, սովորությունները, դեպի մարդիկ, նրան սիրած ու սիրող, դեպի մայրը, որ զզվեցել էր այս անտարբերությունից, դեպի համակրելի, քնքուշ հայրը, որ առաջ ամեն բանից ավելի սիրելի էր աշխարհի երեսին։ Մերթ նա սարսափում էր այս անտարբերությունից, մերթ ուրախանում էր այն բանի համար, ինչը բերել, հասցրել էր իրեն այս անտարբերությանը։ Նա ոչինչ մտածել, ոչինչ ցանկալ չէր կարող այդ մարդու հետ եղած կյանքից դուրս. բայց այդ նոր կյանքը դեռ գոյություն չուներ, և նա նույնիսկ չէր կարողանում պարզ պատկերացնել այն։ Կար միայն սպասողականություն, նորի ու անհայտի վախը և ուրախությունը։ Եվ այժմ ահա՛ սպասողականությունը, և՛ անհայտությունը, և՛ նախկին կյանքից հրաժարվելու զղջումը — բոլորը կվերջանա ու կսկսվի նորը։ Այդ նորը չէր կարող սարսափելի չլինել իր արտահայտությամբ. բայց սարսափելի է, թե սարսափելի չէ, այն արդեն կատարվել է նրա հոգում։ Վեց շաբաթ սրանից առաջ, իսկ այժմ միայն նվիրագործվում է այն, որը վաղուց արդեն կատարվել էր նրա հոգում։

Նորից դառնալով գրակալին, քահանան դժվարությամբ բռնեց Կիտիի փոքրիկ մատանին և պահանջելով Լևինի ձեռքը, դրեց նրա մատի առաջին հոդին։ «Նշանի ծառայս աստուծո Կոնստանտին ընդ աղախնույս աստուծո Եկատերինա»։ Եվ դնելով մեծ մատանին Կիտիի վարդագույն, փոքրիկ, իր թուլությամբ խղճուկ մատը, քահանան ասաց նույնը։

Նշանվողները մի քանի անգամ ուզում էին հասկանալ, թե ի՛նչ պետք է անել, և ամեն անգամ սխալվում էին, ու քահանան շշուկով ուղղում էր նրանց։ Վերջապես անելով այն, ինչ պետք էր, խաչակնքելով նրանց մատանիներով, նա նորից մեծ մատանին հանձնեց Կիտիին, իսկ փոքրը՝ Լևինին. նրանք նորից շփոթվեցին, և երկու անգամ մատանին անցավ ձեռքից ձեռք, այնուամենայնիվ, չէր ստացվում այն, ինչ պահանջվում էր։

Դոլլին, Չիրիկովը, և Ստեպան Արկադևիչն առաջ անցան՝ ուղղելու նրանց։ Տեղի ունեցավ իրարանցում, փսփսոց, երևացին ժպիտներ, բայց հանդիսավոր սիրահույզ արտահայտությունը նշանվողների դեմքին չփոխվեց. ընդհակառակը, ձեռ-

քերը շփոթելով, նրանք նայում էին ավելի լուրջ ու ավելի հանդիսավոր, քան առաջ, և Ստեպան Արկադևիչի շրթունքներին ակամա սառեց այն ժպիտը, որով նա շշնջաց, որպեսզի այժմ յուրաքանչյուրը դներ իր մատանին։ Նրան թվում էր, որ ամեն ժպիտ կվիրավորի նրանց։

«Վասնզի դու, տեր, նախ ստեղծեր զմարդն, ապա զկինն,— կարդաց քահանան մատանիները փոխելուց հետո,— և օրհնեցեր, ասելով, աճեցեք և բազմացարուք և լցրեք զերկիր և տիրեցեք դմա։ Օրհնյա զուխտս զայս նշանադրության ծառայից քոց, զի դու ժամանեցուցեր զսոսա զօրհնություն քաղցրության քո և հաստատեցեր անսուտ բանիվդ, թե զօր աստված զուգյաց, մարդ մի՛ մեկնեսցե։ Որպեսզի կեցյալք արդարությամբ, ըստ հաճոյից կամաց քոց բարեսիրաց, տեսցեն զորդիս որդոց յուրյանց։ Եվ այժմ աղաչեմք զքեզ, տեր, օրհնյա՛ զնշանադրությունս զայս՝ ծառայիս քո Կոնստանտինի և աղախնիս քո Եկատերինայի, անարատ պահելով զսոսա հոգևոր սիրով և միաբանությամբ ի կյանս հայսոսիկ»...

Լևինն ավելի ու ավելի զգում էր, որ ամուսնության մասին իր բոլոր մտքերը, իր տենչերն այն մասին, թե ինչպե՛ս ինքը կդասավորի իր կյանքը, որ այս բոլորը երեխայություն է և որ դա այնպիսի մի բան է, ինչը մինչև այսօր չէր հասկանում ինքը և այժմ ավելի քիչ է հասկանում, թեև դա կատարվում է իրենց դիմաց. նրա կրծքում ավելի ու ավելի լեռնանում էր սարսափը, և անհնազանդ արցունքներ էին երևում նրա աչքերում։

V

Եկեղեցի էին եկել ամբողջ Մոսկվան, ազգականներն ու ծանոթները։ Եվ նշանադրության ծեսի ժամանակ, եկեղեցու շքեղ լուսավորության մեջ, պերճազգեստ կանանց, աղջիկների և սպիտակ փողկապներով, ֆրակներով ու համազգեստներով տղամարդկանց շրջանակում չէր լռում վայելուչ մեղմ խոսակցությունը, որ գլխավորապես սկսում էին տղամարդիկ, մինչդեռ կանայք կլանված էին իրենց միշտ այնպես հուզող նվիրագործության բոլոր մանրամասները դիտելով։

Հարսնացուին մոտիկ կանգնած խմբում գտնվում էին նրա

երկու քույրերը—ավագը՝ Դոլլին և անդորը գեղեցկուհի Լվովան, որը եկել էր արտասահմանից։

— Այդ ի՞նչ բան է, ինչո՞ւ է Մարին պսակի եկել մանիշակագույն զգեստով, կարծես սև լինի,— ասում էր Կորսունսկայան։

— Նրա դեմքի այդպիսի գույնով դա միակ փրկությունն է...— պատասխանեց Դրուբեցկայան։ —Ես զարմանում եմ, ինչո՞ւ նրանք պսակն արին երեկոյան։ Դա վաճառականների...

— Ավելի գեղեցիկ է։ Ես էլ պսակվեցի երեկոյան,— պատասխանեց Կորսունսկայան ու հառաչեց, հիշելով, թե ի՞նչ գեղեցիկ էր ինքն այն օրը, թե ինչպե՛ս ծիծաղելի կերպով սիրահարված էր իրեն ամուսինը և ինչպե՛ս այժմ ամեն բան այլ է։

— Ասում են, ով տասից ավելի անգամ է խաչեղբայր լինում, նա չի ամուսնանում. ես ուզում էի լինել տասներորդը, որպեսզի ապահովագրեի ինձ, բայց տեղը բռնված էր,— ասում էր կոմս Սինյավինը սիրուն իշխանազնուհի Չարսկայային, որն աչք ուներ նրա վրա։

Չարսկայան պատասխանեց նրան միայն ժպիտով։ Նա նայում էր Կիտիին, մտածելով այն մասին, թե ինչպե՛ս և ե՞րբ ինքը կոմս Սինյավինի հետ կկանգնի Կիտիի դիրքում և ինչպե՛ս այն ժամանակ կհիշեցնի նրան այժմյան նրա կատակը։

Շչերբացկին ասում է պառավ Ֆրեյլինա Նիկոլաևային, որ ինքը մտադիր է պսակը դնել Կիտիի շինյոնին[1], որպեսզի նա բախտավոր լինի։

— Պետք չէր շինյոն հագնել,— պատասխանեց Նիկոլաևան, որը վաղուց վճռել էր, եթե իր հետ ամուսնանա ծեր այրին, որին որսում էր, հարսանիքը կլինի չափազանց պարզ։— Ես չեմ սիրում այդ ֆաստը։

Սերգեյ Իվանովիչը խոսում էր Դարիա Դմիտրիևնայի հետ, կատակով հավատացնելով նրան, թե հարսանիքից հետո այլ տեղ գնալու սովորությունը տարածվում է այն պատճառով, որ նորապսակները միշտ մի փոքր ճնշվում են։

— Ձեր եղբայրը կարող է պարծենալ։ Հարսնացուն սքանչելի է։ Ինձ թվում է, դուք նախանձում եք։

1 Կեղծ մազերից շինած կանանց գլխազարդ։

— Այդ զգացումը ես արդեն ապրել, անցել եմ, Դարիա Դմիտրիևնա,— պատասխանեց նա, և նրա դեմքը հանկարծ ընդունեց տխուր ու լուրջ արտահայտություն։

Ստեպան Արկադևիչը պատմում էր քենուն իր բառախաղը «առազվողի» մասին։

— Պետք է ուղղել պսակը,— պատասխանեց քենին, չլսելով նրան։

— Ափսո՞ս, որ Կիտին այդպես տգեղացել է,— ասում էր կոմսուհի Նորդստոնը Լևովային։— Այսուամենայնիվ նա շարժե Կիտիի մի մատը։ Այնպես չէ՞։

— Ո՛չ, նա ինձ դուր է գալիս շատ։ Ո՛չ այն պատճառով, որ նա իմ ապագա beau-frère-ն է,— պատասխանեց Լևովան։— Եվ ինչպե՞ս լավ է պահում նա իրեն։ Մինչդեռ, այդ դրության մեջ այնպես դժվար է իրեն լավ պահել, այսինքն՝ ծիծաղելի չլինել։ Իսկ նա ծիծաղելի չէ, ոչ էլ բռնազբոսիկ, երևում է, որ նա զգացված է։

— Կարծեմ, դուք սպասո՞ւմ էիք դրան։

— Համարյա, Կիտին միշտ սիրում էր նրան։

— Հիմա տեսնենք, թե նրանցից ո՞վ առաջինը կկանգնի գորգի վրա։ Ես խորհուրդ տվի Կիտիին։

— Միևնույն է,— պատասխանեց Լևովան,— մենք ամենքս հնազանդ կին ենք, դա մեր տոհմական հատկությունն է։

— Իսկ ես այդպես դիտմամբ առաջինը կանգնեցի Վասիլի հետ։ Իսկ դո՞ւք, Դոլլի։

Դոլլին կանգնել էր նրանց մոտ, լսում էր նրանց խոսակցությունը, բայց չպատասխանեց։ Նա զգացված, հուզված էր։ Արցունքները լճացել էին նրա աչքերում, և նա չէր կարող ոչինչ ասել, որ չարտասվեր։ Նա ուրախ էր Կիտիի ու Լևինի համար. մտքով վերադառնալով դեպի իր պսակը, նա նայում էր կենսափայլ Ստեպան Արկադևիչին, մոռանում էր ամբողջ ներկան և հիշում էր միայն իր առաջին անմեղ սերը։ Նա հիշում էր ո՛չ միայն իրեն, այլև իրեն մոտիկ ու ծանոթ բոլոր կանանց. նա հիշեց նրանց մասին՝ նրանց համար միակ հանդիսավոր այն ժամանակը, երբ նրանք, Կիտիի նման, կանգնել էին պսակի տակ, սրտները լցված սիրով, հույսով ու երկյուղով, հրաժարվելով անցյալից և մտնելով խորհրդավոր ապագայի մեջ։ Բոլոր այդ հարսնացուների թվում, որոնք նրա միտն էին գալիս,

նա հիշեց նաև իր սիրելի Աննային, որի ենթադրվելիք ապահարզանի վերաբերյալ մանրամասները նա լսեց նորերս։ Նա՛ ևս այդպես անարատ կանգնած էր նարնջենու ծաղիկներով և քողով։ Իսկ հիմա՞։— «Սարսափելի տարօրինակ է»,— ասաց նա։

Միայն քույրերը, բարեկամները և ազգականները չէին, որ հետևում էին նվիրագործության մանրամասներին. այլև կողմնակի հանդիսատես կանայք, շնչները պահած, հուզմունքով հետևում էին, չլինի թե բաց թողնեն փեսացուի ու հարսնացուի դեմքի որևէ շարժումը, արտահայտությունը և դժկամորեն լին պատասխանում ու հաճախ չէին էլ լսում տղամարդկանց ասածը, որոնք զվարճալի կամ կողմնակի դիտողություններ էին անում։

— Իսկ ինչի՞ է էդպես լացակումած։ Թե՞ անհոժար է գնում։

— Էդպիսի տղամարդուն անհոժա՞ր։ Տեսնես իշխա՞ն է։

— Ծպիտակ ատլասովը քո՞ւյրն է։ Դե՛, լսի՛ր, թե ո՞նց հիմա սարկավագը կգոռա. և «կինն երկնչիցի հառնե յուրմեն»։

— Զուդովի՞ցն են։

— Սինոդինն են[1]։

— Ես հարցրի ծառային։ Ասում է, էս բոպեիս տանում է իր հայրենակալվածքը։ Շատ հարուստ է, ասում են։ Դրա համար են տվել։

— Չէ՛, լավ զույգ է։

Մարիա Վասիլևնա, դուք վիճում էիք, ասում էիք, թե լայն են հագնում կարնալինը[2]։ Մի նայիր պյուսե[3] հագուստով այն կնոջը, դեսպանի կին է, ասում են. ո՞նց է կիպ տված... էնպես, հետո էլի էսպես։

— Ի՞նչ անուշիկն է հարսնացուն, ոնց որ զարդարված գառնուկ։ Ի՞նչ կուզեք՝ ասեք, մեղք է կին ասածդ։

Այդպես էին խոսում այն հանդիսատես կանանց ամբոխի մեջ, որոնք կարողացան ներս խցկվել եկեղեցու դռնից։

---

[1] Հարց ու պատասխանը երգեցիկ խմբի մասին է. երգիչները Զուդո՞վ վանքի խումբն են, թե՞ Սինոդի։

[2] Կարնալինը կրինոլին բառի աղավաղումն է (կրինոլին—բարակ երկաթալարերի բոլորաձև ցանցի վրա կարած հագուստ)։

[3] Պյուս՝ ֆրանսերեն նշանակում է լու. այստեղ խոսքը վերաբերում է զգեստի գույնին, այսինքն՝ մուգ շագանակագույն։

VI

Երբ նշանադրության ծեսը վերջացավ, եկեղեցու սպասավորը փռեց գրակալի առաջ՝ եկեղեցու մեջտեղում, մի կլոր վարդագույն մետաքսե գործվածք, խումբը երգեց ճարտարիմաստ ու բարդ մի սաղմոս, որի մեջ բասն ու տենորը ձայնարկում էին իրար, և քահանան շուռ գալով, նշեց նշանվածներին փռած գործվածքի մետաքսե կտորը։ Ինչքան էլ հաճախ ու շատ անգամ լսել էին երկուսն էլ, թե ով առաջինը ոտքը դնի գորգի վրա, նա կլինի ընտանիքի գլուխը, այնուամենայնիվ ո՛չ Լևինը, ո՛չ Կիտին չկարողացան հիշել այդ մասին, երբ նրանք արին այդ մի քանի քայլը։ Նրանք չլսեցին ո՛չ բարձրաձայն նկատողությունները, ո՛չ էլ վեճերն այն մասին, թե ոմանց դիտողությամբ, փեսան առաջինը կանգնեց, իսկ մյուսների կարծիքով, երկուսն էլ միաժամանակ կանգնեցին։

Նշանվածների ամուսնանալու ցանկության մասին, նաև՝ թե ուրիշներին հո խոսք տված չե՞ն եղել, սովորական հարցերից ու նրանց տված՝ իրենց համար տարօրինակ հնչող պատասխաններից հետո սկսվեց նոր ժամերգություն։ Կիտին լսում էր աղոթքի խոսքերը, կամենալով հասկանալ դրանք, բայց չէր կարողանում։ Հանդիսավորության ու պայծառ ուրախության զգացումը ծիսակատարության ընթացքում ավելի ու ավելի համակում էր նրա հոգին և զրկում էր նրան հասկանալու հնարավորությունից։

Աղոթում էին. «Որպեսզի կեցյալք արդարությամբ, որ ի հաճոյից կամաց քոց բարեսիրաց, տեսցեն զորդիս որդոց յուրյանց և դստերց»։ Հիշատակվում էր այն մասին, որ աստված կնոջն ստեղծեց Ադամի կողից, և «վասն այսօրիկ թողցե այլ զհայր յուր և զմայր յուր և երթիցն զհետ կնոջ յուրո, և եղիցին երկոքյան ի մարմին մի». խնդրում էին, որ աստված տա նրանց պտղաբերություն և իր օրհնությունը, ինչպես Իսահակին ու Ռեբեկային, Հովսեփին, Մովսեսին ու Հռաքելին, և որ նրանք տեսնեն իրենց որդոց որդիներին։ «Այս բոլորը հիանալի է,— մտածում էր Կիտին, լսելով այդ խոսքերը,— այս բոլորը չի կարող այլ կերպ լինել», և ուրախության այն ժպիտը, որն ակամա հաղորդվում էր բոլոր նրան նայողներին, փայլում էր նրա պայծառացած դեմքին։

— Լրիվ հագցրեք,— լսվեցին այս ու այն կողմից խորհուրդներ, երբ քահանան դրեց նրանց գլխին պսակները, և Շչերբացկին, երեք կոճականոց ձեռնոցի մեջ դողդոջուն ձեռքով, բարձր բռնել էր պսակը Կիտիի գլխին։

— Հագցրեք,— շշնջաց Կիտին ժպտալով։

Լևինը նայեց նրան և ապշեց այն ցնծագին փայլից, որ շողում էր նրա դեմքին. և այդ զգացումն ակամա հաղորդվեց իրեն։ Ինքը նույնպես, ինչպես իր հարսնացուն, լցվեց պայծառությամբ և ուրախությամբ։

Նրանց համար ուրախալի էր լսել առաքելական թղթի ընթերցումը և ավագ սարկավագի ձայնի դղրդյունը վերջին տունը կարդալիս, որին կողմնակի հասարակությունը սպասում էր այնպիսի անհամբերությամբ։ Ուրախալի էր խմել տափակ գավաթից ջրախառն տաք դինին և ավելի ուրախալի եղավ, երբ քահանան, ետ գցելով շուրջառը ու վերցնելով նրանց երկու ձեռքն իր ձեռքի մեջ, տարավ, պտտեցրեց նրանց գրակալի շուրջը, «Ցնծա Եսայի» թափավյունի տակ, որ հատորոշ հնչեցրեց բասը։ Շչերբացկին ու Զիրիկովը, որ բռնել էին պսակները, խճճվելով հարսի շլեյֆի մեջ, նույնպես ժպտում էին և ուրախանում ինչ-որ բանի համար, մերթ ետ էին մնում, մերթ դիպչում պսակվողներին քահանայի կանգառների միջոցին։ Կիտիի մեջ վառված ուրախության կայծը, թվում էր թե հաղորդվում է եկեղեցում գտնվողներին։ Լևինին թվում էր, որ թե՛ քահանան, թե՛ սարկավագը ժպտալ են ուզում, ինչպես և ինքը։

Պսակները հանելով նրանց գլխից, քահանան կարդաց վերջին աղոթքը և շնորհավորեց նորապսակներին։ Լևինը նայեց Կիտիին, և երբեք մինչ այդ նա չէր տեսել նրան այդպես։ Կիտին սքանչելի էր երջանկության այն նոր փայլով, որ շողում էր նրա դեմքին։ Լևինն ուզում էր մի բան ասել նրան, բայց չգիտեր, վերջացա՞վ արդյո՞ք։ Քահանան հանեց նրան դժվարությունից։ Նա ժպտաց իր բարի դեմքով ու կամաց ասաց. «Համբուրեք ձեր կնոջը, դուք էլ համբուրեք ձեր ամուսնուն», և մոմերն առավ նրանց ձեռքից։

Լևինն զգուշությամբ համբուրեց Կիտիի ժպտուն շուրթերը, ձեռքը տվեց նրան և զգալով տարօրինակ նոր մերձություն, դուրս գնաց եկեղեցուց։ Նա չէր հավատում, չէր կարող հավա-

տալ, որ իրողություն էր այս ամենը։ Միայն այն ժամանակ, երբ հանդիպում էին նրանց զարմացական ու երկչոտ հայացքները, նա հավատում էր դրան, որովհետև զգում էր, որ իրենք արդեն միացած են։

Ընթրիքից հետո հենց նույն գիշերը նորապսակները մեկնեցին գյուղ։

VII

Վոռնսկին ու Աննան արդեն երեք ամիս էր, ինչ միասին ճանապարհորդում էին Եվրոպայում։ Նրանք շրջագայել էին Վենետիկ, Հռոմ, Նեապոլ և հենց նոր եկել էին իտալական մի փոքրիկ քաղաք, որտեղ ուզում էին ապրել որոշ ժամանակ։

Գեղեցիկ ավագ մատուցողը, որի օծված խիտ մազերի սանրվածքի միջնագիծն սկսվում էր վզից, ֆրակով ու լայնաբերան սպիտակ բատիստե շապկով, կլոր փորին բրելոկների մի կապոց, ձեռները դրած գրպաններում, աչքերն արհամարհալից կկոցած, խիստ տոնով ինչ-որ բան էր պատասխանում կանգ առած պարոնին։ Գլխավոր մուտքի մյուս կողմից լսելով քայլեր, որոնք բարձրանում էին սանդուղքի վրա, ավագ կելները շուռ եկավ ու տեսնելով ռուս կոմսին, որը նրանց մոտ վարձել էր լավագույն սենյակները, հարգալից հանեց ձեռները գրպաններից և կռացած, բացատրեց, որ եկել էր սուրհանգակը ու պալացցո վարձելու գործը գլուխ է եկել։ Գլխավոր կառավարիչը պատրաստ է ստորագրելու պայմանագիրը։

— Ա՛հ։ Շատ ուրախ եմ,— ասաց Վոռնսկին։— Իսկ տիկինը տա՞նն է, թե ոչ։

— Նրանք գնացել էին զբոսնելու, բայց հիմա վերադարձան,— պատասխանեց կելները։

Վոռնսկին գլխից հանեց իր լայնեզր փափուկ գլխարկը և թաշկինակով սրբեց քրտնած ճակատն ու մինչև ականջների կեսը թողած մազերը, որոնք ետ էին սանրած և ծածկում էին նրա ճաղատությունը։ Ու ցրված նայելով դեռ կանգնած և իրեն հետաքրքրությամբ դիտող պարոնին, ուզում էր անցնել։

— Այս պարոնը ռուս է և հարցնում էր ձեր մասին,— ասաց ավագ կելները։

Սրտնեղության զգացումով, թե ծանոթներից հեռու գնալու

հնար չկա, դրա հետ նաև իր միօրինակ կյանքի համար գեթ որևէ զվարճություն գտնելու ցանկությամբ, Վոռնսկին մի անգամ էլ նայեց ետ քաշված ու կանգ առած պարոնին և երկուսի աչքերն էլ պայծառացան միաժամանակ։

— Գոլենի՛շչև։

— Վոռ՛նսկի։

Իսկապես, դա Գոլենիշչևն էր, Վոռնսկու ընկերը պաժերի դպրոցից։ Գոլենիշչևը դպրոցում պատկանում էր լիբերալ կուսակցությանը, դպրոցից դուրս եկավ քաղաքացիական աստիճանով և ո՛չ մի տեղ չէր ծառայում։ Ընկերներն իրարից բոլորովին հեռացան դպրոցն ավարտելուց հետո և այնուհետև իրար պատահեցին միայն մի անգամ։

Այդ հանդիպմանը Վոռնսկին հասկացավ, որ Գոլենիշչևն ընտրել է ինչ-որ խորիմաստ լիբերալ գործունեություն և դրա հետևանքով ուզում էր արհամարհել Վոռնսկու գործունեությունն ու կոչումը։ Այդ պատճառով, Վոռնսկին Գոլենիշչևի հետ պատահելիս տվեց նրան այն պաղ ու հպարտ դիմազարկը, որը նա գիտեր տալ մարդկանց և որի իմաստն այս էր. «ձեզ կարող է դուր գալ կամ դուր չգալ իմ ապրելակերպը, ինձ համար դա բոլորովին նշանակություն չունի. դուք պետք է հարգեք ինձ, եթե ուզում եք ծանոթություն պահել ինձ հետ», իսկ Գոլենիշչևը արհամարհալից, անտարբեր էր Վոռնսկու վարվելաձևի հանդեպ։ Թվում էր, թե այդ հանդիպումը պետք է ավելի ևս հեռացներ նրանց իրարից։ Իսկ այժմ նրանք ճչացին ուրախությունից ու պայծառացան, ճանաչելով իրար։ Վոռնսկին ո՛չ մի կերպ չէր սպասում, որ այդպես կուրախանա Գոլենիշչևին տեսնելիս, բայց, հավանորեն, նա ինքն էլ չգիտեր, թե ինչպես ձանձրալի էր իր համար։ Նա մոռացել էր վերջին հանդիպման անախորժ տպավորությունը և բաց, ուրախ դեմքով ձեռքը մեկնեց իր նախկին ընկերոջը։ Ուրախության միևնույն արտահայտությունը փոխարինեց Գոլենիշչևի դեմքի նախորդ հուզումնալից արտահայտությանը։

— Որքան ուրախ եմ քեզ հանդիպելուս,— ասաց Վոռնսկին, բարեկամական ժպիտով ցուցադրելով իր ամուր, սպիտակ ատամները։

— Իսկ ես լսում եմ՝ Վոռնսկի, բայց ո՛րը — չգիտեի։ Շատ, շատ ուրախ եմ։

— Ներս գնանք։ Ի՞նչ ես անում։

— Արդեն երկրորդ տարին է, որ ես ապրում եմ այստեղ։ Աշխատում եմ։

— Ա՜, կարեկցությամբ ասաց Վռոնսկին։— Դե՛, ներս գնանք։

Եվ ռուսների սովորությամբ, փոխանակ հենց ռուսերեն ասելու այն, ինչ ուզում էր ծածկել ծառաներից, նա խոսեց ֆրանսերեն։

— Դու ծանո՞թ ես Կարենինայի հետ։ Մենք ճանապարհորդում ենք միասին։ Ես գնում եմ նրա մոտ,— ասաց նա ֆրանսերեն, ուշադիր նայելով Գոլենիշչևի դեմքին։

— Ա՜։ Ես չգիտեի (թեև նա գիտեր),— անտարբերությամբ պատասխանեց Գոլենիշչևը։— Դու վաղո՞ւց ես եկել,— ավելացրեց նա։

— Ե՞ս. չորրորդ օրն է,— պատասխանեց Վռոնսկին, մի անգամ էլ ուշադրությամբ զննելով ընկերոջ դեմքը։

«Այո՛, նա կարգին մարդ է և գործին նայում է ինչպես պետք է,— ասաց ինքն իրեն Վռոնսկին, հասկանալով Գոլենիշչևի դեմքի արտահայտության ու խոսակցությունը փոխելու նշանակությունը։— Կարելի է նրան ծանոթացնել Աննայի հետ, նա հարցին նայում է ինչպես պետք է»։

Վռոնսկին այս երեք ամսում, որ նա անցկացրեց Աննայի հետ արտասահմանում, պատահելով նոր մարդկանց, միշտ հարց էր տալիս իրեն այն մասին, թե ինչպե՞ս կնայի այդ նոր անձնավորությունն իր ու Աննայի հարաբերությանը, և մեծ մասամբ տղամարդկանց մեջ գտնում էր ինչպես պետք է հասկացողությունը։ Բայց եթե հարցնեին իրեն ու հարցնեին նրանց, ովքեր հասկանում էին «ինչպես պետք է», թե ի՛նչ է այդ հասկացողությունը, և՛ ինքը, և՛ նրանք կընկնեին մեծ դժվարության մեջ։

Ըստ էության, «ինչպես պետք է» հասկացողները, Վռոնսկու կարծիքով, բնավ չէին հասկանում դա, այլ առհասարակ պահում էին իրենց այնպես, ինչպես պահում են իրենց բարեկիրթ մարդիկ՝ ամեն կողմից կյանքը շրջապատող բոլոր բարդ ու անլուծելի հարցերի վերաբերյալ, պահում են իրենց վայելուչ, խուսափելով ակնարկներից և անախորժ հարցերից։ Նրանք ձևացնում էին, իբր լիովին հասկանում են դրության

արժեքն ու իմաստը, ընդունում և նույնիսկ հավանություն են տալիս դրան, բայց անտեղի և ավելորդ են համարում բացատրել այդ բոլորը։

Վռոնսկին անմիջապես կռահեց, որ Գոլենիշչևը մեկն էր դրանցից, այս իսկ պատճառով՝ կրկնակի ուրախ էր նրան տեսնելու համար։ Իսկապես, երբ Վռոնսկին նրան տարավ Կարենինայի մոտ, Գոլենիշչևը իրեն պահում էր Աննայի հետ այնպես, ինչպես կարող էր միայն ցանկալ Վռոնսկին։ Նա հայտնապես, առանց ամենաթեթև ջանքի, խուսափում էր այն բոլոր խոսակցություններից, որոնք կարող էին հանգել անհարմար դրության։

Նա Աննային չէր ճանաչում առաջ և ապշեց նրա գեղեցկությունից, ավելի ևս այն պարզությունից, որով Աննան ընդունում էր իր վիճակը։ Կարենինան կարմրեց, երբ Վռոնսկին ներս բերեց Գոլենիշչևին, և մանկական այդ կարմրությունը, որ պատեց նրա բաց ու գեղեցիկ դեմքը, չափազանց դուր եկավ Գոլենիշչևին։ Բայց առանձնապես դուր եկավ նրան այն, որ Աննան անմիջապես, կարծես դիտմամբ, որպեսզի թյուրիմացություններ չծագեն օտար մարդու ներկայությամբ, Վռոնսկուն պարզապես անվանեց Ալեքսեյ և ասաց, թե իրենք միասին տեղափոխվում են նոր վարձած տունը, որն այստեղ կոչվում է պալացցո։ Գոլենիշչևին դուր եկավ այդ ուղղակի և պարզ վերաբերմունքը սեփական վիճակի հանդեպ։ Նայելով Աննայի բարեսրտորեն ուրախ, եռանդուն վարվելաձևին, ճանաչելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ու Վռոնսկուն, Գոլենիշչևին թվում էր, որ ինքը հասկանում է Աննային։ Նրան թվում էր, որ ինքը հասկանում է այն, ինչը բնավ չէր հասկանում Աննան. այսինքն՝ այն, թե ինչպե՞ս կարող էր նա՝ Աննան, դժբախտացնելով ամուսնուն, լքելով նրան ու որդուն և կորցնելով իր բարի համբավը, զգալ իրեն եռանդագին ուրախ և երջանիկ։

— Ուղեցույցի մեջ դա կա,— ասաց Գոլենիշչևն այն պալացցոյի մասին, որ վարձում էր Վռոնսկին։— Այնտեղ կա սքանչելի Տինտորետտո[1]։ Նրա վերջին էպոխայից։

1 Իտալացի հայտնի նկարիչ XVI դարում։

— Գիտե՞ք ինչ, հիանալի եղանակ է, գնանք այնտեղ, մի անգամ էլ նայենք,— ասաց Վոռնսկին, դիմելով Աննային։

— Շատ ուրախ եմ, ես հիմա գնամ՝ գլխարկս դնեմ։ Դուք ասում եք, որ շոգ է,— ասաց Աննան, կանգնելով դռան մոտ ու հարցական նայելով Վոռնսկուն։ Եվ նորից պայծառ շառագույնը պատեց նրա դեմքը։

Վոռնսկին նրա հայացքից հասկացավ, որ նա չգիտե, թե ինչ հարաբերության մեջ է ուզում լինել Ալեքսեյը Գոլենիշչևի հետ, և որ նա վախենում է, արդյո՞ք այնպես է պահում իրեն, ինչպես կուզենար Վոռնսկին։

Նա նայեց Աննային տխական, քնքուշ հայացքով։

— Ոչ, շատ շոգ չէ,— ասաց Վոռնսկին։

Եվ Աննային թվաց, որ ինքը ամեն ինչ հասկացավ. կարևորն այն է, որ Վոռնսկին գոհ է իրենից. ու ժպտալով նրան, Աննան արագ քայլերով դուրս գնաց դռնից։

Ընկերները նայեցին իրար, և երկուսի դեմքին էլ շփոթություն առաջացավ. կարծես Գոլենիշչևը, որ հայտնապես հիացած էր Աննայով, ուզում էր մի բան ասել նրա մասին, բայց չգիտեր՝ ի՞նչ ասել, իսկ Վոռնսկին կամենում ու վախենում էր նույն այդ բանից։

— Ահա՞ թե ի՞նչ,— ասաց Վոռնսկին, որպեսզի սկսած լինի որևէ խոսակցություն։— Ուրեմն դու բնակություն ես հաստատել այստեղ։ Ուրեմն դու դեռ զբաղվում ես նույն բանով,— շարունակեց նա, հիշելով, որ իրեն ասել էին, թե Գոլենիշչևը ինչ-որ բան է գրում։

— Այո՛, ես գրում եմ երկու հիմունքների երկրորդ մասը,— ասաց Գոլենիշչևը, բռնկվելով բավականությունից՝ իրեն այդ հարցը տալիս,— ավելի ճիշտ՝ ես դեռ չեմ գրում, այլ նախապատրաստում եմ, նյութեր եմ հավաքում։ Նա կլինի շատ ավելի ծավալուն և կընդգրկի համարյա բոլոր հարցերը։ Մեզանում՝ Ռուսաստանում, չեն ուզում հասկանալ, որ մենք Բյուզանդիայի ժառանգներն ենք,— սկսեց նա մի երկար ջերմ բացատրություն։

Վոռնսկին սկզբում անհարմար էր զգում, որ չգիտեր երկու հիմունքների մասին առաջին հոդվածը, որի մասին հեղինակը խոսում էր, որպես հայտնի բանի։ Բայց հետո, երբ Գոլենիշչևն սկսեց պարզել իր մտքերը, և Վոռնսկին կարող էր

հետևել նրան, դուրս եկավ, որ չիմանալով հանդերձ երկու հիմունքները, նա լսում էր նրան ո՛չ առանց հետաքրքրության, որովհետև Գոլենիշչևը լավ էր խոսում։ Բայց Վոռնսկուն զարմացնում ու վշտացնում էր այն գրգռված հուզմունքը, որով Գոլենիշչևը խոսում էր իրեն զբաղեցնող նյութի մասին։ Որքան ավելի էր խոսում նա, այնքան ավելի էին բոցավառվում նրա աչքերը, այնքան ավելի շտապողական կերպով էր նա առարկում իր կարծեցյալ հակառակորդներին և այնքան ավելի խռովահույզ ու վիրավորված էր դառնում նրա դեմքի արտահայտությունը։ Մտաբերելով նիհար, աշխույժ, բարեսիրտ ու ազնիվ երեխա Գոլենիշչևին, որը միշտ առաջին աշակերտն էր դպրոցում, Վոռնսկին ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ նրա գրգռվածության պատճառը, և հավանություն չէր տալիս դրան։ Այդ գրգռվածությունը նրան առանձնապես դուր չէր գալիս այն պատճառով, որ Գոլենիշչևը, որը լավ շրջանից էր, կանգնում էր միևնույն մակարդակի վրա ինչ-որ գրչակների հետ, որոնք նրան գրգռում էին, և նա բարկանում էր նրանց վրա։ Մի՞թե արժեր։ Դա դուր չէր գալիս Վոռնսկուն, բայց չնայած դրան, նա զգում էր, որ Գոլենիշչևը դժբախտ է, և խղճում էր նրան։ Դժբախտություն, համարյա խելահեղություն էր նկատվում այդ շարժուն, բավական գեղեցիկ դեմքին այն ժամանակ, երբ նա, չնկատելով նույնիսկ Աննայի դուրս գալը, շարունակում էր շտապ ու ջերմորեն արտահայտել իր մտքերը։

Երբ Աննան ներս եկավ գլխարկով ու թիկնոցով և, գեղեցիկ ձեռքի արագ շարժումով խաղալով հովանոցի հետ, կանգնեց նրա մոտ, Վոռնսկին թեթևության զգացումով կտրվեց իր վրա շեշտակի սևեռած՝ Գոլենիշչևի գանգատվող աչքերից ու նոր սիրով նայեց կյանքով և ուրախությամբ լեցուն իր սքանչելի ընկերուհուն։ Գոլենիշչևը դժվարությամբ ուշքի եկավ ու սկզբում տխուր և մռայլ էր, բայց Աննան, սիրալիր տրամադրված դեպի ամենքը (այդպես էր նա այդ ժամանակ), շուտով կայտառացրեց նրան իր պարզ և ուրախ վերաբերմունքով։ Փորձելով խոսակցության տարբեր նյութեր, Աննան խոսքը բերեց, հասցրեց նկարչությանը, որի մասին Գոլենիշչևը խոսում էր շատ լավ և ուշադրությամբ լսում էր նրան։ Նրանք ոտքով հասան մինչև վարձած տունը և դիտեցին այն։

— Ես շատ ուրախ եմ մի բանի համար,— ասաց Աննան Գոլենիշչևին, երբ նրանք արդեն վերադառնում էին.— Ալեքսեյը կունենա լավ atelier[1]։ Անպայման դու վերցրու այդ սենյակը.— ասաց նա Վրոնսկուն ռուսերեն և ասելով նրան դու, որովհետև նա արդեն հասկացավ, որ Գոլենիշչևն իրենց միայնության մեջ կդառնա մոտիկ մարդ և որ նրա առաջ պետք չէ քողարկվել։

— Մի՞թե դու նկարում ես,— ասաց Գոլենիշչևը արագ շուռ գալով դեպի Վրոնսկին։

— Այո՛, ես վաղուց էի զբաղվում դրանով և այժմ մի քիչ սկսել եմ,— ասաց Վրոնսկին կարմրելով։

— Նա մեծ տաղանդ ունի,— ասաց Աննան ուրախ ժպիտով։— Ես, իհարկե, դատավոր չեմ։ Բայց գիտուն դատավորները նույնն ասին։

VIII

Աննան իր ազատվելու և արագ բուժվելու այս առաջին շրջանում զգում էր իրեն աններելի երջանիկ ու կյանքի խընդությամբ լեցուն։ Ամուսնու դժբախտության մասին հիշողությունը չէր թունավորում նրա երջանկությունը։ Մի կողմից՝ այդ հիշողությունը չափազանց սոսկալի էր, և դժվար էր դրա մասին մտածելը։ Մյուս կողմից՝ ամուսնու դժբախտությունը Աննային տալիս էր չափազանց մեծ երջանկություն, ուստի դժվար էր զղջալը։ Հիշողությունն այն բոլորի մասին, որ տեղի ունեցավ Աննայի հիվանդությունից հետո՝ ամուսնու հետ հաշտվելը, խզումը, Վրոնսկու վերքի մասին լուրը, նրա երևան գալը, ապահարզանի պատրաստությունը, ամուսնու տնից հեռանալը, հրաժեշտը որդու հետ,— այս բոլորը նրան թվում էր տենդախտի երազ, որից նա արթնացավ մենակ՝ Վրոնսկու հետ, արտասահմանում։ Ամուսնուն պատճառած չարիքի մասին հիշողությունը Աննայի մեջ հարուցում էր մի զգացում, նման զզվանքի և նման այն զգացումին, որ ունենում է խեղդվող մարդը, երբ իրենից պոկում է իրեն կարթված մարդուն։ Այդ մարդը խեղդվեց։ Հասկանալի է, որ դա վատ բան էր, բայց դա միակ փրկությունն էր, և ավելի լավ է չհիշել այդ սոսկալի մանրամասնությունները։

[1] Գեղարվեստագետի՝ նկարչի, քանդակագործի արվեստանոց։

Հանգստացուցիչ մի դատողություն իր վարմունքի մասին եկավ Աննայի գլուխը խզման առաջին րոպեին, և այժմ, երբ նա հիշեց ամբողջ անցածը, մտաբերեց այդ միակ դատողությունը։ «Ես անխուսափելիորեն դժբախտացրի այդ մարդուն,— մտածում էր նա,— բայց ես չեմ ուզում օգտվել այդ դժբախտությունից, ես նույնպես տառապում եմ և կտառապեմ. ես զրկվում եմ այն բանից, որ ամեն ինչից ավելի թանկ էի գնահատում,— զրկվում եմ ազնիվ անունից ու որդուցս։ Ես վատ բան արի, ուստի չեմ ուզում բախտավորություն, չեմ ուզում ապահարզան և կտառապեմ նախատինքից ու որդուցս անջատվելուց»։ Սակայն նա որքան անկեղծորեն ուզում էր տառապել, չէր տառապում։ Ոչ մի նախատինք չկար։ Շնորհիվ այն տակտի, որ այնպես առատորեն օժտված էին երկուսն էլ, նրանք արտասահմանում, խուսափելով ռուս տիկիններից, երբեք իրենց չէին դնում կեղծ դրության մեջ և ամենուր պատահում էին մարդկանց, որոնք ձևանում էին, իբր լիովին հասկանում են նրանց փոխադարձ դրությունը շատ ավելի լավ, քան հասկանում են իրենք։ Անջատումը որդուց, որին Աննան սիրում էր, չէր տանջում նրան սկզբում։ Աղջիկը, Վրոնսկու երեխան, այնպես սիրունիկ էր և այնպես կապեց իր հետ Աննային՝ սկսած այն օրից, երբ նրան մնաց միայն այդ աղջիկը, որ Աննան հազվադեպ էր հիշում որդուն։

Կյանքի պահանջը, որ ավելացել էր ապաքինվելու հետևանքով, այնքան ուժեղ էր և կյանքի պայմաններն այնպես նոր էին ու հաճելի, որ Աննան իրեն աններելի երջանիկ էր զգում։ Որքան նա ավելի էր ճանաչում Վրոնսկուն, այնքան ավելի էր սիրում նրան։ Աննան սիրում էր նրան իր հանդեպ տածած նրա սիրո համար և իբրև Վրոնսկու։ Նրան լիովին տիրանալը միշտ ուրախալի էր Աննայի համար։ Նրա մոտիկությունը միշտ հաճելի էր Աննային։ Վրոնսկու բնավորության բոլոր գծերը, որ Աննան սկսում էր ճանաչել ավելի ու ավելի, անարտահայտելի սիրելի էին նրան։ Աննայի համար, կարծես սիրահարված ջահել աղջկա համար, հրապուրիչ էր նրա արտաքինը, որ փոխվել էր աշխարհիկ զգեստի մեջ։ Ամեն ինչում, որ ասում, մտածում և անում էր Վրոնսկին, Աննան տեսնում էր առանձնապես ազնիվ ու վեհ մի բան։ Նրա հիացմունքը Վրոնսկուց հաճախ վախեցնում էր իրեն։ Նա փնտրում

էր և չէր կարողանում գտնել Վոռնսկու մեջ մի բան՝ ո՛չ հրաշալի։ Նա չէր համարձակվում ցույց տալ Վոռնսկուն իր ոչնչության գիտակցությունը նրա առաջ։ Նրան թվում էր, որ Վոռնսկին, իմանալով այդ, կարող է ավելի շուտ դադարել իրեն սիրելուց. իսկ այժմ նա ո՛չ մի բանից այնպես չէր վախենում, ինչպես Վոռնսկու սերը կորցնելուց, թեև դրա համար ո՛չ մի առիթ չուներ։ Բայց Աննան չէր կարող շնորհապարտ չլինել Վոռնսկուն՝ նրա վերաբերմունքի համար և ցույց չտալ, թե ինչպե՛ս ինքը գնահատում է դա։ Աննայի կարծիքով, Վոռնսկին, որ այնպես բացահայտ կոչում ուներ պետական գործունեության, որտեղ պետք է խաղար նշանակալից դեր,— զոհաբերեց իր փառասիրությունը հանուն Աննայի, երբեք ցույց չտալով ամենաթեթև ափսոսանքի նշան։ Նա, ավելի, քան առաջ, վերաբերվում էր Աննային սիրահարգալից, և ոչ մի բոպե նրա գլխից չէր հեռանում այն միտքը, թե չլինի թե Աննան երբևիցե զգա իր վիճակի անհարմարությունը։ Այդքան արիասիրտ այդ մարդը ո՛չ միայն երբեք չէր հակաճառում Աննային, այլև նրա հանդեպ չուներ իր կամքը և թվում էր, թե զբաղված է միայն մի բանով՝ կատարել նրա ցանկությունները։ Ու Աննան չէր կարող չգնահատել այդ, թեև Վոռնսկու լարված ուշադրությունը, հոգացողության այն մթնոլորտը, որով նա շրջապատում էր Աննային, երբեմն ճնշում էր վերջինիս։

Մինչդեռ Վոռնսկին լիովին երջանիկ չէր, չնայած՝ որ ամբողջովին իրականացավ այն, ինչ ցանկանում էր նա այնքան երկար ժամանակ։ Նա շուտով զգաց, որ իր ցանկության իրագործումը տվեց իրեն միայն ավազի մի հատիկ բախտի այն սարից, որին սպասում էր ինքը։ Այդ իրագործումը ցույց տվեց նրան այն մշտական սխալը, որ անում են մարդիկ, ցանկության կենսագործումը պատկերացնելով որպես երջանկություն։ Սկզբում, երբ նա միացավ Աննայի հետ ու հագավ աշխարհիկ զգեստ, զգաց ամբողջ հմայքն առհասարակ ազատության, որին անգիտակ էր առաջ, զգաց նաև թովչանքը սիրո ազատության և գոհ էր, բայց՝ կարճ ժամանակ։ Նա շուտով զգաց, որ իր հոգում լեռնացավ ցանկությունների ցանկությունը՝ թախիծը։ Իր կամքից անկախ, նա սկսեց ընկնել ամեն մի անցողիկ քմահաճույքի ետևից, ընդունելով այն, որպես ցանկություն ու նպատակ։ Օրվա տասնվեց ժամը պետք էր լցնել մի

բանով, որովհետև արտասահմանում նրանք ապրում էին բոլորովին ազատ, հեռու հասարակական կյանքի պայմանների այն շրջանից, որ ժամանակ էր գրավում Պետերբուրգում։ Չէր կարելի մտածել անգամ ամուրի կյանքի զվարճությունների մասին, որ զբաղեցնում էին Վոռնսկուն առաջները դեպի արտասահման կատարած ճանապարհորդությունների միջոցին, որովհետև այդ կարգի փորձը՝ ծանոթների հետ ուշ ընթրիքը, առաջ բերեց Աննայի մեջ անակնկալ և անհամապատասխան հուսալքում։ Չէր կարելի նաև առնչություն ունենալ տեղական հասարակության և ռուսների հետ, նկատի ունենալով իրենց վիճակի անորոշությունը։ Հիշարժան վայրերը դիտելը, թեպետ այդեն դիտել էին ամեն ինչ, Վոռնսկու համար, որպես ռուս ու խելոք մարդու, չուներ անբացատրելի այն կարևորությունը, որ գիտեն վերագրել այդ գործին անգլիացիները։

Եվ ինչպես սոված անասունը որ վրա է ընկնում իրեն պատահած ամեն առարկայի, հուսալով թե կերակուր կգտնի նրա մեջ, այնպես էլ Վոռնսկին բոլորովին անգիտակցաբար, կրպչում էր մերթ քաղաքականության, մերթ նոր գրքերի, մերթ նկարների։

Որովհետև մանկությունից նա ընդունակ էր նկարչության և որովհետև չգիտեր, թե ինչպես ծախսի իր դրամը, սկսեց հավաքել գրավյուրներ, կանգ առավ նկարչության վրա, սկսեց զբաղվել դրանով ու դրա մեջ դրեց ցանկությունների այն ազատ պաշարը, որ բավարարում էր պահանջում։

Նա ընդունակ էր արվեստը հասկանալու և արվեստին ճաշակով ու ճշտորեն նմանվելու և կարծեց, թե ինքն ունի հենց այն, ինչ պետք է նկարչին, ուստի, առժամ տատանվելուց հետո, թե նկարչության ո՞ր ճյուղն ընտրի՝ կրոնակա՞ն, պատմակա՞ն ժանրը, թե՞ ռեալիստական, սկսեց նկարել։ Նա հասկանում էր բոլոր տեսակները և կարող էր ոգևորվել թե՛ մեկով, թե՛ մյուսով։ Բայց նա չէր կարողանում երևակայել, որ կարելի է բնավ չիմանալ, թե նկարչության ի՞նչ տեսակներ կան, և անմիջականորեն ներշնչվել իր հոգում եղածով, առանց հոգ տանելու այն մասին, թե արդյոք որևէ հայտնի ժանրի կպատկանի՞ այն, ինչ պիտի նկարի ինքը։ Որովհետև նա չգիտեր դա, ներշնչվում էր ո՛չ թե անմիջականորեն կյանքով, այլ միջնորդաբար արվեստի մեջ արդեն մարմնավորված

կյանքով, ուստի ոգևորվում էր շատ արագ ու հեշտ և նույնպես արագությամբ ու հեշտությամբ հասնում էր այն բանին, իբր իր նկարածը շատ նման էր այն ժանրին, որին ձգտում էր նմանվել։

Մյուս բոլոր ժանրերից նա ամենից ավելի հավանում էր ֆրանսիականը, տպավորիչ ու նազելի, և այդ ոճով նա սկսեց նկարել Աննայի պորտրեն իտալական զգեստով, ու այդ շատ հաջող էր թվում իրեն և բոլոր տեսնողներին։

IX

Հին, բարձիթողի պալացցոն, ծեփանախշ բարձր առաստաղներով ու որմնանկարներով, մոզաիկ հատակներով, բարձր լուսամուտներին քաշած ծանր, դեղին մետաքսե վարագույրներով, պատերի դրցակներին և բուխարիներին դրած սկահակներով, քանդակած դոներով ու նկարազարդ, մռայլ դահլիճներով այդ պալացցոն, երբ նրանք տեղափոխվեցին այդտեղ, հենց իր արտաքին տեսքով նպաստում էր Վռոնսկու հաճելի մոլորությանը, իբր ինքը ո՛չ այնքան ռուս կալվածատեր է, եղերմեյստեր առանց ծառայության, որքան արվեստների հովանավոր ու լուսավորյալ սիրող, ինքն էլ մի համեստ նկարիչ, որ սիրած կնոջ համար հրաժարվել է բարձր հասարակությունից, կապերից, փառասիրությունից։

Վռոնսկու ընտրած դերը լիովին հաջողվեց պալացցո տեղափոխվելուց հետո, և Գոլենիշչևի միջոցով ծանոթանալով մի քանի հետաքրքիր անձանց հետ, սկզբում հանգիստ էր։ Նա նկարում էր բնօրինակից էտյուդներ՝ նկարչության պրոֆեսոր իտալացու ղեկավարությամբ ու զբաղվում էր միջնադարյան իտալական կյանքով։ Միջնադարյան իտալական կյանքը վերջերս այնպես գրավեց Վռոնսկուն, որ նա սկսեց նույնիսկ գլխարկը և ուսին գցած պլեդը կրել միջնադարյան եղանակով, որ շատ սազում էր նրան։

— Մենք ապրում ենք ու ոչինչ չգիտենք,— ասաց մի անգամ Վռոնսկին առավոտյան իր մոտ եկած Գոլենիշչևին։— Դու տեսե՞լ ես Միխայլովի նկարը,— հարցրեց նա, տալով նրան հենց նոր՝ առավոտյան ստացված ռուսական թերթը և նշելով հոդվածը ռուս նկարչի մասին. սա ապրում էր նույն այս քաղաքում ու վերջացրել էր մի նկար, որը նախապես գնված էր

և որի մասին վաղուց էին լուրեր պտտվում։ Հոդվածի մեջ կար կշտամբանք կառավարության և ակադեմիայի հասցեին, որ ուշագրավ նկարիչը զրկված էր ամեն խրախուսանքից և օգնությունից։

— Տեսել եմ,— պատասխանեց Գոլենիշչևը։— Իհարկե, նա զուրկ չէ ձիրքից, բայց ուղղությունը բոլորովին կեղծ է։ Էլի միևնույն Իվանովյան—Շտրաուսյան—Ռենանյան վերաբերմունքը Քրիստոսին ու դեպի կրոնական նկարչությունը։

— Ի՞նչ է պատկերում նկարը,— հարցրեց Աննան։

— Քրիստոսը Պիղատոսի առաջ։ Քրիստոսը պատկերացված է որպես հրեա՝ նոր դպրոցի ամբողջ ռեալիզմով։

Նկարի բովանդակության մասին տրված հարցը հղացրեց Գոլենիշչևի մեջ նրա ամենասիրած թեմաներից մեկը, և նա սկսեց բացատրել.

— Ես չեմ հասկանում, թե ինչպե՞ս կարող են նրանք այդպիսի կոպիտ սխալ անել։ Քրիստոսն արդեն ունի իր որոշակի մարմնացումը ալևոր մեծությունների արվեստի մեջ։ Հետևաբար, եթե նրանք ուզում են պատկերել ո՛չ թե աստված, այլ ռևոլյուցիոների կամ իմաստունի, թող վերցնեն պատմությունից Սոկրատին, Ֆրանկլինին, Շառլոտա Կորդեին, միայն թե ո՛չ Քրիստոսին։ Նրանք վերցնում են հենց այն դեմքը, որը չի կարելի վերցնել արվեստի համար, և հետո...

— Իսկ ճի՞շտ է, որ այդ Միխայլովն այդպես չքավոր է,— հարցրեց Վռոնսկին, մտածելով, որ ինքը, որպես ռուս մեկենաս, պետք է օգնի նկարչին, անկախ այն բանից, արդյոք լա՞վ է, թե վատ է նկարը։

— Դժվար թե։ Նա նշանավոր պորտրետիստ է։ Դուք տեսե՞լ եք Վասիլչիկովայի դիմանկարը։ Բայց նա կարծեմ չի ուզում այլևս պորտրեներ նկարել, այդ պատճառով կարող է պատահել, որ, իրոք կարիքի մեջ է։ Ես ասում եմ, որ...

— Արդյոք չի՞ կարելի խնդրել նրան, որ նկարի Աննա Արկադևնայի պորտրեն,— հարցրեց Վռոնսկին։

— Ինչո՞ւ իմը,— ասաց Աննան։— Քո նկարելուց հետո ես չեմ ուզում ոչ մի պորտրե։ Ավելի լավ է Անիին (այդպես էր կանչում նա իր աղջկան)։ Ահա և նա,— ավելացրեց Աննան, պատուհանից նայելով դեղեցկուհի իտալացի ծծմորը, որը փոքրիկին դուրս տարավ պարտեզ, և անմիջապես աննկատե-

լիորեն հայացքը դարձրեց Վոռնսկուն։ Գեղեցկուհի ծծմայրը, որի գլուխը Վոռնսկին նկարում էր իր նկարի համար, միակ գաղտնի վիշտն էր Աննայի կյանքում։ Վոռնսկին ընդօրինակելով ծծմոր գլուխը, հիանում էր նրա գեղեցկությամբ ու միջնադարյանությամբ, և Աննան չէր համարձակվում խոստովանել, որ վախենում էր այդ ծծմորը խանդելու զգացումից, այս իսկ պատճառով, գուրգուրում ու փայփայում էր թե՛ նրան, թե՛ նրա փոքրիկ որդուն։

Վոռնսկին նույնպես նայեց պատուհանից դուրս ու Աննայի աչքերին և անմիջապես դիմելով Գոլենիշչևին, ասաց.

— Դու ճանաչո՞ւմ ես այդ Միխայլովին։

— Ես պատահել եմ նրան։ Նա տարօրինակ մարդ է և առանց որևէ կրթության։ Գիտե՞ք, մեկը վայրենի այն նոր մարդկանցից, որոնք այժմ հաճախ են պատահում. մեկն այն ազատամիտներից, որոնք d'emblée[1] դաստիարակված են անհավատության, բացասման ու մատերիալիզմի հասկացողություններով։ Առաջ պատահում էր,— ասում էր Գոլենիշչևը, չնկատելով կամ չկամենալով նկատել, որ խոսել էին ուզում և՛ Աննան, և՛ Վոռնսկին,— առաջ պատահում էր, ազատամիտ էր կոչվում այն մարդը, որը դաստիարակվել էր կրոնի, օրենքի, բարոյականության հասկացողություններով և աշխատանքով ու պայքարով հասնում էր ազատամտության. բայց այժմ հրապարակ է գալիս նոր տիպ ինքնածին ազատամիտների, որոնք աճում, մեծանում են և նույնիսկ լսած չեն, թե եղել են բարոյականության, կրոնի օրենքներ. թե եղել են հեղինակություններ. և դրանք ուղղակի աճում, մեծանում են ամեն բան բացասելու հասկացողությունն[illegible]ով, այսինքն՝ որպես վայրենիներ։ Ահա այդպես է նա։ Կարծեմ, նա Մոսկովյան ավագ սպասավորի որդի է և ո՛չ մի կրթություն չի ստացել։ Երբ մտավ ակադեմիա ու համբավ ստեղծեց իր համար, որպես ո՛չ տխմար մարդ, նա կամեցավ կրթվել։ Եվ դիմեց այն բանին, ինչը նրան թվում էր կրթության աղբյուր, այսինքն՝ դիմեց ամսագրերին։ Եվ, հասկանո՞ւմ եք, հնում մի մարդ, ենթադրենք մի ֆրանսիացի, որ կկամենար կրթվել, կսկսեր ուսումնասիրել բոլոր կլասիկներին՝ և՛ աստվածաբաններին, և՛ ողբերգակներին, և՛ պատմաբաններին, և՛ փիլիսոփաներին, և, հասկանո՞ւմ եք, մտավոր այն ամբողջ աշխատանքը, որ կծառանար նրա առաջ. բայց մեզանում նա այժմ ուղղակի վրա ընկավ բացասական գրականությանը, շատ շուտ յուրացրեց բացասական գիտության ամբողջ ծայրաքաղ՝ և ահա պատրաստ է։ Այդ դեռ քիչ է. մի քսան տարի սրանից առաջ նա այդ գրականության մեջ կգտներ հեղինակությունների դեմ, դարավոր հայացքների դեմ պայքարի հատկանիշներ, նա այդ պայքարից կհասկանար, որ եղել է ինչ-որ ուրիշ բան, բայց հիմա նա ուղղակի վրա է ընկնում այնպիսի գրականության, որտեղ վեճի ուրժանի չեն համարում հին հայացքները, այլ ուղղակի ասում են. ոչինչ չկա, évolution, ընտրություն, գոյության կռիվ,— ուրիշ ոչինչ։ Ես իմ հոդվածում...

— Գիտե՞ք ինչ,— ասաց Աննան, որը վաղուց արդեն զգուշությամբ աչքի տակով նայել էր Վոռնսկուն ու դիտեր, որ Վոռնսկուն չէր հետաքրքրում այդ նկարչի կրթությունը, այլ զբաղեցնում էր նրան օգնելու միտքը միայն և նրան պորտրե պատվիրելը։ — Գիտե՞ք ինչ,— վճռականապես ընդհատեց նա խոսքով տարված Գոլենիշչևին։ Գնա՛նք նրա մոտ։

Գոլենիշչևն սթափվեց ու սիրով համաձայնեց։ Բայց որովհետև նկարիչն ապրում էր հեռավոր թաղամասում, ուստի վճռեցին կառք վերցնել։

Մի ժամից Աննան, Գոլենիշչևը և Վոռնսկին միասին նրստած կառքի առջևի տեղում, մոտեցան մի նոր գեղեցիկ տան՝ հեռավոր թաղամասում։ Իմանալով իրենց ընդառաջող բակապանի կնոջից, որ Միխայլովը թույլատրում է մտնել իր արվեստանոցը, բայց որ այժմ նա գտնվում է իր բնակարանում՝ երկու քայլի վրա, նրանք այդ կնոջն ուղարկեցին նկարչի ետևից՝ իրենց այցետոմսերով, թույլատվություն խնդրելով տեսնելու նկարները։

X

Նկարիչ Միխայլովը, ինչպես միշտ, աշխատանքի էր, երբ բերին նրան կոմս Վոռնսկու և Գոլենիշչևի այցետոմսերը։ Առավոտյան նա աշխատում էր ստուդիայում իր մեծ նկարի

[1] Միանգամից, մեկեն։

վրա։ Գալով տուն, նա բարկացավ կնոջ վրա, այն բանի համար, որ կինը չէր կարողանում վարվել դրամ պահանջող տանտիրուհու հետ։

— Քսան անգամ ասել եմ քեզ՝ մի՛ մտիր բացատրություններիմեջ։ Դու առանց այդ էլ հիմար ես, իսկ երբ սկսում ես իտալերեն բացատրվել, դուրս ես գալիս եռակի հիմար,— ասաց նա կնոջը երկար վեճից հետո։

— Այդ դեպքում վճարիր ժամանակին. ես մեղավոր չեմ։ Եթե ես դրամ ունենայի...

— Հանգիստ թող ինձ, ի սեր աստծո,— ճչաց Միխայլովը արտասվաթոր ձայնով և ականջները փակած, գնաց միջնորմի ետևի իր բանվորական սենյակը ու փակեց դուռը։ «Անհասկացող կին»,—ասաց նա ինքն իրեն, նստեց սեղանի առաջ և բացելով թղթապանակը, անմիջապես առանձին ջերմությամբ ձեռնամուխ եղավ սկսած գծագրին։

Նա երբեք այնպիսի ջերմությամբ և արդյունավետությամբ չէր աշխատում, քան այն ժամանակ, երբ նրա կյանքը վատ էր ընթանում ու մանավանդ, երբ կռվում էր կնոջ հետ։ «Ա՜խ, երանի մի տեղի վրա կորչեի», մտածում էր նա, շարունակելով աշխատանքը։ Նա գծանկարում էր ցասման նոպայի մեջ գտնվող մարդ։ Գծագիրը պատրաստ էր վաղորոք, բայց նկարիչը գոհ չէր նրանից։ «Ո՜չ, այն ավելի լավ էր... որտե՞ղ է այն»։ Նա գնաց կնոջ մոտ և հոնքերը կիտած, առանց նայելու նրան, հարցրեց ավագ աղջկան, թե որտե՞ղ է այն թուղթը, որ տվել էր նրանց։ Գտնվեց գծագրով թուղթը, բայց կեղտոտված ու կաթկթոտած էր ճարպամոմով։ Այսուամենայնիվ նա վերցրեց գծագիրը, դրեց իր սեղանին և հեռանալով ու աչքերը կկոցելով, սկսեց նայել նրան։ Հանկարծ նա ժպտաց և ուրախ թափահարեց ձեռքերը։

— Այսպե՜ս, այսպե՜ս,— ասաց նա և անմիջապես վերցնելով մատիտը, սկսեց արագ նկարել։ Ճարպամոմի բիծը նոր դիրք էր տալիս մարդուն։

Նկարելով այդ նոր դիրքը, հանկարծ նրա միտն եկավ դուրս ցցված կզակով այն վաճառականի եռանդուն դեմքը, որից նա սիգարներ էր վերցնում, և նա նկարեց մարդուն հենց այդ դեմքով, այդ կզակով։ Նա ծիծաղեց ուրախությունից։ Մեռած, մտացածին ֆիգուրը հանկարծ դարձավ կենդանի և ստացավ այնպիսի արտահայտություն, որն այլևս չէր կարելի փոփոխել։ Այդ ֆիգուրն ապրում էր ու գծագրած էր պարզ և անթերկբա։ Կարելի էր ուղղել գծագիրը՝ այդ ֆիգուրի պահանջների համեմատ, կարելի էր և պետք էր նույնիսկ այլ կերպ դնել ոտները, բոլորովին փոխել ձախ ձեռքի դիրքը, ետ գցել մազերը։ Բայց կատարելով այդ ուղղումները, նա չէր փոփոխում ֆիգուրը, այլ միայն դեն էր գցում այն, ինչ ծածկում էր ֆիգուրը։ Կարծես, նա վերցնում էր նրա վրայից այն ծածկույթները, որոնց պատճառով չէր երևում ամբողջ ֆիգուրը. յուրաքանչյուր նոր գիծ ցուցադրում էր միայն ամբողջ ֆիգուրը իր ամբողջ եռանդուն ուժով, այնպես, ինչպես այն հանկարծ հայտնվեց նրան ճարպամոմի թողած բծի հետևանքով։ Նա զգուշությամբ վերջացնում էր ֆիգուրը, երբ բերին այցետոմսերը։

— Իսկո՜ւյն, իսկո՜ւյն։

Նա անցավ կնոջ մոտ։

Է՜, հերիք է, Սաշա, մի՛ բարկանա,— ասաց նա կնոջը, ժպտալով անվստահ ու քնքուշ։ — Դո՜ւ մեղավոր էիր։ Ե՛ս մեղավոր էի։ Ամեն ինչ կկարգավորեմ։ — Եվ կնոջ հետ հաշտվելուց հետո, նա հագավ թավշյա օձիքով ձիթապտղի գույնի վերարկուն, դրեց գլխարկն ու գնաց ստուդիա։ Նա արդեն մոռացել էր հաջողված ֆիգուրը։ Այժմ նրան ուրախացնում և հուզում էր այն, որ կառքով եկած այդ նշանավոր ռուսները պիտի այցելեն իր ստուդիան։

Իր այն նկարի մասին, որ այժմ դրված էր մոլբերտի վրա, նա իր հոգու խորքում ուներ մի կարծիք, այսինքն՝ այդպիսի պատկեր ոչ ոք չի նկարել երբեք։ Նա չէր կարծում, թե իր պատկերը լավ էր Ռաֆայելյան բոլոր նկարներից, բայց գիտեր, որ այն, ինչ ուզում էր արտահայտել և արտահայտել էր այդ նկարով, ոչ ոք չէր արտահայտել երբևիցե։ Դա գիտեր նա հաստատ ու գիտեր արդեն վաղուց, այն օրից, երբ սկսեց նկարել այն։ Բայց մարդկանց կարծիքը, ովքեր էլ լինեին նրանք, այնուամենայնիվ հսկայական նշանակություն ուներ նրա համար և հուզում էր նրան մինչև հոգու խորքը։ Յուրաքանչյուր ամենաչնչին դիտողություն, որը ցույց էր տալիս, թե դատավորները տեսնում են գեթ փոքրիկ մասն այն բանի, ինչը նա տեսնում էր իր նկարի մեջ, հուզում էր նրան մինչև

հոգու խորքը։ Իր դատավորներին նա միշտ վերագրում էր հասկանալու ավելի խորություն, քան ուներ ինքը, և միշտ սպասում էր նրանցից այնպիսի մի բան, որ ինքը չէր տեսնում իր նկարի մեջ։ Ու հաճախ թվում էր նրան, որ դիտողների դատողության մեջ ինքը գտնում է այդ։

Նա արագ քայլերով մոտենում էր իր ստուդիայի դռանը և չնայած իր հուզմունքին, ապշեց գլխավոր մուտքի ստվերում կանգնած Աննայի ֆիգուրի նուրբ լուսավորությունից. Աննան լսում էր իրեն ջերմորեն ինչ-որ բան ասող Գոլենիշչևին ու միաժամանակ հայտնապես ցանկանում էր դիտել մոտեցող նկարչին։ Վերջինս ինքն էլ չնկատեց, թե ինչպե՞ս, մոտենալով նրանց բռնեց ու կլանեց Աննայի թողած այդ տպավորությունն այնպես, ինչպես սիգարներ ծխող վաճառականի կզակը, և թաքցրեց այն մի տեղ, որտեղից կհանի այն ժամանակ, երբ դրա կարիքը լինի։ Այցելուները, որ նախապես արդեն հիասթափված էին նկարչի մասին Գոլենիշչևի պատմածից, ավելի ևս հիասթափվեցին նրա արտաքինից։ Միջահասակ, ամրակազմ, անհանգիստ քայլվածքով, Միխայլովը թողեց անախորժ տպավորություն իր շագանակագույն գլխարկով, ձիթապտղի գույնի վերարկուով ու նեղ փանթալոնով, մինչդեռ վաղուց արդեն հագնում էին լայնը, մանավանդ իր սովորական լայն դեմքով՝ վեհերոտության արտահայտությամբ ու իր արժանապատվությունը պահելու ցանկությամբ։

— Խնդրեմ, համեցե՛ք, — ասաց նա, աշխատելով ունենալ անտարբեր տեսք և մտնելով նախասենյակ, զրպանից հանեց բանալին ու բացեց դուռը։

XI

Մտնելով արվեստանոց, նկարիչ Միխայլովը մի անգամ էլ աչք գցեց հյուրերի վրա և նշանակեց իր երևակայության մեջ նաև Վռոնսկու դեմքի, մանավանդ նրա այտոսկրերի արտահայտությունը։ Չնայած որ նրա գեղագիտական զգացումն աշխատում էր անդադար, նյութ հավաքելով իր համար, չնայած՝ նա շարունակ զգում էր ավելի ու ավելի հուզմունք այն բանից, որ մոտենում էր իր աշխատանքի մասին

դատողությունների բոպեն, այսուամենայնիվ նա աննկատելի հատկանիշներից արագ ու նուրբ կերպով կազմում էր իր հասկացողությունն այս երեք անձնավորության մասին։ Այն մեկը (Գոլենիշչևը) այստեղացի ռուս էր։ Միխայլովը չէր հիշում ո՛չ նրա ազգանունը, ո՛չ էլ այն, թե որտե՛ղ էր հանդիպել նրան և ի՛նչ էր խոսել հետը։ Նա հիշում էր միայն նրա դեմքը, ինչպես հիշում էր այն բոլոր դեմքերը, որ տեսել էր երբևիցե, բայց նա հիշում էր նույնպես, թե դա մեկն էր կեղծ-նշանակալից և արտահայտությամբ աղքատ այն դեմքերից, որ առանձնացվել էին նրա երևակայության հսկայական բաժնում։ Երկար մազերը և շատ բաց ճակատը տալիս էին արտաքին կարևորություն այդ դեմքին, որի վրա կար միմիայն մանկական փոքրիկ անհանգիստ արտահայտություն՝ կենտրոնացած նեղ քթարմատին։ Վռոնսկին ու Կարենինան, Միխայլովի դատողությամբ, պետք է լինեին տոհմիկ ու հարուստ ռուսներ, որոնք ոչինչ չեն հասկանում արվեստից, ինչպես և բոլոր հարուստ ռուսները, բայց որոնք ձևանում են արվեստ սիրող ու գնահատող։ «Հավանորեն արդեն նայել են ամբողջ հինը և այժմ շրջագայում են նորերի՝ շառլատան գերմանացու և «պրեռաֆայելիտ»[1] հիմար անգլիացու արվեստանոցները, ու եկել են ինձ մոտ՝ իրենց շրջահայեցողությունը լրացնելու համար միայն», մտածում էր նա։ Նա շատ լավ գիտեր դիլետանտների վարվելաձևը՝ (որքան ավելի խելոք էին նրանք, այնքան ավելի վատ) դիտել արդի նկարիչների արվեստանոցները միայն այն նպատակով, որ իրավունք ունենան ասելու, թե արվեստն ընկել է և իբր մարդ ինչքան ավելի է դիտում նորերին, այնքան ավելի է համոզվում, որ հին մեծ վարպետները մնացել են անկրկնելի։ Նա սպասում էր այդ բոլորին, տեսնում էր այդ բոլորը նրանց աչքերում, տեսնում էր այն անտարբեր անփութության մեջ, որով նրանք խոսում էին իրար հետ, դիտում մանեկեններն ու կիսանդրիները և աղատ շրջում էին, սպասելով, մինչև ինքը բաց կանի նկարը։ Բայց չնայած դրան, այն ժամանակամիջոցին, մինչ նա շուտ էր տալիս իր էտյուդները, բարձրացնում վարագույրներն ու

[1] Այդպես էին կոչվում 19-րդ դարի կեսերին Լոնդոնում հիմնված նկարչական դպրոցի ներկայացուցիչները, որոնք քարոզում էին միամտություն և անկեղծություն նկարչության մեջ։

վիրցնում սավանները. նա զգում էր ուժեղ հուզմունք. և ավելի ու ավելի դուր էին գալիս նրան թե՛ Վոռնսկին, թե՛ մանավանդ Աննան, չնայած որ, նրա հասկացողությամբ, բոլոր տոհմիկ ու հարուստ ռուսները պետք է լինեին անասուն և հիմար։

— Ահա՜, չէի՞ք կամենա արդյոք,— ասաց նա, անհանգիստ քայլվածքով քաշվելով մի կողմ և նշելով նկարը։ — Դա Պիղատոսի հորդորանքն է։ Մատթեոս՝ գլուխ XXVII,— ասաց նա, զգալով, որ շուրթերն սկսում են դողալ հուզմունքից։ Նա հեռացավ ու կանգնեց նրանց ետևը։

Այն մի քանի վայրկյանին, որոնց ընթացքում այցելուները լուռ դիտում էին նկարը, Միխայլովը նույնպես նայում էր և նայում էր անտարբեր, կողմնակի աչքով։ Այդ մի քանի վայրկյանին նա նախապես հավատում էր այն բանին, որ բարձրագույն և ամենաարդար դատավճիռ կհանեն սրանք, հենց այս այցելուները, որոնց նա այնպես արհամարհում էր մի բոպե առաջ։ Նա մոռացավ այն բոլորը, ինչ կարծում էր ինքն իր նկարի մասին առաջ, այն երեք տարիների ընթացքում, երբ նկարում էր այն, նա մոռացավ նկարի այն բոլոր արժանիքները, որ անկասկած էին իր համար,— նա նկարը տեսնում էր նրանց անտարբեր, կողմնակի, նոր հայացքով և ոչ մի լավ բան չէր տեսնում նրա մեջ։ Նկարի առաջին պլանում նա տեսնում էր Պիղատոսի սրտնեղած դեմքը ու Քրիստոսի հանգիստ երեսը և երկրորդ պլանում՝ Պիղատոսի սպասավորների ֆիգուրներն ու Հովհաննեսի դեմքը՝ խորասուզված տեղի ունեցող իրադարձության մեջ։ Ցուրաքանչյուր դեմք, որ այնպիսի պրպտումով, այնպիսի սխալներով, ուղղումներով աճել էր նրա մեջ իր առանձնահատուկ բնույթով, յուրաքանչյուր դեմք, որ պատճառել էր նրան այնքան տանջանք և ուրախություն, բոլոր այս դեմքերը, այնքան անգամ տեղափոխված՝ հանուն ընդհանուրի պահպանման, կոլորիտի և գույների բոլոր նրբերանգները, որոնց նա հասել էր այնպիսի դժվարությամբ,— այս բոլորն այժմ միասին վերցրած, նայելով նրա՛նց աչքերով, թվում էր նրան գռեհկություն, հազար անգամ կրկնված։ Նրա համար ամենաթանկագին դեմքը, Քրիստոսի դեմքը, նկարի կենտրոնը, որ այնպիսի հիացք էր պատճառել նրան իր հայտնաբերման պահին,— բոլորը կո-

բավ նրա համար, երբ նա նայեց նկարին նրա՛նց աչքերով։ Նա տեսնում էր Տիցիանի, Ռաֆայելի, Ռուբենսի պատկերած անթիվ-անհամար Քրիստոսների և միևնույն զինվորների ու Պիղատոսի լավ նկարած կրկնությունը (այն էլ նույնիսկ ո՛չ լավ,— նա պարզ տեսնում էր այժմ բազմաթիվ պակասություններ)։ Այս բոլորը գռեհիկ էր, աղքատ ու հին և նույնիսկ վատ նկարած՝ խայտաբղետ ու թույլ։ Նրանք իրավացի կլինեն, եթե, խղճալով նկարչին, ասեն շինծու-քաղաքավարի ֆրազներ նրա ներկայությամբ ու ծիծաղեն նրա վրա, մնալով մենակ։

Նրա համար չափազանց ծանր էր այդ լությունը (թեպետ այն տևեց մի բոպեից ո՛չ ավելի)։ Որպեսզի խզի այդ լությունը և ցույց տա, որ ինքը հուզված չէ, ճիգ գործադրելով իր վրա, նա դիմեց Գոլենիշչևին.

— Կարծեմ, ես հաճույք եմ ունեցել պատահելու ձեզ,— ասաց նրան, անհանգիստ նայելով մերթ Աննային, մերթ Վոռնսկուն, որպեսզի աչքից բաց չթողնի նրանց դեմքերի արտահայտության ո՛չ մի գիծ։

— Ինչպե՞ս չէ, մենք տեսնվել ենք Ռոսսիի մոտ, հիշո՞ւմ եք, այն երեկույթին, որտեղ արտասանում էր իտալացի այն օրիորդը՝ նոր Ռաշելը[1],— ազատ խոսեց Գոլենիշչևը, դիմելով նկարչին ու հայացքը հեռացնելով նկարից՝ առանց որևէ ափսոսանքի։

Սակայն, նկատելով, որ Միխայլովն սպասում է նկարի մասին կարծիքի, նա ասաց.

— Ձեր նկարը շատ առաջ է գնացել այն օրից հետո, երբ վերջին անգամ ես տեսա այն։ Եվ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ ինձ անսովոր զարմանք է պատճառում Պիղատոսի ֆիգուրը։ Մարդ այնպես հասկանում է նրան՝ բարի, համակրելի անձնավորություն, բայց չինովնիկ մինչև հոգու խորքը, որը չգիտե, թե ի՞նչ է անում։ Սակայն, ինձ թվում է...

Միխայլովի շարժուն ամբողջ դեմքը հանկարծ պայծառացավ. աչքերը փայլեցին։ Նա ուզում էր մի բան ասել, բայց չկարողացավ խոսել հուզմունքից ու ձևացրեց, իբր հազաց։ Ինչքան էլ նա ցածր էր գնահատում Գոլենիշչևի՝ արվեստը

[1] Ֆրանսիայի հռչակավոր դերասանուհի 19-րդ դարի կեսերին։

հասկանալու ընդունակությունը, որքան էլ չնչին էր այդ իրավացի դիտողությունը Պիղատոսի, որպես չինովնիկի, դեմքի արտահայտության ճշտության մասին, ինչքան էլ վիրավորական թվար նրան առաջին այդպիսի չնչին նկատողությունը, երբ խոսք չէր ասվում կարևորագույնների մասին,— այնուամենայնիվ Միխայլովը հիացած էր այդ դիտողությունից։ Նա ինքն էլ Պիղատոսի ֆիգուրի մասին մտածում էր նույնը, ինչ ասաց Գոլենիշչևը։ Այն հանգամանքը, որ այդ նկատառումը մեկն էր միլիոնավոր այն նկատառումներից, որոնք բոլորն էլ ճիշտ էին, (Միխայլովը հաստատ գիտեր դա) չէր նվազեցնում նրա համար Գոլենիշչևի դիտողության նշանակությունը։ Նա սիրեց Գոլենիշչևին այդ դիտողության համար և հուսալքյալ կացությունից հանկարծ անցավ հիացմունքի։ Անմիջապես նրա ամբողջ նկարը կենդանացավ նրա առաջ՝ կենդանության իր ամբողջ անարտահայտելի բարդությամբ։ Միխայլովը նորից փորձեց ասել, որ ինքն այդպես էր հասկանում Պիղատոսին, բայց նրա շուրթերը ցնցվեցին անհնազանդ, և նա չկարողացավ խոսել։ Վոռնսկին ու Աննան նույնպես ասում էին ինչ-որ բան այն ցածր ձայնով, որով սովորաբար խոսում են նկարների ցուցահանդեսում, մասամբ՝ որպեսզի չվիրավորեն նկարչին, մասամբ՝ որպեսզի բարձրաձայն չասեն հիմարություն, որ այնպես դյուրին է ասել, խոսելով արվեստի մասին։ Միխայլովին թվում էր, որ նկարը տպավորություն թողեց նաև նրանց վրա։ Նա մոտեցավ նրանց.

— Ի՞նչ զարմանալի է Քրիստոսի արտահայտությունը,— ասաց Աննան։ Այն բոլորից, ինչ տեսավ Աննան, նրան ամենից ավելի դուր եկավ այդ արտահայտությունը, և նա զգում էր, որ դա նկարի կենտրոնն է, ուստի դրա գովասանքը հաճելի կլինի նկարչին։ — Երևում է, որ Քրիստոսը խղճում է Պիղատոսին։

Դա նորից մեկն էր միլիոնավոր այն ճիշտ դիտողություններից, որ կարելի էր գտնել նրա նկարի և Քրիստոսի ֆիգուրի մեջ։ Աննան ասաց, որ Քրիստոսը խղճում է Պիղատոսին։ Քրիստոսի արտահայտության մեջ պետք է լինի և խղճահարության արտահայտություն, որովհետև նրա մեջ կա սիրո, գերերկրային հանգստության, մեռնելու պատրաստականության և խոսքերի ապարդյունության գիտակցության արտա-

հայտություն։ Հասկանալի է, որ Պիղատոսի մեջ կա չինովնիկի արտահայտություն և Քրիստոսի մեջ՝ խղճահարության, որովհետև մեկն անձնավորումն է մարմնավոր կյանքի, մյուսը՝ հոգևոր։ Այս բոլորը և ուրիշ շատ բան անցավ Միխայլովի մտքով։ Ու նորից նրա դեմքը փայլեց հիացմունքից։

— Այո՛, և ինչպե՞ս է նկարած այդ ֆիգուրը, որքա՞ն օգ։ Կարելի է շրջանցել,— ասաց Գոլենիշչևը, երևի ցույց տալով այդ նկատողությամբ, որ հավանություն չի տալիս ֆիգուրի բովանդակությանն ու իմաստին։

— Այո՛, զարմանալի՛ վարպետություն,— ասաց Վոռնսկին։ — Ինչպե՞ս զատվում, աչքի են ընկնում այդ ֆիգուրները հետին պլանի վրա, ահա՛ տեխնիկա,— ասաց նա, դիմելով Գոլենիշչևին և դրանով ակնարկելով իրենց մեջ եղած խոսակցությունն այն մասին, որ Վոռնսկին հույս չուներ հասնելու այդ տեխնիկային։

— Այո՛, այո՛ զարմանալի է,— հաստատեցին Գոլենիշչևը և Աննան։

Չնայած հուզված այն կացությանը, որի մեջ գտնվում էր Միխայլովը, տեխնիկայի մասին նկատողությունը խոցեց նրա սիրտը, և նա բարկացած նայելով Վոռնսկուն, հանկարծ խոժոռվեց։ Նա հաճախ էր լսում այդ բառը՝ տեխնիկա, և վճռականապես չէր հասկանում, թե ի՞նչ իմաստ էին դնում այդ բառի մեջ։ Նա գիտեր, որ այդ բառի տակ հասկանում էին նկարելու մեքենական ընդունակություն, բոլորովին անկախ բովանդակությունից։ Հաճախ նա նկատում էր, ինչպես և տվյալ գովասանքի դեպքում, որ տեխնիկան հակադրում էին ներքին արժանիքին, կարծես կարելի էր լավ նկարել այն, ինչը վատ էր։ Նա գիտեր, որ քողը հանելիս, ինչպես և բոլոր քողերը հանելու համար, պետք էր մեծ ուշադրություն ու զգուշություն, որպեսզի չփչանար արտադրությունը. բայց նկարելու վարպետության մեջ ոչ մի տեխնիկա չկար։ Եթե փոքրիկ երեխային, կամ իր՝ նկարչի խոհարարուհուն նույնպես բացվեր այն, ինչ տեսնում էր ինքը նկարիչը, խոհարարուհին ևս կարող էր դրսևորել այն, ինչ տեսնում էր։ Իսկ ամենափորձված ու վարպետ նկարիչ-տեխնիկը չի կարող միմիայն մեքենական ընդունակությամբ նկարել ոչինչ, եթե նրա համար նախ և առաջ չբացվեն բովանդակության սահմանները։

Բացի դրանից, նա տեսնում էր, որ եթե արդեն խոսք է լինում տեխնիկայի մասին, չի կարելի դրա համար գովել իրեն։ Այն բոլորի մեջ, ինչ նա նկարում էր ու նկարել էր, տեսնում էր աչք ծակող թերություններ, որոնք առաջացել էին անզգուշությունից, որով նա հանում էր քողերը, և որոնք այժմ արդեն չէր կարող ուղղել, առանց փչացնելու ամբողջ ստեղծագործությունը։ Եվ համարյա բոլոր ֆիգուրների ու դեմքերի վրա նա տեսնում էր դեռ մնացորդներ լիովին չհանած քողերի, որոնք փչացրել էին նկարը։

— Միակ բանը, որ կարելի է ասել, եթե թույլ կտաք անել այդ նկատողությունը...— նկատեց Գոլենիշչևը։

— Ա՜խ, ես շատ ուրախ եմ և խնդրում եմ ձեզ,— ասաց Միխայլովը, արհեստականորեն ժպտալով։

— Դա այն է, որ ձեր մոտ Քրիստոսը մարդ-աստված է, ո՛չ թե աստված-մարդ։ Թեպետ, ես գիտեմ, որ դուք հենց ա՛յդ եք կամեցել։

— Ես չէի կարող նկարել այն Քրիստոսը, որը չկա իմ հոգում,— ասաց Միխայլովը մռայլ։

— Այո՛, բայց այդ դեպքում, եթե թույլ կտաք արտահայտելու իմ միտքը, ձեր նկարն այնքան լավ է, որ իմ նկատողությունը չի կարող վնասել նրան, և հետո՝ դա իմ անձնական կարծիքն է։ Դուք այլ կարծիքի եք։ Բուն շարժառիթն այլ է։ Բայց վերցնենք թեկուզ Իվանովին։ Ես կարծում եմ, որ եթե Քրիստոսը հասցրած է պատմական դեմքի աստիճանի, ապա՝ ավելի լավ կլիներ, որ Իվանովն ընտրեր պատմական այլ թեմա, թարմ, կուսական թեմա։

— Բայց եթե դա մեծագույն թեմա՞ է արվեստին առաջադրված։

— Եթե փնտրեն, կարող են գտնել ուրիշ թեմաներ։ Բայց բանն այն է, որ արվեստը չի հանդուրժում վեճ ու դատողություններ։ Իսկ Իվանովի նկարի վերաբերյալ՝ հավատացողի և չհավատացողի համար հարց է ծագում—աստվա՞ծ է դա, թե՞ աստված չէ, և խախտվում է տպավորության միասնությունը։

— Իսկ ինչո՞ւ։ Ինձ թվում է, որ կրթված մարդկանց համար,— ասաց Միխայլովը,— արդեն չի կարող գոյություն ունենալ վեճ։

Գոլենիշչևը չհամաձայնեց դրան և մնալով իր առաջին կարծիքին արվեստի համար հարկավոր տպավորության միասնության մասին, ջախջախեց Միխայլովին։

Միխայլովը հուզվում էր, բայց ոչինչ չուներ ասելու ի պաշտպանություն իր մտքի։

XII

Աննան ու Վրոնսկին վաղուց արդեն աչքի տակով իրար էին նայում, նեղվելով իրենց բարեկամի խելոք շատախոսությունից. վերջապես Վրոնսկին, առանց սպասելու նկարչին, անցավ մի ուրիշ փոքրիկ նկարի։

— Ա՜խ, ինչ զմայլելի, ի՞նչ հիանալի բան է։ Հրաշալի՞ք։ Ի՞նչ չքնաղ բան է,— խոսեցին նրանք միաբերան։

«Ի՞նչը նրանց այդքան դուր եկավ», մտածեց Միխայլովը։ Նա բոլորովին մոռացել էր այս պատկերի մասին, նկարած երեք տարի առաջ։ Մոռացել էր այն տառապանքներն ու հիացքը, որ ապրել էր այդ նկարի հետ, միայն սա մի քանի ամիս շարունակ օր ու գիշեր զբաղեցնում էր իրեն, մոռացել էր, ինչպես միշտ մոռանում էր վերջացրած նկարների մասին։ Նա չէր սիրում նույնիսկ նայել դրան և ցուցադրել էր լոկ այն պատճառով, որ սպասում էր մի անգլիացու, որը ցանկացել էր գնել այն։

— Դա հենց այնպես, վաղուցվա էտյուդ է,— ասաց նա։

— Ի՞նչ լավն է,— ասաց Գոլենիշչևը, որը նույնպես, ըստ Երևույթին, անկեղծաբար համակվել էր նկարի գեղեցկությամբ։

Երկու մանուկներ ոլորի շվաքում ձուկ էին որսում կարթերով։ Մեկը, ավագը, հենց նոր գցել էր կարթը և ուշիմ ջանքով աշխատում էր դուրս հանել լողանը թփի ետևից, ամբողջապես կլանված այդ գործով. մյուսը՝ ավելի փոքրը, պառկել էր խոտերի մեջ, շիկավուն գանգրահեր գլուխը հենած ձեռքերին և մտազբաղ կապույտ աչքերով նայում էր ջրին։ Ինչի՞ մասին էր մտածում նա։

Հիացմունքը իր այդ նկարից Միխայլովի մեջ շարժեց առաջվա հուզումը, բայց նա վախենում էր ու չէր սիրում այդ պարապ զգացումն անցյալի վերաբերյալ, այդ պատճառով հենց, թեև նրան ցնծություն էին պատճառում այդ գովեստ-

ները, նա կամենում էր այցելուների ուշադրությունը դարձնել երրորդ նկարի վրա։

Բայց Վոռնսկին հարցրեց, արդյոք չի՞ վաճառվում այս նկարը։ Դրամական հարցի մասին խոսքը չափազանց անախորժ էր այժմ Միխայլովի համար, որը հուզված էր այցելուներից։

— Ցուցադրված է վաճառքի համար,— պատասխանեց նա, մռայլորեն խոժոռվելով։

Երբ այցելուները մեկնեցին, Միխայլովը նստեց Պիղատոսի ու Քրիստոսի նկարի առաջ և մտքում կրկնում էր այն, ինչ ասել էին կամ թեպետև չէին ասել, բայց ենթադրում էին այդ այցելուները։ Եվ տարօրինակ բան. այն, ինչ այնպիսի կշիռ ուներ նրա համար, երբ նրանք այստեղ էին և երբ ինքը մտքով փոխանցվում էր նրանց հայեցակետի վրա, հանկարծ կորցրեց նրա համար ամեն արժեք։ Նա սկսեց նայել իր նկարին արվեստագետի լրիվ հայացքով և եկավ այն համոզման, որ նկարը կատարելություն է, այդ իսկ պատճառով՝ և նշանակալից. համոզմունքի այդ կացությունը պետք էր նրան մյուս բոլոր շահերը բացասող այն լարվածության համար, որի դեպքում միայն կարող էր աշխատել ինքը։

Քրիստոսի փոքրացած ոտքն այնուամենայնիվ այն չէր, ինչ պետք էր։ Նա վերցրեց ներկապնակը և սկսեց աշխատել։ Ուղղելով ոտքը, նա անընդհատ ուշադիր նայում էր ետևի պլանում Հովհաննեսի ֆիգուրին, որն այցելուները նույնիսկ չնկատեցին, բայց որը, նա գիտեր, կատարելության գագաթնակետն էր։ Ոտքը վերջացնելուց հետո նա ուզում էր ձեռնամուխ լինել այդ ֆիգուրին, բայց զգաց, որ այդ անելու համար ինքը չափազանց հուզված է։ Նա հավասարապես չէր կարող աշխատել և՛ այն ժամանակ, երբ սառն էր, և՛ այն պահին, երբ փափկել էր ու շատ լավ տեսնում էր ամեն ինչ։ Սառնությունից ոգևորության փոխանցվելու ընթացքում կար միայն մի աստիճան, որի վրա կարելի էր աշխատել։ Իսկ այժմ նա չափազանց հուզված էր։ Նա ուզում էր ծածկել նկարը, բայց կանգ առավ և սավանը բռնած ձեռքին, երջանկությամբ ժպտալով, երկար նայում էր Հովհաննեսի ֆիգուրին։ Վերջապես, կարծես տխրությամբ կտրվելով նրանից, իջեցրեց սավանը և հոգնած, բայց երջանիկ, գնաց տուն։

Վոռնսկին, Աննան ու Գոլենիշչևը վերադառնալով տուն,

առանձնապես աշխույժ էին և ուրախ։ Նրանք խոսում էին Միխայլովի և նրա նկարների մասին։ Տաղանդ բառը, որի տակ նրանք հասկանում էին բնածին, համարյա ֆիզիկական ընդունակություն, խելքից ու սրտից անկախ, և որով նրանք ուզում էին բնորոշած լինել նկարչի ունեցած բոլոր ապրումները, առանձնապես հաճախ էր կրկնվում նրանց խոսակցության մեջ, որովհետև այդ բառը անհրաժեշտ էր նրանց՝ անվանելու այն, ինչի մասին նրանք ո՛չ մի հասկացողություն չունեին, բայց ուզում էին խոսել։ Նրանք ասում էին, որ չի կարելի բացասել նրա տաղանդը, բայց որ նրա տաղանդը չէր զարգացել կրթության պակասության պատճառով, մի բան, որ կազմում էր մեր ռուս նկարիչների ընդհանուր դժբախտությունը։ Սակայն մանուկների նկարը դրոշմվել էր նրանց հիշողության մեջ, և կամա-ակամա նրանք նորից վերադառնում էին նրան։ «Ի՞նչ սքանչելի է։ Ինչպե՞ս այդ հաջողվել է նրան և ինչքա՞ն պարզ։ Նա չի էլ հասկանում, թե ի՞նչ լավ է դա։ Այո՛, չպետք է ձեռքից բաց թողնել և պիտի գնել այն», ասում էր Վոռնսկին։

XIII

Միխայլովը վաճառեց իր նկարը Վոռնսկուն և համաձայնեց նկարել Աննայի դիմանկարը։ Նշանակված օրը նա եկավ ու սկսեց աշխատանքը։

Դիմանկարը հինգերորդ սեանսից զարմացրեց ամենքին, մանավանդ Վոռնսկուն, ո՛չ միայն նմանությամբ, այլև բացառիկ գեղեցկությամբ։ Տարօրինակ էր, թե ինչպե՞ս կարող էր Միխայլովը գտնել նրա այդ առանձնահատուկ գեղեցկությունը։ «Պետք էր ճանաչել և սիրել նրան, ինչպես սիրում էիս, որպեսզի կարելի լիներ գտնել նրա ամենահամակրելի հոգեկան արտահայտությունը»,— մտածում էր Վոռնսկին, թեև նա այդ դիմանկարի միջոցով միայն ճանաչեց Աննայի այդ ամենահամակրելի արտահայտությունը։ Բայց այդ արտահայտությունն այնպես ճիշտ էր, որ Վոռնսկուն և մյուսներին թվում էր, թե իրենց վաղուց ծանոթ է եղել այն։

— Ինչքան ժամանակ ես շարշարվում եմ և ոչինչ չարի,— ասում էր Վոռնսկին իր նկարի մասին,— իսկ նա նայեց ու նկարեց։ Ահա՛ թե ի՞նչ է նշանակում տեխնիկա։

— Դա կգա,— մխիթարում էր նրան Գոլենիշչևը, որի հասկացողությամբ Վոռնսկին ուներ և՛ տաղանդ և գլխավորը՝ կրթություն, որը տալիս էր արվեստի վերաբերյալ վեհ տեսակետ։ Վոռնսկու տաղանդի նկատմամբ Գոլենիշչևի համոզմունքն ամրապնդում էր նաև այն բանով, որ նրան պետք էր իր հոդվածների և մտքերի համար Վոռնսկու համակրանքն ու գովասանքը, և նա զգում էր, որ աջակցությունն ու գովասանքը պիտի լինեն փոխադարձ։

Ուրիշի տանը, մանավանդ պալացցոյում՝ Վոռնսկու մոտ, Միխայլովը բոլորովին այլ մարդ էր, քան իր արվեստանոցում։ Նա անբարյացակամորեն հարգալից էր, ասես՝ վախենում էր մոտիկանալ այդ մարդկանց, որոնց չէր հարգում։ Նա Վոռնսկուն կանչում էր ձերդ պայծառափայլություն և երբեք, չնայած Աննայի ու Վոռնսկու հրավերներին, չէր մնում ճաշի և գալիս էր միմիայն սեանսների համար։ Աննան նրա հանդեպ ավելի, քան ուրիշների, սիրալիր էր ու շնորհապարտ իր դիմանկարի համար։ Նրա հետ Վոռնսկին ավելի քան քաղաքավարի էր և հայտնապես իրեն հետաքրքրում էր նկարչի կարծիքը իր նկարի մասին։ Գոլենիշչևն առիթը բաց չէր թողնում՝ ներշնչելու Միխայլովին իսկական հասկացողություններ արվեստի մասին։ Բայց Միխայլովը մնում էր միակերպ, սառն ամեն ինչի հանդեպ։ Աննան զգում էր նրա հայացքից, որ նա սիրում է նայել իրեն. բայց նա խուսափում էր Աննայի հետ խոսակցությունից։ Իր նկարչության մասին Վոռնսկու խոսակցությունների պահին Միխայլովը համառորեն լռում էր, ինչպես համառորեն լռեց և այն ժամանակ, երբ նրան ցույց տվին Վոռնսկու նկարը. ըստ երևույթին, նա ճնշվում էր Գոլենիշչևի խոսակցություններից և չէր առարկում նրան։

Առհասարակ Միխայլովն իր զուսպ ու անախորժ, ասես թշնամական վերաբերմունքով շատ դուր չեկավ նրանց, երբ ճանաչեցին նրան ավելի մոտիկ։ Եվ նրանք ուրախ էին, երբ սեանսները վերջացան. իրենց ձեռքին մնաց գեղեցիկ նկարը, իսկ նա դադարեց գնալ-գալուց։

Գոլենիշչևն առաջինն արտահայտեց այն միտքը, որ ունեին մյուսներն էլ, այսինքն՝ Միխայլովը ուղղակի նախանձում էր Վոռնսկուն։

— Ասենք, չի նախանձում, որովհետև նա ունի տաղանդ,

բայց նա վրդովվում է, որ պալատական ու հարուստ մարդու մեկը, այն էլ կոմս (չէ՞ որ նրանք ատում են այս բոլորը). առանց առանձին դժվարության անում է միևնույն բանը, եթե ոչ ավելի լավ, քան նա, որը իր ամբողջ կյանքը նվիրել է դրան։ Գլխավորը կրթությունն է, որից զուրկ է Միխայլովը։

Վոռնսկին պաշտպանում էր Միխայլովին, բայց հոգու խորքում հավատում էր դրան, որովհետև, նրա հասկացողությամբ, ուրիշ, ավելի ստոր աշխարհի պատկանող մարդը պետք է որ նախանձեր։

Աննայի դիմանկարը,— միևնույն բանը, որ նկարել էին բնորդից և՛ Վոռնսկին, և՛ Միխայլովը,— պետք է ցույց տար Վոռնսկուն այն տարբերությունը, ինչ կար նրա ու Միխայլովի միջև, բայց նա չէր տեսնում այդ տարբերությունը։ Եվ միայն Միխայլովից հետո նա դադարեց Աննային նկարել, վճռելով, որ դա այժմ արդեն ավելորդ է։ Իսկ միջնադարյան կյանքից սկսած իր նկարը նա շարունակում էր։ Թե՛ նա ինքը, թե՛ Գոլենիշչևը, թե՛ մանավանդ Աննան այն կարծիքին էին, որ նկարը շատ լավն է, որովհետև շատ ավելի նման է հռչակավոր նկարներին, քան Միխայլովի նկարը։

Մինչդեռ Միխայլովը, չնայած որ Աննայի դիմանկարը սաստիկ հրապուրեց նրան, ավելի ուրախ էր, քան նրանք, երբ սեանսները վերջացան և նա այլևս ստիպված չէր լսելու Գոլենիշչևի դատողություններն արվեստի մասին ու կարելի էր մոռանալ Վոռնսկու նկարչության մասին։ Նա գիտեր, որ չի կարելի արգելել Վոռնսկուն՝ խաղալ նկարչությամբ՝ նա գիտեր, որ Վոռնսկին և բոլոր դիլետանտները լիովին իրավունք ունեն նկարելու այն, ինչ ուզում են, բայց այդ նրան անախորժ էր։ Չի կարելի արգելել մարդուն, որ նա մոմից շինի մեծ-մեծ տիկնիկ ու համբուրի այն։ Բայց եթե այդ մարդը տիկնիկի հետ գար ու նստեր սիրահարվածի դիմաց և սկսեր գուրգուրել իր տիկնիկին, ինչպես գուրգուրում է սիրահարը իր սիրածին, պարզ է, որ սիրահարվածի համար անախորժ կլիներ այդ։ Այսպիսի անախորժ զգացում ուներ Միխայլովը, տեսնելով Վոռնսկու նկարչությունը, նրա համար դա և՛ ծիծաղելի էր, և՛ սրտնեղիչ, և՛ ողորմելի, և՛ վիրավորական։

Վոռնսկու հրապուրվելը նկարչությամբ ու միջին դարերով

երկար չշարունակվեց։ Նա այնքան ճաշակ ուներ նկարչության խնդրում, որ չկարողացավ վերջացնել իր նկարը։ Վերջին կիսատ մնաց։ Վոռնսկին աղոտ կերպով զգում էր, որ նկարի թերությունները, սկզբում քիչ նկատելի, ապշեցուցիչ կլինեն, եթե շարունակի ինքը։ Նրան պատահեց նույն բանը, ինչ և Գոլենիշչևին, որն զգում էր, թե ինքն ասելու բան չունի, և մշտապես խաբում էր ինքն իրեն նրանով, որ միտքը չի հասունացել, որ ինքը կրում, մտմտում է այն և պատրաստում է նյութեր։ Բայց Գոլենիշչևին դա շարացնում ու տանջում էր, իսկ Վոռնսկին չէր կարող խաբել ինքն իրեն ու տանջել և մանավանդ գազազել։ Իրեն հատուկ բնավորության վճռականությամբ, առանց ոչինչ բացատրելու և արդարանալու, նա դադարեց նկարչությամբ զբաղվել։

Բայց առանց այդ զբաղմունքի, նրանց կյանքը իտալական քաղաքում թվաց շատ ձանձրալի թե՛ նրան, թե՛ Աննային, որը զարմացավ Վոռնսկու հիասթափության վրա։ Պալացցոն հանկարծ դարձավ այնպես ակնբախ հին ու կեղտոտ, այնպես տհաճ այքի էին ընկնում բծերը վարագույրների վրա, ճեղքերը հատակներին, փշրված սվաղը քիվերին և այնպես ձանձրալի դարձան միշտ միևնույն Գոլենիշչևը, իտալացի պրոֆեսորը ու գերմանացի ճանապարհորդը, որ անհրաժեշտ էր փոխել կյանքի եղանակը։ Նրանք վճռեցին գնալ Ռուսաստան, գյուղ։ Պետերբուրգում Վոռնսկին մտադիր էր բաժանվել եղբորից։ Աննան էլ ուզում էր տեսնել որդուն։ Իսկ սամառը, նրանք մտադիր էին ապրել Վոռնսկու հայրենական մեծ կալվածքում։

XIV

Երրորդ ամիսն էր, ինչ ամուսնացել էր Լևինը։ Նա երջանիկ էր, բայց բնավ ո՛չ այնպես, ինչպես սպասում էր։ Յուրաքանչյուր քայլափոխում նա գտնում էր հիասթափություն առաջվա տենչերից և նոր անակնկալ հմայք։ Նա երջանիկ էր, բայց մտնելով ընտանեկան կյանք, յուրաքանչյուր քայլափոխին տեսնում էր, որ դա բոլորովին այն չէր, ինչ երևակայում էր ինքը։ Ամեն քայլափոխում նա զգում էր այն, ինչ կզգար մարդ, երբ ինքը նստեր այն նավակը, որի սահուն, երջանիկ ընթացքով լճի երեսին մինչ այդ հիանում էր նա։

Նա տեսնում էր, որ դեռ բավական չէր ուղիղ նստելն առանց ճոճվելու, հարկավոր էր նաև համակերպվել, ոչ մի բոպե չմոռանալով, թե ո՛ւր լողալ, չմոռանալով, որ ոտքերի տակ ջուր է ու պետք է թիավարել, և որ անսովոր ձեռքերը ցավում են, որ հեշտ է միայն նայելիս, իսկ այդ անելը թեպետ շատ դուրեկան բան է, բայց և՝ շատ դժվար։

Պատահում էր, որ ամուրի եղած ժամանակ, նայելով ուրիշի ամուսնական կյանքին, մանր հոգսերին, գժտություններին, խանդին, նա միայն արհամարհալից ժպտում էր իր հոգում։ Նրա համոզմունքով, իր ապագա ամուսնական կյանքում ո՛չ միայն չէր կարող նման բան լինել, այլև, թվում էր նրան, բոլոր արտաքին ձևերը պիտի ամեն բանում բոլորովին նման չլինեին ուրիշների կյանքին։ Եվ հանկարծ դրա փոխարեն, նրա կյանքն իր կնոջ հետ ո՛չ միայն չդասավորվեց առանձնահատուկ կերպով, այլ, ընդհակառակը, ամբողջապես կազմվեց այն ամենաչնչին մանր-մունր բաներից, որոնք նա առաջ այնպես արհամարհում էր, բայց որոնք այժմ, հակառակ իր կամքի, ստանում էին անսովոր և անհերքելի կարևորություն։ Ու Լևինը տեսնում էր, որ այդ մանր բաների կարգավորումը բնավ այնպես հեշտ չէր, ինչպես թվում էր նրան առաջ։ Չնայած, որ Լևինը կարծում էր, թե ինքն ամենաստույգ հասկացողությունն ունի ընտանեկան կյանքի մասին, այսուամենայնիվ նա, ինչպես և բոլոր տղամարդիկ, ընտանեկան կյանքն ակամա պատկերացնում էր որպես միայն սիրո վայելք, որին ոչինչ չպիտի աչքելք հանդիսանար և որից մանր հոգսերը չպիտի հեռացնեին մարդուն։ Իր կարծիքով, նա պետք է կատարեր իր աշխատանքը և սրանից հանգստանար սիրո երջանկության մեջ։ Կինը պետք է սիրված լիներ և ուրիշ ոչինչ։ Բայց նա, ինչպես և բոլոր տղամարդիկ, մոռանում էր, որ կինը ևս պետք է աշխատեր։ Եվ Լևինը զարմանում էր, թե ինչպե՛ս նա, այդ պոետիկ, չքնաղ Կիտին, կարող էր ընտանեկան կյանքի ոչ միայն հենց առաջին շաբաթները, այլև առաջին օրերը, մտածել, հիշել ու հոգ տանել սփոցների մասին, կահ-կարասիքի մասին, եկվորների համար ներքնակների մասին, մատուցարանի, խոհարարի, ճաշի մասին և այլն։ Տակավին փեսացու եղած ժամանակ Լևինը զարմացավ այն որոշակիության վրա, որով Կիտին հրաժարվեց

արտասահման գնալուց ու վճռեց գնալ գյուղ, կարծես նա գիտեր այնպիսի մի բան, որ կարևոր էր, և իր սիրուց բացի, կարող էր մտածել նաև կողմնակի բաների մասին։ Դա վիրավորեց Լևինին այն ժամանակ, այժմ էլ կնոջ մանր հոգսերն ու հոգացողությունը քանիցս վիրավորում էին նրան։ Բայց նա տեսնում էր, որ դա անհրաժեշտ է կնոջը։ Եվ Լևինը սիրելով նրան, թեպետ չէր հասկանում, թե ինչի՞ համար, թեպետև ծիծաղում էր այդ հոգսերի վրա, բայց և այնպես չէր կարողանում չհիանալ դրանցով։ Նա ծիծաղում էր այն բանի վրա, թե ինչպե՞ս Կիտին դասավորում էր Մոսկվայից բերած կահ-կարասին, ինչպես նոր ձևով հարդարում էր իր և ամուսնու սենյակը, ինչպես կախում էր վարագույրները, ինչպես բաշխում էր ապագա շենքը հյուրերի համար, Դոլլիի համար, ինչպես կարգի էր բերում սենյակն իր նոր աղախնի համար, ինչպես ճաշ էր պատվիրում ծերունի-խոհարարին, ինչպես խոսպրտում էր Ագաֆիա Միխայլովնայի հետ, հեռացնելով նրան պարենից։ Նա տեսնում էր, որ ծերունի-խոհարարը ժպտում էր, հիանալով Կիտիով ու լսելով նրա անճարակ, անհնարին հրամանները. տեսնում էր, որ Ագաֆիա Միխայլովնան մտազբաղ ու սիրալիր ճոճում էր գլուխը ջահել տանտիկնոջ՝ մառանում արած նոր կարգադրություններիր առթիվ. տեսնում էր, որ Կիտին արտասովոր լավն էր, երբ ծիծաղելով ու արտասվելով գալիս էր նրա մոտ հայտարարելու, թե Մաշա աղախինը սովոր է իրեն օրիորդ համարելու և այդ պատճառով ոչ ոք չի լսում իրեն։ Լևինին դա թվում էր հաճելի, բայց տարօրինակ, և նա կարծում էր, որ առանց դրան ավելի լավ կլիներ։

Լևինը չգիտեր փոփոխության այն զգացումը, որ ունենում էր Կիտին այն բանից հետո, երբ տանը նա երբեմն ուզում էր կաղամբ ու կվաս կամ կոնֆետ, և ո՞չ մեկը, ո՞չ մյուսը չէր կարելի ունենալ. իսկ այժմ նա կարող էր պատվիրել ինչ ուզում էր, գնել մեծ քանակությամբ կոնֆետ, ծախսել դրամ, ինչքան ցանկանար և պատվիրել իր ուզած կարկանդակը։

Կիտին այժմ ուրախությամբ երազում էր Դոլլիի գալու մասին՝ երեխաների հետ, մանավանդ այն պատճառով, որ նա երեխաների համար կպատվիրի յուրաքանչյուրի սիրած կարկանդակը, իսկ Դոլլին կգնահատի նրա այս ամբողջ նոր

սարքուկարգը։ Կիտին ինքն էլ չգիտեր, թե ինչո՞ւ և ինչի՞ համար, բայց տնային տնտեսությունն անպսպորեն գրավում էր իրեն։ Նա բնազդաբար զգալով գարնան մոտենալը և իմանալով, որ կլինի նաև վատ եղանակ, հյուսում էր, ինչպես կարող էր, իր բույնը ու շտապում էր միաժամանակ և՛ հյուսել և՛ սովորել, թե ինչպե՞ս պետք է անել այդ։

Կիտիի այդ մանր մտահոգությունն ահա, այնքան հակադիր Լևինի սկզբնական շրջանի վսեմ երջանկության իդեալին, մեկն էր նրա հիասթափություններից. և այդ հաճելի մտահոգությունը, որի իմաստը չէր հասկանում Լևինը, բայց որը չէր կարող չսիրել, մեկն էր նոր հմայքներից։

Մյուս հիասթափությունը և հմայքը գժտություններն էին։ Լևինը երբեք չէր կարող երևակայել, որ իր և կնոջ միջև կարող էին լինել ուրիշ հարաբերություններ, բացի քնքուշ, հարգալից, սիրաշող հարաբերություններից, և հանկարծ հենց առաջին օրերից նրանք գժտվեցին, այնպես որ Կիտին ասաց նրան, որ նա չի սիրում իրեն, սիրում է միայն ինքն իրեն, լաց եղավ ու թափահարեց ձեռքերը։

Նրանց առաջին այդ գժտությունը ծագեց այն բանից, որ Լևինը գնաց նոր ագարակը և կես ժամ ուշացավ. իսկ ուշացավ, որովհետև ուզում էր անցնել կարճ ճանապարհով ու մոլորվեց։ Նա գնում էր տուն, մտածելով միայն կնոջ մասին, նրա սիրո մասին, իր երջանկության մասին և որքան մոտենում էր տանը, այնքան ավելի էր բոցավառվում նրա մեջ քնքշանքը դեպի Կիտին։ Նա ներս վազեց սենյակ նույն և ավելի ուժեղ զգացումով, քան այն, որով նա եկավ Շչերբացկիների մոտ առաջարկություն անելու։ Եվ հանկարծ նրան ընդունեց մռայլ մի արտահայտություն, որ երբեք չէր տեսել Կիտիի դեմքին։ Նա ուզում էր համբուրել կնոջը, կինը ետ մղեց նրան։

— Ի՞նչ եղավ քեզ։

— Դու ուրախ ես...— սկսեց Կիտին, կամենալով լինել հանգիստ-թունալից։

Բայց հենց որ նա բացեց բերանը, դուրս թափվեցին անմիտ խանդի կշտամբանքի խոսքեր, որպես հետևանք այն բոլորի, ինչը տանջում էր նրան այս կես ժամվա ընթացքում, որ անցկացրեց նա՝ անշարժ նստած պատուհանին։ Այստեղ

միայն Լևինն առաջին անգամ պարզ հասկացավ այն, ինչ չէր հասկանում, երբ պսակից հետո դուրս էր տանում Կիտին եկեղեցուց։ Նա հասկացավ, որ կինը ո՛չ միայն մոտիկ է իրեն, այլև որ ինքն այժմ չգիտե, թե որտե՞ղ է վերջանում կինը և՝ սկսվում ինքը։ Նա հասկացավ դա երկատման այն տանջալից զգացումից, որ ուներ այդ րոպեին։ Առաջին րոպեին Լևինը վիրավորվեց, բայց հենց նույն վայրկյանին էլ զգաց, որ ինքը չի կարող վիրավորվել նրանից, որ Կիտին հենց ինքը Լևինն է։ Առաջին րոպեին Լևինն ունեցավ այնպիսի զգացում, որպիսին ունենում է մարդ, երբ հանկարծ ստանալով թիկունքից ուժեղ հարված, սրտնեղությամբ ու վրեժխնդրության մտադրությամբ շուռ է գալիս, որ գտնի հանցավորին և համոզվում է, որ ինքն է պատահաբար խփել իրեն, որ բարկանալու օբյեկտ չկա և պետք է տանել ու մեղմել ցավը։

Հետագայում նա երբեք այդպես ուժեղ կերպով այլևս չէր զգում այդ, բայց այս առաջին նվազին նա երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ։ Բնական զգացումը պահանջում էր նրանից արդարանալ, ապացուցել կնոջն իր հանցանքը, բայց ապացուցել կնոջ հանցանքը՝ նշանակում էր է՛լ ավելի գրգռել նրան և ավելի մեծացնել այն պառակտումը, որն ամբողջ դժբախտության պատճառն էր։ Սովոր մի զգացում դրդեց նրան՝ հանցանքը վերցնել իր վրայից ու բարդել կնոջ վրա. մի այլ զգացում, ավելի ուժեղ, դրդում էր նրան՝ շուտ, որքան կարելի է շուտ, հարթել տեղի ունեցած պառակտումը, առանց թույլ տալու, որ ավելի մեծանա այն։ Տանջալից էր մնալ այդպիսի անիրավացի մեղադրանքով, բայց և ավելի վատ էր արդարանալ ու կնոջը ցավ պատճառել։ Լևինը ինչպես մի մարդ, որ կես-քուն, կես-արթուն տանջվում է ցավից, ուզում էր պոկել, դեն գցել իրենից ցաված տեղը և ուշքի գալով, զգում էր, որ ցաված տեղը հենց ինքն է։ Պետք էր միայն աշխատել՝ օգնել ցաված տեղին, որպեսզի գիմանա, և նա աշխատեց այդպես անել։

Նրանք հաշտվեցին։ Կիտին, գիտակցելով իր հանցանքը, բայց չխոստովանելով այն, ավելի քնքուշ էր դեպի ամուսինը, և նրանք զգացին սիրո նոր, կրկնակի երջանկություն։ Բայց դա չխանգարեց, որ այդ ընդհարումները կրկնվեին,

մինչև իսկ առանձնապես հաճախ, ամենաանսպասելի և չընչին առիթների հետևանքով։ Այդ ընդհարումներն առաջանում էին հաճախ և՛ այն պատճառով, որ նրանք դեռ չգիտեին, թե ի՛նչ է կարևոր միմյանց համար, և՛ այն պատճառով, որ սկզբնական այդ ամբողջ շրջանում նրանք երկուսն էլ հաճախ լինում էին վատ տրամադրության։ Երբ մեկի տրամադրությունը լավ էր լինում, իսկ մյուսինը՝ վատ, խաղաղությունը չէր խախտվում, բայց երբ երկուսն էլ վատ տրամադրության էին, ընդհարումներն առաջանում էին իրապես այնպիսի աննշան և անհասկանալի պատճառներից, որ հետո նրանք ո՛չ մի կերպ չէին կարողանում հիշել, թե ինչի՛ մասին էին վիճում։ Ճիշտ է, երբ նրանք երկուսն էլ լավ տրամադրության էին լինում, այն ժամանակ կրկնապատկվում էր նրանց կյանքի ուրախությունը։ Բայց և այնպես այդ առաջին ժամանակաշրջանը ծանր շրջան էր նրանց համար։

Այդ առաջին ամբողջ ժամանակաշրջանում առանձնապես ուժեղ էր զգացվում այն շղթայի ձգվածությունը, նրա այս ու այն կողմ քաշքշելը, որով կապված էին նրանք իրար հետ։ Անհասարակ այն մեզրամիտը, այսինքն՝ հարսանիքին հաջորդող ամիսը, որից Լևինը ավանդաբար սպասում էր այնքան շատ բան, ո՛չ միայն մեղրի չէր, այլև նրանց երկուսի հիշողության մեջ մնաց որպես նրանց կյանքի ամենածանր ու նվաստացուցիչ ժամանակը։ Նրանք երկուսն էլ միակերպ աշխատում էին հետագա կյանքում ջնջել իրենց հիշողությունից այդ անառողջ ժամանակի բոլոր այլանդակ, ամոթալի պարագաները, երբ երկուսն էլ հազվադեպ անգամ էին լինում նորմալ տրամադրության, հազվադեպ անգամ էին լինում իրենց բնական շրջանակում։

Ամուսնության երրորդ ամսին միայն, Մոսկվայից վերադառնալուց հետո, ուր գնացել էին նրանք մի ամսով, նրանց կյանքն ընթացավ ավելի հարթ, հավասար։

XV

Նրանք նոր էին վերադարձել Մոսկվայից և ուրախ էին իրենց առանձնանալու համար։ Լևինը նստել էր կաբինետում՝ գրասեղանի առաջ ու գրում էր։ Կիտին, մուգ մանիշակագույն

այն զգեստով, որը հագնում էր ամուսնությունից հետո առաջին օրերին ու այսօր նորից հագել էր և որն առանձնապես հիշատակելի ու թանկ էր Լևինի համար, նստել էր բազմոցին, կաշվե այն հին բազմոցին հենց, որ միշտ դրված էր Լևինի պապի ու հոր կաբինետում, և կարում էր broderie anglaise[1]. Լևինը մտածում ու գրում էր, անընդհատ ցնծությամբ զգալով կնոջ ներկայությունը։ Նա չէր թողել իր զբաղմունքները, կապված և՛ տնտեսության, և՛ գրքի հետ, որի մեջ պետք է նկարագրվեին նոր տնտեսության հիմունքները. բայց ինչպես առաջ փոքր ու չնչին էին թվում նրան այդ զբաղմունքները և մտքերը այն խավարի համեմատությամբ, որ պատել էր ամբողջ կյանքը, ճիշտ այնպես էլ աննշան ու մանր էին թվում նրանք այժմ՝ առաջիկա այն կյանքի համեմատությամբ, որ ողողված էր երջանկության պայծառ լույսով։ Նա շարունակում էր իր զբաղմունքները, բայց զգում էր այժմ, որ իր ուշադրության ծանրության կենտրոնը փոխանցվել է ա՛յլ բանի վրա և որ այդ պատճառով ինքը բոլորովին ուրիշ կերպ ու ավելի պարզորեն է նայում գործին։ Առաջ այդ գործը նրա համար փրկություն էր կյանքից։ Առաջ նա զգում էր, որ առանց գործի իր կյանքը կդառնա չափազանց մռայլ։ Իսկ այժմ այդ զբաղմունքներն անհրաժեշտ էին նրան, որպեսզի կյանքը չլիներ չափազանց միօրինակ պայծառ։ Նորից անդրադառնալով իր թղթերին, կարդալով այն, ինչ գրված էր, նա գոհունակությամբ եզրափակեց, որ արժե զբաղվել այդ գործով։ Գործը նոր էր և օգտակար։ Առաջվա մտքերից շատերը թվացին նրան ավելորդ ու ծայրահեղություն, բայց շատ բացեր պարզ դարձան նրա համար, երբ նա թարմացրեց իր հիշողության մեջ ամբողջ գործը։ Նա այժմ գրում էր մի նոր գլուխ՝ Ռուսաստանում հողագործության անշահեկան դրության պատճառների մասին։ Նա ապացուցում էր, որ Ռուսաստանի աղքատությունն առաջանում է ո՛չ միայն հողային սեփականության անկանոն բաշխումից ու սխալ ուղղությունից, այլ որ դրան նպաստում է վերջերս Ռուսաստանին աննորմալ ձևով պատվաստված արտաքին քաղաքակրթությունը, մանավանդ հաղորդակցության ճանապարհները, երկաթուղիները,

[1] Անգլիական ասեղնագործում։

որոնք իրենց ետևից բերին կենտրոնացում քաղաքներում, փարթամության զարգացում ու դրա հետևանքով, ի վնաս հողագործության, զարգացում ֆաբրիկային արդյունաբերության, վարկի և սրա ուղեկից՝ բորսային խաղի։ Նրան թվում էր, որ այս բոլոր երևույթները տեղի են ունենում պետության մեջ հարստության նորմալ զարգացման դեպքում միայն, երբ հողագործության վրա արդեն դրված է բավական աշխատանք, երբ հողագործությունը մտել է կանոնավոր, համենայն դեպս, որոշակի պայմանների մեջ. որ երկրի հարստությունը պետք է աճի համաչափորեն և մանավանդ այնպես, որպեսզի հարստության մյուս ճյուղերն առաջ չանցնեն հողագործությունից, որ հողագործության որոշ կացության համեմատ՝ պետք է լինեն նաև նրան համապատասխան հաղորդակցության ճանապարհներ, և որ հողից մեր անկանոն օգտվելու պայմաններում երկաթուղիները,— որոնց կյանքի է կոչել ո՛չ թե տնտեսական, այլ քաղաքական անհրաժեշտությունը,— վաղաժամ են ու հողագործությանը նպաստելու փոխարեն, ինչ սպասում էին նրանցից, առաջ անցնելով հողագործությունից և առաջ բերելով արդյունաբերության ու վարկի զարգացում, կանդնեցրին այն. և որ այդ պատճառով, ինչպես մի օրգանի միակողմանի ու վաղաժամ զարգացումը կենդանու մեջ կխանգարեր նրա ընդհանուր զարգացմանը, այնպես էլ Ռուսաստանում հարստության ընդհանուր զարգացման համար վարկը, հաղորդակցության ճանապարհները, ֆաբրիկային գործունեության ուժեղացումը, որոնք անկասկած անհրաժեշտ են Եվրոպայում և որտեղ նրանք պատեհաժամ են, մեզ մոտ միայն վնաս պատճառեցին, հեռացնելով հողաշինարարության հերթական գլխավոր հարցը։

Մինչ Լևինը գրում էր իրենը, Կիտին մտածում էր այն մասին, թե ինչպե՞ս անբնականորեն ուշադիր էր իր ամուսինը դեպի երիտասարդ իշխան Զարսկին, որը շատ անտակտ կերպով սիրաբանում էր Կիտիի հետ՝ Մոսկվայից մեկնելու նախօրյակին։ «Չէ՞ որ նա խանդում է,— մտածում էր Կիտին։ — Աստվա՜ծ իմ, ի՞նչ սիրելի և տխմար է նա։ Նա խանդո՞ւմ է ինձ։ Եթե նա իմանար, որ նրանք ամենքն ինձ համար նույնն են, ինչ Պյոտր խոհարարը,— մտածում էր Կիտին, նայելով իր համար տարօրինակ սեփականության զգացումով նրա ծոծ-

բակին ու կարմիր վզին։ — Թեպետև ափսոս է նրան կտրել իր զբաղմունքներից (ոչի՞նչ, նա կհասցնի), պետք է նայել նրա դեմքին. արդյոք կզգա՞ նա, որ ես նայում եմ իրեն։ Ուզում եմ, որ շուռ գա... Ուզում եմ, դե՜», և Կիտին աչքերը բացեց ավելի լայն, կամենալով դրանով ուժեղացնել իր հայացքի ներազդեցությունը։

— Այո՛, նրանք իրենց են քաշում բոլոր հյութերը և տալիս են կեղծ փայլ,— մոթմոթաց Լևինը, դադարելով գրել և զգալով, որ կինը նայում է իրեն ու ժպտում, ետ նայեց։

— Ի՞նչ կա,— հարցրեց Լևինը ժպտալով ու վեր կենալով։ «Ետ նայեց», մտածեց Կիտին։

— Ոչի՞նչ, ես ուզում էի, որ դու ետ նայեիր,— ասաց Կիտին, նայելով ամուսնուն ու կամենալով կռահել, արդյոք, նա սրտնեղո՞ւմ է, որ ինքը խանգարեց նրան, թե՝ ոչ։

— Ա՜յ, ինչ լա՜վ է, որ մենք երկուսով ենք։ Այսինքն՝ ինձ համար,— ասաց Լևինը, մոտենալով նրան ու փայլելով երջանկության ժպիտով։

— Ինձ համար այնպես լավ է, ո՛չ մի տեղ չեմ գնա, մանավանդ Մոսկվա։

— Իսկ ինչի՞ մասին էիր մտածում դու։

— Ե՞ս. ես մտածում էի... ո՛չ, ո՛չ, գնա գրիր, մտքերդ մի՛ցրիր,— ասաց Կիտին, կնճռելով շուրթերը,— ես էլ պետք է հիմա կտրեմ այս ծակերը, ա՜յ, տեսնո՞ւմ ես։

Կիտին վերցրեց մկրատը և սկսեց կտրել-հանել։

— Չէ, ասա՛, ի՞նչ էիր մտածում,— ասաց Լևինը, նստելով կնոջ մոտ և հետևելով փոքրիկ մկրատի շրջանաձև շարժումին։

— Ա՜խ, ի՞նչ էի մտածում։ Մտածում էի Մոսկվայի մասին, քո ծոծրակի մասին։

— Իսկապես, ինչո՞ւ ինձ վիճակվեց այսպիսի երջանկություն։ Անբնական է։ Չափազանց լավ է,— ասաց Լևինը, համբուրելով նրա ձեռքը։

— Ինձ համար, ընդհակառակը, որքան ավելի լավ է, այնքան ավելի բնական է։

— Դու փոքրիկ հյուս ունես,— ասաց Լևինը, զգուշությամբ շուռ տալով նրա գլուխը։ — Փոքրիկ հյուս։ Տեսնո՞ւմ ես, ահա այստեղ։ Ո՛չ, ո՛չ։ Մենք զբաղված ենք գործով։

Զբաղմունքն այլևս չէր շարունակվում, և նրանք, որպես

հանցավորներ, ետ քաշվեցին իրարից, երբ Կուզման մտավ հայտնելու, որ թեյը պատրաստ է։

— Իսկ քաղաքից եկա՞ն,— հարցրեց Լևինը Կուզմային։

— Հենց նոր եկան, կարգի են բերում։

— Դե՜, շո՛ւտ եկ,— ասաց Կիտին ամուսնուն, դուրս գնալով կաբինետից,— թե չէ՝ առանց քեզ կկարդամ նամակները։ Եվ արի՝ նվագենք չորս ձեռքով։

Մնալով մենակ ու հավաքելով իր տետրերը Կիտիի գնած նոր պորտֆելի մեջ, նա սկսեց լվանալ ձեռքերը նոր լվացարանում՝ էլի նույն Կիտիի հետ հանդես եկած, նոր վայելչագեղ պարագաներով։ Լևինը ժպտում էր իր մտքերին և անհավանորեն շարժում էր գլուխն այդ մտքերի վրա. նրան տանջում էր զղջման նման մի զգացում։ Նրա այժմյան կյանքի մեջ կար ինչ-որ ամոթալի, փափկակեց, կապուկական[1] բան, ինչպես կոչում էր նա ինքն իրեն։ «Լավ չէ այդպես ապրելը,— մտածում էր նա։ — Ահա շուտով կլինի երեք ամիս, իսկ ես համարյա ոչինչ չեմ անում։ Այսօր համարյա առաջին անգամ ես լրջորեն ձեռնամուխ եղա աշխատանքի և ի՞նչ։ Սկսեցի ու իսկույն թողի։ Ես համարյա թողել եմ նույնիսկ իմ սովորական զբաղմունքները։ Ես համարյա չեմ գնում ոչ մի տեղ, չեմ լինում նաև տնտեսության գործերով։ Մերթ խղճում եմ Կիտիին մենակ թողնել, մերթ տեսնում եմ, որ նա ձանձրանում է։ Իսկ ես կարծում էի, որ մինչև ամուսնություն՝ կյանքը հենց էնպես մի կերպ ընթացող, հաշվից դուրս բան է, որ ամուսնությունից հետո միայն կսկսվի իսկական կյանքը։ Իսկ ահա շուտով կլինի երեք ամիս, ես երբեք այդպես պարապ-սարապ ու ապարդյուն չեմ անցկացրել ժամանակը։ Ո՛չ, այսպես չի կարելի, պետք է սկսել։ Իհարկե, Կիտին մեղավոր չէ։ Նրան հանդիմանելու բան չկա։ Ես ինքս պետք է լինեի ամուր, պաշտպանեի տղամարդու իմ անկախությունը։ Թե չէ՝ այսպես կարող եմ ինքս էլ վարժվել անգործության, նրան էլ վարժեցնել... Իհարկե, նա մեղավոր չէ», ասում էր ինքն իրեն Լևինը։

Բայց դժգոհ մարդու համար դժվար է չհանդիմանել մեկ ուրիշին, և հենց նրան, ով ամենից ավելի մոտ է իրեն, հանդիմանել այն բանում, ինչից ինքը դժգոհ է։ Եվ աղոտ կերպով

[1] Կապուան՝ փոքրիկ քաղաք Իտալիայում, որը միջին դարերում հայտնի էր իր հարստությամբ ու բնակիչների զեխ, փափկասուն կյանքով։

Լևինի գլխում ծագեց մի միտք, թե մեղավոր է ո՛չ թե ինքը՝ Կիտին (նա ոչ մի բանում չէր կարող մեղավոր լինել), այլ մեղավոր է նրա դաստիարակությունը՝ չափազանց մակերեսային ու թեթևակշիռ («այդ հիմար Զարսկին. ես գիտեմ, Կիտին ուզում էր, բայց չէր կարողանում կանգնեցնել նրան»)։ «Այո՛, բացի տան հանդեպ հետաքրքրությունից (դա ունի Կիտին), բացի իր տուալետից և բացի broderie angliase, նա ուրիշ բանով լուրջ չի հետաքրքրվում։ Չկա հետաքրքրություն ո՛չ դեպի իմ գործը, դեպի տնտեսությունը, դեպի մուժիկները, դեպի երաժշտությունը, որի մեջ նա բավական ուժեղ է, ո՛չ էլ դեպի ընթերցանությունը։ Նա ոչինչ չի անում և լիովին բավարարված է»։ Լևինը իր հոգում դատապարտում էր դա և չէր հասկանում դեռ, որ Կիտին պատրաստվում էր գործունեության այն գալիք շրջանի համար, երբ նա միաժամանակ կլինի իր ամուսնու կինը և տանտիկին, արգանդում կկրի, հետո կկերակրի ու կդաստիարակի երեխաներին։ Լևինը չէր հասկանում, որ Կիտին ներքին զգացողությամբ գիտեր այդ ամենը և պատրաստվելով այդ սոսկալի աշխատանքին, չէր կրշտամբում իրեն սիրո երջանկության ու անհոգության րոպեներին, որոնցից նա օգտվում էր այժմ, ուրախ հյուսելով իր ապագա բույնը։

XVI

Երբ Լևինը բարձրացավ վերև, նրա կինը նստել էր արծաթե նոր ինքնաեռի մոտ՝ թեյի պարագաների առաջ և Ագաֆիա Միխայլովնայի համար լցրած մի գավաթ թեյ, նստեցրել էր նրան փոքրիկ սեղանի մոտ, ինքն էլ կարդում էր Դոլլիից ստացած նամակը, որի հետ մշտական ու հաճախակի նամակագրություն ուներ։

— Տե՛ս, նստեցրել է ինձ ձեր տիկինը, հրամայեց նստել իր հետ,— ասաց Ագաֆիա Միխայլովնան, բարեկամաբար ժպտալով Կիտիին։

Ագաֆիա Միխայլովնայի այդ խոսքերի մեջ Լևինը կարդաց լուծումն այն դրամայի, որ վերջերս տեղի ուներ Ագաֆիա Միխայլովնայի և Կիտիի միջև։ Նա տեսավ, որ չնայած Ագաֆիա Միխայլովնային նոր տանտիկնոջ պատճառած ամբողջ դառնությանը, այն է՝ տան կառավարության ղեկը նրանից խլելուն, Կիտին այսուամենայնիվ նրան հաղթել ու ստիպել է սիրել իրեն։

— Եվ ահա ես կարդացի քո նամակը,— ասաց Կիտին, տալով Լևինին անգրագետ մի նամակ։ — Դա այն կնոջից է, կարծեմ, քո եղբոր... — ասաց նա։ — Ես չկարդացի։ Իսկ սա մերոնցից և Դոլլիից է։ Երևակայի՛ր։ Դոլլին Գրիշային ու Տանյային տարել է Սարմատսկիների մոտ՝ մանկական պարահանդեսի։ Տանյան եղել է մարքիզուհի։

Բայց Լևինը չէր լսում կնոջը. նա կարմրելով, վերցրեց Մարիա Նիկոլաևնայի, Նիկոլայ Սողրոր նախկին սիրուհու նամակը և սկսեց կարդալ այն։ Դա արդեն երկրորդ նամակն էր Մարիա Նիկոլաևնայից։ Առաջին նամակում Մարիա Նիկոլաևնան գրում էր, թե եղբայրն անմեղ տեղը վռնդեց իրեն, և սրտառուչ միամտությամբ ավելացնում էր, որ թեև ինքը նոր աղքատության մեջ է, բայց ոչինչ չի խնդրում, չի ուզում, այլ որ իրեն տանջում է միայն այն միտքը, որ առանց իրեն կկորչի Նիկոլայ Դմիտրիևիչը իր թույլ առողջությամբ, և խնդրում է եղբորը՝ հոգ տանել նրա մասին։ Այժմ նա գրում էր ուրիշ բան։ Նա գտել է Նիկոլայ Դմիտրիևիչին, նորից միացել է նրան Մոսկվայում և նրա հետ գնացել է նահանգական քաղաքը, որտեղ Նիկոլայը պաշտոն է ստացել։ Բայց այնտեղ նա կռվել է իր պետի հետ և վերադարձել Մոսկվա, բայց ճանապարհին այնպես է հիվանդացել, որ դժվար թե վեր կենա,— գրում էր Մարիա Նիկոլաևնան։ «Շարունակ խոսում էր ձեր մասին, և հետո՝ էլ փող չկա»։

— Կարդա, քո մասին է գրում Դոլլին,— սկսեց Կիտին ժպտալով, բայց հանկարծ կանգ առավ, նկատելով ամուսնու դեմքի փոխված արտահայտությունը։ — Ի՞նչ եղավ քեզ։ Ի՞նչ է պատահել։

— Նա գրում է ինձ, որ Նիկոլայ եղբայրս մահամերձ է։ Ես պետք է գնամ։

Կիտիի դեմքը հանկարծ փոխվեց։ Բոլոր մտքերը Տանյա մարքիզուհու և Դոլլիի մասին չքացան։

— Իսկ ե՞րբ ես գնալու,— հարցրեց Կիտին։

— Վաղը։

— Ես էլ քեզ հետ, կարելի՞ է,— ասաց կինը։

— Կի՛տի, է՛, ի՞նչ բան է դա,— հանգիստությամբ ասաց Լևինը։

— Ինչպե՞ս թե ինչ է,— հարցեց Կիտին, վիրավորված, որ ամուսինը կարծես ո՛չ սիրով ու սրտնեղությամբ է ընդունում իր առաջարկը։ — Իսկ ինչո՞ւ չգնամ ես։ Ես քեզ չեմ խանգարիլ։ Ես...

— Ես գնում եմ, որովհետև իմ եղբայրը մեռնում է,— ասաց Լևինը։ — Դո՛ւ ինչո՞ւ...

— Ինչո՞ւ։ Նրա համար հենց, ինչի համար և դու։

«Եվ ինձ համար կարևոր այդպիսի բոպեին նա մտածում է միայն այն մասին, որ ինքը կձանձրանա միայնակ», մտածեց Լևինը։ Եվ այդ պատճառաբանությունը այդպիսի կարևոր գործում բարկացրեց նրան։

— Դա անհնարին բան է,— ասաց նա խիստ։

Ագաֆիա Միխայլովնան տեսնելով, որ բանը հասնում է վեճի, լռիկ ցած դրեց գավաթը և դուրս գնաց։ Կիտին նույնիսկ չնկատեց նրան։ Այն տոնը, որով ամուսինն ասաց վերջին խոսքերը, վիրավորեց կնոջը, մանավանդ նրանով, որ ամուսինը, ինչպես երևում է, չէր հավատում կնոջ ասածին։

— Ես ասում եմ քեզ, եթե դու գնաս, ես էլ կգամ քեզ հետ, անպայման կգամ,— շտապ ու ցասկոտ խոսեց Կիտին։— Ինչո՞ւ է անհնարին։ Ինչո՞ւ ես ասում, որ դա անհնարին է։

— Որովհետև պետք է գնալ, աստված գիտե թե ո՛ւր, ինչ ճանապարհներով, ինչ հյուրանոցներում պիտի ապրել... Դու կձնշես ինձ,— ասում էր Լևինը, աշխատելով լինել սառնարյուն։

— Բնավ ոչ։ Ինձ ոչինչ պետք չէ։ Որտեղ կարող ես դու, այնտեղ էլ ես...

— Ա՜, թեկուզ հենց այն պատճառով, այնտեղ է այդ կինը, որի հետ դու չես կարող մոտիկանալ։

— Ես ոչինչ չգիտեմ ու չեմ ուզում իմանալ, թե ո՞վ է այնտեղ և ինչ։ Ես գիտեմ, որ իմ ամուսնու եղբայրը մեռնում է և ամուսինս գնում է նրա մոտ, ես էլ գնում եմ ամուսնուս հետ, որպեսզի...

— Կի՛տի, մի՛ բարկացիր։ Բայց մտածիր, տե՛ս, այդ գործն այնքան կարևոր է, որ ցավում եմ, երբ տեսնում եմ, որ դու խառնում ես թուլության, մենակ չմնալու ցանկության

զգացումն իրար հետ։ Եթե մենակ ձանձրալի կլինի քեզ համար, դե՛, գնա Մոսկվա։

— Ա՜յ, ահա, դու միշտ վերջագրում ես ինձ վատ, ստոր մտքեր,— ասաց Կիտին վիրավորանքի ու ցասման արցունքներով,— ես ոչինչ, ո՛չ թուլություն, ո՛չ մի բան... Ես զգում եմ, որ իմ պարտքն է լինել ամուսնուս հետ այն ժամանակ, երբ նա դժբախտության մեջ է, բայց դու ուզում ես դիտմամբ ցավ պատճառել ինձ, դիտմամբ ուզում ես չհասկանալ...

— Ո՞չ, սոսկալի է դա։ Լինել ինչ-որ ստրուկ,— ճչաց Լևինը, վեր կենալով ու այլևս չկարողանալով զսպել իր սրտնեղությունը։ Բայց հենց նույն վայրկյանին զգաց, որ հարվածում է ինքն իրեն։

— Ուրեմն էլ ինչո՞ւ ամուսնացար։ Ազատ կլիներիր։ Ինչի՞ համար էր, եթե դու ափսոսում ես,— ասաց Կիտին, վեր թռավ տեղից ու վազեց ընդունարան։

Երբ Լևինը եկավ նրա ետևից, նա ցնցվում էր հեկեկանքից։

Լևինն սկսեց խոսել, ցանկանալով գտնել այն բառերը, որոնք կարող էին ոչ թե փոխել Կիտիի համոզմունքը, այլ միայն հանգստացնել նրան։ Բայց նա չէր լսում ամուսնուն և ոչ մի բանի չէր համաձայնում։ Լևինը կռացավ դեպի նա ու վերցրեց նրա դիմադրող ձեռքը։ Համբուրեց կնոջ ձեռքը, համբուրեց մազերը, նորից համբուրեց ձեռքը,— կինը լուռ էր շարունակ։ Բայց երբ Լևինը երկու ձեռքով բռնեց նրա դեմքը և ասաց «Կի՛տի»,— Կիտին հանկարծ ուշքի եկավ, լաց եղավ ու հաշտվեց։

Վճռեցին վաղը գնալ միասին։ Լևինը ասաց կնոջը, թե հավատում է, որ նա կամենում է գնալ միայն նրա համար, որպեսզի օգտակար լինի, համաձայնեց, որ Մարիա Նիկոլաևնայի ներկայությունը եղբոր մոտ անվայելուչ բան չէ. բայց իր հոգու խորքում Լևինը գնում էր դժգոհ նրանից և իրենից։ Լևինը դժգոհ էր կնոջից, որը չթողեց նրան մենակ գնալ, երբ դա պետք էր (և ի՞նչ տարօրինակ էր թվում նրան այն միտքը, թե ինքը, որ դեռ նորերս չէր համարձակվում հավատալ այն բախտին, որ Կիտին կարող է սիրել նրան, այժմ դժբախտ էր զգում իրեն, որ Կիտին սիրում է նրան չափազանց), և դժգոհ էր ինքն իրենից, որ ցույց չտվեց իր կամքի ուժը։ Իր հոգու խորքում նա ավելի ևս համաձայն չէր այն մտքին, իբր

Կիտին ոչ մի գործ չունի այն կնոջ հետ, որը եղբոր հետ էր, և նա սոսկանքով էր մտածում հնարավոր բոլոր ընդհարումների մասին։ Հենց միայն այն, որ իր կինը, իր Կիտին, կլինի մի սենյակում պոռնիկ կնոջ հետ, ստիպում էր նրան ցնցվել զզվանքից ու սարսափից։

XVII

Նահանգական քաղաքի հյուրանոցը, որտեղ պառկած էր Նիկոլայ Լևինը, մեկն էր նահանգական այն հյուրանոցներից, որոնք սարքավորվում են նոր կատարելագործված եղանակով, մաքրության, հարմարավետության, նույնիսկ վայելչագեղության լավագույն դիտավորություններով, բայց որոնք, իրենց այցելող հասարակության շնորհիվ, ծայրահեղ արագությամբ վերածվում են կեղտոտ գինետների՝ կատարելագործման հավակնությամբ և հենց այս հավակնության հետևանքով դառնում են ավելի վատ, քան հին, ուղղակի կեղտոտ հյուրանոցները։ Այդ հյուրանոցն արդեն հասել էր այս կացության, և թե՛ մուտքի մոտ ծխախոտ ծխող կեղտոտ համազգեստով զինվորը, որ պարտավոր էր լինել բարապանի դերում, թե՛ չուգունե, մռայլ և անախորժ միջանցիկ սանդուղքը, թե՛ կեղտոտ ֆրակով բացլեզու հավաքարարը, թե՛ ընդհանուր դահլիճը՝ մոմե ծաղիկների փոշոտ փնջով, որ զարդարում էր սեղանը, թե՛ կեղտը, փոշին ու փնթիությունն ամենուր, և դրա հետ միասին այդ հյուրանոցի ինչ-որ նոր արդիորեն երկաթուղային ինքնաբավական մտահոգությունը առաջ բերին Լևինի մեջ ամենածանր զգացում, նրանց նոր կյանքից հետո, մանավանդ նրանով, որ հյուրանոցի թոզած կեղծ տպավորությունը ո՛չ մի կերպ չէր հաշտվում այն բանի հետ, ինչ սպասում էր նրանց։

Ինչպես միշտ, բանից դուրս եկավ, որ սովորական հարցից հետո, թե ի՛նչ գնանոց համար կկամենային, չկարո՛ղ մի լավ համար. մի լավ համար զբաղեցրել էր երկաթուղու վերաքննիչը, մյուսը՝ Մոսկվայից եկած փաստաբանը, երրորդը՝ գյուղից եկած իշխանուհի Աստաֆեան։ Մնում էր մի կեղտոտ համար, որի կողքին խոստանում էին երեկոյան դեմ ազատել մի ուրիշը։ Սրտնեղելով կնոջ վրա, որ կատարվեց այն, ինչ

նպատակում էր ինքը, այսինքն՝ այն, որ գալու բոպեին, երբ նրա սիրտը փոթորկվում էր հուզմունքից, մտածելով, թե ինչպե՛ս է եղբայրը, նա ստիպված էր հոգ տանել կնոջ մասին, փոխանակ անմիջապես վազելու եղբոր մոտ,— Լևինը կնոջը ներս տարավ իրենց հատկացրած համարը։

— Գնա՛, գնա՛,— ասաց Կիտին, երկչոտ, հանցավոր հայացքով նայելով ամուսնուն։

Լևինը լուռ դուրս եկավ և տեղնուտեղը դեմ առավ Մարիա Նիկոլաևնային, որն իմացել էր նրա գալու մասին ու չէր համարձակվել մտնել նրա մոտ։ Նա ճիշտ այնպես էր, ինչպես տեսել էր նրան Լևինը՝ Մոսկվայում. նույն բրդե հագուստը և մերկ թևերն ու վիզը, և նույն բարեսիրտ-բութ, մի փոքր լցված, չեչոտ դեմքը։

Է՛, ի՞նչ կա։ Ինչպե՞ս է նա։ Ի՞նչ։

— Շատ վատ է։ Վեր չի կենում։ Նա շարունակ ձեզ էր սպասում։ Նա... դուք... ձեր տիկնոջ հե՞տ եք։

Լևինն առաջին բոպեին չհասկացավ այն, ինչ ճնշում էր Մարիա Նիկոլաևնային, բայց սա անմիջապես պարզաբանեց։

— Ես կհեռանամ, ես կգնամ խոհանոց,— թոթովում էր նա։— Նա կուրախանա։ Նա լսել է և ճանաչում ու հիշում է նրան արտասահմանից։

Լևինը հասկացավ, որ Մարիա Նիկոլաևնան նկատի ուներ իր կնոջը, և չգիտեր, թե ի՛նչ պատասխանի։

— Գնա՛նք, գնա՛նք,— ասաց Լևինը։

Բայց հենց որ նա տեղից շարժվեց, նրա համարի դուռը բացվեց և դուրս նայեց Կիտին։ Լևինը կարմրեց թե՛ ամոթից, թե՛ վրդովմունքից իր կնոջ դեմ, որ այդ ծանր վիճակի մեջ դրեց և՛ իրեն և՛ նրան. բայց Մարիա Նիկոլաևնան կարմրեց ավելի շատ։ Նա ամբողջովին կուչ եկավ ու կարմրեց արտասվելու աստիճան և երկու ձեռքով բռնելով թաշկինակի ծայրերը, ոլորում էր կարմիր մատներով, չիմանալով, թե ի՛նչ ասի, ի՛նչ անի։

Առաջին վայրկյանին Լևինը տեսավ ազահ հետաքրքրության արտահայտություն այն հայացքի մեջ, որով Կիտին նայում էր իր համար անհասկանալի այդ սոսկալի կնոջը. բայց դա տևեց միայն մի վայրկյան։

— Ինչպե՞ս է, ինչպե՞ս է նա,— դիմեց Կիտին ամուսնուն և հետո Մարիա Նիկոլաևնային։

— Դե հո չի՞ կարելի միջանցքում զրուցել,— ասաց Լևինը, զայրույթով նայելով այն պարոնին, որը խրոխտ քայլերով անցնում էր այդ պահին միջանցքով, իբր գնում էր իր գործով։

— Դե՛, ներս եկեք,— ասաց Կիտին, դիմելով ուշքի եկած Մարիա Նիկոլաևնային. բայց նկատելով ամուսնու վախեցած դեմքը,— կամ գնացե՛ք, գնացե՛ք և մարդ ուղարկեք իմ ետևից,— ասաց նա ու վերադարձավ համար։ Լևինը գնաց եղբոր մոտ։

Նա ո՛չ մի կերպ չէր սպասում այն բանին, ինչ տեսավ ու զգաց եղբոր մոտ։ Նա սպասում էր, թե կգտնի ինքնախաբեության այն կացությունը, որ այնպես հաճախ ունենում են թոքախտավորները, ինչպես լսել էր նա, և որն այնպես խիստ զարմացրեց նրան աշնանը՝ եղբոր եկած ժամանակ։ Նա սպասում էր, որ մոտեցող մահվան հատկանիշներն արտահայտված կլինեն ավելի որոշակի, այսինքն՝ ավելի թուլություն, ավելի նիհարություն, մինչդեռ վիճակը համարյա նույնն էր։ Նա սպասում էր, թե ինքը կունենա սիրելի եղբորը կորցնելու ափսոսանքի և մահվան հանդեպ սարսափի նույն զգացումը, որ նա ուներ այն ժամանակ, բայց ավելի մեծ չափով միայն։ Եվ նա պատրաստվում էր դրան, սակայն գտավ բոլորովին այլ բան։

Փոքրիկ, կեղտոտ համարում,— պատերի նախշազարդ պանելներ թքոտած, որի բարակ միջնորմի ետևից լսվում էր խոսակցության ձայն,— աղտոտությունների խեղդուկ հոտով հագեցած օդում, պատից հեռացրած մահճակալի վրա պառկած էր վերմակով ծածկված մի մարմին։ Այդ մարմնի մի ձեռքը վերմակի վրա էր, և այդ ձեռքի վիթխարի թաթը, փոցխի նման, անհասկանալիորեն կցված էր սկզբից մինչև կեսը բարակ ու հավասար երկար ուսոսկրին։ Գլուխը կողքի վրա դրած էր բարձին։ Լևինը տեսնում էր քրտնած նոսր մազերը քունքերին և պրկած, ասես թափանցիկ ճակատը։

«Չի կարող պատահել, որ այդ սարսափելի մարմինը լիներ Նիկոլայ եղբայրը», մտածեց Լևինը։ Բայց նա ավելի մոտ գնաց, տեսավ դեմքը, և կասկածն այլևս դարձավ անհնարին։ Չնայած դեմքի սոսկալի փոփոխությանը, բավական էր, որ Լևինը նայեր այդ աշխույժ, ներս մտնողի վրա բարձրացրած աչքերին, նկատեր բերանի թեթև շարժումը՝ մազերն իրար կպած բեղերի տակ, որպեսզի հասկանար այն սարսափելի ճշմարտությունը, թե այդ մեռած մարմինը իր կենդանի եղբայրն է։

Փայլուն աչքերը խիստ ու կշտամբալից նայեցին ներս մտած եղբորը։ Եվ այդ հայացքով անմիջապես կենդանի կապ հաստատվեց կենդանի էակների միջև։ Լևինն անմիջապես զգաց իր վրա հառած հայացքի մեջ կշտամբանք և զղջում իր երջանկության համար։

Երբ Կոնստանտինը վերցրեց նրա ձեռքը, Նիկոլայը ժպտաց։ Ժպիտը թույլ էր, հազիվ նկատելի և, չնայած ժպիտին, չփոխվեց աչքերի խիստ արտահայտությունը։

— Դու չէի՞ր սպասում, որ ինձ կգտնես այս վիճակում,— դժվարությամբ արտասանեց նա։

— Այո՛... ո՛չ...— ասում էր Լևինը շփոթվելով։— Հապա ինչո՞ւ իմաց չտվիր ավելի շուտ, այսինքն դեռ իմ հարսանիքի ժամանակ։ Ես տեղեկություններ էի հավաքում ամենուր։

Պետք էր խոսել լռելու համար, իսկ նա չգիտեր, թե ի՞նչ խոսի. մանավանդ որ եղբայրը ոչինչ չէր պատասխանում, այլ միայն նայում էր, աչք չհեռացնելով նրանից և, ըստ երևույթին, թափանցում էր յուրաքանչյուր բառի նշանակության մեջ։ Լևինը հաղորդեց եղբորը, որ իր հետ եկել է կինը։ Նիկոլայը գոհունակություն հայտնեց, բայց ասաց, որ վախենում է իր դրությամբ երկյուղ պատճառի նրան։ Տիրեց լռություն։ Հանկարծ Նիկոլայը շարժվեց ու սկսեց ասել ինչ-որ բան։ Լևինը նրա դեմքի արտահայտությունից սպասում էր ինչ-որ առանձնապես նշանավոր ու կարևոր բան, բայց Նիկոլայը խոսեց իր առողջության մասին։ Նա մեղադրում էր բժշկին, ափսոսում էր, որ չկա Մոսկվայի հռչակավոր բժիշկը, և Լևինը հասկացավ, որ նա դեռ հույս ուներ։

Օգտվելով լռության առաջին րոպեից, Լևինը վեր կացավ, կամենալով գեթ մի րոպե ազատվել տանջալից զգացումից և ասաց, որ գնում է կնոջը բերելու։

— Լա՞վ, իսկ ես կհրամայեմ, որ մաքրեն այստեղ։ Այստեղ կեղտոտ է և, կարծում եմ, գարշահոտություն է փչում։

Մա՜շա, հավաքիր այստեղ,— դժվարությամբ ասաց Հիվանդը։— Հենց որ հավաքես, դուրս գնա,— ավելացրեց նա, հարցական նայելով եղբորը։

Լևինը ոչինչ չպատասխանեց։ Դուրս գալով միջանցք, նա կանգ առավ։ Նա ասաց, որ կբերի կնոջը, բայց հիմա, հաշիվ տալով իրեն այն զգացման մասին, որ ուներ ինքը, նա վրճռեց, որ ընդհակառակը, կաշխատի համոզել Կիտիին, որ նա չգնա Հիվանդի մոտ։ «Ինչո՞ւ պիտի նա էլ տանջվի, ինչպես ես», մտածեց Լևինը։

— Հը՞, ի՞նչ կա, ինչպե՞ս է,— հարցրեց Կիտին վախեցած դեմքով։

— Ա՜խ, սարսափելի է, սոսկալի։ Ինչո՞ւ եկար դու,— ասաց Լևինը։

Կիտին լռեց մի քանի վայրկյան, երկչոտությամբ ու խղճահարված նայելով ամուսնուն. ապա մոտեցավ և երկու ձեռքով բռնեց նրա արմունկը։

— Կոստյա, տա՛ր ինձ նրա մոտ, մեզ համար ավելի թեթև կլինի երկուսով։ Դու միայն տա՛ր ինձ, տա՛ր ինձ, խընդրեմ, և հեռացի՛ր,— խոսեց Կիտին։— Դու հասկացիր, որ ինձ համար շատ ավելի ծանր է տեսնել քեզ ու չտեսնել նրան։ Կարող է պատահել, որ այնտեղ ես օգտակար լինեմ քեզ և նրան։ Խնդրում եմ, թույլ տուր,— աղաչում էր նա ամուսնուն, կարծես իր կյանքի երջանկությունը կախված էր դրանից։

Լևինը ստիպված էր համաձայնել և ուշքի գալով ու բոլորովին մոռանալով Մարիա Նիկոլաևնայի մասին, Կիտիի հետ նորից գնաց եղբոր մոտ։

Թեթև քայլերով ու անդադար նայելով ամուսնուն և ցույց տալով նրան քաջ ու կարեկից դեմք, Կիտին մտավ Հիվանդի սենյակը և անշտապ շուռ գալով, առանց աղմուկի փակեց դուռը։ Անլսելի քայլերով նա արագ մոտեցավ Հիվանդի մահճին ու մտնելով այնպես, որ Նիկոլայն ստիպված չլինի գլուխը շուռ տալու, անմիջապես վերցրեց իր թարմ, ջահել ձեռքի մեջ նրա հսկայական ձեռքի կմախքը, սեղմեց այն և միայն կանանց հատուկ, չվիրավորող ու կարեկցող խաղաղ աշխուժությամբ սկսեց խոսել նրա հետ։

— Մենք իրար պատահում էինք Սոդենում, բայց ծանոթ

չէինք,— ասաց Կիտին։— Դուք չէիք կարծում, որ ես կլինեմ ձեր քույրը։

— Դուք ինձ չէի՞ք ճանաչի,— ասաց Նիկոլայը ժպիտով, որը փայլեց Կիտիի ներս մտնելիս։

— Ո՜չ, կճանաչեի։ Ի՞նչ լավ արիք, որ իմաց տվիք մեզ։ Օր չէր լինում, որ Կոստյան չհիշեր ձեր մասին ու չանհանգստանար։

Բայց Հիվանդի աշխուժությունը երկար չտևեց։

Դեռ Կիտին չէր վերջացրել խոսքը, երբ Նիկոլայի դեմքին նորից երևաց կենդանի էակի նկատմամբ մեռնողի նախանձի խիստ, կշտամբական արտահայտություն։

— Ես վախենում եմ, որ ձեզ համար այստեղ այնքան էլ լավ չէ,— ասաց Կիտին, շուռ գալով նրա սևեռուն հայացքից ու դիտելով սենյակը։— Պետք է հյուրանոցի տիրոջից խնդրել ուրիշ սենյակ, և հետո որ մենք ավելի մոտ լինենք,— ասաց նա ամուսնուն։

XVIII

Լևինը չէր կարողանում հանգիստ նայել եղբորը, չէր կարողանում նրա ներկայությամբ լինել բնական ու հանգիստ։ Երբ նա մտնում էր Հիվանդի մոտ, նրա աչքերը և ուշադրությունն անգիտակցաբար շաղվում էին, և նա չէր տեսնում ու չէր տարբերում եղբոր դրության մանրամասները։ Նա սոսկալի հոտ էր առնում, տեսնում էր կեղտոտություն, անկարգություն և տանջալից կացություն ու հառաչանքներ և զգում էր, որ չի կարելի օգնել դրան։ Նրա գլխով անգամ չէր անցնում մտածել, հասկանալ Հիվանդի կացության բոլոր մանրամասները, մտածել այն մասին, թե ինչպե՞ս էր պառկել այնտեղ, վերմակի տակ, այդ մարմինը, ինչպե՞ս էին ծալվելով զետեղվել այդ նիհարած ոլոգները, կոնքոսկրները, մեջքը և չէ՞ր կարելի արդյոք՝ մի կերպ ավելի լավ տեղավորել դրանք, անել այնպես, որ եթե անգամ ավելի լավ չլիներ, բայց պակաս վատ լիներ։ Նրա մեջքով սարսուռ էր անցնում, երբ նա սկսում էր մտածել այս բոլոր մանրամասների մասին։ Նա անկասկած համոզված էր, որ ոչինչ չի կարելի անել՝ ո՛չ կյանքը երկարացնելու համար, ո՛չ էլ տառապանքները թեթևացնելու։ Բայց

այն գիտակցությունը, որ նա ամեն օգնություն համարում էր անհնարին, հաղորդվում էր հիվանդին ու գրգռում էր նրան։ Այդ իսկ պատճառով Լևինի համար ավելի ծանր էր։ Հիվանդի սենյակում լինելը նրա համար տանջանք էր, չլինելը՝ ավելի վատ։ Եվ նա զանազան պատրվակներով անդադար դուրս էր գնում ու նորից ներս գալիս, անկարող լինելով մենակ մնալ։

Բայց Կիտին մտածում էր, զգում ու գործում էր բոլորովին այլ կերպ։ Տեսնելով հիվանդին, նա խղճաց նրան։ Եվ խղճահարությունը նրա կանացի հոգում բնավ առաջ չբերեց սարսափի ու զարշանքի այն զգացումը, որ առաջացրեց նրա ամուսնու մեջ, այլ հարուցեց պահանջ՝ գործելու, իմանալու հիվանդի կացության բոլոր մանրամասները և օգնելու նրան։ Ու որովհետև Կիտիի մեջ ո՛չ մի կասկած չկար, որ ինքը պետք է օգնի հիվանդին, նա չէր կասկածում նաև այն բանում, որ դա կարելի է, և անմիջապես ձեռնամուխ եղավ այդ գործին։ Այն նույն մանրամասները, որոնց մասին մտածելը սարսափեցնում էր նրա ամուսնուն, անմիջապես գրավեցին նրա ուշադրությունը։ Կիտին ուղարկեց բժշկի ետևից, մարդ ուղարկեց դեղատուն, ստիպեց իր հետ եկած աղջկան ու Մարիա Նիկոլաևնային ավլել, մաքրել փոշին, լվանալ, ինքն էլ ինչ-որ բան լվանում էր, ողողում, ինչ-որ բան դնում էր հիվանդի վերմակի տակ։ Նրա կարգադրությամբ ինչ-որ բան ներս բերում ու դուրս էին տանում Նիկոլայի սենյակից։ Նա ինքը մի քանի անգամ գնաց իր համարը, ուշադրություն չդարձնելով իրեն ընդառաջ եկող պարոնների վրա, հանում ու բերում էր սավաններ, բարձի երեսներ, երեսսրբիչներ, շապիկներ։

Սպասավորը, որը ընդհանուր դահլիճում ճաշ էր տալիս ինժեներներին, մի քանի անգամ բարկացած դեմքով եկավ Կիտիի կանչին և չէր կարող չկատարել նրա հրամանները, որովհետև նա այնպիսի սիրալիր պնդողականությամբ էր անում իր կարգադրությունները, որ ո՛չ մի կերպ չէր կարելի թողնել հեռանալ նրանից։ Լևինը հավանություն չէր տալիս այս բոլորին. նա չէր հավատում, որ դրանից որևէ շահ ստացվեր հիվանդի համար։ Իսկ ամենից ավելի նա վախենում էր, որ հիվանդը կբարկանա։ Բայց հիվանդը չէր բարկանում, թեպետև կարծես անտարբեր էր այդ ամենի նկատմամբ, այլ ամաչում էր միայն, իսկ առհասարակ կարծես թե հետաքրքրվում էր այն բանով, թե ինչ է անում Կիտին իր հետ։ Լևինը, վերադառնալով բժշկի մոտից, ուր նրան ուղարկեց Կիտին, դուռը բացելով, տեսավ հիվանդին այն բոպեին, երբ Կիտիի կարգադրությամբ փոխում էին նրա սպիտակեղենը։ Մեջքի երկար, սպիտակ կմախքը, աչքի զարնող վիթխարի թիակներով և դուրս ցցված կողերով ու ողնաշարով՝ մերկ էր, և Մարիա Նիկոլաևնան ծառայի հետ խճճվել էր շապկի թևում ու չէր կարողանում մտցնել նրա մեջ կախ ընկած երկար թևը։ Կիտին, որ Լևինի ետևից շտապ ծածկեց դուռը, չէր նայում այն կողմը. բայց հիվանդը հառաչեց, և Կիտին արագ գնաց դեպի նա։

— Դե՛, շո՛ւտ,— ասաց Կիտին։

— Մոտ մի՛ գաք,— բարկացած թոթովեց հիվանդը,— ես ինքս...

— Ի՞նչ եք ասում,— հարցրեց Մարիա Նիկոլաևնան։

Բայց Կիտին լսեց ու հասկացավ, որ հիվանդը ճնշվում էր և նրա համար անախորժ էր մերկացած լինել իր հարսի ներկայությամբ։

— Ես չեմ նայում, չեմ նայում,— ասաց Կիտին, ուղղելով թևը։— Մարիա Նիկոլաևնա, իսկ դուք անցեք այն կողմից, ուղղեք,— ավելացրեց նա։

— Գնա, խնդրում եմ, իմ փոքրիկ պայուսակի մեջ կա մի որվակ,— դիմեց նա ամուսնուն,— գիտե՞ս, կողքի գրպանում, բեր խնդրեմ, մինչև այստեղ բոլորովին կհավաքեն։

Վերադառնալով սրվակի հետ, Լևինը գտավ հիվանդին արդեն պառկեցրած և ամեն բան նրա շուրջը բոլորովին փոփոխված։ Ծանր օդին փոխարինել էր քացախի հետ խառնած դուխին, որ սրսկում էր փոքրիկ խողովակի միջով Կիտին, շուրթերն առաջ բերած ու կարմիր այտերն ուռցրած։ Ո՛չ մի տեղ փոշի չէր երևում, մահճակալի տակ փռած էր գորգ։ Սեղանի վրա կանոնավոր շարված էին սրվակները, գրաֆինը և դարսված էր հարկավոր սպիտակեղենն ու Կիտիի broderie anglaise-ը։ Մյուս սեղանի վրա՝ հիվանդի մահճակալի մոտ դրված էին ըմպելիքը, մոմը և դեղափոշիները։ Ինքը՝ հիվանդը, լվացած ու սանրած, պառկել էր մաքուր սավանի վրա, բարձր դրված բարձերին, հագին մաքուր շապիկ՝ անբնական բարակ

վզի մոտ սպիտակ օձիքով և հույսի նոր արտահայտությամբ նայում էր Կիտիին, աչք չհեռացնելով նրանից։

Ակումբում գտած ու Լևինի բերած բժիշկը նա չէր, որ բուժում էր Նիկոլայ Լևինին և որից դժգոհ էր նա։ Նոր բժիշկը հանեց լապտերը և լսեց հիվանդին, գլուխը ճոճեց, դեղ գրեց ու առանձին մանրամասնությամբ բացատրեց սկզբում, թե ինչպե՞ս պետք է ընդունել դեղը. ապա թե ի՞նչ դիետա պիտի պահել։ Նա խորհուրդ էր տալիս հում կամ թերխաշ ձվեր և սելտերյան ջուր՝ որոշ տաքության նոր կթած կաթի հետ։ Երբ բժիշկը գնում էր, հիվանդն ինչ-որ բան ասաց եղբորը, բայց Լևինը լսեց միայն վերջին խոսքերը. «Քո Կատյան», իսկ այն հայացքից, որով նա նայեց Կիտիին, Լևինը հասկացավ, որ նա գովում էր հարսին։ Նա մոտ կանչեց նաև Կատյային, ինչպես անվանում էր նրան։

— Ես այժմ ինձ շատ ավելի լավ եմ զգում,— ասաց նա։— Ա՜յ, ձեզ հետ ես վաղուց առողջացած կլինեի։ Ի՜նչ լավ է։ Նա վերցրեց Կիտիի ձեռքը և մոտեցրեց այն իր շրթունքներին, բայց, կարծես վախենալով, որ դա անախորժ կլինի նրա համար, մտադրությունը փոխեց, ձեռքը բաց թողեց և միայն շոյեց այն։ Կիտին վերցրեց նրա ձեռքը և երկու ձեռքով ամուր սեղմեց։

— Այժմ պառկեցրեք ինձ ձախ կողքի վրա և գնացեք քնելու,— ասաց նա։

Ոչ ոք չլսեց այն, ինչ ասաց նա, Կի՛տին միայն հասկացավ։ Նա հասկանում էր, որովհետև մտքով անդադար հետևում էր, թե ի՞նչ է պետք հիվանդին։

— Մյուս կողքի վրա,— ասաց Կիտին ամուսնուն,— նա միշտ քնում է այն կողքի վրա։ Շուռ տուր, պառկեցրու նրան, անախորժ է սպասավորներին կանչելը։ Ես չեմ կարող։ Իսկ դուք չե՞ք կարող,— դիմեց նա Մարիա Նիկոլայևնային։

— Ես վախենում եմ,— պատասխանեց Մարիա Նիկոլայևնան։

Որքան էլ սարսափելի էր Լևինի համար զրկել իր ձեռներով այդ սոսկալի մարմինը, բռնել վերմակի տակ այն տեղերը, որոնց մասին նա չէր ուզում իմանալ, բայց ենթարկվելով կնոջ ազդեցությանը, Լևինն իր դեմքին տվեց վճռական արտահայտություն, որ ծանոթ էր կնոջը, և ներս մտցնելով

ձեռքերը, փորձեց բարձրացնել, սակայն, չնայած իր ուժին, ապշեց այդ ուժասպառ եղած անդամների ծանրությունից։ Մինչ նա շուռ էր տալիս եղբորը, զգալով իր վիզը գրկած վիթխարի, նիհար ձեռքը, Կիտին արագ, անլսելի կերպով շուռ տվեց բարձը, թափ տվեց այն և ուղղեց հիվանդի գլուխը ու նոսր մազերը, որոնք նորից կպել էին քունքին։

Հիվանդը պահեց իր ձեռքում եղբոր ձեռքը։ Լևինն զգում էր, որ նա ուզում է ինչ-որ բան անել այդ ձեռքի հետ և քաշում է այն դեպի ինչ-որ տեղ։ Լևինն անձնատուր եղավ՝ մարելով։ Այո՛, նա այն քաշեց, մոտեցրեց բերանին ու համբուրեց։ Լևինը ցնցվեց հեկեկանքից և անկարող լինելով որևէ բառ արտասանելու, դուրս գնաց սենյակից։

XIX

«Ծածկեցիր յիմաստնոց և ի գիտնոց և հայտնեցեր տղայոց»,— մտածում էր Լևինն իր կնոջ մասին, խոսելով նրա հետ այդ երեկո։

Լևինը մտածում էր ավետարանի ասացվածի մասին ո՛չ այն պատճառով, որ իրեն համարում էր իմաստուն։ Նա իրեն իմաստուն չէր համարում, բայց չէր կարող չիմանալ, որ ինքն ավելի խելոք է, քան իր կինն ու Ագաֆյա Միխայլովնան, և չէր կարող չիմանալ այն բանը, որ երբ ինքը մտածում էր մահվան մասին, մտածում էր իր հոգու բոլոր ուժերով։ Նա գիտեր նույնպես, որ տղամարդկային շատ մեծ գլուխներ, որոնց մտքերն այդ մասին ինքը կարդացել էր, մտածում էին դրա մասին և չգիտեին մի հարյուրերորդն այն իմացության, ինչ գիտեին իր կինն ու Ագաֆյա Միխայլովնան։ Որքան էլ տարբեր էին իրարից այդ երկու կանայք, Ագաֆյա Միխայլովնան և Կատյան, ինչպես կանչում էր նրան Նիկոլայ եղբայրը, և ինչպես այժմ Լևինի համար առանձնապես հաճելի էր կանչել նրան, նրանք այդ բանում բոլորովին նման էին իրար։ Այդ երկու կանայք անպայման գիտեին, թե ի՞նչ է կյանքը, ու ի՞նչ է մահը և թեպետ նրանք ո՛չ մի կերպ չէին կարող պատասխանել ու չէին հասկանա նույնիսկ այն հարցերը, որ պատկերանում էին Լևինին, այնուամենայնիվ նրանք երկուսն էլ չէին կասկածում այդ երևույթի նշանակության վերաբերյալ

և դրան նայում էին կատարելապես միատեսակ, ո՛չ միայն իրար մեջ, այլև իրենց այդ հայացքով նմանվելով միլիոնավոր մարդկանց։ Որ նրանք հաստատ գիտեին, թե ի՛նչ է մահը, դրա ապացույցն այն էր, որ գիտեին առանց մի վայրկյան կասկածելու, թե ինչպե՛ս պետք է վարվել մեռնողների հետ ու չէին վախենում նրանցից։ Իսկ Լևինը և ուրիշները հայտնապես չգիտեին, թեպետ շատ բան կարող էին ասել մահվան մասին, որովհետև նրանք վախենում էին մահից ու վճռականապես չգիտեին, թե ինչ պետք է անել, երբ մարդիկ մեռնում են։ Եթե Լևինն այժմ մենակ լիներ Նիկոլայ եղբոր հետ, սարսափով կնայեր նրան ու ավելի մեծ սարսափով կսպասեր և ուրիշ ոչինչ չէր կարող անել։

Դեռ ավելին. նա չգիտեր, թե ի՛նչ խոսի, ինչպե՛ս նայի, ինչպե՛ս քայլի։ Խոսել կողմնակի նյութի մասին նրան թվում էր վիրավորական, չի կարելի. խոսել մահվան մասին, մոայլ բաների մասին՝ նույնպես չի կարելի։ Լռել՝ նույնպես չի կարելի։ «Նայել՝ նա կմտածի, որ ես ուսումնասիրում եմ իրեն. վախենում եմ չնայել՝ նա կմտածի, որ ես մտածում եմ ուրիշ բանի մասին։ Քայլել ոտների ծայրերով՝ նա կդժգոհի, քայլել ոտի ամբողջ թաթով՝ քաշվում եմ»։ Իսկ Կիտին երևի չէր մտածում ու ժամանակ չուներ մտածելու իր մասին. նա մտածում էր հիվանդի մասին, որովհետև գիտեր ինչ-որ բան, և ամեն ինչ լավ էր դուրս գալիս։ Նա պատմում էր և՛ իր մասին, և՛ իր ամուսնության մասին, և՛ ժպտում էր, և՛ խղճում, և՛ զուրգուրում էր նրան, և՛ խոսում առողջանալու դեպքերի մասին, ու ամեն ինչ լավ էր դուրս գալիս. հետևապես նա գիտե՛ր։ Որ Կիտիի և Ագաֆյա Միխայլովնայի գործունեությունը բնազդային, անասնական, անխոհական չէր, դրա ապացույցն այն էր, որ բացի ֆիզիկական հոգատարությունից, տառապանքները թեթևացնելուց, թե՛ Ագաֆյա Միխայլովնան, թե՛ Կիտին պահանջում էին մեռնողի համար էլի մի ուրիշ, ավելի կարևոր բան, քան ֆիզիկական հոգատարությունն էր, և այնպիսի բան, որ ընդհանուր ոչինչ չուներ ֆիզիկական պայմանների հետ։ Ագաֆյա Միխայլովնան խոսելով մեռնող ծերունու մասին, ասաց. «Ի՞նչ կա որ, փառք աստծո, հաղորդեցին, օծեցին, տա աստված, որ ամեն մարդ էդպես մեռնի։ Կատյան ևս ճիշտ այդպես, բացի սպիտակեղենի, պառկելավեր-

քերի, ըմպելիքի մասին տարած բոլոր հոգսերից, հենց առաջին օրը կարողացավ համոզել հիվանդին, թե անհրաժեշտ է հաղորդվել և օծվել։

Հիվանդի մոտից վերադառնալով իրենց երկու համարները, Լևինը նստել էր, գլուխը կախ, չիմանալով, թե ի՛նչ անի։ Ցխոսելով արդեն այն մասին, որ պետք էր ընթրել, պատրաստվել գիշերելու, պետք էր մտածել, թե ի՛նչ պիտի անեին իրենք, նա չէր կարողանում նույնիսկ խոսել կնոջ հետ. քաշվում էր։ Իսկ Կիտին, ընդհակառակը, սովորականից ավելի գործունյա էր։ Նա մինչև անգամ ավելի աշխույժ էր սովորականից։ Նա հրամայեց ընթրիք բերել, ինքը հանեց իրերը, օգնեց փռելու անկողինները և չմոռացավ նրանց վրա շաղել պարսկական փոշի։ Նրա մեջ կար կշռադատելու արագություն ու լարվածություն, որոնք տղամարդկանց մեջ հայտնվում են ճակատամարտից, պայքարից առաջ, կյանքի վտանգավոր ու վճռական րոպեներին, երբ մի անգամ ընդմիշտ տղամարդը ցույց է տալիս իր արժեքը և այն, որ իր ամբողջ անցյալը զուր չի անցել, այլ եղել է պատրաստություն այդ րոպեների համար։

Կիտիի մոտ ամբողջը գործն առաջ էր գնում հաջող, արագ, և դեռ տասներկուսը չկար, երբ բոլոր իրերն արդեն դարսված էին մաքուր, կարգին, առանձնահատուկ մի այնպիսի ձևով, որ համարը դարձավ տան նման, իր սենյակների նման. անկողինները գցված էին, խոզանակները, սանրերը, հայելիները հանված, դարսված էին, անձեռոցիկները՝ փռված։

Լևինի կարծիքով, աննկարելի բան է ուտել, քնել, խոսել նույնիսկ այժմ, և զգում էր, որ իր յուրաքանչյուր շարժումն անվայելուչ է։ Իսկ Կիտին հանում, զատում էր փոքրիկ խոզանակները, բայց այդ բոլորն անում էր այնպես, որ վիրավորական ոչինչ չկար դրա մեջ։

Սակայն նրանք չկարողացան ոչինչ ուտել ու երկար ժամանակ չէին կարողանում քնել և շատ ուշ պառկեցին քնելու։

— Ես շատ ուրախ եմ, որ համոզեցի նրան օծվել վաղը,— ասում էր Կիտին, կոֆտայով նստած իր ծալովի հայելու առաջ ու խիտ սանրով սանրելով իր նուրբ անուշտբույր մազերը։ — Ես երբեք չեմ տեսել այդ ծեսը, բայց գիտեմ, ինձ մայրիկս է ասել, որ այդտեղ կան բժշկության աղոթքներ։

— Մի՞թե դու կարծում ես, որ նա կարող է առողջանալ,— ասաց Լևինը, դիտելով կնոջ կլոր գլխի ետևի նեղ շարքը, որը շարունակ ծածկվում էր, հենց որ նա սանրում էր դեպի առաջ։

— Ես հարցրի բժշկին. նա ասաց, որ նա երեք օրից ավելի ապրել չի կարող։ Բայց մի՞թե նրանք կարող են իմանալ։ Այսուամենայնիվ ես շատ ուրախ եմ, որ համոզեցի նրան,— ասաց Կիտին, մազերի տակից շեղակի նայելով ամուսնուն։— Ամեն բան կարող է պատահել,— ավելացրեց նա այն առանձին, մի փոքր խորամանկ արտահայտությամբ, որ միշտ լինում էր նրա դեմքին, երբ խոսում էր կրոնի մասին։

Կրոնի վերաբերյալ նրանց խոսակցությունից հետո, երբ նրանք դեռ հարս ու փեսա էին, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը երբեք խոսք չէր բացում դրա մասին, բայց Կիտին շարունակում էր եկեղեցի հաճախելու իր կարգերը, աղոթքները, միշտ մի՞ատեսակ հանգիստ գիտակցությամբ, որ դա այդպես էլ պետք է։ Ջնայած Լևինի հակառակ պնդումներին, Կիտին հաստատ համոզված էր, որ իր ամուսինը նույնպիսի և դեռ ավելի քրիստոնյա է, քան ինքը, և որ այն բոլորը, ինչ ասում է նա դրա մասին, մեկն է նրա տղամարդկային ծիծաղելի արտառոց վարմունքներից, ինչպես, օրինակ՝ broderie anglaise-ի մասին նրա ասածը՝ իբր բարի մարդիկ կարկատում, ծակերը բռնում են, իսկ Կիտին դիտմամբ ծակեր է բացում և այլն։

— Այո, այդ կինն ահա, Մարիա Նիկոլաևնան, չէր կարողացել գլուխ բերել այս բոլորը,— ասաց Լևինը։— Եվ... պետք է խոստովանեմ, ես շատ, անչափ ուրախ եմ, որ դու եկար։ Դու այնպիսի մաքրություն ես, որ... — Նա վերցրեց կնոջ ձեռքը և շոմբուրեց (մահվան այդպիսի մոտիկությամբ նրա ձեռքը համբուրելը Լևինին թվաց անվայելուչ), այլ միայն սեղմեց այն, հանցավոր արտահայտությամբ նայելով կնոջ պայծառացած աչքերին։

— Քեզ համար տանջալից կլիներ, եթե մենակ լիներիր,— ասաց Կիտին ու վեր բարձրացնելով ձեռքերը, որոնք ծածկում էին բավականությունից կարմրած նրա այտերը, փաթաթեց ծամերը ծոծրակին և ամրացրեց վարսակալներով։ — Ո՛չ,— շարունակեց նա,— այդ կինը չի իմանում... Ես, բոլորախտաբար, շատ բան սովորեցի Սոդենում։

— Մի՞թե այնտեղ էլ այդպիսի հիվանդներ կային։

— Ավելի վատ։

— Ինձ համար սարսափելին այն է, որ ես չեմ կարողանում նրան չպատկերացնել այնպես, ինչպիսին նա ելքատարող ժամանակ էր... Դու չես հավատա, թե ի՞նչ հիանալի պատանի էր նա, բայց ես չէի հասկանում նրան այն ժամանակ։

— Հավատում եմ, շատ եմ հավատում։ Ինչպես զգում եմ ես, որ նրա հետ մենք կլինեինք բարեկամներ,— ասաց Կիտին ու վախեցավ իր ասածից, նայեց ամուսնուն, և արցունքներ երևացին նրա աչքերում։

— Այո՛, կլինեիր,— ասաց Լևինը թախծոտ։ — Ահա՛ իսկապես մեկն այն մարդկանցից, որոնց համար ասում են, թե այս աշխարհի համար չեն։

— Բայց մեր առաջ շատ օրեր կան, պետք է պառկել,— ասաց Կիտին, նայելով իր փոքրիկ ժամացույցին։

XX

ՄԱՀԸ

Մյուս օրը հիվանդին հաղորդեցին և օծեցին։ Սիսակատարման ժամանակ Նիկոլայ Լևինը չերմորեն աղոթում էր։ Նրա մեծ աչքերում, հառած թղթախաղի սեղանի վրա փռած գունավոր անձեռոցիկին դրած սրբապատկերին, արտահայտվում էր այնպիսի բուռն աղերս և հույս, որ Լևինը սոսկում էր նրան նայելուց։ Լևինը գիտեր, որ այդ բուռն աղերսն ու հույսը պետք է է՛լ ավելի ծանր դարձնեն նրա համար անջատումը կյանքից, որն այնպես սիրում էր նա։ Լևինը գիտեր եղբորը և նրա մտքերի ընթացքը, նա գիտեր, որ նրա չհավատացող լինելը առաջացել էր ո՛չ այն պատճառով, որ նրա համար ավելի հեշտ էր ապրել առանց հավատի, այլ այն պատճառով, որ աշխարհի երևույթների արդի գիտական բացատրությունները քայլ առ քայլ դուրս վանեցին հավատը, ուստի համոզված էր, որ այժմյան նրա դարձը օրինական չէ, կատարված միևնույն մտքի միջոցով, այլ ժամանակավոր, շահախնդրական դարձ է միայն, համակված բուժվելու խելահեղ հույսով։ Լևինը գի-

տեր նույնպես, որ Կիտին ավելի ևս ուժեղացրեց այդ հույսը՝ իր լսած անսովոր բուժումների մասին։ Այս բոլորը գիտեր Լևինը, և նրա համար ծանր էր, տանջալից՝ նայել հուսով լի այդ աղերսող հայացքին ու ձեռքի այդ նիհարած թաթին, որ դժվարությամբ բարձրանում ու խաչակնքում էր խիստ-պրկուն ճակատը, նայել այդ դուրս ցցված ուսերին և խոխռացող այդ դատարկ կրծքին, որոնք այլևս անկարող էին տեղավորելու իրենց մեջ այն կյանքը, որի մասին աղերսում էր հիվանդը։ Միսակատարման ժամանակ աղոթում էր նաև Լևինը, այն մարդը որ հավատացող չէր, և անում էր այն, ինչ հազար անգամ արել էր։ Նա ասում էր, դիմելով աստծուն. «Աբա այնպես, եթե դու գոյություն ունես, որպեսզի ապաքինվի այս մարդը (չէ՞ որ այդ միևնույն բանը կրկնվում էր շատ անգամ), և դու կփրկես նրան ու ինձ»։

Օծումից հետո հիվանդը հանկարծ իրեն զգաց շատ ավելի լավ։ Մի ժամվա ընթացքում նա ո՛չ մի անգամ չհազաց, ժրպտում էր, համբուրում էր Կիտիի ձեռքը, արտասվալից աչքերով շնորհակալություն հայտնելով նրան, և ասում էր, որ հրեն լավ է զգում, ո՛չ մի տեղը չի ցավում, որ ախորժակ ունի և ուժի զգացողություն։ Նա նույնիսկ ինքը բարձրացավ նստեց, երբ սուպ բերին նրան, ու խնդրեց էլի մի կոտլետ։ Որքան էլ անհուսալի էր նա, որքան էլ բացահայտ էր, նրա վրա նայելիս, որ նա չի կարող ապաքինվել, այսուամենայնիվ Լևինն ու Կիտին այդ ժամին գտնվում էին մի՛ևնույն երջանիկ ու երկչոտ հուզմունքի մեջ, չլինի թե սխալվեն։

— Ավելի լավ է, չէ՞։ Այո՛, անհամեմատ լավ։ — Զարմանալի է։ — Զարմանալի ոչինչ չկա։ Համենայն դեպս ավելի լավ է,— ասում էին նրանք շշուկով, ժպտալով իրար։

Այդ պատրանքը տևական չէր։ Հիվանդը հանգիստ քնեց, բայց կես ժամից հաղը արթնացրեց նրան։ Եվ հանկարծ չքացան բոլոր հույսերը թե՛ նրան շրջապատողների, թե՛ հենց նրա։ Տառապանքի իրողությունը, առանց կասկածի, նույնիսկ առանց հիշողությունների, կապված առաջվա հույսերի հետ, խորտակեց այդ հույսերը Լևինի, Կիտիի և իր՝ հիվանդի մեջ։

Չհիշելով անգամ նրա մասին, ինչին նա հավատում էր կես ժամ առաջ, կարծես ճնշվում էր այդ հիշելուց իսկ, նա պահանջեց, որպեսզի իրեն տան շնչելու այն յողը սրվակի

մեջ, որ ծածկված էր ծակոտկեն թղթով։ Լևինը տվեց նրան բանկան, և նույն այն հայացքը բուռն հույսի, որ ուներ նա օծվելիս, բևեռվեց այժմ եղբոր վրա, պահանջելով նրանից բժշկի խոսքերի հաստատումն այն մասին, որ յոդ ներշնչելը հրաշքներ է գործում։

— Կիտին այստեղ չէ, հա՞,— խոխռաց նա, նայելով շուրջը, երբ Լևինը դժկամությամբ հաստատեց բժշկի խոսքերը։ — Այստեղ չէ, ուրեմն կարելի է ասել... նրա՛ համար ես կատարեցի այդ կոմեդիան, որովհետև նա այնպես հոգատար է, բայց ես ու դու արդեն չենք կարող խաբել մեզ։ Ահա՛, սրան ես հավատում եմ,— ասաց նա և սրվակը սեղմելով ոսկրացած ձեռքով, սկսեց շնչել նրանից։

Երեկոյան ութերորդ ժամին Լևինը կնոջ հետ թեյ էր խմում իր համարում, երբ Մարիա Նիկոլաևնան հնալով՝ վազեց եկավ նրանց մոտ։ Նա գունատ էր, և նրա շրթունքները դողում էին։

— Մեռնո՞ւմ է,— շշնջաց նա։ — Ես վախենում եմ, հիմա կմեռնի։

Երկուսն էլ վազեցին հիվանդի մոտ։ Նա բարձրացել, նստել էր մահճակալին, հենվելով թևին, իր երկար մեջքը կորացրած ու գլուխը խիստ կախ գցած։

— Ի՞նչ ես զգում դու,— շշուկով հարցրեց Լևինը լռությունից հետո։

— Զգում եմ, որ գնում եմ,— դժվարությամբ, բայց զարմանալի որոշակիությամբ ասաց Նիկոլայը, դանդաղ քամելով, դուրս հանելով իր միջից խոսքերը։ Նա գլուխը չէր բարձրացնում, այլ միայն աչքերն ուղղում էր դեպի վեր, առանց հասնելու նրանցով եղբոր դեմքին։ — Կատյա դուրս գնա,— ասաց նա էլի։

Լևինը թռավ տեղից ու հրամայական շշուկով ստիպեց նրան դուրս գնալ։

— Գնում եմ,— ասաց նա նորից։

— Ինչու՞ ես կարծում,— ասաց Լևինը, մի բան ասած լինելու համար։

— Որովհետև գնում եմ,— կարծես սիրելով այդ արտահայտությունը, կրկնեց նա։ — Վե՛րջ։

Մարիա Նիկոլաևնան մոտեցավ նրան։

— Պառկեք, հիմա ավելի լավ եք,— ասաց նա։

— Շուտով կպակեմ մեռած,— կամաց թոթովեց հիվանդը, և դա նա ասաց հեգնանքով, բարկացած։ — Դե՛, պառկեցրեք, եթե ուզում եք։

Լևինը եղբորը պառկեցրեց մեջքի վրա, նստեց նրա մոտ և առանց շնչելու նայում էր նրա դեմքին։ Մեռնողը պառկած էր աչքերը փակած, բայց նրա ճակատին երբեմն շարժվում էին մկանները, ինչպես այն մարդու, որ խորասուզված ու լարված մտածում է։ Լևինն ակամա մտածում էր նրա հետ այն բանի մասին, թե ի՛նչ է կատարվում այժմ նրա մեջ, բայց չնայած իր բոլոր ջանքերին՝ մտքով գնալ նրա հետ միասին, նա տեսնում էր այդ հանգիստ, խիստ դեմքի արտահայտությունից և հոնքի վրայի մկանի խաղից, որ մեռնողի համար պարզվում ու պարզվում է այն, ինչը էլի և էլի մութ է մնում Լևինի համար։

— Այո՛, այո՛, այդպե՛ս, այդպե՛ս,— ընդմիջումով, դանդաղ ասաց մեռնողը։— Կացե՛ք, կացե՛ք,— նա նորից լռեց։— Այդպե՛ս,— հանկարծ հանգստացուցիչ տոնով ձգեց նա, կարծես ամեն բան լուծվեց նրա համար։ — Օ՜, աստված իմ,— ասաց նա և ծանր հառաչեց։

Մարիա Նիկոլաևնան շոշափեց նրա ոտները։ — Սառում են,— շշնջաց նա։

Երկար, շատ երկար, ինչպես թվում էր Լևինին, հիվանդը պառկած էր անշարժ։ Բայց նա դեռ ողջ էր ու երբեմն հառաչում էր։ Լևինն արդեն հոգնել էր մտքի լարվածությունից։ Նա զգում էր, որ, չնայած, իր մտքի ամբողջ լարվածությանը, ինքը չի կարողանում հասկանալ այն, թե ինչն էր այդպես։ Նա զգում էր, որ ինքը վաղուց արդեն ետ է մնացել մեռնողից։ Նա արդեն անկարող էր մտածել մահվան հարցի մասին, բայց ակամա նրա մտքով անցնում էր, թե ի՛նչ պիտի անի ինքը հիմա, այժմ, աչքերը փակել, հագցնել, դագաղ պատվիրել։ Եվ տարօրինակ բան. նա զգում էր իրեն բոլորովին անտարբեր, սառը և չուներ ո՛չ վշտի, ո՛չ կորստի, ո՛չ էլ խղճահարության զգացում դեպի եղբայրը։ Եթե նա այժմ դեպի եղբայրը տածում էր մի զգացում, ապա ավելի շուտ նախանձ այն իմացության համար, որ ունի այժմ մեռնողը, բայց որը չի կարող ունենալ ինքը։

Նա դեռ երկար նստած էր նրա մոտ, շարունակ սպասելով

վախճանին։ Բայց վախճանը չէր գալիս։ Դուռը բացվեց, ու երևաց Կիտին։ Լևինը վեր կացավ, որ կանգնեցնի կնոջը։ Բայց այն միջոցին, մինչ նա վեր էր կենում, լսեց մեռնողի շարժումը։

— Մի՛ գնա,— ասաց Նիկոլայը և մեկնեց ձեռքը։ Լևինը տվեց նրան իր դաստակը ու բարկացած՝ ձեռքով արավ կնոջը, որ դուրս գնա։

Մեռածի ձեռքն իր ձեռքի մեջ նա նստել էր կես ժամ, մի ժամ, էլի մի ժամ։ Նա այժմ արդեն բնավ չէր մտածում մահվան մասին։ Նա մտածում էր այն մասին, թե ի՛նչ է անում Կիտին, ո՛վ է ապրում հարևան համարում, արդյոք բժշկի տունը սեփակա՞ն է։ Նա ուզում էր ուտել և քնել։ Նա զգույշ ազատեց ձեռքը և շոշափեց ոտները։ Ոտները սառն էին, բայց հիվանդը շնչում էր։ Լևինն ուզում էր ոտների մատների ծայրով նորից դուրս գնալ, սակայն հիվանդը նորից շարժվեց և ասաց. «մի՛ գնա»։

. . . . . .

Լուսացավ. հիվանդի դրությունը նույնն էր։ Լևինը կամացուկ ազատեց ձեռքը, առանց նայելու մեռնողին, գնաց իր համարը և քնեց։ Երբ նա արթնացավ, փոխանակ եղբոր մահվան լուրի, որին սպասում էր նա, իմացավ, որ հիվանդը նորից առաջվա կացության մեջ է։ Նա նորից սկսեց նստել, հագալ, նորից սկսեց ուտել, սկսեց խոսել ու նորից դադարեց մահվան մասին խոսելուց, նորից սկսեց հուսալ առողջանալու մասին և դարձավ ավելի դյուրագրգիռ ու մռայլ, քան առաջ։ Ոչ ոք, ո՛չ եղբայրը, ո՛չ Կիտին չէին կարողանում հանգստացնել նրան։ Նա բարկանում էր ամենքի վրա և ամենքին ասում տհաճություններ, ամենքին հանդիմանում էր իր տառապանքների համար ու պահանջում էր, որ Մոսկվայից բերեն հոչակավոր բժշկին։ Բոլոր այն հարցերին, որ տալիս էին նրան, թե ինչպե՞ս է զգում իրեն, նա պատասխանում էր միակերպ դայրույթի և կշտամբանքի արտահայտությամբ.

— Տանջվում եմ սոսկալի, անտանելի։

Հիվանդը տանջվում էր ավելի ու ավելի, մանավանդ պառկելավերքերից, որ այլևս չէր կարելի բժշկել, և ավելի ու ավելի էր բարկանում շրջապատողների վրա, կշտամբելով նրանց ամեն բանի, առանձնապես այն բանի համար, որ բժշկ չէին

բերում Մոսկվայից։ Կիտին ամեն կերպ աշխատում էր օգնել, հանգստացնել նրան. բայց ամեն ինչ զուր էր, և Լևինը տեսնում էր, որ ինքը՝ Կիտին, ուժասպառ էր եղել թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես, թեև չէր խոստովանում դա։ Խորտակվեց մահվան այն զգացումը, որն առաջացել էր ամենքի մեջ կյանքին հրաժեշտ տալիս՝ այն գիշեր, երբ նա կանչեց եղբորը։ Ամենքը գիտեին, որ նա անխուսափելիորեն և շուտով կմեռնի, որ նա կիսով չափ արդեն մեռած է։ Ամենքն էլ մի բան էին միայն ցանկանում, որպեսզի նա մեռներ, ըստ կարելույն շուտ, և ամենքը, ծածկելով այդ, դեղ էին տալիս նրան սրվակներից, փնտրում էին դեղեր, բժիշկներ և խաբում էին թե՛ նրան, թե՛ իրենց, թե՛ իրար։ Այդ բոլորը կեղծիք էր, վիրավորական, զարշելի ու սրբապիղծ սուտ։ Եվ այդ սուտն առանձնապես տանջալից զգում էր Լևինը՝ թե՛ իր բնավորության հատկությամբ, թե՛ այն պատճառով, որ նա ամենքից ավելի էր սիրում մեռնողին։

Լևինը, որին վաղուց ի վեր զբաղեցնում էր այն միտքը, որ հաշտեցնի իր եղբայրներին գեթ մահից առաջ, նամակ էր գրել եղբորը՝ Սերգեյ Իվանովիչին և պատասխան ստանալով նրանից, կարդաց այդ նամակը հիվանդին։ Սերգեյ Իվանովիչը գրում էր, որ ինքը չի կարող գալ, բայց սրտառուչ արտահայտություններով ներողություն էր խնդրում եղբորից։

Հիվանդը ոչինչ չասաց։

— Ի՞նչ գրեմ նրան,— հարցրեց Լևինը։ — Հուսամ, դու չես բարկանում նրա վրա։

— Ո՛չ, բնավ,— պատասխանեց Նիկոլայը, սրտնեղված այդ հարցից։ — Գրի՛ր նրան, որ բժիշկ ուղարկի ինձ։

Անցավ տանջալից էլի երեք օր. հիվանդը դարձյալ միևնույն վիճակում էր։ Նրա մահը ցանկանալու զգացումն ունեին ամենքը, ովքեր տեսել էին նրան. և՛ հյուրանոցի սպասավորները, և՛ նրա տերը, և՛ բոլոր կենվորները, և՛ բժիշկը, և՛ Մարիա Նիկոլաևնան, և՛ Լևինը, և՛ Կիտին։ Հիվանդն էր միայն, որ չէր արտահայտում այդ զգացումը, այլ, ընդհակառակը, բարկանում էր, որ չբերեցին բժշկին, և շարունակում էր դեղեր ընդունել ու խոսում էր կյանքի մասին։ Հազվադեպ րոպեներին միայն, երբ ափիոնն ստիպում էր նրան մի վայրկյան մոռանալ իր անդադրուն տառապանքները, նա կիսաքուն երբեմն

ասում էր այն, ինչ ավելի ուժեղ էր նրա հոգում, քան մյուս բոլորի. «ա՜խ, գեթ վերջը գար» կամ՝ «ե՞րբ այս ամենը կվերջանա»։

Տանջանքները համաչափորեն մեծանալով, անում էին իրենց գործը և պատրաստում էին նրան մահվան համար։ Չկար մի դիրք, դրություն, որի մեջ նա չտանջվեր, չկար մի րոպե, երբ նա ընդարմանար, չկար նրա մարմնի վրա ո՛չ մի տեղ, ո՛չ մի անդամ, որ չցավեր, չտանջեր նրան։ Այդ մարմնի հիշողությունները, տպավորությունները, մտքերն անգամ՝ հարուցում էին արդեն նրա մեջ այնպիսի զզվանք, ինչպես և ինքը՝ մարմինը։ Ուրիշ մարդկանց տեսքը, նրանց ասածը, իր սեփական հիշողությունները՝ այս բոլորը նրա համար տանջալից էին։ Շրջապատողներն զգում էին այդ և անգիտակցաբար թույլ չէին տալիս իրենց՝ նրա ներկայությամբ՝ ո՛չ որևէ ազատ շարժում, ո՛չ խոսակցություն, ո՛չ էլ իրենց ցանկությունների արտահայտումն։ Ամբողջ կյանքը միանում, կազմում էր տառապանքի և ցանկության մի զգացում՝ ազատվել նրանից։

Նրա մեջ հայտնապես կատարվում էր այն հեղաշրջումը, որ պետք է ստիպեր նրան նայել մահվան վրա, որպես իր ցանկությունների բավարարման, որպես երջանկության վրա։ Առաջ ամեն առանձին ցանկություն, առաջացած տանջանքից կամ զրկանքից, ինչպես քաղցը, հոգնածությունը, ծարավը՝ բավարարվում էին մարմնի գործունեությամբ, որ տալիս էր վայելք, բայց այժմ զրկանքն ու տառապանքը բավարարում չէր ստանում, իսկ բավարարման փորձը պատճառում էր նոր տանջանք։ Այդ իսկ պատճառով, բոլոր ցանկությունները միանում, կազմում էին մի ցանկություն՝ ազատվել բոլոր տանջանքներից ու նրանց աղբյուրից՝ մարմնից։ Բայց ազատման այդ ցանկությունն արտահայտելու համար նա բառեր չուներ, ուստի չէր խոսում դրա մասին, այլ, ըստ սովորության, պահանջում էր այն ցանկությունների բավարարումը, որոնք այլևս չէին կարող բավարարվել։— Շուտ տվեք ինձ մյուս կողքիս,— ասում էր նա և հետո անմիջապես պահանջում էր, որ նրան պառկեցնեին առաջվա պես։— Տվեք մսաջուր։ Դուրս տարեք մսաջուրը։ Մի բան ասեք, ի՞նչ եք լռել։ Եվ հենց որ սկսում էին խոսել, նա փակում էր աչքերը և ար-

տահայտում էր հոգնածություն, անտարբերություն ու զրկվանք։

Քաղաք գալու տասներորդ օրը Կիտին հիվանդացավ։ Նրա գլուխը ցավեց, սիրտը խառնեց, և նա ամբողջ առավոտ չկարողացավ վեր կենալ անկողնից։

Բժիշկը բացատրեց, որ հիվանդությունն առաջացել է հոգնածությունից, հուզմունքից, և հանձնարարեց նրան հոգեկան հանգիստ։

Սակայն, ճաշից հետո Կիտին վեր կացավ ու գնաց, ինչպես միշտ, իր ձեռագործի հետ՝ հիվանդի մոտ։ Վերջինս խիստ հայացքով նայեց նրան, երբ նա ներս մտավ, և արհամարհալից ժպտաց, երբ նա ասաց, որ հիվանդ էր։ Այդ օրը նա շարունակ խնչում էր ու սրտաճմլիկ հառաչում։

— Ինչպե՞ս եք զգում ձեզ,— հարցրեց Կիտին նրան։

— Ավելի վատ,— դժվարությամբ պատասխանեց նա։— Ցավում է։

— Ո՞ր տեղն է ցավում։

— Բոլոր տեղերը։

— Այսօր կվերջանա, կտեսնեք,— ասաց Մարիա Նիկոլաևնան թեպետև շշուկով, բայց այնպես, որ հիվանդը, շատ նրբազգաց, ինչպես նկատում էր Լևինը, պետք է լսած լիներ։ Լևինը թշշաց Մարիա Նիկոլաևնայի վրա և նայեց հիվանդին։ Նիկոլայը լսեց. բայց այդ խոսքերը ո՛չ մի տպավորություն չթողին նրա վրա։ Նրա հայացքը նույնն էր՝ կշտամբալից ու լարված։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում,— հարցրեց Լևինը Մարիա Նիկոլաևնային, երբ նա Լևինի ետևից դուրս եկավ միջանցք։

— Սկսել է պլոկել իրեն,— ասաց Մարիա Նիկոլաևնան։

— Ինչպե՞ս թե պլոկել։

— Ա՜յ, այսպես,— ասաց նա, քաշքշելով իր բրդե զգեստի ծալքերը։ Իրոք Լևինը նկատեց, որ այդ ամբողջ օրը հիվանդը բռնում և ուզում էր պոկել իր վրայից ինչ-որ բան։

Մարիա Նիկոլաևնայի զուշակությունը ճիշտ էր։ Դիշերվա դեմ հիվանդն այլևս անկարող էր բարձրացնելու ձեռքերը և նայում էր միայն իր դիմացը, չփոխելով հայացքի ուշադիր կենտրոնացած արտահայտությունը։ Նույնիսկ երբ եղբայրը կամ Կիտին կռանում էին դեպի նա այնպես, որպեսզի նա

կարողանար տեսնել նրանց, նա նայում էր նույն հայացքով։ Կիտին ուղարկեց քահանայի ետևից, որպեսզի նա կարդա մահատար աղոթքը։

Մինչ քահանան կարդում էր մահատարը, մեռնողը ցույց չէր տալիս կյանքի ո՛չ մի նշան. նրա աչքերը փակ էին։ Լևինը, Կիտին ու Մարիա Նիկոլաևնան կանգնած էին մահճի մոտ։ Քահանան դեռ չէր վերջացրել աղոթքը, երբ մեռնողը ձգվեց, հառաչեց ու բացեց աչքերը։ Քահանան վերջացնելով աղոթքը, դրեց նրա պաղ ճակատին խաչը, ապա դանդաղ փաթաթեց փորուարի մեջ այն և էլի մոտ երկու րոպե կանգնելուց հետո, շոշափեց սառած, անարյուն հսկայական ձեռքը։

— Վերջացավ,— ասաց քահանան և ուզում էր հեռանալ, բայց մեռածի իրար կպած բեղերը հանկարծ շարժվեցին, և լռության մեջ պարզ լսվեցին կրծքի խորքից հատորոշ-խիստ հնչյուններ.

— Ո՛չ բոլորովին... Շուտով։

Եվ մի րոպեից դեմքը պայծառացավ, բեղերի տակ երևաց ժպիտ, ու հավաքված կանայք մտահոգությամբ սկսեցին հարդարել հանգուցյալին։

Եղբոր տեսքը և մահվան մոտիկությունը նորոգեցին Լևինի հոգում սոսկումի այն զգացումը մահվան անմեկնելիության ու դրա հետ միասին մոտիկության և անխուսափելիության հանդեպ, որը համակեց նրան աշնանային այն երեկո, երբ նրա մոտ հյուր եկավ եղբայրը։ Այդ զգացումն այժմ է՛լ ավելի ուժեղ էր, քան առաջ. ավելի պակաս, քան առաջ, նա շրեն ընդունակ էր համարում հասկանալու մահվան իմաստը, և է՛լ առավել սարսափելի կերպով էր պատկերանում նրան մահվան անխուսափելիությունը։ Բայց այժմ, շնորհիվ կնոջ մոտիկության, այդ զգացումը չէր հուսահատեցնում նրան. չնայած մահվանը, նա զգում էր ապրելու և սիրվելու անհրաժեշտություն։ Նա զգում էր, որ սերը փրկեց իրեն հուսահատությունից և որ այդ սերը հուսահատության սպառնալիքի տակ դառնում էր ավելի ևս ուժեղ ու մաքուր։

Նրա աչքի առաջ նախքան կլուծվեր մահվան մի գաղտնիքը, որ մնացել էր անմեկնելի, ծագեց մի ուրիշը, նույնքան անմեկնելի, որը կանչում էր դեպի սեր և դեպի կյանք։

Բժիշկը հաստատեց իր ենթադրությունները Կիտիի վերաբերյալ։ Նրա տկարությունը հղիությունն էր։

XXI

Այն րոպեից, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հասկացավ Բետսիի և Ստեպան Արկադևիչի հետ ունեցած բացատրություններից, թե իրենից պահանջվում էր միայն հանգիստ թողնել իր կնոջը, նեղություն չպատճառելով նրան իր ներկայությամբ, և որ իր կինն էլ այդ էր ցանկանում, նա իրեն կորցրած զգաց այն աստիճան, որ ինքը չէր կարող ոչինչ վճռել, չգիտեր, թե ի՞նչ է ուզում ինքն այժմ և հանձնվելով այն մարդկանց, որոնք այդպիսի բավականությամբ զբաղվում էին իր գործերով, բոլոր հարցերին պատասխանում էր համաձայնությամբ։ Միայն այն ժամանակ, երբ Աննան արդեն հեռացավ նրա տանից, և անգլուհին մարդ ուղարկեց հարցնելու նրան, արդյոք ինքը պետք է ճաշի նրա՞ հետ, թե՞ առանձին, նա առաջին անգամ պարզ հասկացավ իր վիճակը ու սարսափեց նրանից։

Այդ վիճակում ամենադժվարն այն էր, որ նա ո՛չ մի կերպ չէր կարողանում միացնել ու հաշտեցնել իր անցյալը ներկայի հետ։ Նրան շփոթեցնում էր ո՛չ այն անցյալը, երբ ինքն երջանիկ ապրում էր կնոջ հետ։ Նա տանջալից ապրել էր արդեն անցման մի շրջան, որն ընկնում էր այդ անցյալի և կնոջ անհավատարմության մասին իմանալու օրվա միջև, այդ կացությունը ծանր էր, բայց նրա համար հասկանալի։ Եթե կինը հենց այն ժամանակ, հայտարարելով իր անհավատարմության մասին, հեռանար նրանից, նա կվշտանար, իրեն դժբախտ կզգար, բայց չէր լինի իր համար անելանելի, անհասկանալի այն դրության մեջ, որպիսի վիճակում նա զգում էր իրեն այժմ։ Այժմ նա ո՛չ մի կերպ չէր կարողանում հաշտեցնել իր մոտիկ անցյալը, իր գորովը, իր սերը դեպի հիվանդ կինը և ուրիշի երեխան, հաշտեցնել այն բանի հետ, ինչ կար այժմ, այսինքն՝ կարծես ի վարձատրություն այն բոլորի նա այժմ մնաց մենակ, խայտառակված, ծանակված, ո՛չ ոքի համար չպետքական և ամենքից արհամարհված։

Կնոջ հեռանալուց հետո առաջին երկու օրը Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ընդունում էր խնդրարկուներին, գործերի կառավարչին, գնում էր կոմիտե և դուրս էր գալիս ճաշելու սեզոնատուն, ինչպես սովորաբար։ Առանց հաշիվ տալու իրեն, թե ինչի՛ համար է անում այդ, նա այդ երկու օրը լարում էր հոգու բոլոր ուժերը, որպեսզի ունենա հանգիստ ու նույնիսկ անտարբեր տեսք։ Պատասխանելով այն հարցերին, թե ինչպե՞ս տնօրինել Աննա Արկադևնայի իրերն ու սենյակները, նա մեծագույն ջանք էր գործ դնում իր վրա, որպեսզի ունենա այնպիսի մարդու տեսք, որի համար չնախատեսված չէր կատարված դեպքը և չի պարունակում իր մեջ սովորական դեպքերից տարբերվող ոչինչ, ու նա հասնում էր իր նպատակին. ոչ ոք չէր կարող նկատել նրա մեջ հուսահատության հատկանիշներ։ Բայց կնոջ հեռանալու երկրորդ օրը, երբ Կոռնեյը տվեց նրան մոդայի խանութից մի հաշիվ, որն Աննան մոռացել էր վճարել, և զեկուցեց, թե ինքը՝ գործակատարն այստեղ է, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հրամայեց կանչել նրան։

— Ներեցեք, ձերդ գերազանցություն, որ համարձակվում եմ անհանգստացնել ձեզ։ Բայց եթե կհրամայեք դիմել նորին գերազանցությանը, արդյոք չէի՞ք բարեհաճի հաղորդել նրա հասցեն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտասուզվեց, ինչպես թվաց գործակատարին, և հանկարծ շուռ գալով, նստեց սեղանի մոտ։ Գլուխը կախ գցած ձեռքերի վրա, նա երկար նստած էր այդ դրությամբ, մի քանի անգամ փորձեց խոսել ու կանգ էր առնում։

Հասկանալով իր պարտքի դրությունը, Կոռնեյը խնդրեց գործակատարին՝ գալ մի ուրիշ անգամ։ Մնալով նորից մենակ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հասկացավ, որ ինքն այլևս անկարող է դիմանալու կայունության ու հանգիստ երևալու դերին։ Նա հրամայեց արձակել իրեն սպասող կառքը, հրամայեց ոչ ոքի չընդունել և դուրս չեկավ ճաշելու։

Նա զգաց, որ ինքը չի կարող դիմանալ արհամարհանքի և կատաղության ընդհանուր այն ճնշումին, որ պարզ տեսնում էր թե՛ այդ գործակատարի դեմքին, թե՛ Կոռնեյի և, առանց բացառության, ամենքի դեմքին, ում նա պատահում էր այդ երկու օրվա ընթացքում։ Նա զգում էր, որ չի կարող վանել իրենից մարդկանց ատելությունը, որովհետև այդ ատելությունն առաջանում է ո՛չ թե նրանից, որ ինքը վատն էր (այդ

դեպքում նա կաշխատեր լիներ ավելի լավ), այլ այն բանից, որ ինքն ամոթալի և զզվելի կերպով դժբախտ էր։ Նա գիտեր, որ դրա համար, հենց այն բանի համար, որ իր սիրտը կեղծված է, նրանք անողորմ կլինեն իր հանդեպ։ Նա զգում էր, որ մարդիկ կոչնչացնեն իրեն, ինչպես շները խեղդում են տանջված, ցավից վնգստացող շանը։ Նա գիտեր, որ մարդկանցից միակ փրկությունը՝ իր վերքերը նրանցից ծածկելն էր, և նա անգիտակցաբար փորձում էր այդ անել երկու օր, բայց այժմ արդեն իրեն անզոր էր զգում շարունակելու այդ անհավասար պայքարը։

Նրա հուսահատությունն է՛լ ավելի ուժեղանում էր այն գիտակցությամբ, որ ինքը բոլորովին մենակ է իր վշտի հետ։ Ո՛չ միայն Պետերբուրգում նա չուներ ո՛չ մի մարդ, որին կարողանար ասել այն բոլորը, ինչ զգում էր ինքը, որպեսզի խղճար նրան ո՛չ որպես բարձրաստիճան չինովնիկի, ոչ որպես հասարակության անդամի, այլ ուղղակի որպես տանջվող մարդու, այլև ո՛չ մի տեղ նա չուներ այդպիսի մարդ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը որբ էր մեծացել։ Նրանք երկու եղբայր էին։ Նրանք չէին հիշում իրենց հորը, նրանց մայրը մեռավ, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տասը տարեկան էր։ Նրանց կարողությունը փոքր էր։ Նրանց դաստիարակեց իրենց հորեղբայր Կարենինը, նշանավոր չինովնիկ և հանգուցյալ թագավորի երբեմնի սիրելին։

Գիմնազիայում ու համալսարանում դասընթացները ավարտելով մեդալներով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հորեղբոր օգնությամբ անմիջապես կանգնեց ծառայական նշանավոր ուղու վրա, և այն օրից բացառապես անձնատուր եղավ պաշտոնական փառասիրության։ Ո՛չ գիմնազիայում, ո՛չ համալսարանում, ո՛չ էլ հետո՝ պաշտոնի մեջ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բարեկամական հարաբերություններ չէր հաստատում ոչ ոքի հետ։ Եղբայրն իր սրտով նրա ամենամոտիկ մարդն էր, բայց նա ծառայում էր արտաքին գործերի մինիստրության գծով, միշտ ապրում էր արտասահմանում, որտեղ էլ մեռավ շուտով՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ամուսնությունից հետո։

Նրա նահանգապետ եղած ժամանակ Աննայի հորաքույրը, նահանգական հարուստ մի տիկին, ծանոթացրեց իր եղբոր աղջկան թեպետ արդեն ո՛չ ցահել մարդու, բայց ցահել նահանգապետի հետ և վերջինիս դրեց այնպիսի վիճակի մեջ, որ նա ստիպված էր կամ արտահայտվել, կամ հեռանալ քաղաքից։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երկար տատանվում էր։ Այն ժամանակ ինչքան փաստարկներ կային հօգուտ այդ քայլի, նույնքան էլ ընդդեմ, և չկար վճռական այն առիթը, որն ստիպեր նրան՝ դավաճանելու իր սովորույթ-կանոնին՝ ձեռնպահ մնալ կասկածի մեջ. բայց Աննայի հորաքույրը ներշնչեց նրան ծանոթի միջոցով, որ նա արդեն վարկաբեկել է աղջկան և որ պատվազգացությունը պարտավորեցնում է նրան առաջարկություն անել։ Նա առաջարկություն արեց և տվեց իր հարսնացուին ու կնոջը ամբողջ այն զգացմունքը, որին ընդունակ էր ինքը։

Այն մտերմությունը, որ նա տածում էր դեպի Աննան, հանեց նրա հոգուց մարդկանց հետ սրտագին հարաբերությունների վերջին մնացորդները։ Եվ այժմ իր բոլոր ծանոթներից նա չուներ ո՛չ մի մոտիկ մարդ։ Շատ էր այն, որ կոչվում է կապեր. բայց ընկերական հարաբերություններ չկային։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ուներ բազմաթիվ այնպիսի մարդիկ, որոնց նա կարող էր կանչել իր մոտ ճաշի, խնդրել նրանց՝ մասնակցել իրեն հետաքրքրող այս կամ այն գործին, պրոտեկցիա կազմել որևէ խնդրարկուի համար, որոնց հետ նա կարող էր անկեղծաբար քննարկել ուրիշ անձանց և բարձրագույն կառավարության գործողությունները։ Բայց այդ մարդկանց հետ հարաբերությունները սովորույթով ու սովորությամբ մտցված էին հաստատապես որոշակի մի ոլորտի մեջ, որից անհնարին էր դուրս գալ։ Կար համալսարանական մի ընկեր, որին նա մոտիկացավ հետո և որի հետ նա կարող էր խոսել անձնական վշտի մասին. սակայն այդ ընկերը ուսումնական մասի հոգաբարձու էր հեռավոր շրջանում։ Իսկ Պետերբուրգում եղած մարդկանցից ամենից ավելի մոտ ու մատչելի էին գրասենյակի կառավարիչը և բժիշկը։

Միխայիլ Վասիլևիչ Սլյուդինը, գործերի կառավարիչը, պարզ, խելոք, բարի ու բարոյական մարդ էր, և նրա կողմից Ալեքսեյ Ալեքսանդրովիչն զգում էր անձնական լավ հակում իր հանդեպ. բայց նրանց հնգամյա պաշտոնական գործունեությունը նրանց միջև դրել էր արգելակ հոգեկան բացատրությունների համար։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գրությունները ստորագրելուց, վերջացնելուց հետո երկար ժամանակ լուռ էր, նայելով Միխայիլ Վասիլևիչին. նա մի քանի անգամ փորձեց, բայց չկարողացավ խոսել։ Նա արդեն պատրաստել էր ֆրազը՝ «դուք լսե՞լ եք իմ դժբախտության մասին», բայց վերջացրեց նրանով, որ ասաց, ինչպես ասում էր սովորաբար.— ուրեմն դա պատրաստեք ինձ համար,— և դրանով էլ բաց թողեց նրան։

Մյուս մարդը բժիշկն էր, որը նույնպես լավ էր տրամադրված նրա հանդեպ. բայց նրանց միջև վաղուց ի վեր լուռ համաձայնությամբ ընդունված էր, որ երկուսն էլ ծանրաբեռնված են գործերով և երկուսն էլ պետք է շտապեն։

Իր բարեկամուհիների և նրանցից ամենաառաջինի՝ կոմսուհի Լիդիա Իվանովնայի մասին Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր մտածում։ Բոլոր կանայք, սոսկ որպես կանայք, սարսափելի ու զզվելի էին նրա համար։

XXII

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մոռացել էր կոմսուհի Լիդիա Իվանովնայի մասին, բայց կոմսուհին չէր մոռացել նրան։ Մենավոր հուսահատության այդ ամենածանր րոպեին Լիդիա Իվանովնան եկավ նրա մոտ և առանց զեկուցման մտավ նրա առանձնասենյակը։ Կոմսուհին նրան գտավ այն դիրքով, ինչ դիրքով նստած էր նա, գլուխը հենած երկու ձեռքին։

— J'ai forcé la consigne[1],— ասաց Լիդիա Իվանովնան, ներս մտնելով արագ քայլերով ու ծանր շնչելով հուզմունքից և արագ շարժումից։— Ես ամեն բան լսել եմ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, բարեկա՛մս,— շարունակեց կոմսուհին, իր երկու ձեռքով ամուր սեղմելով նրա ձեռքը և նայելով նրա աչքերին իր գեղեցիկ մտածկոտ աչքերով։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր կացավ մոայլված և ազատելով իր ձեռքը, աթոռը մոտեցրեց նրան։

— Խնդրեմ, շնորհ արեք, կոմսուհի։ Ես չեմ ընդունում, որովհետև հիվանդ եմ,— ասաց նա, և նրա շրթունքները դողացին։

— Բարեկամս,— կրկնեց կոմսուհի Լիդիա Իվանովնան,

[1] Ես չրշանցեցի արգելանքը։

աչք չհեռացնելով նրանից, և հանկարծ կոմսուհու հոնքերը բարձրացան ներքի կողմից, կազմելով ճակատին եռանկյունի. նրա տգեղ դեղին դեմքը դարձավ է՛լ ավելի տգեղ։ Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն զգաց, որ կոմսուհին խղճում է իրեն ու պատրաստ է արտասվելու։ Եվ նա համակվեց զորովանքով, նա բռնեց Լիդիա Իվանովնայի փամփլիկ ձեռքը և սկսեց համբուրել այն։

— Բարեկա՛մս,— ասաց կոմսուհին՝ հուզմունքից ընդհատվող ձայնով,— դուք չպիտի անձնատուր լինեք վշտի։ Ձեր վիշտը մեծ է, բայց դուք պետք է մխիթարություն գտնեք։

— Ես ջախջախված եմ, ես սպանված եմ, ես այլևս մարդ չեմ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, բաց թողնելով նրա ձեռքը և շարունակելով նայել արցունքներով լի նրա աչքերին։— Իմ վիճակը սարսափելի է նրանով, որ ես ոչ մի տեղ, իմ մեջ անգամ հենակետ չեմ գտնում։

— Դուք կգտնեք հենակետ, փնտրեցեք այն ո՛չ իմ մեջ, թեև ես խնդրում եմ ձեզ՝ հավատալ իմ բարեկամությանը,— ասաց կոմսուհին հառաչանքով։— Մեր հենակետը սերն է, այն սերը, որ ավանդել է մեզ Նա։ Նրա լուծը թեթև է,— ասաց Լիդիա Իվանովնան այն հիացական հայացքով, որն այնպես ծանոթ էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։— Նա զորավիգ կլինի ձեզ ու կօգնի ձեզ։

Չնայած որ այդ խոսքերի մեջ կար իր բարձր զգացումների հանդեպ այն զորովահույզ կացությունը, նաև վերջերս Պետերբուրգում տարածված նոր, խանդավառ միստիկական տրամադրությունը, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին թվում էր ավելորդ, բայց և այնպես նրա համար այժմ հաճելի էր լսել այդ բանը։

— Ես թույլ եմ։ Ես ոչնչացված եմ։ Ես ոչինչ չէի նախատեսում և այժմ ոչինչ չեմ հասկանում։

— Բարեկա՛մս,— կրկնեց Լիդիա Իվանովնան։

— Ո՛չ թե կորուստն այն բանի, որ չկա այժմ, ո՛չ,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Ես չեմ ափսոսում։ Բայց ես չեմ կարող չամաչել մարդկանց առաջ այն վիճակից, որի մեջ գտնվում եմ։ Գռեհատ բան է, բայց ես չեմ կարող, չեմ կարող։

— Ո՛չ թե դուք կատարեցիք ներման այն բարձր գործը,

որով հիանում եմ ես և հիանում են ամենքը, այլ Նա՛, բնակվելով ձեր սրտում,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, խանդավառված բարձրացնելով աչքերը,— այդ իսկ պատճառով, դուք չեք կարող ամաչել ձեր վարմունքից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խոժոռվեց ու ձեռքերը ծալելով, սկսեց ճռթճռթացնել մատները։

— Հարկավոր է իմանալ բոլոր մանրամասները,— ասաց նա բարակ ձայնով։— Մարդու ուժերն ունեն սահման, կոմսուհի, և ես հասել եմ իմ ուժերի սահմանին։ Հիմա ամբողջ օրը ես ստիպված էի անել կարգադրություններ, տա՛ն վերաբերյալ կարգադրություններ, որոնք բխում էին (նա շեշտեց բխում էին բառը) իմ նոր, մենավոր դրությունից։ Սպասավորներ, դաստիարակչուհի, հաշիվներ... Այս փոքրիկ կրակը վառեց, այրեց ինձ, ես անկարող էի դիմանալու։ Ճաշի ժամանակ... երեկ քիչ մնաց հեռանայի ճաշից։ Տանելու բան չէր, թե ինչպե՞ս նայում էր ինձ որդիս։ Նա ոչինչ չէր հարցնում այս բոլորի մասին, բայց նա ուզում էր հարցնել, և ես չկարողացա դիմանալ այդ հայացքին։ Նա վախենում էր ինձ նայելուց, բայց դա քիչ է...— Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ուզում էր խոսել այն հաշվի մասին, որ բերել էին նրան, սակայն նրա ձայնը դողաց, և նա կանգ առավ։ Գլխարկի, ժապավենների համար՝ կապույտ թղթի վրա գրված այդ հաշիվը նա չէր կարողանում մտաբերել առանց ինքն իրեն խղճալու զգացումի։

— Ես հասկանում եմ, բարեկա՛մս,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան։— Ես բոլորը հասկանում եմ։ Օգնություն ու մխիթարանք դուք կգտնեք ոչ թե իմ մեջ, բայց և այնպես ես եկա միայն նրա համար, որ օգնեմ ձեզ, եթե կարող եմ։ Եթե միայն ես կարողանայի ազատել ձեզ այդ բոլոր մանր նվաստացուցիչ հոգսերից։ Ես հասկանում եմ, որ պետք է կանացի խոսք, կանացի կարգադրություն։ Դուք հանձնարարո՞ւմ եք ինձ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լուռ ու երախտապարտորեն սեղմեց նրա ձեռքը։

— Մենք միասին կզբաղվենք Սերյոժայով։ Ես ուժեղ չեմ պրակտիկ գործերում։ Բայց ես ձեռնամուխ կլինեմ, ես կդառնամ ձեր տնտեսուհին։ Ինձ շնորհակալություն մի հայտնեք։ Դա անում եմ ո՛չ ես ինքս...

— Ես չեմ կարող շնորհակալություն չհայտնել։

— Բայց, բարեկամս, անձնատուր մի՛ լինեք այն զգացումին, որի մասին խոսում էիք դուք,— չպիտի ամաչել այն բանից, ինչը քրիստոնյայի բարձրագույն բարձունքն է. ով նվաստացնում է իրեն, նա կբարձրանա։ Եվ դուք չեք կարող շնորհակալություն հայտնել ինձ։ Պետք է շնորհակալություն հայտնել նրան ու նրանից խնդրել օգնություն։ Նրա մեջ միայն մենք կգտնենք հանգիստ, մխիթարություն, փրկություն և սեր,— ասաց կոմսուհին և աչքերը բարձրացնելով դեպի երկինք, սկսեց աղոթել, ինչպես հասկացավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նրա լռությունից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լսում էր նրան այժմ, և այն արտահայտությունները, որոնք առաջ նրա համար ոչ թե անախորժ էին, այլ թվում էին ավելորդ, այժմ թվացին բնական ու մխիթարական։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր սիրում այդ նոր խանդավառ ոգին։ Նա հավատացյալ մարդ էր, որ հետաքրքրվում էր կրոնով գերազանցապես քաղաքական իմաստով, և նոր ուսմունքը, որ թույլ էր տալիս իրեն որոշ նոր մեկնաբանություններ, այն պատճառով հենց, որ նա դուռ էր բացում վեճի ու վերլուծության համար, սկզբունքով անհաճո էր նրան։ Նա առաջ սառը, նույնիսկ թշնամաբար էր վերաբերվում նոր ուսմունքին և երբեք չէր վիճում կոմսուհի Լիդիա Իվանովնայի հետ, որ հրապուրված էր այդ ուսմունքով, այլ աշխատում էր լռություն պահել նրա մարտահրավերների հանդեպ։ Իսկ հիմա առաջին անգամ նա բավականությամբ էր լսում կոմսուհու խոսքերը և ներքնապես չէր առարկում նրան։

— Ես շատ, շատ շնորհակալ եմ ձեզանից թե՛ ձեր գործերի, թե՛ ձեր խոսքերի համար,— ասաց նա, երբ կոմսուհին վերջացրեց աղոթելը։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան մի անգամ էլ սեղմեց իր բարեկամի երկու ձեռքը։

Այժմ ես անցնում եմ գործի,— ասաց կոմսուհին ժպիտով, քիչ լռելուց և դեմքից արցունքի մնացորդները սրբելուց հետո։— Ես գնում եմ Սերյոժայի մոտ։ Ծայրահեղ դեպքում միայն ես կդիմեմ ձեզ։— Եվ նա վեր կացավ ու դուրս գնաց։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան գնաց Սերյոժայի սենյակը և այնտեղ թրջելով վախեցած երեխայի այտերն արցունքներով, ասաց նրան, որ նրա հայրը սուրբ է և որ նրա մայրը մեռել է։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան կատարեց իր խոստումը։ Իրոք, նա իր վրա վերցրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի տունը կարգավորելու և վարելու հետ կապված բոլոր հոգսերը։ Բայց նա չէր չափազանցում, ասելով, որ ինքը ուժեղ չէ պրակտիկ գործերում։ Նրա բոլոր կարգադրությունները պիտք էր փոխել, որովհետև նրանք անիրագործելի էին, և փոխվում էին Կոռնեյի՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կամերդիների միջոցով, որն ամենքից աննկատելի ձևով առաջ տարավ Կարենինի ամբողջ տունը և իր պարոնին հագցնելու ժամանակ զեկուցում էր նրան՝ ինչ պետք էր։ Բայց Լիդիա Իվանովնայի օգնությունն այսուամենայնիվ վերին աստիճանի իրական էր. նա տվեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին բարոյական նեցուկ՝ նրա հանդեպ տածած իր սիրո և հարգանքի գիտակցության մեջ, մանավանդ այն բանում, որ ինչպես մխիթարական էր կոմսուհու համար մտածելը, ինքը համարյա նրան դարձրեց քրիստոնյա, այսինքն՝ ծուլորեն և անտարբերությամբ հավատացյալից նրան դարձրեց քրիստոնեական ուսմունքի այն նոր բացատրության ջերմ ու հաստատուն կողմնակից, որ վերջերս տարածվել էր Պետերբուրգում։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար հեշտ էր համոզվել այդ բացատրության մեջ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ինչպես նաև Լիդիա Իվանովնան և նրանց հայեցակետին համամիտ ուրիշ մարդիկ, բոլորովին զուրկ էր երևակայության խորությունից, հոգեկան այն ընդունակությունից, որի շնորհիվ երևակայության առաջացրած պատկերացումները դառնում են այնպես իրական, որ պահանջում են համապատասխանություն այլ պատկերացումներին և իրականությանը։ Նա չէր տեսնում ոչինչ անհնարին ու անհամապատասխան բան այն գաղափարի մեջ, թե մահը, որ գոյություն ունի չհավատացողների համար, գոյություն չունի իր համար, թե, որովհետև ինքը տեր է ամենալիովին հավատի, որի չափի դատավորն ինքն է, ուրեմն՝ իր հոգում արդեն մեղք էլ չկա, և ինքն արդեն զգում է այստեղ՝ երկրի վրա կատարյալ փրկություն։

Ճիշտ է, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն աղոտ կերպով զգում էր իր հավատի մասին ունեցած այդ պատկերացման թերությունն ու սխալականությունը և նա գիտեր, որ ինքը, բնավ չմտածելով այն մասին, թե իր ներում շնորհելը բարձրագույն ուժի գործողություն է, անձնատուր եղավ այդ անմիջական զգացումին, զգում էր ավելի մեծ երջանկություն, քան այն ժամանակ, երբ ինքը, ինչպես այժմ, ամեն րոպե կարծում էր, որ իր հոգում ապրում է Քրիստոս և որ, ստորագրելով գրությունները, ինքը կատարում է նրա կամքը, բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար անհրաժեշտ էր այդպես մտածելը, նրա համար այնպես անհրաժեշտ էր այդպես մտածելը, նրա համար այնպես անհրաժեշտ էր իր նվաստացման մեջ ունենալ այն բարձրությունը, թեպետև մտացածին, որտեղից նա ամենքից արհամարհված, կարող էր արհամարհել ուրիշներին, և կառչել իր կարծեցյալ փրկությանը, որպես իսկական փրկության։

XXIII

Կոմսուհի Լիդիա Իվանովնան, դեռ շատ երիտասարդ և շուտ հրապուրվող մի աղջիկ, ամուսնացավ հարուստ տոհմիկ, բարեսիրտ ու չափազանց շվայտ մի խրախճասեր մարդու հետ։ Երկրորդ ամսում ամուսինը թողեց նրան և քնքուշ զգացումների վերաբերյալ նրա բուռն հավաստիացումներին պատասխանում էր միայն ծաղրով, նույնիսկ թշնամանքով, որը ոչ մի կերպ չէին կարողանում բացատրել այն մարդիկ, որոնք գիտեին և կոմսի բարի սիրտը և չէին տեսնում զմայլուն Լիդիայի մեջ ո՛չ մի պակասություն։ Այդ օրից սկսած նրանք ապրում էին իրարից զատ-զատ, թեև ապահարզանով բաժանված չէին, և երբ ամուսինը պատահում էր կնոջը, միշտ էլ անփոփոխ կերպով վերաբերվում էր նրան թունալից ծաղրով, որի պատճառը չէր կարելի հասկանալ։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան վաղուց արդեն դադարել էր ամուսնուն սիրահարված լինելուց, բայց այդ օրից սկսած նա չէր դադարում մեկնումեկին սիրահարվելուց։ Նա սիրահարված էր լինում հանկարծ մի քանիսին միաժամանակ, և՛ տղամարդկանց, և՛ կանանց։ Նա սիրահարված էր լինում համարյա այն

բոլոր մարդկանց, որոնք որևէ բանով առանձնապես աչքի էին ընկնում։ Նա սիրահարված էր ցարական ընտանիքի հետ ազգակցական կապ հաստատած բոլոր արքայազններին, և արքայազնուհիներին, նա սիրահարված էր մի միտրոպոլիտի, մի վիճակային փոխանորդի և մի քահանայի. սիրահարված էր մի լրագրողի, երեք սլավոնների, Կոմիսարովին, մի մինիստրի, մի բժշկի, մի անգլիացի միսիոների և Կարենինին։ Այս բոլոր սերերը, մերթ թուլանալով, մերթ ուժեղանալով, չէին խանգարում նրան ծավալելու ամենատարածված ու բարդ արքունական և աշխարհիկ հարաբերություններ։ Բայց այն օրից, երբ Կարենինին հասած դժբախտությունից հետո նա վերցրեց նրան իր հատուկ հովանավորության տակ, այն օրից, երբ աշխատանք թափեց Կարենինի տանը, հոգ տանելով նրա բարեկեցության համար, նա զգաց, որ մնացած բոլոր սերերը իսկական չեն, և որ նա անկեղծաբար սիրահարված է այժմ միայն Կարենինին։ Այն զգացմունքը, որ նա այժմ տածում էր դեպի Կարենինը, թվում էր նրան առաջվա բոլոր զգացմունքներից ավելի ուժեղ։ Վերլուծելով իր զգացմունքը և այն համեմատելով առաջինների հետ, նա պարզ տեսնում էր, որ սիրահարված չէր լինի Կոմիսարովին, եթե վերջինս փրկած չլիներ կայսրի կյանքը, սիրահարված չէր լինի Ռիստիչ-Կուջիցկուն, եթե չլիներ սլավոնական հարցը, բայց Կարենինին նա սիրում էր իբրև Կարենին, սիրում էր նրա չհասկացված բարձր հոգու համար, իրեն սիրելի նրա ձայնի բարակ հնչյունի համար՝ իր ծորուն առոգանությամբ, սիրում էր նրա հոգնած հայացքի համար, նրա բնավորության և ուռած երակներով փափուկ սպիտակ ձեռքերի համար։ Նա ո՛չ միայն ուրախանում էր Կարենինի հետ հանդիպումների համար, այլև փնտրում էր նրա դեմքի վրա այն տպավորության հատկանիշները, որ ինքը թողնում էր նրա վրա։ Նա ուզում էր դուր գալ Կարենինին ո՛չ միայն ասածներով, այլև իր ամբողջ անձնավորությամբ։ Կոմսուհին նրա համար այժմ զբաղվում էր իր տուալետով ավելի, քան երբևիցե առաջ։ Նա իրեն բռնում էր այն տենչանքների մեջ, թե ի՞նչ կլիներ, եթե ինքը ամուսին չունենար և Կարենինը լիներ ազատ։ Կոմսուհին կարմրում էր հուզմունքից, երբ Կարենինը մտնում էր սենյակ,

նա չէր կարողանում զսպել իր հիացական ժպիտը, երբ Կարենինը հաճելի բան էր ասում նրան։

Արդեն մի քանի օր էր, ինչ կոմսուհի Լիդիա Իվանովնան սաստիկ հուզված էր. նա իմացավ, որ Աննան Վրոնսկու հետ Պետերբուրգում է։ Պետք էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին փրկել նրա հետ տեսակցելուց, պետք էր նրան փրկել տանջող այն բանից, որպեսզի նա նույնիսկ չիմանար, որ այդ սոսկալի կինը գտնվում է նրա հետ միևնույն քաղաքում և որ նա կարող է ամեն րոպե պատահել այդ կնոջը։

Լիդիա Իվանովնան իր ծանոթների միջոցով հետաքրքրվում էր, թե ի՞նչ են մտադիր անել այդ զարշելի մարդիկ, ինչպես նա անվանում էր Աննային ու Վրոնսկուն, և աշխատում էր ղեկավարել իր բարեկամի բոլոր շարժումներն այդ օրերին, որպեսզի նա չպատահի նրանց։ Երիտասարդ համհարզը, Վրոնսկու բարեկամը, որի միջոցով կոմսուհին տեղեկություններ էր ստանում և որը հույս ուներ Լիդիա Իվանովնայի միջոցով ստանալ կոնցեսիա, ասաց, որ նրանք վերջացրել են իրենց գործերը և մյուս օրը մեկնում են։ Լիդիա Իվանովնան արդեն սկսում էր հանգստանալ, երբ հենց հետևյալ առավոտ նրան բերին մի տոմս, որի ձեռագիրը նա ճանաչեց սոսկումով։ Դա Աննա Կարենինայի ձեռագիրն էր։ Երարը քրծենիկի պես հաստ թղթից էր. երկարավուն դեղին թղթի վրա կար հրսկայական մոնոգրամ, և նամակից բուրում էր անուշ հոտ։

— Ո՞վ բերեց։

— Հյուրանոցի կոմիսիոները։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան երկար ժամանակ չէր կարողանում նստել, որ կարդա նամակը։ Հուզմունքից նա ունեցավ շնչարգելության նոպա, որին ենթակա էր նա։ Երբ հանգստացավ, կարդաց ֆրանսերեն հետևյալ նամակը.

«Madame la Comtesse[1], քրիստոնեական զգացումները, որոնցով լի է ձեր սիրտը, զգում եմ, տալիս են ինձ աններելի համարձակություն՝ գրելու ձեզ։ Ես դժբախտ եմ որդուցս անջատվելու պատճառով։ Ես աղաչում եմ թույլ տալ ինձ տեսնելու նրան մի անգամ իմ մեկնելուց առաջ։ Ներեցեք, որ ես հիշեցնում եմ իմ մասին։ Ես դիմում եմ ձեզ և ոչ թե Ալեք-

[1] Կոմսուհի։

սեյ Ալեքսանդրովիչին այն պատճառով միայն, որ չեմ ուզում իմ մասին հիշեցնելով՝ ստիպել այդ մեծահոգի մարդուն տանջվելու։ Իմանալով ձեր բարեկամական զգացումը նրա հանդեպ, դուք կհասկանաք ինձ։ Արդյոք Սերյոժային կուզարկե՞ք ինձ մոտ, թե՞ ես տուն գամ նշանակված որոշ ժամին, թե՞ դուք ինձ իմաց կտաք՝ ե՞րբ և որտե՞ղ ես կարող եմ տեսնել նրան տանից դուրս։ Ես մերժում չեմ ենթադրում, իմանալով մեծահոգությունն այն անձի, ումից կախված է դա։ Դուք չեք կարող երևակայել Սերյոժային տեսնելու այն ծարավը, որ զգում եմ ես, ուստի չեք կարող երևակայել այն շնորհակալությունը, որ կհարուցի իմ մեջ ձեր օգնությունը։

Աննա

Այդ նամակի մեջ ամեն ինչ գրգռեց կոմսուհի Լիդիա Իվանովնային. և՛ բովանդակությունը, և՛ մեծահոգության ակնարկը, և՛ մանավանդ սանձարձակ տոնը, ինչպես թվում էր նրան։

— Ասա, որ պատասխան չի՛ լինի,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան և անմիջապես բանալով թղթապանակը, գրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, թե հույս ունի նրան տեսնելու ժամը տասներկուսից հետո՝ պալատում շնորհավորանքի միջոցին։

«Ես պետք է ձեզ հետ խոսեմ մի կարևոր ու տխուր գործի մասին։ Այնտեղ մենք կպայմանավորվենք, թե որտե՛ղ։ Ամենից լավն է ինձ մոտ, որտեղ ես կհրամայեմ պատրաստել ձեր թեյը։ Անհրաժեշտ է։ Նա տալիս է խաչ, նա տալիս է և ուժ», ավելացրեց կոմսուհին, որ գեթ մի փոքր նախապատրաստի նրան։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան օրական սովորաբար գրում էր երկու կամ երեք տոմս Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Նա սիրում էր նրա հետ հաղորդակցության այդ պրոցեսը, որն իր մեջ ուներ վայելչագեղություն ու խորհրդավորություն, ինչը պակասում էր նրա անձնական հարաբերությունների մեջ։

XXIV

Շնորհավորանքը վերջացավ։ Հեռացողները հանդիպելով իրար, խոսում էին օրվա վերջին նորության մասին՝ նոր ստացված պարգևների և նշանավոր պաշտոնյաների տեղափոխության մասին։

— Ինչ կլիներ, եթե կոմսուհի Մարիա Բորիսովնային տային ռազմական մինիստրությունը, իսկ շտաբի պետ նշանակեին իշխանուհի Վատկովսկայային,— ասում էր ոսկով ասեղնագործած համազգեստով սպիտակահեր ծերուկը, դիմելով բարձրահասակ գեղեցկուհի Ֆրեյլինային, որը հարցնում էր նրան տեղափոխումների մասին։

— Իսկ ինձ՝ համհարզ,— պատասխանեց Ֆրեյլինան ժըպտալով։

— Դուք արդեն նշանակում ստացել եք։ Ձեզ նշանակել են հոգևոր վարչության գծով։ Եվ ձեզ օգնական՝ Կարենինին։

— Բարև ձեզ, իշխա՛ն,— ասաց ծերուկը, սեղմելով մոտեցողի ձեռքը։

— Ի՞նչ էիք ասում Կարենինի մասին,— հարցրեց իշխանը։

— Նա և Պուտյատովը Ալեքսանդր Նևսկի են ստացել։

— Ես կարծում էի, որ նա արդեն ունի։

— Ո՛չ։ Նայեք նրան,— ասաց ծերուկը, ասեղնագործ գլխարկով նշելով պետական խորհրդի ազդեցիկ անդամներից մեկի հետ դահլիճի դռան մեջ կանգնած Կարենինին՝ արքունական համազգեստով, կարմիր նոր ժապավենն ուսընդանուք։— Երջանիկ ու գոհ է, ինչպես պղնձե գրոշ,— ավելացրեց նա և կանգ առավ, որ սեղմի ըմբիշի կազմ ունեցող գեղեցիկ կամերգերի ձեռքը։

— Ո՛չ, նա ծերացել է,— ասաց կամերգերը։

— Հոգսերից։ Նա այժմ ամբողջ ժամանակ նախագծեր է գրում։ Նա հիմա բաց չի թողնի այն դժբախտին, մինչև կետ առ կետ բոլորը չպատմի։

— Ինչպե՞ս թե ծերացել է։ Il fait des passions[1]։ Ես կարծում եմ, կոմսուհի Լիդիա Իվանովնան այժմ նրան խանգում է կնոջը։

— Ի՞նչ եք ասում։ Խնդրեմ, կոմսուհի Լիդիա Իվանովնայի մասին վատ բան չասեք։

— Մի՞թե վատ բան է, որ նա սիրահարված է Կարենինին։

— Ճի՞շտ է արդյոք, որ Կարենինան այստեղ է։

— Այսինքն՝ ո՛չ այստեղ, պալատում, այլ Պետերբուրգում։

[1] Նա կիրք է հարուցում։

ես երեկ պատահեցի նրանց, Ալեքսեյ Վրոնսկու հետ, bras dessus, bras dessus[1], Մոսկայա փողոցում։

— C'est un homme qui n'a pas[2]...— սկսեց կամերգերը, բայց կանգ առավ, ճանապարհ տալով ու ողջունելով իր մոտով անցնող ցարական ընտանիքի անդամին։

Այսպես անդադրում խոսում էին Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մասին, դատապարտելով նրան ու ծիծաղելով նրա վրա, մինչդեռ նա, փակելով իր բռնած պետական խորհրդի անդամի ճանապարհը և ո՛չ մի բոպե չընդհատելով իր պատմությունը, որ բաց չթողնի նրան, կետ առ կետ նկարագրում էր նրան իր ֆինանսական նախագիծը։

Համարյա միաժամանակ, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչից հեռացավ իր կինը, նրա հետ պատահեց նաև ծառայող մարդու համար ամենադառն դեպքը՝ վերընթաց պաշտոնական շարժման ընդհատումը։ Այդ ընդհատումը տեղի էր ունեցել, և ամենքը պարզ տեսնում էին այդ, բայց ինքը՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դեռ չէր գիտակցում, որ վերջացել է իր կարիերան։ Արդյոք, Ստրեմովի հետ ընդհարո՞ւմն էր, արդյոք, կնոջ հետ դժբախտությո՞ւնն էր պատճառը, թե՞ ուղղակի այն, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հասել էր իր համար նախանշված սահմանին, բայց ամենքի համար այս տարի դարձավ բացահայտ, որ նրա պաշտոնական ասպարեզը վերջացած էր։ Նա դեռ ուներ կարևոր պաշտոն. նա անդամ էր բազմաթիվ հանձնաժողովների և կոմիտեների. բայց նա մի մարդ էր, որ ամբողջովին սպառվել էր և որից այլևս ոչինչ չէին սպասում։ Ինչ էլ ասեր նա, ինչ էլ առաջարկեր, նրան լսում էին այնպես, կարծես նրա առաջարկը վաղուց արդեն հայտնի է և դա հենց այն է, որը հարկավոր չէ։ Սակայն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր զգում այդ բանը և, ընդհակառակը, հեռացված լինելով կառավարչական գործունեությանն ուղղակի մասնակցությունից, այժմ ավելի պարզ, քան առաջ, տեսնում էր պակասություններ ու սխալներ ուրիշների գործունեության մեջ և իր պարտքն էր համարում նշել դրանք ուղղելու միջոցները։ Կնոջ հետ անջատումից քիչ հետո նա սկսեց գրել նոր դատարանի

[1] Թևանցուկ։

[2] Դա այնպիսի մի մարդ է, որը չունի...

մասին իր առաջին գրությունը, ոչ ոքի համար պիտանի անթիվ-անհամար այն գրություններից մեկը, որ վիճակված էր նրան գրել վարչության բոլոր ճյուղերի գծով։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ո՛չ միայն չէր նկատում իր անհուսալի վիճակը պաշտոնական աշխարհում և ո՛չ միայն չէր վշտանում դրանից, այլ գոհ էր իր գործունեությունից ավելի, քան երբևիցե։

«Ամուսնացածը հոգ է տանում աշխարհայինի մասին, թե ինչպե՛ս բավարարի կնոջը, չամուսնացածը հոգ է տանում աստվածայինի մասին, թե ինչպե՛ս հաճոյանա աստծուն», ասում է Պողոս առաքյալը, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, որը բոլոր գործերում ղեկավարվում էր այժմ «սուրբ» գրքով, հաճախ էր հիշում այդ տեքստը։ Նրան թվում էր, թե սկսած այն օրից, երբ ինքը մնաց առանց կնոջ, այդ նախագծերով ծառայում էր աստծուն ավելի, քան առաջ։

Բացահայտ անհամբերությունը խորհրդի անդամի, որ կամենում էր հեռանալ Ալեքսեյ Ալեքսանդրովիչից, չէր ճնշում նրան. նա դադարեց պատմելուց այն ժամանակ միայն, երբ անդամը, օգտվելով ցարական ընտանիքի անդամի անցնելուց, ծլկեց նրանից։

Մնալով մենակ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գլուխը կախ գցեց հավաքելով իր մտքերը, ապա ցրված նայեց շուրջը և գնաց դեպի դուռը, որի մոտ հույս ուներ պատահելու կոմսուհի Լիդիա Իվանովնային։

«Եվ ինչպես նրանք ամենքը ուժեղ ու առողջ են ֆիզիկապես», մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, նայելով անուշաբույր յուղով օծված բակենբարդներով հզոր կամերգերին և համազգեստի մեջ ձգված իշխանի կարմիր պարանոցին, որոնց մոտով նա պետք է անցներ։ «Ճիշտ է ասած, որ աշխարհում ամեն բան չարիք է», մտածեց նա, մի անգամ էլ խեթ-խեթ նայելով կամերգերի սրունքներին։

Առանց շտապելու շարժելով ոտքերը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հոգնածության և արժանապատվության սովորական տեսքով բարևեց այդ պարոններին, որոնք խոսում էին նրա մասին, ու նայելով դռանը, աչքերով փնտրում էր կոմսուհի Լիդիա Իվանովնային։

— Ա՜խ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ասաց ծերուկը, չարա-

խինդ փայլուն աչքերով, այն ժամանակ, երբ Կարենինը հավասարվեց նրան ու սառը շարժումով խոնարհեց գլուխը։— Ես դեռ չեմ շնորհավորել ձեզ,— ասաց ծերուկը, նշելով նրա նոր ստացած ժապավենը։

— Շնորհակալություն,— պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Ի՞նչ հիանալի օր է այսօր,— ավելացրեց նա, իր սովորությամբ առանձնապես շեշտելով «հիանալի» բառը։

Որ նրանք ծիծաղում էին իր վրա, նա գիտեր, բայց նա նրանցից ուրիշ բան չէր էլ սպասում, բացի թշնամանքից. նա արդեն վարժվել էր դրան։

Տեսնելով դռնից ելած կոմսուհի Լիդիա Իվանովնայի կոստի միջից բարձրացող դեղին ուսերը և իր մոտ կանչող նրա գեղեցիկ մտածկոտ աչքերը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ժպտաց, բանալով իր անթառամ սպիտակ ատամները և մոտեցավ նրան։

Լիդիա Իվանովնայի տուալետը պահանջել էր նրանից մեծ ջանք, ինչպես այս վերջերս նրա բոլոր տուալետները։ Նրա տուալետի նպատակն այժմ բոլորովին հակառակն էր այն նպատակի, որին նա հետամտում էր երեսուն տարի առաջ։ Այն ժամանակ նա ուզում էր զարդարել իրեն որևէ բանով, և որքան ավելի, այնքան լավ։ Այժմ, ընդհակառակը, նա պարտադրաբար զարդարված էր իր տարիքին ու ֆիգուրին այնպես անհամապատասխան կերպով, որ հոգ էր տանում միայն այն մասին, որպեսզի չափազանց սարսափելի չլիներ այդ զարդերի հակադրությունն իր արտաքինին։ Եվ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի նկատմամբ նա հասավ այդ բանին ու գրավիչ էր թվում նրան։ Կարենինի համար, իրեն շրջապատող թշնամանքի ու ծաղրի ծովի մեջ կոմսուհին միակ կղզին էր ո՛չ միայն իր հանդեպ ունեցած բարի տրամադրության, այլև սիրո։

Անցնելով ծաղրական հայացքների շարքի միջից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բնականաբար ձգտում էր դեպի կոմսուհու սիրահարված հայացքը, ինչպես բույսը դեպի լույսը։

— Շնորհավորում եմ ձեզ,— ասաց Լիդիա Իվանովնան նրան, աչքերով նշելով ժապավենը։

Ջսպելով բավականության ժպիտը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր քաշեց ուսերը, փակելով աչքերը, կարծես ասելով, թե դա չի կարող ուրախացնել իրեն։ Կոմսուհի Լիդիա Իվանովնան շատ լավ գիտեր, որ դա նրա գլխավոր ուրախություններից մեկն է, թեև նա երբեք չի խոստովանում այդ։

— Ինչպե՞ս է մեր հրեշտակը,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, նկատի ունենալով Սերյոժային։

— Չեմ կարող ասել, որ ես լիովին գոհ եմ նրանից,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, բարձրացնելով հոնքերը և բանալով աչքերը։— Սիտնիկովն էլ դժգոհ է նրանից։ (Սիտնիկովը մանկավարժ էր, որին հանձնարարված էր Սերյոժայի աշխարհիկ դաստիարակությունը)։ Ինչպես ասում էի ձեզ, նրա մեջ կա մի տեսակ սառնություն հենց դեպի այն գլխավոր հարցերը, որոնք պետք է շարժեն ամեն մարդու և ամեն երեխայի հոգին,— սկսեց արտահայտել իր մտքերն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը՝ ծառայությունից բացի իրեն հետաքրքրող միակ հարցի՝ որդու դաստիարակության վերաբերյալ։

Երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը Լիդիա Իվանովնայի օգնությամբ նորից վերադարձավ կյանքի և գործունեության, նա իր պարտքը համարեց զբաղվել իր մոտ մնացած որդու դաստիարակությամբ։ Առաջ երբեք զբաղված չլինելով դաստիարակության հարցերով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը որոշ ժամանակ հատկացրեց առարկայի տեսական ուսումնասիրությանը։ Կարդալով մի քանի գիրք մարդաբանությունից, մանկավարժությունից ու դիդակտիկայից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը իր համար դաստիարակության պլան կազմեց և, ղեկավարության համար հրավիրելով Պետերբուրգի լավագույն մանկավարժին, անցավ գործի։ Եվ այդ գործը մշտապես զբաղեցնում էր նրան։

— Այո՛, հապա սի՞րտը։ Ես տեսնում եմ նրա մեջ հոր սիրտը, և այդպիսի սրտով երեխան չի կարող վատ լինել,— ասաց Լիդիա Իվանովնան հիացքով։

— Այո՛, կարող է պատահել... Ինչ վերաբերում է ինձ, ես կատարում եմ իմ պարտքը։ Այդքանը կարող եմ տալ։

— Դուք կգաք ինձ մոտ,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, քիչ լռությունից հետո,— մենք պետք է խոսենք ձեզ համար տխուր մի գործի մասին։ Ես ամեն բան կասեի, որպեսզի ձեզ ազատեի որոշ հիշողություններից, բայց ուրիշներն այդպես չեն մտածում։ Ես նամակ ստացա Նրանից։ Նա այստեղ է, Պետերբուրգում։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ցնցվեց, երբ խոսք եղավ կնոջ

մասին, բայց անմիջապես նրա դեմքին հաստատվեց այն մեռած անշարժությունը, որ արտահայտում էր կատարյալ անօգնականություն այդ գործում։

— Ես սպասում էի այդ բանին,— ասաց նա։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան նայեց նրան զմայլված, և աչքերում երևացին նրա հոգու վեհության հանդեպ ունեցած հիացքի արցունքներ։

XXV

Երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ կոմսուհի Լիդիա Իվանովնայի փոքրիկ, հարմարավետ առանձնասենյակը՝ զարդարված վաղեմի ճենապակով ու պորտրեներով, ինքը՝ տանտիկինը դեռ չկար։

Տանտիկինը վերազգեստավորվում էր։

Կլոր սեղանի վրա փռած էր սփռոց և դրած էին չինական պարագաներ ու արծաթյա սպիրտավառ թեյաման։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ցրված նայեց առանձնասենյակը զարդարող անթիվ ծանոթ պորտրեները և նստելով սեղանի մոտ, բացեց նրա վրա դրած ավետարանը։ Կոմսուհու մետաքսե զգեստի շրշյունը գրավեց նրա ուշադրությունը։

— Դե հիմա մենք հանգիստ կնստենք,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, հուզված ժպիտով շտապ մտնելով սեղանի և բազմոցի միջև,— ու կխոսենք մեր թեյի միջոցին։

Նախապատրաստման մի քանի խոսքերից հետո, կոմսուհի Լիդիա Իվանովնան ծանր շնչելով ու կարմրելով, տվեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ձեռքն իր ստացած նամակը։

Նամակը կարդալուց հետո նա երկար ժամանակ լուռ էր։

— Ես չեմ կարծում, որ իրավունք ունեմ մերժելու նրան,— ասաց Կարենինը երկչոտությամբ, բարձրացնելով աչքերը։

— Բարեկա՛մս, դուք չարիք չեք տեսնում ոչ ոքի մեջ։

— Ես, ընդհակառակն, տեսնում եմ, որ ամեն ինչ չարիք է, բայց մի՞թե իրավացի բան է այդ...

Նրա դեմքի վրա կար անվճռականություն և իր համար անհասկանալի գործի մեջ խորհրդի, աջակցության ու ղեկավարության որոնում։

— Ո՛չ,— ընդհատեց նրան կոմսուհի Լիդիա Իվանովնան։— Ամեն բան չափ ու սահման ունի։ Ես հասկանում եմ

անբարոյականությունը,— նա ասաց ո՛չ բոլորովին անկեղծաբար, որովհետև նա երբեք չէր կարող հասկանալ այն, ինչը կանանց հասցնում է անբարոյականության,— բայց ես չեմ հասկանում դաժանությունը, այն էլ ո՞ւմ հանդեպ, ձե՛ր։ Ինչպե՞ս մնալ այն քաղաքում, որտեղ դուք եք։ Ո՛չ. իրոք որ, ինչքան ապրես, այնքան պետք է սովորես։ Ու ես սովորում եմ հասկանալ ձեր բարձրությունը և նրա ստորությունը։

— Իսկ ո՞վ քար կդցի,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, հայտնապես գոհ իր դերից։— Ես բոլորը ներեցի, ուստի չեմ կարող մորը զրկել այն բանից, ինչը նրա համար սիրո պահանջ է, դեպի որդին տածած սիրո պահանջ...

— Սակայն արդյո՞ք սեր է դա, բարեկա՛մս։ Արդյոք անկե՞ղծ է դա։ Ընդունենք, որ դուք ներել եք, դուք ներում եք... բայց արդյոք մենք իրավունք ունե՞նք աղոթելու այդ հրեշտակի հոգու վրա։ Նա մորը համարում է մեռած։ Նա աղոթում է մոր համար և խնդրում է աստծուն՝ ներել նրա մեղքերը... Եվ այսպես ավելի լավ է։ Իսկ այս դեպքում ի՞նչ պիտի մտածի երեխան։

— Ես չէի մտածում դրա մասին,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, կարծես համաձայնելով։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան դեմքը ծածկեց ձեռքերով ու լռեց։ Նա աղոթում էր։

— Եթե դուք հարցնում եք իմ խորհուրդը,— ասաց կոմսուհին աղոթելուց հետո և բացելով դեմքը,— ես խորհուրդ չեմ տալիս ձեզ անելու այդ։ Մի՞թե ես չեմ տեսնում, թե ինչպե՛ս տանջվում եք դուք, թե ինչպե՛ս դա բացեց ձեր բոլոր վերքերը։ Բայց, ենթադրենք, որ դուք, ինչպես միշտ, մոռանում եք ձեր մասին։ Սակայն ի՞նչ բանի կարող է հասցնել այդ։ Ձեր կողմից նոր տառապանքների, երեխայի համար նոր տանջանքների, այնպես չէ՞։ Եթե այդ կնոջ մեջ մնացել է մարդկային գեթ որևէ բան, նա ինքը չպիտի կամենա այդ։ Ո՛չ, առանց տատանվելու խորհուրդ չեմ տալիս, և եթե դուք թույլ կտաք ինձ, ես կգրեմ նրան։

Ու Ալեքսեյ Ալեքսանդրովիչը համաձայնեց, և կոմսուհի Լիդիա Իվանովնան գրեց ֆրանսերեն հետևյալ նամակը.

«Ողորմած Տիկին»

Ձեր մասին հիշեցումը ձեր որդու համար կարող է առաջ

բերել նրա կողմից այնպիսի հարցեր, որոնց չի կարելի պատասխանել, չմտցնելով երեխայի հոգու մեջ դատապարտության ոգի հանդեպ այն բանի, ինչը նրա համար պիտի լինի սրբություն, այս խոկ պատճառով խնդրում եմ ձեր ամուսնու մերժումն ընդունել քրիստոնեական սիրո ոգով։ Խնդրում եմ բարձրյալին՝ ողորմած լինել ձեր նկատմամբ։

Կոմսուհի Լիդիա»։

Այդ նամակը հասավ այն թաքուն նպատակին, որը կոմսուհի Լիդիա Իվանովնան ծածկում էր ինքն իրենից։ Նամակը խորապես խոցեց Աննայի հոգին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը Լիդիա Իվանովնայից վերադառնալով տուն, չկարողացավ այդ օրը անձնատուր լինել իր սովորական զբաղմունքներին և գտնել հավատացող ու փրկված մարդու հոգեկան այն անդորրը, որ նա զգում էր առաջ։

Հիշողությունը կնոջ մասին, որն այնպես շատ մեղավոր էր նրա առաջ և որի հանդեպ նա այնպես սուրբ էր, ինչպես իրավամբ ասում էր նրան կոմսուհի Լիդիա Իվանովնան, չպետք է շփոթեցներ նրան. բայց նա հանգիստ չէր. նա չէր կարողանում հասկանալ այն գիրքը, որ կարդում էր, չէր կարողանում վանել իրենից տանջալից հիշողությունները կնոջ հետ ունեցած իր հարաբերությունների մասին, այն սխալների մասին, որ նա արեց կնոջ հանդեպ, ինչպես թվում էր նրան այժմ։ Հիշողությունն այն մասին, թե ինչպես ինքը ձիաբշավից վերադառնալիս ընդունեց կնոջ խոստովանությունն անհավատարմության մեջ (մանավանդ այն, որ ինքը կնոջից պահանջում՝ էր միայն արտաքին վայելչություն, և չկանչեց մենամարտի), տանջում էր նրան՝ որպես զղջում։ Տանջում էր նրան նույնպես հիշողությունն այն նամակի մասին, որ գրեց կնոջը. մանավանդ իր ներումը, որ ոչ ոքի պետք չէր, և իր հոգացողությունն ուրիշի երեխայի մասին վառում էին նրա սիրտը զղջման ու ամոթի զգացումով։

Ամոթի և զղջման հիշտ այդպիսի զգացում ուներ նա այժմ, մտաբերելով իր ամբողջ անցյալը կնոջ հետ ու հիշելով անհարմար այն խոսքերը, որոնցով ինքը երկար տատանումներից հետո առաջարկություն արեց նրան։

«Բայց ի՞նչում եմ մեղավոր ես», ասում էր նա ինքն իրեն։ Եվ այդ հարցը միշտ առաջ էր բերում նրա մեջ մի ուրիշ հարց — արդյո՞ք այլ կերպ են զգում, ա՞յլ կերպ են սիրում, ա՞յլ կերպ են ամուսնանում այդ ուրիշ մարդիկ, այդ Վրոնսկիները, Օբլոնսկիները... հաստատությունք այդ կամերգերները։ Եվ նրան պատկերանում էին մի շարք այդպիսի հյութեղ, ուժեղ, չկասկածող մարդիկ, որոնք միշտ և ամենուր ակամա իրենց վրա էին սևեռում նրա հետաքրքիր ուշադրությունը։ Նա վանում էր իրենից այդ մտքերը, նա աշխատում էր համոզել իրեն, որ ինքն ապրում է ո՛չ թե այստեղի ժամանակավոր կյանքի համար, այլ հավիտենական, որ իր հոգու մեջ գտնվում է խաղաղություն ու ներ։ Բայց այն հանգամանքը, որ ինքն այդ ժամանակավոր, աննշան կյանքի մեջ արել էր, ինչպես թվում էր նրան որոշ չնչին սխալներ, տանջում էր նրան այնպես, կարծես բնավ գոյություն չուներ այդ հավիտենական փրկությունը, որին հավատում էր։ Սակայն այդ գայթակղեցումը շարունակվեց ո՛չ երկար, և շուտով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հոգում վերահաստատվեց այն անդորրությունն ու բարձրությունը, որոնց շնորհիվ նա կարող էր մոռանալ այն, ինչի մասին չէր ուզում հիշել։

XXVI

— Հը՞, ի՞նչ կա, Կապիտոնիչ,— ասաց Սերյոժան, կարմիր և ուրախ, իր ծննդյան օրվա նախօրյակին վերադառնալով զբոսանքից ու տալով Ֆր ծալքավոր վերնազգեստը բարձրահասակ ծերունի բարապանին, որն իր հասակի բարձրությունից ժպտում էր այդ փոքրիկ մարդուն։ — Այսօր էլի եկե՞լ էր կպչուն չինովնիկը։ Հայրիկն ընդունե՞ց նրան։

— Ընդունեց։ Հենց որ կառավարիչը գուրս գնաց, ես զեկուցեցի,— ասաց բարապանը, ուրախ աչքով անելով։ — Համեցե՛ք, ես կհանեմ։

— Սերյո՞ժա,— ասաց սլավոն գաստիարակը, կանգ առնելով այն դռան մեջ, որը տանում էր դեպի ներքին սենյակները։ — Ինքնե՛րդ հանեք։

Բայց Սերյոժան ուշադրություն չդարձրեց գաստիարակի վրա, թեպետև լսեց նրա թույլ ձայնը։ Նա կանգնել էր, ձեռ-

քով բռնած բարապանի լանջագեղ գոտուց և նայում էր նրա դեմքին։

— Հետո ի՞նչ, հայրիկն արեց նրա համար այն, ինչ պետք էր։

Բարապանը գլխով դրական նշան արեց։

Պնդերես չինովնիկը, որ արդեն յոթ անգամ եկել էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտ՝ խնդրելու ինչ-որ բանի մասին, հետաքրքրում էր և՛ Սերյոժային, և՛ բարապանին։ Սերյոժան մի անգամ նրան տեսավ նախասենյակում ու լսեց, թե ինչպե՞ս նա աղերսագին խնդրում էր բարապանին՝ զեկուցել իր մասին՝ ասելով, որ ինքը ստիպված է մեռնել իր երեխաների հետ։

Այդ օրից սկսած Սերյոժան, մի անգամ էլ պատահելով այդ չինովնիկին նախասենյակում, հետաքրքրվեց նրանով։

— Իսկ ո՞նց էր, շա՞տ ուրախացավ,— հարցրեց նա։

— Բա չէ՞ր ուրախանա։ Համարյա ցատկոտելով դուրս գնաց այստեղից։

— Իսկ որևէ բան բերե՞լ են,— հարցրեց Սերյոժան քիչ լռությունից հետո։

— Է՜հ, պարոն,— գլուխն օրորելով, շշունջով ասաց բարապանը,— կոմսուհուց կա։

Սերյոժան իսկույն հասկացավ, որ այն, ինչի մասին ասում էր բարապանը, նվեր էր կոմսուհի Լիդիա Իվանովնայից իր ծննդյան տարեդարձի առթիվ։

— Ի՞նչ ես ասում։ Որտե՞ղ է։

— Կոռնեյը տարավ հայրիկիդ մոտ։ Պետք է որ լավ բան լինի։

— Մե՞ծ է։ Այսքան կլինի՞։

— Քիչ փոքր, բայց լավն է։

— Գի՞րք։

— Ո՛չ, ուրիշ բան։ Գնացե՛ք, գնացե՛ք, Վասիլիյ Լուկիչը կանչում է,— ասաց բարապանը, լսելով դաստիարակի մոտեցող քայլերը և զգուշությամբ ուղղելով ձեռնոցից կապով չափ հանած նրա փոքրիկ ձեռքը, որ բռնել էր լանջագեղ գոտին, ու գլխով նշելով Լուկիչին։

— Վասիլիյ Լուկիչ, այս րոպեիս,— պատասխանեց Սերյոժան այն ուրախ և սիրող ժպիտով, որը միշտ հաղթահարում էր ~~ճշտակատար~~ Վասիլիյ Լուկիչին։

Սերյոժան չափազանց ուրախ էր, ամեն բան չափազանց երանելի էր, ուստի, նա չէր կարող իր բարեկամ բարապանին հաղորդակից չանել ընտանեկան այն ուրախությանը, որի մասին նա իմացավ զրոսանքի ժամանակ՝ Ամառային այգում՝ կոմսուհի Լիդիա Իվանովնայի մորաքրոջ աղջկանից։ Այդ ուրախությունն առանձնապես կարևոր էր թվում նրան, որ զուգադիպում էր չինովնիկի ուրախությանը և իր ուրախությանը, կապված խաղալիքներ բերելու հետ։ Սերյոժային թվում էր, որ այսօր այնպիսի օր է, որ ամենքը պետք է լինեն ուրախ ու խնդուն։

— Գիտե՞ս, հայրիկն ստացել է Ալեքսանդր Նևսկու շքանշան։

— Ո՞նց չգիտեմ։ Եկել էին շնորհավորելու։

— Ինչպե՞ս է, ուրա՞խ է նա։

— Ո՞նց չուրախանա ցարական շնորհի համար։ Ուրեմն արժանի է,— ասաց բարապանը խիստ և լուրջ։

Սերյոժան մտասուզվեց, խորազնին նայելով բարապանի ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրած դեմքին, մանավանդ սպիտակ բակենբարդների միջև կախված կզակին, որը ոչ ոք չէր տեսել, բացի Սերյոժայից, որն այլ կերպ չէր նայում նրան, քան վարից վեր։

— Իսկ քո աղջիկը վաղո՞ւց է, ինչ եղել է քեզ մոտ։

Բարապանի աղջիկը բալետի պարուհի էր։

— Ո՞նց կարող է լի օրերին գալ։ Նրանք էլ են սովորում. դուք էլ պիտի սովորեք, պարո՛ն, գնացե՛ք։

Գալով սենյակ, Սերյոժան փոխանակ նստելու դասի, պատմում էր ուսուցչին իր ենթադրությունն այն մասին, թե այն իրը, որ բերել են, պետք է լինի մեքենա։— Ի՞նչ եք կարծում դուք,— հարցրեց նա։

Բայց Վասիլիյ Լուկիչը մտածում էր միայն այն մասին, թե պետք է սովորել քերականության դասն ուսուցչի համար, որը գալու էր ժամը երկուսին։

— Ո՛չ, դուք միայն ասեք ինձ, Վասիլիյ Լուկիչ,— հարցրեց նա հանկարծ, արդեն նստելով աշխատասեղանի առջև ու գիրքը բռնած ձեռքին,— ի՞նչ շքանշան կա ավելի բարձրը Ալեքսանդր Նևսկուց։ Գիտե՞ր, հայրիկս ստացել է Ալեքսանդր Նևսկի։

Վասիլիյ Լուկիչն ասաց, որ Ալեքսանդր Նևսկուց բարձրը Վլադիմիրն է։

— Իսկ ավելի բա՞րձր։

— Ամենից բարձրը Անդրեյ Պերվոզվանանին է։

— Իսկ Անդրեյից բա՞րձրը։

— Չգիտեմ։

— Ինչպե՞ս, դուք էլ չգիտե՞ք,— և Սերյոժան հենվելով ձեռներին, մտասուզվեց։

Նրա մտածումներն ամենաբարդ ու բազմազան մտածումներ էին։ Նա կշռարկում էր, թե ինչպես իր հայրը հանկարծ կստանա և՛ Վլադիմիր, և՛ Անդրեյ, ու թե ինչպես այդ պատճառով ինքն այսօր դասի ժամանակ ավելի բարի կլինի, և թե ինչպես ինքը, երբ մեծանա, կստանա բոլոր շքանշանները, նաև այն, որ կհնարեն Անդրեյից ավելի բարձր։ Հենց որ հնարեն, ինքը կվաստակի։ Նրանք կստեղծեն ավելի բարձրը, իսկ ինքն անմիջապես այդ էլ կվաստակի։

Այդպիսի մտածումների մեջ անցավ ժամանակը, և երբ ուսուցիչը եկավ, դասը պատրաստ չէր՝ ժամանակի, տեղի ու գործողության եղանակի պարագաների մասին, և ուսուցիչը ո՛չ միայն դժգոհ էր, այլև վշտացած։ Ուսուցչի այդ վշտացումը հուզեց Սերյոժային։ Նա իրեն մեղավոր չէր զգում դասը չսովորելու համար, բայց ինչքան էլ ջանք էր թափում, ոչ մի կերպ չէր կարողանում յուրացնել այն։ Քանի դեռ ուսուցիչը բացատրում էր, նա հավատում և կարծես թե հասկանում էր, բայց հենց որ մնում էր մենակ, ոչ մի կերպ չէր կարողանում հիշել ու հասկանալ, որ կարճ և այնպես հասկանալի «հանկարծ» բառը գործողության եղանակի պարագա է։— Բայց և այնպես, նա ափսոսում էր, որ վշտացրեց ուսուցչին և ուզում էր միխիթարել նրան։

Սերյոժան ընտրեց այն բոպեն, երբ ուսուցիչը լուռ նայում էր գրքին։

— Միխայիլ Իվանիչ, ե՞րբ է լինում ձեր անվանակոչության տոնը,— հարցրեց նա հանկարծ։

— Ավելի լավ է, դուք մտածեիք ձեր աշխատանքի մասին, իսկ անվանակոչությունը ո՛չ մի նշանակություն չունի բանական էակի համար։ Դա նույնպիսի օր է, ինչպես և մյուս օրերը, երբ հարկավոր է աշխատել։

Սերյոժան ուշադրությամբ նայեց ուսուցչին, նայեց նրա նոսր մորուքին, ակնոցին, որ ավելի ցած էր իջել քթին եղած հատունից, և այնպես մտասուզվեց, որ այլևս ոչինչ չէր լսում, թե ի՛նչ էր բացատրում ուսուցիչը։ Նա հասկանում էր, որ ուսուցիչը չի ասում այն, ինչ մտածում է. նա այդ զգում էր ուսուցչի տոնից։ «Բայց ինչո՞ւ նրանք ամենքը խոսքը մեկ են արել, որ ամեն բան ասեն միևնույն ձևով, ասեն ամենաձանձրալի և անպետք բաներ։ Ինչո՞ւ է նա վանում ինձ իրենից, ինչո՞ւ նա չի սիրում ինձ», հարցնում էր նա ինքն իրեն թախիծով ու չէր կարողանում պատասխան գտնել։

XXVII

Ուսուցչից հետո հոր դասն էր։ Քանի հայրը չէր եկել, Սերյոժան նստեց սեղանի մոտ և սկսեց մտածել, խաղալով դանակի հետ։ Սերյոժայի սիրած զբաղմունքների թվում էր նաև զբոսանքի ժամանակ մորը գտնելու միտքը։ Նա չէր հավատում մահին առհասարակ և մասնավորապես մոր մահվանը, չնայած որ Լիդիա Իվանովնան ասաց այդ նրան, ու հայրը հաստատեց, ուստի, երբ նրան ասացին, թե մայրը մեռել է, նա դրանից հետո ևս որոնում էր նրան զբոսանքի ժամանակ։ Թուխ մազերով յուրաքանչյուր գեր, նազելի կին նրա համար իր մայրն էր։ Տեսնելով այդպիսի կնոջ, նրա հոգում լեռնանում էր քնքշության այնպիսի զգացում, որ շունչը կտրվում էր, և աչքերում երևում էին արցունքներ։ Եվ նա ամեն վայրկյան սպասում էր, որ այդ կինը կմոտենա իրեն, կբարձրացնի քողը։ Կերևա նրա ամբողջ դեմքը, նա կժպտա, կգրկի Սերյոժային, Սերյոժան կզգա նրա բույրը, կզգա նրա ձեռքի քնքշությունը և լաց կլինի երջանիկ, ինչպես մի անգամ երեկոյան ինքը պառկեց ոտների մոտ ու նա խոտուտ էր անում Սերյոժային, իսկ Սերյոժան քրքջում էր ու կծում նրա մատանեզարդ սպիտակ ձեռքը։ Հետո, երբ նա պատահմամբ իմացավ դայակից, որ մայրը չի մեռել, և հայրն ու Լիդիա Իվանովնան բացատրեցին նրան, թե նրա համար մայրը մեռած է, որովհետև լավ կին չէ (դրան նա արդեն ո՛չ մի կերպ չէր կարող հավատալ, որովհետև սիրում էր մորը), նա, այնուամենայնիվ, որոնում ու սպասում էր մորը։ Այսօր, Ամառային այգում կար մի տիկին

մանիշակագույն քողով, որին Սերյոժան հետևում էր սրտի նվաղումով, կարծելով, թե դա իր մայրն է, մինչ նա մոտենում էր նրանց ծառուղիով։ Այդ տիկինը չհասավ նրանց ու գնաց, անհայտացավ ինչ-որ տեղ։ Այսօր ավելի ուժեղ, քան երբևիցե, Սերյոժան զգաց բուռն սեր դեպի մայրը և այժմ, մտքերով տարված, սպասելով հորը, դանակով կտրատեց սեղանի ամբողջ անկյունը, փայլուն աչքերով նայելով իր դիմացը և մտածելով մոր մասին։

— Գալիս է հայրիկդ,— ցրեց նրա մտքերը Վասիլիյ Լուկիչը։

— Սերյոժան թռավ տեղից, մոտեցավ հորը և ձեռքը համբուրելուց հետո ուշադիր նայեց նրան, փնտրելով ցնծության հատկանիշներ Ալեքսանդր Նևսկի ստանալու առթիվ։

— Լա՞վ զբոսնեցիր,— հարցրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, նստելով իր բազկաթոռին, մոտ քաշելով իրեն Հին կտակարանը և բանալով այն։ Չնայած որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բազմիցս ասում էր Սերյոժային, թե յուրաքանչյուր քրիստոնյա պետք է հաստատ իմանա սրբազան պատմությունը, բայց նա ինքը հաճախ դիմում էր Հին կտակարանին, և Սերյոժան նկատեց այդ։

— Այո՛, շատ ուրախ էր այնտեղ, հայրի՛կ,— ասաց Սերյոժան, կողքի նստելով աթոռին և ճոճելով այն, մի բան, որ արգելված էր։— Ես տեսա Նադենկային։ (Նադենկան Լիդիա Իվանովնայի մորաքրոջ աղջիկն էր, որ դաստիարակվում էր նրա մոտ)։ Նա ինձ ասաց, որ ձեզ տվել են նոր աստղ։ Դուք ուրա՞խ եք, հայրի՛կ։

— Նախ՝ մի՛ ճոճվիր, խնդրեմ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Իսկ երկրորդ, թանկ է ոչ թե պարգևը, այլ աշխատանքը։ Եվ ես կկամենայի, որ դու հասկանայիր այդ։ Եթե դու պիտի աշխատես, պիտի սովորես նրա համար, որ պարգև ստանաս, աշխատանքը քեզ կթվա ծանր, բայց երբ դու աշխատում ես (ասում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, հիշելով, թե ինչպես ինքը պարտքի գիտակցությամբ սաղարում էր իրեն այսօր առավոտյան ձանձրալի աշխատանք կատարելիս, այսինքն՝ հարյուր տասնութ գրություն ստորագրելիս), սիրելով աշխատանքը, ապա նրա մեջ դու կգտնես քեզ համար պարգև։

Սերյոժայի քնքշանքով և ուրախությամբ փայլուն աչքերը մարեցին ու կախ ընկան հոր հայացքի ծանրության տակ։

Դա նույն այն, վաղուց ծանոթ տոնն էր, որով հայրը միշտ վերաբերվում էր նրան և որին համակերպվելու արդեն սովոր էր Սերյոժան։ Հայրը նրա հետ միշտ խոսում էր այնպես,— այդպես էր զգում Սերյոժան,— կարծես նա դիմում է իր երևակայած ինչ-որ երեխայի, մեկն այն երեխաներից, որ լինում են գրքերում, բայց բոլորովին նման չեն Սերյոժային։ Եվ Սերյոժան հոր հետ եղած ժամանակ միշտ աշխատում էր ձևանալ գրքի այդպիսի երեխա։

— Հուսամ, դու հասկանում ես այդ,— ասաց հայրը։

— Այո՛, հայրի՛կ,— պատասխանեց Սերյոժան, ձևանալով երևակայելի երեխան։

Դասը հետևյալն էր. անգիր անել ավետարանից մի քանի տուն և կրկնել Հին կտակարանի սկիզբը։ Սերյոժան կարգին գիտեր ավետարանի տները, բայց այն րոպեին, երբ նա ասում էր դրանք, ուշքը տարվեց հոր ճակատի ոսկրով, որը խիստ կերպով կորանում էր քունքի մոտ, այնպես որ շփոթվեց ու միևնույն բառով ավարտվող մի տան վերջավորությունը տեղափոխեց մյուսի սկիզբը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար ակնհայտ էր, որ նա չէր հասկանում իր ասածը, և դա գրգռում էր նրան։

Նա մոռայլվեց ու սկսեց բացատրել այն, ինչ Սերյոժան արդեն շատ անգամ լսել էր և երբեք չէր կարողանում հիշել, որովհետև հասկանում էր չափազանց պարզորեն, ինչպես, օրինակ, այն, որ «հանկարծ»-ը գործողության եղանակի պարագա է։ Սերյոժան վախեցած հայացքով նայում էր հորը և մտածում միայն մի բանի մասին. կստիպի՞, թե չի ստիպի հայրը կրկնելու այն, ինչ ինքն ասաց, ինչպես պատահում էր դա երբեմն։ Եվ այդ միտքն այնպես էր վախեցնում Սերյոժային, որ նա այլևս ոչինչ չէր հասկանում։ Բայց հայրը չստիպեց կրկնել և անցավ նոր դասին՝ Հին կտակարանից։ Սերյոժան լավ պատմեց դեպքերը, բայց երբ պետք էր պատասխանել այն հարցերին, թե ի՞նչն է կանխորոշել որոշ դեպքեր, նա ոչինչ չգիտեր, չնայած որ արդեն պատժվել էր այդ դասի համար։ Իսկ այն տեղը, որտեղ նա արդեն չկարողացավ ոչինչ ասել ու ճմրթվում էր, և՛ կտրատում սեղանը, և՛ ճոճվում աթոռի վրա, այն տեղն էր, որտեղ նա պետք է պատմեր նախաջրհեղեղյան նահապետների մասին։ Նրանցից նա ոչ ոքի չգիտեր, բացի Նոյից, որ

ողջամբ վերցված էր երկինք։ Առաջ նա հիշում էր անունները, բայց այժմ բոլորովին մոռացավ, մանավանդ որ Ենովքը նրա սիրած դեմքն էր ամբողջ Հին կտակարանից և Ենովքին ողջամբ երկինք վերցնելու հետ նրա գլխում կապվում էր մտքի մի ամբողջ երկար ընթացք, որին նա անձնատուր եղավ այժմ, սառած աչքերով նայելով հոր ժամացույցի շղթային ու ժիլետի կիսով չափ կոճկած կոճակին։

Սերյոժան բնավ չէր հավատում մահին, որի մասին այնպես հաճախ ասում էին նրան։ Նա չէր հավատում, որ կարող են մեռնել իրեն սիրելի մարդիկ, չէր հավատում մանավանդ այն բանին, որ ինքը պիտի մեռնի։ Այդ նրա համար միանգամայն անհնարին էր և անհասկանալի։ Բայց նրան ասում էին, որ ամենքը պիտի մեռնեն. նա նույնիսկ հարցնում էր այն մարդկանց, որոնց հավատում էր, և նրանք հաստատում էին այդ. դայակն էլ ասում էր, թեև ո՛չ սիրով։ Բայց Ենովքը չէր մեռել, ուրեմն՝ մեռնում են ո՛չ ամենքը։ «Եվ ինչո՞ւ յուրաքանչյուր մարդ չի կարող աստծո առաջ իր ծառայությամբ արժանավոր դառնալ ու ողջամբ երկինք վերցվել», մտածում էր Սերյոժան։ Վատ մարդիկ, այսինքն՝ նրանք, որոնց Սերյոժան չի սիրում, կարող էին մեռնել, բայց բոլոր լավ մարդիկ կարող են լինել Ենովքի պես։

— Ուրեմն ի՞նչ նահապետներ։

— Ենովք, Ենովք։

— Դա արդեն ասացիր։ Վատ է, Սերյոժա, շատ վատ։ Եթե դու չես աշխատում իմանալ այն, ինչն ամենից կարևոր է քրիստոնյայի համար,— ասաց հայրը վեր կենալով,— հապա էլ ի՞նչը կարող է գրավել քեզ։ Ես դժգոհ եմ քեզանից, Պյոտր Իգնատիչն էլ (դա գլխավոր մանկավարժն էր) դժգոհ է քեզանից... Ես պետք է պատժեմ քեզ։

Հայրն ու մանկավարժը՝ երկուսն էլ դժգոհ էին Սերյոժայից, և իրոք, նա շատ վատ էր սովորում։ Բայց ոչ մի կերպ չէր կարելի ասել, որ նա անընդունակ երեխա էր։ Ընդհակառակն, նա շատ ավելի ընդունակ էր այն տղաներից, որոնց մանկավարժն օրինակ էր բերում Սերյոժայի համար։ Հոր տեսակետով, նա չէր ուզում սովորել այն, ինչ սովորեցնում էին նրան։ Իրողությունն այն էր, որ նա չէր կարողանում սովորել այդ։ Չէր կարողանում, որովհետև նրա հոգում կային պահանջներ, նրա համար ավելի պարտադիր, քան այն, ինչ առաջադրում էին հայրն ու մանկավարժը։ Այդ պահանջները հակասում էին իրար, և նա ուղղակի պայքարում էր իր դաստիարակների դեմ։

Նա ինը տարեկան էր, նա երեխա էր. բայց գիտեր իր հոգին, որը թանկ էր իր համար. նա պաշտպանում էր այն, ինչպես կոպը պաշտպանում է աչքը, և առանց սիրո բանալու ոչ ոքի ներս չէր թողնում իր հոգու մեջ։ Նրա դաստիարակները գանգատվում էին, որ նա չի ուզում սովորել, իսկ նրա հոգին լցված էր գիտությանն ծարավով։ Եվ նա սովորում էր Կապիտոնիչից, դայակից, Նադեժդայից, Վասիլիյ Լուկիչից, բայց ո՛չ ուսուցիչներից։ Այն ջուրը, որին հայրն ու մանկավարժն սպասում էին իրենց անիվների համար, վաղուց արդեն ծծվել, գնացել էր և աշխատում էր ուրիշ տեղ։

Հայրը պատժեց Սերյոժային, չթողնելով, որ նա գնա Լիդիա Իվանովնայի մորաքրոջ աղջկա՝ Նադեժդայի մոտ, բայց այդ պատիժը երջանկություն հանդիսացավ Սերյոժայի համար։ Վասիլիյ Լուկիչը լավ տրամադրության էր և ցույց տվեց նրան, թե ինչպե՛ս պետք է շինել հողմաղացներ։ Ամբողջ երեկոն անցավ աշխատանքի և տեսնելիքների պրոցեսում, թե ինչպե՛ս կարելի է շինել այնպիսի աղաց, որ հնարավոր լինի պտույտ գալ նրա վրա. արդյոք ձեռքերով բռնել թևերի՞ց. թե՞ իրեն կապել նրանց ու պտտվել։ Մոր մասին Սերյոժան չէր մտածում ամբողջ երեկո, բայց մտնելով անկողին, նա հանկարծ հիշեց նրան և իր խոսքերով աղոթեց, որպեսզի մայրը վաղը, իր ծննդյան օրը դադարեր թաքնվելուց և գար իր մոտ։

— Վասիլիյ Լուկիչ, գիտե՞ք, թե ինչի՛ մասին ես աղոթեցի հաշվից դուրս։

— Որ ավելի լավ սովորես։

— Ո՛չ։

— Խաղալիքներ։

— Ո՛չ։ Չեք գուշակի։ Հրաշալի բան է, բայց գաղտնիք։ Երբ կատարվի, ես կասեմ ձեզ։ Չգուշակեցի՞ք։

— Ո՛չ, ես չեմ գուշակի։ Դո՛ւք ասեք,— ասաց Վասիլիյ Լուկիչը ժպտալով, որ հազվադեպ էր պատահում նրա հետ։— Դե՛, պատկերացրեք, ես հանգցնում եմ մոմը։

— Իսկ ինձ համար առանց մոմի ավելի տեսանելի է այն,

ինչը տեսնում եմ ես և ինչի համար աղոթում էի։ Ա՜յ, քիչ մնաց գաղտնիքը բանայի,— ասաց Սերյոժան, ուրախ ծիծաղելով։

Երբ մոմը դուրս տարան, Սերյոժան լսում ու զգում էր մորը։ Մայրը կանգնած էր նրա գլխին և գուրգուրում էր նրան սիրով լի հայացքով։ Բայց հանդես եկան հողմաղացները, դանակը, ամեն ինչ խառնվեց իրար, և նա քնեց։

XVIII

Գալով Պետերբուրգ, Վրոնսկին և Աննան իջան լավագույն հյուրանոցներից մեկում։ Վրոնսկին առանձին, վարի հարկում, Աննան վերևում՝ երեխայի, ծծմոր և աղախնի հետ, չորս սենյակից բաղկացած մեծ բաժանմունքում։

Իրենց գալու հենց առաջին օրը Վրոնսկին գնաց եղբոր մոտ։ Այնտեղ նա տեսավ Մոսկվայից գործերով եկած մորը։ Մայրը և հարսը նրան դիմավորեցին սովորականի պես, նրանք հարցուփորձ էին անում նրան արտասահմանյան ճանապարհորդության մասին, խոսում էին ընդհանուր ծանոթների մասին, բայց ո՛չ մի խոսք չարին նրա և Աննայի կապի մասին։ Իսկ եղբայրը հետևյալ օրն առավոտյան գալով Վրոնսկու մոտ, ինքը հարցրեց նրան Աննայի մասին, և Ալեքսեյ Վրոնսկին ուղղակի ասաց նրան, որ ինքը Կարենինայի հետ ունեցած իր կապի վրա նայում է որպես ամուսնության վրա, որ ինքը հույս ունի հաջողացնելու ապահարզանը և այն ժամանակ կամուսնանա նրա հետ, իսկ մինչ այդ՝ նրան համարում է իր կինը, ինչպես յուրաքանչյուր ամուսին իր կնոջը, և խնդրում է այդպես էլ հայտնել իր մորն ու հարսին։

— Եթե բարձր հասարակությունը հավանություն չի տալիս դրան, ինձ համար միևնույն է,— ասաց Վրոնսկին,— բայց եթե իմ հարազատներն ուզում են ազգակցական կապեր պահել ինձ հետ, նրանք պետք է այդպիսի հարաբերություններ ունենան նաև իմ կնոջ հետ։

Մեծ եղբայրը, որ միշտ հարգում էր փոքրի դատողությունները, լավ չգիտեր, արդյոք իրավացի՞ է նա, թե ոչ, քանի դեռ բարձր հասարակությունը չէր վճռել այդ հարցը. իսկ ինքն իր կողմից ոչինչ չուներ ընդդեմ, և Ալեքսեյի հետ գնաց Աննայի մոտ։

Վրոնսկին եղբոր մոտ, ինչպես և ամենքի ներկայությամբ, Աննայի հետ խոսում էր դուռ-ով և վերաբերվում էր նրան ինչպես մոտիկ ծանոթի, բայց ենթադրվում էր, որ եղբայրը դիտե նրանց հարաբերությունները, և խոսվում էր այն մասին, որ Աննան գնում է Վրոնսկու կալվածքը։

Վրոնսկին, չնայած իր աշխարհիկ ամբողջ փորձառությանը, մի տեսակ տարօրինակ մոլորության մեջ էր, շնորհիվ այն նոր դրության, որի մեջ գտնվում էր նա։ Թվում էր, թե նա պիտի հասկանար, որ բարձր հասարակությունը փակված է նրա և Աննայի համար. բայց այժմ նրա գլխում ծագեցին ինչ-որ անորոշ նկատառումներ, իբր այդպես էր միայն հնում, և որ այժմ արագընթաց առաջադիմության պայմաններում (նա իր համար աննկատելի կերպով դարձել էր ամեն առաջադիմության կողմնակից), փոխվել է հասարակության հայացքը և որ տակավին վճռված չէ այն հարցը, արդյոք հասարակությունը կընդունի՞ նրանց, թե ոչ։ «Հասկանալի է,— մտածում էր նա,— որ պալատական շրջանը չի ընդունի Աննային, սակայն մոտիկ մարդիկ կարող են և պետք է հասկանան այդ այնպես, ինչպես պետք է»։

Կարելի է ոտները ծալած՝ մի քանի ժամ նստել միևնույն դիրքով, եթե մարդ գիտե, որ ոչինչ չի խանգարի՝ փոխելու այդ դիրքը, բայց եթե մարդ գիտե, որ ինքը պետք է այդպես էլ նստի ծալած ոտներով, կսկսվեն ցնցումներ, ոտները կդողան ու կմխրճվեն այն տեղի մեջ, ուր նա կուզենար ձիգ տալ, մեկնել ոտները։ Այդ նույն բանն էր զգում Վրոնսկին բարձր հասարակության վերաբերյալ։ Թեպետ նա իր հոգու խորքում գիտեր, որ բարձր հասարակությունը փակված է իրենց համար, այնուամենայնիվ նա փորձում էր՝ արդյոք չի՞ փոխվի այժմ բարձր հասարակությունը և արդյոք չի՞ ընդունի իրենց։ Բայց նա շատ շուտ նկատեց, որ թեպետ բարձր հասարակությունը բաց էր անձնապես նրա համար, սակայն փակ էր Աննայի համար։ Վրոնսկու համար բարձրացրած ձեռքերն անմիջապես իջնում էին Աննայի առաջ, ինչպես լինում է մուկ ու կատու խաղալիս։

Պետերբուրգի բարձր հասարակության առաջին տիկիններից մեկը, որին տեսավ Վրոնսկին, նրա հորեղբոր աղջիկ Բետսին էր։

— Վերջապե՞ս,— խնդագին դիմավորեց Բետսին նրան։ — Հապա Աննա՞։ Որքան ուրա՞խ եմ ես։ Որտե՞ղ եք իջել։ Պատկերացնում եմ, թե ինչ սարսափելի է թվում ձեզ մեր Պետերբուրգը ձեր սքանչելի ճանապարհորդությունից հետո, երևվակայում եմ ձեր մեղրամիսը Հռոմում։ Ինչպե՞ս է ապահարզանի հարցը։ Այդ բոլորն արե՞լ եք։

Վրոնսկին նկատեց, որ Բետսիի հիացմունքը նվազեց, երբ իմացավ, որ ապահարզան դեռ չկար։

— Գիտեմ, որ քար կնետեն ինձ վրա,— ասաց նա,— բայց ես կգամ Աննայի մոտ. այո՛, ես անպայման կգամ։ Դուք երկա՞ր եք մնալու այստեղ։

Եվ իրոք, նա հենց նույն օրը եկավ Աննայի մոտ. բայց նրա տոնն արդեն բոլորովին այն չէր, ինչպես առաջ էր։ Ըստ երևույթին, նա պարծենում էր իր համարձակությամբ ու կամենում էր, որ Աննան գնահատեր նրա բարեկամության հավատարմությունը։ Նա մնաց տասը րոպեից ո՛չ ավելի, խոսելով աշխարհիկ նորությունների մասին և հեռանալիս ասաց.

— Դուք ինձ չասացիք, թե ե՞րբ է լինելու ապահարզանը։ Ասենք, ես հաշվի չեմ առնում հասարակական կարծիքը, բայց վեր ցցած ուրիշ գլուխներ ձեզ կծեծեն իրենց սառնությամբ, մինչև դուք շամուսնանաք։ Եվ դա այնպես հասարակ բան է այժմ։ Ça se fait[1]։ Ուրեմն, դուք ուրբաթ օրը մեկնում եք։ Ափսո՞ս, որ մենք այլևս չենք տեսնվի։

Բետսիի տոնից Վրոնսկին կարող էր հասկանալ, թե ինքն ի՞նչ կարող է սպասել բարձր հասարակությունից, բայց նա էլի մի փորձ արեց իր ընտանիքում։ Նա հույս չուներ իր մոր վրա։ Նա գիտեր, որ մայրը, որն այնպես հիացած էր Աննայով իր առաջին ծանոթության ժամանակ, այժմ անողոք է նրա նկատմամբ այն բանի համար, որ նա՝ պատճառ եղավ որդու կարիերայի քայքայման։ Բայց Վրոնսկին մեծ հույս էր դրել Վարյայի՝ եղբոր կնոջ վրա։ Նրան թվում էր, որ Վարյան քար չի գցի և պարզությամբ ու վճռականությամբ կգա Աննայի մոտ ու կընդունի նրան։

Իր գալու հենց հետևյալ օրը Վրոնսկին գնաց նրա մոտ և գտնելով նրան մենակ, ուղղակի հայտնեց իր ցանկությունը։

[1] Այդպես է արվում։

— Դու գիտես, Ալեքսեյ,— ասաց Վարյան նրան լսելուց հետո,— թե ինչպե՞ս սիրում եմ քեզ ու ինչպե՞ս պատրաստ եմ ամեն բան անելու քեզ համար, բայց ես լուռ էի, որովհետև գիտեի, որ չեմ կարող օգտակար լինել քեզ և Աննա Արկադևնային,— ասաց նա, առանձնապես խնամքով արտասանելով «Աննա Արկադևնա» անունը։— Խնդրեմ, չկարծես, որ ես դատապարտում եմ։ Երբե՛ք. գուցե, նրա տեղ ե՛ս էլ նույն բանն անեի։ Ես մանրամասների մեջ չեմ մտնում ու չեմ կարող մըտնել,— ասում էր նա, երկչոտությամբ նայելով Վրոնսկու մռայլ դեմքին։— Սակայն իրերը պետք է կոչել իրենց անունով։ Դու ուզում ես, որ ես գնամ նրա մոտ, ընդունեմ նրան ու այդպիսով վերականգնեմ նրա անունը հասարակության մեջ. բայց դու հասկացիր, որ չեմ կարող այդ բանն անել։ Իմ աղջիկները մեծանում են, և ես պետք է ապրեմ բարձր հասարակության մեջ՝ ամուսնուս համար։ Է՛, ես կգամ Աննա Արկադևնայի մոտ. նա կհասկանա, որ ես չեմ կարող նրան հրավիրել ինձ մոտ կամ պետք է դա անեմ այնպես, որ նա չհանդիպի նրանց, ովքեր այլ կերպ են նայում, չէ՞ որ դա կվիրավորի նրան։ Ես չեմ կարող բարձրացնել նրան։

— Ես չեմ կարծում բնավ, որ նա ընկել է ավելի, քան հարյուրավոր ուրիշ կանայք, որոնց ընդունում եք դուք,— ընդհատեց նրան Վրոնսկին է՛լ ավելի մռայլված և լուռ վեր կացավ, հասկանալով, որ հարսի որոշումը հնարավոր չէ փոխել։

— Ալեքսե՛յ, մի՛ բարկանա ինձ վրա։ Խնդրում եմ, հասկացիր, որ ես մեղավոր չեմ,— խոսեց Վարյան, երկչոտ ժպիտով նայելով Վրոնսկուն։

— Ես չեմ բարկանում քեզ վրա,— ասաց Վրոնսկին դարձյալ մռայլ,— բայց ես վշտանում եմ կրկնակի։ Ինձ ցավ է պատճառում նաև այն, որ դա խզում է մեր բարեկամությունը։ Ասենք, չի՛ խզում, բայց թուլացնում է։ Դու հասկանո՞ւմ ես, որ ինձ համար էլ դա չի կարող լինել ուրիշ կերպ։

Եվ այդ խոսքերով Վրոնսկին դուրս գնաց հարսի մոտից։

Վրոնսկին հասկացավ, որ հետագա փորձերն ապարդյուն են և որ այդ քանի օրը պետք է անցկացնել Պետերբուրգում, որպես օտար քաղաքում, խուսափելով ամեն հարաբերությունից առաջվա բարձր հասարակության հետ՝ անախորժությունների և վիրավորանքների չենթարկվելու համար, որոնք այն-

պես տանջալից էին։ Պետերբուրգում դրության գլխավոր անախորժություններից մեկն այն էր, որ թվում էր, թե ամենուր Ալեքսեյ Ալեքսանդրովիչն է և իր անունը։ Չէր կարելի ո՛չ մի բանի մասին խոսք անել, որ խոսակցությունը շուտ չդար Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վրա, չէր կարելի որևէ տեղ գնալ, որ չպատահեր նրան։ Համենայն դեպս՝ այդպես էր թվում Վրոնսկուն, ինչպես թվում է հիվանդ մատ ունեցող մարդուն, որ նա, կարծես դիտմամբ, ամեն բանի դիպչում է հենց այդ հիվանդ մատով։

Պետերբուրգում մնալը Վրոնսկուն թվում էր է՛լ ավելի ծանր, որ այդ ամբողջ ժամանակ նա տեսնում էր Աննայի մեջ ինչ-որ նոր, իր համար անհասկանալի տրամադրություն։ Աննան կարծես մերթ սիրահարված էր նրան, մերթ սառչում էր, դառնում դյուրաբորբոք և անթափանցելի։ Նա մի բանից տանջվում էր և ինչ-որ բան թաքցնում էր Վրոնսկուց ու կարծես չէր նկատում այն վիրավորանքները, որ թունավորում էին նրա կյանքը և պետք է ավելի ևս տանջալից լինեին Աննայի համար՝ ամեն ինչ հասկանալու իր նրբամտությամբ։

XXIX

Աննայի համար Ռուսաստան գալու նպատակներից մեկը որդու հետ տեսակցելն էր։ Այն օրից սկսած, երբ նա դուրս եկավ Իտալիայից, նրան անդադրում ալեկոծում էր այդ տեսակցության միտքը։ Եվ որքան ավելի էր մոտենում նա Պետերբուրգին, այնքան ավելի ու ավելի էր պատկերանում նրան այդ տեսակցության ցնծությունն ու կարևորությունը։ Նա անգամ հարց չէր տալիս իրեն, թե ինչպե՛ս պետք է դասավորի այդ տեսակցությունը։ Որդուն տեսնելը նրան թվում էր բնական ու հասարակ բան, երբ ինքը կլինի նրա հետ միևնույն քաղաքում. բայց Պետերբուրգ գալուց հետո նա հանկարծ պարզ պատկերացրեց իրեն իր այժմյան դրությունը հասարակության մեջ և հասկացավ, որ դժվար էր հաջողացնել տեսակցությունը։

Երկու օր էր, ինչ նա ապրում էր Պետերբուրգում։ Որդու մասին միտքը ո՛չ մի բոպե չէր թողնում նրան, բայց դեռ չէր տեսել նրան։ Գնալ ուղղակի տուն, որտեղ կարելի էր պատահել Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, նա զգում էր, որ իրավունք չուներ։ Կարող էին նրան ներս չթողնել ու վիրավորել։ Նրա համար տանջալից էր նույնիսկ մտածելը, որ գրի ամուսնուն և հարաբերության մեջ մտնի նրա հետ. նա կարող էր հանգիստ լինել միայն այն ժամանակ, երբ չէր մտածում ամուսնու մասին։ Տեսնել որդուն զբոսանքի միջոցին, իմանալով, թե ո՛ւր է և ե՛րբ է նա դուրս գնում, քիչ էր Աննայի համար. չէ՞ որ նա այնպես պատրաստվում էր այդ տեսակցությանը, այնքան շատ բան ուներ ասելու որդուն, այնպես ուզում էր գրկել, համբուրել նրան։ Սերյոժայի ծեր դայակը կարող էր օգնել և սովորեցնել Աննային։ Բայց դայակն այլևս Ալեքսեյ Ալեքսանդրովիչի տանը չէր։ Այս տատանումների և դայակին որոնելու, գտնելու մեջ անցավ երկու օր։

Իմանալով կոմսուհի Լիդիա Իվանովնայի հետ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտիկ հարաբերությունների մասին, Աննան երրորդ օրը վճռեց գրել կոմսուհուն՝ իրենից մեծ ջանք պահանջող նամակ, որի մեջ նա դիտմամբ ասում էր, թե որդուն տեսնելու թույլտվությունը պետք է կախված լինի ամուսնու մեծահոգությունից։ Նա գիտեր, որ եթե նամակը ցույց տան ամուսնուն, վերջինս շարունակելով իր վրա վերցրած մեծահոգության դերը, չի մերժի։

Նամակը տանող կոմիսիոները հաղորդեց նրան ամենադաժան ու նրա չսպասած պատասխանը, այսինքն՝ պատասխան չի լինի։ Նա երբեք իրեն չէր զգացել այնքան նվաստացած, ինչպես այն բոպեին, երբ կանչելով կոմիսիոներին, լսեց նրա մանրամասն պատմությունն այն մասին, թե ինչպե՛ս ինքն սպասում էր և ինչպե՛ս հետո իրեն ասացին՝ ո՛չ մի պատասխան չի լինի։ Աննան զգում էր իրեն նվաստացած, վիրավորված, բայց տեսնում էր, որ կոմսուհի Լիդիա Իվանովնան իրավացի էր իր տեսակետից։ Նրա վիշտն ուժեղ էր մանավանդ այն պատճառով, որ մենակ էր։ Նա չէր կարող և չէր ուզում իր վշտին հաղորդակից անել Վրոնսկուն։ Աննան գիտեր, որ որդու հետ տեսակցելու հարցը Վրոնսկու համար չափազանց անկարևոր բան էր, չնայած որ Աննայի դժբախտության գլխավոր պատճառը նա էր։ Աննան գիտեր, որ Վրոնսկին երբեք ի վիճակի չի լինի հասկանալու իր տառապանքների ամբողջ խորությունը. Աննան գիտեր, որ դրա մասին խոսք բանալիս՝ նրա

սառը տոնի համար ինքը կատի նրան։ Եվ Աննան աշխարհում ամենից ավելի վախենում էր դրանից, ուստի, ծածկում էր Վրոնսկուց այն բոլորը, ինչ վերաբերում էր որդուն։

Ամբողջ օրը նստած տանը, նա միջոցներ էր մտածում որդու հետ տեսակցելու համար և կանգ առավ ամուսնուն գրելու որոշման վրա։ Նա արդեն հորինում էր այդ նամակը, երբ բերին Լիդիա Իվանովնայի նամակը։ Կոմսուհու լռությունը հաշտեցրեց ու հնազանդեցրեց Աննային, բայց նամակը, այն ամենը, ինչ նա կարդաց նամակի տողերի արանքում, այնպես գրգռեց նրան, այնպես զայրացուցիչ թվաց նրան այդ շարությունը՝ որդու հանդեպ ունեցած իր օրինական բուռն քնքշության համեմատությամբ, որ նա վրդովվեց ուրիշների դեմ և դադարեց իրեն մեղադրելուց։

«Այդ սառնությունը զգացմունքի կեղծություն է,— ասում էր Աննան ինքն իրեն։— Նրանց հարկավոր է միայն վիրավորել ինձ ու տանջել երեխային, և ես պիտի հնազանդվե՞մ նրանց։ Ո՛չ մի կերպ։ Կոմսուհին ավելի վատ է ինձնից։ Համենայն դեպս՝ ես չեմ ստում»։ Եվ տեղնուտեղը վճռեց Աննան, որ հենց վաղը, Սերյոժայի ծննդյան օրը ուղղակի կգնա ամուսնու տուն, կկաշառի սպասավորներին, կխաբի, բայց ինչ էլ լինի՝ կտեսնի որդուն ու կխորտակի այդ այլանդակ խաբեությունը, որով նրանք շրջապատել են դժբախտ երեխային։

Աննան գնաց խաղալիքների խանութ, գնեց խաղալիքներ ու կազմեց գործողության ծրագիր։ Նա կգա վաղ առավոտյան, ժամը 8-ին, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հավանորեն դեռ վերկացած չի լինի, ձեռքին կունենա դրամ, որը կտա բարապանին ու լակեյին, որպեսզի նրանք ներս թողնեն իրեն, և առանց դիմաքողը բարձրացնելու, կասի, որ ինքը եկել է Սերյոժայի կնքահոր կողմից շնորհավորելու և որ իրեն հանձնարարված է՝ խաղալիքները դնել նրա մահճակալի մոտ։ Նա չէր պատրաստել միայն այն խոսքերը, որ կասի որդուն։ Ինչքան մտածում էր դրա մասին, ոչինչ չէր կարողանում հորինել։

Մյուս օրն առավոտյան ժամը ութին Աննան դուրս եկավ կառապանական կառքից և զանգահարեց իր նախկին տան գլխավոր մուտքի մեծ դռան զանգը։

— Գնա՛ տես, ի՞նչ են ուզում։ Մի տիկին է,— ասաց Կապիտոնիչը, դեռ չհագնված, վերարկուով ու կրկնակոշիկներով։

պատուհանից դուրս նայելով այն տիկնոջը, որ կանգնել էր հենց դռան մոտ, դեմքին քող։ Բարապանի օգնականը Աննային անծանոթ մի երիտասարդ, հենց որ դուռը բացեց, տիկինն անմիջապես ներս մտավ և մուֆտայից հանելով երեք ռուբլիանոց մի թղթադրամ, շտապ դրեց նրա ձեռքը։

— Սերյոժան... Սերգեյ Ալեքսեյիչը,— թոթովեց տիկինը և առաջ անցավ։ Չննելով թղթադրամը, բարապանի օգնականը կանգնեցրեց տիկնոջը մյուս ապակե դռան մոտ։

— Ո՞ւմ եք ուզում,— հարցրեց նա։

Աննան չլսեց նրա խոսքերը և ոչինչ չպատասխանեց։

Նկատելով անծանոթ կնոջ շփոթությունը, ինքը Կապիտոնիչը դուրս եկավ դեպի նա, թողեց, որ անցնի դռնից ու հարցրեց, թե ի՞նչ է կամենում։

— Իշխան Սկորոդումովի կողմից Սերգեյ Ալեքսեյեվիչին,— ասաց Աննան։

— Նա դեռ չի վեր կացել,— ուշադիր դիտելով ասաց բարապանը։

Աննան երբեք չէր սպասում, որ իր վրա այդպես ուժեղ տպավորություն կթողնի այն տան նախասենյակի բնավ չփոխված կահավորանքը, որտեղ ինքն ապրել էր ինը տարի։ Նրա հոգում բարձրացան հիշողություններ, իրար ետևից խնդագին ու տանջալից, և նա մի վայրկյան մոռացավ, թե ինչի՞ համար է ինքն այստեղ։

— Կբարեհաճեք սպասե՞լ,— հարցրեց Կապիտոնիչը, հանելով Աննայի մուշտակը։

Մուշտակը հանելուց հետո, Կապիտոնիչը նայեց նրա դեմքին, ճանաչեց և լուռ խոր գլուխ տվեց նրան։

— Համեցեք, ձերդ գերազանցություն,— ասաց Կապիտոնիչը նրան։

Աննան ուզում էր մի բան ասել, բայց ձայնը հրաժարվեց որևէ հնչյուն արտասանելուց. հանցավոր աղերսանքով նայելով ծերունուն, նա արագ, թեթև քայլերով գնաց դեպի սանդուղքը։ Ամբողջապես կոացած առաջ ու կրկնակոշիկներով կարթկելով աստիճանները, Կապիտոնիչը վազում էր նրա ետևից, աշխատելով առաջ անցնել։

— Ուսուցիչն այնտեղ է, կարող է հագնված չլինել։ Ես զեկուցեմ։

Աննան շարունակում էր բարձրանալ ծանոթ սանդուղքով, չհասկանալով այն, ինչ ասում էր ծերունին։

— Այս կողմը, համեցեք դեպի ձախ։ Ներեցե՛ք, որ մաքուր չէ։ Նրանք այժմ առաջվա բազմոցանոցումն են,— հևալով ասում էր բարապանը։— Կացե՛ք, մի քիչ սպասե՛ք, ձերդ գերազանցություն, ես նայեմ, տեսնեմ,— ասում էր Կապիտոնիչը և առաջ անցնելով Աննայից, բացեց բարձր դուռը ու չքացավ նրա ետևում։ Աննան կանգ առավ, սպասելով։— Նոր զարթնեց,— ասաց բարապանը, նորից դուրս գալով դռնից։

Եվ այն րոպեին, մինչ բարապանն ասում էր այդ, Աննան լսեց մանկական հորանջի ձայն։ Այդ հորանջի ձայնից հենց՝ նա ճանաչեց որդուն և կենդանույն տեսավ նրան իր առաջ։

— Թո՛ղ, թո՛ղ, գնա,— խոսեց Աննան ու ներս մտավ բարձրը դռնից։ Դռան աջ կողմում դրած էր մահճակալ և մահճակալի վրա, օձիքը բաց շապկով, նստել էր վեր կացած երեխան ու, մարմինը ծռած, ձիգ գալով, վերջացնում էր հորանջը։ Այն րոպեին, երբ նրա շուրթերը միանում էին իրար, նրանք գծագրեցին երջանիկ-քնկոտ մի ժպիտ, և այդ ժպիտով նա նորից դանդաղորեն ու քաղցրությամբ ետ ընկավ։

— Սերյո՜ժա,— շշնջաց Աննան, անլսելի քայլերով մոտենալով նրան։

Որդու հետ անջատման ժամանակամիջոցին ու սիրո այն ուժգին բռնկումի ժամանակ, որն Աննան մշտապես զգում էր վերջերս, նա որդուն երևակայում էր չորս տարեկան տղա, երբ Աննան ամենից ավելի էր սիրում նրան։ Այժմ Սերյոժան նույնիսկ այնպես չէր, ինչպես թողել էր նրան մայրը, նա ավելի հեռու էր գնացել չորս տարեկանից, ավելի աճել էր ու նիհարել։ Ի՜նչ բան է դա։ Ի՜նչ նիհար է նրա դեմքը, ի՜նչ կարճ են նրա մազերը։ Ի՜նչ երկար են ձեռները։ Ինչպե՜ս փոխվել է նա այն օրից, երբ ինքը թողեց նրան։ Բայց դա նա՛ էր իր գլխի ձևով, իր շուրթերով, իր փափուկ վզիկով ու լայն ուսիկներով։

— Սերյո՜ժա,— կրկնեց մայրը երեխայի ականջի տակ։

Մանկիկը բարձրացավ արմունկի վրա, շարժեց խճճված մազերով գլուխն աջ ու ձախ, կարծես մի բան որոնելով, և բացեց աչքերը։ Հանգիստ ու հարցական նա մի քանի վայրկյան նայեց իր դեմ անշարժ կանգնած մորը, ապա հանկարծ

երջանիկ ժպտաց ու նորից փակելով զոցվող աչքերը, ընկավ, բայց ո՛չ դեպի ետ, այլ դեպի մայրը, դեպի նրա ձեռքերը։

— Սերյո՜ժա, իմ սիրելի մանչո՜ւկ,— բացականչեց Աննան շնչակտուր ու ձեռքերով գրկելով նրա փամփլիկ մարմինը։

— Մայրի՜կ,— ասաց նա, շարժվելով մոր ձեռների տակ, որպեսզի իր մարմնի տարբեր մասերով դիպչի մոր ձեռներին։

Քնկոտ ժպտալով, տակավին աչքերը փակ, նա մահճակալի գլխից իր փամփլիկ ձեռներով բռնեց մոր ուսերը, ձգվեց դեպի նա, համակելով նրան այն հաճելի քնի հոտով ու ջերմությամբ, որ ունենում են երեխաները միայն, ու սկսեց նրեսով քսվել նրա վզին և ուսերին։

— Ես գիտեի,— ասաց Սերյոժան, բանալով աչքերը։— Այսօր իմ ծննդյան տոնն է։ Ես գիտեի, որ դու կգաս։ Ես իսկույն վեր կկենամ։

Եվ ասելով այդ, նրա քունը տանում էր։

Աննան ագահաբար դիտում էր որդուն։ Աննան տեսնում էր, թե ինչպե՜ս նա աճել է և փոխվել իր բացակայության ընթացքում։ Նա ճանաչում էր և չէր ճանաչում որդու մերկ, այժմ այնպես մեծ ոտները, որ դուրս էին եկել վերմակի տակից, ճանաչում էր այդ նիհարած այտերը՝ այդ կտրված մազերի կարճ խոպոպիկները ծոծրակին, որը նա այնպես հաճախ համբուրում էր։ Նա շոշափում էր այդ բոլորը և չէր կարողանում ոչինչ ասել. արցունքները խեղդում էին նրան։

— Ինչո՞ւ ես լալիս, մայրիկ,— ասաց Սերյոժան, բոլորովին զարթնելով։— Մայրիկ, ինչո՞ւ ես լալիս,— բղավեց նա լացակումած ձայնով։

— Ե՞ս. ես լաց չեմ լինի... Ես լալիս եմ ուրախությունից։ Ես այնքան վաղո՜ւց չեմ տեսել քեզ։ Ես չե՜մ լա, չե՜մ լա,— ասաց Աննան արցունքները կուլ տալով և շուտ գալով։— Է՜հ, հիմա քո հագնվելու ժամանակն է,— ավելացրեց մայրը սթափվելով և լռեց ու բաց չթողնելով նրա ձեռքը, նստեց մահճակալի մոտ դրված աթոռին, որի վրա պատրաստել էին նրա շորերը։

— Ո՞նց ես հագնվում դու առանց ինձ։ Ո՞նց...— ուզում էր ասել Աննան պարզ և ուրախ, բայց չկարողացավ ու նորից շուտ եկավ։

— Ես չեմ լվացվում սառը ջրով. հայրիկը թույլ չի տալիս։ Իսկ Վասիլիյ Լուկիչին դու չե՞ս պեսել։ Նա կգա։ Դու նստեցիր իմ շորերի վրա։

Եվ Սերյոժան քրքջաց։ Մայրը նայեց նրան ու ժպտաց։

— Մայրի՜կ, հոգյա՜կս, աղավնյա՜կս,— բղավեց նա, նետվելով նորից դեպի մայրը և գրկելով նրան։ Կարծես նա հիմա միայն, տեսնելով մոր ժպիտը, պարզ հասկացավ, թե ի՞նչ է պատահել։— Սա պետք չի,— ասում էր նա, հանելով մոր գլխարկը։ Եվ կարծես թե նորից տեսնելով մորն առանց գլխարկի, նորից վրա ընկավ նրան ու սկսեց համբուրել։

— Ի՞նչ էիր մտածում իմ մասին։ Դու չէի՞ր կարծում, որ ես մեռել եմ։

— Երբեք չէի հավատում։

— Չէի՞ր հավատում, իմ մանչուկ։

— Ես գիտեի, ես գիտեի,— կրկնում էր Սերյոժան իր սիրած ֆրազը և բռնելով մոր ձեռքը, որը շոյում էր նրա մազերը, սկսեց մոր ափը սեղմել իր բերանին ու համբուրել այն։

XXX

Մինչդեռ Վասիլիյ Լուկիչը,— որն սկզբում չէր հասկանում, թե ո՞վ էր այդ տիկինը, և խոսակցությունից իմանալով, որ դա ամուսնուն լքած այն մայրն է, որին ինքը չէր ճանաչում, որովհետև տուն էր մտել նրա գնալուց հետո,— տարակուսանքի մեջ էր, չիմանալով, արդյոք նե՞րս մտնի, թե ոչ, թե՞ հայտնի Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Մտածելով վերջապես, որ իր պարտականությունն է՝ վերկացնել Սերյոժային որոշված ժամին, և որ այդ պատճառով ինքը կարիք չունի քննելու, թե ո՞վ է այնտեղ նստել, մա՞յրիկը, թե մեկ ուրիշը, այլ պետք է կատարի իր պարտականությունը, հագնվեց, մոտեցավ ու բացեց դուռը։

Բայց մոր ու որդու գուրգուրանքները, նրանց ձայների հնչյունները և այն, ինչ ասում էին նրանք, ստիպեցին նրան փոխելու իր դիտավորությունը։ Նա գլուխն օրորեց և հառաչելով, ծածկեց դուռը։ «Կսպասեմ էլի տասը րոպե», ասաց նա ինքն իրեն, հազալով ու սրբելով արցունքները։

Այդ նույն ժամանակ տան սպասավորները մեծ ալեկոծության մեջ էին։ Ամենքը գիտեին, որ եկել է տիկինը, որ Կապիտոնիչը ներս է թողել նրան, և որ նա այժմ մանկասենյակում է, մինչդեռ պարոնը միշտ իններորդ ժամին ինքը մտնում է մանկասենյակ, և ամենքը հասկանում էին, որ անհնարին է ամուսինների հանդիպումը և որ պետք է խափանել այդ հանդիպումը։ Կամերդիներ Կոռնեյը իջնելով բարապանի խուցը, հարցնում էր, թե տիկնոջն ո՞վ է ներս թողել ու ինչպե՞ս, և իմանալով, որ Կապիտոնիչն է ընդունել ու առաջնորդել նրան, հանդիմանում էր ծերունուն։ Բարապանը համառորեն լուռ էր, բայց երբ Կոռնեյն ասաց նրան, թե դրա համար նրան վռնդել է պետք, Կապիտոնիչը արագ մոտեցավ նրան և ձեռքերը թափահարելով Կոռնեյի երեսի առաջ, ասաց.

— Հա՜, դու ներս չէիր թողնի։ Տասը տարի ծառայել եմ և բացի շնորհից ուրիշ բան չեմ տեսել, ու հիմիկ ես պիտի դնայի ու ասեի, թե համեցեք, դուրս գնացեք։ Դու քաղաքականություն լավ ես հասկանում։ Խո՜սք չկա։ Լավ կլիներ, որ դու քոնը հիշեիր, թե ո՛նց ես թալանում պարոնին և հեռուտի մուշտակներ թոցնում։

— Սալդա՜թ,— արհամարհանքով ասաց Կոռնեյը և շուտ եկավ դեպի ներս մտած դայակը։— Ա՜յ, դո՜ւք դատ արեք, Մարիա Եֆիմովնա. ներս է թողել, ոչ ոքի բան չի ասել,— դիմեց նրան Կոռնեյը։— Հիմա դուրս կգա Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, կգնա մանկասենյակ։

— Ա՜յ քեզ բան, ա՜յ քեզ բան,— հառաչեց դայակը։— Կոռնեյ Վասիլևիչ, գուցե դուք մի կերպ պահեիք, ուշացնեիք նրան՝ պարոնին, իսկ ես վազեմ, մի կերպ դուրս բերեմ տիկնոջը։ Ա՜յ քեզ բան, ա՜յ քեզ բան։

Երբ դայակը մտավ մանկասենյակ, Սերյոժան պատմում էր մորը, թե ինչպես ինքը՝ Նադենկայի հետ ընկան, գլորվելով սարից ու երեք անգամ թավալգոր եղան։ Մայրը լսում էր որդու ձայնի հնչյունները, տեսնում էր նրա դեմքը և դեմքի արտահայտության խաղերը, զգում էր նրա ձեռքը, բայց չէր հասկանում այն, ինչ ասում էր նա։ Պետք էր դուրս գնալ, հեռանալ, պետք էր թողնել նրան,— ահա միակ բանը, որ մտածում ու զգում էր Աննան։ Նա լսեց և՛ Վասիլիյ Լուկիչի քայլերը, որը մոտեցավ դռանն ու հազաց, լսեց և՛ մոտեցող

դայակի քայլերը, բայց նստել էր քարացածի պես, անկարող էր ո՛չ խոսել, ո՛չ վեր կենալ։

— Տիկի՜ն, աղունի՜կս,— խոսեց դայակը, մոտենալով Աննային և համբուրելով նրա ուսերն ու ձեռները։— Ա՜յ, աստված ուրախություն ուղարկեց մեր նորածնին։ Դուք իսկի չեք ֆիոխվել։

— Ա՜խ, սիրելի դայակ, ես չգիտեի, որ դուք տանն եք,— ասաց Աննան, մի բոպե սթափվելով։

— Ես այստեղ չեմ ապրում, ես ապրում եմ աղջկաս հետ, ես եկա շնորհավորելու։ Աննա Արկադևնա, աղունի՜կս։

Դայակը հանկարծ լաց եղավ ու նորից սկսեց համբուրել նրա ձեռքը։

Սերյոժան, աչքերը փայլուն, դեմքին վառ ժպիտ, մի ձեռքով բռնած մորը, մյուսով՝ դայակին, դոփում էր գորգը իր գիրուկ, մերկ ոտներով։ Սիրելի դայակի քնքշությունը մոր նկատմամբ հիացք էր պատճառում նրան։

— Մայրի՜կ, նա հաճախ է գալիս ինձ մոտ և երբ գալիս է...— սկսեց Սերյոժան, բայց կանգ առավ, նկատելով, որ դայակը շշուկով ինչ-որ բան ասաց մորը, և որ մոր դեմքին արտահայտվեց վախ ու ամոթի պես մի բան, որն այնպես չէր սազում մորը։

Մայրը մոտեցավ նրան։

— Սիրելիդ իմ,— ասաց Աննան։

Նա չկարողացավ ասել՝ մնաս բարով, բայց նրա դեմքի արտահայտությունն ասաց այդ, և Սերյոժան հասկացավ։— Սիրելի, սիրելի Կուտիկ,— արտասանեց նա այն անունը, որով կանչում էր որդուն՝ փոքր ժամանակ,— դու չես մոռանա ինձ։ Դու...— բայց նա այլևս չկարողացավ խոսել։

Հետո Աննան ինչքա՜ն բառեր էր մտահղանում, որ կարող էր ասել նրան։ Իսկ հիմա նրա մտքին ոչինչ չէր գալիս ու չէր կարող ոչինչ ասել։ Բայց Սերյոժան հասկացավ բոլորը, ինչ ուզում էր մայրն ասել նրան։ Նա հասկացավ, որ մայրը դժբախտ էր և սիրում էր նրան։ Նա հասկացավ նույնիսկ այն, ինչ ասում էր դայակը շշուկով։ Նա լսեց՝ «միշտ իններորդ ժամին» խոսքերը և հասկացավ, որ դա ասվում էր հոր մասին և որ չի կարելի իր մոր ու հոր հանդիպումը։ Դա հասկացավ նա, բայց մի բան չէր կարողանում հասկանալ. ինչո՞ւ

մոր երեսին արտահայտվեց վախ և ամոթ... Մայրը մեղավոր չէ, բայց վախենում է հորից և ամաչում է ինչ-որ բանից։ Նա ուզում էր հարց տալ՝ որը կփարատեր իր կասկածը, սակայն չհամարձակվեց այդ անել. նա տեսնում էր, որ մայրը տանջվում է, և նա խղճում էր մորը։ Նա լուռ կպավ մորը և շշուկով ասաց.

— Դեռ մի՛ գնա։ Նա շուտ չի գա։

Մայրը հեռացրեց նրան իրենից, որպեսզի հասկանա, արդյո՞ք նա մտածում է այն, ինչ ասում է, և նրա դեմքի վախեցած արտահայտության մեջ կարդաց, որ նա ո՛չ միայն ասում էր հոր մասին, այլև կարծես հարցնում էր մորը, թե ինչպե՞ս պետք է ինքը մտածի հոր մասին։

— Սերյոժա, սիրելիս,— ասաց մայրը,— սիրիր նրան, նա ավելի լավ և ավելի բարի է ինձնից, ու ես մեղավոր եմ նրա առաջ։ Երբ մեծանաս, կկշռադատես։

— Քեզնից լավը չկա,— հուսահատությամբ բղավեց Սերյոժան, արցունքը աչքերին և բռնելով մոր ուսերից, սկսեց լարվածությունից դողդողուն ձեռներով ամբողջ ուժով սեղմել մորն իր կրծքին։

— Հոգյա՜կս, իմ փոքրի՜կս,— թոթովեց Աննան և լաց եղավ նույնպես թլկուկ, մանկան նման, ինչպես լալիս էր Սերյոժան։

Այդ ժամանակ դուռը բացվեց, մտավ Վասիլիյ Լուկիչը։ Սյուս դռան մոտ լսվեցին քայլեր, և դայակը վախեցած շշինջով ասաց. «գալիս է», ու գլխարկը տվեց Աննային։

Սերյոժան ընկավ անկողնին ու հեկեկաց՝ դեմքը ծածկած ձեռներով։ Աննան վերցրեց այդ ձեռները, մի անգամ էլ համբուրեց նրա թաց երեսը և արագ քայլերով դուրս գնաց դռնից։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գալիս էր նրան ընդառաջ։ Տեսնելով կնոջը, նա կանգ առավ ու խոնարհեց գլուխը։

Չնայած որ Աննան հենց նոր ասում էր, թե նա ավելի լավ և ավելի բարի է իրենից, բայց արագ մի հայացք, որ նա գցեց ամուսնու վրա, ընդգրկելով նրա ամբողջ ֆիգուրն իր բոլոր մանրամասներով, և նրան համակեց դեպի ամուսինը տածած զզվանքի ու զայրույթի և որդու համար նախանձի զգացում։ Նա արագ շարժումով իջեցրեց դիմաքողը և քայլերն ավելացնելով, համարյա դուրս վազեց սենյակից։

Նա ժամանակ չունեցավ նույնիսկ հանելու խաղալիքները, որ այնպիսի սիրով ու թախիծով ընտրում էր երեկ խանութում և այդպես էլ տուն բերեց դրանք։

XXXI

Ինչքան էլ սաստիկ ցանկանում էր Աննան տեսակցել որդու հետ, ինչքան վաղուց մտածում էր դրա մասին ու պատրաստվում էր դրա համար, նա ո՛չ մի կերպ չէր սպասում, որ այդ տեսակցությունն այդքան ուժեղ կազդի իր վրա։ Վերադառնալով իր մենավոր բաժանմունքը հյուրանոցում, նա երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ է ինքն այստեղ։ «Այո՛, այս բոլորը վերջացավ, ու ես նորից մենակ եմ», ասաց նա ինքն իրեն և առանց գլխարկը հանելու նստեց բուխարու մոտ դրած բազկաթոռին։ Անշարժ աչքերը հառած բրոնզե ժամացույցին, որ դրված էր պատուհանների միջև եղած սեղանի վրա, նա սկսեց մտածել։

Ֆրանսուհի աղախինը, որին բերել էին արտասահմանից, ներս մտավ և առաջարկեց հագնվել։ Աննան զարմանքով նայեց նրան ու ասաց.

— Հետո՛։

Սպասավորն առաջարկեց սուրճ։

— Հետո՛,— ասաց նա։

Ծծմայր իտալուհին, հարդարելով աղջկան, մտավ նրա հետ և մոտեցրեց նրան Աննային։ Թխլիկ, լավ կերակրած աղջիկը, ինչպես միշտ, տեսնելով մորը, շուտ տվեց բալուկներին թել կապած ձեռները ափով դեպի ներքև ու ժպտալով իր անատամ փոքրիկ բերանով, սկսեց թիավարել թաթիկներով, ինչպես ձուկը լողաններով, խշշացնելով նրանցով ասեղնագործած շրջազգեստի օսլայած ծալքերը։ Չէր կարելի չժպտալ, չհամբուրել աղջկան, չէր կարելի դեմ չանել նրան մատը, որը նա բռնեց, թպրտալով ամբողջ մարմնով ու ծղրտալով. չէր կարելի դեմ չանել նրան շրթունքը, որը նա առավ իր փոքրիկ բերանը, համբույրի ձևով։ Ու այս բոլորն արավ Աննան. և՛ վերցրեց նրան իր ձեռքերի վրա, և՛ ստիպեց նրան թռչկոտել, և՛ համբուրեց նրա թարմ թուշն ու մերկ արմունկները, բայց տեսնելով այդ երեխային, Աննայի համար է՛լ

ավելի պարզ դարձավ, թե այն զգացումը, որ ինքը տածում էր դեպի այս փոքրիկ արարածը, նույնիսկ սեր չէր այն զգացման համեմատությամբ, որ տածում էր նա դեպի Սերյոժան։ Ամեն ինչ այդ աղջկա մեջ անուշ էր, բայց այս բոլորը, ինչ-որ պատճառով, սիրտ չէր գրավում։ Առաջին երեխայի վրա, թեպետև չսիրած տղամարդուց, դրվել էր չբավարարված սիրո ամբողջ ուժը. աղջիկը ծնվել էր ամենածանր պայմաններում, և նրա վրա դրված չէր այն խնամքի մեկ հարյուրերորդ մասն անգամ, որ դրված էր եղել առաջինի վրա։ Բացի դրանից, աղջկա մեջ ամեն բան դեռ ակնկալություն էր, իսկ Սերյոժան արդեն համարյա մարդ էր և սիրելի մարդ. նրա մեջ արդեն պայքարում էին մտքերը, զգացմունքները. նա հասկանում էր, նա սիրում էր, նա դատում էր մորը,— մտածում էր Աննան, հիշելով որդու խոսքերն ու հայացքները։ Եվ ինքը ո՛չ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես բաժանված էր նրանից, ու ոչ մի կերպ չէր կարելի ուղղել այդ։

Աննան աղջկան տվեց ծծմորը, արձակեց նրան ու բացեց մեդալյոնը, որի մեջ գտնվում էր Սերյոժայի դիմանկարը, երբ նա համարյա նույն հասակին էր, ինչպես և աղջիկը։ Նա կանգնեց ու գլխարկը հանելով, վերցրեց սեղանից ալբոմը, որի մեջ կային որդու լուսանկարները՝ տարբեր տարիքի. Նա ուզում էր համեմատել նկարները և սկսեց դրանք հանել ալբոմից։ Հանեց բոլորը։ Մնում էր մեկը, վերջին լավագույն լուսանկարը։ Սերյոժան սպիտակ շապկով նստել էր աթոռին՝ հեծած, աչքերը խոժոռել էր և ժպտում էր բերանով։ Դա նրա ամենաառանձնահատուկ, լավագույն արտահայտությունն էր։ Փոքրիկ, հարպիկ ձեռներով, որոնք այժմ առանձնապես լարված շարժվում էին իրենց սպիտակ, բարակ մատներով, նա մի քանի անգամ բռնեց լուսանկարի անկյունից, բայց նկարը գայթում էր, և նա չէր կարողանում հանել այն։ Թղթահատ դանակը սեղանի վրա չէր, և նա հանելով կողքի լուսանկարը (դա Վոռնսկու նկարն էր Հռոմում նկարված, կլոր գլխարկով ու երկար մազերով), նրանով հրեց, հանեց որդու նկարը։ «Այո՛, ահա նա»,— ասաց Աննան, նայելով Վռոնսկու լուսանկարին, և հանկարծ հիշեց, թե ո՛վ էր իր այժմյան վշտի պատճառը։ Նա այս ամբողջ առավոտ ո՛չ մի անգամ

չէր մտաբերել Վրոնսկուն։ Բայց այժմ հանկարծ, տեսնելով այդ առնական, ազնիվ, իրեն այնքան ծանոթ ու սիրելի դեմքը, Աննան անակնկալ կերպով զգաց սիրո բուռն բորբոքում դեպի նա։

«Հապա որտե՞ղ է նա։ Հապա ինչպե՞ս է նա ինձ թողնում մենակ իմ տառապանքների հետ», հանկարծ մտածեց Աննան հանդիմանության զգացումով, մոռանալով, որ ինքն է ծածկել նրանից որդուն վերաբերող ամեն ինչ։ Նա մարդ ուղարկեց Վրոնսկու մոտ ու խնդրեց՝ անմիջապես գալ. Աննան սպասում էր նրան սրտի նվաղումով, մտածելով այն խոսքերը, որոնցով կասի նրան ամեն բան, նաև նրա սիրո այն արտահայտությունները, որոնք կմխիթարեն իրեն։ Ուղարկվածը վերադարձավ, պատասխան բերելով, որ նա հյուր ունի, բայց որ իսկույն կգա և հրամայեց հարցնել՝ արդյոք կարո՞ղ է Աննան ընդունել նրան՝ Պետերբուրգ եկած իշխան Յաշվինի հետ։ «Մենակ չի գա, այնինչ՝ երեկվա ճաշից հետո դեռ չի տեսել ինձ,— մտածեց Աննան.— չի գա այնպես, որ ես կարողանամ ամեն բան ասել նրան, այլ կգա Յաշվինի հետ»։ Եվ հանկարծ Աննայի գլուխն եկավ տարօրինակ միտք. իսկ եթե նա այլևս չի՞ սիրում ինձ։

Եվ քննելով վերջին օրերի դեպքերը, Աննային թվում էր, թե ամեն բանում ինքը տեսնում էր այդ սոսկալի մտքի հաստատումը. և՛ այն, որ նա երեկ չճաշեց տանը, և՛ այն, որ նա պնդեց, որպեսզի իրենք Պետերբուրգում ապրեն առանձին, և՛ այն, որ նա նույնիսկ այժմ գալիս էր իր մոտ ո՛չ մենակ, կարծես խուսափելով դեմառդեմ տեսակցությունից։

«Բայց նա պետք է այդ մասին ասի ինձ։ Ես պիտի իմանամ այդ։ Եթե ես իմանամ դա, ես գիտեմ, թե ի՛նչ կանեմ», ասում էր ինքն իրեն Աննան, անկարող պատկերացնելու այն դրությունը, որի մեջ կլինի ինքը, եթե համոզվի նրա անտարբերության մեջ։ Աննան կարծում էր, որ Վրոնսկին այլևս չի սիրում իրեն, նա զգում էր, որ ինքը մոտ է հուսահատության, այդ իսկ պատճառով նա իրեն զգաց առանձնապես դրդված։ Նա զանգահարեց, կանչեց աղախնին ու գնաց հարդարան։ Հագնվելով, նա զբաղվեց իր տուալետով ավելի, քան այս ամբողջ օրերը, կարծես թե Վրոնսկին կարող էր, իրեն չսիրելուց հետո, նորից սիրել, եթե ինքը լինի այն զգեստով և այն սանրվածքով, որոնք ավելի էին սազում իրեն։

Երբ նա լսեց զանգի ձայնը, դեռ պատրաստ չէր։

Երբ նա մտավ ընդունարան, ո՛չ թե Վրոնսկին, այլ Յաշվինը պատահեց նրան իր հայացքով։ Յաշվինը նայում էր նրա որդու լուսանկարները, որոնք նա մոռացել էր սեղանին, ու չշտապեց նայել Աննային։

— Մենք ծանոթ ենք,— ասաց Աննան, դնելով իր փոքրիկ ձեռքը շփոթված Յաշվինի հսկայական ձեռքի մեջ (շփոթում, որ այնքան տարօրինակ էր, նկատի ունենալով նրա վիթխարի հասակը և կոպիտ դեմքը)։ — Ծանոթ ենք անցյալ տարվանից, ձիարշավի ժամանակից։ Տվե՛ք,— ասաց նա, փայլուն աչքերով նշանակալից զննելով Վրոնսկուն և արագ շարժումով վերցնելով նրանից որդու լուսանկարները, որ նայում էր նա։— Այս տարի լա՞վ էին ձիարշավները։ Դրանց փոխարեն ես ձիարշավներ տեսա Կորսոյում՝ Հռոմում։ Սակայն դուք չեք սիրում արտասահմանյան կյանքը,— ասաց Աննան սիրալիր ժպիտով։ — Ես գիտեմ ձեզ, գիտեմ և ձեր ճաշակն ամեն բանի վերաբերյալ, թեպետ մենք քիչ ենք պատահել իրար։

— Շատ ցավում եմ, որովհետև իմ ճաշակը մեծ մասամբ վատ է,— ասաց Յաշվինը, կծելով իր ձախ բեղը։

Խոսելով միառժամանակ և նկատելով, որ Վրոնսկին նայեց ժամացույցին, Յաշվինը հարցրեց Աննային, արդյոք դեռ երկա՞ր կմնա Պետերբուրգում և կորացնելով իր վիթխարի ֆիգուրը, վերցրեց կեպին։

— Կարծեմ, ո՛չ երկար,— ասաց Աննան շփոթությամբ, նայելով Վրոնսկուն։

— Ուրեմն այլևս չե՞նք տեսնվի,— ասաց Յաշվինը, վեր կենալով ու դիմելով Վրոնսկուն։ — Որտե՞ղ ես ճաշում դու։

— Եկեք ճաշին ինձ մոտ,— վճռականապես ասաց Աննան, կարծես բարկացած ինքն իր վրա իր շփոթության համար, բայց կարմրելով, ինչպես միշտ, երբ ցույց էր տալիս իր դրությունը նոր մարդու առաջ։ — Այստեղի ճաշը լավ չի, բայց համենայն դեպս՝ դուք կտեսնվեք նրա հետ։ Ալեքսեյը գնդի իր բոլոր ընկերներից ոչ ոքի այնպես չի սիրում, ինչպես ձեզ։

— Շատ ուրախ եմ,— ասաց Ցաշվինը ժպիտով, որից Վրոնսկին տեսավ, որ Աննան շատ դուր եկավ նրան։

Ցաշվինը գլուխ տվեց ու դուրս գնաց, Վրոնսկին մնաց ետևում։

— Դու է՞լ ես գնում,— հարցրեց Աննան նրան։

— Ես արդեն ուշացա,— պատասխանեց նա։ — Գնա՛։ Ես կհասնեմ քեզ,— բղավեց նա Ցաշվինի ետևից։

Աննան վերցրեց նրա ձեռքը և աչքերը չհեռացնելով նրանից, նայում էր նրան, միտք անելով, թե ի՞նչ ասի, որ պահի նրան։

— Կա՛ց, ես ասելու բան ունեմ քեզ,— ու վերցնելով նրա կարճ ձեռքը, Աննան սեղմեց այն իր վզին։ — Հա՛, ոչի՞նչ, որ ես նրան կանչեցի ճաշի։

— Շատ լավ արիր,— ասաց նա հանգիստ ժպիտով, բանալով իր խիտ ատամները և համբուրելով Աննայի ձեռքը։

— Ալեքսեյ, դո՛ւ չե՞ս փոխվել իմ նկատմամբ,— հարցրեց Աննան, երկու ձեռքով սեղմելով նրա ձեռքը։ — Ալեքսեյ, ես տանջվեցի այստեղ։ Ե՞րբ ենք գնում։

— Շուտով, շուտով։ Դու չես հավատա, թե ինչպե՛ս ինձ համար էլ ծանր է մեր կյանքն այստեղ,— ասաց նա և քաշեց իր ձեռքը։

— Դե՛, գնա, գնա՛,— վիրավորված ասաց Աննան և արագ դուրս գնաց։

XXXII

Երբ Վրոնսկին վերադարձավ տուն, Աննան դեռ տանը չէր։ Վրոնսկու գնալուց հետո, ինչպես ասացին նրան, Աննայի մոտ եկավ ինչ-որ տիկին, որի հետ միասին դուրս գնացին։ Այն, որ Աննան գնացել էր առանց ասելու, թե ո՛ւր, այն, որ նա մինչև այժմ չկար, այն, որ նա առավոտյան էլ գնացել էր ինչ-որ տեղ, ոչինչ չասելով Վրոնսկուն,— այս բոլորը, միացած այսօր առավոտյան նրա դեմքի տարօրինակ գրգռված արտահայտության և այն թշնամական տոնին, որով Աննան Ցաշվինի ներկայությամբ համարյա խլեց Վրոնսկու ձեռքից որդու լուսանկարները,— ստիպեցին նրան մտասուզվել։ Նա վճռեց, որ անհրաժեշտ է բացատրվել Աննայի հետ։ Եվ նա

նոպասում էր Աննային նրա ընդունարանում։ Բայց Աննան վերադարձավ ո՛չ մենակ, այլ բերեց իր հետ իր հորաքրոջը, պառաված օրիորդ՝ իշխանազնուհի Օբլոնսկայային։ Դա հենց նա՛ էր, որ եկել էր առավոտյան և որի հետ Աննան գնացել էր գնումներ անելու։ Աննան կարծես չէր նկատում Վրոնսկու դեմքի արտահայտությունը, մտահոգված ու հարցական, և ուրախ պատմում էր նրան, թե ի՛նչ է դնել ինքն այսօր առավոտյան։ Վրոնսկին տեսնում էր, որ Աննայի մեջ կատարվում է առանձնահատուկ մի բան. նրա փայլուն աչքերում, երբ սրանք հարևանցիորեն կանգ առան Վրոնսկու վրա, կար լարված ուշադրություն, և նրա խոսելու ու շարժումների մեջ կար այն ջղային արագությունն ու նազելիությունը, որոնք այնպես գրավում էին Վրոնսկուն՝ իրենց ծանոթության առաջին շրջանում, իսկ հիմա անհանգստացնում ու վախեցնում էին։

Սեղանը գցած էր չորս մարդու համար։ Ամենքն արդեն պատրաստվել էին գնալու փոքրիկ սեղանատուն, երբ իշխանուհի Բետսիի հանձնարարությամբ Տուշկևիչը եկավ Աննայի մոտ։ Իշխանուհի Բետսին խնդրում էր ներել իրեն, որ ինքը չեկավ հրաժեշտ տալու. նա տկար էր և խնդրում էր Աննային՝ գալ իր մոտ ժամը վեցկեսի ու ինների միջև։ Վրոնսկին նայեց Աննային այդ ժամորոշումը լսելիս, որը ցույց էր տալիս, թե միջոցներ են ձեռք առնված, որպեսզի նա ոչ ոքի չպատահի, բայց Աննան կարծես չնկատեց այդ։

— Շատ ափսո՛ս, որ ես հատկապես չեմ կարող վեցուկեսի և ինների միջև,— ասաց Աննան, աննկատելի ժպիտով։

— Իշխանուհին շատ կափսոսա։

— Ես նույնպես։

— Դուք երևի գնում եք Պատտիին,— ասաց Տուշկևիչը։

— Պատտիի՞ն։ Դուք լավ միտք եք տալիս ինձ։ Ես կգնայի, եթե կարելի լիներ օթյակ ճարել։

— Ես կարող եմ ճարել,— առաջարկեց Տուշկևիչը։

— Ես շատ ու շատ շնորհապարտ կլինեմ ձեզ,— ասաց Աննան։— Չէի՞ք կամենա ճաշել մեզ հետ։

Վրոնսկին հազիվ նկատելի կերպով վեր քաշեց ուսերը։ Նա վճռականապես չէր հասկանում, թե ի՛նչ էր անում Աննան։ Ինչո՞ւ նա բերեց այդ պառավ իշխանազնուհուն, ինչո՞ւ էր ճաշի պահում Տուշկևիչին և, որ ամենից զարմանալին էր,

ինչո՞ւ էր նրան ուղարկում օթյակի։ Նրա վիճակում մի՞թե հնարավոր էր մտածել՝ Պատտիի աբոնեմենտի օրը գնալ թատրոն, որտեղ կլինի նրան ծանոթ ամբողջ բարձր հասարակությունը։ Վրոնսկին լուրջ հայացքով նայեց Աննային, բայց վերջինս պատասխանեց նրան միևնույն գրգռիչ՝ ոչ այն է ուրախ, ոչ այն է՝ հուսահատական հայացքով, որի նշանակությունը Վրոնսկին չէր կարողանում հասկանալ։ Ճաշի ժամանակ Աննան հարձակողական ուրախ էր. նա կարծես կոկետություն էր անում և՛ Տուշկևիչի, և՛ Յաշվինի հետ։ Երբ ճաշից վերկացան, ու Տուշկևիչը գնաց օթյակի, իսկ Յաշվինը գնաց ծխելու, Վրոնսկին նրա հետ իջավ ներքև՝ իր բաժանմունքը։ Մի փոքր նստելուց հետո նա բարձրացավ վերև։ Աննան արդեն հագել էր թավշախառն բաց մետաքսե զգեստ, որը նա կարել էր տվել Փարիզում, բաց կրծքով, գլխին սպիտակ թանկագին ժանյակ, որ երիզավորում էր նրա դեմքը և առանձնապես շահեկանորեն ցուցադրում նրա պայծառ գեղեցկությունը։

— Իսկապես դուք գնալո՞ւ եք թատրոն,— ասաց Վրոնսկին, աշխատելով չնայել նրան։

— Ինչո՞ւ եք այդպես վախեցած հարցնում, —ասաց Աննան, նորից վիրավորված այն բանից, որ նա չէր նայում իրեն։— Ինչո՞ւ չպիտի գնամ։

Աննան կարծես չէր հասկանում նրա խոսքերի նշանակությունը։

— Իհա՛րկե, ո՛չ մի պատճառ չկա,— խոժոռվելով ասաց Վրոնսկին։

— Հենց նույնն էլ ես եմ ասում,— ասաց Աննան, դիտմամբ չհասկանալով նրա հեգնական տոնը և հանգիստ փաթաթելով անուշաբույր երկար ձեռնոցը։

— Աննա՛, ի սեր աստծո. ի՞նչ է եղել ձեզ,— ասաց Վրոնսկին, զգաստացնելով նրան ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ ասում էր նրան նրա ամուսինը։

— Չեմ հասկանում, թե ինչի՛ մասին եք հարցնում։

— Դուք գիտեք, որ չի՛ կարելի գնալ։

Ինչո՞ւ ես կգնամ ո՛չ մենակ։ Իշխանազնուհի Վարվառան գնաց հագնվելու, նա կգա ինձ հետ։

Վրոնսկին ուսերը վեր քաշեց տարակուսանքով և հուսահատությամբ։

— Բայց մի՞թե դուք չգիտեք...— սկսեց նա։

— Եվ չեմ էլ ուզում իմանալ,— համարյա ճչաց Աննան։— Չեմ ուզում։ Չղջո՞ւմ եմ իմ արածի համար։ Ո՛չ, ո՛չ ու ո՛չ։ Եվ եթե նույն բանը նորից սկսվեր, էլի կլիներ նույնը։ Մեզ համար, այսինքն՝ ինձ ու ձեզ համար կարևոր է միայն մի բան. արդյոք սիրո՞ւմ ենք մենք իրար։ Իսկ ուրիշ նկատառումներ չկան։ Մենք ինչո՞ւ ենք այստեղ ապրում առանձին-առանձին և չենք տեսնվում։ Ինչո՞ւ չեմ կարող գնալ։ Ես սիրում եմ քեզ, և ինձ համար միևնույնն է, եթե դու չես փոխվել,— ասաց Աննան ռուսերեն, նայելով նրան իր աչքերի առանձին՝ նրա համար անհասկանալի փայլով։— Ինչո՞ւ դու չես նայում ինձ։

Վրոնսկին նայեց նրան։ Նա տեսավ Աննայի դեմքի և շքեղ հագուստի ամբողջ գեղեցկությունը, հագուստի, որ միշտ այնպես սազում էր նրան։ Բայց այժմ նրա գեղեցկությունը և էլեգանտ տեսքը հենց այն բանն էր, որ գրգռում էր Վրոնսկուն։

— Իմ զգացումը չի՛ կարող փոխվել, դուք գիտեք այդ. բայց ես խնդրում եմ չգնալ, աղաչում եմ ձեզ,— ասաց Վրոնսկին նորից ֆրանսերեն՝ ձայնի մեջ քնքուշ աղերս, հայացքի մեջ սառնություն։

Աննան բառերը չէր լսում, բայց տեսնում էր նրա հայացքի սառնությունը և գրգռված պատասխանում.

— Իսկ ես խնդրում եմ ձեզ հայտնել, թե ինչո՛ւ չպետք է գնամ։

— Որովհետև դա կարող է ձեզ պատճառել այն...— նա դեմ ընկավ։

— Ոչինչ չեմ հասկանում։ Յաշվինը n'est compromettant[1], և իշխանազնուհի Վարվառան ոչնչով վատ չէ ուրիշներից։ Ահա և նա։

XXXIII

Վրոնսկին առաջին անգամ զգաց Աննայի դեմ սրտնեղության, համարյա զայրույթի զգացում, նրա իր դրությունը դիտավորյալ կերպով չհասկանալու համար։ Այդ զգացումն ավե-

[1] Չի վարկաբեկի։

լի ես ուժեղանում էր այն հանգամանքով, որ նա չէր կարող հայտնել նրան իր սրտնեղության պատճառը։ Եթե նա ուղղակի ասեր նրան այն, ինչ մտածում էր ինքը, նա կասեր. այդպես զուգված-զարդարված, ամենքին հայտնի իշխանազնուհու հետ հայտնվել թատրոնում, նշանակում է՝ ո՛չ միայն ընդունել կորած կնոջ իր դրությունը, այլև մարտահրավեր անել բարձր հասարակությանը, այսինքն՝ ընդմիշտ կտրվել նրանից։

Վրոնսկին չէր կարող ասել Աննային այդ բանը։ «Բայց ինչպե՞ս ինքը՝ Աննան չի կարողանում հասկանալ այդ, և ի՞նչ է կատարվում նրա մեջ», ասում էր նա ինքն իրեն։ Վրոնսկին զգում էր, թե ինչպես միաժամանակ պակասում է իր հարգանքը դեպի Աննան և մեծանում է նրա գեղեցկության գիտակցությունը։

Խոժոռված նա վերադարձավ իր համարը և նստելով Ցաշվինի մոտ, որն իր երկար ոտները ձգել էր աթոռին ու կոնյակ էր խմում սելտերյան ջրի հետ, հրամայեց նույնը տալ և իրեն։

— Դու ասում ես Լանկովսկու Մոգո՞ւին։ Դա լավ ձի է, և ես խորհուրդ եմ տալիս քեզ գնել,— ասաց Ցաշվինը, նայելով ընկերոջ մռայլ դեմքին։— Նրա ետևը կախ է, բայց ոտներն ու գլուխը՝ հիանալի, ավելի լավ ցանկալի չի կարելի։

— Ես կարծում եմ, որ կվերցնեմ,— պատասխանեց Վրոնսկին։

Ձիերի մասին խոսակցությունը հետաքրքրում էր նրան, բայց նա ո՛չ մի բոպե չէր մոռանում Աննային, սկսած ականջ էր դնում միջանցքում քայլերի ձայնին և նայում էր բուխարու վրա դրած ժամացույցին։

— Աննա Արկադևնան հրամայեց զեկուցել, որ գնաց թատրոն։

Ցաշվինը դատարկելով էլի մի ըմպանակ կոնյակ թշշան ջրի մեջ, խմեց ու վեր կացավ, կոճկվելով։

— Է՛, գնա՞նք,— ասաց նա, հազիվ ժպտալով բեղերի տակ և այդ ժպիտով ցույց տալով, որ հասկանում է Վրոնսկու մռայլության պատճառը, բայց նշանակություն չի տալիս դրան։

— Ես չեմ գնա,— պատասխանեց Վրոնսկին մռայլ։

— Իսկ ես պետք է գնամ, խոստացել եմ։ Դե՛, ցտեսություն։ Թե չէ՝ ե՛կ պարտեր, վերցրու Կրասինսկու բազկաթոռը,— ավելացրեց Ցաշվինը, դուրս գնալով։

— Ո՛չ, ես գործ ունեմ։

«Կնոջդ հետ գլխացավանք է, ոչ կնոջդ հետ՝ ավելի վատ», մտածեց Ցաշվինը, դուրս գալով հյուրանոցից։

Վրոնսկին, մնալով մենակ, վեր կացավ աթոռից ու սկսեց քայլել սենյակում։

«Այսօր ի՞նչ է։ Չորրորդ արոնեմենտը... Եզորը կնոջ հետ այնտեղ է, հավանորեն և մայրս։ Դա նշանակում է, որ ամբողջ Պետերբուրգն այնտեղ է։ Հիմա նա (Աննան) ներս մտավ, հանեց մուշտակը և դուրս եկավ լույսի մեջ։ Տուշկևիչ, Ցաշվին, իշխանազնուհի Վարվառա,— պատկերացնում էր Վրոնսկին։— Իսկ ի՞նչ բանի եմ ես։ Թե՞ վախենում եմ, կամ Աննայի հովանավորությունը հանձնել եմ Տուշկևիչին։ Մարդ ինչպես էլ նայի, տխմար, հիմար բան է... Եվ ինչո՞ւ է Աննան ինձ գնում այս հիմար դրության մեջ»,— ասաց նա, թափ տալով ձեռքը։

Այդ շարժումով նա կարթկեց սեղանը, որի վրա դրած էր սելտերյան ջուրն ու կոնյակի գրաֆինը, և քիչ մնաց վայր գլորեր այն։ Նա ուզում էր բռնել, բայց բաց թողեց ձեռից ու սրտնեղությունից ոտով բոթեց սեղանը և զանգահարեց։

— Եթե ուզում ես ծառայել ինձ,— ասաց նա ներս եկած կամերդիներին,— ապա գիտցիր քո գործը։ Տե՛ս, որ այսպիսի բաներ չլինեն։ Պետք է հավաքես։

Կամերդիներն ուզում էր արդարանալ, իրեն անմեղ զգալով, բայց նայելով իր պարոնին, հասկացավ նրա դեմքից, որ հարկավոր է միայն լռել և շտապ գալարվելով, չոքեց գորգին ու սկսեց հավաքել թե՛ ամբողջը և թե՛ ջարդված գավաթներն ու շշերը։

— Դա քո բանը չէ, ուղարկիր ծառային՝ թող հավաքի, իսկ դու պատրաստիր ֆրակս։

Վրոնսկին թատրոն մտավ ութնկեսին։ Ներկայացման ամենաթեժ պահն էր։ Մերուկ-կապելդիները հանեց Վրոնսկու մուշտակը և ճանաչելով նրան, ասաց «ձերդ պայծառա-

փայլություն» ու առաջարկեց համար չվերցնել, այլ ուղղակի կանչել Ֆյոդորին։ Լուսավոր միջանցքում ոչ ոք չկար, բայի կապելդիներից և երկու սպասավորից՝ ձեռքներին մուշտակներ, որ ականջ էին դնում դռան մոտ։ Ծածկած դռան ետևից լսվում էին նվագախմբի ստակատոյի՝ զգույշ նվագակցության ու այն կանացի ձայնի հնչյունները, որը հատորոշ արտասանում էր երաժշտական ֆրազը։ Դուռը բացվեց, ներս թողնելով արագ սլկվող կապելդիներին, և իր վախճանին մոտեցող ֆրազը պարզ հասավ Վռոնսկու լսողությանը։ Բայց դուռն անմիջապես ծածկվեց, ու Վռոնսկին չլսեց ֆրազ և կադանսի վերջը, սակայն հասկացավ դռան ետևից լսվող բուռն ծափահարություններից, որ կադանսը վերջացավ։ Երբ նա մտավ ջահերով ու բրոնզե գազային եղջյուրներով պայծառ լուսավորված դահլիճը, դեռ շարունակվում էր աղմուկը։ Բեմի վրա երգչուհին, փայլելով իր մերկ ուսերով և ադամանդներով, կռանալով ու ժպտալով, հավաքում էր՝ իր ձեռքը բռնած տենորի օգնությամբ՝ ռամպայի վրայից անհարմարորեն բեմ նետած ծաղկեփնջերը և մոտենում էր գլխի մեջտեղին պոմպոզից փայլուն մազերով պարոնին, որը ռամպայի վրայից մեկնել էր երկար ձեռները՝ բռնած ինչ-որ իր,— և ամբողջ հասարակությունը պարտերում, ինչպես նաև օթյակներում, իրարանցման մեջ էր, ձգվում էր առաջ, բղավում ու ծափահարում։ Իր բարձր տեղում կանգնած կապելմեյստերն օգնում էր հանձնումների գործում և ուղղում էր իր սպիտակ փողկապը։ Վռոնսկին մտավ պարտեր, մեջտեղը և կանգ առնելով, սկսեց դիտել շուրջը։ Այսօր ավելի պակաս, քան երբևէ, ուշադրություն դարձրեց նա իրեն ծանոթ ու սովոր պարագայի վրա, բեմի, այդ աղմուկի վրա, հանդիսատեսների այդ ծանոթ, անհետաքրքիր, խայտաբղետ հոտի վրա, որ ծայրեծայր լցրել էր թատրոնը։

Օթյակներում, ինչպես միշտ, նույն ինչ-որ տիկիններ ինչ-որ սպաների հետ՝ օթյակների ետևի մասում. նույն, աստված գիտե, թե ի՛նչ բազմերանգ կանայք, և՛ համազգեստներ, և՛ սյուրտուկներ, նույն կեղտոտ ամբոխը վերնասրահում, և այս ամբողջ ամբոխի մեջ՝ օթյակներում ու առաջին շարքերում

[1] Բեկբեկուն երաժշտություն։

մոտ քառասուն հոգի իսկական մարդիկ՝ կին ու տղամարդ։ Եվ այդ օազիսների վրա Վռոնսկին անմիջապես դարձրեց իր ուշադրությունը ու անմիջապես հարաբերության մեջ մտավ նրանց հետ։

Գործողությունը վերջացել էր, երբ նա ներս մտավ, ուստի գնալով դեպի եղբոր օթյակը, գնաց մինչև առաջին շարքը և կանգ առավ ռամպայի մոտ Սերպուխովսկոյի կողքին, որը, ծունկը ծալած ու կրունկով թխթխկացնելով ռամպային և հեռվից տեսնելով նրան, ժպիտով կանչեց իր մոտ։

Վռոնսկին դեռ չէր տեսել Աննային, նա դիտմամբ չէր նայում Աննայի կողմը։ Բայց հայացքների ուղղությունից գիտեր, թե որտե՛ղ է նա։ Վռոնսկին աննկատելի նայում էր շուրջը, սակայն չէր որոնում նրան. սպասելով ավելի վատին, Վռոնսկին աչքերով որոնում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Նրա բախտից՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այս անգամ թատրոնում չէր։

— Քո մեջ ինչքան քիչ բան է մնացել զինվորական,— ասաց նրան Սերպուխովսկոյը։— Դիվանագետ, արտիստ. ա՛յ, սրա նման մի բան։

— Այո՛, հենց որ ես վերադարձա տուն, ֆրակ հագա,— պատասխանեց Վռոնսկին ժպտալով ու դանդաղորեն հանելով հեռադիտակը։

— Այս բանում ահա, խոստովանում եմ, ես նախանձում եմ քեզ։ Երբ ես վերադառնում եմ արտասահմանից ու հագնում եմ սրանք,— նա նշեց էքսելբանդները, —ափսոսում եմ իմ ազատությունը։

Սերպուխովսկոյը վաղուց արդեն ձեռք էր վերցրել Վռոնսկու պաշտոնական գործունեությունից, բայց առաջվա պես սիրում էր նրան և այժմ առանձնապես սիրալիր էր նրա հետ։

— Ափսո՞ս, դու ուշացար առաջին գործողությանը։

Վռոնսկին լսելով մի ականջով, հեռադիտակը փոխանցում էր բենուարից բելետաժ ու դիտում էր օթյակները։ Տյուրբանով՝ տիկնոջ ու ճաղատ ծերուկի մոտ, որը բարկացած թարթում էր աչքերը շարժուն հեռադիտակի ապակու մեջ, Վռոնսկին հանկարծ տեսավ Աննայի գլուխը, հպարտ, զարմանալի

[1] Գլխի փաթեթ։

գեղեցիկ ու ժպտուն, ժանյակների շրջանակի մեջ։ Աննան հինգերորդ բենուար օթյակում էր, Վոռնսկուց քսան քայլի վրա։ Նա նստել էր առջևում և թեթև շուռ եկած, ինչ-որ բան էր ասում Յաշվինին։ Նրա գլխի դիրքը՝ գեղեցիկ ու լայն ուսերին և նրա աչքերի ու ամբողջ դեմքի զուսպ-բորբոքված փայլը հիշեցրին Վոռնսկուն՝ նրան ճիշտ այնպես, ինչպիսին նա տեսավ Աննային Մոսկվայի պարահանդեսում։ Բայց նա այժմ բոլորովին այլ կերպ էր զգում այդ գեղեցկությունը։ Աննայի նկատմամբ Վոռնսկու զգացմունքի մեջ այժմ չկար խորհրդավոր ոչինչ, այդ պատճառով Աննայի գեղեցկությունը, թեպետև ավելի ուժեղ, քան առաջ, գրավում էր նրան, բայց միաժամանակ և վիրավորում էր։ Աննան չէր նայում նրա կողմը, բայց Վոռնսկին զգում էր, որ նա արդեն տեսել է իրեն։

Երբ Վոռնսկին հեռադիտակը նորից ուղղեց այն կողմ, նկատեց, որ իշխանազնուհի Վարվառան առանձնապես կարմիր է, անբնական ծիծաղում է և անընդհատ նայում հարևան օթյակին. իսկ Աննան, հովհարը ծալած ու նրանով թխթխկացնելով կարմիր թավշին, նայում է ինչ-որ տեղ, բայց չի տեսնում և հայտնապես չի ուզում տեսնել այն, ինչ տեղի ունի հարևան օթյակում։ Յաշվինի դեմքն ուներ այն արտահայտությունը, որ լինում էր թղթախաղում տանուլ տալիս։ Հոնքերը կիտած, նա իր ձախ բեղն ավելի ու ավելի խոր էր խրում բերանը և խեթ-խեթ նայում նույն հարևան օթյակին։

Այդ օթյակում, ձախից, Կարտասովներն էին։ Վոռնսկին ճանաչում էր նրանց և գիտեր, որ Աննան ծանոթ էր նրանց հետ։ Կարտասովան, նիհար, փոքրիկ մի կին, կանգնած էր իր օթյակում ու մեջքով դարձած դեպի Աննան, հագնում էր թիկնոցը, որ բռնել էր ամուսինը։ Նրա դեմքը գունատ էր ու բարկացկոտ, և նա հուզված ասում էր ինչ-որ բան։ Կարտասովը, հաստ, ճաղատ մի պարոն, շարունակ նայում էր Աննային, աշխատելով հանգստացնել կնոջը։ Երբ կինը դուրս գնաց, ամուսինը երկար ժամանակ մլուլ էր տալիս, աչքերով փնտրելով Աննայի հայացքը և, ըստ երևույթին, ցանկանալով ողջունել նրան։ Բայց Աննան, հայտնապես դիտմամբ չնկատելով նրան, ետ դարձած, ինչ-որ բան էր ասում գլուխը խուզած Յաշվինին, որ կռացել էր դեպի Աննան։ Կարտասովը դուրս գնաց առանց հրաժեշտ տալու, և օթյակը մնաց դատարկ։

Վոռնսկին չհասկացավ, թե իսկապես ի՞նչ կատարվեց Կարտասովների ու Աննայի միջև, բայց հասկացավ, որ տեղի է ունեցել Աննայի համար նվաստացուցիչ մի բան։ Նա հասկացավ այդ՝ և՛ այն բանից, ինչ տեսավ ինքը, և՛ մանավանդ Աննայի դեմքից, որը, նա գիտեր, հավաքել էր իր վերջին ուժերը, որպեսզի դիմանար իր վրա վերցրած դերին։ Եվ արտաքնապես հանգիստ այդ դերը լիովին հաջողվում էր նրան։ Ով չէր ճանաչում նրան ու նրա շրջանը, ով չէր լսել կանանց ցավակցության, վրդովմունքի և զարմանքի բոլոր արտահայտություններն այն առթիվ, որ նա թույլ էր տվել իրեն երևալ բարձր հասարակության մեջ ու երևալ այնքան նկատելի կերպով՝ իր ժանեկավոր արդուզարդով և իր գեղեցկությամբ,— նա հիանում էր այդ կնոջ հանգստությամբ ու գեղեցկությամբ և չէր ենթադրում, որ այդ կինը համակված է անարգանքի սյունին գամված մարդու զգացումով։

Իմանալով, որ մի բան է պատահել, բայց չիմանալով, հատկապես ի՞նչ, Վոռնսկին զգում էր տանջալից տագնապ և, որևէ բան իմանալու հույսով, գնաց դեպի եղբոր օթյակը։ Դիտմամբ ընտրելով Աննայի օթյակին հակադիր պարտերի միջանցքը, նա դուրս գալիս պատահեց իր գնդի նախկին հրամանատարին, որ խոսում էր երկու ծանոթների հետ։ Վոռնսկին լսեց, թե ինչպե՞ս արտասանվեց Կարենինների անունը, և նկատեց, թե ինչպե՞ս շտապեց գնդի հրամանատարը բարձրաձայն կանչել Վոռնսկուն, նշանակալից նայելով խոսողներին։

— Ա՜, Վոռ՜նսկի։ Ի՞նչ ես գալու գունդ։ Մենք չենք կարող քեզ բաց թողնել առանց խնջույքի։ Դու մեր ամենահիմնական սպան ես,— ասաց գնդի հրամանատարը։

— Չեմ կարող, ժամանակ չունեմ, շատ ափսոս, մյուս անգամ,— ասաց Վոռնսկին և վազեց սանդուղքներով վեր՝ դեպի եղբոր օթյակը։

Պառավ կոմսուհին, Վոռնսկու մայրը, իր պոդպատե խոպոպիկներով, եղբոր օթյակումն էր։ Վարյան ու իշխանուհի Սորոկինան պատահեցին Վոռնսկուն բելետաժի միջանցքում։

Առաջնորդելով իշխանուհի Սորոկինային մոր մոտ, Վարյան ձեռքը տվեց տագրոջը և անմիջապես սկսեց խոսել իրեն հետաքրքրող գործի մասին։

Վրոնսկին քիչ էր տեսել նրան այդքան հուզված։

— Իմ կարծիքով դա ստոր ու գարշելի բան է, և madame Կարտասովան ոչ մի իրավունք չուներ։ Madame Կարենինան... — սկսեց նա։

— Ի՞նչ է եղել։ Ես չգիտեմ։

— Ինչպե՞ս։ Դու լսեցի՞ր։

— Հասկանո՞ւմ ես, չէ՞ որ դրա մասին ես կլսեմ ամենքից վերջը։

— Կա՞ արդյոք ավելի չար արարած, քան այդ Կարտասովան։

— Իսկ ի՞նչ է արել նա։

— Ինձ ամուսինս պատմեց... Նա վիրավորեց Կարենինային։ Կարտասովը սկսեց Օբյակի վրայով խոսել Կարենինայի հետ, իսկ կինը թուքումրեց նրան։ Ասում են, ինչ-որ վիրավորական բան ասաց բարձրաձայն և դուրս գնաց։

Կոմս, ձեր maman կանչում է ձեզ,— ասաց իշխանուհի Սորոկինան, դուրս նայելով օթյակի դռնից։

— Իսկ ես ամբողջ ժամանակ սպասում եմ քեզ,— ասաց Վրոնսկուն մայրը, հեգնական ժպիտով։ — Դու բոլորովին չես երևում։

Որդին տեսավ, որ մայրը չկարողացավ զսպել իր ուրախության ժպիտը։

— Բարև ձեզ, maman։ Ես գալիս էի ձեզ մոտ,— ասաց նա սառը։

— Ինչո՞ւ չես գնում faire la cour à madame Karenine[1],— ավելացրեց կոմսուհին, երբ իշխանուհի Սորոկինան քաշվեց մի կողմ։ — Elle fait sensation. On oublie la Patti pour elle[2]։

— Maman, ես ձեզ խնդրել եմ՝ չխոսել ինձ հետ այդ մասին,— պատասխանեց նա մռայլվելով։

— Ես ասում եմ այն, ինչ ասում են ամենքը։

Վրոնսկին ոչինչ չպատասխանեց և մի քանի խոսք ասելով

[1] Խոնարհվելու Կարենինային։

[2] Նա սենսացիա է առաջացնում։ Նրա պատճառով մոռանում են Պատտիին։

իշխանուհի Սորոկինային, դուրս գնաց։ Դռան մեջ նա պատահեց եղբորը։

— Ա՜, Ալեքսեյ,— ասաց եղբայրը։ — Ի՜նչ գարշելի բան։ Հիմար կին, ուրիշ ոչի՜նչ... Ես ուզում էի հիմա գնալ Աննա Արկադևնայի մոտ։ Գնանք միասին։

Վրոնսկին չլսեց եղբոր ասածը։ Նա արագ քայլերով գնաց ներքև. նա զգում էր, որ ինքը պետք է մի բան անի, բայց չգիտեր, թե ի՜նչ։ Սրտնեղությունն Աննայի դեմ այն բանի համար, որ նա իրեն ու նրան դնում էր այդպիսի կեղծ դրության մեջ և Աննայի տառապանքների համար նրան խղճալու զգացումը վրդովում էին Վրոնսկուն։ Նա իջավ ներքև՝ պարտեր և ուղղակի գնաց դեպի Աննայի բենուարը։ Բենուարի մոտ կանգնած էր Ստրեմովը և զրուցում էր Աննայի հետ։

— Տենորներ այլևս չկան։ Le moule en est brisé[1]։

Վրոնսկին գլխով ողջունեց Աննային ու կանգ առավ, բարևելով Ստրեմովին։

— Կարծեմ դուք ուշացաք ու չլսեցիք լավագույն արիան,— ասաց Աննան Վրոնսկուն, նայելով նրան ծաղրալից, ինչպես թվաց նրան։

— Ես վատ գնահատող եմ,— ասաց Վրոնսկին, խիստ հայացքով նայելով Աննային։

— Ինչպես իշխան Ցաշվինը,— ասաց Աննան ժպտալով,— նա այն կարծիքին է, որ Պատտին չափազանց բարձր է երգում։ Շնորհակալություն,— ասաց նա, վերցնելով երկար ձեռնոցի մեջ եղած իր փոքրիկ ձեռքով Վրոնսկու բարձրացրած ծրագիրը, և հանկարծ այդ վայրկյանին ցնցվեց նրա գեղեցիկ դեմքը։ Նա վեր կացավ ու գնաց օթյակի խորքը։

Նկատելով, որ հետևյալ գործողությանը Աննայի օթյակը մնաց դատարկ, Վրոնսկին, հարուցելով կավատինայի միջոցին հանդարտված թատրոնի բվվոցը, դուրս եկավ պարտերից ու գնաց տուն։

Աննան արդեն տանն էր, երբ Վրոնսկին մտավ նրա մոտ. նա մենակ էր, հենց այն զգեստով, որով թատրոնում էր։ Նա նստած էր պատի մոտ դրած առաջին բազկաթոռին և նայում

[1] Նրանք այլասերվել են։

էր դիմացը։ Նա նայեց Վրոնսկուն ու անմիջապես ընդունեց իր առաջվա դիրքը։

— Աննա՛,— ասաց նա։

— Դո՛ւ, դո՛ւ ես մեղավոր ամեն բանում,— ճչաց Աննան վեր կենալով, ձայնի մեջ հուսահատության ու զայրույթի արցունքներ։

— Ես խնդրում, ես աղաչում էի քեզ, որ չգնաս. ես գիտեի, որ անախորժ բան կլինի քեզ համար...

— Անախորժ բա՞ն,— ճչաց Աննան— Սոսկալի՞ է։ Ինչքան էլ ապրեմ ես, երբեք չեմ մոռանա այդ։ Նա ասաց, որ խայտառակություն է ինձ հետ միասին նստելը։

— Տխմար կնոջ խոսքեր,— ասաց Վրոնսկին,— բայց ի՞նչ կարիք կա ռիսկ անելու, զրգռելու...

— Ես ատում եմ քո անվրդովությունը։ Դու չպետք է ինձ հասցնեիր դրան։ Եթե դու սիրեիր ինձ...

— Աննա. ի՞նչ գործ ունի այստեղ իմ սիրո հարցը։

— Այո՛, եթե դու սիրեիր ինձ, ինչպես ե՛ս եմ սիրում քեզ, եթե դու տանջվեիր, ինչպես ե՛ս եմ տանջվում... — ասաց Աննան, վախի արտահայտությամբ նայելով նրան։

Վրոնսկին խղճում էր նրան, բայց և այնպես՝ սրտնեղում։ Վրոնսկին հավաստիացնում էր նրան իր սիրո մեջ, որովհետև տեսնում էր, որ դա՛ միայն կարող է այժմ հանգստացնել նրան, ու, թեև բառերով չէր հանդիմանում, բայց իր հոգում կշտամբում էր նրան։

Եվ սիրո այն հավաստիացումները, որոնք Վրոնսկուն թրվում էին այնքան գռեհիկ, որ նա քաշվում, ամաչում էր դրանք արտասանել, Աննան ըմպում, կլանում էր ու կամաց-կամաց հանգստանում։ Դրանից հետո հենց հետևյալ օրը նրանք գնացին գյուղ, լիովին հաշտված։

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Դարիա Ալեքսանդրովնան երեխաների հետ ամառն անց էր կացնում Պոկրովսկում, իր քույր Կիտի Լևինայի մոտ։ Նրա կալվածքում տունը բոլորովին քանդվել էր, և Լևինն ու կինը համոզեցին նրան՝ ամառն անցկացնել իրենց մոտ։ Ստեպան Արկադևիչը լիովին հավանություն տվեց հարցի այդպիսի լուծմանը։ Նա ասում էր, թե շատ ափսոսում է, որ ծառայությունը խանգարում է իրեն ամառն ընտանիքի հետ անցկացնելու գյուղում, ինչն իր համար կլիներ մեծ երջանկություն և, մնալով Մոսկվայում, երբեմն գալիս էր գյուղ մեկ-երկու օրով։ Բացի Օբլոնսկիներից, իրենց երեխաներով ու դաստիարակչուհով այդ ամառ հյուր էր Լևինների մոտ նաև ծեր իշխանուհին, որն իր պարտքն էր համարում հետևելու իր անփորձ աղջկան, քանի որ սա գտնվում էր այդպիսի դրության մեջ։ Բացի դրանից Վարենկան, Կիտիի արտասահմանյան բարեկամուհին, կատարեց նրա մոտ գալու իր խոստումը, երբ Կիտին ամուսնացած կլինի, և հյուր էր իր բարեկամ-ընկերուհու մոտ։ Դրանք ամենքը Լևինի կնոջ ազգականներն ու բարեկամներն էին։ Եվ թեև նա սիրում էր նրանց ամենքին, բայց մի քիչ ափսոսում էր Լևինյան իր խաղաղությունն ու կարգը, որ խեղդվել էր «Շչերբացկյան տարրի» հորդումով, ինչպես ասում էր նա ինքն իրեն։ Նրա ազգականներից այդ ամառ հյուր էր նրա մոտ միայն Սերգեյ Իվանովիչը, բայց նա ևս ո՛չ թե Լևինյան, այլ Կոզնիշևյա՛ մտակազմի մարդ էր, այնպես որ Լևինյան ողին բոլորովին ոչնչանում էր։

Լևինյան վաղուցվա դատարկ տանն այժմ այնքան շատ

մարդ կար, որ բանված էին համարյա բոլոր սենյակները և համարյա ամեն օր ծեր իշխանուհին սեղան նստելիս ստիպված էր հաշվել ամենքին ու տասներեքերորդ թոռնիկին կամ թոռնուհուն զատել, նստեցնել առանձին սեղանի մոտ։ Եվ Կիտիի համար, որը փութաջանորեն զբաղվում էր տնտեսությամբ, պակաս հոգս չէր հավեր, հնդկահավեր, բադեր ձեռք բերելը, որոնք սպառվում էին չափազանց շատ, նկատի ունենալով հյուրերի և երեխաների ամառային ախորժակը։

Ամբողջ ընտանիքը նստել էր ճաշի։ Դոլլիի երեխաները դաստիարակչուհու և Վարենկայի հետ ծրագիր էին կազմում այն մասին, թե ո՞ւր գնան սունկի։ Սերգեյ Իվանովիչը, որն իր խելքի և գիտականության պատճառով, բոլոր հյուրերի մեջ վայելում էր համարյա երկրպագության հասած հարգանք, զարմացրեց ամենքին, միջամտելով սունկերի մասին խոսակցությանը։

— Ինձ էլ վերցրեք ձեզ հետ։ Ես շատ եմ սիրում սունկի գնալ,— ասաց նա, նայելով Վարենկային,— իմ կարծիքով, դա շատ լավ զբաղմունք է։

— Ի՞նչ կա որ, մենք շատ ուրախ ենք,— պատասխանեց Վարենկան կարմրելով։ Կիտին ու Դոլլին նշանակալից նայեցին իրար։ Գիտնական և խելոք Սերգեյ Իվանովիչի առաջարկը սունկի գնալու առթիվ հաստատում էր Կիտիի որոշ ենթադրությունը, որ վերջերս սաստիկ զբաղեցնում էր նրան։ Նա շտապ խոսեց մոր հետ, որ նկատելի չլիներ իր հայացքը։ Ճաշից հետո Սերգեյ Իվանովիչն իր սուրճի գավաթի հետ նստեց ընդունարանում, շարունակելով եղբոր հետ սկսած խոսակցությունը և նայելով այն դռանը, որտեղից պետք է դուրս գային սունկի գնալու պատրաստված երեխաները։ Լևինը նստեց պատուհանին՝ եղբոր մոտ։

Կիտին կանգնած էր ամուսնու կողքին, ակնհայտորեն սպասելով անհետաքրքիր խոսակցության վերջանալուն, որ մի բան ասի նրան։

— Դու շատ բանում փոխվել ես այն օրից հետո, երբ ամուսնացար, և փոխվել ես դեպի լավը,— ասաց Սերգեյ Իվանովիչը, ժպտալով Կիտիին ու, ըստ երևույթին, առանձնապես չհետաքրքրվելով սկսված խոսակցությամբ,— բայց հավատարիմ ես մնացել ամենապարադոքսալ թեմաները պաշտպանելու քո մոլությանը։

— Կատյա, քեզ համար լավ չէ կանգնելը,— ասաց նրան ամուսինը, աթոռը մոտ քաշելով ու նշանակալից նայելով նրան։

— Ասենք, ժամանակ էլ չկա,— ավելացրեց Սերգեյ Իվանովիչը, տեսնելով դուրս վազող երեխաներին։

Ամենքի առջևից՝ կողքով, սրարշավ, իր ձիգ տված չուկիներով, թափահարելով զամբյուղը և Սերգեյ Իվանովիչի գլխարկը, վազում էր ուղիղ դեպի նա՝ Տանյան։

Համարձակ մոտ վազելով Սերգեյ Իվանովիչին ու փայլելով իր աչքերով, այնքան նման հոր գեղեցիկ աչքերին, նա տվեց Սերգեյ Իվանովիչին նրա գլխարկը և ձևացրեց, որ ուզում է գլխարկը դնել նրա գլխին, երկչոտ ու նուրբ ժպիտով մեղմացնելով իր ազատ վարվեցողությունը։

— Վարենկան սպասում է,— ասաց Տանյան, զգուշությամբ դնելով գլխարկը նրա գլխին, Սերգեյ Իվանովիչի ժպիտից տեսնելով, որ դա կարելի էր։

Վարենկան կանգնել էր դռան մոտ, հագած չթե դեղին ըզդեստ, գլխին կապած սպիտակ թաշկինակ։

— Գալի՞ս եմ, գալի՞ս, Վարվառա Անդրեևնա,— ասաց Սերգեյ Իվանովիչը, խմելով սուրճի վերջին կումը և տեղավորելով դրպաններում թաշկինակն ու սիգարի տուփը։

— Ի՞նչ սքանչելի էակ է իմ Վարենկան։ Այնպես չէ՞,— ասաց Կիտին ամուսնուն, հենց որ Սերգեյ Իվանովիչը վեր կացավ։ Նա այդ ասաց այնպես, որ Սերգեյ Իվանովիչը կարող էր լսել, մի բան, ինչ հայտնապես ուզում էր Կիտին։ — Եվ ի՞նչ գեղեցիկ է նա, ազնիվ, գեղեցիկ։ Վարենկա,— ձայնեց Կիտին,— դուք կլինեք ջրաղացի անտառո՞ւմ։ Մենք կգանք ձեզ մոտ։

— Դու բոլորովին մոռանում ես քո վիճակը, Կիտի,— խոսեց պառավ իշխանուհին, շտապ դուրս գնալով դռնից։ — Քեզ չի՛ կարելի այդպես բղավել։

Վարենկան լսելով Կիտիի ձայնը և նրա մոր կշտամբանքը, թեթև քայլերով արագ մոտեցավ Կիտիին։ Շարժումների արագությունը, կարմրությունը, որ պատեց նրա աշխույժ դեմքը,— այս բոլորը ցույց էր տալիս, որ նրա մեջ կատարվում է անսովոր մի բան։ Կիտին գիտեր, թե ի՞նչ է այդ անսովոր բանը և ուշադրությամբ հետևում էր իր բարեկամուհուն։ Նա այժմ

կանչեց Վարենկային միայն նրա համար, որպեսզի մտքով օրհնի նրան այն կարևոր դեպքի համար, որը, Կիտիի կարծիքով, պետք է կատարվեր այսօր ճաշից հետո՝ անտառում։

— Վարենկա, ես շատ երջանիկ կլինեմ, եթե պատահի մի բան,— շշուկով ասաց Կիտին, համբուրելով նրան։

— Իսկ դուք կգա՞ք մեզ հետ,— շփոթվելով ասաց Վարենկան Լևինին, ձևացնելով, իբր չլսեց այն, ինչ ասվեց իրեն։

— Ես կգամ, բայց մինչև կալը և կմնամ այնտեղ։

— Է՜հ, ի՜նչ կարիք կա,— ասաց Կիտին։

— Պետք է, հարկավոր է նայել ու հաշվել նոր սայլերը,— ասաց Լևինը։ — Իսկ որտե՞ղ կլինես դո՛։

— Տեռասում։

II

Տեռասում հավաքվեց կանանց ամբողջ հասարակությունը։ Նրանք առհասարակ սիրում էին նստել այնտեղ ճաշից հետո, բայց այսօր այնտեղ գործ էլ կար։ Բացի շապիկներ կարելուց ու բարուրակապեր գործելուց, որոնցով զբաղված էին ամենքը, այսօր այնտեղ մուրաբա էին եփում՝ Ագաֆյա Միխայլովնայի համար նոր մեթոդով, առանց ջուր ավելացնելու։ Կիտին մըտցընում էր այդ նոր մեթոդը, որ գործադրվում էր իրենց տանը։ Ագաֆյա Միխայլովնան, որին հանձնված էր եղել առաջ այդ գործը, լինելով այն կարծիքին, թե այն, ինչ արվում էր Լևինների տանը, չէր կարող վատ լինել, այսուամենայնիվ՝ ջուր լցրեց ելակի և մորիի վրա, պնդելով, թե այլ կերպ անհնարին է. նա բռնվեց այդ բանում, ու հիմա մորին եփվում էր ամենքի ներկայությամբ, և Ագաֆյա Միխայլովնան պետք է գար այն համոզման, որ առանց ջրի էլ մուրաբան լավ դուրս կգա։

Ագաֆյա Միխայլովնան հուզված ու վշտացած դեմքով, խճճված մազերով ու մինչև արմունկները մերկացրած նիհար ձեռքերով շրջանաձև պտտեցնում էր ամանը կրակարանի վրա և մռայլ նայում էր մորիին, ամբողջ սրտով կամենալով, որպեսզի նա թանձրանար ու չեփվեր։ Իշխանուհին զգալով, որ իր՝ որպես մորին եփելու գլխավոր խորհրդատուի, վրա պետք է թափվի Ագաֆյա Միխայլովնայի ցասումը, աշխատում էր ձևացնել, իբր զբաղված է այլ բանով ու չի հետաքրքրվում մորիով, խոսում էր կողմնակի բաների մասին, բայց աչքի տակով նայում էր կրակարանին։

— Աղջիկների շորացուն միշտ ես ինքս եմ գնում էժան շուկայում,— ասաց իշխանուհին, շարունակելով սկսած խոսակցությունը։ — Արդյոք պետք չէ՞ հիմա փրփուրը քաշել, աղավնյա՛կս,— ավելացրեց նա, դիմելով Ագաֆյա Միխայլովնային։ — Բնավ հարկավոր չէ, որ դու ինքդ անես, հետո՝ շոգ է,— կանգնեցրեց նա Կիտիին։

— Ե՛ս կանեմ,— ասաց Դոլլին և վեր կենալով, սկսեց զգուշությամբ տարուբերել գդալը փրփրացող շաքարի մեջ. երբեմն գդալի կպածը պոկելու համար թխկացնում էր գդալը այն ափսեին, որն արդեն պատած էր այլերանգ, դեղնավարդագույն քափով, որի տակից հոսում էր արնագույն շարապ։ «Ի՞նչ կլիզեն դա թեյի հետ», մտածեց նա իր երեխաների մասին, հիշելով, թե ինչպե՛ս ինքը երեխա ժամանակ զարմանում էր, որ մեծերը չեն ուտում ամենալավը՝ մուրաբայի քափը։

— Ստիվան ասում է, թե շատ ավելի լավ է դրամ տալ,— շարունակեց Դոլլին մինչև այդ սկսած ուշադրավ խոսակցությունն այն մասին, թե ինչպե՛ս ավելի լավ է պարգևատրել սպասավորներին,— բայց...

— Ինչպե՛ս կարելի է դրամ,— միաբերան բացականչեցին իշխանուհին ու Կիտին։ — Նրանք գնահատում են հենց այդ։

— Ես, օրինակ՝ անցյալ տարի գնեցի մեր Մատրյոնա Սեմյոնովնայի համար ո՛չ թե «պոպլին»[1], այլ դրա նման մի բան,— ասաց իշխանուհին։

— Հիշում եմ, նա ձեր անվանակոչության օրը հագել էր այդ շորը։

— Շատ գեղեցիկ նախշանկար է. այնպես պարզ և ազնիվ։ Ես ինքս ուզում էի կարել ինձ համար, եթե նա չունենար։ Վարենկայի շորի պես է։ Այնպե՛ս դուրեկան և էժան։

— Ա՜յ, կարծեմ հիմա պատրաստ է,— ասաց Դոլլին, ծորացնելով շարապը գդալից։

— Երբ կրենդելներ ստացվեն, այն ժամանակ պատրաստ է։ Մի քիչ էլ եփեցեք, Ագաֆյա Միխայլովնա։

— Ա՜խ, էդ ճանճերը,— բարկացած ասաց Ագաֆյա Միխայլովնան։ — Միևնույնն է լինելու,— ավելացրեց նա։

[1] Կերպասե կտոր։

— Ա՜խ, ինչ սիրուն է, մի՛ վախեցրեք նրան,— հանկարծ ասաց Կիտին, նայելով ճնճղուկին, որը նստեց ցանկապատի վրա և շուտ տալով մորենու միջուկը, սկսեց կտցահարել այն։

— Այո՛, բայց դու հեռացիր կրակարանից,— ասաց մայրը։

— A propos de[1] Վարենկա,— ասաց Կիտին ֆրանսերեն, ինչպես և խոսում էին ամբողջ ժամանակ, որպեսզի Ագաֆյա Միխայլովնան չհասկանար նրանց։ — Գիտե՞ք, maman, այսօր չգիտեմ ինչո՛ւ, ես սպասում եմ վճռի։ Հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ վճռի։ Ինչ լավ կլիներ։

— Բայց ի՞նչ հմուտ հարսնախոս է,— ասաց Դոլլին։ — Ինչպե՞ս զգույշ ու ճարպկորեն մոտեցնում է նրանց...

— Չէ՛, ասացեք, maman, դուք ի՞նչ եք կարծում։

— Է՛հ, ի՞նչ պիտի կարծեմ։ Նա (նա-ն Սերգեյ Իվանովիչն էր) միշտ կարող էր առաջնակարգ ընտրություն անել Ռուսաստանում. Հիմա արդեն նա այնքան ջահել չէ, բայց համոզված եմ, որ այժմ էլ շատերը սիրով կգնային նրան... Վարենկան շատ բարի է, բայց Սերգեյ Իվանովիչը կարող էր...

— Ո՛չ, մայրի՛կ, հասկացեք, որ և՛ մեկի, և՛ մյուսի համար չի կարելի մտածել ավելի լավ բան։ Առաջին, Վարենկան հիանալի աղջիկ է,— ասաց Կիտին, ծալելով մի մատը։

— Վարենկային նա շատ է հավանում, դա ճիշտ է,— հաստատեց Դոլլին։

— Հետո՝ նա այնպիսի դիրք ունի բարձր հասարակության մեջ, որ նրան բնավ պետք չեն ո՛չ իր կնոջ կարողությունը, ո՛չ էլ դիրքը հասարակության մեջ։ Նրան պետք է մի բան՝ լավ, հաճելի, հանգիստ կին։

— Այո՛, Վարենկայի հետ կարելի է հանգիստ լինել,— հաստատեց Դոլլին։

— Երրորդ, որ Վարենկան սիրեր նրան։ Այդ էլ կա... Այսինքն՝ դա այնպես լավ կլիներ... Սպասում եմ, որ ահա նրանք կգան անտառից, և ամեն բան կվճռվի։ Ես անմիջապես կտեսնեմ նրանց աչքերից։ Ես այնպես ուրախ կլինեի։ Ի՞նչ ես կարծում դու, Դոլլի։

— Դու մի՛ հուզվիր։ Բնավ պետք չէ, որ դու հուզվես,— ասաց մայրը։

[1] Ի դեպ՝ Վարենկայի մասին։

— Ես չեմ հուզվում, մայրի՛կ։ Ինձ թվում է, որ նա այսօր առաջարկություն կանի։

— Ա՜խ, դա այնպես տարօրինակ է, թե ինչպե՛ս և ե՛րբ տղամարդն առաջարկություն է անում... Կա ինչ-որ արգելք, և հանկարծ փուլ է գալիս այն,— ասաց Դոլլին, մտազբաղ ժրպտալով ու հիշելով իր անցյալը Ստեպան Արկադևիչի հետ։

— Մայրի՛կ, հայրիկն ինչպե՞ս առաջարկություն արեց ձեզ,— հարցրեց հանկարծ Կիտին։

— Անսովոր ոչինչ չկար, շատ պարզ,— պատասխանեց իշխանուհին, բայց նրա ամբողջ դեմքը պայծառացավ այդ հիշողությունից։

— Դե, ինչպե՞ս։ Դուք այսուամենայնիվ սիրո՞ւմ էիք նրան, նախքան թույլ տվին ձեզ խոսել։

Կիտին առանձին հաճույք էր զգում այն բանում, որ ինքը այժմ կարող է խոսել կնոջ կյանքում առաջնակարգ նշանակություն ունեցող հարցերի մասին իր մոր հետ, որպես հավասարի հետ։

— Իհարկե սիրում էի. նա գալիս էր մեզ մոտ՝ գյուղ։

— Բայց ինչպե՞ս վճռվեց խնդիրը, մայրի՛կ։

— Դու կարծում ես երևի, որ դուք որևէ նոր բան եք հնարել։ Բոլորը միևնույն ձևով. վճռվեց աչքերով, ժպիտներով...

— Ի՞նչ լավ ասացիք, մայրի՛կ։ Իսկապես որ աչքերով և ժպիտներով,— հաստատեց Դոլլին։

— Բայց ի՞նչ խոսքեր էր ասում նա։

— Ի՞նչ խոսքեր էր ասում քեզ Կոստյան։

— Նա գրում էր կավճով։ Դա զարմանալի բան էր... Թվում է, թե շա՜տ վաղուց է կատարվել այդ,— ասաց Կիտին։

Եվ երեք կանայք էլ մտածեցին միևնույն բանի մասին։ Կիտին առաջինը խախտեց լռությունը։ Նա հիշեց իր ամուսնությանը նախորդող այդ ամբողջ ձմեռը և իր հրապուրվելը Վրոնսկիով։

— Մի բան... Վարենկայի առաջին սիրո կիրքը,— ասաց նա, մտքի բնական կապակցությամբ հիշելով դրա մասին։ Ես ուզում էի մի կերպ ասել Սերգեյ Իվանովիչին, նախապատրաստել նրան։ — Նրանք, բոլոր տղամարդիկ,— ավելացրեց նա,— չափազանց խանդոտ են մեր անցյալի նկատմամբ։

— Ո՛չ բոլորը,— ասաց Դոլլին։ — Դու այդպես դատում ես

քո ամուսնով։ Նա մինչև այսօր տանջվում է Վրոնսկու մասին հիշողությամբ։ Այդպես չէ՞։ Չէ՞ որ ճիշտ է այդ։

— Ճիշտ է,— պատասխանեց Կիտին, մտազբաղ ժպտալով աչքերով։

— Չգիտեմ, թե քո ո՞ր անցյալը կարող է անհանգստացնել նրան,— պաշտպան հանդիսանալով աղջկա վրա ունեցած իր մայրական հսկողությանը՝ ասաց իշխանուհի-մայրը։ — Այն, որ Վրոնսկին սիրաթովում էր քեզ, այնպիսի բան է, որ պատահում է ամեն աղջկա հետ։

— Է՛հ, խոսքը դրա մասին չէ,— կարմրելով ասաց Կիտին։

— Ո՛չ, թույլ տուր,— շարունակեց մայրը,— և հետո՝ դու ինքդ չէիր ուզում թույլ տալ ինձ, որ ես խոսեմ Վրոնսկու հետ։ Հիշո՞ւմ ես։

— Ա՜խ, մայրիկ,— տանջանքի արտահայտությամբ ասաց Կիտին։

— Այժմ չի կարելի զսպել ձեզ... Քո հարաբերությունները չէին էլ կարող գնալ ավելի հեռուն, քան պետք էր. ես ինքս բացատրության կկանչեի նրան։ Սակայն, հոգյա՛կս, քեզ չի՛ կարելի հուզվել։ Խնդրեմ, հիշիր այդ և հանգստացիր։

— Ես բոլորովին հանգիստ եմ, maman։

— Ի՞նչ բախտավոր բան եղավ այն ժամանակ Կիտիի համար, որ եկավ Աննան,— ասաց Դոլլին,— և ի՞նչ դժբախտություն նրա համար։ Այսինքն՝ ճիշտ հակառակը,— ավելացրեց նա, զարմացած իր մտքի վրա։ — Այն ժամանակ Աննան այնպես բախտավոր էր, իսկ Կիտին իրեն համարում էր դժբախտ։ Ինչպես բոլորովին հակառակը եղավ։ Ես հաճախ եմ մտածում Աննայի մասին։

— Մտածելու մա՞րդ գտար։ Գարշելի, զզվելի կին՝ առանց սրտի,— ասաց մայրը, որը չէր կարողանում մոռանալ, որ Կիտին ամուսնացավ ո՛չ թե Վրոնսկու, այլ Լևինի հետ։

— Ի՞նչ բավականություն դրա մասին խոսելը,— ասաց Կիտին սրտնեղությամբ.— Ես դրա մասին չեմ մտածում և չեմ ուզում մտածել... Եվ չեմ ուզում մտածել,— կրկնեց նա, ականջ դնելով ամուսնու ծանոթ քայլերին՝ տեռասի սանդուղքների վրա։

— Այդ ի՞նչի մասին՝ «և չեմ ուզում մտածել»,— հարցրեց Լևինը, մտնելով տեռաս։

Բայց ոչ ոք չպատասխանեց նրան, ու նա չկրկնեց իր հարցը։

— Ես ափսոսում եմ, որ խափանեցի ձեր կանացի թագավորությունը,— ասաց նա, անբավականությամբ դիտելով ամենքին և հասկանալով, որ խոսում էին այնպիսի բանի մասին, ինչ չէին խոսի իր ներկայությամբ։

Մի վայրկյան նա զգաց, որ ինքը համակարծիք է Ագաֆյա Միխայլովնային, որ իրավացի է նրա դժգոհությունը մորին առանց ջրի եփելու և առհասարակ Շչերբացկյան խորթ ազդեցության համար։ Սակայն նա ժպտաց ու մոտեցավ Կիտիին։

— Հը՛, ինչպե՞ս է,— հարցրեց նա կնոջը, նայելով նրան նույն այն հայացքով, որով այժմ ամենքը դիմում էին նրան։

— Ոչի՛նչ, հիանալի,— ասաց Կիտին ժպտալով,— իսկ քո գործերը ո՞նց են։

— Երեք անգամ ավելի են կրում, քան սովորական սայլը։ Ուրեմն գնամ երեխաների ետևի՞ց։ Ես հրամայեցի, որ լծեն։

— Ի՞նչ, դու ուզում ես Կիտիին լինեյկայո՞վ տանել,— կըշտամբանքով ասաց մայրը։

— Կքշենք շատ կամաց, իշխանուհի։

Լևինը երբեք չէր կանչում իշխանուհուն maman, ինչպես անում են փեսաները, և այդ անախորժ էր իշխանուհուն։ Բայց Լևինը չէր կարող նրան այդպես կանչել, չվիրավորելով դեպի իր մեռած մայրը տածած իր զգացումը, չնայած որ նա շատ սիրում ու հարգում էր իշխանուհուն։

— Գնանք միասին, maman,— ասաց Կիտին։

— Ես չեմ ուզում տեսնել այդ անխոհեմությունները։

— Ես ոտքով կգնամ։ Չէ՞ որ դա լավ է ինձ համար։ — Կիտին վեր կացավ, մոտեցավ ամուսնուն և բռնեց նրա ձեռքը։

— Լավ է, բայց ամեն բան պիտի չափավոր լինի,— ասաց իշխանուհին։

— Ո՞նց է, Ագաֆյա Միխայլովնա, պատրաստ է մուրաբան,— ասաց Լևինը, ժպտալով Ագաֆյա Միխայլովնային ու ցանկանալով ուրախացնել նրան։ — Լա՞վ է նոր ձևով։

— Պետք է, որ լավ լինի։ Մեր գիտենալով՝ եփն անցել է։

— Այդպես ավելի լավ է, Ագաֆյա Միխայլովնա. չի թթվի, թե չէ մեր սառույցն արդեն հալվել է, իսկ պահելու տեղ չկա,— ասաց Կիտին, անմիջապես հասկանալով ամուսնու դիտավորությունը և միևնույն զգացումով դիմելով պառավին։ —Դրա

փոխարեն, ձեր աղ դրած բաներն այնպես լավն են, որ մայրիկը ասում է, ո՛չ մի տեղ կերած չկա դրանց նմանը,— ավելացրեց նա, ժպտալով և ուղղելով նրա գլխաշորը։

Ագաֆյա Միխայլովնան բարկացած նայեց Կիտիին։

— Դուք ինձ մի՛ մխիթարեք, տիկին։ Ա՛յ հրես, ես նայում եմ ձեզ՝ նրա հետ ու սիրտս ուրախանում է,— ասաց նա և այդ կոպիտ արտահայտությունը՝ նրա հետ, ոչ թե նրանց հետ՝ հուզեց Կիտիին։

— Գնանք մեզ հետ սունկի, դուք մեզ ցույց կտաք սունկերի տեղը։

Ագաֆյա Միխայլովնան ժպտաց, գլուխն օրորեց, կարծես ուզում էր ասել. «Կուզենայի բարկանալ ձեզ վրա, բայց չի կարելի»։

— Խնդրեմ անեք այնպես, ինչպես խորհուրդ տվի ես,— ասաց պառավ իշխանուհին. — մուրաբայի վրայից թուղթ դրեք ու թրջեք ռոմով, և երբեք չի բորբոսնի առանց սառույցի։

III

Կիտին առանձնապես ուրախ էր ամուսնու հետ երես առ երես մնալու առթիվ, որովհետև նկատեց, թե ինչպե՛ս տրրտմության մի ստվեր անցավ ամեն բան պարզորեն արտահայտող նրա դեմքի վրայից այն րոպեին, երբ նա մտավ տեռաս ու հարցրեց, թե ինչի՞ մասին էին խոսում, և նրան չպատասխանեցին։

Երբ նրանք ոտքով առաջ անցան մյուսներից ու տան տեսողությունից դուրս եկան հարթ, փոշոտ և հաճարի հասկերով ու հատիկներով շաղ տված ճանապարհը, Կիտին ավելի ուժգին հենվեց ամուսնու թևին և սեղմեց այն իրեն։ Լևինն արդեն մոռացել էր բոպեական անախորժ տպավորության մասին ու Կիտիի հետ առանձին զգում էր այժմ,— երբ կնոջ հղիության հետ կապված միտքը ոչ մի բոպե դուրս չէր գալիս նրա գլխից,— սիրած էակի մոտիկության այն հրճվանքը, որը միանգամայն ազատ էր կրքից և որը նրա համար տակավին նոր էր և ուրախալի։ Խոսելու բան չկար, բայց նա ուզում էր լսել կնոջ ձայնի հնչյունը, ինչպես և տեսնել նրա հայացքը, որ փոխվել էր այժմ հղիության ժամանակ։ Ձայնի, ինչպես և հայացքի

մեջ կար քնքշություն ու լրջություն, նման այն լրջության, որ ունենում են միշտ միևնույն սիրած բանի վրա կենտրոնացած մարդիկ։

— Դու չե՞ս հոգնի այդպես։ Հենվիր ավելի,— ասաց Լևինը։

— Ո՛չ, ես այնպես ուրա՞խ եմ, որ քեզ հետ մենակ մնացի և խոստովանում եմ, որքան էլ լավ է ինձ համար նրանց հետ լինելը, այնուամենայնիվ, ափսոս ձմեռվա մեր երկուսով անցկացրած երեկոները։

— Այն լավ էր, Դոլի սա ավելի լավ է։ Երկուսն էլ լավ են,— ասաց Լևինը, սեղմելով նրա ձեռքը։

— Գիտե՞ս, թե ինչի՞ մասին էինք մենք խոսում, երբ դու մտար։

— Մուրաբայի՞ մասին։

— Այո՛, և՛ մուրաբայի մասին. բայց հետո այն մասին, թե ինչպե՞ս են առաջարկություն անում։

— Ա՞,— ասաց Լևինը, ավելի շուտ լսելով կնոջ ձայնի հնչյունները, քան նրա ասած բառերը, ամբողջ ժամանակ մտածելով ճանապարհի մասին, որն այժմ անցնում էր անտառով, և խուսափելով այն տեղերից, որտեղ Կիտին կարող էր անհաջող փոխել քայլը։

— Եվ Սերգեյ Իվանովիչի ու Վարենկայի մասին։ Դու նկատեցի՞ր... Ես շատ եմ ուզում այդ բանը,— շարունակեց Կիտին։— Ի՞նչ է քո կարծիքը դրա մասին։— Եվ նա նայեց ամուսնու երեսին։

— Չգիտեմ, թե ի՞նչ մտածեմ,— ժպտալով պատասխանեց Լևինը։— Այդ տեսակետից Սերգեյը շատ տարօրինակ է ինձ համար։ Չէ՞ որ ես պատմել եմ...

— Այո՛, որ նա սիրահարված է եղել այն աղջկան, որը մեռել է...

— Դա այն ժամանակ էր, երբ ես երեխա էի, ես դրա մասին գիտեմ ավանդաբար։ Ես հիշում եմ նրան այն ժամանակ։ Նա զարմանալի սիրահաճո էր։ Այն օրից սկսած ես դիտում եմ նրան կանանց շրջանում. նա սիրալիր է, ոմանք նրան դուր են գալիս, բայց զգում ես, որ նրանք նրա համար սոսկ մարդ են, ոչ թե կին։

— Այո՛, բայց այժմ Վարենկայի հետ... կարծես մի բան կա...

— Գուցե և կա... Սակայն պիտի ճանաչել նրան... Նա ռոմանտիկահատուկ, զարմանալի մարդ է։ Նա ապրում է միմիայն հոգևոր կյանքով։ Նա չափազանց մաքուր ու վեհ հոգու տեր է։

— Ինչպե՞ս։ Մի՞թե այդ կստորացնի նրան։

— Ո՛չ, բայց նա այնպես վարժվել է ապրել միայն հոգևոր կյանքով, որ չի կարող հաշտվել իրականության հետ, իսկ Վարենկան այսուամենայնիվ իրականություն է։

Լևինն արդեն վարժվել էր այժմ համարձակորեն ասելու իր միտքը, նեղություն չտալով իրեն՝ ձևավորելու այն ճիշտ բառերով. նա գիտեր, որ կինն այդպիսի սիրային բոպեներին, ինչպես այժմ, կհասկանա անգամ ակնարկից, թե ի՛նչ է ուզում ասել ինքը, և Կիտին հասկացավ նրան։

— Այո՛, բայց Վարենկայի մեջ չկա այն իրականությունը, ինչպես իմ մեջ է. ես հասկանում եմ, որ Սերգեյ Իվանովիչը երբեք չէր սիրի ինձ, բայց Վարենկան ամբողջովին հոգևոր էակ է։

— Է՛, ո՛չ, Սերգեյն այնպես սիրում է քեզ, և դա միշտ այնպես հաճելի է ինձ, որ սիրում են քեզ...

— Այո՛, նա բարի է իմ հանդեպ, բայց...

— Բայց ո՛չ այնպես, ինչպես հանգուցյալ Նիկոլենկան... դուք սիրեցիք իրար,— վերջացրեց Լևինը։— Ինչո՞ւ չասել,— ավելացրեց նա։— Ես երբեմն հանդիմանում եմ ինձ. կվերջանա նրանով, որ մարդ կմոռանա։ Ա՜խ, ի՛նչ սոսկալի և հիանալի մարդ էր նա... Հա՜, ինչի՞ մասին էինք խոսում,— ասաց Լևինը քիչ լռությունից հետո։

— Դու կարծում ես, որ Սերգեյ Իվանովիչը չի՞ կարող սիրահարվել,— ասաց Կիտին, թարգմանելով իր լեզվով։

— Ոչ թե չի կարող սիրահարվել,— ժպտալով ասաց Լևինը,— այլ նա չունի այն թուլությունը, որը պետք է... Ես միշտ նախանձում էի նրան և նույնիսկ այժմ, երբ ես այնպես երջանիկ եմ, դարձյալ նախանձում եմ նրան։

— Նախանձում ես, որ նա չի կարող սիրահարվե՞լ։

— Ես նախանձում եմ այն բանին, որ նա ինձնից ավելի լավն է,— ժպտալով ասաց Լևինը։— Նա ապրում է ո՛չ իր համար։ Նրա ամբողջ կյանքը ենթարկված է պարտքի գիտակցության։ Այդ իսկ պատճառով նա կարող է լինել հանգիստ և գոհ։

— Իսկ դո՞ւ,— ասաց Կիտին ծաղրական, գորովալից ժպիտով։

Կիտին ոչ մի կերպ չէր կարող արտահայտել իր մտքերի այն ընթացքը, որն ստիպում էր իրեն ժպտալ. բայց վերջին հետևությունն այն էր, թե իր ամուսինը, որ հիանում էր եղբորով և իրեն նվաստացնում էր նրա առաջ, անկեղծ չէր։ Կիտին գիտեր, որ նրա այդ ո՛չ-անկեղծությունն առաջանում էր դեպի եղբայրը տածած սիրուց, խիղճն իրեն տանջելու զգացումից, որ ինքը չափազանց երջանիկ է, և մանավանդ ավելի լավ լինելու ցանկությունից. մի բան, որ երբեք չէր լքում նրան— նա սիրում էր այդ գիծն իր ամուսնու մեջ, ուստի ժպտում էր։

— Իսկ դո՞ւ։ Ինչի՞ց ես դու դժգոհ,— հարցրեց Կիտին միևնույն ժպիտով։

Լևինի ինքն իրենից դժգոհ լինելու խնդրում Կիտիի անվրդովությունը ուրախացնում էր նրան, և նա անգիտակցաբար դրդում էր կնոջը, որ արտահայտի իր անվստահության պատճառները։

— Ես բախտավոր եմ, բայց դժգոհ եմ ինքս ինձնից...— ասաց Լևինը։

— Հապա էլ ինչպե՞ս կարող ես դժգոհ լինել. եթե բախտավոր ես։

— Այսինքն՝ ինչպե՛ս ասեմ... Ես արտանց ոչինչ չեմ ցանկանում, բացի մի բանից, որ դու ահա չսայթաքես։ Ա՜խ, չէ՞ որ չի կարելի այդպես ցատկել,— ընդհատեց նա իր խոսակցությունը կշտամբանքով, երբ Կիտին արեց չափազանց արագ շարժում, անցնելով շավիղին ընկած ճյուղի վրայից։— Բայց երբ ես դատում եմ իմ մասին ու համեմատում ինձ ուրիշների հետ, մանավանդ եղբորս հետ, զգում եմ, որ ես վատն եմ։

— Բայց ինչո՞վ ես վատ,— շարունակեց Կիտին նույն ժպիտով.— մի՞թե դու նույնը չես անում ուրիշների համար։ Ե՛վ քո ագարակները, և՛ քո տնտեսությունը, և՛ քո գիրքը...

— Ո՛չ, ես զգում եմ, մանավանդ, այժմ, դո՛ւ ես մեղավոր,— ասաց Լևինը, սեղմելով նրա ձեռքը,— որ այդ այն չէ։ Ես այդ անում եմ հենց այնպես, թեթևակի։ Եթե կարողանայի

սիրել այդ ամբողջ գործը, ինչպես սիրում եմ քեզ... Թե չէ՝ վերջերս ես այդ անում եմ ինչպես ինձ տրված դաս։

— Հապա ի՞նչ կասես դու հայրիկիս մասին,— հարցրեց Կիտին։— Ուրեմն, ի՞նչ, նա՞ էլ վատ է, որովհետև ոչինչ չի արել ընդհանուր գործի համար։

— Նա՞, ո՛չ։ Բայց պետք է ունենալ այն պարզությունը, պայծառությունը, բարությունը, որ ունի քո հայրը, իսկ ես արդյոք ունե՞մ այդ։ Ես չեմ անում և տանջվում եմ։ Այս բոլորը դո՛ւ արիր։ Երբ դու չկայիր և դեռ չկար այդ,— ասաց նա, հայացքը գցելով կնոջ փորին (Կիտին հասկացավ նրա ակնարկը),— ես իմ ամբողջ ուժը դնում էի գործի մեջ, իսկ հիմա չեմ կարող, և ճնշվում եմ. ես անում եմ իսկապես այնպես, ինչպես պատրաստում են տված դասը, ես ձևանում եմ...

— Իսկ դու կուզենայի՞ր այժմ փոխանակվել Սերգեյ Իվանովիչի հետ,— հարցրեց Կիտին։— Կուզենայի՞ր անել այդ ընդհանուր գործը և սիրել այդ տված դասը, ինչպես նա. և ուրիշ ոչի՞նչ։

— Իհարկե, ո՛չ,— ասաց Լևինը։— Բայց ես այնպես երջանիկ եմ, որ ոչինչ չեմ հասկանում։ Իսկ դու կարծում ես, որ այսօր նա առաջարկությո՞ւն կանի,— ավելացրեց Լևինը քիչ լռությունից հետո։

— Ե՛վ կարծում եմ, և՛ չեմ կարծում։ Միայն ես սաստիկ ուզում եմ այդ։ Կա՛ց։— Կիտին կռացավ ու պոկեց ճանապարհի եզրին բուսած վայրի երիցուկը։— Հապա՛, համբիր— առաջարկություն կանի, չի՛ անի,— ասաց նա, ծաղիկը տալով ամուսնուն։

— Կանի, չի՛ անի— ասում էր Լևինը, պոկելով սպիտակ նեղ ակոսամեջ թերթիկները։

— Ո՛չ, ո՛չ,— բռնելով նրա ձեռքը, կանգնեցրեց նրան Կիտին, որ հուզմունքով հետևում էր նրա մատներին։— Դու երկուսը պոկեցիր։

— Բայց դրա փոխարեն այդ փոքրիկը հաշվի չէ,— ասաց Լևինը, պոկելով կարճ, թերաճ թերթիկը.— Ահա հասավ մեզ և լինելյան։

— Դու չհոգնեցի՞ր, Կիտի,— ձայնեց իշխանուհին։

— Ամենևին։

— Թե չէ՝ նստիր, եթե ձիերը հանգիստ են, և դանդաղ կգնան։

Բայց չարժեր նստել, արդեն մոտ էր. և ամենքը ինքնին ոտքով։

IV

Վարենկան շատ գրավիչ էր սև մազերին կապած իր սպիտակ թաշկինակով, շրջապատված երեխաներով, բարեսրտորեն ու խնդագին զբաղված նրանցով և, ակնհայտորեն, հուզված իրեն դուր եկող տղամարդու հետ բացատրվելու հնարավորությամբ։ Սերգեյ Իվանովիչը քայլում էր նրա կողքով ու անդադար հիանում նրանով։ Նայելով նրան, Սերգեյ Իվանովիչը հիշում էր այն բոլոր հաճելի խոսքերը, որ լսել էր նրանից, այն ամբողջ լավը, որ գիտեր նրա մասին, և ավելի ու ավելի գիտակցում էր, թե այն զգացումը, որ ինքը տածում էր դեպի նա, առանձնահատուկ զգացում էր, որ վաղուց, շատ վաղուց և մի անգամ միայն ունեցել էր ինքը, իր առաջին երիտասարդության օրերին։ Նրա մոտիկությունից առաջացած ուրախության զգացումը շարունակ ուժեղանալով, հասավ մինչ այն աստիճան, որ դնելով նրա զամբյուղի մեջ իր գտած կեչիի սունկը՝ բարակ արմատով ու ետ ծալված ափերով, նայեց նրա աչքերին և նկատելով նրա դեմքը պատած ուրախության ու վախի հուզման կարմրությունը, շփոթվեց և լուռ ժպտաց նրան այնպիսի ժպիտով, որը չափազանց շատ բան էր ասում։

«Եթե այդպես է,— ասաց Սերգեյ Իվանովիչն ինքն իրեն,— ես պետք է կշռադատեմ ու վճռեմ, և ո՛չ թե երեխայի պես անձնատուր լինեմ բոպեի հրապուրանքին»։

— Գնամ այժմ ամենքից անկախ սունկ հավաքելու, թե չէ՝ նկատելի չէ իմ ձեռք բերածը,— ասաց նա և մեն-մենակ գնաց անտառի եզրից, որտեղ նրանք քայլում էին թավշյա ցածր խոտերի վրայով՝ հին, ցանցառ կեչիների արանքում, գնաց դեպի անտառի մեջտեղը, որտեղ սպիտակ կեչիների միջին երևում էին կաղամախի գորշ բները և սևին տալիս կաղնուտի թփերը։ Հեռանալով մոտ 40 քայլ ու մտնելով ամբողջովին ծաղկած իլենու թփի ետևը, վարդագույն-կարմիր գինդերով,

Սերգեյ Իվանովիչը կանգ առավ, համոզված, որ իրեն չեն տեսնում։ Նրա շուրջը տիրում էր կատարյալ անդորրություն։ Միայն կեչիների վերևում, որոնց տակ կանգնած էր նա, մեղուների պարսի նման անլռելի աղմկում էին ճանճերը, և երբեմն-երբեմն լսվում էին երեխաների ձայները։ Հանկարծ, անտառի ծայրից ո՞չ հեռու, հնչեց Վարենկայի կոնտրալտո ձայնը, որ կանչում էր Գրիշային, և Սերգեյ Իվանովիչի դեմքին փայլեց խնդագին ժպիտ։ Գիտակցելով այդ ժպիտը, Սերգեյ Իվանովիչը բացասաբար ճոճեց գլուխն իր այս կացության առթիվ և հանելով մի սիգար, սկսեց վառել։ Նա երկար ժամանակ չէր կարողանում վառել լուցկին՝ քսելով կեչիի բնին։ Սպիտակ կեղևի վարի շերտը պոկում էր ֆոսֆորը, և կրակը հանգչում էր։ Վերջապես լուցկիներից մեկը վառվեց, և սիգարի անուշաբույր ծուխը երերուն, լայն սփռոցի նման որոշակի ձգվեց առաջ ու վեր՝ թփի վրա, կեչիի կախ ընկած ոստերի տակ։ Աչքերով հետևելով ծխի շերտին, Սերգեյ Իվանովիչը գնաց հանգարտ քայլերով, կշռադատելով իր կացությունը։

«Իսկ ինչո՞ւ ո՞չ,— մտածում էր նա։— Եթե դա լիներ միայն բռնկում կամ կիրք, թե ես զգայի միայն այդ սիրահակումը՝ այդ փոխադարձ սիրահակումը (ես կարող եմ ասել փոխադարձ), բայց զգայի, որ այդ դեմ է գնում իմ կյանքի ամբողջ հղանակին, եթե ես զգայի, որ անձնատուր լինելով իմ սիրահակումին, դավաճանում եմ իմ կոչումին ու պարտքին... բայց այս տեսակ բան չկա։ Դեմ ասելիք միակ բանն այն է, որ կորցնելով Marie-ին, ես ասում էի ինքս ինձ, որ հավատարիմ կմնամ նրա հիշատակին։ Միակ բանն այն է, որ կարող եմ ասել իմ զգացման դեմ... այդ կարևոր է,— ասում էր Սերգեյ Իվանովիչն ինքն իրեն, միաժամանակ զգալով, որ անձամբ իր համար այդ նկատառումը չէր կարող ունենալ ո՞չ մի կարևորություն, այլ գուցե թե միայն փչացներ իր պոետիկ դերը ուրիշների աչքում։ Բայց, դրանից զատ, ինչքան էլ փնտրեմ, ուրիշ ոչինչ չեմ գտնի առարկելու զգացմանս դեմ։ Եթե ես ընտրություն անեի միայն բանականությամբ, չէի կարող գտնել ոչինչ ավելի լավ»։

Ինչքան նա հիշում էր իր ճանաչած կանանց և աղջիկներին, չէր կարողանում մտաբերել այնպիսի մի աղջկա, որն այդ աստիճան համախմբեր իր մեջ, բոլոր, այո՛, իսկապես բոլոր,

այն հատկությունները, որ նա, սառը դատելով, կկամենար տեսնել իր կնոջ մեջ։ Վարենկան ուներ երիտասարդության ամբողջ հրապույրն ու թարմությունը, բայց երեխա չէր, և եթե սիրում էր նրան՝ Սերգեյ Իվանովիչին, սիրում էր գիտակցաբար, ինչպես պետք է սիրի կին էակը. դա հարցի մի կողմն էր։ Մյուսը՝ Վարենկան ո՞չ միայն հեռու է նրբակիրթ աշխարհիկ կյանքի, այլև ակնհայտ կերպով զզվանք է տածում դեպի բարձր հասարակությունը, միաժամանակ ճանաչելով այդ հասարակությունը և ունենալով լավ հասարակության պատկանող կնոջ այն բոլոր վարվելաձևերը, առանց որոնց Սերգեյ Իվանովիչի համար անհերևակայելի էր կյանքի ընկերուհին։ Երրորդ՝ Վարենկան կրոնասեր էր, բայց ոչ երեխայի պես անգիտակից կրոնասեր, ու բարի, ինչպես էր, օրինակ՝ Կիտին, այլ նրա կյանքը հիմնված էր կրոնական համոզմունքների վրա։ Նույնիսկ մանր բաներում Սերգեյ Իվանովիչը գտնում էր նրա մեջ այն բոլորը, ինչ պահանջում էր կնոջից, նա աղքատ ու միայնակ աղջիկ էր, այնպես որ նա իր հետ չէր բերի իր ամուսնու տունը բազմաթիվ ազգականներ ու նրանց ազդեցությունը, ինչպես այդ տեսնում էր Կիտիի օրինակով, այլ ամեն բանով պարտավոր կլիներ ամուսնուն, մի բան, որ ինքը միշտ էլ ուզում էր իր ապագա ընտանեկան կյանքի համար։ Եվ այդ աղջիկը, որ համախմբել էր իր մեջ այս բոլոր հատկությունները, սիրում էր նրան։ Սերգեյ Իվանովիչը համեստ էր, բայց չէր կարող չտեսնել այդ։ Եվ նա սիրում էր Վարենկային։ Դեմ էր միայն մի նկատառում՝ Սերգեյ Իվանովիչի տարիքը։ Բայց նրա ցեղը երկարակյաց է, նա չուներ ո՞չ մի սպիտակ մազ, ոչ ոք նրա տարիքը քառասուն չէր համարում, և նա հիշում էր, որ Վարենկան ասում էր, թե հիսուն տարեկան մարդիկ իրենց ծեր են համարում միայն Ռուսաստանում, մինչդեռ Ֆրանսիայում հիսնամյա մարդը իրեն համարում է dans la force de l'âge[1], իսկ քառասուն տարեկանը՝ un jeune homme[2], բայց ի՞նչ էր նշանակում տարիների թիվը, երբ իրեն զգում էր հոգով երիտասարդ, ինչպես էր դրանից քսան տարի առաջ։ Մի՞թե երիտասարդություն չէր այն զգացումը,

[1] Ծաղկուն հասակում։
[2] Երիտասարդ։

որ նա ուներ, այժմ, երբ մյուս կողմից դուրս գալով նորից անտառի ափը, նա տեսավ արևի շեղ ճառագայթների պայծառ լույսի մեջ Վարենկայի նազելի ֆիգուրը՝ դեղին զգեստով ու զամբյուղը ձեռքին, հին կեչիի բնի մոտով թեթև քայլերով անցնելիս, և երբ Վարենկայի տեսքի այդ տպավորությունը ձուլվեց իր գեղեցկությամբ նրան զարմացնող՝ շեղ ճառագայթներով ողողված՝ դեղնող վարսակի արտի և արտից այն կողմ կապույտ հեռվի մեջ հալվող, դեղնությամբ երփներանգ, հեռավոր, հին անտառի տեսքի հետ։ Նրա սիրտը սեղմվեց խնդագին։ Գորովի զգացումը համակեց նրան։ Նա զգաց, որ ինքը վճռեց։ Վարենկան, որ հենց նոր չոքեց, որ վերցնի սունկը, ճկուն շարժումով բարձրացավ ու նայեց շուրջը։ Գցելով սիգարը, Սերգեյ Իվանովիչը վճռական քայլերով գնաց դեպի նա։

V

«Վարվառա Անդրեևնա, երբ ես դեռ շատ ջահել էի, ես կազմեցի ինձ համար կնոջ իդեալ, որին ես կսիրեմ ու որին երջանիկ կլինեմ անվանելու իմ կյանքը։ Ես ապրել եմ մի երկար կյանք և այժմ առաջին անգամ հանդիպեցի հանձին ձեզ այն կնոջը, որին փնտրում էի։ Ես սիրում եմ ձեզ և առաջարկում եմ ձեզ իմ ձեռքը»։

Սերգեյ Իվանովիչն ասում էր ինքն իրեն դա այն ժամանակ, երբ արդեն գտնվում էր Վարենկայից տասը քայլի վրա։ Ծունկ չոքելով ու պաշտպանելով սունկը Գրիշայից, Վարենկան կանչում էր փոքրիկ Մաշային։

— Այստե՞ղ, այս կո՞ղմ, փոքրիկներ. շատ կա,— ասում էր նա իր կրծքային անուշ ձայնով։

Տեսնելով մոտեցող Սերգեյ Իվանովիչին, Վարենկան չբարձրացավ ու չփոխեց իր դիրքը. բայց ամեն ինչ ասում էր նրան, որ Վարենկան զգում էր նրա մոտենալը և ուրախ է նրան տեսնելու համար։

— Ինչպե՞ս է, որևէ բան գտա՞ք,— հարցրեց Վարենկան, սպիտակ թաշկինակի միջից շուռ տալով դեպի նա իր գեղեցիկ, լուռ ժպտացող դեմքը։

— Ո՛չ մի հատ,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Իսկ դու՞ք։

Վարենկան չպատասխանեց նրան, զբաղված իրեն շրջապատող երեխաներով։

— Այս էլ, ա՛յ, ոստի մոտ,— նշեց Վարենկան փոքրիկ Մաշային փոքրիկ մի ագարիկոն, որն իր առաձիգ վարդագույն գդակի լայնությամբ կտրված էր չոր խոտով, որի տակից դուրս էր պրծել այն։ Վարենկան վեր կացավ, երբ Մաշան բարձրացրեց ագարիկոնը, կիսելով երկու սպիտակ մասի։— Այդ ինձ հիշեցնում է իմ մանկությունը,— ավելացրեց նա, Սերգեյ Իվանովիչի հետ հեռանալով երեխաներից։

Նրանք լուռ անցան մի քանի քայլ։ Վարենկան տեսնում էր, որ նա ուզում է խոսել, ու հասկանում էր, թե ինչի՛ մասին և նվաղում էր ուրախության հուզումից ու վախից։ Նրանք գնացին այնքան հեռու, որ ոչ ոք այլևս չէր կարող լսել նրանց, բայց Սերգեյ Իվանովիչը դեռ չէր սկսում խոսել։ Վարենկայի համար ավելի լավ էր լռելը։ Լռությունից հետո կարելի էր ավելի հեշտությամբ ասել այն, ինչ ուզում էին նրանք ասել, քան սունկերի մասին խոսելուց հետո. բայց իր կամքին հակառակ, կարծես պատահաբար, Վարենկան ասաց։

— Ուրեմն՝ դուք ոչինչ չգտա՞ք։ Ասենք, անտառի մեջտեղը միշտ քիչ է լինում։

Սերգեյ Իվանովիչը հառաչեց ու ոչինչ չպատասխանեց։ Նա սրտնեղեց, որ Վարենկան խոսք արեց սունկերի մասին։ Սերգեյ Իվանովիչն ուզում էր վերադարձնել նրան դեպի առաջին խոսքերը, որ նա ասաց իր մանկության մասին. բայց կարծես թե իր կամքին հակառակ՝ մի պահ լռելուց հետո, իր դիտողությունն արեց նրա վերջին խոսքերի առթիվ.

— Ես լսել եմ, որ սպիտակ սունկերը լինում են գլխավորապես անտառի ծայրին, թեպետև չեմ կարողանում տարբերել սպիտակը։

Անցավ էլի մի քանի րոպե. նրանք ավելի հեռացան երեխաներից ու բոլորովին մենակ էին։ Վարենկայի սիրտը թպրտում էր, այնպես որ նա լսում էր իր սրտի զարկերի ձայնը և զգում, որ կարմրում է, գունատվում և նորից կարմրում։

Տիկին Շտալի մոտ ունեցած իր դրությունից հետո լինել այնպիսի մարդու կին, ինչպիսին էր Կոզնիշևը, Վարենկային թվում էր գերերջանկություն։ Բացի դրանից, Վարենկան համարյա հավատացած էր, որ ինքը սիրահարված է նրան։ Եվ

այժմ պետք է վճռվեր այդ։ Վարենկան սարսափում էր։ Նրա համար սարսափելի էր թե՛ այն, ինչ կասի Սերգեյ Իվանովիչը, թե՛ այն, ինչ չի ասի նա։

Հարկավոր էր բացատրվել ա՛յժմ, կամ երբե՛ք. այդ զգում էր նաև Սերգեյ Իվանովիչը։ Ամեն ինչ Վարենկայի հայացքի, կարմրության, կախ զցած աչքերի մեջ ցույց էր տալիս հիվանդագին սպասողականություն։ Սերգեյ Իվանովիչը տեսնում էր այդ ու խղճում էր նրան։ Նա զգում էր նույնիսկ, որ ոչինչ չասել այժմ, նշանակում է՝ վիրավորել նրան։ Նա իր մտքում կրկնում էր բոլոր փաստարկները, հօգուտ իր որոշման։ Նա կրկնում էր ինքն իր մեջ նաև այն խոսքերը, որոնցով ուզում էր արտահայտել իր առաջարկությունը. բայց այդ խոսքերի փոխարեն, իր գլուխն եկած ինչ-որ անսպասելի նկատառումով, նա հանկարծ հարցրեց.

— Ի՞նչ տարբերություն կա սպիտակ և կեչիի սունկերի միջև։

Վարենկայի շուրթերը դողում էին հուզմունքից, երբ նա պատասխանեց.

— Գդակի մեջ համարյա ո՛չ մի, տարբերությունն արմատի մեջ է։

Եվ հենց որ ասվեցին այս խոսքերը, թե՛ մեկը, թե՛ մյուսը հասկացան, որ բանը վերջացած է, որ չի ասվի այն, ինչ պետք է ասվեր, և սկսեց հանդարտել նրա հուզմունքը, որը դրանից առաջ հասել էր բարձրագույն աստիճանի։

— Կեչիի սունկն այն է, որի արմատը հիշեցնում է բրյուսեթի երկու օր չածիլած մորուք,— ասաց Սերգեյ Իվանովիչն արդեն հանդարտված։

— Այո՛, ճիշտ է այդ,— ժպտալով պատասխանեց Վարենկան, և ակամա փոխվեց նրանց զբոսանքի ուղղությունը։ Նրանք սկսեցին մոտենալ երեխաներին։ Վարենկան և՛ վշտանում էր, և՛ ամաչում, բայց դրա հետ միասին զգում էր նաև թեթևություն։

Վերադառնալով տուն ու մրտակելով բոլոր փաստարկները, Սերգեյ Իվանովիչը գտավ, որ ինքը սխալ էր դատում։ Նա չէր կարող դավաճանել Marie-ի հիշատակին։

— Կամա՛ց, երեխայք, կամա՛ց,— բղավեց Լևինը երեխաների վրա նույնիսկ բարկացած, կանգնելով կնոջ առաջ, որ-

պեսզի պաշտպանի նրան, երբ երեխաների բազմությունը ճվճվոցով վազեց նրանց ընդառաջ։

Երեխաներից հետո անտառից դուրս եկան նաև Սերգեյ Իվանովիչն ու Վարենկան։ Պետք չէր, որ Կիտին հարցներ Վարենկային։ Նա երկուսի դեմքերի հանգիստ և մի փոքր ամոթահար արտահայտությունից հասկացավ, որ իր ծրագրերը չիրագործվեցին։

— Հը՛, ինչպե՞ս է,— հարցրեց նրան ամուսինը, երբ նրանք նորից վերադառնում էին տուն։

— Ջի բռնում,— ասաց Կիտին, իր ժպիտով ու խոսելու եղանակով հիշեցնելով հորը, մի բան, որ հաճախ բավականությամբ նկատում էր նրա մեջ Լևինը։

— Ինչպե՞ս թե չի բռնում։

— Ահա այսպես,— ասաց Կիտին, վերցնելով ամուսնու ձեռքը և մոտեցնելով բերանին ու դիպչելով նրան փակ շուրթերով։— Ճիշտ այնպես, ինչպես համբուրում են եպիսկոպոսի աչը։

— Իսկ որի՞նը չի բռնում,— ասաց Լևինը ծիծաղելով։

— Երկուսինն էլ։ Մինչդեռ, պետք է ա՛յ այսպես...

— Մուժիկներ են գալիս...

— Ո՛չ, նրանք չտեսան։

VI

Երեխաների թեյի ժամանակ մեծերը նստել էին պատշգամբում և զրույց էին անում այնպես, կարծես ոչինչ չէր պատահել, թեև ամենքը, մանավանդ Սերգեյ Իվանովիչն ու Վարենկան, շատ լավ էլ գիտեին, որ պատահել է թեպետև բացասական, բայց շատ կարևոր դեպք։ Նրանք երկուսն էլ ունեին միակերպ զգացում, նման այն զգացման, որ ունենում է անհաջող քննությունից հետո դպրոցից ընդմիշտ հեռացված, կամ նույն դասարանում մնացած աշակերտը։ Բոլոր ներկա եղողները նույնպես զգալով, որ մի բան է պատահել, աշխուժորեն խոսում էին կողմնակի նյութերի մասին։ Լևինը և Կիտին այս երեկո զգում էին իրենց առանձնապես երջանիկ ու սիրազեղ, համերաշխ։ Այն, որ նրանք երջանիկ էին իրենց սիրով, պարունակում էր իր մեջ անախորժ ակնարկ

նրա՛նց հասցեին, ովքեր ուզում էին նույն բանը ու չէին կարող, և նրանք ճնշվում էին։

— Հիշեցեք իմ խոսքը՝ Alexandre-ն չի գա,— ասաց պառավ իշխանուհին։

Այսօր երեկոյան գնացքով սպասում էին Ստեպան Արկադեիչին։ Եվ ծերունի իշխանը գրում էր, թե կարող է պատահել, որ ինքն էլ գա։

— Եվ ես գիտեմ, թե ինչու՛ չի գա,— շարունակեց իշխանուհին.— Նա ասում է, որ ջահելներին միառժամանակ պետք է մենակ թողնել սկզբում։

— Հայրիկն առանց այդ էլ թողել է մեզ։ Մենք նրան չենք տեսել,— ասաց Կիտին։— Եվ հետո ի՞նչ ջահելներ ենք մենք։ Մենք արդեն այնպես ծերացել ենք։

— Եթե միայն նա չգա, ես էլ հրաժեշտ կտամ ձեզ, զավակներս,— ասաց իշխանուհին տխուր հառաչելով։

— Է՜հ, մայրի՛կ, ի՞նչ պատահեց ձեզ,— հարձակվեցին նրա վրա երկու աղջիկները։

— Մի մտածիր, թե ի՞նչ վիճակումն է նա։ Չէ՞ որ այժմ...

Եվ հանկարծ բոլորովին անսպասելի կերպով դողաց պառավ իշխանուհու ձայնը։ Աղջիկները լռեցին ու նայեցին իրար։ «Maman միշտ կգտնի իր համար որևէ տխուր բան», ասին նրանք այդ հայացքով։ Նրանք չգիտեին, թե ինչքան էլ լավ զգար իրեն իշխանուհին իր աղջկա մոտ, ինչքան էլ իրեն պետքական համարեր այստեղ, նա տանջվում տխրում էր թե՛ իր, թե՛ ամուսնու համար այն օրից, երբ նրանք ամուսնացրին իրենց վերջին աղջկան, և ընտանեկան բույնը դատարկվեց։

— Ի՞նչ եք ուզում, Ագաֆյա Միխայլովնա,— հարցրեց հանկարծ Կիտին խորհրդավոր տեսքով ու նշանակալից դեմքով կանգ առած Ագաֆյա Միխայլովնային։

— Ընթրիքի մասին։

— Հրաշալի բան,— ասաց Դոլլին,— դու գնա կարգադրիր, իսկ ես գնամ և Գրիշայի հետ կրկնեմ դասը։ Թե չէ՝ նա այսօր ոչինչ չի արել։

— Այդ ինձ խրատ։ Ո՛չ, Դոլլի, ե՛ս կգնամ,— ասաց Լևինը, տեղից վեր թռչելով։

Գրիշան, որ արդեն մտել էր գիմնազիա, ամռանը պետք է

կրկներ դասերը։ Դարյա Ալեքսանդրովնան, որ դեռ Մոսկվայում որդու հետ միասին անցնում էր լատիներեն, գալով Լևինների մոտ՝ օրենք սահմանեց իր համար՝ օրվա մեջ գեթ մի անգամ նրա հետ կրկնելու ամենադժվար դասերը թվաբանությունից և լատիներենից։ Լևինը ցանկություն հայտնեց փոխարինել Դոլլիին. բայց մայրը մի անգամ լսելով Լևինի դասը և նկատելով, որ դա այնպես չի արվում, ինչպես կրկնում էր Մոսկվայում ուսուցիչը, քաշվելով ու աշխատելով չվիրավորել Լևինին, վճռականապես ասաց նրան, թե պետք է անցնել գրքով այնպես, ինչպես անցնում էր ուսուցիչը և ավելի լավ է. եթե ինքն անի այդ բանը։ Լևինը սրտնեղեց Ստեպան Արկադեիչից այն բանի համար, որ իր անփութության պատճառով ոչ թե նա ինքը, այլ մայրն էր զբաղվում դասավանդման հոգսերով, որից մայրը ոչինչ չէր հասկանում, ապա զայրանում էր ուսուցիչների վրա, որ այնպես վատ են սովորեցնում երեխաներին. բայց քենուն խոստացավ ուսուցումը տանել այնպես, ինչպես նա էր ուզում։ Եվ Լևինը շարունակում էր պարապել Գրիշայի հետ ո՛չ թե իր մեթոդով, այլ գրքով, այս պատճառով էլ պարապում էր ո՛չ սիրով և հաճախ մոռանում էր դասի ժամանակը։ Այդպես էր նաև այսօր։

— Ո՛չ, ե՛ս կգնամ, Դոլլի, դու նստիր,— ասաց նա։— Մենք բոլորը կանենք կարգով, գրքով։ Միայն երբ Ստիվան գա, գնանք որսի, այն ժամանակ արդեն բաց կթողնենք։

Եվ Լևինը գնաց Գրիշայի մոտ։

Նույն բանն ասաց Վարենկան Կիտիին։ Վարենկան Լևինների երջանիկ, բարեկարգ տանը ևս կարողացավ օգտակար լինել։

— Ես ընթրիք կպատվիրեմ, իսկ դուք նստեք,— ասաց նա ու վեր կացավ և մոտեցավ Ագաֆյա Միխայլովնային։

— Այո՛, այո՛, երևի ճտեր չեն գտել։ Այդ դեպքում մերոնցից...— ասաց Կիտին։

— Մենք կտնօրինենք Ագաֆյա Միխայլովնայի հետ,— և Վարենկան գնաց, անհայտացավ նրա հետ։

— Ի՞նչ հաճելի աղջիկ է,— ասաց իշխանուհին։

— Ո՛չ թե հաճելի, այլ այնքան հրաշալի, որի նմանը չես գտնի։

— Ուրեմն, դուք այսօր սպասում եք Ստեպան Արկադևիչին,— ասաց Սերգեյ Իվանովիչը, հայտնապես չկամենալով շարունակել խոսակցությունը Վարենկայի մասին։— Դժվար է գտնել երկու քենակալներ, որ այնպես քիչ նման լինեն իրար,— ասաց նա նուրբ ժպիտով. մեկը շարժուն է, որ ապրում է միայն հասարակության մեջ, ինչպես ձուկը՝ ջրում. մյուսը՝ մեր Կոստյան՝ կայտառ, աշխույժ, ամեն բանի հանդեպ նրբազգաց, բայց հենց որ ընկնում է հասարակության մեջ, կամ մարում է, կամ անմտաբար թպրտում, ինչպես ձուկը գետնի վրա։

— Այո՛, նա թեթևամիտ է շատ,— ասաց իշխանուհին, դիմելով Սերգեյ Իվանովիչին։— Ես իսկապես ուզում էի խընդրել ձեզ, որպեսզի դուք ասեիք նրան, որ սրա համար (նա նշեց Կիտիին) անհնարին է մնալ այստեղ, որ անպայման պետք է գնալ Մոսկվա։ Նա ասում է, որ բժիշկ կհրավիրի...

— Maman, նա ամեն բան կանի, նա ամեն բանի համաձայն է,— ասաց Կիտին, մորից սրտնեղած այն բանի համար, որ Մայրն այդ գործում դատավոր է կանչում Սերգեյ Իվանովիչին։

Նրանց խոսակցության կեսին, ծառուղում լսվեց ձիերի ֆոնչոց և խճաքարերի վրա անիվների դղրդյուն։

Մինչ վեր կկենար Դոլլին, որ ընդառաջ գնա ամուսնուն, երբ ցածրում, այն սենյակի պատուհանից, որտեղ սովորում էր Գրիշան, դուրս թռավ Լևինը և ցած իջեցրեց Գրիշային։

— Ստիվան է,— պատշգամբի տակից բղավեց Լևինը։— Մենք վերջացրինք, Դոլլի, մի՛ վախեցիր,— ավելացրեց նա, և երեխայի պես վազեց կառքին ընդառաջ։

— Is ea, id, ejus, ejus, ejus[1],— բղավում էր Գրիշան, թոչկոտելով ծառուղում։

— Եվ էլի մի մարդ։ Հավանորեն հայրիկն է,— բղավեց Լևինը, կանգ առնելով ծառուղու մոտ։— Կիտի, մի՛ իջիր զառիթափ սանդուղքով, գնա շուրջանակի։

Բայց Լևինը սխալվեց, ծերունի իշխանի տեղ ընդունելով այն մարդուն, որ նստած էր կառքում։ Երբ նա մոտեցավ կառքին, տեսավ Ստեպան Արկադևիչի կողքին ո՛չ թե իշխանին, այլ մի գեղեցիկ, հաստ երիտասարդի, գլխին շոտլանդական թասակ՝ երկարաձայր ժապավեններով։ Դա Վասենկա Վեսլովսկին էր, Շչերբացկիների ազգականը, պետերբուրգյան-մոսկովյան փայլուն երիտասարդներից, «հիանալի տղա և մոլի որսորդ», ինչպես ներկայացրեց նրան Ստեպան Արկադևիչը։

Բնավ չշփոթված այն հիասթափությունից, որ նա առաջացրեց, փոխարինելով իրենով ծերունի իշխանին, Վեսլովսկին ուրախ բարևեց Լևինին, հիշեցնելով իրենց նախկին ծանոթությունը և Գրիշային վերցնելով կառքի մեջ, անցկացրեց նրան պանտեր շան վրայով, որ բերել էր իր հետ Ստեպան Արկադևիչը։

Լևինը կառք չնստեց, այլ գնաց նրա ետևից։ Նա մի քիչ սրտնեղեց այն բանի համար, որ չեկավ ծերունի իշխանը, որին որքան ավելի էր ճանաչում, այնքան ավելի էր սիրում. նա սրտնեղեց նաև այն բանի համար, որ հայտնվեց այդ Վասենկա Վեսլովսկին՝ բոլորովին օտար և ավելորդ մի մարդ։ Նա թվաց նրան ավելի ևս օտար և ավելորդ այն պատճառով, որ Լևինը մոտեցավ սանդուղքներին, որի մոտ հավաքվել էր մեծերի և երեխաների աշխույժ բազմությունը, տեսավ, որ Վասենկա Վեսլովսկին համբուրում է Կիտիի ձեռքը առանձնապես սիրալիր և քաղաքավարի։

— Մենք cousins ենք ձեր կնոջ հետ և հին ծանոթներ,— ասաց Վասենկա Վեսլովսկին, նորից ամուր-ամուր սեղմելով Լևինի ձեռքը։

— Հը, ինչպե՞ս է, որսի թռչուններ կա՞ն,— դիմեց Լևինին Ստեպան Արկադևիչը, հաղիվ կարողանալով ողջույնի խոսք ասել յուրաքանչյուրին։— Մենք, ա՜յ, սրա հետ ունենք ամենադաժան դիտավորությունները։ Ինչպե՞ս թե, maman, այն օրվանից նրանք չեն եղել Մոսկվայում։ Տանյա՛, ահա՛ քեզ։ Հանիր, խնդրեմ, կառքի մեջ է, ետևում,— ամեն ուղղությամբ ասում էր նա։— Ի՞նչ թարմացել ես դու, Դոլլինկա,— ասում էր նա կնոջը, մի անգամ էլ համբուրելով նրա ձեռքը, բռնած այն իր ձեռքի մեջ և մյուսով տպտպացնելով վրայից։

Լևինը, որ մի բոպե առաջ շատ ուրախ տրամադրության էր, այժմ մռայլ նայում էր ամենքին, և ոչ մի բան այլևս դուր չէր գալիս նրան։

«Ո՞ւմ էր նա երիկ համբուրում այդ շրթունքներով», մտա-

[1] Լատինական «այս», «այդ», «այն» դերանվան հոլովումը։

ծում էր նա, նայելով Ստեպան Արկադևիչի քնքուշ վերաբերմունքին կնոջը։ Նա նայեց Դոլլիին, սա՛ ևս դուր չեկավ նրան։

«Չէ՞ որ Դոլլին չի հավատում նրա սիրույն։ Հապա էլ ինչ՞ համար է այդպես ուրախ։ Զզվելի է», մտածում էր Լևինը։

Նա նայեց իշխանուհուն, որը մի րոպե առաջ այնպես սիրելի էր նրան, և նրան դուր չեկավ այն վարվելաձևը, որով իշխանուհին, ինչպես իր տանը, ողջունում էր այդ Վասենկային՝ իր ժապավեններով։

Նույնիսկ Սերգեյ Իվանովիչը, որը նույնպես դուրս եկավ նախազգվիթ, անախորժ թվաց նրան այն շինծու սիրալիրությամբ, որով դիմավորում էր Ստեպան Արկադևիչին, մինչդեռ Լևինը գիտեր, որ իր եղբայրը չէր սիրում ու չէր հարգում Օբլոնսկուն։

Վարենկան էլ, անգամ նա էլ զզվելի էր Լևինի համար նրանով, որ այդ պարոնի հետ ծանոթանում էր իր sainte nitouche[1] տեսքով, մինչդեռ նա մտածում է միայն այն բանի մասին, թե ինչպես ամուսնանա։

Ամենքից ավելի զզվելի էր Կիտին, որը ենթարկվում էր ուրախության այն տոնին, որով այդ պարոնը նայում էր իր գյուղ գալուն, կարծես թե դա տոն էր իր և ամենքի համար. Կիտին անախորժ էր մանավանդ այն առանձնահատուկ ժպիտով, որով պատասխանում էր Վեսլովսկու ժպիտին։

Աղմկալից խոսակցելով, ամենքը գնացին տուն, բայց հենց որ ամենքը նստեցին, Լևինը շուտ եկավ ու դուրս գնաց։

Կիտին տեսավ, որ ամուսնուն մի բան պատահեց։ Նա ուզում էր հարմար րոպե գտնել և խոսել նրա հետ առանձին, բայց Լևինը շտապեց հեռանալ նրանից, ասելով, թե ինքը պետք է գնա գրասենյակ։ Վաղուց ի վեր տնտեսական գործերը նրան այնպես կարևոր չէին թվացել, ինչպես այսօր։ «Նրանց ամենքի համար տոն է այնտեղ,— մտածում էր նա,— այնինչ այստեղ գործերը տոնական չեն, դրանք չեն սպասում և առանց դրանց չի կարելի ապրել»։

[1] Սրբազան, գերզգայուն մարդ։

VII

Լևինը վերադարձավ տուն միայն այն ժամանակ, երբ մարդ ուղարկեցին ու կանչեցին ընթրիքի։ Սանդուղքի վրա կանգնած էին Կիտին և Ագաֆյա Միխայլովնան ու խորհրդակցում էին ընթրիքի համար գինիների մասին։

— Է՜հ, ի՞նչ եք այդպիսի fuss[1] բարձրացրել։ Տվե՛ք այն, ինչ տրվում է սովորաբար։

— Ո՛չ, Ստիվան չի խմում... Կոստյա՛, սպասիր, ի՞նչ է եղել քեզ,— խոսեց Կիտին, հասնելով նրա ետևից, բայց նա անիսկոնորեն, առանց սպասելու կնոջը, մեծ քայլերով մտավ սեղանատուն և անմիջապես մասնակցեց ընդհանուր աշխույժ խոսակցությանը, որ տեղի ուներ այնտեղ Վասենկա Վեսլովսկու և Ստեպան Արկադևիչի միջև։

— Հը՜, ինչպե՞ս է, վաղը գնո՞ւմ ենք որսի,— ասաց Ստեպան Արկադևիչը։

— Խնդրեմ, գնանք,— ասաց Վեսլովսկին, տեղափոխվելով ու կողքով նստելով մյուս աթոռին և իր չաղ ոտը դնելով տակը։

— Ես շատ ուրախ եմ, գնանք։ Իսկ դուք այս տարի արդեն որսի եղե՞լ եք,— ասաց Լևինը Վեսլովսկուն, դիտելով նրա ոտը ուշադրությամբ, բայց շինծու հաճելիությամբ, որն այնպես լավ գիտեր նրա մեջ Կիտին և որն այնպես չէր սազում նրան։— Չգիտեմ, մեծ կտցարներ կգտնե՞նք, իսկ հասարակ կտցարներ շատ կան։ Միայն պետք է վաղ գնալ։ Դուք չե՞ք հոգնի։ Դու չե՞ս հոգնել, Ստիվա։

— Հոգնե՞լ եմ։ Ես դեռ երբեք հոգնած չեմ եղել։ Եկեք ամբողջ գիշեր չքնենք։ Գնանք զբոսնելու։

— Իսկապես, եկեք չքնենք։ Հիանալի՛ բան,— հաստատեց Վեսլովսկին։

— Օ՜, դրանում մենք հավատացած ենք. դու կարող ես չքնել և ուրիշներին էլ քնելու չթողնել,— ասաց Դոլլին ամուսնուն հազիվ նկատելի այն հեգնանքով, որով այժմ համարյա միշտ նա վերաբերվում էր իր ամուսնուն։— Իսկ իմ կարծիքով, հիմա արդեն ժամանակն է... Ես գնամ, ես չե՛մ ընթրում։

— Ո՛չ, նստիր դու, Դոլլինկա,— ասաց Ստեպան Արկա-

[1] Իրարանցում։

դևիչը, անցնելով կնոջ կողմը՝ մեծ սեղանի առաջ, որի վրա ընթրում էին։—Ես դեռ այնքան պատմելու բան ունեմ քեզ։

— Հավանորեն ոչինչ։

— Գիտե՞ս, Վեսլովսկին եղել է Աննայի մոտ։ Եվ նա նորից գնում է նրանց մոտ։ Չէ՞ որ նրանք գտնվում են ձեզանից ընդամենը յոթանասուն վերստի վրա։ Ես էլ անպատճառ կգնամ։ Վեսլովսկի՛, ե՛կ այստեղ։

Վասենկան անցավ կանանց մոտ և նստեց Կիտիի կողքին։

— Ա՜խ, պատմեցեք, խնդրեմ, դուք եղե՞լ եք նրա մոտ։ Ինչպե՞ս է նա,—դիմեց Վեսլովսկուն Դարյա Ալեքսանդրովնան։

Լևինը մնաց սեղանի մյուս ծայրին և անդադար խոսելով Վարենկայի ու իշխանուհու հետ, տեսնում էր, որ աշխույժ և խորհրդավոր խոսակցություն տեղի ուներ Ստեպան Արկադևիչի, Դոլլիի, Կիտիի ու Վեսլովսկու միջև։ Այդ դեռ ոչինչ, որ տեղի ուներ խորհրդավոր խոսակցություն. նա տեսնում էր իր կնոջ դեմքին լուրջ զգացման արտահայտություն, երբ Կիտին, աչք չհեռացնելով Վասենկայի գեղեցիկ դեմքից, նայում էր նրան, որն աշխուժորեն պատմում էր ինչ-որ բան։

— Շատ լավ է նրանց մոտ,—պատմում էր Վասենկան Վրոնսկու և Աննայի մասին։—Իհարկե, ես ինձ վրա չեմ վերցնում դատավորի դեր, բայց նրանց տանը մարդ իրեն զգում է որպես իր ընտանիքի մեջ։

— Իսկ նրանք ի՞նչ են մտադիր անելու։

— Կարծեմ, ձմռանն ուզում են գնալ Մոսկվա։

— Ի՞նչ լավ կլինի, եթե մենք հավաքվենք նրանց մոտ։ Դու ե՞րբ կգնաս,—հարցրեց Ստեպան Արկադևիչը Վասենկային։

— Հուլիսը ես կանցկացնեմ նրանց մոտ։

— Իսկ դու կգնա՞ս,—դիմեց Ստեպան Արկադևիչը կնոջը։

— Ես վաղուց էի ուզում, անպայման կգնամ,— ասաց Դոլլին։—Ես խղճում եմ Աննային, որովհետև գիտեմ նրան։ Նա հիանալի կին է։ Ես կգնամ մենա՛կ, երբ դու այստեղից գնաս, և ոչ ոքի չեմ ճնշի։ Նույնիսկ ավելի լավ է առանց քեզ։

— Հիանալի՛,—ասաց Ստեպան Արկադևիչը։—Իսկ դո՞ւ, Կիտի։

— Ե՞ս։ Ես ինչո՞ւ պիտի գնամ,—ասաց Կիտին, ամբողջովին բռնկվելով։ Եվ նայեց ամուսնուն։

— Դուք ծանո՞թ եք Աննա Արկադևնայի հետ,— հարցրեց Կիտիին Վեսլովսկին։—Նա շատ հրապուրիչ կին է։

— Այո՛,—պատասխանեց Կիտին Վեսլովսկուն, ավելի ևս կարմրելով, վեր կացավ ու մոտեցավ ամուսնուն։

— Ուրեմն, դու վաղը գնում ես որսի՞,—ասաց Կիտին։

Լևինի խանդն արդեն շատ հեռու գնաց այդ մի քանի րոպեին, մանավանդ նկատի ունենալով այն կարմրությունը, որ պատեց Կիտիի այտերը, երբ սա խոսում էր Վեսլովսկու հետ։ Այժմ լսելով կնոջ խոսքերը, նա դրանք հասկանում էր արդեն յուրովի։ Որքան էլ տարօրինակ էր նրա համար հետո հիշել դրա մասին, այժմ նրան պարզ թվում էր, որ եթե կինը հարցնում է, արդյոք որսի գնո՞ւմ է ինքը, դա կնոջը հետաքրքրքրում է միայն այն պատճառով, որ իմանա, արդյոք այդ բավականությունը կպատճառի՞ Վասենկա Վեսլովսկուն, որին արդեն սիրահարված էր Կիտին՝ նրա հասկացողությամբ։

— Այո, կգնամ,—պատասխանեց նա կնոջը անբնական, իր համար իսկ զզվելի ձայնով։

— Ո՜չ, ավելի լավ է՝ վաղը մնացեք, թե չէ՝ Դոլլին բոլորովին չի տեսել Ստիվային. իսկ վաղը չէ մյուս օրը գնացեք,—ասաց Կիտին։

Կիտիի խոսքերի իմաստն այժմ արդեն Լևինը թարգմանում էր այսպես. «Մի՛ անջատիր ինձ նրանից. քո գնալը ինձ համար նշանակություն չունի, միայն թող որ ես հրճվեմ այդ հիանալի երիտասարդի ներկայությամբ»։

— Ա՜խ, եթե դու ուզում ես, մենք վաղը կմնանք,—առանձին հաճույքով պատասխանեց Լևինը։

Այնինչ, Վասենկան, բնավ իսկ կասկած չտանելով այն տառապանքի մասին, որ պատճառում էր իր ներկայությունը, անմիջապես վեր կացավ սեղանից և ժպտուն, փաղաքշալից հայացքը չհեռացնելով Կիտիից, գնաց նրա ետևից։

Լևինը տեսավ այդ հայացքը։ Նա գունատվեց ու մի րոպե շունչը կտրվեց։ «Ինչպե՞ս է թույլ տալիս իրեն՝ այդպես նայելու իմ կնոջը», եփ էր գալիս նա։

— Ուրեմն վա՞ղը։ Խնդրեմ, գնանք,—ասաց Վասենկան,

նստելով աթոռին և, ըստ իր սովորության, ոտը նորից ծալելով տակը։

Լևինի խանդը գնաց է՛լ ավելի հեռու։ Նա արդեն տեսնում էր իրեն որպես խաբված ամուսին, որի կարիքը զգում են կինն ու սիրեկանը նրա համար միայն, որպեսզի նա տրամադրի նրանց կյանքի հարմարություններ ու բավականություն... բայց, չնայած դրան, նա սիրալիր և հյուրասիրաբար հարցուփորձ էր անում Վասենկային նրա որսորդության, հրացանի, կոշիկների մասին ու համաձայնեց գնալ որսի հենց վաղը։

Լևինի բախտից, պառավ իշխանուհին վերջ դրեց նրա տառապանքներին նրանով, որ ինքը վեր կացավ ու խորհուրդ տվեց Կիտիին՝ գնալ քնելու։ Բայց այստեղ էլ բանը չվերջացավ Լևինի համար առանց տանջանքի։ Հրաժեշտ տալով տանտիկնոջը, Վասենկան նորից ուզեց համբուրել նրա ձեռքը, սակայն Կիտին, կարմրելով, միամիտ կոպտությամբ, որի համար մայրը հետո հանդիմանեց նրան, ասաց, մեկդի վանելով ձեռքը.

— Մեզանում ընդունված չէ այդ։

Լևինի աչքում Կիտին հանցավոր էր այն բանում, որ թույլ տվեց այդպիսի հարաբերություններ, և ավելի ևս հանցավոր էր այն բանում, որ այնպես անհարմար ձևով ցույց տվեց, թե այդ հարաբերությունները դուր չեն գալիս իրեն։

— Է՜հ, ի՜նչ քնելու ժամանակ է,— ասաց Ստեպան Արկադևիչը, ընթրիքին խմած մի քանի բաժակ գինուց հետո համակված իր ամենաքաղցր ու պոետիկ տրամադրությամբ։

— Նայի՛ր, Կիտի՜,— ասում էր նա, նշելով լորենիների ետևից բարձրացած լուսինը,— ինչ հրաշալի է։ Վեսլովսկի, ահա՜ թե ի՜րք է պետք սերենադա։ Գիտե՞ս, նա լավ ձայն ունի, ճանապարհին մենք միասին երգեցինք։ Նա իր հետ բերել է սքանչելի ռոմանսներ, երկու նորը։ Վատ չէր լինի տանել Վարվառա Անդրեևնայի հետ։

Երբ ամենքը ցրվեցին, Ստեպան Արկադևիչը դեռ երկար քայլում էր Վեսլովսկու հետ ծառուղում, և լսվում էին նոր ռոմանսի ելևէջների մեջ հնչող նրանց ձայները։

Լսելով այդ ձայները, Լևինը, հոնքերը կիտած, նստել էր

բազկաթոռի մեջ՝ կնոջ ննջարանում և համառորեն չէր պատասխանում նրա հարցերին, թե ի՞նչ է պատահել։ բայց երբ վերջապես ինքը՝ Կիտին, երկչոտությամբ ժպտալով, հարցրեց «Ջլինի՞ թե որևէ բան դուր չեկավ քեզ Վեսլովսկու կապակցությամբ», Լևինի լեզուն բացվեց, և նա ասաց ամեն ինչ, այն, ինչ ասում էր նա, վիրավորում էր իրեն, այդ իսկ պատճառով՝ ավելի ևս գրգռում էր իրեն։

Նա կանգնել էր կնոջ դիմաց խոժոռված հոնքերի տակից սոսկալիորեն փայլող աչքերով և սեղմում էր կրծքին ուժեղ ձեռքերը, կարծես լարելով իր բոլոր ուժերը, որպեսզի զսպի իրեն։ Նրա դեմքի արտահայտությունը կլիներ խիստ, նույնիսկ դաժան, եթե միաժամանակ չարտահայտեր տանջանք, որ հուզում էր Կիտիին։ Նրա այտոսկրերը ցնցվում էին, և ձայնն ընդհատվում էր։

— Հասկացի՛ր, որ ես չեմ խանդում. դա գարշելի բառ է։ Ես չեմ կարող խանդել և հավատալ, որ... Ես չեմ կարող ասել, թե ի՞նչ եմ զգում, բայց դա սոսկալի բան է... Ես չեմ խանդում, բայց ես վիրավորված եմ, նվաստացած նրանով, որ մեկը համարձակվում է մտածել, համարձակվում է նայել քեզ վրա այդպիսի աչքերով...

— Ինչպիսի՞ աչքերով,— ասում էր Կիտին, աշխատելով, որքան հնարավոր է, ավելի բարեխղճորեն մտաբերելու այսօրվա երեկոյան բոլոր խոսակցություններն ու շարժումները և դրանց բոլոր նրբերանգները։

Իր հոգու խորքում Կիտին ընդունում էր, թե ինչ-որ բան կար իսկապես այն րոպեին, երբ Վեսլովսկին իր ետևից անցավ սեղանի մյուս ծայրը, բայց չէր համարձակվում խոստովանվել այդ բանում նույնիսկ ինքն իրեն, ավելի ևս սիրտ չէր անում ասել այդ մասին ամուսնուն և դրանով ավելի ուժեղացնել նրա տառապանքը։

— Եվ ի՞նչ հրապուրիչ բան կարող է լինել իմ մեջ, տե՛ս, ես ինչպիսի...

— Ա՜խ,— ճչաց Լևինը, գլուխն առնելով ձեռքերի մեջ։— Գոնե չխոսեի՞ր... Ուրեմն, եթե դու հրապուրիչ լիներիր...

— Դե՜, ո՜չ, Կոստյա, դե՜, կա՛ց, դե՜, լսի՛ր,— ասում էր Կիտին, տառապալից-ցավակցական արտահայտությամբ նայելով ամուսնուն։— Ի՞նչ կարող ես մտածել դու, երբ ինձ հա-

մար մարդ չկա՛, չկա՛, չկա՛... Մի՞թե ուզում ես, որ ես ոչ ոքի չտեսնեմ։

Առաջին րոպեին Կիտիի համար վիրավորական էր ամուսնու խանդը. Կիտին վշտացած էր, որ իրեն արգելված էր ամենափոքրիկ և ամենաանմեղ զվարճությունը. բայց հիմա ինքը սիրով կզոհաբերեր ո՛չ թե այսպիսի դատարկ բաներ, այլ ամեն ինչ նրա հանգստի համար, որպեսզի ազատի նրան այն տանջանքից, որ զգում էր նա։

— Հասկացի՛ր դու իմ վիճակի սոսկալիությունը և կոմիզմը,— շարունակեց Լևինը հուսահատական շշուկով,— որ նա իմ տանն է, որ նա իսկապես ոչ մի անվայելուչ բան չի արել, բացի այդ շարժուձևի ազատությունից և ոտները տակը դնելուց։ Նա այդ համարում է ամենալավ տոնը, այդ իսկ պատճառով, ես պետք է նրան վերաբերվեմ սիրալիր։

— Բայց, Կոստյա՛, դու չափազանցում ես,— ասում էր Կիտին, հոգու խորքում ուրախանալով իր հանդեպ տածած սիրո այն ուժի համար, որն այժմ արտահայտվում էր ամուսնու խանդի մեջ։

— Ամենից սոսկալին այն է, որ դու, ինչպես կաս միշտ, և հիմա, երբ դու այնպիսի սրբություն ես ինձ համար, մենք այնպես երջանիկ ենք, հատկապես երջանիկ, և հանկարծ այդպիսի անպետք մի մարդ... Ո՛չ թե անպետք, ինչո՞ւ եմ վատաբանում նրան։ Ես գործ չունեմ նրա հետ։ Բայց ինչի՞ համար իմ, քո երջանկությունը...

— Գիտե՞ս, ես հասկանում եմ, թե ինչի՞ց առաջացավ այդ,— սկսեց Կիտին։

— Ինչի՞ց, ինչի՞ց։

— Ես տեսա, թե ինչպե՞ս էիր նայում դու, երբ մենք խոսում էինք ընթրիքի ժամանակ։

— Դե՞, իհարկե, դե՞, իհարկե,— ասաց Լևինը վախեցած։

Կիտին պատմեց նրան, թե ինչի՞ մասին էին խոսում իրենք։ Եվ պատմելով այդ, Կիտին խեղդվում էր հուզմունքից։ Լևինը լռեց, ապա ուշադրությամբ նայեց կնոջ գունատ, վախեցած դեմքին ու հանկարծ գլուխն առավ ափերի մեջ։

— Կատյա՛, ես տանջեցի քեզ, աղավնյա՛կս, ների՛ր ինձ։ Դա խելագարություն է։ Կատյա, ես ոտով-գլխով հանցավոր

եմ։ Եվ մի՞թե կարելի էր այդ հիմար բանի պատճառով այդպես տանջվել։

— Ո՛չ, ես մեղքանում եմ քեզ։

— Ի՞նձ։ Ի՞նձ։ Ի՞նչ եմ ես։ Խելագար մարդ... Իսկ քե՞զ ինչի համար տանջեցի։ Սոսկալի բան է, երբ մարդ մտածում է, որ յուրաքանչյուր օտար անձնավորություն կարող է խափանել մեր երջանկությունը։

— Իհարկե՞, վիրավորականը հենց այդ է...

— Ո՛չ, ընդհակառակը, ես նրան ամբողջ ամառ դիտմամբ կպահեմ մեզ մոտ և չափազանց սիրալիր կլինեմ նրա հետ,— ասում էր Լևինը, համբուրելով կնոջ ձեռները։— Ա՛յ, կտեսնես։ Վաղը... Հա՛, ճիշտ, վաղը մենք դնում ենք։

VIII

Մյուս օրը տիկինները դեռ չէին վեր կացել, երբ որսորդական կառքերը, սայլն ու սայլակը կանգնել էին գլխավոր դռան մոտ, ու Լասկան, դեռ առավոտվանից հասկացած լինելով, որ գնում են որսի, կուշտ վնգստալուց ու ցատկոտելուց հետո նստեց սայլին՝ սայլապանի կողքին, հուզված և դանդաղելու առթիվ դժգոհ տեսքով նայում էր դռանը, որտեղից տակավին դուրս չէին գալիս որսորդները։ Առաջինը դուրս եկավ Վասենկա Վեսլովսկին, նոր, մեծ կոշիկներով, որոնց ճտքերը հասնում էին մինչև նրա հաստ զիստերը, կանաչ բլուզով, մեջքին կապած նոր, կաշու հոտ արձակող փամփուշտակալ, և իր ժապավենավոր թասակով ու անգլիական նոր հրացանով, առանց փոկօղերի և լանջագոտու։ Լասկան թռավ դեպի նա, ողջունեց նրան, թոչկոտելով հարցրեց նրան իր արտահայտության ձևով, արդյոք շո՞ւտ դուրս կգան նրանք, և պատասխան չստանալով, վերադարձավ սպասումի իր դիրքին ու նորից մարեց, գլուխը շուռ տալով մի կողքի և սրելով մի ականջը։ Վերջապես դուռը դղրդոցով բացվեց, դուրս թռավ Կրաքը, Ստեպան Արկադևիչի դեղնաբղետ պոնտերը, պտույտ գալով ազատ օդի մեջ. ապա դուրս եկավ ինքը Ստեպան Արկադևիչը, հրացանը ձեռքին, սիգարը բերանին։ «Տուբո-տուբո, Կրաք», փաղաքշալից կանչեց նա շանը, որը թաթերը ձգում էր դեպի նրա փորն ու կուրծքը, կարթկելով

որսապայուսակը։ Ստեպան Արկադևիչը հագել էր թեթև ոտնամաններ՝ փաթաթաններով, տրորված շալվար և կարճ վերարկու։ Գլխին կար ինչ-որ քրքրված գդակ, սակայն նոր սիստեմի հրացանը խաղալիքի պես գեղեցիկ էր, ու որսապայուսակը և փամփուշտակալը թեպետև մաշված էին, բայց վերին աստիճանի լավ տեսակի։

Վասենկա Վեսլովսկին առաջ չէր հասկանում այդ իսկական, որսորդական պաճուճանքը՝ լինել ցնցոտիների մեջ, բայց ունենալ լավագույն տեսակի որսորդական պիտույքներ։ Նա հասկացավ այդ հիմա, նայելով Ստեպան Արկադևիչին, որն այդ ցնցոտիների մեջ փայլում էր իր վայելչագեղ, գեր և ուրախ, տոհմիկ ֆիգուրով, ու վճռեց, որ ինքը հետևյալ որսորդության համար անպայման այդպես կսարքավորվի։

— Իսկ ի՞նչ եղավ մեր տնատերը,—հարցրեց նա։

— Ջահել կնոջ տեր է,—ասաց Ստեպան Արկադևիչը, ժպտալով։

— Այո՛, և ի՞նչ զմայլելի կին։

— Նա արդեն հագնված էր։ Երևի նորից վազեց կնոջ մոտ։

Ստեպան Արկադևիչը ճիշտ գուշակեց։ Լևինը նորից վազեց կնոջ մոտ՝ հարցնելու նրան էլի մի անգամ, արդյոք ներե՞լ է կինը նրան երեկվա հիմարության համար, և բացի դրանից՝ խնդրելու նրան, որ Կիտին, ի սեր Քրիստոսի, զգույշ լինի։ Որ գլխավորն է, երեխաներից հեռու մնա,—նրանք միշտ կարող են բռթել։ Հետո պետք էր մի անգամ հավաստիանալ, որ Կիտին չի բարկանում ամուսնու վրա, որը գնում է երկու օրով, և ապա խնդրել Կիտիին՝ վաղն առավոտյան անպայման տոմս ուղարկել մի ձիավորի հետ, գրել թեկուզ միայն երկու խոսք, որպեսզի ինքն իմանա, որ Կիտին լավ է։

Կիտին, ինչպես միշտ, ցավում էր, որ երկու օրով բաժանվելու է ամուսնուց։ Բայց տեսնելով նրա աշխուժացած ֆիգուրը, որ առանձնապես մեծ և ուժեղ էր երևում որսորդական կոշիկներով ու սպիտակ բլուզով, և իրեն անհասկանալի որսորդական խանդավառության ինչ-որ փայլ,—նրա ուրախության պատճառով մոռացավ իր վշտացումը և խնդուն հրաժեշտ տվեց նրանից։

— Ներողություն, պարոններ,—ասաց Լևինը, դուրս վազելով նախադուռ։— Նախաճաշը դրի՞ք։ Ինչո՞ւ եք շեկին լծել

աջ կողմում։ Ասենք, միևնույն է։ Լասկա, թո՛ղ, գնա-նստի՛ր։

— Թող արջառների նախրի մեջ,—դիմեց նա անասնապահին, որն սպասում էր նրան սանդուղքի մոտ՝ հարցնելու ամլածների մասին։ Ներողությո՛ւն, ահա գալիս է էլի մի չարագործ։

Լևինը ցած թռավ սայլից, որի վրա ուզում էր արդեն նստել, դեպի բանվորակալ-ատաղձագործը, որ մոտենում էր նախագավթին՝ սաժենը ձեռքին։

— Երեկ չեկար գրասենյակ, հիմա ուշացնում եք ինձ։ Հը՞, ի՞նչ կա։

— Հրամայեք շինել էլի մի շրջան։ Ավելացնել ընդամենը երեք աստիճան։ Ու իսկ և իսկ կհարմարեցնենք։ Շատ ավելի հանգիստ կլինի։

— Պիտի լսեիր ինձ,— պատասխանեց Լևինը վրդովմունքով։— Ես ասում էի, դի՛ր չորսուները և հետո կտրիր ու մտցրու նրանց մեջ աստիճանները։ Այժմ էլ չես ուզի։ Արա՛, ինչպես հրամայեցի ես, վերցրու նորը։

Բանն այն էր, որ նորաշեն ֆլիգելում բանվորակալը փչացրել էր սանդուղքը, կտրելով այն առանձին ու հաշվի չառնելով վերելքը, այնպես որ երբ սանդուղքը դրին իր տեղը, բոլոր աստիճանները դուրս եկան զառիվայր։ Այժմ բանվորակալն ուզում էր ավելացնել երեք աստիճան, թողնելով միևնույն սանդուղքը։

— Շատ ավելի լավ կլինի։

— Է՞հ, ի՞նչ դուրս կգա քո երեք աստիճաններով։

— Ներողություն կանեք,— արհամարհական ժպիտով ասաց ատաղձագործը։— Դուրս կգա իսկը մինչի տախտը։ Ասել կուզի, էսպես ցածրից կսկսվի,— համոզիչ շարժումով ասաց նա,— կերթա, կերթա ու կգա։

— Չէ՛ որ երեք աստիճան էլ պիտի ավելացնել երկարության վրա... էլ ո՞ւր կգա քո սանդուղքը։

— Ոնց որ ցածից կերթա, էնպես էլ կգա,— համառորեն և համոզված ասում էր բանվորակալը։

— Նա կերթա առաստաղի տակ և պատի մեջ։

— Ներողություն կանեք։ Չէ՞ որ ցածից կերթա։ Կերթա, կերթա ու կգա։

Լևինը հանեց հրացանի շամփուրը և սկսեց փողու վրա նկարել նրա համար սանդուղքը։

— Ա՜յ, տեսնո՞ւմ ես։

— Ոնց որ կհրամայեք,— ասաց ատաղձագործը, և հանկարծ նրա աչքերը բացվեցին, ու հայտնապես նա հասկացավ բանի էությունը։— Երևում է, պետք է նորը կտրել։

— Ա՜յ, հենց այնպես էլ արա՛, ինչպես հրամայված է,— բղավեց Լևինը, նստելով սայլին։— Քշի՛ր։— Շները բռնիր. Ֆիլի՛պ։

Թողնելով իր ետևում ընտանեկան ու տնտեսական հոգսերը, Լևինն այժմ լցված էր կյանքի ուրախության և սպասումի այնպիսի ուժեղ զգացումով, որ չէր ուզում խոսել։ Բացի դրանից, նա ուներ կենտրոնացած հուզմունքի այն զգացումը, ինչ զգացում ունենում է ամեն որսորդ, մոտենալով գործողության վայրին։ Եթե մի բան զբաղեցնում էր նրան այժմ, ապա այն հարցն էր՝ արդյոք բան կգտնե՞ն Կոլպենի ճահճում, արդյոք ինչպե՞ս դուրս կգա Լասկան Կրաքի համեմատությամբ, և ինչպե՞ս կհաջողվի իրեն հրազարկել այսօր։ Չլինի՞ թե ինքը խայտառակվի նոր մարդու առաջ։ Չլինի՞ թե Օբլոնսկին գերազանցի իրեն հրաձգության մեջ,— այդ միտքը ևս գալիս էր նրա գլուխը։

Օբլոնսկին էլ ուներ նման զգացում և նույնպես չխոսկան էր։ Միայն Վասենկա Վեսլովսկին էր, որ անընդհատ խոսում էր ուրախ։ Այժմ, լսելով նրան, Լևինը ճնշվում էր, մտաբերելով, թե ինչպես ինքն անարդար էր երեկ նրա հանդեպ։ Վասենկան իսկապես լավ տղա էր, պարզ, հասարակ և շատ ուրախ։ Եթե Լևինը հանդիպեր նրան իր ամուրի ժամանակ, նա կմտերմանար հետը։ Լևինի համար մի փոքր անախորժ էր նրա տոնական վերաբերմունքը կյանքին և վայելչագեղության մի տեսակ ազատ շարժումը։ Կարծես՝ նա իրեն վերագրում էր աներկբա բարձր արժեք, որ ինքն ուներ երկար եղունգներ ու թասակ և դրան համապատասխան մնացած բաները. բայց դա կարելի էր ներել նրա բարեսրտության ու բարեբարքության համար։ Նա դուր էր գալիս Լևինին իր լավ դաստիարակությամբ, ֆրանսերեն և անգլերեն լեզուների հրաշալի առոգանությամբ և նրանով, որ նա Լևինի աշխարհի մարդ էր։

Վասենկային չափազանց դուր եկավ Դոնի տափաստանյան ձին, լծված ձախ կողքից։ Նա շարունակ հիանում էր նրանով.

— Ի՜նչ լավ է արշավելը տափաստանում, նստած տափաստանի ձի։ Հը՞։ Այնպես չէ՞,— ասում էր նա։

Տափաստանի ձիով արշավելու մեջ նա պատկերացնում էր ինչ-որ վայրենի, պոետիկ բան, որից ոչինչ դուրս չէր գալիս, բայց նրա միամտությունը, մանավանդ միացած նրա գեղեցկության, անուշ ժպիտի և շարժումների նազելիության հետ, չափազանց հրապուրիչ էր։ Պատճառն ա՞յն էր արդյոք, որ նրա բնավորությունը համակրելի էր Լևինին, թե՞ այն, որ Լևինն աշխատում էր, իր երեկվա մեղքը քաված լինելու համար, գտնել նրա մեջ ամեն ինչ լավ,— Լևինին հաճելի էր նրա հետ լինելը։

Անցնելով երեք վերստ, Վեսլովսկին հանկարծ նկատեց, որ սիգարները և դրամապանակը չկան, ու չգիտեր, կորցրել էր, թե՞ թողել էր սեղանի վրա։ Դրամապանակի մեջ կար երեք հարյուր յոթանասուն ռուբլի, ուստի չէր կարելի չանհանգստանալ։

— Գիտե՞ք ի՜նչ, Լևին, ես կողքից լծած այս Դոնի ձիով կսլանամ տուն։ Հրաշալի բան կլինի։ Հա՞,— ասում էր նա, արդեն պատրաստ հեծնելու։

— Ո՜չ, ինչի՞ համար,— պատասխանեց Լևինը, հաշվելով, որ Վասենկան կկշռի վեց փթից ո՜չ պակաս։— Ես կուղարկեմ կառապանին։

Կառապանը գնաց կողքից լծած ձիով, իսկ Լևինը ինքն սկսեց ձիավարել զույգը։

IX

— Բացատրի՛ր, ինչպե՞ս է մեր մարշրուտը։ Հապա մի կարգին պատմիր,— ասաց Ստեպան Արկադևիչը։

— Ծրագիրը հետևյալն է. հիմա գնում ենք մինչև Գվոզդյով։ Գվոզդյովում՝ այս կողմ ընկած ճահիճը հայտնի է մեծ կտցարներով, իսկ Գվոզդյովից այն կողմ ընկնում են սքանչելի ճահիճներ, որտեղ կան սովորական կտցարներ, թեև պատահում են և մեծ կտցարներ։ Այժմ շոգ է, և երեկոյան դեմ (քսան վերստ) մենք կհասնենք ու կկատարենք երեկոյան որ-

սը։ Կգիշերենք, իսկ առավոտյան կգնանք դեպի մեծ ճահիճները։

— Իսկ ճանապարհին մի՞թե ոչինչ չկա։

— Կա. բայց կուշանանք, բացի դրանից, շոգ է։ Կա երկու հիանալի տեղ, սակայն դժվար թե այնտեղ բան գտնվի։

Լևինն ինքն էլ էր ուզում մտնել այդ տեղերը, բայց դրանք տանից մոտիկ էին, նա միշտ կարող էր լինել այդ տեղերում, և դրանք փոքր էին,— երեքի համար հրազարկելու տեղ չկար։ Այդ պատճառով նա կեղծում էր, ասելով, դժվար թե բան գտնվի։ Հավասարվելով փոքրիկ ճահճին, Լևինն ուզում էր անցնել նրա մոտով, բայց Ստեպան Արկադևիչի փորձված որսորդական աչքն անմիջապես նկատեց ճանապարհից երևացող ճկուտը։

— Արդյոք, չմտնե՞նք այնտեղ,— ասաց նա, նշելով ճկուտը։

— Լևի՛ն, խնդրում եմ. ի՞նչ հիանալի է,— սկսեց խնդրել Վասենկա Վեսլովսկին, և Լևինը չէր կարող չհամաձայնել։

Դեռ նրանք կանգ չէին առել, երբ շները, իրար առաջ կըտրելով, արդեն վազում էին դեպի ճահիճը։

— Կրա՞ք, լա՞սկա...

Շները ետ դարձան։

— Երեքիս համար նեղվածք կլինի։ Ես կսպասեմ այստեղ,— ասաց Լևինը, հույս ունենալով, որ նրանք ոչինչ չեն գտնի, բացի եղտյուրիկներից, որոնք թռան-բարձրացան, տեսնելով շներին և թռչելիս թեքվելով մի կողքի, աղիողորմ լալիս էին ճահճի վրա։

— Ո՛չ։ Գնա՛նք, Լևին, գնա՛նք միասին,— կանչում էր Վեսլովսկին։

— Իրոք, նեղվածք է։ Լասկա, ե՛տ դարձիր։ Լա՛սկա։ Ձեզ ուրիշ շուն պետք չէ, այնպես չէ՞։

Լևինը մնաց լինեյկայի մոտ ու նախանձի զգացումով նայում էր որսորդներին։ Որսորդներն անցան ամբողջ ճկուտը։ Ճահճուտում ոչինչ չկար, բացի շամբահավերից ու եղտյուրիկներից, որոնցից մի հատ սպանեց Վասենկան։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, որ չէի ափսոսում ճահիճը,— ասաց Լևինը,— զուր ժամավաճառություն է միայն։

— Ո՛չ, այսուամենայնիվ ուրախ է։ Դուք տեսա՞ք,— ասում

էր Վասենկա Վեսլովսկին, անշնորհքաբար բարձրանալով սայլի վրա, ձեռքին բռնած եղտյուրիկը։— Ի՞նչ լավ սպանեցի։ Այնպես չէ՞։ Ասացեք, արդյոք շո՞ւտ կհասնենք իսկական ճահճին։

Հանկարծ ձիերը պոկվեցին, Լևինը գլխով դիպավ մեկի հրացանի փողին, և լսվեց կրակոց։ Այսինքն, կրակոցը լսվեց առաջ, բայց այդպես թվաց Լևինին։ Բանն այն է, որ Վասենկա Վեսլովսկին իջեցնելով հրահանը, սեղմեց հրացանի մի ոտը, իսկ մյուս հրահանը բռնել էր ձեռքին։ Լիցը մտավ գետնի մեջ, ոչ ոքի վնաս չպատճառելով։ Ստեպան Արկադևիչը օրորեց գլուխը և կշտամբալից ժպտաց Վեսլովսկուն։ Բայց Լևինը սիրտ չարավ հանդիմանելու նրան. նախ՝ ամեն կշտամբանք կթվար որպես հետևանք անցած վտանգի և այն ելունդի, որ դուրս պրծավ Լևինի ճակատին. երկրորդ՝ Վեսլովսկին այնպես միամտաբար վշտացած էր սկզբում և այնպես բարեսրտորեն ու հրապուրիչ ծիծաղում էր հետո իրենց ընդհանուր իրարանցման համար, որ Լևինը չէր կարող ինքն էլ չծիծաղել։

Երբ նրանք մոտեցան երկրորդ ճահճին, որը բավական մեծ էր և պետք է որ շատ ժամանակ խլեր, Լևինը համոզում էր չիջնել։ Բայց Վեսլովսկին նորից համոզեց նրան։ Որովհետև ճահիճը նեղ էր, Լևինը, կրկին, որպես հյուրասեր տնատեր, մնաց կառքերի մոտ։

Տեղ հասնելուց անմիջապես հետո Կրաքն ուղղակի դիմեց դեպի գուղձերը, Վասենկա Վեսլովսկին առաջինը վազեց շան ետևից։ Եվ մինչ կմոտենար Ստեպան Արկադևիչը, թռավ արդեն մի մեծ կտցար։ Վեսլովսկին վրիպեց, և կտցարը նստեց չհնձած մարգագետնի մեջ։ Այդ կտցարը տրամադրված էր Վեսլովսկուն։ Կրաքը նորից գտավ նրան, կանգնեց, ու Վեսլովսկին սպանեց կտցարը և վերադարձավ կառքերի մոտ։

— Այժմ դո՛ւք գնացեք, իսկ ես կմնամ ձիերի մոտ,— ասաց նա։

Լևինին սկսում էր համակել որսորդական նախանձը։ Նա երասանները տվեց Վեսլովսկուն ու գնաց ճահիճը։

Լասկան, որ վաղուց արդեն աղիողորմ վնգստում էր ու գանգատվում անարդարությունից, վազեց առաջ ուղղակի դեպի հուսալի, Լևինին ծանոթ մամռակալած գուղձերը, ուր դեռ չէր մտել Կրաքը։

— Ինչո՞ւ չես կանգնեցնում նրան,— բղավեց Ստեպան Արկադևիչը։

— Նա չի վախեցնի,— պատասխանեց Լևինը, ուրախանալով շան վրա և շտապելով նրա ետևից։

Լասկայի որոնումների մեջ, որքան նա ավելի ու ավելի էր մոտենում ծանոթ գուղձերին, նկատվում էր ավելի ու ավելի լրջություն։ Ճահճային մի փոքրիկ թռչուն մի վայրկյան միայն գրավեց շանը։ Նա արավ մի շրջան գուղձերի առաջ, սկսեց երկրորդը և հանկարծ ցնցվեց ու մարեց։

— Ե՛կ, ե՛կ, Ստիվա,— բղավեց Լևինը, զգալով, թե ինչպե՞ս է սիրտն սկսում խփել ավելի ու ավելի ուժեղ և ինչպես հանկարծ, կարծես, ինչ-որ սողնակ ետ քաշվեց իր լարված լողության մեջ և բոլոր հնչյունները, կորցնելով տարածության չափը, խառնիխուռն, բայց պարզորոշ կերպով սկսեցին զարմացնել իրեն։ Նա լսում էր Ստեպան Արկադևիչի քայլերը, ընդունելով դրանք որպես ձիերի հեռավոր դոփյուն, լսում էր արմատներով պոկ եկած այն կոճղի անկյունի փխրուն հնչյունը, որի վրա ոտ դրեց ինքը, ընդունելով այդ հնչյունը որպես մեծ կտցարի թռիչք։ Լսում էր նույնպես իր ետևից ո՛չ հեռու ինչ-որ շրմփոց ջրի մեջ, որի մասին նա չէր կարողանում հաշիվ տալ իրեն։

Ոտի համար տեղ ընտրելով, նա մոտենում էր շանը։

— Ք՛ոսկ։

Շան քթի տակից դուրս թռավ ո՛չ թե մեծ կտցար, այլ սովորական։ Լևինը հրացանն ուղղեց, բայց հենց այն ժամանակ, մինչ նա նշան էր բռնում, ջրի մեջ ուժեղացավ շրմփոցի հնչյունը, մոտեցավ ու դրան միացավ Վեսլովսկու ձայնը, որ տարօրինակ ձևով մի բան էր բղավում բարձրագոչ։ Լևինը տեսավ, որ ինքը ետևի կողմից է հրացանը բռնում կտցարին, բայց և այնպես կրակեց։

Համոզվելով, որ վրիպեց, Լևինը ետ նայեց ու տեսավ, որ ձիերն ու սայլը ոչ թե ճանապարհի վրա են, այլ ճահճի մեջ։

Վեսլովսկին կամենալով տեսնել հրաձգությունը, սայլը քշեց ճահճի մեջ, որտեղ և խրվեցին ձիերը։

— Եվ ո՞ր սատանան նրան բերեց,— ասաց ինքն իրեն Լևինը, վերադառնալով խրված կառքի մոտ։— Ինչո՞ւ քշեցիք այս կողմ,— չոր ասաց նա նրան և կանչելով կառապանին, սկսեց դուրս հանել ձիերը։

Լևինին վշտացրեց և՛ այն, որ խանգարեցին իրեն կրակել, և՛ այն, որ ճահճի մեջ խրեցին իր ձիերը, և՛ գլխավորապես այն, որ ձիերն արձակելու, բեռը թափելու համար ո՛չ Ստեպան Արկադևիչը, ո՛չ Վեսլովսկին չէին օգնում նրան ու կառապանին, որովհետև թե՛ մեկը, թե՛ մյուսը, ո՛չ մի գաղափար չունեին, թե ինչ բան է լծվածքը։ Ո՛չ մի խոսք չպատասխանելով Վասենկայի հավաստիացումներին, իբր այստեղ բոլորովին չոր էր, Լևինը լուռ աշխատում էր կառապանի հետ, որպեսզի գուրս հանի ձիերը։ Բայց հետո, տաքանալով աշխատանքի մեջ ու տեսնելով, թե ինչպիսի եռանդով, ջանասիրությամբ Վեսլովսկին քաշում էր լինելյայի թևից, այնպես որ նույնիսկ կոտրեց այն, Լևինը հանդիմանեց իրեն այն բանի համար, որ ինքը՝ երեկվա զգացումի ազդեցության տակ՝ շափազանց սառն է Վեսլովսկու հետ, և աշխատեց առանձին սիրալիրությամբ մեղմել, հարթել իր չորությունը։ Երբ ամեն բան կարգի բերվեց, ու կառքը հանեցին ճանապարհի վրա, Լևինը հրամայեց հանել նախաճաշը։

— Bon appêtit — bonne conscience! Ce poulet va tombe, jusqu'au fond de mes bottes[1],— ասում էր ֆրանսիական առածը նորից ուրախացած Վասենկան, վերջացնելով երկրորդ ճուտը։— Այժմ վերջացան մեր ձախորդությունները. այժմ ամեն ինչ բարեհաջող կընթանա։ Միայն ես իմ մեղքի համար պարտավոր եմ նստել նստիքին։ Այնպես չէ՞։ Հա՞։ Ո՛չ, ո՛չ, ես Ավտոմեդոն[2] եմ։ Տեսեք, թե ինչպե՞ս տեղ կհասցնեմ ձեզ,— պատասխանեց նա, ձեռքից բաց չթողնելով երասանները, երբ Լևինը խնդրում էր նրան՝ տեղ տալ կառապանին։— Ո՛չ, ես պետք է մեղքս քավեմ, բացի դրանից, ինձ համար հրաշալի է նստիքին։— Եվ նա քշեց։

Լևինը մի քիչ վախենում էր, որ նա կտանջի ձիերին, մանավանդ ձախին՝ շեկին, որին չէր կարողանում պահել. բայց ակամա ենթարկվում էր նրա ուրախությանը, լսում էր այն

[1] Լավ ախորժակը հանդիստ խիղճ է։ Այդ ճուտը մինչև կրունկս կհասնի։

[2] Աքիլլեսի ընկերն ու կառավարը։ Առհասարակ հմուտ կառավար, հաճախ կատակով գործածված։

ռոմանսները, որ երգում էր Վեսլովսկին ամբողջ ճանապարհին, նստած նստիքի վրա, կամ նրա պատմածներն ու պատկերացումներն անձերով, թե ինչպե՞ս պետք է ձիավարել անգլիացու պես, four in hand[1], և նախաճաշից հետո նրանք ամենաուրախ տրամադրությամբ հասան Գվոզդյովի ճահիճը։

X

Վասենկան ձիերը քշում էր այնպես արագ, որ նրանք չափազանց վաղ հասան ճահճին, այնպես որ դեռ շոգ էր։

Մոտենալով մեծ ճահճին՝ ճանապարհորդության գլխավոր նպատակին, Լևինն ակամա մտածում էր, թե ինչպես ինքն ազատվի Վասենկայից և շրջի անարգել։ Ստեպան Արկադևիչը հայտնապես նույն բանն էր ցանկանում և նրա դեմքին Լևինը տեսավ մտահոգության այն արտահայտությունը, որ միշտ ունենում է իսկական որսորդը որսի սկզբին, ու նկատեց նույնպես նրան հատուկ որոշ բարեսիրտ խորամանկություն։

— Ինչպե՞ս ենք գնալու։ Ճահիճը հիանալի է, ես տեսնում եմ, կան նաև բազեներ,— ասաց Ստեպան Արկադևիչը, նշելով որսավայրի վրա ճախրող երկու մեծ թռչուններ։— Որտեղ բազեներ կան, այնտեղ հաստատապես կան և որսի թռչուններ։

— Ա՜յ, տեսնո՞ւմ եք, պարոններ,— ասաց Լևինը մի փոքր մռայլ արտահայտությամբ, գցելով կոշիկները և նայելով հրացանի վրա եղած պատիճները։— Տեսնո՞ւմ եք այդ հասկենին,— նա նշեց գետի աջ կողմում տարածված մութ կանաչով սևին տվող փոքրիկ կղզին, ընկած կիսով չափ հնձված հրսկայական, թաց մարգագետնի մեջ։— Ճահիճն սկսվում է ահա այստեղից, ուղիղ մեր դիմացից, տեսնո՞ւմ եք՝ որտեղ ավելի կանաչ է։ Այստեղից նա գնում է դեպի աջ, որտեղ ձիերն են շրջում, այնտեղ կան գուղձեր, պատահում են մեծ կտցարներ և այդ հասկենու շուրջը՝ ահա մինչև այն լաստենու անտառը և մինչև ջրաղացը։ Ահա այնտեղ, տեսնո՞ւմ ես, որտեղ խորշն է։ Դա լավագույն տեղն է։ Ես այնտեղ մի անգամ խփեցի տասնյոթ սովորական կտցար։ Մենք կբաժանվենք ու կգնանք տարբեր կողմեր՝ երկու շների հետ և իրար կհանդիպենք այնտե՛ղ՝ ջրաղացի մոտ։

[1] Քառաձի կառք մի ձեռքում։

— Իսկ ո՞վ դեպի աջ, ո՞վ դեպի ձախ,— հարցրեց Ստեպան Արկադևիչը։— Դեպի աջ ավելի լայն է, գնացեք դուք երկուսով, իսկ ես՝ դեպի ձախ,— ասաց նա, կարծես, անփութորեն։

— Հիանալի՜ է. մենք նրան կգերազանցենք մեր որսածով։ Դե՜, գնանք, գնանք,— ձայնեց Վասենկան։

Լևինը չէր կարող չհամաձայնել, և նրանք բաժանվեցին։

Հենց որ նրանք մտան ճահիճը, երկու շները միասին փնտրեցին ու վազեցին դեպի ժանգապատ տեղը։ Լևինը գիտեր Լասկայի այդ որոնումը՝ զգույշ և անորոշ. նա գիտեր նաև տեղը և սպասում էր կտցարների երամին։

— Վեսլովսկի, կողքիցս, կողքի՜ցս եկեք,— մարող ձայնով ասում էր նա ետևից ջրի մեջ ճփճփացնող ընկերոջը, որի հրացանի ուղղությունն ակամա հետաքրքրում էր Լևինին՝ Կոլպենի ճահճում տեղի ունեցած անակնկալ կրակոցից հետո։

— Ո՜չ, ես չեմ ճնշի ձեզ. դուք իմ մասին մի՛ մտածեք։

Բայց Լևինն ակամա մտածում էր և հիշում էր Կիտիի խոսքերը, երբ նա ճանապարհում էր ամուսնուն. «Տեսեք, իրար հրացանազարկ չանեք»։ Շները մոտենում էին ավելի և ավելի, առաջ ընկնելով իրարից, յուրաքանչյուրը տանելով իր գիծը։ Կտցար տեսնելու զգացումն այնքան զորեղ էր, որ ժանգի միջից դուրս քաշած սեփական կրունկի ծլպծլպոցը Լևինին թվում էր կտցարի ճիչ, և նա բռնում ու սեղմում էր հրացանի կոթը։

Թրը՜խկ, թրը՜խկ, լսվեց նրա ականջի տակ։ Դա Վասենկան էր, որ կրակեց բադերի երամի վրա, որոնք պտտվում էին ճահճի գլխին և այդ պահին չափից ավելի մոտեցան որսորդներին։ Մինչև Լևինը կկարողանար ետ նայել, ճթճթաց մի կտցար, ապա երկրորդը, երրորդը և էլի ութ հատ բարձրացան իրար ետևից։

Ստեպան Արկադևիչը խփեց մի հատ հենց այն պահին, երբ նա պատրաստվում էր սկսել իր կեռմանները, և կտցարը գնդի պես ընկավ մորուտի մեջ։ Օբլոնսկին առանց շտապելու հրացանն ուղղեց մյուսին, որն ավելի ցածրից թռչում էր դեպի հասկենին, և հրազարկի ձայնի հետ ընկավ նաև ա՛յդ կտցարը, ու երևում էր, թե ինչպե՞ս վեր-վեր էր թռչկոտում հնձած խոտի մեջ, թպրտացնելով ողջ մնացած՝ տակի կողմից սպիտակ թևը։

Լևինն այդպես երջանիկ չէր. նա կրակեց առաջին կտցարի վրա շատ մոտիկից ու վրիպեց. հրացանն ուղղեց նրա վրա, երբ նա արդեն սկսեց բարձրանալ, բայց այդ ժամանակ մեկն էլ թռավ Լևինի ոտների տակից ու գրավեց նրա ուշադրությունը, և նա վրիպեց երկրորդ անգամ։

Մինչ լցնում էին հրացանները, բարձրացավ էլի մի կտցար, և Վեսլովսկին, որ արդեն լցրել էր երկրորդ անգամ, արձակեց ջրի մեջ մանր կոտորակի երկու լից։ Ստեպան Արկադևիչը վերցրեց իր կտցարները և փայլուն աչքերով նայեց Լևինին։

— Իսկ հիմա բաժանվում ենք,— ասաց Ստեպան Արկադևիչը և քիչ կաղալով ձախ ոտով ու հրացանը բռնած պատրաստ և սուլելով շանը, գնաց դեպի մի կողմ, Լևինն ու Վեսլովսկին գնացին դեպի մյուս կողմը։

Լևինի հետ միշտ պատահում էր այնպես, որ երբ առաջին հրազարկերն անհաջող էին անցնում, նա տաքանում, սրտնեղում էր և ամբողջ օրը վատ էր կրակում։ Այդպես էր նաև այսօր։ Կտցարները չափազանց շատ էին։ Շների քթի տակից, որսորդների ոտների տակից անընդհատ դուրս էին թռչում նրանք, Լևինը կարող էր գործը շտկել, բայց որքան ավելի էր կրակում նա, այնքան ավելի էր խայտառակվում Վեսլովսկու առաջ, որն ուրախ կրակում, և՛ չափով, և՛ առանց չափի, ոչինչ չէր սպանում ու բնավ չէր վրդովվում դրանից։ Լևինն շտապում էր, չէր համբերում, տաքանում էր ավելի ու ավելի և հասավ արդեն այն դրության, որ կրակելով, համարյա հույս չուներ սպանելու։ Թվում էր, որ Լասկան էլ հասկանում էր այդ։ Նա սկսեց փնտրել ծուլորեն և կարծես թե տարակուսանքով կամ կշտամբանքով նայելով որսորդներին։ Հրազարկի հրազարկի ետևից լսվում էին իրար վրա։ Վառոդի ծուխը կանգնած էր որսորդների շուրջը, իսկ մեծ, ընդարձակ որսապայուսակի մեջ կար միայն երեք թեթև, փոքրիկ կտցար։ Այն էլ, նրանցից մեկն սպանել էր Վեսլովսկին, իսկ մեկն ընդհանուր էր։ Մինչդեռ ճահճի մյուս կողմում լսվում էին Ստեպան Արկադևիչի ո՛չ հաճախակի, բայց, ինչպես թվում էր Լևինին, նշանակալից հրազարկերը, և համարյա յուրաքանչյուրից հետո լսվում էր. «Կրա՛ք, կրա՛ք, բե՛ր»։

Այդ ավելի ևս հուզում էր Լևինին։ Կտցարներն անդադար պտտվում էին օդի մեջ՝ հասկենու վրա։ Սպծպոցը գետնի վրա

և կռնչոցը բարձրում անլռելի լսվում էին ամեն կողմից. առաջ թռցրած և օդի մեջ ճախրող կտցարները նստում էին որսորդների դիմաց։ Երկու բազեի փոխարեն այժմ տասնյակներն էին ճչոցով պտտվում ճահճի վրա։

Անցնելով ճահճուտի մեծ մասը, Լևինն ու Վեսլովսկին հասան այն կետին, որի ուղղությամբ, հասկենու մեջ մխվող երկար շերտերով, բաժանված էր մուժիկների խոտհարքը, տեղ-տեղ նշանած կոխկրտած զոլերով, տեղ-տեղ հնձած լասով։ Այդ զոլերի կեսն արդեն հնձած էր։

Թեպետև չհնձած տեղերում քիչ հույս կար գտնելու այնքան, որքան հնձածում, բայց Լևինը խոստացել էր Ստեպան Արկադևիչին՝ հանդիպել նրան, ուստի իր ուղեկցի հետ շարունակեց գնալ հնձած ու չհնձած շերտերով։

— Է՛յ, որսորդներ,— ձայնեց նրանց մեկն այն մուժիկներից, որոնք նստել էին արձակած սայլի մոտ,— եկ մեզ հետ ճաշ անենք. արագ խմենք։

Լևինը ետ նայեց։

— Ե՛կ, բան չկա՞,— բղավեց կարմիր դեմքով մորուքավոր ուրախ մուժիկը, բանալով սպիտակ ատամները և բարձրացնելով արևի տակ փայլող, կանաչավուն շտոֆը։

— Q'uest ce qu'ils disent?[1],— հարցրեց Վեսլովսկին։

— Կանչում են օղի խմելու։ Երևի մարգագետիններն էին բաժանում։ Ես կխմեի,— ասաց Լևինը ո՛չ առանց խորամանկության, հույս ունենալով, որ Վեսլովսկին կհրապուրվի օղիով ու կգնա նրանց մոտ։

— Իսկ ինչո՞ւ են հյուրասիրում։

— Հենց այնպես, քեֆ են անում։ Իսկապես, մոտեցեք նրանց։ Ձեզ համար հետաքրքրական է։

— Allons; Cest curieux[2],

— Գնացեք, գնացեք, դուք կգտնեք ճանապարհը դեպի ջրաղացը,— բղավեց Լևինը և ետ նայելով, գոհունակությամբ տեսավ, որ Վեսլովսկին սայթաքելով հոգնած ոտներով, կռացած և հրացանը բռնած ձիգ տված ձեռքին, ճահճից դուրս էր գալիս դեպի մուժիկները։

[1] Ի՞նչ են ասում նրանք։

[2] Գնանք, դա հետաքրքիր է։

— Դո՛ւն էլ եկ,— ձայնեց մուժիկը Լևինին։— Մի՛ վախի։ Կարկանդակ կուտես։

Լևինը սաստիկ ուզում էր օդի խմել և մի կտոր հաց ուտել։ Նա թուլացել էր ու զգում էր, որ դժվարությամբ է հանում իրար փաթաթվող ոտները մորուտից, և մի րոպե տատանման մեջ էր, բայց շունը կանգնեց։ Եվ անմիջապես ամբողջ հոգնածությունը չքացավ, ու նա հեշտությամբ գնաց մորուտով դեպի շունը։ Նրա ոտների տակից դուրս թռավ մի կտցար. նա կրակեց ու սպանեց,— շունը շարունակում էր կանգնած մնալ։ «Քը՛սկ»։ Շան քթի տակից բարձրացավ մեկ ուրիշը։ Լևինը կրակեց։ Բայց անհաջող էր օրը. նա վրիպեց, և երբ գնաց որոնելու սպանվածին, նրան էլ չգտավ։ Նա պրպտեց ամբողջ հասկենին, բայց Լասկան չէր հավատում, որ նա սպանել է, և երբ շանն ուղարկում էր որոնելու, շունը ձևացնում էր, իբր որոնում է, սակայն չէր որոնում։

Առանց Վասենկայի էլ, որին Լևինը հանդիմանում էր իր անհաջողության համար, գործը չշտկվեց։ Կտցարներ շատ կային նաև այստեղ, բայց Լևինը վրիպում էր իրար ետևից։

Արևի շեղ ճառագայթները դեռ կիզիչ էին. քրտինքից ամբողջովին թրջված հագուստը կպել էր մարմնին, ջրով լեցուն ձախ կոշիկը ծանր էր և ճպճպում էր. վառոդի ծխից մրոտված դեմքի վրայով կաթիլ-կաթիլ գլորվում էր քրտինքը. բերանում դառնություն կար, քթի մեջ՝ վառոդի և ժանգի հոտ, ականջներում՝ կտցարների անլռելի կկկոց. հրացանի փողերին ձեռք տալ չէր լինում, այնպես տաքացել էին. սիրտը խփում էր արագ ու կարճ. ձեռները դողում էին հուզմունքից, և հոգնած ոտները սայթաքում ու փաթաթվում էին իրար՝ գուղձերի և մորուտի մեջ. բայց նա դարձյալ շրջում ու կրակում էր։ Վերջապես, ամոթալի մի վրիպում ևս, ու նա հրացանը և գլխարկը գցեց գետին։

«Ո՛չ, պետք է ուշքի գալ»,— ասաց նա ինքն իրեն։ Բարձրացնելով հրացանն ու գլխարկը, կանչեց իր մոտ Լասկային և դուրս եկավ ճահճից։ Դուրս գալով չոր տեղ, նա նստեց մի գուղձի վրա, կոշիկները հանեց, թափեց նրանց միջի ջուրը, հետո մոտեցավ ճահճին, կուշտ խմեց ժանգահամ ջրից, թրջեց հրացանի տաքացած փողերը և լվաց երեսն ու ձեռները։

Թարմանալով, շտաքանալու հաստատ դիտավորությամբ նա նորից գնաց դեպի այն տեղը, ուր թռավ-նստեց կտցարը։

Նա ուզում էր հանգիստ լինել, բայց՝ էլի նույնը։ Նրա մատն ավելի շուտ էր սեղմում հրահանի ոտը, քան նա նշանի կառներ թռչունը։ Քանի գնում, այնքան ավելի ու ավելի վատ։

Նրա որսապայուսակում կար ընդամենը հինգ հատ, երբ նա ճահճից դուրս եկավ դեպի լաստենու պուրակը, որտեղ պետք է հանդիպեր Ստեպան Արկադևիչին։

Նախքան Ստեպան Արկադևիչին տեսնելը, Լևինը տեսավ նրա շանը։ Լաստենու շուռ տված արմատի տակից դուրս թռավ Կրաքը, ամբողջովին սևացած ճահճային գարշահոտ տիղմից, և հաղթողի տեսքով հոտոտեց Լասկային։ Կրաքի ետևից լաստենիների շվաքում երևաց նաև Ստեպան Արկադևիչի հոյակազմ ֆիգուրը։ Ընդառաջ էր գալիս նա՝ կարմիր, քրտնած, օձիքը բաց, դարձյալ մի քիչ կաղալով։

— Հը՛, ինչպե՞ս է։ Դուք շատ էիք կրակում,— ասաց նա, ուրախ ժպտալով։

— Իսկ դո՞ւ,— հարցրեց Լևինը։ Բայց հարցնելու կարիք չկար, որովհետև նա արդեն տեսավ լիքը որսապայուսակը։

— Ոչի՞նչ։

Նա սպանել էր տասնչորս հատ։

— Հիանալի ճահիճ է։ Քեզ երևի Վեսլովսկին խանգարում էր։ Մի շան հետ երկուսի համար անհարմար է,— ասաց Ստեպան Արկադևիչը, մեղմացնելով իր հաղթանակը։

XI

Երբ Լևինն ու Ստեպան Արկադևիչը եկան այն գյուղացու խրճիթը, որի մոտ միշտ իջնում էր Լևինը, Վեսլովսկին արդեն այնտեղ էր։ Նա նստել էր խրճիթի մեջտեղում և երկու ձեռքով բռնած երկար նստարանից, որի վրայից նրան ցած էր քաշում զինվորը՝ տանտիկնոջ եղբայրը, ձգելով տիղմով լեցուն կոշիկներից, ծիծաղում էր իր վարակիչ-ուրախ ծիծաղով։

— Ես այս րոպեիս եկա։ Ils ont été charmants[1]. Երևակա-

[1] Նրանք հմայիչ էին։

յիցեք, խմեցրին ինձ, կերակրեցին։ Ի՜նչ հաց, հրաշալի՜ք։ Delicieux![1] Ոչինչ նույնպես՝ նրանից համեղը երբեք չեմ խմել։ Եվ ո՛չ մի կերպ չէին ուզում դրամ վերցնել։ Եվ շարունակ ասում էին. «Ներող եղիր»։

— Ինչի՞ համար փող վերցնել։ Ասել կուզի, նրանք պատվում էին ձեզ։ Նրանց արաղը հո ծախու չէ,— ասաց զինվորը, հանելով վերջապես թրջված կոշիկը՝ սևացած գուլպայի հետ։

Զնայած որսորդների կոշիկներից և կեղտոտ, լմզված շներից աղտոտված խրճիթի անմաքրությանը, ճահճային ու վառոդի հոտին, որով լցվեց խրճիթը, և, դանակ-պատառաքաղի բացակայությանը, որսորդները կուշտ թեյ խմեցին ու ընթրեցին այնպես համով, ինչպես ուտում են միայն որսի ժամանակ։ Լվացված ու մաքրված, նրանք գնացին խոտի սարայը, որտեղ կառապանները նրանց համար անկողին էին պատրաստել։

Թեև արդեն մութն ընկել էր, բայց որսորդներից ոչ ոք չէր ուզում քնել։

Խոսակցությունը տատանվելով հիշողությունների և հրաձգության, շների, առաջվա որսորդությունների մասին պատմածների միջև, եկավ, կանգ առավ ամենքին հետաքրքրող թեմայի վրա։ Վասենկայի հիացմունքի արտահայտությունների առթիվ,— արդեն կրկնված մի քանի անգամ՝ այդ գիշերօթի և խոտի հոտի գրավչության մասին, կոտրված սայլի գրավչության մասին (Վեսլովսկուն սայլը թվում էր կոտրված, որովհետև այն հանել էին իր առաջքի վրայից), նրան օդի խմեցրած մուժիկների բարեսրտության ու շների մասին, որ պառկել էին իրենց տերերի ոտների տակ,— Օբլոնսկին պատմեց Մայլտուսի մոտ եղած հիանալի որսորդության մասին, որին անցյալ ամառ մասնակցել էր ինքը։ Մայլտուսը երկաթուղային ձեռնարկատեր՝ հայտնի հարուստ էր։ Ստեպան Արկադևիչը պատմում էր, թե ինչպիսի ճահիճներ էր վարձակալել այդ Մայլտուսը Տվերի նահանգում ու ի՜նչ խնամքով պահված էին նրանք, թե ինչպիսի կառքերով տեղ հասցրին որսորդներին և ինչպիսի վրան էին խփել ճահճի մոտ՝ նախաճաշի համար։

— Չեմ հասկանում քեզ,— ասաց Լևինը, բարձրանալով

[1] Սքանչելի՜ք։

իր խոտե անկողնի մեջ,— թե ինչպես զզվելի չեն քեզ համար այդ մարդիկ։ Ես հասկանում եմ, որ լաֆիտով[1] նախաճաշը շատ հաճելի է, բայց մի՞թե քեզ համար զզվելի չէ հենց այդ ճոխությունը։ Բոլոր այդ մարդիկ, ինչպես առաջ մեր կապալառուները, դրամ են վաստակում այնպես, որ արժանանում են մարդկանց արհամարհանքին, անուշադրության են մատնում այդ արհամարհանքը, իսկ հետո անազնվաբար վաստակածով փրկանք տալիս, ազատվում են առաջվա արհամարհանքից։

— Միանգամա՛յն իրավացի,— արձագանքեց Վասենկա Վեսլովսկին։— Միանգամա՛յն։ Հասկանալի է, որ Օբլոնսկին այդ անում է bonhomie-ից[2] դրդված, իսկ ուրիշներն ասում են, Օբլոնսկին հո գնո՞ւմ է...

— Բնավ երբեք,— Լևինը լսեց, որ Օբլոնսկին ժպտում էր, ասելով այդ,— նրան ես ուղղակի չեմ համարում ավելի անազնիվ, քան որևէ մեկին մեր հարուստ վաճառականներից և ազնվականներից։ Թե՛ նրանք, թե՛ սրանք միակերպ հարստացել են աշխատանքով ու խելքով։

— Այո՛, բայց ինչպիսի՞ աշխատանքով։ Մի՞թե կոնցեսիա ձեռք բերելն ու վերավաճառելը կարելի է աշխատանք համարել։

— Իհարկե, աշխատանք է։ Աշխատանք է այն իմաստով, որ եթե չլիներ նա կամ չլիներ նրա նմանները, չէին լինի նաև ճանապարհներ։

— Բայց այդ այնպիսի աշխատանք չէ, ինչպես մուժիկի կամ գիտնականի աշխատանքը։

— Ենթադրենք. սակայն, աշխատանք է այն առումով, որ նրա գործունեությունը արդյունք է տալիս, այսինքն՝ ճանապարհներ։ Բայց չէ՞ որ դու այն կարծիքին ես, որ ճանապարհներն անօգուտ բան են։

— Ո՛չ, դա այլ հարց է. ես պատրաստ եմ ընդունելու, որ նրանք օգտակար են։ Բայց ամեն ձեռքբերում անազնիվ է, երբ չի համապատասխանում իր վրա գործ դրված աշխատանքին։

— Իսկ ո՞վ է որոշելու համապատասխանությունը։

[1] Ֆրանսիական (Բորդոյի) կարմիր գինի։

[2] Պարզամտությունից։

— Անազնիվ ճանապարհով, խորամանկությամբ ձեռքբերումը,— ասաց Լևինը, զգալով որ ինքը չի կարողանում պարզ որոշել ազնիվի և անազնիվի միջև եղած գիծը,— այնպես է, ինչպես բանկիրային գրասենյակների ձեռքբերումը,— շարունակեց նա։ — Առանց աշխատանքի հսկայական կարողություն ձեռք բերելը չարիք է, ինչպես կապալների ժամանակ էր. փոխվել է միայն ձևը։ Le roi est mort. vive le roi[1]։ Հենց որ ոչնչացրին կապալները, անմիջապես հայտնվեցին երկաթուղիները, բանկերը. նույնպես շահ՝ առանց աշխատանքի։

— Այո՛, այս բոլորը կարող է լինել ճիշտ ու սրամիտ... Պառկիր, Կրաք,— բղավեց Ստեպան Արկադևիչը, իրեն քորող և ամբողջ խոտը շուռումուռ տվող շան վրա։ Ապա հանդիստ և առանց շտապելու ասաց նա, երևի հավատացած իր թեմայի արդարացի լինելուն։ — Բայց դու չորոշեցիր գիծը ազնիվ և անազնիվ աշխատանքի միջև։ Անազնի՞վ է արդյոք այն, որ ես ստանում եմ ավելի ոռճիկ, քան իմ գործերի կառավարիչը, թեև նա ինձնից ավելի լավ գիտե գործը։

— Չգիտեմ։

— Է՛, այդ դեպքում ես կասեմ քեզ. այն, որ տնտեսության մեջ քո աշխատանքի համար դու ստանում ես ավելորդ, ենթադրենք, հինգ հազար, իսկ մեր տնատեր մուժիկը հիսուն ռուբլուց ավելի չի ստանում, ինչքան էլ աշխատի, անազնիվ է ճիշտ այնպես, ինչպես այն, որ ես ավելի եմ ստանում գործերի կառավարչից, և որ Մայլտուսն ավելի է ստանում երկաթուղու վարպետից։ Ընդհակառակն, ես տեսնում եմ հասարակության կողմից ինչ-որ թշնամական, ո՛չ մի բանի վրա չհիմնված վերաբերմունք դեպի այդ մարդիկ, և ինձ թվում է որ այստեղ կա նախանձ...

— Ո՛չ, դա իրավացի չէ,— ասաց Վեսլովսկին.— նախանձ չի կարող լինել, այլ կա ինչ-որ անմաքուր բան այդ գործի մեջ։

— Ո՛չ, թույլ տուր,— շարունակեց Լևինը։— Դու ասում ես, թե անիրավացի է, որ ես ստանում եմ հինգ հազար, իսկ մուժիկը՝ հիսուն ռուբլի. դա ճիշտ է։ Դա անիրավացի է, և ես զգում եմ այդ, բայց...

— Իսկապես որ։ Ինչի՞ համար ենք մենք ուտում, խմում, որսորդությամբ զբաղվում, ոչինչ չենք անում, իսկ նա միշտ, միշտ աշխատանքի մեջ է,— ասաց Վասենկա Վեսլովսկին, ըստ երևույթին, իր կյանքում առաջին անգամ պարզորեն մտածելով դրա մասին և այդ պատճառով՝ լիովին անկեղծորեն։

— Այո՛, դու զգո՛ւմ ես, բայց դու չե՛ս տալիս նրան քո կալվածքը։ — ասաց Ստեպան Արկադևիչը, կարծես դիտմամբ դիպչելով Լևինին։

Վերջերս երկու քենակալների միջև ստեղծվել էր մի տեսակ գաղտնի թշնամական հարաբերություն. կարծես այն օրից ետ, երբ նրանք ամուսնացել էին քույրերի հետ, նրանց մեջ ծագեց մրցակցություն այն առթիվ, թե ո՞վ ավելի լավ էր կարգավորել իր կյանքը, և հիմա այդ թշնամանքն արտահայտվում էր խոսակցության մեջ, որն սկսում էր ընդունել անձնական բնույթ։

— Ես չեմ տալիս այն պատճառով, որ ոչ ոք ինձնից չի պահանջում այդ, և եթե ես ուզենայի, չէի կարող տալ. մարդ էլ չկա, ում տայի,— ասաց Լևինը։

— Տո՛ւր այս մուժիկին. նա չի հրաժարվի։

— Այո՛, բայց ինչպե՞ս տամ նրան։ Գնամ ու կայքագի՞ր կնքեմ նրա հետ։

— Չգիտեմ. բայց եթե դու համոզված ես, որ իրավունք չունես...

— Ես բնավ համոզված չեմ։ Ընդհակառակն, ես զգում եմ, որ իրավունք չունեմ տալու, որ ես պարտավորություններ ունեմ թե՛ հողի, թե՛ ընտանիքիս հանդեպ։

— Ո՛չ, թույլ տուր. բայց եթե դու կարծում ես որ այդ անհավասարությունն անիրավացի է, հապա ինչո՞ւ չես գործում այնպես..

— Ես գործում եմ, բայց բացասաբար. այն իմաստով, որ չեմ աշխատի մեծացնելու դրության այն տարբերությունը, ինչ գոյություն ունի իմ և նրա միջև։

— Ո՛չ, ների՛ր ինձ, դա արդեն պարադոքս է։

— Այո, դա մի տեսակ սոփեստական բացատրություն է,— հաստատեց Վեսլովսկին։ — Ա՛, տնատեր,— ասաց նա մուժիկին, որը ճռնչացնելով դարբասը, մտնում էր սարայ։— Ի՞նչ կա, չե՞ս քնել դեռ։

— Չէ՛, ի՞նչ քուն։ Ես կարծում էի, մեր պարոնները քնած

[1] Մեռավ թագավորը, կեցցե՛ թագավորը։

են, համա լսում եմ՝ զրույցում են։ Եկա կեռը վերցնեմ։ Չի՞ կծի,— ավելացրեց նա, զգուշությամբ փոխելով բորիկ ոտները։

— Իսկ դու որտե՞ղ պիտի քնես։

— Մենք ձիերը տանում ենք գիշերվա արոտի։

— Ա՜խ, ի՜նչ գիշեր է,— ասաց Վեսլովսկին, նայելով այժմ բացված դարբասի մեծ շրջանակի մեջ վերջալույսի թույլ լույսի տակ երևացող խրճիթի և լուծն արձակած սայլի ափին։ — Այո՛, լսեք. կանացի ձայներ են երգում և, իսկապես, վատ չեն երգում։ Այդ ո՞վ է երգում, տնատեր։

— Պարոնի աղջկերքն են, էստեղ, մեր կողքին։

— Գնանք, զրոսնենք, միևնույն է, չենք քնելու։ Օբլոնսկի, գնա՛նք։

— Մարդ ինչպե՞ս անի, որ և՛ պառկի, և՛ գնա,— ձիգ գալով պատասխանեց Օբլոնսկին։ — Հիանալի բան է պառկելը։

— Է՜հ, ես մենակ կգնամ,— աշխույժ վեր կենալով ու կոշիկները հագնելով, ասաց Վեսլովսկին։ — Ցտեսություն, պարոննե՛ր։ Եթե ուրախ լինի, կկանչե՛մ ձեզ։ Դուք ինձ հյուրասիրեցիք հավքեղենով, ես էլ ձեզ չեմ մոռանա։

— Իրոք որ լավ տղա է, չէ՞,— ասաց Օբլոնսկին, երբ Վեսլովսկին դուրս գնաց, և մուժիկը ծածկեց դարբասը նրա ետևից։

— Այո՛, լավն է,— պատասխանեց Լևինը, շարունակելով մտածել քիչ առաջ տեղի ունեցած խոսակցության նյութի մասին։ Նրան թվում էր, թե ինքը, ինչքան կարող էր, պարզ արտահայտեց իր մտքերն ու զգացումները, այնինչ՝ նրանք երկուսն էլ՝ ո՛չ տխմար և անկեղծ մարդիկ, միաբերան ասացին, որ ինքը մխիթարվում է սոփեստություններով։ Դա շփոթեցնում էր նրան։

— Այսպես ահա, բարեկա՛մս։ Հարկավոր է երկուսից մեկը. կամ ընդունել, որ հասարակության ներկա կազմը իրավացի է, և այս դեպքում պաշտպանել իր իրավունքները, կամ խոստովանել, որ օգտվում ես անարդար առավելություններից, ինչպես հենց անում եմ ես, և օգտվել դրանցից բավականությամբ։

— Ո՛չ, եթե դա լիներ անարդար բան, դու չէիր կարող բավականությամբ օգտվել այդ բարիքներից, համենայն

դեպս՝ ես չէի կարող։ Ինձ համար գլխավորն այն է, որպեսզի ես զգամ, որ մեղավոր չեմ։

— Ի՞նչ կասես, իսկապես, չգնա՞նք արդյոք,— ասաց Ստեպան Արկադևիչը, հավանաբար հոգնելով մտքի լարվածությունից։ — Հո չենք քնելու։ Իսկապես, գնանք։

Լևինը չէր պատասխանում։ Խոսակցության մեջ իր ասած խոսքն այն մասին, թե ինքը գործում է իրավացի միայն բացասական իմաստով, զբաղեցնում էր նրան։ «Մի՞թե միայն բացասաբար կարելի է իրավացի լինել», հարցնում էր ինքն իրեն։

— Սակայն, ի՜նչ ուժեղ հոտ ունի թարմ խոտը,— ասաց Ստեպան Արկադևիչը, քիչ բարձրանալով։ — Քունս ո՛չ մի կերպ չի տանի։ Վասենկան ինչ-որ բան է սարքել այնտեղ։ Լսո՞ւմ ես քրքիջ և նրա ձայնը։ Չգնա՞նք արդյոք։ Գնա՞նք։

— Ո՛չ, ես չեմ գնա,— պատասխանեց Լևինը։

— Մի՞թե այդ ես սկզբունքից դրդված,— ժպտալով ասաց Ստեպան Արկադևիչը, մթության մեջ որոնելով իր գդակը։

— Ո՛չ սկզբունքից դրդված, սակայն ինչի՞ համար գնամ։

— Գիտե՛ս ինչ. դու քո գլխին փորձանք կբերես,— ասաց Օբլոնսկին, գտնելով գդակը և վեր կենալով։

— Ինչո՞ւ։

— Մի՞թե ես չեմ տեսնում, թե դու ի՛նչ դիրք ես ստեղծել քեզ համար՝ կնոջդ մոտ։ Ես լսեցի, ձեր մեջ առաջնակարգ կարևոր հարց է՝ արդյոք մի երկու օրով որսի գնա՞ս, թե՞ չգնաս։ Այս բոլորը լավ է, որպես իդիլիա, բայց դա հերիք չի անի ամբողջ կյանքի համար։ Տղամարդը պետք է անկախ լինի,— նա ունի իր տղամարդկային հետաքրքրությունները։ Տղամարդը պետք է լինի առնական,— ասաց Օբլոնսկին, բանալով դարբասը։

— Այսինքն՝ ի՞նչ. գնալ սիրաթովել կալվածատիրոջ աղջիկների՞ն,— հարցրեց Լևինը։

— Իսկ ինչո՞ւ չգնալ, եթե դա ուրախություն է պատճառում։ Ça ne tire pas à conséquence[1]։ Դրանից իմ կնոջ համար վատ չի լինի, իսկ ինձ համար ուրախ կլինի։ Գլխավորն

[1] Դրանում դատապարտելի ոչինչ չկա։

այն է, որ մարդս պահպանի տան սրբությունը։ Որպեսզի տան մեջ ոչինչ չպատահի։ Իսկ ձեռները մի՛ կապկպիր։

— Կարող է պատահել,—չոր ասաց Լևինը և շուռ եկավ կողքին։— Առավոտյան վաղ պետք է գնալ, և ես ոչ ոքի չեմ արթնացնի. այլ կգնամ լուսածեգին։

— Messieurs venez vite![1]—լսվեց վերադարձող Վեսլովսկու ձայնը։ — Charmante[2], ե՛ս հայտնաբերեցի։ Charmante, խոկական Գրետխեն, և ես արդեն ծանոթացա նրա հետ։ Իրոք, պերճագեղ աղջիկ է,— պատմում էր նա հավանության այնպիսի տեսքով, կարծես այդ աղջիկը սիրունիկ էր ստեղծված հատկապես իր համար, և նա զոհ էր նրանից, ով պատրաստել էր դա իր համար։

Լևինը քնած ձևացավ, իսկ Օբլոնսկին հագնելով կոշիկները և վառելով սիգարը, դուրս գնաց սարայից, ու շուտով լսեցին նրանց ձայները։

Լևինը երկար ժամանակ չէր կարողանում քնել։ Նա լսում էր, թե ինչպե՛ս իր ձիերը ծամում էին խոտը, հետո, թե ինչպես տնատերն իր ավագ տղայի հետ պատրաստվում էր ու ձիերը տարավ գիշերային արոտի. հետո լսեց. թե ինչպե՛ս գինվորը սարայի մյուս կողմում պառկեցնում էր քնելու իր քրոջ որդուն՝ տանտիրոջ փոքրիկ տղային. լսեց, թե ինչպե՛ս Երեխան իր բարակ ձայնով հայտնում էր քեռուն իր տպավորությունը շների մասին, որոնք նրան թվում էին սարսափելի և վիթխարի. հետո լսեց, թե ինչպե՛ս տղան հարցուփորձ էր անում, ո՛ւմ են բռնելու այդ շները, և ինչպե՛ս զինվորը խրոպոտ ու քնկոտ ձայնով ասում էր նրան, որ վաղը որսորդները կգնան ճահճուտը և կսկսեն կրակել հրացաններից, և ինչպե՛ս հետո նա, որպեսզի ազատվի երեխայի հարցերից, ասաց. «Քնի՛ր, Վասկա, քնի՛ր, թե չէ՝ տե՛ս», և շուտով ինքը խորմփաց, ու ամեն ինչ լռեց։ Լսվում էր միայն ձիերի վրնջյունը և կոցարի կրկչոցը։ «Մի՞թե միայն բացասաբար», կրկնեց նա։ «Է՛հ, ի՞նչ արած։ Ես մեղավոր չեմ»։ Ու նա սկսեց մտածել վաղվա մասին։

«Էգուց վաղ առավոտյան կգնամ և կաշխատեմ չտաքանալ։ Կոցարներ՝ անթիվ-անհամար։ Կան և մեծ կոցարներ։ Երբ վերադառնամ այստեղ, տոմս կլինի Կիտիից։ Այո՛, Ստեփան կարծես իրավացի է. ես տղամարդավարի չեմ կնոջս հետ, ես թուլամորթ եմ դառել... Բայց ի՞նչ արած։ Դարձյալ բացասաբար»։

Քնի միջից նա լսեց Վեսլովսկու և Ստեփան Արկադևիչի ուրախ զրույցն ու ծիծաղը։ Մի վայրկյան նա բացեց աչքերը. լուսինը ծագել էր, և բաց դարբասում կանգնել էին նրանք ու զրուցում էին լունի լույսով պայծառ լուսավորված։ Ստեփան Արկադևիչն ինչ-որ բան էր ասում աղջկա թարմության մասին, համեմատելով նրան պատյանը նոր պատռած թարմ կաղինի հետ, և Վեսլովսկին ծիծաղելով իր վարակիչ ծիծաղով, կրկնում էր ինչ-որ բան, հավանորեն այն խոսքերը, որ ասել էր նրան մուժիկը. «Դու աշխատիր հասնել քոնին»։ Լևինը քնի միջից ասաց.

— Պարոննե՛ր, վաղը ծեգի հետ,— և քնեց։

XII

Զարթնելով վաղ այգաբացին, Լևինը փորձեց արթնացնել ընկերներին։ Վասենկան, պառկած փորի վրա և մեկնած գուլպայով մի ոտքը, քնել էր այնպես ամուր, որ չէր կարելի պատասխան ստանալ նրանից։ Օբլոնսկին քնի միջից հրաժարվեց գնալ այդքան վաղ։ Մինչև իսկ Լասկան, որ կծիկ դարձած քնել էր խոտի եզրին, վեր կացավ դժկամությամբ ու ծուլորեն, մեկը մյուսի ետևից, ձգում, ուղղում էր իր ետևի ոտները։ Կոշիկները հագնելուց հետո հրացանը վերցնելով ու սարայի ճռնչող դուռն զգուշությամբ բանալով, Լևինը դուրս եկավ փողոց։ Կառապանները քնել էին կառքերի մոտ, ձիերը նիրհում էին։ Նրանցից մեկը միայն ծուլորեն ուտում էր վարսակ, դնչով ցրիվ տալով այն փորած կոճղի մեջ։ Դրսում դեռ խոնավ էր։

— Ինչի՞ ես էդպես վաղ վեր կացել, աչքիս լույս,— բարեկամաբար դիմեց նրան, որպես հին լավ ծանոթի, խրճիթից դուրս եկող պառավ-տանտիկինը։

— Որսի եմ գնում, մորաքույր։ Այս տեղերով կարո՞ղ եմ անցնել դեպի ճահիճը։

[1] Պարոններ, շուտ եկեք։
[2] Նազելի, գեղանի։

— Տների ուղիղ ետևից։ Մեր կալերով ու կանեփներով, սիրելիս. կածան կա էնտեղ։

Զգույշ քայլերով, իր բոբիկ արևակեզ ոտներով, պառավն առաջնորդեց Լևինին ու ետ գցեց նրա համար կալի մոտի ցանկապատը։

— Էսպես ուղիղ կերթաս ճահճուտը։ Մեր տղերքը ելեկ երեկոյան ձիերը քշեցին էնտեղ։

Լասկան ուրախ վազում էր առջևից՝ կածանով. Լևինը գնում էր նրա ետևից արագ. թեթև քայլերով, շարունակ նայելով երկնքին։ Նա ուզում էր, որ արևը դուրս չգար, մինչև ինքը կհասներ ճահիճը։ Բայց արևը չէր հապաղում։ Լուսինը, որ դեռ լուսավորում էր, երբ Լևինը դուրս եկավ, այժմ միայն փայլում էր, ինչպես մի կտոր սնդիկ. առավոտյան լուսափլիսը, որն առաջ չէր կարելի շտեսնել, այժմ պետք էր փնտրել. հեռավոր դաշտում առաջ անորոշ բծերը հիմա արդեն երևում էին պարզորոշ։ Դրանք հաճարի բարդոցներ էին։ Առանց արեի լույսի տակավին անտեսանելի ցողը անուշաբույր բարձր կանեփի մեջ, որից բռնահան անելով արդեն հանել էին հասած հատիկները, թրջում էր Լևինի ոտները և բլուզը՝ գոտուց վեր։ Առավոտյան վճիտ անդորրության մեջ լսելի էին ամենափոքրիկ հնչյունները։ Մեղուն զնդակի սուլոցով անցավ Լևինի ականջի մոտով։ Նա նայեց ու տեսավ մի երկրորդը. երրորդը։ Նրանք բոլորը դուրս էին թռչում մեղվանոցի ցանկապատի ետևից և կանեփի վրայից անցնում, անհայտանում էին ճահճուտի ուղղությամբ։ Կածանը բերեց հասցրեց ուղիղ ճահճուտը։ Ճահիճը կարելի էր ճանաչել այն գոլորշիներից. որոնք բարձրանում էին նրանից՝ տեղ-տեղ թանձր, տեղ-տեղ նոսր, այնպես որ հասկենին և ալպյան ոլոռի թփերը. որպես փոքրիկ կղզիներ. օրորվում էին այդ շոգիի մեջ։ Ճահճի և ճանապարհի ափին երեխաներն ու մուժիկները, որ հսկում էին գիշերային արոտի բերած ձիերին, պառկել էին և արշալույսը բացվելուց առաջ բոլորը քնել էին բաճկոնների տակ։ Նրանցից ո՛չ հեռու քայլում էին ոտները կապած երեք ձիեր։ Զրնգում էր նրանցից մեկի ոտների շղթան։ Լասկան գնում էր տիրոջ կողքից, նայելով շուրջը և խնդրելով, որ առաջ անցնի։ Անցնելով քնած մուժիկներից ու հավասարվելով առաջին ձկուտին, Լևինը նայեց պատիճները և թողեց շանը։ Ձիերից

մեկը, մուգ շագանակագույն եռամյա հովատակը, տեսնելով շանը, թափով ետ ընկավ և պոչը բարձրացնելով, ֆռնչաց։ Մնացած ձիերը նույնպես վախեցան ու կապած ոտները շփփացնելով ջրին և թանձր կավի միջից հանվող սմբակներով առաջացնելով ուժգին ծափի նման հնչյուն, դուրս թռան ճահճից։ Լասկան կանգ առավ, ծաղրական նայելով ձիերին և հարցական՝ Լևինին։ Լևինը շոյեց Լասկային ու շվացրեց ի նշան այն բանի, որ կարելի է սկսել։

Լասկան ուրախ և մտահոգ վազեց իր ոտների տակ օրորվող մորուտի միջով։

— Վազեվազ մտնելով ճահիճը, Լասկան իրեն ծանոթ արմատիքների, ճահճախոտերի, ժանգի բուրմունքի և ձիու թրիքի խորթ հոտի մեջ անմիջապես զգաց այդ ամբողջ տեղի վրա տարածված թռչնի հոտը, բուրավետ հենց այն թռչնի հոտը, որն ամենից ավելի էր հուզում նրան։ Մամուռի և ճահճային կոատուկների մեջ տեղ-տեղ այդ հոտը շատ ուժեղ էր, բայց չէր կարելի որոշել, թե որ ուղղությամբ էր ուժեղանում և թուլանում։ Ուղղությունը գտնելու համար պետք էր քշվել մի կողմ՝ քամու տակ։ Զգալով իր ոտների շարժումը, Լասկան լարված արշավակով,— բայց այնպես, որ յուրաքանչյուր թռիչքի միջոցին կարող էր կանգ առնել, եթե անհրաժեշտություն ծագեր,— սլացավ դեպի աջ՝ մեկդի արևելքից փչող նախալուսաբացի հովիկից և շուռ եկավ դեպի քամին։ Լայնացրած քթածակերով օդ ներշնչելով, նա անմիջապես զգաց, որ ոչ միայն հետքերը, այլ թռչունները իրենք այստեղ էին, իր դիմաց. այն էլ ո՛չ թե մի հատ, այլ՝ շատ։ Լասկան պակասեցրեց իր վազքի արագությունը։ Նրանք այստեղ էին, բայց ո՛րտեղ հատկապես, նա դեռ չէր կարողանում որոշել։ Հենց այդ տեղը գտնելու համար նա արդեն սկսեց շրջան անել, երբ հանկարծ իր տիրոջ ձայնը գրավեց ուշադրությունը։ «Լասկա՛. այստե՛ղ».— ասաց Լևինը, նշելով նրան ուրիշ կողմ։ Շունը կանգնեց, հարցնելով նրան, թե արդյոք ավելի լավ չէ՞ անել այնպես, ինչպես սկսեց ինքը։ Բայց նա բարկացած ձայնով կրկնեց իր հրամանը, ցույց տալով ջրով հեղեղված կոճղանոցը, որտեղ ոչինչ չէր կարող լինել։ Լասկան լսեց նրան, ձևացնելով, իբր որոնում է, որպեսզի բավականություն պատճառի նրան, պրպտեց կոճղանոցը ու վերադարձավ

առաջվա տեղը և անմիջապես նորից զգաց նրանց։ Այժմ, երբ տերն այլևս չէր խանգարում նրան, նա գիտեր, թե ի՛նչ պիտի անի, և շնչելով իր ոտների տակ ու վրդովալից սայթաքելով բարձր կոճղերի միջին և ընկնելով ջուրը, բայց ղեկավարելով իր ճկուն, ուժեղ ոտները, սկսեց շրջանը, որ պետք է ամեն ինչ պարզեր նրա համար։ Նրանց հոտը հետզհետե ավելի և ավելի ուժեղ, ավելի ու ավելի որոշակի համակում էր նրան, և հանկարծ նրա համար լիովին պարզ դարձավ, որ նրանցից մեկն այստեղ է, այդ կոճղի ետևում, իրենից հինգ քայլի վրա, և նա կանգնեց ու մարեց ամբողջ մարմնով։ Իր կարճ ոտների վրա նա ոչինչ չէր կարող տեսնել դիմացը, սակայն հոտից գիտեր, որ նա նստած էր հինգ քայլից ո՞չ հեռու։ Լասկան կանգնել էր, ավելի ու ավելի զգալով նրան և հմայվելով սպասողականությամբ։ Շան լարված պոչը ձգված էր ու ցնցվում էր միայն իր ծայրով։ Նրա բերանը թեթև բացված էր, ականջները բարձրացրած։ Մի ականջը ետ էր ծալվել դեռ վազքի միջոցին, և նա ծանր, բայց զգույշ շնչում էր ու ավելի ևս զգույշ նայեց իր տիրոջը՝ ավելի շուտ աչքերով, քան գլխով։ Լևինը, շան համար սովոր դեմքով, բայց միշտ սարսափելի աչքերով, գնում էր, սայթաքելով կոճղերի, գուղձերի միջին, և անսովոր կամաց, ինչպես թվում էր Լասկային։ Լասկային թվում էր, որ տերը գնում է կամաց, բայց նա վազում էր։

Նկատելով Լասկայի այն առանձնահատուկ որոնումը, երբ նա ամբողջովին սեղմվում էր դետնին, կարծես՝ փոցխում էր ետևի թաթերով ու մի փոքր բացում բերանը,— Լևինը հասկացավ, որ շունը հետամուտ է մեծ կտցարների, և մտքում աղոթելով աստծուն, որպեսզի հաջողություն ունենա, մանավանդ առաջին թռչնի նկատմամբ, մոտ վազեց Լասկային։ Ընդհուպ մոտենալով շանը, նա սկսեց բարձրից նայել իր դիմացը և աչքերով տեսավ այն, ինչ Լասկան տեսնում էր քթով։ Կոճղերի միջև, մեկ ոտի վրա կանգնած, երևում էր մի մեծ կտցար։ Գլուխը շուռ տված, կտցարն ականջ էր դնում։ Հետո մասնակի բանալով ու նորից ծալելով թևերը, նա անճոռնի կերպով ցնցեց սրբանը, չքվեց անկյունի ետևում։

— Քը՛սկ, քը՛սկ,— բղավեց Լևինը, բոթելով Լասկայի հետևին։

«Բայց ես չեմ կարող գնալ,— մտածում էր Լասկան։— Ո՞ր գնամ ես։ Այստեղից զգում եմ նրանց, իսկ եթե առաջ շարժվեմ, բան չեմ հասկանա, թե որտե՛ղ են նրանք և ովքե՛ր են»։ Բայց ահա Լևինը հրեց շանը ծնկով ու հուզված շշուկով ասաց. «Քը՛սկ, Լասոչկա, քը՛սկ»։

«Է՛հ, եթե նա ուզում է այդ, ես կանեմ, բայց այժմ արդեն ես պատասխանատու չեմ ինձ համար»,— մտածեց Լասկան և ամբողջ թափով նետվեց առաջ՝ կոճղերի մեջ։ Այժմ նա այլևս ոչինչ չէր զգում և միայն տեսնում ու լսում էր, ոչինչ չհասկանալով։

Առաջվա տեղից տասը քայլի վրա, թավ խորդոցով ու թևերի կտցարային առանձնահատուկ ցայտուն հնչյունով բարձրացավ մի մեծ կտցար։ Եվ կրակոցից անմիջապես հետո ծանրությամբ շրմփաց թաց մորուտի մեջ սպիտակ կրծքով։ Մյուսը չսպասեց ու բարձրացավ Լևինի ետևից՝ առանց շան։

Երբ Լևինը շուռ եկավ դեպի նա, վերջինս արդեն բավական հեռու էր։ Բայց կրակոցը հասավ նրան։ Թռչելով մոտ քսան քայլ, երկրորդ կտցարը շեշտակի բարձրացավ վեր և գլխիվայր, ինչպես նետած խաղաղնդակ, ծանրությամբ ընկավ չոր գետնին։

«Ա՛յ, սրանից բան կստացվի», մտածում էր Լևինը, դնելով որսապայուսակի մեջ տաք ու չաղ կտցարները։ «Հը՛, Լասոչկա, բան կստացվի՞»։

Հրացանը լցնելուց հետո, երբ առաջ շարժվեց Լևինը, արևն արդեն դուրս էր եկել, թեև դեռ չէր երևում ամպերի ետևից։ Լուսինը, կորցրած իր ամբողջ փայլը, ինչպես փոքրիկ թուխպ, սպիտակին էր տալիս երկնքում. այլևս ոչ մի աստղ չէր երևում։ Ճկլուտները, որ առաջ արծաթազօծված էին ցողով, այժմ ոսկեզօծվում էին։ Ժանգն ամբողջովին սաթի գույն ուներ։ Խոտերի կապտությունը փոխվեց դեղնավուն կանաչի։ Ճահճահավերը վխտում էին ցողով փայլփլուն և երկար ստվերներ գցած թփերի մեջ՝ առավակի մոտ։ Բաղեն զարթնել ու նստել է բարդու վրա, գլուխը շուռ տալով մի կողքից դեպի մյուսը, անբավական նայելով ճահճին։ Ճայիկները թռչում էին դեպի դաշտ, և բոկոտն երեխան արդեն քշում էր ձիերը դեպի ծերունին, որ բաճկոնակի տակից

բարձրացել ու քորում էր իրեն։ Կրակոցների ծուխը կաթի նման սպիտակին էր տալիս խոտերի կանաչի միջին։

Երեխաներից մեկը մոտ վազեց Լևինին։

— Քեռի ջան, երեկ էստեղ բաղեր կային,— ձայնեց նա ու հեռվից գնաց նրա ետևից։

Ու Լևինի համար, այս երեխայի ներկայությամբ, որն արտահայտեց իր հավանությունը, կրկնակի հաճելի էր՝ խփել հենց այստեղ իրար ետևից երեք սովորական կտցար։

XIII

Իրավացի դուրս եկավ որսորդական այն հայտանիշը, որ եթե ձեռքից բաց չի թողնվում առաջին գազանը և առաջին թռչունը, ուրեմն՝ որսը հաջողակ կլինի։

Հոգնած, սոված, առավոտյան ժամը տասին, Լևինն անցնելով մոտ երեսուն վերստ տարածություն, տասնինը կարմիր թռչնեղենով և մի հատ բաղով, որը նա կապեց գոտուց, որովհետև այլևս չէր մտնում որսապայուսակի մեջ, վերադարձավ իրենց իջած բնակարանը։ Նրա ընկերները վաղուց արթնացել էին և հասցրել սոված ուտել ու նախաճաշել։

— Կացե՛ք, կացե՛ք, ես գիտեմ, որ տասնինը հատ է,— ասում էր Լևինը, երկրորդ անգամ հաշվելով կծկված ու չորացած, արյունով լմզված, գլուխները կողքի վրա շուռ տված մեծ ու սովորական կտցարները, որոնք այլևս չունեին այն ազդու տեսքը, ինչ ունեին, երբ թռչում էին իրենց նստած տեղերից։

Հաշիվը ճիշտ էր, և Ստեպան Արկադևիչի նախանձը հաճելի էր Լևինի համար։ Նրա համար հաճելի էր նաև այն, որ վերադառնալով, նա գտավ այնտեղ Կիտիի ուղարկած մարդուն՝ տոմսի հետ։

«Ես միանգամայն առողջ եմ և ուրախ։ Եթե դու վախենում ես ինձ համար, ապա կարող ես է՛լ ավելի հանգիստ լինել, քան առաջ։ Ես ունեմ նոր անձնապահ, Մարիա Վլասևնա (դա մանկաբարձուհին էր, նոր, նշանավոր դեմք Լևինի ընտանեկան կյանքում)։ Նա եկել է ինձ այցելելու։ Նրա կարծիքով՝ ես բոլորովին առողջ եմ, և մենք նրան պահեցինք մինչև քո գալը։ Բոլորն ուրախ են, առողջ, և դու, խնդրեմ, չշտապես, ու եթե որսը հաջող է, էլի մնա մի օր»։

Այդ երկու ուրախությունը՝ հաջող որսը և կնոջ տոմսը, այնպես մեծ էր, որ Լևինի համար թեթև անցան որսորդությունից հետո տեղի ունեցած երկու փոքրիկ անախորժությունները։ Մեկ անախորժությունն այն էր, որ կողքից լծած շեկ ձին, հավանորեն, երեկ չափից ավելի վաստակած, կեր չէր ուտում և տխուր էր։ Կառապանն ասում էր, որ զոռ է դիպել նրան։

— Երեկ ուժասպառ արինք, Կոնստանտին Դմիտրիչ,— ասում էր նա։— Ո՞նց կարելի է, տասը վերստ քշում էինք առանց ճանապարհի։

Մյուս անախորժությունը, որ առաջին րոպեին փչացրեց նրա լավ տրամադրությունը, բայց որի վրա նա հետո ծիծաղում էր շատ, այն էր, որ ոչինչ չէր մնացել Կիտիի այնքան առատորեն իրենց հետ դրած ամբողջ մթերքներից, որոնք, թվում էր, թե չէր կարելի ուտել, վերջացնել մի շաբաթում։ Հոգնած ու սոված վերադառնալով որսից, Լևինն այնպես որոշակի տենչում էր կարկանդակների մասին, որ մոտենալով բնակարանին, արդեն զգում էր նրանց հոտն ու համը բերանում, ինչպես զգում էր Լասկան, որսի թռչուններին, ուստի անմիջապես հրամայեց Ֆիլիպին՝ նախաճաշ տալ իրեն։ Բանից դուրս եկավ, որ արդեն չկային ո՛չ միայն կարկանդակները, այլև ճտերը։

— Ախորժակ եմ ասում, հա՞,— ասաց Ստեպան Արկադևիչը ծիծաղելով, նշելով Վասենկա Վեսլովսկուն։— Ես չեմ տառապում ախորժակի պակասությունից, բայց այդ զարմանք բան է...

— Է՞հ, էլ ի՞նչ արած,— ասաց Լևինը, մռայլ նայելով Վեսլովսկուն։— Ֆիլիպ, տուր ուրեմն տավարի միսը։

— Տավարի միսը կերան, իսկ ոսկորը գցեցին շներին,— պատասխանեց Ֆիլիպը։

Լևինն այնպես սրտնեղեց, որ վրդովմունքով ասաց.— մի բան էլ ի՞նձ թողնեիք,— ու քիչ էր մնում լաց լիներ։

— Դե թափի՛ր, մաքրի՛ր թռչնեղենի փորոտիքը,— ասաց նա Ֆիլիպին դողդոջուն ձայնով, աշխատելով չնայել Վասենկային,— և փորերի մեջ եղինջ դիր։ Իսկ ինձ համար գոնե կաթ խնդրիր։

Հետո արդեն, երբ նա կաթով կշտացավ, խիղճը տան-

ջեց իրեն, որ իր սրտնեղությունը հայտնեց օտար մարդուն, և նա սկսեց ծիծաղել իր սոված գաղգանքի վրա։

Երեկոյան էլի գնացին որսի, որի ժամանակ Վեսլովսկին էլ սպանեց մի քանի հատ, և գիշերվա դեմ վերադարձան տուն։

Վերադարձին ճանապարհն անցավ նույնպես ուրախ, ինչպես և այնտեղ գնալիս։ Վեսլովսկին մերթ երգում էր, մերթ պատմում իր արկածները մուժիկների մոտ, որոնք հյուրասիրել էին նրան օղիով և ասել՝ «ներող եղիր», մերթ իր գիշերային արկածները կաղինների, կալվածատիրոջ աղախնի և այն մուժիկի հետ, որը հարցնում էր նրան, արդյոք ամուսնացա՞ծ է, և իմանալով, որ ամուսնացած չէ, ասաց նրան. «Մակ աչքով մի՛ նայիր ուրիշի կնոջը, լավն էն է, որ աշխատես ունենալ քոնը»։ Այդ խոսքերն առանձնապես ծիծաղեցնում էին Վեսլովսկուն։

— Առհասարակ, ես չափազանց գոհ եմ մեր ճանապարհորդությունից։ Իսկ դո՞ւք, Լևին։

— Ես շատ գոհ եմ,— անկեղծորեն ասաց Լևինը, որի համար առանձնապես ուրախալի էր, որ ոչ միայն չէր զգում այն թշնամանքը, ինչ տածում էր տանը դեպի Վասենկա Վեսլովսկին, այլ, ընդհակառակը, վերին աստիճանի բարեկամաբար էր տրամադրված։

XIV

Մյուս օրը ժամը 10-ին Լևինը, տնտեսությունը շրջագայելուց հետո, ծեծեց այն սենյակի դուռը, որտեղ գիշերում էր Վասենկան։

— Entrez[1]— բղավեց Վեսլովսկին։— Դուք ինձ ներեցեք, ես հենց նոր վերջացրի իմ ablutions[2]-ը,— ասաց նա ժպտալով, կանգնած Լևինի առաջ միայն սպիտակեղենով։

— Խնդրեմ, չճնշվեք։— Լևինը նստեց լուսամուտի մոտ։— Լա՞վ քնեցիք։

— Մեռածի պես։ Իսկ այսօր ինչպե՞ս է օրը որսի համար։

[1] Մտեք։
[2] Լվացում։

— Դուք ի՞նչ եք խմում. թե՞յ, թե սուրճ։

— Ո՛չ այս, ո՛չ այն, ես նախաճաշում եմ։ Ճիշտն ասած, ես քաշվում եմ։ Կարծեմ տիկիններն արդեն վեր են կացել։ Հիանալի է հիմա զբոսնելը։ Դուք ցույց տվեք ինձ ձիերը։

Մի քիչ զբոսնելով պարտեզում, լինելով ձիանոցում և նույնիսկ միասին մարմնամարզություն անելով, Լևինը վերադարձավ տուն իր հյուրի հետ, և միասին մտան ընդունարան։

— Հրաշալի որս արինք, և ինչքա՜ն տպավորություններ,— ասաց Վեսլովսկին, մոտենալով Կիտիին, որը նստել էր ինքնաեռի մոտ։— Որքան ափսո՜ս, որ կանայք զրկված են այդ բավականություններից։

«Է՜հ, ի՜նչ կա, պետք է որ նա մի կերպ խոսի տանտիկնոջ հետ», ասաց ինքն իրեն Լևինը։ Նրան էլի ինչ-որ բան թվաց այն ժպիտի մեջ, հաղթական այն արտահայտության մեջ, որով հյուրը դիմեց Կիտիին...

Իշխանուհին, որ նստել էր սեղանի մյուս կողմից՝ Մարիա Վլասևնայի և Ստեպան Արկադևիչի հետ, իր մոտ կանչեց Լևինին ու սկսեց խոսել նրա հետ՝ Կիտիին ծննդաբերության համար Մոսկվա տեղափոխելու և բնակարան պատրաստելու մասին։ Լևինի համար, ինչպես հարսանիքի ժամանակ, անախորժ էին բոլոր պատրաստությունները, որոնք իրենց ուշադրությամբ վիրավորում էին կատարվող երևույթի վեհությունը, այնպես և դեռ է՛լ ավելի վիրավորական էին թվում նրան պատրաստությունները ապագա ծննդաբերության համար, որի օրը մի տեսակ հաշվում էին մատների վրա։ Ամբողջ ժամանակ նա աշխատում էր չլսել այդ խոսակցությունները ապագա երեխան բարուրելու եղանակի մասին, աշխատում էր երեսը շուռ տալ և չտեսնել ինչ-որ խորհրդավոր անթիվ-անչափ գործված զոլեր, ինչ-որ քաթանե փոքրիկ եռանկյուններ, որոնց առանձին կարևորություն էր վերագրում Դոլլին, և այլն։ Տղայի ծննդյան երևույթը (նա համոզված էր, որ տղա կլինի), որը խոստանում էին նրան, բայց որին նա այսուամենայնիվ չէր կարող հավատալ,— այնպես արտասովոր էր թվում,— պատկերանում էր նրան մի կողմից՝ այնքան վիթխարի, այս իսկ պատճառով՝ անկարելի երջանկություն, մյուս կողմից այնքան խորհրդավոր, որ այդ երևակայական իմացումն այն բանի, ինչը կլինի, և դրա հետևանքով՝ պատրաս-

տությունն ինչ-որ անսովոր, մարդկանց միջոցով հենց առաջացող երևույթի համար, թվում էր նրան վրդովեցուցիչ ու նվաստացուցիչ։

Բայց իշխանուհին չէր հասկանում նրա զգացումները և դրա մասին մտածելու խոսելու նրա դժկամությունը բացատրում էր թեթևամտությամբ ու անտարբերությամբ, ուստի հանգիստ չէր տալիս նրան։ Նա հանձնարարեց Ստեպան Արկադևիչին՝ բնակարան նայել և այժմ իր մոտ կանչեց Լևինին։

— Ես ոչինչ չգիտեմ, իշխանուհի։ Արեք այնպես, ինչպես ուզում եք,— ասում էր նա։

— Պետք է վճռել, թե ե՞րբ կտեղափոխվեք դուք։

— Իրոք, ես չգիտեմ։ Ես գիտեմ, որ միլիոնավոր երեխաներ ծնվում են առանց Մոսկվայի և բժիշկների... ինչո՞ւ ուրեմն...

— Այո՛, եթե այդպես է...

— Ո՛չ, ինչպես Կիտին է ուզում։

— Չի կարելի դրա մասին խոսել Կիտիի հետ։ Ի՞նչ է, դու ուզում ես, որ ես վախեցնե՞մ նրան։ Ա՜յ, ահա այս գարնան Նատալի Գոլիցինան մեռավ վատ մանկաբարձուհու երեսից։

— Ինչպես դուք կասեք, այնպես էլ ես կանեմ,— ասաց Լևինը մռայլ։

Իշխանուհին սկսեց ասել նրան, բայց նա չէր լսում։ Թեպետև իշխանուհու խոսակցությունը վրդովում էր նրան, սակայն նա մռայլվեց ո՛չ այդ խոսակցությունից, այլ այն բանից, ինչ տեսավ ինքնաեռի մոտ։

«Ո՛չ, դա անհնարին է»,— մտածում էր նա, երբեմն-երբեմն նայելով դեպի Կիտին կուացած Վասենկային, որն իր գեղեցիկ ժպիտով ինչ-որ բան էր ասում նրան. նայում էր նաև Կիտին, որը կարմրել էր և հուզվել։

Ինչ-որ անմաքուր բան կար Վասենկայի դիրքի, նրա հայացքի, նրա ժպիտի մեջ։ Լևինը տեսավ նույնիսկ ինչ-որ անմաքուր բան նաև Կիտիի թե՛ դիրքի, թե՛ հայացքի մեջ։ Եվ նորից լույսը մարեց նրա աչքերում։ Նորից, ինչպես երեկ, հանկարծ առանց ամենափոքրիկ անցումի, նա իրեն նետված զգաց հուսահատության, զայրույթի և նվաստացման անդունդը՝ երջանկության, հանգստի, արժանապատվության բարձրությունից։ Նորից ամենքը և ամեն ինչ զզվելի գարձան նրա համար։

— Այդպես էլ արեք, իշխանուհի, ինչպես ուզում եք,— ասաց նա, նորից ետ նայելով։

— Ծանր է Մոնոմախի գդակը,— կատակով ասաց նրան Ստեպան Արկադևիչը, ակնարկելով հայտնապես ո՛չ միայն խոսակցությունն իշխանուհու հետ, այլև Լևինի հուզմունքի պատճառը, որը նկատեց նա։ — Դու այսօր ինչ ուշ ես գալիս, Դոլլի։

Ամենքը վեր կացան՝ դիմավորելու Դարյա Ալեքսանդրովնային։ Վասենկան կանգնեց մի բոպե միայն և տիկիններին հանգեպ քաղաքավարության բացակայությամբ, որ հատուկ էր նոր երիտասարդներին, բարևեց ու նորից շարունակեց խոսակցությունը, ծիծաղելով ինչ-որ բանի համար։

— Ինձ տանջեց Մաշան։ Նա լավ չի քնել և այսօր սոսկալի կամակոր է ,— ասաց Դոլլին։

Կիտիի հետ Վասենկայի սկսած խոսակցությունը նորից երեկվա նյութի մասին էր, Աննայի և այն բանի մասին, թե կարո՞ղ է արդյոք սերը բարձր լինել հասարակության պայմանականություններից։ Կիտիի համար անախորժ էր այդ խոսակցությունը և հուզում էր նրան՝ թե՛ իր բովանդակությամբ, թե՛ այն տոնով, որով տարվում էր այն, և մանավանդ նրանով, որ Կիտին գիտեր արդեն, թե ինչպես կազդի այդ իր ամուսնու վրա։ Բայց Կիտին չափազանց պարզ էր ու անմեղ, ուստի անկարող էր դադարեցնելու այդ խոսակցությունը. նա պարզ էր և անմեղ ու անկարող էր ծածկելու արտաքին այն բավականությունը, որ պատճառում էր նրան այդ երիտասարդի բացահայտ ուշադրությունը։ Նա ուզում էր վերջ տալ այդ խոսակցությանը, բայց չգիտեր, թե ի՛նչ անի։ Նա գիտեր, որ այն բոլորը, ինչ էլ աներ ինքը, ամուսինը կնկատեր ու կմեկնաբաներ վատ մտքով։ Եվ իրոք, երբ Կիտին հարցրեց Դոլլիին, ի՛նչ է պատահել Մաշային, ու Վասենկան սկսեց անտարբեր նայել Դոլլիին, սպասելով, թե ե՞րբ կվերջանա իր համար ձանձրալի այդ խոսակցությունը, Լևինին իր կնոջ հարցը թվաց որպես անբնական, զզվելի խորամանկություն։

— Ի՞նչ կասեք, այսօր գնա՞նք սունկի,— հարցրեց Դոլլին։

— Գնանք, խնդրեմ, ես էլ կգամ,— ասաց Կիտին ու կար-

մբրեց։ Քաղաքավարությունից դրդված, նա ուզում էր հարցնել Վասենկային, արդյոք կգնա՞ նա, և չհարցրեց։ — Ո՞ւր, Կոստյա,— հանցավոր դեմքով հարցրեց Կիտին ամուսնուն, երբ Լևինը վճռական քայլերով անցնում էր նրա մոտով։ Այդ հանցավոր արտահայտությունը հաստատեց Լևինի բոլոր կասկածները։

— Առանց ինձ եկել է մեքենավարը, ես դեռ չեմ տեսել նրան,— ասաց Լևինը, չնայելով կնոջը։

Նա իջավ ներքև, բայց կաբինետից դեռ դուրս չէր եկել, երբ լսեց կնոջ ծանոթ քայլերը, որն անզգույշ և արագ գալիս էր դեպի ինքը։

— Ի՞նչ ես ուզում,— ասաց նրան Լևինը չոր տոնով։ — Մենք զրաղված ենք։

— Ներեցեք ինձ,— դիմեց նա մեքենավար-գերմանացուն— ես պիտի մի քանի խոսք ասեմ ամուսնուս։

Գերմանացին ուզում էր դուրս գնալ, բայց Լևինն ասաց նրան.

— Մի՛ անհանգստանաք։

— Գնացքը ժամը երեքի՞ն է,— հարցրեց գերմանացին,— չլինի թե ուշանամ։

Լևինը չպատասխանեց նրան և ի՛նքը դուրս եկավ կնոջ հետ։

— Հապա՛, ի՞նչ ունեք ինձ ասելու,— խոսեց նա ֆրանսերեն։

Նա չէր նայում կնոջ երեսին և չէր ուզում տեսնել, որ կինը, իր վիճակում, դողում էր ամբողջ դեմքով և ուներ ողորմելի, ճնշված տեսք։

— Ես... ես ուզում եմ ասել, որ չի կարելի այդպես ապրել, որ դա տանջանք է... թոթովեց Կիտին։

— Այստեղ բուֆետում մարդիկ կան,— ասաց Լևինը բարկացած.— տեսարան մի՛ սարքեք։

— Որ այդպես է, գնանք այստեղ։

Նրանք կանգնել էին միջանցիկ սենյակում։ Կիտին ուզում էր մտնել հարևան սենյակը։ Բայց այնտեղ անգլուհին դաս էր սովորեցնում Տանյային։

— Դե՛, գնանք պարտեզ։

Պարտեզում նրանք հանդիպեցին ծառուղին մաքրող մուժիկին։ Եվ այլևս չմտածելով այն մասին, որ մուժիկը տեսնում է Կիտիի լացակումած, իսկ Լևինի հուզված դեմքը, չմտածելով այն մասին, որ իրենք ունեն այնպիսի մարդկանց տեսք, որոնք փախչում են ինչ-որ դժբախտությունից, նրանք արագ քայլերով գնում էին առաջ, զգալով, որ իրենք պետք է արտահայտվեն ու համոզեն իրար, լինեն միասին և դրանով ազատվեն այն տանջանքից, որ զգում էին երկուսն էլ։

— Այդպես ապրել չի կարելի։ Դա տանջանք է։ Ե՛ս տառապում եմ, դո՛ւ տառապում ես։ Ինչի՞ համար,— ասաց Կիտին, երբ նրանք վերջապես հասան մենավոր նստարանին՝ լորենու ծառուղու անկյունում։

— Բայց դու ասա ինձ մի բան. կա՞ր նրա տոնի մեջ անպարկեշտ, անմաքուր, նվաստացուցիչ-սոսկալի բան,— ասում էր Լևինը, կանգնելով կնոջ դիմաց նորից այն դիրքով, բռունցքները բռնած կրծքի առաջ, ինչպես կանգնել էր նա Կիտիի դիմաց այն ժամանակ՝ գիշերը։

— Կա՛ր,— ասաց Կիտին դողդոջուն ձայնով։ — Բայց, Կոստյա, մի՞թե դու չես տեսնում, որ ես մեղավոր չեմ։ Ես առավոտվանից ուզում էի այնպիսի տոն վերցնել, բայց այդ մարդիկ... Ինչո՞ւ եկավ նա։ Ի՞նչ երջանիկ էինք մենք,— ասում էր նա, խեղդվելով հեծեծանքներից, որոնք ցնցում էին նրա հաստացած ամբողջ մարմինը։

Այգեպանը զարմանքով տեսավ, որ թեպետ ոչինչ չէր հետապնդում նրանց, թեպետ փախչելու բան չկար, թեպետ նրանք չէին կարող առանձին ուրախալի բան գտնել նստարանի վրա,— այգեպանը տեսավ սակայն, որ նրանք իր մոտով վերադարձան տուն՝ հանդիստ, պայծառ դեմքով։

XV

Առաջնորդելով կնոջը վերև, Լևինը գնաց Դոլլիի բաժանմունքը։ Դարյա Ալեքսանդրովնան իր հերթին այսօր սաստիկ վշտացած էր։ Նա քայլում էր սենյակում և բարկացած ասում էր անկյունում կանգնած ու հեկեկող աղջկան.

— Եվ ամբողջ օրը կկանգնես անկյունում ու մենակ կճաշես և ո՛չ մի տիկնիկ չես տեսնի, և քեզ համար նոր շոր չեմ կարի,— ասում էր նա, չիմանալով այլևս, թե ինչո՞վ պատժի նրան։

— Ո՛չ, սա անպիտան աղջիկ է,— դիմեց նա Լևինին։ — Որտեղի՞ց է վերցնում նա այդ զզվելի հակումները։

— Բայց ի՞նչ է արել նա,— բավականին անտարբեր հարցրեց Լևինը, որն ուզում էր խորհրդակցել իր գործի մասին, ուստի սրտնեղեց, որ եկավ անպատեհ ժամի։

— Նրանք Գրիշայի հետ գնացել էին մորենու ածուն և այնտեղ... Ես նույնիսկ չեմ կարող ասել, թե ի՞նչ է արել նա։ Հազա՜ր ափսոս miss Eliot. Դա ո՛չ մի բանի չի նայում, մեքենա է... Figurez vous, que la petite...[1]

Եվ Դարյա Ալեքսանդրովնան պատմեց Մաշայի հանցանքը։

— Այդ ոչինչ չի ապացուցում, բնավ զզվելի հակում չէ, դա ուղղակի չարաճճիություն է,— հանգստացնում էր Դոլլին Լևինը։

— Բայց դու մի տեսակ վշտացած ես։ Դու ինչո՞ւ եկար,— հարցրեց Դոլլին.— Ի՞նչ է կատարվում այնտեղ։

Եվ այդ հարցի տոնի մեջ Լևինը լսեց, որ ինքը հեշտությամբ կարող է ասել այն, ինչ մտադիր էր։

— Ես այնտեղ չէի, ես Կիտիի հետ այգում էի, մենք զժտվեցինք երկրորդ անգամ այն օրից, երբ... եկավ Ստիվան։

Դոլլին նայում էր նրան խելացի, հասկացող աչքերով։

— Դե՜, ասա, ձեռքդ սրտիդ դրած, կա՞ արդյոք... ո՛չ թե Կիտիի, այլ այդ պարոնի մեջ այնպիսի տոն, որը կարող է լինել մարդու համար անախորժ, ո՛չ թե անախորժ, այլ սարսափելի՛ վիրավորական։

— Այսինքն, ինչպե՞ս ասած... կանգնիր, կանգնի՛ր անկյունում,— դիմեց նա Մաշային, որը տեսնելով հազիվ նկատելի ժպիտ մոր դեմքին, շուտ եկավ։ — Աշխարհիկ կարծիքը կլիներ այն, որ նա պահում է իրեն այնպես, ինչպես պահում են իրենց բոլոր երիտասարդները։ Il fait la cour à une jeune et jolie femme[2], իսկ աշխարհիկ ամուսինը պետք է շոյված զգա իրեն դրանով։

— Այո՛, այո՛,— ասաց Լևինը մռայլ,— բայց դու նկատեցի՞ր։

[1] Երևակայեցեք, որ աղջիկը...

[2] Նա սիրաթովում է շահել ու գեղեցիկ կնոջը։

— Ո՛չ միայն ես, այլև Ստիվան նկատեց։ Թեյից հետո նա ուղղակի ասաց ինձ։ Je crois que Վեսլովսկին fait un petit brin de cour à Կիտի[1]։

— Շատ գեղեցիկ, այժմ ես հանգիստ եմ։ Ես կվոնդեմ նրան,— ասաց Լևինը։

— Ինչե՞ր ես խոսում, խելագարվե՞լ ես, ի՞նչ է,— սարսափով բացականչեց Դոլլին։ — Ի՞նչ եղավ քեզ, Կոստյա, ուշքի եկ,— ասաց նա ծիծաղելով։ — Այժմ կարող ես գնալ Ֆաննիի մոտ,— ասաց նա Մաշային։ — Ո՛չ, եթե ուզում ես, ես կասեմ Ստիվային։ Նա կտանի նրան իր հետ։ Կարելի է ասել, որ դու սպասում ես հյուրերի։ Առհասարակ, նա հարմար մարդ չէ մեր տան համար։

— Ո՛չ, ո՛չ, ես ինքս։

— Բայց դու կկռվես...

— Բնավ ոչ։ Ինձ համար այնպես ուրախ բան կլինի այդ, իսկապես ուրախ,— ասաց Լևինը, փայլեցնելով աչքերը։— Ների՛ր Մաշային, Դոլլի, նա այլևս չի անի,— ասաց Լևինը փոքրիկ հանցագործի մասին, որը չէր գնում Ֆաննիի մոտ և անվճռական կանգնել էր մոր դիմաց, սպասելով ու աչքի տակով փնտրելով նրա հայացքը։

Մայրը նայեց աղջկան։ Աղջիկը հեկեկաց, գլուխը թաքցրեց մոր ծնկների մեջ, և Դոլլին դրեց նրա գլխին իր նիհար, քընքուշ ձեռքը։

«Եվ ի՞նչ կա ընդհանուր մեր ու նրա միջև», մտածեց Լևինը և գնաց գտնելու Վեսլովսկուն։

Անցնելով նախասենյակից, նա հրամայեց՝ լծել կառքը կայարան գնալու համար։

— Երեկ «ռեսսորը» կոտրվեց,— պատասխանեց ծառան։

— Այդ դեպքում՝ տարանտասը, բայց շուտ։ Որտե՞ղ է հյուրը։

— Նա գնաց իր սենյակ։

Լևինը գտավ Վեսլովսկուն այն պահին, երբ նա իրերը հանելով ճամպրուկից ու դասավորելով նոր ռոմանսները, չափում էր կաշվե սոնապանները, որ ձիով զբոսանքի գնա։

Արդյոք Լևինի դեմքին կա՞ր ինչ-որ առանձնահատուկ ար-

[1] Ես կարծում եմ, որ Վեսլովսկին քարշ է գալիս Կիտիի ետևից։

տահայտություն, թե՞ Վասենկան զգաց, որ այդ ընտանիքում անտեղի էր ce petit brin de cour[1], ինչ սկսեց ինքը, բայց Լևինի ներս գալով նա մի փոքր շփոթվեց (որքան ընդունակ է շփոթվելու աշխարհիկ մարդը)։

— Դուք սոնապաններո՞վ եք ձիավարում։

— Այո՛, այդ շատ ավելի մաքուր է,— ասաց Վասենկան, ճարպակալած ոտը դնելով աթոռին, կոճկելով ներքևի ճարմանդը և ուրախ, բարեսրտորեն ժպտալով։

Անկասկած, նա լավ տղա էր, և Լևինը խղճաց նրան ու ճնշվեց որպես տանտեր, երբ նկատեց երկչոտություն Վասենկայի հայացքի մեջ։

Սեղանի վրա դրած էր այն ձեռնափայտի կտորը, որը նրանք այսօր առավոտյան միասին կոտրեցին մարմնամարզության ժամանակ, փորձելով բարձրացնել մարզանքի ուռած ծանրոցը։ Լևինը վերցրեց փայտի այդ կտորը և սկսեց կոտրատել նրա ճեղքոտված ծայրը, չիմանալով, թե ինչպե՛ս սկսի։

— Ես ուզում էի...— Նա լռեց, բայց հանկարծ մտաբերելով Կիտիին և այն բոլորը, որ տեղի էր ունեցել, ասաց, վճռականորեն նայելով նրա աչքերին.— ես հրամայեցի, որ ձեզ համար ձիեր լծեն։

— Այսինքն՝ ինչպե՞ս,— սկսեց Վասենկան զարմանքով։— Իսկ ո՞ւր պիտի գնալ։

— Երկաթուղու կայարան,— ասաց Լևինը մռայլ, քշփորելով փայտի ծայրը։

— Դուք ուրիշ տե՞ղ եք գնում, թե՞ մի բան է պատահել։

— Պատահել է այն, որ ես սպասում եմ հյուրերի,— ասաց Լևինը, ավելի ու ավելի արագ կոտրատելով ճեղքոտված փայտի ծայրը՝ ուժեղ մատներով։ — Հյուրերի էլ չեմ սպասում, ոչինչ էլ չի պատահել, բայց ես խնդրում եմ ձեզ հեռանալ։ Դուք կարող եք, իմ անքաղաքավարությունը բացատրել ինչպես ուզենաք։

Վասենկան ուղղվեց։

— Ես խնդրում եմ ձեզ՝ բացատրել ինձ...— ասաց նա արժանապատվությամբ, վերջապես հասկանալով։

[1] Թրև գալը։

— Ես չեմ կարող բացատրել ձեզ,— կամաց ու դանդաղ խոսեց Լևինը, աշխատելով թաքցնել իր այտոսկրերի դողոցը։ — Եվ ձեզ համար ավելի լավ է՝ չհարցնել։

Ու որովհետև Լևինն արդեն կոտրատել, վերջացրել էր փայտի ճեղքոտված մասը, մատներով բռնեց նրա հաստ ծայրը, ճեղքեց փայտը ու խնամքով բռնեց վայր ընկնող կտորը։

Հավանորեն, այդ լարված ձեռների, այսօր առավոտյան մարմնամարզության ժամանակ իր շոշափած մկանների և փայլուն աչքերի, խաղաղ ձայնի ու դողդողացող այտոսկրերի տեսքը համոզեց Վասենկային ավելի, քան կհամոզեին խոսքերը։ Ուսերը վեր քաշելով ու արհամարհալից ժպտալով, նա գլուխ տվեց։

— Արդյոք չե՞մ կարող տեսնել Օբլոնսկուն։

Ուսերի վեր քաշելը և ժպիտը չզրգռեցին Լևինին։ «Այլևս ի՞նչ է մնում նրան անելու», մտածեց Լևինը։

— Ես նրան այս րոպեիս կուղարկեմ ձեզ մոտ։

— Ի՞նչ անմտություն է այդ,— ասում էր Ստեպան Արկադևիչը, իմանալով իր բարեկամից, որ նրան վռնդում են տանից, և գտնելով Լևինին այդում, որտեղ զբոսնում էր նա, սպասելով հյուրի մեկնելուն։ — Mais c'est ridicule[1]. ի՞նչ ճանճ կծեց քեզ։ Mais c'est du dernier ridicule[2]։ Քեզ ի՞նչ թվաց, եթե երիտասարդը...

Ըստ երևույթին, դեռ ցավում էր այն տեղը, որ ճանճը խայթել էր, ուստի Լևինը նորից զունատվեց, երբ Ստեպան Արկադևիչն ուզեց բացատրել պատճառը, և շտապ ընդհատեց նրան.

— Խնդրում եմ, մի՛ բացատրիր պատճառը։ Ես այլ կերպ չեմ կարող։ Ես ինձ ամոթով եմ զգում քո և նրա առաջ։ Բայց նրա համար, ես կարծում եմ, վիշտ չէ այստեղից հեռանալը իսկ ինձ և իմ կնոջ համար նրա ներկայությունն անախորժ է։

— Բայց նրա համար վիրավորական է։ Et puis c'est ridicule[3]։

— Իսկ ինձ համար և՛ վիրավորական է, և՛ տանջալից։ Ես ոչ մի բանում մեղավոր չեմ և անտեղի ինչո՞ւ պիտի տանջվեմ։

[1] Բայց դա ծիծաղելի է։

[2] Բայց դա ծայրաստիճան ծիծաղելի է։

[3] Եվ հետո դա ծիծաղելի է։

— Է՛, դա արդեն ես չէի սպասում քեզանից։ On peut être jaloux, mais à se point du dernier ridicule[1]։

Լևինն արագ շուռ եկավ ու հեռացավ նրանից դեպի ծառուղու խորքը և շարունակեց մենակ քայլել ետ ու առաջ։ Շուտով նա լսեց տարանտասի գղրդոցը և տեսավ ծառերի միջից, թե ինչպես Վասենկան, նստած խոտի վրա (հակառակի պես՝ նստիք չկար տարանտասի մեջ), իր շոտլանդական թասակը գլխին, ոստոստելով կառքի ցնցումներից, անցավ-գնաց ծառուղով։

«Ա՞յդ ինչ բան է», մտածեց Լևինը, երբ ծառան, դուրս վազելով տանից, կանգնեցրեց տարանտասը։ Դա մեքենավարն էր, որի մասին բոլորովին մոռացել էր Լևինը։ Մեքենավարը գլուխ տալով, ինչ-որ բան էր ասում Վեսլովսկուն. հետո մտավ տարանտասը, և նրանք միասին գնացին։

Ստեպան Արկադևիչը և իշխանուհին վրդովված էին Լևինի վարմունքից։ Նա ինքն էլ իրեն զգում էր ո՛չ միայն վերին աստիճանի ridicule, այլև գլխովին մեղավոր ու խայտառակված։ Բայց մտաբերելով, թե ինչպե՛ս տանջվեցին ինքն ու իր կինը, նա հարց տալով իրեն, արդյոք ինչպե՞ս կվարվեր ինքը մյուս անգամ, պատասխանում էր իրեն, թե՝ ճիշտ այսպես։

Չնայած այս բոլորին, այդ օրվա վերջում ամենքը, բացառությամբ իշխանուհու, որն այդ վարմունքը չներեց Լևինին, զարձան արտասովոր աշխույժ և ուրախ, ինչպես երեխաները՝ պատժից կամ մեծերը՝ պաշտոնական ծանր ընդունելությունից հետո։ Այնպես որ, երեկոյան, իշխանուհու բացակայությամբ, Վասենկայի վռնդման մասին արդեն խոսում էին որպես վաղուցվա դեպքի մասին։ Եվ Դոլլին, որը հորից ժառանգել էր ծիծաղելի պատմելու ընդունակություն, ստիպում էր Վարենկային ծիծաղից թուլանալ, երբ երրորդ ու չորրորդ անգամ միշտ նոր զավեշտական հավելումներով պատմում էր, թե ինչպե՛ս ինքը պատրաստվում էր նոր ժապավեններ կապել հյուրի համար և արդեն գալիս էր ընդունարան, երբ հանկարծ լսեց ծանր կառքի դղրդյունը։ Եվ ո՞վ է այդ կառքի մեջ,— ինքը Վասենկան՝ շոտլանդական թասակով, ռոմանսներով, սոնապաներով նստած խոտի վրա։

[1] Կարելի է լինել խանդոտ, բայց այդ աստիճան՝ արդեն չափազանց ծիծաղելի է։

— Գոնե հրամայեիր, որ կառեթը լծեին։ Ո՛չ, և հետո լսում եմ. «կացե՛ք»։ Ես էլ կարծում եմ, թե մեղքացան։ Նայում եմ, նրա կողքին նստեցրին հաստ գերմանացուն ու տարան... Եվ իմ ժապավենները զուր կորան...

XVI

Դարյա Ալեքսանդրովնան կատարեց իր մտադրությունը և գնաց Աննայի մոտ։ Նա շատ ցավում էր, որ պիտի վշտացնի քրոջը և տհաճ բան անի նրա ամուսնու համար. նա հասկանում էր, թե ինչպե՛ս իրավացի էին Լևինները, որ չէին ցանկանում ո՛չ մի հարաբերություն ունենալ Վռոնսկու հետ. բայց նա իր պարտքն էր համարում լինել Աննայի մոտ և ցույց տալ նրան, որ իր զգացումները չեն կարող փոխվել, չնայած նրա դրության փոփոխվելուն։

Որպեսզի այս ուղեգնացության մեջ կախում չունենա Լևիններից, Դարյա Ալեքսանդրովնան մարդ ուղարկեց գյուղ՝ ձիեր վարձելու. բայց Լևինը, իմանալով այդ, եկավ նրա մոտ հանդիմանությամբ։

— Ինչո՞ւ ես կարծում, որ ինձ համար անախորժ է քո ուղեգնացությունը։ Եթե դա նույնիսկ տհաճ լիներ ինձ, ավելի ևս հաճելի չէ, որ դու չես վերցնում ի՛մ ձիերը,— ասում էր նա։— Դու ո՛չ մի անգամ չասացիր ինձ, որ վճռականապես գնում ես։ Իսկ վարձել գյուղում, նախ՝ անախորժ է ինձ, իսկ, որ գլխավորն է՝ նրանք խոսք կտան, բայց չեն հասցնի։ Ես ձիեր ունեմ։ Եվ եթե դու չես ուզում վշտացնել ինձ, ուրեմն վերցրու իմոնքը։

Դարյա Ալեքսանդրովնան պետք է համաձայներ, և նշանակված օրը Լևինը քենու համար պատրաստեց չորս ձի ու փոխձիերի մի կաճառ, կազմած բանող և հեծկան ձիերից, շատ տգեղ, բայց մի օրում Դարյա Ալեքսանդրովնային տանելու կարող։ Այժմ, երբ ձիերը պետք էին՝ և՛ տուն վերադարձող իշխանուհու, և՛ մանկաբարձուհու համար, այդ դժվար էր Լևինի համար, բայց հյուրասիրության պարտքի գիտակցությամբ նա չէր կարող թույլ տալ Դարյա Ալեքսանդրովնային՝ ձիեր վարձել իր տանից և, բացի դրանից, գիտեր, որ Դարյա Ալեքսանդրովնայի համար շատ կարևոր էր քսան ռուբլին, որը

ուզում էին նրանից ուղեգնացության համար. իսկ նյութական շատ վատ դրության մեջ գտնվող Դարյա Ալեքսանդրովնայի դրամական գործերը Լևինն զգում էր այնպես, ինչպես իր սեփական գործերը։

Դարյա Ալեքսանդրովնան, Լևինի խորհրդով, դուրս եկավ լուսաբացից առաջ։ Ճանապարհը լավ էր, կառքը հանգիստ, ձիերը վազում էին ուրախ, և նստիքին, բացի կառապանից, նստել էր գրասենյակի ծառայողը, սպասավորի փոխարեն, որին Լևինն ուղարկեց ապահովության համար։ Դարյա Ալեքսանդրովնան նիրհեց ու արթնացավ միայն այն պահին, երբ արդեն մոտենում էին իշևանին, որտեղ հարկավոր էր փոխել ձիերը։

Թեյ խմելով այն հարուստ մուժիկ-պանդոկապետի մոտ, որի տանը կանգ առավ Լևինը Սվիյաժսկու կայմածքը գնալիս, և զրուցելով կնիկների հետ՝ երեխաների մասին ու ծերունու հետ՝ Վրոնսկու մասին, որին ծերուկը շատ գովում էր, Դարյա Ալեքսանդրովնան ժամը տասին շարունակեց ճանապարհը։ Տանը, տարված երեխաների հոգսով, նա ժամանակ չէր ունենում մտածելու։ Դրա փոխարեն այժմ արդեն, այս չորսժամյա ուղեմասում, հանկարծ խռնվեցին նրա գլխում առաջներում կասեցված բոլոր մտքերը, և նա վերակշռադատեց իր ամբողջ կյանքն այնպես, ինչպես առաջներում երբեք, ու՝ ամենատարբեր կողմերից։ Նրա համար տարօրինակ էին իր մտքերը։ Սկզբում նա մտածում էր երեխաների մասին, որոնց համար նա այնուամենայնիվ անհանգիստ էր, թեև իշխանուհին, իսկ, որ գլխավորն է՝ Կիտին (նա նրա վրա ավելի հույս ուներ) խոստացել էր հսկել նրանց։ Բայց նա, այնուամենայնիվ, անհանգստանում էր։ «Չլինի թե Մաշան նորից սկսի շարությունանել, չլինի թե ձին խփի Գրիշային, և հետո չլինի՞ թե Լիլիի ստամոքսն ավելի ևս խանգարվի»։ Բայց հետո ներկայիս հարցերին սկսեցին փոխարինել մոտիկ ապագայի հարցերը։ Նա սկսեց մտածել այն մասին, որ հարկավոր է Մոսկվայում այս ձմեռ վերցնել նոր բնակարան, փոխել ընդունարանի կահը և նոր մուշտակ կարել մեծ աղջկա համար։ Հետո սկսեցին պատկերանալ նրան ավելի հեռավոր ապագայի հարցերը. ինչպե՞ս պետք է ինքը մարդ դարձնի երեխաներին։ «Աղջիկներին դեռ ոչի՞նչ,— մտածում էր նա,— բայց տղանե՞րը»։

«Լա՞վ, ես պարապում եմ Գրիշայի հետ այժմ, բայց չէ՞ որ դա միայն շնորհիվ այն բանի, որ ես ինքս այժմ ազատ եմ, դեռ երեխա չեմ բերում։ Հասկանալի է, որ Ստիվայի վրա հույս դնել չի կարելի։ Եվ ես բարի մարդկանց օգնությամբ մարդ կդարձնեմ նրանց, բայց եթե նորից ծննդաբերությո՞ւն»... Եվ նա հիշեց այն միտքը, թե ինչպես անիրավացի է ասված, որ անեծք է դրված կնոջ վրա, որպեսզի նա երկունքի ցավով զավակ ծնի։ «Ծնելը ոչինչ, բայց, կրելը՝ ահա թե ի՞նչն է տանջալից», մտածեց նա, պատկերացնելով իր վերջին հղիությունը և այդ վերջին երեխայի մահը։ Ու նա մտաբերեց պանդոկում դեռատի կնոջ հետ ունեցած իր խոսակցությունը։ Այն հարցին, արդյոք երեխաներ ունի՞ նա, գեղեցիկ, ջահել կինն ուրախ պատասխանեց.

— Կար մի աղջիկ, բայց աստված տարավ. պահքին թաղեցի։

— Շա՞տ ես ցավում նրա համար,— հարցրեց Դարյա Ալեքսանդրովնան։

— Ի՞նչ կա ցավելու։ Առանց էդ էլ ծերունին թոռներ շատ ունի։ Ավելորդ գլխացավանք։ Ո՛չ կարող ես ինքդ աշխատել, ո՛չ էլ ուրիշ բան։ Կապ ու կապանք է միայն։

Դարյա Ալեքսանդրովնային զզվելի թվաց այդ պատասխանը, չնայած մանկահաս կնոջ բարեսիրտ սիրունատեսությանը, բայց այժմ նա ակամա հիշեց այդ վերջին խոսքերը։ Այդ ցինիկ խոսքերի մեջ նաև որոշ չափով ճշմարտություն կար։

«Եվ առհասարակ,— մտածում էր Դարյա Ալեքսանդրովնան, ետ նայելով իր ամբողջ կյանքի վրա՝ ամուսնության այս տասնհինգ տարվա ընթացքում,— հղիություն, սիրտ խառնել, ուղեղի բթություն, անտարբերություն ամեն բանի հանդեպ և, որ գլխավորն է՝ այլանդակություն։ Կիտին, ջահել, լավիկ Կիտին, նա ևս ինչպե՞ս տգեղացել է, իսկ ես հղի ժամանակս դառնում եմ այլանդակ, գիտեմ ես։ Ծննդաբերություն, տառապանքներ, այլանդակ տառապանքներ, այդ վերջին բոպեն... հետո կերակրելը, այդ անքուն գիշերները, այդ սոսկալի ցավերը»...

Դարյա Ալեքսանդրովնան ցնցվեց ճաքճքված պտուկների ցավի մասին հիշողությունից միայն, ցավ, որ նա զգում էր համարյա յուրաքանչյուր երեխայի հետ։ «Հետո երեխաների

հիվանդությունները, այդ վախը մշտական. հետո դաստիարակությունը, անպիտան հակումները (նա հիշեց փոքրիկ Մաշայի հանցագործությունը մորենու թփուտում), ուսումը, լատիներենը՝ այս բոլորն այնպես անհասկանալի ու դժվար է։ Եվ այս բոլորից բացի, նույն այդ երեխաների մահը»։ Ու նորից նրա երևակայության մեջ ծագեց նրա մայրական սիրտը միշտ ճնշող՝ դաժան հիշողությունը վերջին, ծծկեր տղայի՝ կրուպից մեռած մանչուկի մահվան մասին, նրա թաղումը. առհասարակ անտարբերությունն այդ վարդագույն փոքրիկ դագաղի հանդեպ և իր, սիրտ քրքրող մենավոր ցավը՝ գունատ ճակատի հանդեպ՝ խուճուճ քունքերով, բաց ու զարմացած բերանի հանդեպ, որ երևում էր դագաղի միջից այն բոպեին, երբ նրան ծածկում էին վարդագույն կափարիչով, վրան տրեզե խաչ։

«Եվ ինչի՞ համար այս բոլորը։ Ի՞նչ դուրս կգա այս բոլորից։ Այն, որ ես, չունենալով ո՛չ մի բոպե հանգիստ, մերթ հղի, մերթ կերակրող, միշտ բարկացած, քրթմնջացող, ինքս տանջված և ուրիշներին տանջող, ամուսնուս համար զզվելի, կապրեմ իմ կյանքը, և կմեծանան դժբախտ, վատ դաստիարակված ու աղքատ երեխաներ։ Եվ այժմ, եթե մենք ամառս չլինենք Լևինների մոտ, չգիտեմ, թե ինչպե՞ս կապրեինք։ Իհարկե, Կոստյան ու Կիտին այնքան փափկանկատ են, որ մեզ համար աննկատելի է. բայց դա չի կարող այդպես շարունակվել։ Երեխաներ կունենան նրանք, չեն կարող այլևս օգնել մեզ. նրանք ա՛յժմ էլ նեղված են։ Մի՞թե պիտի օգնի հայրիկը, որը համարյա ոչինչ չի թողել իրեն։ Այնպես որ, ես ինքս չեմ կարող մարդ դարձնել երեխաներին. դա հնարավոր է ուրիշների օգնությամբ, նվաստացումով։ Եթե ենթադրենք ամենաբախտավոր ելքը. երեխաներն այլևս չեն մեռնի, և ես մի կերպ կդաստիարակեմ նրանց։ Ամենալավագույն դեպքում միայն սրիկաներ չեն լինի։ Ահա այն բոլորը, ինչ կարող եմ ես ցանկանալ։ Եվ այս բոլորի համար այդքան տանջանք, աշխատանք... Կործանված է ամբողջ կյանքս»։ Նա նորից հիշեց, թե ի՛նչ ասաց մանկահաս կինը, և նորից դրա հիշողությունը զարշանք պատճառեց նրան. բայց նա չէր կարող չհամաձայնել, որ այդ խոսքերի մեջ կար որոշ չափով կոպիտ ճշմարտություն։

— Հեռո՞ւ է դեռ, Միխայլա,— հարցրեց Դարյա Ալեքսանդրովնան գրասենյակի ծառայողին, որպեսզի ցրի իրեն վախեցնող մտքերը։

— Ասում են, այս գյուղից յոթ վերստ։

Կառքը գյուղի փողոցով դուրս էր գալիս դեպի կամուրջը։ Կամրջով անցնում էին, իրար հետ զնգուն և ուրախ խոսակցելով, մի խումբ ուրախ կնիկներ, ուսերին ոլորած խրձակապեր։ Կնիկները կանգնեցին կամրջի վրա, հետաքրքրությամբ դիտելով կառքը։ Դարյա Ալեքսանդրովնային դարձած բոլոր դեմքերը թվում էին նրան առողջ, ուրախ, կյանքի խնդությամբ նրան զրգռող։ «Ամենքն ապրում են, ամենքը հրճվում են կյանքով,— շարունակում էր մտածել Դարյա Ալեքսանդրովնան, անցնելով կնիկներից, դուրս գալով սարը և վարգի միջոցին նորից հաճելիորեն օրորվելով հին կառքի փափուկ զսպանակների վրա,— իսկ ես, բաց թողնված, ինչպես բանտից, մի աշխարհից, որն սպանում է ինձ հոգսերով, ա՛յժմ միայն ուշքի եկա մի վայրկյան։ Ամենքն ապրում են. և՛ այս կնիկները, և՛ քույր Նատալին, և՛ Վարենկան, և՛ Աննան, որի մոտ եմ գնում, չեմ ապրում միայն ես»։

«Իսկ նրանք հարձակվում են Աննայի վրա։ Ինչի համար։ է՛հ, ի՛նչ, մի՞թե ես ավելի լավ եմ։ Ես, համենայն դեպս, ունեմ ամուսին, որին սիրում եմ, սիրում եմ ո՛չ այնպես, ինչպես կուզենայի, բայց սիրում եմ նրան, իսկ Աննան չէր սիրում իր ամուսնուն։ Ուրեմն, ի՞նչ բանում է նա մեղավոր։ Նա ուզում է ապրել։ Աստված է դրել այդ ձգտումը մեր հոգու մեջ։ Շատ կարող է պատահել, որ ե՛ս էլ անեի նույնը։ Եվ մինչև այսօր ես չգիտեմ, արդյոք լա՞վ արի, որ լսեցի նրան այն սոսկալի ժամանակ, երբ նա եկավ ինձ մոտ Մոսկվա։ Ես այն ժամանակ պետք է թողնեի ամուսնուս և սկսեի նոր կյանք։ Ես կարող էի սիրել և սիրվել՝ ինչպես պետք է։ Իսկ հիմա մի՞թե ավելի լավ է։ Ես չեմ հարգում նրան։ Նա հարկավո՞ր է ինձ,— մտածում էր նա ամուսնու մասին,— և ես հանդուրժում եմ նրան։ Մի՞թե այդ ավելի լավ է։ Այն ժամանակ ես դեռ կարող էի դուր գալ. ինձ մնում էր իմ գեղեցկությունը»,— շարունակում էր մտածել Դարյա Ալեքսանդրովնան, և նա ուզեց նայել հայելուն։ Պայուսակի մեջ նա ուներ ճանապարհային փոքրիկ հայելի և ուզում էր հանել

այն.՝ բայց նայելով կառապանի և գրասենյակի օրորվող ծառայողի մեջքին, զգաց, որ կամաչի, եթե նրանցից մեկը ետ նայի, ու չհանեց հայելին։

Սակայն առանց հայելու մեջ նայելու ևս, նա կարծում էր, որ այժմ էլ դեռ ուշ չէ, և հիշեց Սերգեյ Իվանովիչին, որն առանձնապես սիրալիր էր դեպի ինքը, Ստիվայի բարեկամին՝ բարի Տուրովցինին, որն իր հետ միասին խնամում էր իր երեխաներին քութեշի ժամանակ և սիրահարվել էր իրեն։ Կար նաև բոլորովին ջահել մի երիտասարդ, որն այն կարծիքին էր, ինչպես կատակով ասում էր իրեն ամուսինը, թե Դոլլին բոլոր քույրերից ավելի գեղեցիկ է։ Ու Դարյա Ալեքսանդրովնային պատկերացան ամենաբուռն և անհնարին սիրավեպեր։ «Աննան շատ լավ արավ, և ես ո՛չ մի կերպ չեմ հանդիմանի նրան։ Նա բախտավոր է, բախտավոր է դարձնում մի ուրիշ մարդու և ճնշված չէ ինձ նման, այլ, հավանորեն, ինչպես միշտ, թարմ է, խելոք, ամեն ինչի հանդեպ բաց», մտածում էր Դարյա Ալեքսանդրովնան, ու խորամանկ մի ժպիտ կնճռոտում էր նրա շուրթերը, մանավանդ այն պատճառով, որ մտածելով Աննայի սիրավեպի մասին, դրա հետ զուգահեռաբար Դարյա Ալեքսանդրովնան պատկերացնում էր իր համարյա այդպիսի սիրավեպը երևակայական հավաքական այն տղամարդու հետ, որը սիրահարված էր իրեն։ Նա նույնպես, ինչպես Աննան, ամեն բան խոստովանում էր ամուսնուն։ Ստեպան Արկադևիչի և՛ զարմանքը, և՛ շփոթությունն այդ լուրը լսելիս՝ ստիպեց նրան ժպտալ։

Այսպիսի տենչերով տարված, նա մոտեցավ մեծ ճանապարհի շրջադարձին, որը տանում էր դեպի Վոզդվիժենսկոյե։

XVII

Կառապանը կանգնեցրեց քառաձին ու նայեց դեպի աջ՝ հաճարի արտին, որտեղ սայլի մոտ նստել էին մուժիկները։ Գրասենյակի ծառայողն ուզում էր ցած թռչել, բայց հետո միտքը փոխեց և հրամայական տոնով բղավեց մուժիկի վրա, կանչելով նրան իր մոտ։ Հովիկը, որ փչում էր գնալու միջոցին, դադարեց, երբ կանգ առան։ Բոռեխները պատուտեցին քրտնած ձիերին, որոնք բարկացած՝ պոչով քշում էին նրանց։ Դադարեց գերանդին ծեծելով սրելու մետաղային զնգոցը, որ լսվում էր սայլի մոտից։ Մուժիկներից մեկը վեր կացավ և մոտեցավ կառքին։

— Տես է՞, չորացավ,— բարկացած բղավեց գրասենյակի ծառայողը բոկոտն մուժիկի վրա, որը դանդաղ քայլում էր շրանուկ, չոր ճանապարհի գուղձերի միջով։— Դե՜հ, արի՛, է՞։

Գանգրահեր ծերունին, մազերին կապած կեղևի քերծեն, քրտինքից սևացած կուզիկ մեջքով, արագացնելով քայլերը, մոտեցավ կառքին և արևառ ձեռքով բռնեց կառքի թևից։

— Վոզդվիժենսկոյե, պարոնի տո՞ւնը, կոմսի մո՞տ,— կրկնեց նա.—ա՜յ. հենց որ դարիվերը կանցնես։ Կծռվես ձախ թևի վրա։ Ուղիղ շոսեյով, ու դեմդ է։ Էնտեղ ո՞ւմ եք ուզում։ Իրե՞ն, կոմսի՞ն։

— Գիտե՞ս, տա՞նն են նրանք, սիրելիս,—անորոշ ասաց Դարյա Ալեքսանդրովնան, չիմանալով նույնիսկ, թե ինչպե՞ս հարցնի մուժիկից Աննայի մասին։

— Պետք է որ տանը լինեն,—ասաց մուժիկը, բոբիկ ոտները բարձրացնելով ու դնելով, թողնելով փոշու վրա ոտի թաթի պարզ հետքը՝ հինգ մատներով։—Պետք է որ տանը լինեն,— կրկնեց նա, ըստ երևույթին, կամենալով խոսքի բռնվել։—Երեկ էլի ղոնաղներ եկան։ Ղոնաղներ՝ ինչքա՜ն ասես... Ի՞նչ ես ուզում,—շուռ եկավ նա դեպի այն տղան, որն ինչ-որ բան էր բղավում սայլի մոտից։—Հա՜։ Քիչ առաջ ամենքը, ձի հեծած, եկան անցան՝ մտիկ տալու հնձելու մաշինը։ Հիմիկ պետք է որ տանը լինեն։ Իսկ դուք ումոնցի՞ց եք։

— Հեռու տեղից,—ասաց կառապանը, բարձրանալով նստիքին։— Ասել կուզի. հեռու չէ՞։

— Ասում եմ քեզ, հենց էստեղ է։ Հենց որ դուրս գաս...— ասում էր նա, ձեռքով մնտղելով կառքի թևը։

Մոտեցավ նույնպես ջահել, հաղթանդամ, ջլապինդ տղան։

— Քաղի համար հո աշխատանք չկա՞,—հարցրեց նա։

— Չգիտեմ, սիրելիս։

— Էսպես, ուրեմն, կծռվես ձախ թևի վրա ու կգնաս, դեմ կառնես տանը,—ասաց մուժիկը, ըստ երևույթին, դժկամությամբ բաց թողնելով ուղորդներին ու կամենալով զրուցել։

Կառապանը շարժեց ձիերը, բայց հենց որ նրանք շուռ տվին, մուժիկը բղավեց.—կա՜ց, է՞յ, բարեկամ, կա՜ց,— բղավում էին երկու ձայներ։ Կառապանը կանգ առավ։

— Գալիս են իրենք։ Հրե՜ն նրանք,— բղավեց մուժիկը։— Տե՜ս, թափով գալիս են,— ասաց նա, նշելով չորս հեծյալներին և շարաբանի մեջ նստած երկուսին, որոնք գալիս էին ճանապարհով։

Ձիավորներից մեկը Վրոնսկին էր ժոկեի հետ, իսկ մյուս երկուսը՝ Վեսլովսկին և Աննան. շարաբանի մեջ իշխանազնուհի Վարվառան էր Սվիյաժսկու հետ։ Նրանք դուրս էին եկել զբոսնելու և նայելու նոր բերած հնձի մեքենաների գործողությունը։

Երբ կառքը կանգնեց, ձիավորները գնացին քայլով։ Առջևից գնում էր Աննան՝ Վեսլովսկու կողքին։ Աննան գնում էր հանգիստ քայլով, նստած անգլիական բարձրահասակ ամրակազմ կոբ ձին, խուզած բաշով ու կարճ պոչով։ Նրա գեղեցիկ գլուխը, բարձր գլխարկի տակից դուրս պրծած սև մազերով, նրա լիքը ուսերը, բարակ իրանը՝ սև ամազոնկայի մեջ և ամբողջ նստվածքը՝ հանգիստ, նազելի, զարմացրին Դոլլիին։

Առաջին րոպեին նրան թվաց անպարկեշտ բան, որ Աննան ձիավարում է հեծած։ Դարյա Ալեքսանդրովնայի կարծիքով, ձիավարության մասին ունեցած պատկերացումին միանում էր երիտասարդական թեթև կոկետության պատկերացումը, կոկետություն, որը, նրա կարծիքով, չէր սազում Աննայի դիրքին. բայց, երբ նա դիտեց նրան մոտիկից, անմիջապես հաշտվեց նրա ձի նստելու հետ։ Չնայած վայելչագեղությանը, ամեն ինչ այնպես պարզ էր, հանգիստ ու արժանապատվությամբ լի՝ Աննայի թե՛ կեցվածքի, թե զգեստի, թե շարժումների մեջ, որ ոչինչ չէր կարող լինել դրանից ավելի բնական։

Աննայի կողքից, հեծելազորային տաքացած գորշ ձիու վրա, հաստ ոտները ձգելով դեպի առաջ և ակնհայտորեն հրճվելով ինքն իրենով, գալիս էր Վասենկա Վեսլովսկին՝ շոտլանդական թասակով, փողփողուն ժապավեններով, և Դարյա Ալեքսանդրովնան չկարողացավ զսպել իր ուրախ ժպիտը, ճանաչելով նրան։ Նրանց ետևից գալիս էր Վրոնսկին։ Նրա տակ կար ազնվացեղ մուգ-շագանակագույն նժույգ, հայտնապես տաքացած քառատրոփ արշավի ժամանակ։ Պահելով ձին, նա աշխատում էր երասանով։

Նրա ետևից գալիս էր փոքրիկ մի մարդ՝ ժոկեի զգեստով։

Սվիյաժսկին իշխանազնուհու հետ նստած նոր շարաբանի մեջ, որին լծած էր մի խոշոր վարգուն ձի, հետևում էր ձիավորներին։

Աննայի դեմքը հանկարծ փայլեց խնդագին ժպիտով այն րոպեին, երբ նա հանձին փոքրիկ ֆիգուրի, որ կուչ էր եկել հին կառքի անկյունում, ճանաչեց Դոլլիին։ Նա ճչաց, ցնցվեց թամբի մեջ ու շարժեց ձին սրարշավ։ Մոտ գալով կառքին, նա առանց ուրիշի օգնության ցած թռավ և ամազոնկայի փեշը բռնած, վազեց Դոլլիին ընդառաջ։

— Ես այդպես էլ կարծում էի և չէի համարձակվում կարծել։ Ա՜յ ուրախություն։ Դու չես կարող երևակայել իմ ուրախությունը,— ասում էր նա, մերթ երեսը սեղմելով Դոլլիին ու համբուրելով նրան, մերթ ետ քաշվելով և ժպտուն դիտելով նրան։— Ա՜յ խնդություն, Ալեքսեյ,— ասաց նա, ետ նայելով Վրոնսկուն, որը ձիուց իջել ու մոտենում էր նրան։

Վրոնսկին, հանելով գորշ բարձր գլխարկը, մոտեցավ Դոլլիին։

— Դուք չեք հավատա, թե մենք որքա՜ն ուրախ ենք ձեր գալու համար,— ասաց Վրոնսկին, առանձին նշանակություն տալով իր արտասանած խոսքերին ու ժպիտով բացելով իր ամուր, սպիտակ ատամները։

Վասենկա Վեսլովսկին, առանց իջնելու ձիուց, հանեց իր թասակը և ողջունեց հյուրին, ցնծագին թափահարելով ժապավենները գլխի վրա։

— Դա իշխանազնուհի Վարվառան է,— պատասխանեց Աննան Դոլլիի հարցական հայացքին, երբ մոտեցավ շարաբանը։

— Ա՜,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, և նրա դեմքն ակամա արտահայտեց տհաճություն։

Իշխանազնուհի Վարվառան Դոլլիի ամուսնու մորաքույրն էր, որին նա ճանաչում էր վաղուց ու չէր հարգում։ Նա գիտեր, որ իշխանազնուհի Վարվառան իր ամբողջ կյանքն անց էր կացրել հարուստ ազգականների մոտ, ապրելով նրանց հաշվին, բայց այն հանգամանքը, որ այժմ նա ապրում էր Վրոնսկու՝ օտար մարդու մոտ, վիրավորում էր Դոլլիին, որպես իր ամուսնու հարազատի։ Աննան նկատեց Դոլլիի դեմքի ար-

տահայտությունը և շփոթվեց, կարմրեց, ձեռքից բաց թողեց ամաղոնկան ու սայթաքեց նրա փեշերի մեջ։

Դարյա Ալեքսանդրովնան մոտեցավ կանգ առած շարաբանին և սառը բարևեց իշխանազնուհի Վարվառային։ Սվիյաժսկին նույնպես ծանոթ էր։ Նա հարցրեց, թե ինչպե՞ս է ապրում իր տարօրինակ բարեկամը՝ իր ջահել կնոջ հետ, և թռուցիկ հայացքով դիտելով ոչ համազույգ ձիերը ու կարկատած թեվերով կառքը, առաջարկեց տիկիններին՝ գնալ շարաբանով։

— Իսկ ես կգնամ այս վեզիկուլով,— ասաց նա։— Ջին հանգիստ ձի է, և իշխանազնուհին հիանալի ձիավարում է։

— Ո՛չ, մնացեք այնպես, ինչպես կայիք,— ասաց մոտեկած Աննան,—իսկ մենք կգնանք կառքով,—և թևանցուկ բռնած Դոլլիին, տարավ նրան։

Դարյա Ալեքսանդրովնայի աչքերը շլացան, տեսնելով այդ շքեղ, մինչ այդ իրեն անհայտ կառքը, այդ հիանալի ձիերը, իրեն շրջապատող այդ շքեղ պայծառ դեմքերը։ Բայց ամենից ավելի նրան զարմացրեց այն փոփոխությունը, որ տեղի էր ունեցել իրեն ծանոթ ու սիրելի Աննայի մեջ։ Մի այլ կին ավելի պակաս ուշադիր, որ չէր ճանաչում Աննային առաջ և մանավանդ չէր ունեցել այն մտքերը, որոնցով համակված էր Դարյա Ալեքսանդրովնան ճանապարհին, առանձնապես ոչինչ չէր նկատի Աննայի մեջ։ Բայց այժմ Դոլլին ապշած էր այն ժամանակավոր գեղեցկությունից, որ կանանց մեջ նկատվում է միայն սիրո բոպեներին և որը նա տեսավ այժմ Աննայի դեմքին։ Ամեն ինչ նրա դեմքին՝ կզակի և այտերի փոսիկների որոշակիությունը, շուրթերի կազմը, ժպիտը, որը կարծես թռչում էր երեսի շուրջը, աչքերի փայլը, շարժումների արագությունն ու նազելիությունը, ձայնի լիահնչունությունը, նույնիսկ այն վարվելաձևը, որով նա բարկացած-շոյանքով պատասխանեց Վեսլովսկուն, որը թույլտվություն խնդրեց նրանից՝ նստելու նրա կողը, որպեսզի սովորեցնի նրան՝ քառատրոփ արշավել աջ ոտից,—բոլորը, բոլորն առանձնապես գրավիչ էր. ու թվում էր, ինքն՝ Աննան էլ գիտեր այդ և ուրախանում էր դրա համար։

Երբ երկու տիկինները նստեցին կառքի մեջ, երկուսին էլ հանկարծ համակեց մի տեսակ շփոթություն։ Աննան շփոթվեց այն ուշադիր-հարցական հայացքից, որով Դոլլին նայում

էր նրան. Դոլլին՝ այն բանից, որ վեզիկուլի մասին Սվիյաժսկու ասած խոսքերից հետո նա ակամա ճնշվեց, ամաչեց այդ հին, կեղտոտ կառքի համար, որի մեջ նստեց Աննան նրա հետ։ Կառապան Ֆիլիպը և գրասենյակի ծառայողն ունեին նույն զգացումը։ Գրասենյակի ծառայողն իր շփոթությունը ծածկելու համար դեսուդեն էր ընկնում՝ նստեցնելով տիկիններին, իսկ կառապան Ֆիլիպը մոայլվեց և պատրաստվում էր այսուհետև չենթարկվել այդ արտաքին գերազանցությանը։ Նա հեգնանքով ժպտաց, նայելով սևաթույր, վարգուն ձիուն և իր մտքում արդեն վճռեց, որ շարաբանի այդ սևաթույր ձին լավ է միայն թեթև զբոսանքի համար ու շոգին քառասուն վերստ չի գնա մի շնչում։

Սայլի մոտի բոլոր մուժիկները բարձրացան իրենց տեղերից և ուրախ նայում էին հյուրի ընդունելությանը, անելով իրենց դիտողությունները։

— Ուրախ են, վաղուց իրար չեն տեսել,— ասաց գանգրահեր ծերունին, մազերը քերծենով կապած։

— Ի՞նչ բան կլիներ, է՞, քեռի Գերասիմ, թե որ սև ձիով խրձեր կրեինք, ձեռա՞ց կպրծնեինք։

— Մտիկ տուր։ Էդ փոխանովը կի՞ն է,— ասաց նրանցից մեկը, նշելով Վասենկա Վեսլովսկուն, որ նստում էր կանացի թամբին։

— Չէ՞, տղամարդ է։ Տե՞ս, թե ո՞նց զոռբա ցած թռավ։

— Հը՞, տղերք, ոնց տեսնում եմ, չենք քնելու։

— Էլ ի՞նչ քուն հիմիկ,— ասաց ծերունին, աչքի տակից նայելով արևին։—Տե՞ս, կեսօրն անցավ։ Վերցրեք գերանդու փոցխերը, սկսեցեք։

XVIII

Աննան նայում էր Դոլլիի նիհար, տանջված, կնճիռների մեջ փոշի նստած դեմքին և ուզում էր ասել այն, ինչ մտածում էր, այսինքն՝ որ Դոլլին նիհարել է, բայց հիշելով, որ ինքը լավացել է և որ Դոլլիի հայացքն ասաց նրան այդ բանը, հառաչեց ու խոսեց ի՛ր մասին։

— Դու նայում ես ինձ,—ասաց նա,—և մտածում ես կարո՞ղ եմ արդյոք ես բախտավոր լինել իմ այս դրությամբ։ Է՞հ,

ի՞նչ արած։ Ամոթ է խոստովանելը, բայց ես... ես աններելի բախտավոր եմ։ Ինձ հետ պատահեց ինչ-որ կախարդական բան, ինչպես երազ, երբ կատարվում է ինչ-որ սարսափելի, ահաբեկիչ բան, և հանկարծ մարդ զարթնում ու զգում է, որ չկա այդ ամբողջ վախն ու երկյուղը։ Ես արթնացա։ Ես ապրեցի տանջալիցը, սոսկալին և այժմ արդեն վաղուց, մանավանդ սկսած այն օրից, երբ մենք այստեղ ենք, այնպես երջանի՞կ եմ,—ասաց նա, հարցական երկչոտ ժպիտով նայելով Դոլլիին։

— Որքա՞ն ուրախ եմ ես,—ժպտալով ասաց Դոլլին, ակամա ավելի սառը, քան ուզում էր։—Ես շատ ուրախ եմ քեզ համար։ Ինչո՞ւ դու չէիր գրում ինձ։

— Ինչո՞ւ... որովհետև չէի համարձակվում... դու մոռանում ես իմ վիճակը...

— Ի՞նձ. չէիր համարձակվո՞ւմ։ Եթե դու իմանայիր, թե ինչպես ես... Ես կարծում եմ...

Դարյա Ալեքսանդրովնան ուզում էր ասել այսօրվա առավոտյան իր մտքերը, բայց չգիտեր, թե ինչո՞ւ, դա այժմ նրան թվաց անտեղի։

— Սակայն, դրա մասին հետո։ Սա ի՞նչ է, այս բոլոր շենքերը,— հարցրեց նա, կամենալով փոխել խոսակցությունը և նշելով կարմիր ու կանաչ կտուրները, որոնք երևում էին ակացիայի և յասամանի կենդանի ցանկապատի միջից։ — Ասես՝ փոքրիկ քաղաք լինի։

Բայց Աննան չպատասխանեց նրան։

— Ո՛չ, ո՛չ։ Ի՞նչ է քո կարծիքն իմ դրության մասին, ի՞նչ ես մտածում դու, ի՞նչ,— հարցրեց նա։

— Ես կարծում եմ... — սկսեց Դարյա Ալեքսանդրովնան, սակայն այդ ժամանակ Վասենկա Վեսլովսկին, վարժեցնելով Կոբին քառատրոփ արշավի՝ աջ ոտից ծանր շրմփալով իր կարճլիկ ժակետով կանացի թամբի զամշին, սրարշավ անցավ նրանց մատից։ «Գնում է, Աննա Արկադիևնա», բղավեց նա։ Աննան նույնիսկ չնայեց նրան. բայց նորից Դարյա Ալեքսանդրովնային թվաց, որ կառքի մեջ անհարմար է սկսել այդ երկար խոսակցությունը, այդ պատճառով կրճատեց իր միտքը։

— Ես ոչինչ չեմ կարծում,— ասաց նա,— ես միշտ սիրում

էի քեզ, իսկ եթե սիրում ես, սիրում ես մարդուն ամբողջովին, ինչպես նա կա, և ո՛չ թե ինչպես ուզում ես, որ նա լինի։

Աննան աչքերը հեռացնելով իր բաբեկամի դեմքից և կկոցելով (դա նոր սովորություն էր, որը չգիտեր Դոլլին նրա շարժուձևի մեջ), մտաստուգվեց, կամենալով լիովին հասկանալ այդ խոսքերի իմաստը։ Եվ, հավանաբար, հասկանալով դրանք այնպես, ինչպես ուզում էր, նա նայեց Դոլլիին։

— Եթե դու մեղքեր ունես,— ասաց նա,— դրանք բոլորը կներվեին քո՝ ինձ մոտ գալու և այդ խոսքերի համար։

Ու Դոլլին տեսավ, որ նրա աչքերը լցվեցին արցունքներով։ Նա լուռ սեղմեց Աննայի ձեռքը։

— Ուրեմն ի՞նչ բան են այդ շենքերը։ Որքան շա՞տ են,— բոպեական լռությունից հետո կրկնեց նա իր հարցը։

— Դրանք ծառայողների տներն են, գործարանը, ձիանոցները,— պատասխանեց Աննան։ — Իսկ դա զբոսայգին է, սկսվում է այստեղից։ Այս բոլորը գցված էր երեսի վրա, լքված, բայց Ալեքսեյը բոլորը վերանորոգեց։ Նա շատ սիրում է այս կալվածքը և, ինչ ես բնավ չէի սպասում, սաստիկ հրապուրվում, տարվում է տնտեսությամբ։ Բայց նա այնպիսի՞ հարուստ խառնվածք է։ Ինչի ձեռք է զարկում, ամեն բան անում է հիանալի։ Նա ո՛չ միայն չի ձանձրանում, այլև եռանդով զբաղվում է։ Նա,— ինչպես գիտեմ նրան,— դարձել է հաշվով, շատ լավ տնտեսատեր, նա նույնիսկ ժլատ է տնտեսության մեջ։ Բայց միայն տնտեսությա՛ն մեջ։ Այնտեղ, ուր հարցը վերաբերում է տասնյակ հազարների, նա հաշիվ չի անում,— ասում էր Աննան այն խնդուն-խորամանկ ժպիտով, որով կանայք հաճախ խոսում են գաղտնիքի կամ սիրած տղամարդու մեջ իրենց հայտնաբերած հատկությունների մասին։— Ահա՛, տեսնո՞ւմ ես այս մեծ շենքը, դա նոր հիվանդանոցն է։ Ես կարծում եմ, նա կարժենա հարյուր հազարից ավելի։ Դա նրա dada-ն[1] է այժմ։ Եվ գիտե՞ս, թե ինչի՞ց դա սկսվեց։ Մուժիկները խնդրեցին նրանից՝ մարգագետինները զիջել իրենց ավելի էժան գնով, կարծեմ, իսկ նա մերժեց, և ես կշտամբեցի նրան ժլատության համար։ Իհարկե, ո՛չ այդ պատճառով, այլ բոլորը միասին վերցրած՝ նա սկսեց այդ հիվանդանոցը,

[1] Մրցանակի, մոլությամբ սիրած բան։

որպեսզի ապացուցի, հասկանո՞ւմ ես, որ ինքը ժլատ չէ։ Եթե կուզես c'est une petitesse[1], բայց դրա համար ես նրան ավելի եմ սիրում։ Իսկ հիմա դու կտեսնես տունը։ Դա պապենական տունն է և դրսից բնավ փոփոխված չէ։

— Ի՜նչ լավն է,— ասաց Դոլլին, ակամա զարմանքով նայելով սյունազարդ գեղեցիկ տանը, որ երևում էր այգու հին ծառերի բազմերանգ կանաչի միջից։

— Իրոք լավն է, չէ՞։ Եվ տանից, վերևից զարմանալի տեսարան է բացվում։

Նրանք մտան խնձապատ ու ծաղկանոցով զարդարուն բակը, որտեղ երկու բանվորներ փխրուն ծաղկաթմբի շուրջը շարում էին անտաշ ծակոտկեն քարեր, և կանգ առան ծածկոցով գլխավոր մուտքի մոտ։

— Իսկ նրանք եկել են արդեն,— ասաց Աննան, նայելով հեծկան ձիերին, որոնց հենց այդ րոպեին հեռացնում էին մուտքի նախասանդուղքից։ — Իրոք, որ լավն է այդ ձին, չէ՞։ Դա կոչվում է Կոբ։ Իմ սիրած ձին է։ Մո՛տ բեր այստեղ և շաքար տվեք։ Որտե՞ղ է կոմսը,— հարցրեց նա դուրս թռած երկու շքեղ սպասավորներին։ — Ա՜, ահա և նա,— ասաց Աննան, տեսնելով իրեն ընդառաջ եկող Վռոնսկուն՝ Վեսլովսկու հետ։

— Որտե՞ղ եք տեղավորելու իշխանուհուն,— հարցրեց Վռոնսկին ֆրանսերեն, դիմելով Աննային և առանց սպասելու պատասխանի, մի անգամ էլ ողջունեց Դարյա Ալեքսանդրովնային ու այժմ համբուրեց նրա ձեռքը։ — Ես կարծում եմ, պատշգամբով մեծ սենյակում։

— Օ՜, ո՜չ, դա հեռու է։ Ավելի լավ է, անկյունի սենյակում, մենք ավելի շուտ-շուտ կտեսնվենք։ Դե՜, գնանք,— ասաց Աննան, ծառայի բերած շաքարը տալով սիրած ձիուն։

— Et vous oubliez votre devoir[2],— ասաց նա Վեսլովսկուն, որը նույնպես դուրս էր եկել նախասանդուղք։

— Pardon, j'en ai tout plein les poches[3],— ժպտալով պատասխանեց Վասենկան, մատները մտցնելով ժիլետի գրպանը։

[1] Դա մանր բան է։

[2] Թող դուք մոռանում եք ձեր պարտականությունը։

[3] Ներեցեք, նրա լիքը գրպաններն ինձ մոտ են։

— Mais vous venez trop tard[1],— ասաց Աննան, թաշկինակով սրբելով ձեռքը, որը թրջեց ձին, շաքարը վերցնելիս։

Աննան դիմեց Դոլլիին. — Արդյոք երկա՞ր ժամանակով ես եկել։ Մի օրո՞վ։ Անկարելի է այդ։

— Ես խոստացել եմ այդպես, և հետո երեխաները....— ասաց Դոլլին, ճնշված զգալով իրեն թե՛ այն բանից, որ ինքը պիտի պայուսակը վերցնի կառքի միջից, և թե՝ իմանալով, որ իր դեմքը պետք է սաստիկ փոշոտված լինի։

— Ո՜չ, Դոլլի՛, հոգյա՛կս... Լա՛վ, կտեսնենք։ Գնա՛նք, գնա՛նք,— և Աննան տարավ Դոլլիին նրա սենյակը։

Այդ սենյակն այն փառահեղ սենյակը չէր, որ առաջարկում էր Վռոնսկին, այլ այնպիսի մի սենյակ էր, որի համար Աննան ասաց, որ Դոլլին ների իրեն։ Եվ այդ սենյակը, որի համար պետք էր ներող լինել, լեփ-լեցուն էր շքեղությամբ, որի մեջ երբեք չէր ապրել Դոլլին և որը հիշեցնում էր նրան լավագույն հյուրանոցներն արտասահմանում։

— Է՜, հոգյա՛կս, որքան երջանիկ եմ ես,— ասաց Աննան, մի րոպե նստելով Դոլլիի կողքին՝ իր ամազոնկայով։— Դե՜, պատմիր ինձ ձերոնց մասին։ Ստիվային ես տեսա հարևանցի։ Բայց նա չի կարող պատմել երեխաների մասին։ Ինչպե՞ս է քո սիրելի Տանյան։ Կարծեմ, արդեն մեծ աղջիկ է։

— Այո՛, շատ մեծ,— կարճ պատասխանեց Դարյա Ալեքսանդրովնան, ինքն էլ զարմանալով, որ այդպես սառն է պատասխանում իր երեխաների մասին։ — Մենք շատ լավ ենք ապրում Լևինների մոտ,— ավելացրեց նա։

— Ա՜յ, ահա, եթե ես իմանայի,— ասաց Աննան,— որ դու չես արհամարհում ինձ... Դուք ամենքդ կարող էիք գալ մեզ մոտ։ Չէ՞ որ Ստիվան Ալեքսեյի հին և շատ մոտիկ բարեկամն է,— ավելացրեց նա ու հանկարծ կարմրեց։

— Այո՛, բայց մենք այնպես լավ... — պատասխանեց Դոլլին, շփոթվելով։

— Սակայն ուրախությունիցս ես ասում եմ հիմար բաներ։ Մի բան, հոգյա՛կս, ինչքան ուրախ եմ ես քեզ տեսնելուս համար,— ասաց Աննան, նորից համբուրելով նրան։— Դու դեռ չասացիր ինձ, թե ինչպե՞ս և ի՞նչ ես մտածում իմ մասին, մինչդեռ ես ուզում եմ բոլորն իմանալ։ Բայց ես ուրախ եմ, որ դու ինձ

[1] Բայց դուք չափազանց ուշ եկաք։

կտեսնես այնպես, ինչպես ես կամ։ Ես չէի ուզենա, և դա գըլխավորն է, որպեսզի մարդիկ կարծեին, թե ես ուզում եմ ապացուցել որևէ բան։ Ես ոչինչ ապացուցել չեմ ուզում, ես ուզղակի ուզում եմ ապրել. ոչ ոքի, բացի ինձանից, չար բան չանել։ Այդ անելու իրավունք ունեմ ես, այնպես չէ՞։ Սակայն դա երկար խոսակցություն է, և մենք ամեն ինչի մասին կարգին կխոսենք։ Այժմ գնամ-հագնվեմ, իսկ քեզ մոտ կուղարկեմ աղախնին։

XIX

Մնալով մենակ, Դարյա Ալեքսանդրովնան տնտեսուհու աչքով նայեց իր սենյակը։ Այն բոլորը, ինչ տեսավ նա, մոտենալով տանը և անցնելով տան միջով ու հիմա իր սենյակում, թողնում էր նրա վրա պճնամոլության և առատության և եվրոպական այն նոր շքեղության տպավորությունը, որոնց մասին նա կարդացել էր միայն անգլիական վեպերում, բայց դեռ երբեք չէր տեսել Ռուսաստանում և այն էլ՝ գյուղում։ Ամեն ինչ նոր էր, սկսած ֆրանսիական նոր պաստառներից մինչև այն գորգը, որով պատած էր ամբողջ սենյակը։ Մահճակալը զսպանակներով էր և առանձնահատուկ գլխատակով ու կանաչ երեսով փոքրիկ բարձերով։ Մարմարե լվացարանը, տուալետը, թախտը, սեղանները, բուխարու վրա դրած բրոնզե ժամացույցը, դռան և լուսամուտների վարագույրները՝ այդ ամենը նոր էր ու թանկարժեք։

Պճնազարդ այն աղախինը, որ եկավ առաջարկելու իր ծառայությունը, Դոլլիից ավելի նորաձև սանրվածքով ու զգեստով, նույնպես նոր ու թանկարժեք էր, ինչպես և ամբողջ սենյակը։ Դարյա Ալեքսանդրովնայի համար հաճելի էին աղախնի քաղաքավարությունը, կոկիկությունն ու պատրաստակամությունը, բայց նա իրեն անհարմար էր զգում նրա հետ. Դոլլին ճընշվում էր նրանից, հակառակի պես, սխալմամբ վերցրած, իր կարկատած կոֆտայի համար։ Նա ամաչում էր հենց այն կարկատանների ու թելաքաղած տեղերի համար, որոնցով այնպես պարծենում էր տանը։ Տանը պարզ էր, որ վեց կոֆտայի համար պետք էր քսանչորս արշին նանսուք՝ արշինը 65 կոպեկով, որ անում էր ավելի քան 15 ռուբլի, բացի զարդակտորներից ու կոբելուց, և այդ 15 ռուբլին շահված էր։ Բայց աղախնի առաջ նա ոչ թե ամաչում էր, այլ անհարմար էր զգում իրեն։

Դարյա Ալեքսանդրովնան մեծ թեթևություն զգաց, երբ սենյակ մտավ իր վաղուցվա ծանոթ Աննուշկան։ Պճնազարդ աղախինը կանչվեց տանտիկնոջ մոտ, և Աննուշկան մնաց Դարյա Ալեքսանդրովնայի հետ։

Աննուշկան բացահայտորեն շատ ուրախ էր Դոլլիի գալու առթիվ և խոսում էր անլռելի։ Դոլլին նկատեց, որ նա ուզում է իր կարծիքը հայտնել իր տիկնոջ դրության և կոմսի կողմից դեպի Աննա Արկադևնան տածած սիրո ու անձնվիրության մասին, բայց Դոլլին եռանդով կանգնեցնում էր նրան, հենց որ նա սկսում էր խոսել դրա մասին։

— Ես մեծացել եմ Աննա Արկադևնայի հետ, նա ինձ համար թանկ է ամեն բանից։ Ի՞նչ արած, մենք չենք, որ պիտի դատենք։ Հիմա էդպես սիրել, երևի...

— Ուրեմն, խնդրեմ, տո՛ւր թող լվանան, եթե կարելի է,— ընդհատեց նրան Դարյա Ալեքսանդրովնան։

— Հրամմեր եք։ Մեզ մոտ փոքր լվացքի համար հատկապես նշանակված են երկու կանայք, իսկ ամբողջ սպիտակեղենը մեքենայով է։ Ամեն բանի հասնում է ինքը՝ կոմսը։ Էնպիսի ամուսին է, որ...

Դոլլին ուրախ էր, որ Աննան ներս եկավ և իր գալով վերջ դրեց Աննուշկայի շատախոսությանը։

Աննան հագել էր շատ հասարակ բատիստե զգեստ։ Դոլլին ուշադրությամբ դիտեց այդ պարզ զգեստը։ Նա գիտեր, թե ի՞նչ է նշանակում և որքա՞ն դրամով է ձեռք բերվում այդ պարզությունը։

— Հին ծանոթ է,— ասաց Աննան Աննուշկայի մասին։

Աննան այժմ արդեն չէր քաշվում։ Նա բոլորովին ազատ էր ու հանգիստ։ Դոլլին տեսնում էր, որ նա այժմ արդեն լիովին զգաստացել է այն տպավորությունից, որ թողեց նրա վրա իր գալուստը, և վերցրեց այն մակերեսային, անտարբեր տոնը, որի առկայությամբ կարծես փակ էր դեպի այն բաժանմունքը տանող դուռը, որտեղ գտնվում էին Աննայի զգացմունքները և սրտագին մտքերը։

— Իսկ ինչպե՞ս է քո աղջիկը, Աննա,— հարցրեց Դոլլին։

— Անի՞ն (այդպես էր կանչում Աննան իր աղջկան)։ Առողջ է։ Շատ լավացել է։ Ուզո՞ւմ ես տեսնել նրան։ Գնանք, ցույց տամ քեզ։ Չափազանց շատ գլխացավանք պատճառեց դայակ-

ների հարցը,— սկսեց պատմել նա։ — Մենք ունեինք իտալուհի ծծմայր։ Շատ լավ կին էր, բայց այնպե՞ս տխմար։ Մենք ուզում էինք նրան ետ ուղարկել, բայց փոքրիկն այնպես վարժվել է նրան, որ էլի դեռ պահում ենք։

— Իսկ ինչպե՞ս եք տնօրինել դուք... — ուզեց հարցնել Դոլլին այն մասին, թե ի՞նչ ազգանուն է կրելու աղջիկը. բայց հանկարծ նկատելով Աննայի խոժոռված դեմքը, նա փոխեց իր հարցի իմաստը։— Իսկ ինչպե՞ս եք արել. արդեն կտրե՞լ եք ծծից։

Սակայն Աննան հասկացավ։

— Դու այդ չէիր ուզում հարցնել, չէ՞։ Դու ուզում էիր հարցնել նրա ազգանվան մասին։ Ճի՞շտ է։ Դա տանջում է Ալեքսեյին։ Փոքրիկս ազգանուն չունի։ Այսինքն՝ նա Կարենինա է,— ասաց Աննան, աչքերը կկոցելով այնպես, որ երևում էին միայն իրար միացած արտևանունքները։ — Սակայն,—հանկարծ դեմքը պայծառացնելով,— դրա մասին մենք կխոսենք հետո։ Գնանք, ես նրան ցույց տամ քեզ։ Elle est très gentille[1]։ Նա արդեն չորեքթաթիկ է անում։

Մանկասենյակում Դարյա Ալեքսանդրովնային ավելի ևս զարմացրեց այն շքեղությունը, որ զարմացրեց նրան ամբողջ տան մեջ։ Այստեղ կային և՛ սայլակներ, բերված Անգլիայից, և՛ գործիքներ՝ քայլել սովորեցնելու համար, և՛ հատուկ շինված բազմոց՝ բիլյարդի նման՝ չորեքթաթիկ անելու համար, և՛ ճոճաթոռներ, և՛ վաններ՝ առանձնահատուկ, նոր։ Այս բոլորն անգլիական էր, դիմացկուն ու լավորակ և պարզապես շատ թանկարժեք։ Սենյակը մեծ էր, շատ բարձր և լուսավոր։

Երբ նրանք ներս մտան, աղջիկը շապիկով նստել էր բազկաթոռի մեջ՝ սեղանի մոտ և ուտում էր բուլյոն, որով նա թրջել էր իր ամբողջ կրծքիկը։ Աղջկան կերակրում և, ըստ երևույթին, նրա հետ միասին ուտում էր ինքը՝ ռուս աղախինը, որն սպասարկում էր մանկասենյակում։ Չկային ո՛չ ծծմայրը, ո՛չ էլ դայակը. նրանք հարևան սենյակում էին, և այնտեղ լսվում էր նրանց խոսակցությունը տարօրինակ ֆրանսերեն լեզվով, որով միայն կարող էին նրանք բացատրվել իրար հետ։

Լսելով Աննայի ձայնը, պճնազգեստ, բարձրահասակ, անդուր դեմքով և պղտոր արտահայտությամբ անգլուհին, շտապ թափահարելով իր խարտյաշ խոպոպիկները, մտավ դռնից և անմիջապես սկսեց արդարանալ, թեև Աննան ո՛չ մի բանում չէր մեղադրում նրան։ Աննայի յուրաքանչյուր խոսքին անգլուհին շտապ մի քանի անգամ իրար վրա ասում էր. „yes, my lady“[1]։

Սևահոն, սևահեր, կարմրաթուշ աղջիկը, փշաքաղ մաշկով պատած ամուր, կարմիր մարմնով, չնայած այն խիստ հայացքին, որով նա նայեց նոր անձնավորությանը, շատ դուր եկավ Դարյա Ալեքսանդրովնային. նա նույնիսկ նախանձեց նրա առողջ տեսքին։ Նրան շատ դուր եկավ նաև այն, որ նա սողում էր չորեքթաթիկ։ Նրա երեխաներից ոչ մեկը չէր սողում։ Այդ աղջիկը զարմանալի սիրունիկ էր, երբ նրան նստեցրին գորգի վրա և ետևի կողմից զգեստը ծալեցին տակը։ Նա փոքրիկ գազանի նման, նայելով մեծերին իր փայլուն սև աչքերով, երևի ուրախանալով այն բանի համար, որ հիանում են իրենով, ժպտալով և մի կողքի պահելով ոտքերը, եռանդագին հենվում էր ձեռքերին ու արագ ձգում ամբողջ գավակը և նորից թաթիկները մեկնում առաջ։

Բայց մանկասենյակում տիրող ընդհանուր ոգին և մանավանդ անգլուհին սաստիկ դուր չեկան Դարյա Ալեքսանդրովնային։ Այն փաստը, որ Աննան մարդ ճանաչելու իր նրբազգացությամբ, իր աղջկա համար վերցրել էր այդպես անհամակրելի և չարժանահարգ անգլուհու, Դարյա Ալեքսանդրովնան բացատրում էր ինքն իր մեջ միայն այն բանով, որ լավը չէր գնա այնպիսի մի անկանոն ընտանիք, ինչպիսին էր Աննայի ընտանիքը։ Բացի դրանից, Դարյա Ալեքսանդրովնան մի քանի խոսքից անմիջապես հասկացավ, որ Աննան, ծծմայրը, դայակը և երեխան չէին ընտելացել իրար՝ միասին ապրելու, և, որ մոր այցելությունը սովորական բան չէր։ Աննան ուզում էր աղջկա համար հանել նրա խաղալիքը և չկարողացավ գտնել այն։

Ամենից զարմանալին այն էր, որ երբ Դոլլին հարցրեց, թե քանի ատամ ունի փոքրիկը, Աննան սխալվեց ու բոլորովին մոռացավ վերջին երկու ատամի մասին։

— Երբեմն ինձ համար ծանր է, որ ես այստեղ կարծես ավե-

[1] Նա շատ լավ է։

[1] Այո՛, իմ լեդի։

լորդ եմ,— ասաց Աննան, դուրս գալով մանկասենյակից ու բարձրացրեց իր քղանցքը, որպեսզի չդիպչի դռան մոտի խաղալիքին։ — Այդպես չէր առաջինի՞ հետ։

— Ես կարծում էի, ընդհակառակն,— քաշվելով ասաց Դարյա Ալեքսանդրովնան։

— Օ՜, ո՛չ։ Գիտե՞ս, ես տեսա նրան, Սերյոժային,— ասաց Աննան, կկոցելով աչքերը, կարծես խորազնին նայելով ինչ-որ հեռավոր բանի։ Սակայն դրա մասին հետո կխոսենք։ Դու չես հավատա, ես նման եմ սոված մարդու, որի առաջ հանկարծ դնում են լիառատ ճաշ, և նա չի իմանում, թե ինչի՞ց սկսի։ Լիառատ ճաշը՝ դո՛ւ ես և քեզ հետ ունենալիք իմ խոսակցությունները, որ ոչ ոքի հետ չէի կարող ունենալ. և ես չգիտեմ, թե նախ ո՞ր խոսակցությունն սկսեմ։ Mais je ne vous ferai grâce de rien[1]։ Ես պետք է բոլորը պատմեմ։ Հա՜, նախ պետք է նկարագրել քեզ այն հասարակությունը, որը դու կտեսնես մեզ մոտ,— սկսեց նա։ — Սկսեմ կանանցից. իշխանազնուհի Վարվառա։ Դու ճանաչում ես նրան, ու ես գիտեմ քո և Ստիվայի կարծիքը նրա մասին։ Ստիվան ասում է, թե նրա ամբողջ կյանքի նպատակն է՝ ապացուցել իր գերազանցությունը մորաքույր Կատերինա Պավլովնայից։ Այս բոլորը ճիշտ է, բայց նա բարի է, և ես այնպե՞ս շնորհապարտ եմ նրան։ Պետերբուրգում կար պահ, երբ ինձ համար անհրաժեշտ էր un chaperon[2]։ Դե, հանդիպեց նա։ Բայց, իրոք որ, նա բարի կին է։ Նա շատ բանով թեթևացրեց իմ վիճակը։ Ես տեսնում եմ, որ դու չես հասկանում իմ դրության ամբողջ ծանրությունը... այնտեղ՝ Պետերբուրգում,— ավելացրեց նա։— Այստեղ ես միանգամայն հանգիստ եմ ու երջանիկ։ Բայց այդ մասին հետո։ Պետք է մեկ-մեկ թվել։ Հետո Սվիյաժսկին,— նա պարագլուխ է և շատ կարգին մարդ, բայց նա ինչ-որ ակնկալություն ունի Ալեքսեյից։ Հասկանո՞ւմ ես, Ալեքսեյն իր կարողությամբ այժմ, երբ մենք հաստատվեցինք գյուղում, կարող է մեծ ազդեցություն ունենալ։ Հետո Տուշկևիչը,— դու տեսել ես նրան, նա լինում էր Բետսիի մոտ։ Այժմ ճամփու են դրել նրան, և նա եկել է մեզ մոտ։ Նա, ինչպես Ալեքսեյն է ասում, մեկն է այն մարդկանցից, որոնք

[1] Բայց ես քեզ չեմ ազատի ո՛չ մի բանից։
[2] Կոմպանյոնուհի, ընկերուհի։

շատ հաճելի են, եթե նրանց ընդունում, համարում են այն, ինչ ուզում են նրանք երևալ, et puis, il est comme il faut[1], ինչպես ասում է իշխանազնուհի Վարվառան։ Հետո Վեսլովսկին... դրան դու ճանաչում ես։ Շատ համակրելի տղա է,— ասաց նա, և խորամանկ ժպիտը կնճռոտեց նրա շուրթերը։ — Այդ ի՞նչ վայրենի պատմություն է եղել Լևինի հետ։ Վեսլովսկին պատմել էր Ալեքսեյին, և մենք չենք հավատում։ Il est très gentil et naif[2],—ասաց նա էլի նույն ժպիտով։— Տղամարդկանց պետք է զվարճություն, և Ալեքսեյին հարկավոր է հասարակություն, ուստի ես թանկ եմ գնահատում այդ հասարակությունը։ Հարկավոր է, որ մեզ մոտ կյանքը լինի աշխույժ և ուրախ, ու որպեսզի Ալեքսեյը նոր ոչինչ չցանկանա։ Հետո կտեսնես կառավարչին։ Գերմանացի է, շատ լավ մարդ և գիտե իր գործը։ Ալեքսեյը շատ է գնահատում նրան։ Հետո բժիշկը, երիտասարդ մարդ, ոչ թե բոլորովին նիհիլիստ է, բայց, գիտե՞ս, ուտում է գանակով... սակայն շատ լավ բժիշկ է։ Հետո ճարտարապետը... Uue petite cour[3].

XX

— Ա՜յ, ահա ձեզ և Դոլլին, իշխանազնուհի, դուք այնպես ուզում էիք տեսնել նրան,— ասաց Աննան, Դարյա Ալեքսանդրովնայի հետ դուրս գալով քարե մեծ տեռասը, որտեղ ստվերի մեջ, քարգահի առաջ, նստել էր իշխանազնուհի Վարվառան, ասեղնագործելով կոմս Ալեքսեյ Կիրիլովիչի համար բազկաթոռ։ Դոլլին ասում է, որ ոչինչ չի ուզում մինչև ճաշ, բայց դուք հրամայեցեք, թող նախաճաշ տան, իսկ ես գտնեմ Ալեքսեյին ու բերեմ նրանց բոլորին։

Իշխանազնուհի Վարվառան սիրալիր ու փոքր-ինչ հովանավորական տոնով ընդունեց Դոլլիին և անմիջապես սկսեց բացատրել նրան, թե ինքը մնում է Աննայի մոտ այն պատճառով, որ միշտ սիրել է նրան ավելի, քան իր քույր Կատերինա Պավլովնան՝ հենց նա, որ դաստիարակել է Աննային, թե այժմ, երբ ամենքը լքել են Աննային, ինքն իր պարտքն է

[1] Եվ հետո՝ նա օրինավոր մարդ է։
[2] Նա շատ համակրելի և միամիտ է։
[3] Փոքրիկ արքունիք։

համարել օգնել նրան այդ անցողիկ, ամենածանր ժամանակաշրջանում։

— Ամուսինը նրան ապահարզան կտա, և այն ժամանակ ես նորից կերթամ իմ մենությունը, իսկ հիմա ես կարող եմ օգտակար լինել ու կկատարեմ իմ պարտքը, ինչքան էլ ծանր լինի այդ, ուրիշների պես չեմ վարվի։ Եվ ի՞նչ լավն ես դու, ինչ լա՜վ արիր, որ եկար։ Նրանք ապրում են ճիշտ այնպես, ինչպես ամենալավ ամուսինները. նրանց կդատի աստված, և ո՛չ թե մենք։ Իսկ մի՞թե Բիրյուզովսկին և Ավենևան... իսկ ինքը Նիկա՞նդրովը, հապա Վասի՞լևը Մամոնովայի հետ, հապա Լիզա Նեպտո՞ւնովան... Չէ՞ որ ոչ ոք ոչինչ չէր ասում։ Եվ վերջացավ նրանով, որ ամենքը նրանց ընդունում էին։ Եվ հետո c'est un intérieur si joli, si comme il fout. Tout-à fait à l'anglaise. On se réunit le matin au breakfeast et puis on se sépare[1]։ Ով ի՞նչ ուզում, անում է մինչև ճաշ։ Ճաշը ժամը 7-ին է։ Ստիվան շատ լավ է արել, որ ուղարկել է քեզ։ Նա իրեն հեռու չպիտի պահի նրանցից։ Գիտե՞ս, նա իր մոր և եղբոր միջոցով կարող է ամեն ինչ անել։ Հետո նրանք շատ բարի գործեր են անում։ Նա քեզ ոչինչ չի՞ ասել իր հիվանդանոցի մասին։ Ce sera admirable[2],— բոլորը Փարիզից է։

Նրանց խոսակցությունն ընդհատեց Աննան, որը գտել էր տղամարդկանց հասարակությունը բիլիարդանոցում և նրանց հետ միասին վերադարձավ տեռաս։ Մինչև ճաշ դեռ ժամանակ շատ կար, եղանակը հիանալի էր, այս իսկ պատճառով մնացած այդ երկու ժամն անցկացնելու համար առաջարկվեցին մի քանի տարբեր միջոցներ։ Ժամանակ անցկացնելու համար միջոցներ շատ կային Վոզդվիժենսկոյում և նման չէին այն միջոցներին, որ գործադրվում էին Պոկրովսկոյում։

— Une partie de lawn tennis[3],— առաջարկեց Վեսլովսկին, ժպտալով իր գեղեցիկ ժպիտով։— Մենք էլ միասին կլինենք, Աննա Արկադևնա։

— Ո՛չ, շոգ է. ավելի լավ է ման գալ այգում ու մակույկով

[1] Դա այնպես գեղեցիկ, օրինավոր մթնոլորտ է։ Բոլորովին նման անգլիականի։ Հավաքվում են առավոտյան նախաճաշին ու հետո ցրվում։

[2] Դա կլինի հիանալի բան։

[3] Մի պարտիա լաուն-տենիս։

զբոսնել և ցույց տալ Դարյա Ալեքսանդրովնային ափերը,— առաջարկեց Վրոնսկին։

— Ես ամեն բանի համաձայն եմ,— ասաց Սվիյաժսկին։

— Ես կարծում եմ, որ Դոլլիի համար ամենից ավելի հաճելի է ոտքով զբոսանքը, այնպես չէ՞։ Իսկ հետո արդեն՝ մակույկով,— ասաց Աննան։

Այդպես էլ վճռեցին։ Վեսլովսկին և Տուշկևիչը գնացին լոզարան ու խոստացան պատրաստել այնտեղ մակույկը և սպասել։

Երկու զույգ կազմած, գնացին ծառուղով։ Աննան՝ Սվիյաժսկու հետ և Դոլլին՝ Վրոնսկու հետ։ Դոլլին մի փոքր շփոթված ու մտահոգված էր իր համար բոլորովին նոր այն միջավայրով, որի մեջ հայտնվեց ինքը։ Վերացականորեն, տեսականապես, նա ո՛չ միայն արդարացնում, այլ նույնիսկ հավանություն էր տալիս Աննայի վարմունքին։ Ինչպես առհասարակ ո՛չ հազվադեպ անբասիր բարոյական կանայք, հոգնած բարոյական կյանքի միօրինակությունից, նա հեռվից ո՛չ միայն ներում էր հանցավոր սերը, այլ նույնիսկ նախանձում նրան։ Բացի դրանից, նա սրտով սիրում էր Աննային։ Բայց իրականում, տեսնելով նրան իր համար խորթ այս մարդկանց շրջանում, նրանց՝ Դարյա Ալեքսանդրովնայի համար նոր, լավ տոնով, նա իրեն անհարմար էր զգում։ Նրա համար առանձնապես անախորժ էր տեսնել իշխանազնուհի Վարվառային, որն ամեն ինչ ներում էր նրանց՝ հանուն այն հարմարությունների, որոնցից օգտվում էր։

Առհասարակ վերացականորեն Դոլլին հավանություն էր տալիս Աննայի վարմունքին, բայց նրան անախորժ էր տեսնել այն մարդուն, որի համար կատարվել էր այդ վարմունքը։ Բացի դրանից, Վրոնսկին երբեք դուր չէր գալիս նրան։ Դոլլին նրան համարում էր շատ հպարտ մարդ և նրա մեջ չէր տեսնում ո՛չ մի այնպիսի բան, որով նա կարող էր պարծենալ, բացի հարստությունից։ Բայց, իր կամքին հակառակ, Վրոնսկին այստեղ, իր տանը, ավելի համակրանք էր ներշնչում, քան առաջ, և Դոլլին չէր կարողանում իրեն ազատ զգալ նրա հետ։ Նրա հետ Դարյա Ալեքսանդրովնան ուներ նույն զգացումը, ինչ-որ այն ժամանակ աղախնի հետ կոֆտայի պատճառով։ Ինչպես աղախնի առաջ՝ նա ոչ թե ամաչում, այլ իրեն անհարմար էր

զգում կարկատանների համար, այնպես էլ Վռոնսկու հետ նա մշտապես ոչ թե քաշվում, այլ անհարմար էր զգում իրեն։

Դոլլին իրեն զգում էր շփոթված ու խոսակցության նյութ էր փնտրում։ Թեպետ նա կարծում էր, որ նկատի ունենալով Վռոնսկու հպարտությունը, նրա համար անախորժ կլինի նրա տան և այգու գովասանքը, բայց Դոլլին, չգտնելով խոսակցության ուրիշ նյութ, այսուամենայնիվ ասաց նրան, թե ինքը շատ հավանեց նրա տունը։

— Այո՛, շատ գեղեցիկ շենք է և լավ, հին ոճով շինված,— ասաց Վռոնսկին։

— Ինձ շատ դուր եկավ նախասանդուղքի դիմացի բակը։ Դա այսպես էլ եղե՞լ է։

— Օ՜, ոչ,— ասաց նա, և նրա դեմքը փայլեց բավականությունից։ — Եթե դուք տեսնեիք այդ բակը այս գարնանը։

Եվ նա սկսեց սկզբում զգույշ, իսկ հետո ավելի ու ավելի հրապուրվելով, Դոլլիի ուշադրությունը հրավիրել տան և այգու զարդարանքների զանազան մանրամասների վրա։ Երևում էր, որ շատ աշխատանք թափելով իր կալվածքը բարելավելու և գեղեցկացնելու վրա, Վռոնսկին անհրաժեշտություն էր զգում պարծենալու դրանցով նոր անձնավորության առաջ ու սրտանց ուրախանում էր Դարյա Ալեքսանդրովնայի գովասանքների համար։

— Եթե դուք չեք հոգնել և ուզում եք նայել հիվանդանոցը, հեռու չէ այն։ Գնանք,— ասաց Վռոնսկին, նայելով նրա դեմքին, որպեսզի համոզվի, թե իրո՞ք ձանձրալի չէ նրա համար։

— Դու կգա՞ս, Աննա,— դիմեց Վռոնսկին նրան։

— Մենք կգնանք, այնպես չէ՞,— դիմեց Սվիյաժսկուն Աննան։ — Mais il ne faut pas laisser le pauvre Վեսլովսկին et Տուշկևիչը se morfondre là dans le bateau[1]։ Պետք է մարդ ուղարկել և ասել նրանց։ — Հա՜, դա հուշարձան է, որ նա ուզում է դնել այստեղ,— ասաց Աննան, դիմելով Դոլլիին նույն խորամանկ, բանիմաց ժպիտով, որով առաջ նա խոսում էր հիվանդանոցի մասին։

— Օ՜, հիմնական գործ է,— ասաց Սվիյաժսկին։ Բայց որ-

[1] Բայց չպիտի թողնել, որ խեղճ Վեսլովսկին և Տուշկևիչը զուր սպասեն նավակի մեջ։

պեսզի չերևա, թե ինքը համաձայն է Վռոնսկուն, նա անմիջապես ավելացրեց թեթև դատապարտելի մի դիտողություն։—

— Սակայն ես զարմանում եմ, կոմս,— ասաց նա,— այդ ինչպե՞ս է, որ դուք այդքան շատ բան անելով ժողովրդի համար՝ սանիտարական տեսակետից, այդքան անտարբեր եք դպրոցների նկատմամբ։

— C'est devenu tellemeut commun les écoles[1],— ասաց Վռոնսկին։— Հասկանո՞ւմ եք, դրանից չէ, այլ հենց այնպես, ես հրապուրվեցի։ Դեպի հիվանդանոց՝ ա՛յս կողմ,— դարձավ նա Դարյա Ալեքսանդրովնային, նշելով ծառուղուց դուրս տանող կողքի ելքը։

Կանայք բացին հովանոցները և դուրս եկան կողքի ճանապարհը։ Անցնելով մի քանի ոլորան ու դուրս գալով դրոնակից, Դարյա Ալեքսանդրովնան տեսավ իր դիմաց բարձունքի վրա, զարդարուն, բարդ ձևի, համարյա արդեն վերջացած մի կարմիր շենք։ Դեռ չներկած թիթեղյա կտուրը շլացուցիչ փայլում էր պայծառ արևի տակ։ Վերջացած շենքի մոտ կառուցվում էր մեկ ուրիշը, շրջապատված վերելակներով, և գոգնոցավոր բանվորները լաստակների վրա դարսում էին ազյուսներ, կիսադույլերից լցնում էին որմածքը ու հավասարեցնում էին ուղղիչ գործիքներով։

— Ի՞նչ արագ է գնում աշխատանքը ձեզ մոտ,— ասաց Սվիյաժսկին։— Երբ վերջին անգամ ես այստեղ էի, դեռ տանիքը չկար։

— Աշնան դեմ բոլորը պատրաստ կլինի։ Ներսից համարյա ամեն բան արդեն ավարտված է,— ասաց Աննան։

— Իսկ այդ ի՞նչ նոր բան է։

— Այդ շենքը բժշկի և դեղատան համար է,— պատասխանեց Վռոնսկին, տեսնելով իրեն մոտեցող կարճ վերարկուով ճարտարապետին և ներողություն խնդրելով կանանցից, գնաց նրան ընդառաջ։

Անցնելով գաջ ու կիր շաղախելու փոսի մոտից, որտեղից բանվորները կիր էին վերցնում, նա կանգնեց ճարտարապետի հետ ու սկսեց ցած-ցած ինչ-որ բան ասել։

[1] Դպրոցները դարձել են շատ սովորական բան։

— Ֆրոնտոնն էլի դուրս է գալիս ավելի ցածր,— պատասխանեց նա Աննային, որը հարցրեց, թե բանն ի՞նչ է։

— Ես ասում էի, որ պետք է հիմքը բարձրացնել,— ասաց Աննան։

— Այո՛, իհարկե, այդպես ավելի լավ կլիներ, Աննա Արկադևնա,— ասաց ճարտարապետը,— բայց արդեն ուշ է։

— Այո՛, ես շատ եմ հետաքրքրվում դրանով,— պատասխանեց Աննան Սվիյաժսկուն, որն իր զարմանքը հայտնեց նրա ճարտարապետական գիտության համար։— Հարկավոր է, որպեսզի նոր շինությունը համապատասխանի հիվանդանոցին։ Այնինչ, դա ծրագրված է հետո և սկսված է առանց պլանի։

Վերջացնելով խոսակցությունը ճարտարապետի հետ, Վրոնսկին միացավ կանանց ու տարավ նրանց հիվանդանոցի ներսը։

Չնայած որ դրսից դեռ շինում էին քիվերը և վարի հարկում ներկում էին, վերևում ամեն ինչ համարյա արդեն ավարտվել էր։ Անցնելով շուգունե լայն սանդուղքով դեպի հարթակը, նրանք մտան առաջին մեծ սենյակը։ Պատերը սվաղել էին մարմարի գույնով, վիթխարի ամբողջական լուսամուտները դրված էին արդեն, միայն պարկետե հատակը դեռ չէր վերջացած, և ատաղձագործները, որոնք ռանդում էին բարձրացած քառակուսին, թողեցին աշխատանքը, որպեսզի ողջունեն պարոնին, հանելով իրենց մազերը պահող երիզը։

— Սա ընդունարանն է,— ասաց Վրոնսկին։— Այստեղ կլինի պյուպիտր, սեղան, պահարան և ուրիշ ոչինչ։

— Ա՛յս կողմ, անցնենք այս տեղով։ Մի՛ մոտենա պատուհանին,— ասաց Աննան, փորձելով, չորացե՞լ է արդյոք ներկը։— Ալեքսեյ, ներկը չորացել է արդեն,— ավելացրեց նա։

Ընդունարանից նրանք անցան միջանցք։ Այստեղ Վրոնսկին ցույց տվեց նրանց արդեն պատրաստ նոր սիստեմի օդանցքը։ Հետո նա ցույց տվեց մարմարե վաննաները, արտասովոր զսպանակներով մահճակալները։ Ապա իրար ետևից նա ցույց տվեց հիվանդասենյակները, մառանը, սպիտակեղենի սենյակը, հետո նոր կազմության վառարանները, ապա առանձնահատուկ ձեռնասայլակները, որոնք աղմուկ չեն հանի, մոտեցնելով հարկավոր իրերը միջանցքով, և ուրիշ շատ բաներ։ Սվիյաժսկին գնահատում էր բոլորը, որպես մի մարդ, որ գիտե բոլոր նոր կատարելագործությունները։ Դոլլին ուղղակի զարմանում էր մինչև այսօր իր չտեսած այս բաների վրա և կամենալով բոլորը հասկանալ, ամեն ինչի մասին մանրամասնորեն հարցուփորձ էր անում, բացահայտ բավականություն պատճառելով Վրոնսկուն։

— Այո՛, ես կարծում եմ, որ սա Ռուսաստանում կլինի միակ լիովին ճիշտ կազմակերպած հիվանդանոցը,— ասաց Սվիյաժսկին։

— Իսկ ծննդաբերության բաժին չի՞ լինելու ձեզանում,— հարցրեց Դոլլին,— այդ այնպես հարկավոր է գյուղում։ Ես հաճախ...

Չնայած իր քաղաքավարությանը, Վրոնսկին ընդհատեց նրան։

— Սա ծննդաբերության տուն չէ, այլ հիվանդանոց է, և հատկացվում է բոլոր հիվանդությունների համար, բացի վարակիչ հիվանդություններից,— ասաց նա։— Իսկ այս ահա, տեսե՛ք...— և նա գլորեց դեպի Դարյա Ալեքսանդրովնան մի բազկաթոռ, որ նոր էր ստացվել արտասահմանից՝ առողջացողների համար։ — Նայեցե՛ք։ — Նա նստեց բազկաթոռի մեջ ու սկսեց շարժել այն։ — Հիվանդը չի կարողանում քայլել, դեռ թույլ է կամ ոտքերի հիվանդություն ունի, բայց նրան օդ է պետք, և նա սրանով գնում է, զբոսնում է...

Դարյա Ալեքսանդրովնան ամեն բանով հետաքրքրվում էր, բոլորը նրան շատ էր դուր գալիս, բայց ամենից ավելի նրան դուր էր գալիս ինքը՝ Վրոնսկին, այդ բնական նախվ հափշտակությամբ։ «Այո՛, նա շատ համակրելի, լավ մարդ է», մտածում էր Դոլլին երբեմն, լսելով նրան, այլ նայելով նրան, հասու լինելով նրա արտահայտությանը և մտքով տեղափոխվելով Աննայի մեջ։ Վրոնսկին այժմ այնպես դուր էր գալիս Դոլլիին իր աշխուժությամբ, որ նա հասկանում էր, թե ինչո՞ւ Աննան կարող էր սիրահարվել նրան։

XXI

— Ո՛չ, ես կարծում եմ, որ իշխանուհին հոգնեց, և ձիերը չեն հետաքրքրում նրան,— ասաց Վրոնսկին Աննային, որն առաջարկեց գնալ ձիաբուծարան, որտեղ Սվիյաժսկին ուզում

էր տեսնել նոր հովատակը։— Դուք գնացեք, իսկ ես իշխանուհուն կառաջնորդեմ տուն, և մենք կզրուցենք,— ասաց նա,— եթե այդ հաճելի է ձեզ,— դիմեց նա Դոլլիին։

— Ձիերից ես բան չեմ հասկանում և շատ ուրախ եմ,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, բնավ չզարմացած։

Դոլլին տեսնում էր Վրոնսկու դեմքից, որ ինքը մի բանով պետք է նրան։ Եվ Դոլլին չսխալվեց։ Հենց որ նրանք դուրս եկան դռնակից ու մտան այգի, Վրոնսկին նայեց այն կողմը, ուր գնաց Աննան, և համոզվելով, որ նա չի կարող ո՛չ լսել, ո՛չ տեսնել իրենց, սկսեց.

— Դուք գուշակեցիք, որ ես կամենում էի խոսել ձեզ հետ,— ասաց Վրոնսկին, ծիծղուն աչքերով նայելով նրան։— Ես չեմ սխալվում, որ դուք Աննայի բարեկամն եք։— Վրոնսկին հանեց գլխարկը և թաշկինակով սրբեց իր ճաղատացող գլուխը։

Դարյա Ալեքսանդրովնան ոչինչ չպատասխանեց ու միայն վախեցած նայեց նրան։ Երբ Դոլլին մնաց նրա հետ մենակ, հանկարծ սարսափեց. ծիծղուն աչքերը և դեմքի խիստ արտահայտությունը վախեցնում էին Դոլլիին։

Դարյա Ալեքսանդրովնայի մտքից անցան ամենաբազմապիսի ենթադրություններ, թե ինչի՛ մասին է պատրաստվում խոսելու իր հետ Վրոնսկին. «Նա կսկսի խնդրել ինձ՝ տեղափոխվել իրենց մոտ երեխաների հետ և ապրել որպես հյուր, ու ես ստիպված կլինեմ մերժել նրան. կամ գուցե այն մասին, որ ես Մոսկվայում շրջան ստեղծեմ Աննայի համար... կամ արդյոք Վասենկա Վեսլովսկու և նրա ու Աննայի հարաբերությունների՞ մասին։ Կամ գուցե Կիտիի մասին, այն մասին, որ նա իրեն հանցավոր է համարում»։ Դոլլին նախատեսում էր միայն անախորժ բաներ, բայց չգուշակեց այն, ինչ ուզում էր ասել նրան Վրոնսկին։

— Դուք այնպիսի ազդեցություն ունեք Աննայի վրա, նա այնպես սիրում է ձեզ,— ասաց Վրոնսկին,— օգնեցե՛ք ինձ։

Դարյա Ալեքսանդրովնան հարցական երկչոտությամբ նայեց նրա եռանդուն դեմքին, որը մերթ ամբողջովին, մերթ տեղ-տեղ ընկնում էր արևի լույսի տակ՝ լորենիների շվաքում, մերթ նորից մռայլվում էր ստվերից, և սպասում էր, թե ինչ կասի նա հետո. բայց նա տրոստը քրթքրթացնելով խճերին, լուռ գնում էր Դոլլիի կողքով։

— Քանի որ դուք եկաք մեզ մոտ, դուք, Աննայի առաջվա բարեկամներից միակ կինը,— իշխանազնուհի Վարվառային չեմ հաշվում,— ապա ես հասկանում եմ, որ դուք այդ բանն արիք ո՛չ այն պատճառով, որ մեր վիճակը համարում եք նորմալ, այլ, որ հասկանալով այս դրության ամբողջ ծանրությունը, դուք էլի սիրում եք նրան առաջվա պես և ուզում եք օգնել նրան։ Արդյոք ճի՞շտ եմ հասկացել ձեզ,— հարցրեց նա, նայելով Դոլլիին։

— Օ՛, իհարկե,— պատասխանեց Դարյա Ալեքսանդրովնան, ծալելով հովանոցը,— բայց...

— Ո՛չ,— ընդհատեց նա և ակամա, մոռանալով, որ դրանով անհարմար դրության մեջ է դնում իր զրուցակցուհուն, կանգ առավ, այնպես որ Դոլլին էլ ստիպված էր կանգ առնել։— Ոչոք ինձնից ավելի և խորը չի զգում Աննայի վիճակի ամբողջ ծանրությունը։ Ու դա հասկանալի է, եթե դուք շնորհ եք անում ինձ համարելու մարդ, որը սիրտ ունի։ Ե՛ս եմ այդ դրության պատճառը։ Այդ պատճառով էլ ես զգում եմ այդ։

— Հասկանում եմ,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, ակամա հիանալով նրանով, որ այդպես անկեղծաբար ու հաստատամտորեն ասաց այդ։— Բայց հենց նրա համար, որ դուք ձեզ համարում եք պատճառ, վախենում եմ, չափազանցում եք,— ասաց նա։— Նրա դրությունը ծանր է բա՞րձր հասարակության մեջ, ես հասկանում եմ։

— Բարձր հասարակության մեջ դա դժոխք է,— արագ ասաց Վրոնսկին, մռայլորեն խժռոտվելով։— Չի կարելի երևակայել բարոյական ավելի վատթար տանջանքներ, քան այն, որ ունեցավ նա Պետերբուրգում երկու շաբաթվա ընթացքում..., և ես խնդրում եմ ձեզ՝ հավատալ դրան։

— Այո՛, բայց այստեղ, առայժմ, քանի դեռ ո՛չ Աննան... ո՛չ, դուք կարիք չեք զգում բարձր հասարակության...

— Բարձր հասարակությո՞ւն,— արհամարհանքով ասաց Վրոնսկին,— ի՞նչ կարիք կարող եմ ունենալ ես բարձր հասարակության։

— Առայժմ,— իսկ դա կարող է լինել ընդմիշտ,— դուք երջանիկ եք ու հանգիստ։ Նայելով Աննային, ես տեսնում եմ, որ նա երջանիկ է, միանգամայն երջանիկ, նա արդեն հայտնել է ինձ,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան ժպտալով, և ակա-

մա, ասելով այդ, Դոլլին կասկածեց, թե իրո՞ք երջանիկ է Աննան։

Բայց թվում էր, թե Վրոնսկին չի կասկածում դրանում։

— Այո՛, այո՛,— ասաց նա։— Ես գիտեմ, որ Աննան նոր կյանք առավ իր բոլոր տառապանքներից հետո. նա երջանիկ է։ Նա երջանիկ է ներկայով, բայց ե՞ս... ես վախենում եմ այն բանից, ինչ սպասում է մեզ... Ներողություն, դուք ուզում եք գնա՞լ։

— Ո՛չ, միևնույն է։

— Որ այդպես է, նստենք այստեղ։

Դարյա Ալեքսանդրովնան նստեց այգու նստարանին, ծառուղու անկյունում։ Վրոնսկին կանգնեց նրա դիմաց։

— Ես տեսնում եմ, որ Աննան երջանիկ է,— ասաց նա, և կասկածն այն բանում, արդյոք երջանիկ է Աննան, ավելի ուժեղ կերպով համակեց Դարյա Ալեքսանդրովնային։— Բայց կարո՞ղ է արդյոք դա շարունակվել այդպես։ Լա՞վ, թե՞ վատ վարվեցինք մենք, այդ ա՛յլ հարց է, սակայն վիճակը գցված է,— ասաց նա, ռուսերեն լեզվից անցնելով ֆրանսերենի,— և մենք կապված ենք իրար հետ մինչև մեր կյանքի վերջը։ Մենք միացած ենք մեզ համար ամենանվիրական սիրո կապերով։ Մենք երեխա ունենք, մենք դեռ կարող ենք երեխաներ ունենալ։ Բայց օրենքը և մեր դրության բոլոր պայմաններն այնպես են, որ երևան են գալիս հազարավոր կնճռոտ բարդություններ, որոնք նա չի տեսնում և չի ուզում տեսնել այժմ, երբ հոգով հանգստանում է իր կրած բոլոր տառապանքներից ու տանջանքներից հետո։ Եվ այդ հասկանալի է։ Բայց ես չեմ կարող չտեսնել։ Իմ աղջիկը՝ օրենքով իմ աղջիկը չէ, այլ Կարենինինն է։ Ես չեմ ուզում այդ խաբեությունը,— ասաց նա բացատման եռանդուն շարժումով և մռայլ-հարցական նայեց Դարյա Ալեքսանդրովնային։

Դոլլին ոչինչ չէր պատասխանում ու միայն նայում էր նրան։ Նա շարունակեց.

— Վաղը կարող է ծնվել տղա, ի՛մ տղան, և նա օրենքով՝ Կարենին է, նա ժառանգ չէ ո՛չ իմ անվան, ո՛չ իմ կարողության, և ինչքան էլ երջանիկ լինենք մենք ընտանիքում, և ինչքան էլ երեխաներ ունենանք մենք, իմ ու նրանց միջև կապ չկա։ Նրանք Կարենիններ են։ Հասկացեք այդ վիճակի ծանրությունն ու սոսկանքը։ Ես փորձեցի խոսել այդ մասին Աննայի հետ։ Դա գրգռում է նրան։ Նա չի հասկանում, և ես չեմ կարող բոլորն ասել նրան։ Այժմ նայեցեք մյուս կողմից։ Ես երջանիկ եմ նրա սիրով, բայց ես պետք է զբաղմունք ունենամ։ Ես գտա այդ զբաղմունքը և պարծենում եմ դրանով ու համարում եմ ավելի ազնիվ գործ, քան իմ նախկին ընկերների զբաղմունքը պալատում ու ծառայության գծով։ Եվ անկասկած չեմ փոխի այդ գործը նրանց գործի հետ։ Ես աշխատում եմ այստեղ, նստած իմ տեղում և երջանիկ եմ, գոհ, ու մեզ ոչինչ ավելի պետք չէ երջանկության համար։ Ես սիրում եմ այդ գործունեությունը։ Cela n'est pas un pis aller[1], ընդհակառակն...

Դարյա Ալեքսանդրովնան նկատեց, որ Վրոնսկին իր բացատրության այդ տեղում խառնում էր, և Դոլլին լավ չէր հասկանում այդ շեղումը, բայց զգում էր, թե քանի որ նա սկսեց խոսել իր սրտագին հարաբերությունների մասին, որոնց մասին չէր կարողանում խոսել Աննայի հետ, ուրեմն, այժմ արտահայտում, ասում էր բոլորը, և, որ նրա գործունեության հարցը գյուղում գտնվում է սրտագին մտքերի նույն բաժնում, ինչպես և Աննայի հետ նրա հարաբերությունների հարցը։

— Այսպես ուրեմն, ես շարունակում եմ,— ասաց Վրոնսկին, ուշքի գալով։— Իսկ գլխավորն այն է, որ աշխատելով, ես պետք է համոզված լինեմ, որ իմ արածը չի մեռնի ինձ հետ, որ ես կունենամ ժառանգներ, մինչդեռ ես չունեմ այդպիսի համոզում։ Երևակայեցեք այն մարդու վիճակը, որը նախապես գիտե, որ իր և իր սիրելի կնոջ երեխաները իրենը չե՛ն լինի, այլ ինչ-որ մեկինը, մի մարդու, որը նրանց ատում է և չի ուզում ճանաչել։ Չէ՞ որ դա սարսափելի բան է։

Նա լռեց, հայտնապես սաստիկ հուզված։

— Այո՛, իհարկե, ես հասկանում եմ դա։ Բայց ի՞նչ կարող է անել Աննան,— հարցրեց Դարյա Ալեքսանդրովնան։

— Այո՛, դա ինձ մոտեցնում է իմ խոսակցության նպատակին,— ասաց Վրոնսկին, դժվարությամբ հանգստանալով։— Աննան կարո՞ղ է, դա կախված է նրանի՛ց... Նույնիսկ նրա համար, որպեսզի կարելի լինի խնդրել թագավորին որդեգրության մասին, անհրաժեշտ է ապահարզան։ Իսկ դա

[1] Եվ այդ ո՛չ թե վատ դեպքում։

կախված է Աննայի՛ց։ Նրա ամուսինը համաձայն էր ուշա-
հարգանի, այն ժամանակ ձեր ամուսինը գրեթե կարգավորեց
այդ գործը։ Այժմ էլ, ես գիտեմ, նա չէր մերժի։ Պետք էր միայն
գալ նրան։ Այն ժամանակ նա ուղղակի պատասխանեց. որ եթե
Աննան ցանկություն հայտնի, նա չի մերժի։ Հասկանալի է,—
ասաց Վռոնսկին մռայլ,— դա մեկն է փարիսեցիական այն
խստություններից, որոնց ընդունակ են սիրտ չունեցող այդ
մարդիկ միայն։ Նա գիտե, թե որքան տանջանք է պատճառե-
լու Աննային ամեն հիշողություն նրա մասին, և իմանալով
այդ, պահանջում է Աննայից նամակ։ Ես հասկանում եմ, որ
Աննայի համար տանջալից բան է այդ։ Բայց պատճառներն
այնքան կարևոր են, որ հարկավոր է passer pardessus toute
cesfinesses de santiment. Il y va du bonheur et de l'exis-
tense d'Anne et de ses enfants։ Ես իմ մասին չեմ ասում,
թեև ինձ համար ծանր է, շատ ծանր,—ասաց նա մեկի հասցեին
ապառնալիքի արտահայտությամբ, որ իր համար ծանր էր։—
Այսպես ահա, իշխանուհի, ես անխղճորեն կառչում եմ ձեզա-
նից, որպես փրկության խարսխից։ Օգնեցեք ինձ հա-
մոզելու Աննային, որ նամակ գրի նրան և ապահարզան պա-
հանջի։

— Այո՛, հասկանալի է,— մտածկոտ ասաց Դարյա Ալեք-
սանդրովնան, վառ կերպով մտաբերելով իր վերջին տեսակ-
ցությունը Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ։— Այո՛, հասկանալի
է,— կրկնեց նա վճռականորեն, հիշելով Աննային։

— Գործ դրեք ձեր ազդեցությունը նրա վրա, այնպես
արեք, որ նա գրի։ Ես չեմ ուզում և համարյա չեմ կարող այդ
մասին խոսել նրա հետ։

— Լավ, ես կխոսեմ։ Բայց ինչպե՞ս է, որ նա ինքը չի
մտածում,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, հայտնի չէ թե
ինչու, այստեղ հանկարծ հիշելով Աննայի աչքեր կկոցելու
տարօրինակ նոր սովորությունը։ Եվ նա մտաբերեց, որ Աննան
աչքերը կկոցում էր հատկապես այն ժամանակ, երբ հարցը
վերաբերում էր կյանքի սրտագին կողմերին։ «Կարծես նա
աչքերը կկոցում է իր կյանքի վրա, որ չտեսնի ամեն բան»,—
մտածեց Դոլլին։— Անպայման ես ի՛նձ համար և նրա համար

[1] Պետք է անցնել զգացմունքի այս բոլոր նրբությունների վրայից։ Դա Աննայի և նրա երեխաների երջանկության ու գոյության հարցն է։

կխոսեմ նրա հետ,— պատասխանեց Դարյա Ալեքսանդրովնան Վռոնսկու շնորհակալության արտահայտությանը։

Նրանք վեր կացան ու գնացին դեպի տուն։

XXII

Գտնելով Դոլլիին արդեն վերադարձած, Աննան ուշադիր նայեց նրա աչքերին՝ կարծես հարցնելով այն խոսակցության մասին, որը նա ունեցել էր Վռոնսկու հետ, բայց չհարցրեց խոսքերով։

— Կարծեմ, արդեն ժամանակ է ճաշի,— ասաց Աննան։— Մենք դեռ բոլորովին չենք տեսնվել։ Ես հույս եմ դրել երեկոյան վրա։ Այժմ պետք է գնալ և հագնվել։ Ես կարծում եմ, դու նույնպես։ Բոլորս աղտոտվեցինք շինության տեղում։

Դոլլին գնաց իր սենյակը, և նրան ծիծաղելի թվաց։ Նա հագնելու բան չուներ, որովհետև արդեն հագել էր իր լավագույն զգեստը. բայց որպեսզի որևէ բանով նշանավոր դարձնի իր պատրաստությունը ճաշի համար, նա խնդրեց աղախնին՝ մաքրել իր զգեստը, փոխեց թեզանիքներն ու ժապավենը և գլխին կապեց ժանյակ։

— Ահա այն բոլորը, որ կարող էի ես անել,— ասաց նա, ժպտալով Աննային, որը դուրս եկավ դեպի նա իր երրորդ, նորից չափազանց պարզ հագուստով։

— Այո՛, մենք այստեղ շատ պճնամոլ ենք,— ասաց նա, կարծես ներողություն խնդրելով իր զուգվածության համար։— Ալեքսեյը գոհ է քո գալուց, ինչպես հաղվադեպ անգամ գոհ է լինում նա որևէ բանից։ Նա վճռականապես սիրահարված է քեզ,— ավելացրեց Աննան։— Հո չհոգնեցի՞ր դու։

Մինչև ճաշ ժամանակ չկար խոսելու որևէ բանի մասին։ Մտնելով ընդունարան, նրանք գտան այնտեղ իշխանաղնուհի Վարվառային և տղամարդկանց՝ սև սյուրտուկներով։ Ճարտարապետը ֆրակով էր։ Վռոնսկին Դարյա Ալեքսանդրովնային ներկայացրեց բժշկին ու կառավարչին։ Ճարտարապետի հետ ծանոթացրել էր նրան դեռ հիվանդանոցում։

Հաստ ծառայապետը, փայլելով ածիլված, կլոր դեմքով ու սպիտակ փողկապի օսլայած բանտով, զեկուցեց, որ ճաշը պատրաստ է, և կանայք վեր կացան։ Վռոնսկին խնդրեց

Սվիյաժսկուն՝ ձեռքը տալ Աննա Արկադևնային, իսկ ինքը մոտեցավ Դոլլիին։ Վեսլովսկին Տուշկևիչից առաջ ձեռքը տվեց իշխանազնուհի Վարվառային, այնպես որ Տուշկևիչը բժշկի և կառավարչի հետ գնացին մենակ։

Ճաշը, սեղանատունը, ամանեղենը, սպասավորները, գինին ու կերակուրը ո՛չ միայն համապատասխանում էին տան նոր շքեղության ընդհանուր տոնին, այլ, թվում է, թե ամեն բանից ավելի ևս շքեղ ու նոր էին։ Դարյա Ալեքսանդրովնան դիտում էր իր համար նոր այդ փարթամությունը և որպես տանտիկին, որ կառավարում է տունը, թեպետև հույս չունենալով կիրառելու իր տանն այստեղ տեսածից ո՛չ մի բան,— այնպես այս բոլորը իր շքեղությամբ վեր էր նրա կյանքի եղանակից,— ակամա խորասուզվում էր բոլոր մանրամասների մեջ և հարց էր տալիս իրեն, ո՛վ և ե՛րբ է այս բոլորն արել։ Վասենկա Վեսլովսկին, Օբլոնսկին, նույնիսկ Սվիյաժսկին և ուրիշ շատ մարդիկ, որոնց ճանաչում էր Դոլլին, երբեք չէին մտածում այդ մասին ու լոկ խոսքով էին հավատում, թե ամեն կարգին տնատեր ցանկանում է զգալ տալ իր հյուրերին, որ այն բոլորը, ինչն այնպես լավ կարգավորված է իր մոտ, ո՛չ մի աշխատանք չի նստել իր վրա՝ տանտիրոջ վրա, այլ արվել է ինքն իրեն։ Իսկ Դարյա Ալեքսանդրովնան գիտեր, որ ինքն իրեն նույնիսկ շիլա չի պատրաստվում երեխաների համար նախաճաշին, և, որ այդ պատճառով, նկատի ունենալով այս բարդ ու հիանալի կարգուսարքավորումը, պետք է որ մեկը խիստ մեծ ուշադրություն դարձրած լինի։ Եվ Ալեքսեյ Կիրիլովիչի հայացքից, ինչպես նա դիտեց սեղանը ու գլխով նշան տվեց ծառայապետին, և ինչպես առաջարկեց Դարյա Ալեքսանդրովնային՝ ընտրություն անել բանջարապուրի ու սուպի միջև,— Դոլլին հասկացավ, որ ամեն ինչ արվում և պահպանվում է տանտիրոջ հոգացողությամբ։ Աննայից այս բոլորը, հայտնապես, նույնքան կախում ուներ, որքան Վեսլովսկուց։ Աննան, Սվիյաժսկին, իշխանազնուհին և Վեսլովսկին միատեսակ հյուրեր էին, որոնք օգտվում էին նրանից, ինչ պատրաստված էր իրենց համար։

Աննան տանտիկին էր խոսակցությունը վարելու գործում միայն։ Եվ այդ խոսակցությունը, տանտիկնոջ համար չափազանց դժվար՝ փոքրիկ սեղանի շուրջը, այնպիսի մարդկանց

ներկայությամբ, ինչպես կառավարիչն ու ճարտարապետը, բոլորովին այլ աշխարհի մարդիկ, որոնք աշխատում էին չքաշվել իրենց համար անսովոր փարթամությունից և որոնք անկարող էին երկար ժամանակ մասնակցել ընդհանուր խոսակցությանը,— այդ դժվար խոսակցությունն Աննան վարում էր իրեն հատուկ տակտով, բնականությամբ և նույնիսկ բավականությամբ, ինչպես նկատում էր Դարյա Ալեքսանդրովնան։

Խոսք բացվեց այն մասին, թե ինչպես Տուշկևիչն ու Վեսլովսկին գնում էին մակույկով, և Տուշկևիչն սկսեց պատմել վերջին վազքամրցումների մասին՝ Պետերբուրգի նավազակումբում։ Բայց Աննան, սպասելով ընդմիջմանը, անմիջապես դիմեց ճարտարապետին, որպեսզի նրան հանի լռությունից։

— Նիկոլայ Իվանովիչը զարմացել էր,— ասաց նա Սվիյաժսկու մասին,— թե ինչպե՛ս աճել է նոր շինարարությունն այն օրից հետ, երբ նա եղել էր այստեղ վերջին անգամ, բայց ես ինքս ամեն օր լինում եմ և յուրաքանչյուր օր զարմանում, թե ինչպես արագ առաջ է գնում։

— Նորին պայծառափայլության հետ լավ է աշխատելը,— ասաց ճարտարապետը ժպտալով (նա գտնվում էր իր արժանապատվության գիտակցության մեջ, հարգալից ու հանգիստ մարդ)։— Նահանգական իշխանավորների հետ գործ ունենալու նման չէ։ Այնտեղ, ուր մի ամբողջ օրմա թուղթ կգրոտեին, ես զեկուցում եմ կոմսին, խորհրդակցում ենք, և երկու-երեք խոսքով վերջացնում։

— Ամերիկյան պրիոմներ,— ասաց Սվիյաժսկին ժպտալով։

— Այո՛, այնտեղ շենքերը բարձրացնում են ռացիոնալ կերպով...

Խոսակցությունն անցավ իշխանավորների չառարկություններին Միացյալ Նահանգներում, բայց Աննան անմիջապես այն շուռ տվեց ուրիշ թեմայի շուրջը, որպեսզի կառավարչին հանի լռությունից։

— Դու երբևիցե տեսե՞լ ես հնձի մեքենաներ,— դարձավ նա Դարյա Ալեքսանդրովնային։— Մենք գնացել էինք նայելու, երբ հանդիպեցինք քեզ։ Ես ինքս առաջին անգամ էի տեսնում։

— Ինչպե՞ս են գործում նրանք,— հարցրեց Դոլլին։

— Միանգամայն այնպես, ինչպես մկրատը։ Մի տախտակ և բազմաթիվ մանր մկրատներ։ Ա՜յ, այսպես։

Աննան իր գեղեցիկ, սպիտակ, մատանիներով պատած ձեռքերով վերցրեց դանակ-պատառաքաղը և սկսեց ցույց տալ։ Նա հայտնապես տեսնում էր, որ իր բացատրությունից ոչինչ չի հասկացվի, բայց, իմանալով, որ ինքը խոսում է հաճելի և որ իր ձեռքերը գեղեցիկ են, շարունակում էր բացատրությունը։

— Ավելի շուտ՝ գրչահատներ են,— ասաց նրանից աչք չհեռացնող Վեսլովսկին, կատակելով։

Աննան հազիվ նկատելի ժպտաց, բայց չպատասխանեց նրան։— Մկրատի նման, անյպես չէ՞, Կարլ Ֆյոդորիչ,— դիմեց նա կառավարչին։

— O ja,— պատասխանեց գերմանացին։— Es ist ein ganz einfaches Ding[1]։— Եվ նա սկսեց բացատրել Աննային մեքենայի կազմությունը։

— Ափսո՞ս, որ այդ մեքենան չի կապում։ Ես տեսա Վիեննայի ցուցահանդեսում, կապում է երկաթալարով,— ասաց Սվիյաժսկին։— Դրանք ավելի շահեկան կլինեին։

— Es kommt drauf an... Der Preis vom Draht muss ausgerechnet werden.— Եվ լռությունից հանված գերմանացին դիմեց Վռոնսկուն։— Das lässt sich ausrechnen, Erlaucht[2].— Գերմանացին ձեռքը տարավ դեպի գրպանը, ուր գտնվում էր նրա մատիտը գրքույկի մեջ, որտեղ նա բոլորը հաշված ուներ, բայց հիշելով, որ նստած է ճաշի և նկատելով Վռոնսկու սառը հայացքը, հրաժարվեց։— Zu complicirt, macht zu viel Klopot[3],— եղրափակեց նա։

— Wünscht man Dochots, so hat man auch Klopots.— ասաց Վասենկա Վեսլովսկին, ծիծաղելով գերմանացու վրա։— J'adore l'allemand[4],— դիմեց նա միևնույն ժպիտով Աննային։

[1] Օ՜, այո՛։ Դա շատ պարզ իր է։

[2] Բանն այն է... Պետք է հաշվել երկաթալարի արժեքը։— Այդ կարելի է հաշվել, ձերդ պայծառափայլություն։

[3] Դա չափազանց բարդ բան է, մեծ գլխացավանք է պատճառում։

[4] Ով ուզում է եկամուտ ունենալ, պետք է ունենա և մեծ գլխացավանք։ Սիրում եմ գերմանական լեզուն։

— Cessez[1],— ասաց Աննան նրան կատակեն-խիստ։

— Իսկ մենք կարծում էինք, որ ձեզ կգտնենք դաշտում, Վասիլի Սեմյոնիչ,— դիմեց Աննան բժշկին, որ հիվանդոտ մարդ էր,— դուք այնտե՞ղ էիք։

— Ես այնտեղ էի, բայց չքվեցի,— մռայլ կատակով պատասխանեց բժիշկը։

— Ուրեմն դուք լավ մացիոն եք կատարել։

— Հիանալի՞։

— Իսկ ինչպե՞ս է պառավի առողջությունը, հուսամ, որ տիֆ չէ։

— Տիֆը՝ տիֆ չէ, բայց դրանից էլ լավ բան չէ։

— Ափսո՞ս,— ասաց Աննան և այդպիսով քաղաքավարության տուրք տալով տնեցիներին, դիմեց յուրայիններին։

— Բայց և այնպես դժվար կլիներ մեքենա շինել ըստ ձեր պատմածի, Աննա Արկադևնա,— ասաց Սվիյաժսկին կատակով։

— Ո՜չ, ինչո՞ւ,— ասաց Աննան ժպիտով. այդ ժպիտն ասում էր, թե նա գիտեր, որ մեքենայի կազմության մասին տված իր բացատրությունն ուներ իր մեջ համակրելի մի բան, որը նկատել էր նաև Սվիյաժսկին։ Ջահել կոկետության այդ նոր գիծն անհաճո կերպով զարմացրեց Դոլլիին։

— Դրա փոխարեն, զարմանալի է Աննա Արկադևնայի իմացությունը ճարտարապետության մեջ,— ասաց Տուշկևիչը։

— Ինչպե՞ս չէ, ես լսեցի, երեկ Աննա Արկադևնան ասում էր. առասան ու պլինթներ,— ասաց Վեսլովսկին։— Ճիշտ չե՞մ ասում։

— Զարմանալի ոչինչ չկա, երբ մարդ այնքան տեսնում ու լսում է,— ասաց Աննան։— Իսկ դուք, հավանորեն, չգիտեք, թե ինչի՞ց են տուն շինում։

Դարյա Ալեքսանդրովնան տեսնում էր, որ Աննան դժգոհ էր աղատաշխույժ այն տոնից, որը կար նրա և Վեսլովսկու միջև, բայց ինքն ակամա ընկնում էր այդ տոնի մեջ։

Վռոնսկին այս դեպքում վարվում էր բնավ ո՛չ այնպես, ինչպես Լևինը։ Նա, հայտնապես, ո՛չ մի կարևորություն չէր

[1] Դադարեցեք։

տալիս Վեսլովսկու շաղակրատանքին, ընդհակառակն՝ քաջալերում էր այդ կատակները։

— Այո՛, հապա ասեք, Վեսլովսկի, թե ինչո՞վ են միացնում քարերը։

— Իհարկե, ցեմենտով։

— Բռա՜վո. իսկ ի՞նչ բան է ցեմենտը։

— Ջրցեխի պես մի բան... ո՛չ, ծեփանի պես,— ասաց Վեսլովսկին, հարուցելով ընդհանուր քրքիջ։

Խոսակցությունը, երբեմն սայթաքելով, երբեմն կարթկելով ու դիպչելով մեկն ու մեկի սրտի նուրբ թելին, չէր դադարում ճաշողների միջև, բացառությամբ մոայլ լռության մեջ խորասուզված բժշկի, ճարտարապետի և կառավարչի։ Մի անգամ Դարյա Ալեքսանդրովնան խորապես առնվեց ու այնպես տաքացավ, որ նույնիսկ կարմրեց և հետո արդեն միտք էր անում, հո ավելորդ և անախորժ բան չասաց։ Սվիյաժսկին խոսեց Լևինի մասին, պատմելով նրա տարօրինակ դատողությունն այն առթիվ, որ մեքենաները ռուսական տնտեսության մեջ վնասակար են միայն։

— Ես պատիվ չունեմ ճանաչելու այդ պարոն Լևինին,— ժպտալով ասաց Վրոնսկին,— բայց երևի նա երբեք չի տեսել այդ մեքենաները, որոնք դատապարտում է։ Իսկ եթե տեսել ու փորձել է, ապա՝ հենց այնպես, մի կերպ, այն էլ ո՛չ արտասահմանյան մեքենաներ, այլ ինչ-որ ռուսական։ Իսկ ի՞նչ հայացքների մասին կարող է խոսք լինել այստեղ։

— Առհասարակ տաճկական հայացքներ,— ժպիտով ասաց Վեսլովսկին, դիմելով Աննային։

— Ես չեմ կարող պաշտպանել նրա դատողությունները,— բռնկվելով ասաց Դարյա Ալեքսանդրովնան,— բայց կարող եմ ասել, որ նա շատ կրթված մարդ է, և եթե նա լիներ այստեղ, նա կիմանար, թե ի՞նչ պատասխանի ձեզ, իսկ ես չեմ կարողանում։

— Ես նրան շատ սիրում եմ, և մենք մոտ բարեկամներ ենք,— ասաց Սվիյաժսկին բարեսրտորեն ժպտալով։— Mais pardon, il est un petit peu tuqué[1], օրինակ, նա պնդում է, որ թե՛ զեմստվոն, թե՛ հաշտարար դատարանները՝ բոլորն էլ հարկավոր չեն, և ո՛չ մի բանի չի ուզում մասնակցել։

[1] Բայց ներեցեք, նա մի քիչ տարօրինակ է։

— Այդ մեր ռուսական տնտարբերությունն է,— ասաց Վրոնսկին, սառը գրաֆինից ջուրը լցնելով ոտնակավոր բարակ բաժակի մեջ,— չզգալ այն պարտավորությունը, որ դնում են մեզ վրա մեր իրավունքները, այս իսկ պատճառով բացասել այդ պարտավորությունները։

— Ես չեմ ճանաչում ուրիշ ավելի խիստ մարդ՝ իր պարտավորությունները կատարելու գործում,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, զրգռված Վրոնսկու գերազանցության այդ տոնից։

— Ես, ընդհակառակն,— շարունակեց Վրոնսկին, մի տեսակ, կարծես առնված այդ խոսակցությունից,— ես, ընդհակառակն, այնպես, ինչպես տեսնում եք ինձ, շատ շնորհապարտ եմ այն պատվի համար, որ ցույց տվին ինձ, շնորհիվ Նիկոլայ Իվանիչի (նա նշեց Սվիյաժսկուն), ընտրելով ինձ պատվավոր հաշտարար դատավոր։ Ես կարծում եմ, համագումար գնալու, մուժիկի ձիուն վերաբերող գործը քննարկելու պարտավորությունն ինձ համար նույնքան կարևոր է, ինչպես և այն բոլորը, որ կարող եմ անել։ Ու ես պատիվ կհամարեմ, եթե ինձ ընտրեն ձայնավոր։ Ես դրանով միայն կարող եմ հատուցել այն օգուտների փոխարեն, որոնցից օգտվում եմ, որպես կալվածատեր։ Դժբախտաբար, չեն հասկանում այն նշանակությունը, որ պիտի ունենան խոշոր կալվածատերերը պետության մեջ։

Դարյա Ալեքսանդրովնայի համար տարօրինակ էր լսել, թե ինչպես Վրոնսկին հանգիստ էր իր իրավացի լինելու մեջ՝ իր տանը՝ իր սեղանի շուրջը։ Դոլլին հիշեց, թե ինչպես Լևինը, որ հակառակն էր մտածում, նույնպես վճռական էր իր դատողություններում՝ իր տանը՝ իր սեղանի շուրջը։ Բայց նա սիրում էր Լևինին, այդ պատճառով նրա կողմն էր։

— Ուրեմն, մենք կարող ենք հույս դնել ձեզ վրա, կոմս, հետևյալ համագումարին,— ասաց Սվիյաժսկին։— Սակայն հարկավոր է գնալ ավելի շուտ, որպեսզի ութին արդեն լինեք այնտեղ։ Եթե դուք պատիվ անեիք ինձ և գայիք ինձ մոտ։

— Իսկ ես մի փոքր համաձայն եմ քո beau- frére-ին[1],— ասաց Աննան։— Միայն ո՛չ այնպես, ինչպես նա,— ավելաց-

[1] Անհրաժեշտ։

րեց Աննան ծպիտով։— Ես վախենում եմ, արդյոք վերջերս չափազանց շատ չե՞ն մեզանում այդ հասարակական պարտավորությունները։ Ինչպես առաջ, երբ այնքան շատ չինովնիկներ կային, որ ամեն տեսակ գործի համար հարկավոր էր մի չինովնիկ, հիմա էլ՝ անվերջ հասարակական գործիչներ։ Ալեքսեյն այժմ վեց ամիս է, ինչ այստեղ է և արդեն, կարծեմ, հինգ թե վեց հասարակական հիմնարկների անդամ է՝ հոգաբարձություն, դատավոր, ձայնավոր, երդվյալ ատենակալ, ինչոր ձիական։ Du train que cela va[1], ամբողջ ժամանակը կկորչի դրա վրա։ Եվ ես վախենում եմ, որ այդքան բազմաթիվ գործերի դեպքում՝ այդ լոկ ձև է, ձևականություն։ Դուք քանի՞ տեղում եք անդամ, Նիկոլայ Իվանիչ,— դիմեց նա Սվիյաժսկուն,— կարծեմ, քսանից ավելի։

Աննան խոսում էր կատակով, բայց նրա տոնի մեջ զգացվում էր գրգռվածություն։ Այդ անմիջապես նկատեց Դարյա Ալեքսանդրովնան, որ ուշադրությամբ դիտում էր Աննային ու Վրոնսկուն. Նա նկատեց նույնպես, որ այս խոսակցության միջոցին Վրոնսկու դեմքն անմիջապես ընդունեց լուրջ ու համառ արտահայտություն։ Նկատելով այդ և այն, որ իշխանազնուհի Վարվառան անմիջապես, որպեսզի փոխի խոսակցությունը, շտապ խոսեց Պետերբուրգի ծանոթների մասին, և մտաբերելով այն, ինչ Վրոնսկին ո՛չ ի դեպ ասում էր այգում իր գործունեության մասին, Դոլլին հասկացավ, որ հասարակական գործունեության այդ հարցի հետ կապվում էր ինչ-որ ինտիմ վեճ Աննայի և Վրոնսկու միջև։

Ճաշը, գինին, սեղանի պարագաները՝ այս բոլորը շատ լավ էր, բայց այս բոլորն այնպես էր, ինչպես Դարյա Ալեքսանդրովնան տեսել էր հրավիրաճաշերի և պարահանդեսների ժամանակ և որոնց նա այժմ սովոր չէր, և որոնց հատուկ էր դիմազրկության ու լարվածության միևնույն բնույթը. ուստի սովորական օրում և փոքրիկ շրջանում այս բոլորը նրա վրա թողեց անախորժ տպավորություն։

Ճաշից հետո նստեցին տեռասում։ Հետո սկսեցին խաղալ lawn tennis[2]։ Խաղացողները, բաժանվելով երկու խմբի, կանգնեցին խնամքով հավասարեցրած ու տոփած կրոկետ-հրապարակում, ոսկեզօծ սյուների վրա քաշած ցանցի երկու կողմում։ Դարյա Ալեքսանդրովնան փորձեց խաղալ, բայց երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ խաղը, իսկ երբ հասկացավ, այնպես հոգնեց, որ նստեց իշխանազնուհի Վարվառայի հետ և միայն նայում էր խաղացողներին։ Նրա խաղընկեր Տուշկևիչը նույնպես մի կողմ քաշվեց. բայց մնացածները երկար ժամանակ շարունակում էին խաղը։ Սվիյաժսկին ու Վրոնսկին խաղում էին շատ լավ և լուրջ։ Նրանք աչալուրջ հետևում էին դեպի իրենց ձգած խաղագնդակին, առանց շտապելու և առանց հապաղելու, ճարպկորեն մոտ էին վազում նրան, սպասում էին խաղագնդակի վեր ցատկումին և ռակետով դիպուկ ու ճիշտ տալով, այն գցում էին ցանցի ետևը։ Վեսլովսկին մյուսներից ավելի վատ էր խաղում։ Նա չափազանց տաքանում էր բայց դրա փոխարեն՝ իր ուրախությամբ ոգևորում էր խաղացողներին։ Նրա ծիծաղն ու բացականչությունները անլռելի էին։ Նա հանեց, ինչպես և մյուս տղամարդիկ, կանանց թույլտվությամբ, սյուրտուկը, և նրա խոշոր գեղեցիկ ֆիգուրը շապկի սպիտակ թևերով, կարմիր, քրտնած դեմքով ու նրա թափով շարժումներն ինքնին մեխվում էին դիտողի հիշողության մեջ։

Երբ Դարյա Ալեքսանդրովնան այդ գիշեր պառկեց քնելու, հենց որ փակում էր աչքերը, տեսնում էր կրոկետ-հրապարակում այս ու այն կողմ վազվզող Վասենկա Վեսլովսկուն։

Խաղի ժամանակ Դարյա Ալեքսանդրովնայի համար ուրախ չէր։ Նրան դուր չէր գալիս խաղի ընթացքում շարունակվող ազատ-աշխույժ հարաբերությունն Աննայի և Վասենկա Վեսլովսկու միջև. դուր չէր գալիս նաև մեծերի այն ընդհանուր անբնականությունը, երբ նրանք մենակ, առանց երեխաների, խաղում էին մանկական խաղ։ Բայց, որպեսզի մյուսների տրամադրությունը չփչացնի և մի կերպ ժամանակն անցկացնի, հանգստանալուց հետո նա միացավ խաղին ու ձևանում էր, իբր ուրախ է իր համար։ Այդ ամբողջ օրը նրան թվում էր, որ ինքը խաղում է թատրոնում իրենից լավ դերասանների հետ և, որ իր վատ խաղը փչացնում է ամբողջ գործը։

Նա եկավ երկու օր մնալու մտադրությամբ, եթե սրտին գար մնալը։ Բայց հենց երեկոյան, խաղի ժամանակ, նա

[1] Շնորհիվ կյանքի այդ եղանակի։
[2] Լաուն-թենիս։

վճռեց, որ վաղը ետ կդառնա։ Մայրական տանջալից այն հոգսերը, որ նա այնպես ատում էր ճանապարհին, այժմ, առանց դրանց անցկացրած օրից հետո, պատկերանում էին նրան արդեն ուրիշ լույսի տակ և ձգում, քաշում էին նրան դեպի իրենց։

Երեկոյան թեյից ու նավակով գիշերային զբոսանքից հետո, երբ Դարյա Ալեքսանդրովնան մենակ մտավ իր սենյակը, հանեց զգեստը և նստեց սանրելու իր նոսր մազերը՝ գիշերվա համար, նա մեծ թեթևություն զգաց։

Դոլլիի համար նույնիսկ անախորժ էր մտածելը, որ Աննան հիմա կգա իր մոտ։ Նա ուզում էր մենակ մնալ իր մտքերի հետ։

XXIII

Դոլլին արդեն ուզում էր պառկել, երբ Աննան գիշերային հագուստով մտավ նրա մոտ։

Օրվա ընթացքում Աննան մի քանի անգամ սկսեց խոսել սրտագին գործերի մասին և ամեն անգամ, ասելով մի քանի խոսք, կանգ էր առնում։ «Հետո՛, առանձին կխոսենք ամեն ինչի մասին։ Ես այնքա՞ն բան ունեմ ասելու քեզ»,— ասում էր նա։

Այժմ նրանք առանձին էին, և Աննան չգիտեր, թե ինչի՞ մասին խոսի։ Նա նստել էր պատուհանի մոտ, նայելով Դոլլիին ու պրպտելով իր հիշողության մեջ իրեն անսպառ թվացող խոսակցությունների պաշարը, ոչինչ չէր գտնում։ Նրան թվում էր այդ րոպեին, որ ամեն բան արդեն ասված է։

— Ինչպե՞ս է Կիտին,— ասաց նա, ծանր հառաչելով ու հանցավորի պես նայելով Դոլլիին։— Ճիշտն ասա ինձ, Դոլլի։ Նա չի՞ բարկանում ինձ վրա։

— Բարկանո՞ւմ։ Ո՛չ,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, ժպտալով։

— Բայց ատո՞ւմ է, արհամարհո՞ւմ է։

— Օ՜, ո՛չ։ Սակայն դու գիտես, որ այդպիսի բանը չի ներվում։

— Այո՛, այո՛,— շուռ գալով ու նայելով բաց պատուհանից դուրս, ասաց Աննան։— Բայց ես մեղավոր չէի։ Եվ ո՞վ

է մեղավոր։ Ի՞նչ բան է մեղավոր ասածդ։ Մի՞թե կարող էր այլ կերպ լինել։ Ասա՛, ի՞նչ ես կարծում դու։ Կարո՞ղ էր արդյոք պատահել, որ դու չլինեիր Ստիվայի կինը։

— Ճիշտն ասած, չգիտեմ։ Բայց ահա թե ի՞նչ ասա դու ինձ...

— Այո՛, այո՛, սակայն մենք չվերջացրինք Կիտիի մասին։ Նա բախտավո՞ր է։ Ասում են Լևինը հիանալի մարդ է։

— Քիչ է ասել, թե հիանալի մարդ է։ Ես չգիտեմ նրանից ավելի լավ մարդ։

— Ա՜խ, որքա՜ն ուրախ եմ։ Ես շատ ուրախ եմ։ Քիչ է ասել, թե հիանալի մարդ է,— կրկնեց նա։

Դոլլին ժպտաց։

— Բայց դու պատմիր ինձ քո՛ մասին։ Ես երկար խոսակցություն ունեմ քեզ հետ։ Մենք խոսեցինք...— Դոլլին չգիտեր, թե ինչպե՛ս անվանի Վրոնսկուն։ Նա անհարմար էր զգում իրեն՝ նրան անվանել կոմս, նույնպես՝ Ալեքսեյ Կիրիլիչ։

— Ալեքսեյի հետ,— ասաց Աննան,— ես գիտեմ, որ դուք խոսում էիք։ Բայց ես ուզում էի ուղղակի հարցնել քեզ, թե ի՞նչ ես մտածում դու ի՛մ մասին, իմ կյանքի մասին։

— Ինչպե՞ս ասեմ այդպես հանկարծ։ Իսկապես, չգիտեմ։

— Այսուամենայնիվ, ասա՛ ինձ... դու տեսնում ես իմ կյանքը։ Բայց դու մի՛ մոռանա, որ մեզ տեսնում ես ամառը, երբ դու եկար, և մենք մենակ չենք... Սակայն մենք եկանք այստեղ վաղ գարնանը, ապրում էինք բոլորովին մենակ ու կապրենք մենակ, և դրանից ավելի լավ բան ես չեմ ցանկանում ոչինչ։ Բայց երևակայիր, որ ես ապրում եմ մենակ՝ առանց նրա, մենակ. և այդ կլինի... Ես տեսնում եմ ամեն ինչից, որ այդ հաճախ պիտի կրկնվի, որ նա իր ժամանակի կեսը կանցկացնի տանից դուրս,— ասաց Աննան, վեր կենալով ու նստելով Դոլլիին ավելի մոտ։— Հասկանալի բան է,— ընդհատեց նա Դոլլիին, որն ուզում էր առարկել,— հասկանալի բան է, որ ես ուժով չեմ կարող պահել նրան։ Ես չեմ էլ պահում։ Այսօր ձիարշավ է, արշավում են նրա ձիերը, նա գնում է։ Շատ ուրախ եմ։ Բայց դու մտածիր ի՛մ մասին, երևակայիր քեզ ի՛մ վիճակում... Է՜հ, ի՞նչ կարիք կա խոսելու այդ մասին։— Աննան ժպտաց։— Ուրեմն, ինչի՞ մասին էր խոսում քեզ հետ Ալեքսեյը։

— Նա խոսում էր այն բանի մասին, ինչի մասին ես ի՛նքս եմ ուզում խոսել, և ինձ համար հեշտ է լինել նրա փաստաբանը։ Խոսում էր այն մասին, թե չկա՞ արդյոք հնարավորություն և չի՞ կարելի արդյոք...— Դարյա Ալեքսանդրովնան դեմ ընկավ,— ուղղել, բարելավել քո դրությունը... Դու գիտես, թե ինչպե՛ս եմ ես նայում... Բայց և այնպես, եթե հնարավոր է, պետք է ամուսնանալ...

— Այսինքն՝ ապահարզա՞ն,— ասաց Աննան։ — Դու գիտե՞ս, միակ կինը, որ եկավ ինձ մոտ Պետերբուրգում, Տվերսկայա Բետսին էր։ Դու նրան ճանաչում ես։ Au fond c'est la femme la plus dépravée qui existe[1]։ Նա սիրային կապ ուներ Տուշկևիչի հետ, ամենագարշելիորեն խաբելով իր ամուսնուն։ Եվ նա ինձ ասաց, որ չի ուզում ճանաչել ինձ, քանի դեռ իմ դրությունը կլինի անկանոն։ Մի՛ կարծիր, որ ես համեմատեցի... Ես ճանաչում եմ քեզ, հոգյակս։ Բայց ես ակամա հիշեցի... Դե՛, ուրեմն ի՞նչ ասաց քեզ Ալեքսեյը,— կրկնեց նա։

— Նա ասաց, որ տանջվում է քե՛զ համար և իր համար։ Գուցե դու ասես, որ դա էգոիզմ է, բայց դա այնպե՛ս օրինական և ազնիվ էգոիզմ է։ Նա ուզում է, նախ՝ օրինականացնել իր աղջկան ու լինել քո ամուսինը, իրավունք ունենալ քեզ վրա։

— Ի՞նչ կին, ի՞նչ ստրկուհի կարող է լինել այդ աստիճանի ստրկուհի, ինչպես ե՛ս եմ իմ վիճակում,— ընդհատեց Աննան մռայլ։

— Իսկ գլխավորը, որ նա ուզում է... նա ուզում է, որ դու չտանջվես։

— Այդ անհնարին է։ Հետո՞։

— Հետո՛, և ամենաօրինական բանը. նա ուզում է, որ ձեր երեխաներն ունենան ազգանուն։

— Ի՞նչ երեխաներ,— ասաց Աննան, առանց նայելու Դոլլիին և կկոցելով աչքերը։

— Անին և ապագա երեխաները...

— Այս առթիվ նա կարող է հանգիստ լինել, ես այլևս երեխաներ չեմ ունենա։

[1] Ըստ էության, դա չափազանց անբարոյական կին է։

— Ինչպե՞ս կարող ես դու ասել, որ չես ունենա...

— Չեմ ունենա, որովհետև չեմ ուզում։

Եվ, չնայած իր ամբողջ հուզմունքին, Աննան ժպտաց, նկատելով Դոլլիի դեմքին հետաքրքրության, զարմանքի և սարսափի արտահայտություն։

— Բժիշկն ասաց ինձ, իմ հիվանդությունից հետո։

. . . . . .

— Չի կարող պատահել,— ասաց Դոլլին, աչքերը լայն բանալով։ Նրա համար դա մեկն էր այն հայտնություններից, որոնց հետևանքներն ու եզրակացություններն այնքան հրեշային են, որ առաջին րոպեին զգացվում է միայն, թե չի կարելի այս բոլորը հասկանալ, բայց այդ մասին պետք է շատ ու շատ մտածել։

Այդ հայտնությունը, որ հասկանալի դարձրեց Դոլլիի համար մինչ այդ անհասկանալի բոլոր այն ընտանիքները, որտեղ կային միայն մեկ կամ երկու երեխաներ, առաջ բերեց նրա մեջ այնքան մտքեր, խոհեր ու իրար հակադիր զգացումներ, որ նա չկարողացավ ոչինչ ասել ու միայն լայն բացված աչքերով զարմացած նայում էր Աննային։ Այդ հենց այն էր, որի մասին նա տենչում էր, բայց հիմա իմանալով, որ դա հնարավոր է, սարսափեց։ Նա զգում էր, որ այդ չափազանց պարզ լուծումն էր չափազանց բարդ հարցի։

— N'est ce pas immoral?[1],— ասաց նա միայն, քիչ լռությունից հետո։

— Ինչո՞ւ։ Մտածի՛ր, տե՛ս, ես պիտի ընտրեմ երկուսից մեկը. կամ լինել հղի, այսինքն՝ հիվանդ, կամ լինել ամուսնուս բարեկամը, ընկերը, միևնույն է՝ ամուսնուս,— ասաց Աննան՝ դիտմամբ մակերեսային ու թեթևամիտ տոնով։

— Դե՛ իհարկե, դե՛ իհարկե,— ասում էր Դարյա Ալեքսանդրովնան, լսելով նույն այն փաստարկները, որ ինքը բերում էր իր համար և նրանց մեջ այլևս չգտնելով առաջվա համոզելիությունը։

— Քեզ համար, ուրիշների համար,— ասում էր Աննան, կարծես գուշակելով նրա մտքերը,— դեռ կարող է կասկածելի լինել. բայց ինձ համար... Հասկացիր, որ ես կինը չեմ, Ալեք-

[1] Մի՞թե դա անբարոյականություն չէ։

սեյը սիրում է ինձ այնքան ժամանակ, քանի դեռ սիրում է։ Եվ ի՞նչ, ինչո՞վ կարող եմ ես պահպանել նրա սերը։ Ահա սրանո՞վ։

Աննան սպիտակ ձեռքերը բոլորաձև մեկնեց փորի առաջ։

Անսովոր արագությամբ, ինչպես այդ լինում է հուզմունքի րոպեներին, մտքերն ու հիշողությունները խոնվեցին Դարյա Ալեքսանդրովնայի գլխում։ «Ես,— մտածում էր նա,— չհրապուրեցի, չկապեցի ինձ հետ Ստիվային. նա ինձնից գնաց ուրիշների մոտ, և առաջին այն կինը, որի համար նա դավաճանեց ինձ, չպահեց նրան իր մոտ նրանով, որ միշտ գեղեցիկ էր և ուրախ։ Ստիվան գցեց նրան ու վերցրեց ուրիշին։ Եվ մի՞թե Աննան դրանով կհրապուրի ու կպահի կոմս Վրոնսկուն։ Եթե Վրոնսկին կփնտրի այդ, ապա կգտնի ավելի հրապուրիչ տուալետներ և ուրախ վարվելաձևեր։ Եվ ինչքան էլ սպիտակ, ինչքան էլ հիանալի են Աննայի մերկ թևերը, ինչքան էլ գեղեցիկ է նրա ամբողջ գեր իրանը, սև մազերի շրջանակի միջից նայող նրա կարմրած դեմքը, Վրոնսկին կգտնի ավելի լավը, ինչպես փնտրում ու գտնում է իմ զզվելի, ողորմելի և սիրելի ամուսինը»։

Դոլլին ոչինչ չպատասխանեց ու միայն հառաչեց։ Աննան նկատեց այդ հառաչը, որ անհամաձայնության արտահայտիչ էր, և շարունակեց։ Նա իր պահեստում ուներ էլի փաստարկներ, անյքան ուժեղ, որ ոչինչ չէր կարելի պատասխանել նրանց։

— Դու ասում ես, որ այդ լավ չէ՞։ Բայց պետք է դատել,— շարունակեց նա։ — Դու մոռանում ես իմ դրությունը։ Ինչպե՞ս կարող եմ ես ցանկանալ երեխաներ։ Ես չեմ ասում տառապանքների մասին, ես դրանցից չեմ վախենում։ Մտածիր, թե ո՞վ են լինելու իմ երեխաները։ Դժբախտ երեխաներ, որոնք պիտի կրեն ուրիշի ազգանունը։ Իրենց ծննդյամբ հենց նրանք դրված կլինեն մորից, հորից, իրենց ծնունդից ամաչելու անհրաժեշտության մեջ։

— Չէ՞ որ հենց դրա համար է հարկավոր ապահարզանը։

Բայց Աննան չէր լսում նրան։ Նա ուզում էր ասել, վերջացնել այն փաստարկները, որոնցով այնքան անգամ համոզել էր ինքն իրեն։

— Էլ ինչի՞ համար է ինձ բանականություն տրված, որ ես

այն չգործադրեմ, որպեսզի լույս աշխարհ չբերեմ դժբախտ արարածներ։

Նա նայեց Դոլլիին, սակայն, առանց սպասելու պատասխանի, շարունակեց.

— Ես ինձ միշտ հանցավոր կզգայի այդ դժբախտ երեխաների առաջ,— ասաց նա։ — Եթե նրանք չկան, համենայն դեպս՝ դժբախտ չեն, իսկ եթե նրանք դժբախտ են, ապա ե՞ս եմ միայն հանցավոր դրանում։

Դրանք նույն այն փաստարկներն էին, որ Դարյա Ալեքսանդրովնան բերում էր ինքն իր համար, բայց նա հիմա լսում էր դրանք ու չէր հասկանում։ «Մարդ ինչպե՞ս կարող է հանցավոր լինել գոյություն չունեցող արարածների առաջ»։ Եվ հանկարծ նրա գլուխը եկավ մի միտք. կարո՞ղ էր արդյոք որևէ դեպքում ավելի լավ լինել իր սիրելի Գրիշայի համար, եթե նա երբեք գոյություն չունենար։ Եվ այդ Դոլլիին թվաց այնպես վայրենի, այնպես տարօրինակ, որ նա գլուխը ցնցեց, որպեսզի ցրի պտույտ եկող խելագար մտքերի այդ խառնափնթորությունը։

— Ո՛չ, ես չգիտեմ, դա լավ չէ,— ասաց նա միայն՝ դեմքին գարշանքի արտահայտություն։

— Այո՛, բայց դու մի մոռանա, թե ո՛վ ես դու և ո՛վ եմ ես... Ու բացի դրանից,— ավելացրեց Աննան, կարծես, այսուամենայնիվ կասկածելով, որ դա լավ չէ, չնայած իր փաստարկների հարստությանը և Դոլլիի փաստարկների աղքատությանը,— դու մի՛ մոռանա գլխավորը. ես այժմ գտնվում եմ ո՛չ այն դրության մեջ, ինչպես դու։ Քեզ համար հարց է՝ արդյոք ուզո՞ւմ ես դու այլևս չունենալ երեխաներ, իսկ ինձ համար հարց է՝ արդյոք ուզո՞ւմ եմ ես ունենալ երեխաներ։ Եվ տարբերությունը մեծ է։ Հասկանո՞ւմ ես, որ իմ վիճակում ես չեմ կարող այդ բանը ցանկանալ։

Դարյա Ալեքսանդրովնան չէր առարկում։ Նա հանկարծ զգաց, որ ինքն արդեն այնքան հեռացավ Աննայից, որ իրենց միջև գոյություն ունեն հարցեր, որոնց խնդրում իրենք երբեք համաձայնության չեն գա և որոնց մասին ավելի լավ է չխոսել։

XXIV

— Ուրեմն առավել ևս հարկավոր է, որ դու կարգավորես քո դրությունը, եթե հնարավոր է,— ասաց Դոլլին։

— Այո՛, եթե հնարավոր է,— ասաց Աննան հանկարծ բոլորովին ուրիշ, հանդարտ ու տխուր ձայնով։

— Մի՞թե հնարավոր չէ ապահարզանը։ Ինձ ասում էին, որ քո ամուսինը համաձայն է։

— Դոլլի։ Ես չեմ ուզում խոսել այդ մասին։

— Լա՛վ, չխոսենք,— շտապ ասաց Դարյա Ալեքսանդրովնան, նկատելով Աննայի դեմքին տանջանքի արտահայտություն։ — Ես տեսնում եմ միայն, որ դու մոայլ ես տրամադրված։

— Բնավ երբեք։ Ես շատ ուրախ եմ ու գոհ։ Դու տեսար։ Je fait des passions[1]. Վեսլովսկին...

— Այո՛, եթե թույլ կտաս ճիշտն ասել, ինձ դուր չեկավ Վեսլովսկու տոնը,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան, կամենալով փոխել խոսակցությունը։

— Ա՜խ, ամենևին։ Դա խտուտ է անում Ալեքսեյին, ուրիշ ոչինչ. բայց Վեսլովսկին երեխա է ու ամբողջապես իմ ձեռքին, հասկանո՞ւմ ես դու, ես խաղացնում եմ նրան, ինչպես ուզում եմ։ Նա նույնն է, ինչ որ քո Գրիշան... Դոլլի,— հանկարծ խոսքը փոխեց Աննան,— դու ասում ես, որ ես մոայլ եմ։ Դու չես կարող հասկանալ։ Դա սոսկալի է։ Ես աշխատում եմ բնավ չմտածել։

— Բայց ինձ թվում է, պետք է։ Պետք է անել բոլորը, ինչ կարելի է։

— Սակայն ինչ, ինչ կարելի է անել։ Ոչի՛նչ։ Դու ասում ես, որ պիտի ամուսնանալ Ալեքսեյի հետ, և որ ես չեմ մտածում դրա մասին։ Ես չե՞մ մտածում դրա մասին,— կրկնեց նա ու կարմրություն դուրս տվեց նրա դեմքին։ Նա վեր կացավ, ուղղեց կուրծքը, ծանր հառաչեց և սկսեց իր թեթև քայլերով գնալ-գալ սենյակում, երբեմն կանգ առնելով։ Ես չե՞մ մտածում։ Չկա մի օր, մի ժամ, երբ ես չմտածեի և չհանդիմանեի ինքս ինձ այն բանի համար, ինչ մտածում եմ... որովհետև

[1] Ես հաջողություն ունեմ։

այդ մասին մտքերը կարող են խելագարեցնել։ Խելագարեցնե՛լ,— կրկնեց նա։ — Երբ ես մտածում եմ այդ մասին, արդեն քնել չեմ կարողանում առանց մորֆիի։ Է՛, լավ։ Խոսենք հանգիստ։ Ինձ ասում են՝ ապահարզան։ Նախ՝ նա ապահարզան չի տա ինձ։ Նա այժմ գտնվում է կոմսուհի Լիդիա Իվանովնայի ազդեցության տակ։

Դարյա Ալեքսանդրովնան, ուղիղ ձգված աթոռին, տանջալից կարեկցական դեմքով հետևում էր քայլող Աննային, գլուխը շուռ տալով նրա ուղղությամբ։

— Հարկավոր է փորձել,— ասաց նա կամաց։

— Ենթադրենք, թե պետք է փորձել։ Ի՞նչ է նշանակում այդ,— ասաց Աննան հավանաբար այն միտքը, որ հազար անգամ մտածել էր, կշռադատել ու սերտել անգիր։ — Այդ նշանակում է, ես, որ ատում եմ նրան, բայց և այնպես հանցավոր եմ զգում ինձ նրա առաջ, ես նրան համարում եմ մեծահոգի, պետք է նվաստանամ ու գրեմ նրան... է՜հ, ենթադրենք, ես ուժ գործ դրի վրաս և արի այդ բանը։ Ես կստանամ կամ վիրավորական պատասխան, կամ համաձայնություն։ Լավ, ես ստացա համաձայնություն... — Աննան այդ ժամանակ սենյակի հեռավոր անկյունում էր և կանգ առավ այնտեղ, ինչ-որ բան անելով լուսամուտի վարագույրի հետ։ — Ես կստանամ համաձայնություն, իսկ որ... որդո՞ւս։ Չէ՞ որ նրանք որդուս չե՛ն տա ինձ։ Չէ՞ որ որդիս կմեծանա, արհամարհելով ինձ, հոր մոտ, որին թողեցի ես։ Հասկացիր, որ ես սիրում եմ, կարծես՝ հավասար կերպով, բայց ավելի, քան ինքս ինձ, երկու էակի՝ Սերյոժային և Ալեքսեյին։

Նա եկավ-հասավ սենյակի մեջտեղը ու կանգնեց Դոլլիի դիմաց, ձեռքերով սեղմելով կուրծքը։ Սպիտակ պենյուարի մեջ նրա ֆիգուրը ավելի մեծ ու լայն էր թվում։ Նա գլուխը կախեց ու աննկատելի, թաց փայլուն աչքերով նայում էր փոքրիկ, նիհար և իր կարկատած կոֆտայով ու գիշերային չեպչիկով խղճուկ՝ հուզմունքից ամբողջ մարմնով դողացող Դոլլիին։

— Ես սիրում եմ միայն այս երկու էակներին, և սրանցից մեկը բացասում է մյուսին։ Ես չեմ կարող նրանց միացնել, իսկ ինձ միայն այդ է պետք։ Եվ եթե այդ չկա, ապա բոլորը միևնույն է։ Բոլորը, բոլորը միևնույն է։ Ու մի կերպ կվերջա-

նա, այդ իսկ պատճառով չեմ կարողանում, ես չեմ սիրում խոսել այդ մասին։ Այնպես որ դու ինձ մի՛ հանդիմանի, մի՛ դատապարտի ո՛չ մի բանի համար։ Դու քո մաքրությամբ չես կարող հասկանալ այն բոլորը, ինչից տանջվում եմ ես։

Նա մոտեցավ, նստեց Դոլլիի կողքին և հանցավոր հայացքով խորազնին նայելով նրա դեմքին, բռնեց նրա ձեռքը։

— Ի՞նչ ես մտածում։ Ի՞նչ ես մտածում դու իմ մասին։ Դու մի՛ արհամարհիր ինձ։ Ես արժանի չեմ արհամարհանքի։ Ես դժբախտ եմ։ Եթե կա դժբախտ մեկը, դա ե՛ս եմ,— ասաց նա և երեսը շուռ տալով նրանից, լաց եղավ։

Մնալով մենակ, Դոլլին աղոթեց ու մտավ անկողին։ Նա ամբողջ հոգով խղճում էր Աննային այն միջոցին, երբ խոսում էր նրա հետ. բայց այժմ նա չէր կարողանում ստիպել իրեն մտածելու նրա մասին։ Հիշողությունները տան ու երեխաների մասին մի առանձին, նրա համար նոր հմայքով, ինչ-որ նոր փայլով ծագեցին նրա երևակայության մեջ։ Այդ նոր աշխարհը նրան այժմ թվում էր այնքան թանկ ու սիրելի, որ նա ո՛չ մի կերպ չէր ուզում ավելորդ մի օր անցկացնել այդ աշխարհից դուրս և վճռեց, որ վաղն անպայման ետ կդառնա։

Մինչդեռ Աննան, վերադառնալով իր առանձնասենյակը, վերցրեց գավաթը ու կաթեցրեց նրա մեջ մի քանի կաթիլ դեղ, որի կարևոր մասը կազմում էր մորֆինը, և խմելով ու առժամ նստելով անշարժ, հանգստացած և ուրախ ոգով գնաց ննջարան։

Երբ նա մտավ ննջարան, Վրոնսկին ուշադրությամբ նայեց նրան։ Վրոնսկին փնտրում էր այն խոսակցության հետքերը, որը, նա գիտեր, Աննան պետք է ունենար Դոլլիի հետ, այդքան երկար մնալով նրա սենյակում։ Բայց Աննայի հայացքի մեջ, գրգռված-զուսպ և ինչ-որ բան թաքցնող, նա ոչինչ չգտավ, բացի՝ թեպետև իր համար սովորական, բայց տակավին իրեն թողող գեղեցկությունից, Աննայի գիտակցությունից ու ցանկությունից, որպեսզի այդ գեղեցկությունը ներազդի նրա վրա։ Նա չէր ուզում հարցնել Աննային, թե ի՛նչ էին խոսել նրանք, բայց հույս ուներ, որ նա ինքը կասի որևէ բան։ Սակայն Աննան ասաց միայն.

— Ես ուրախ եմ, որ Դոլլին դուր եկավ քեզ։ Ճիշտ չէ՞։

— Չէ՞ որ ես նրան վաղուց եմ ճանաչում։ Նա շատ բարի

կին է, կարծեմ, mais excessivement terre-à-terre[1], բայց և այնպես ես շատ ուրախ եմ նրա գալու համար։

Նա վերցրեց Աննայի ձեռքը և հարցական հայացքով նայեց նրա աչքերին։

Աննան ա՛յլ կերպ հասկանալով այդ հայացքը, ժպտաց նրան։

Հետևյալ առավոտ, չնայած տանտերերի թախանձանքներին, Դարյա Ալեքսանդրովնան պատրաստվեց վերադառնալու։ Լևինի կառապանն իր ո՛չ նոր կաֆտանով և կիսակառապանային գդակով, տարբեր գույնի ձիերով, կարկատած թևերով կառքի մեջ կանգնած, մռայլ ու վճռական մտավ ավազ շաղ տված ծածկոցավոր գլխավոր մուտքը։

Հրաժեշտը իշխանազնուհի Վարվառայի և տղամարդկանց հետ տանջալից էր Դարյա Ալեքսանդրովնայի համար։ Մնալով մի օր, թե՛ նա, թե՛ տանտերերը պարզապես զգում էին, որ իրար չեն սազում և որ ավելի լավ է, եթե իրար չհանդիպեն։ Աննան էր միայն թախծոտ։ Նա գիտեր, որ այժմ, Դոլլիի գնալուց հետո, ոչ ոք այլևս չի խոսվի իր հոգում այն զգացումները. որոնք բարձրացան իր ներսում այդ տեսակցության միջոցին։ Ծանր էր նրա համար խոսվել այդ զգացումները. բայց նա, այսուամենայնիվ, գիտեր, որ այդ ամենալավ մասն էր իր հոգու և որ իր հոգու այդ մասն արագ մամռապատվում էր այն կյանքի պրոցեսում, որ վարում էր ինքը։

Դուրս գալով դաշտ, Դարյա Ալեքսանդրովնան զգաց հաճելի թեթևություն և ուզեց հարցնել իր մարդկանց, թե լա՞վ էր արդյոք Վրոնսկու մոտ, երբ հանկարծ կառապան Ֆիլիպն ինքը խոսեց.

— Հարուստը՝ հարուստ են, համա երեք չափ գարի տվին, ո՛չ ավելի։ Մինչև աքլորականչ սաղ կերան, պրծան։ Ի՞նչ բան է երեք չափը, մի նախաճաշ։ Հիմիկս գարին պանդոկապանների մոտ արժե քառասունհինգ կոպեկ։ Իսկ մեզ մոտ եկողների ձիերին տալիս են էնքան, ինչքան ուտեն։

— Ժլատ պարոն է,— հաստատեց գրասենյակի ծառայողը։

— Իսկ նրանց ձիերը հավանեցի՞ք,— հարցրեց Դոլլին։

— Ձիանը՝ ղուսուր չունեն։ Կերն էլ լավ է։ Համա, ինձ հա-

[1] Բայց ծայր աստիճան զուրկ է ամեն վեհ բանից։

մար մի տեսակ տխուր էր թվում. Դարյա Ալեքսանդրովնա. չգիտեմ, թե ձեզ համար ո՞նց,— ասաց նա, շուռ տալով դեպի Դոլլին իր գեղեցիկ ու բարի երեսը։

— Ինձ համար էլ։ Ի՞նչ ես կարծում, երեկոյան դեմ կհասնե՞նք։

— Պետք է որ հասնենք։

Վերադառնալով տուն ու գտնելով ամենքին լիովին բարեհաջող և առանձնապես սիրելի, Դարյա Ալեքսանդրովնան մեծ աշխուժով պատմում էր իր ուղևորության մասին, այն մասին, թե ինչպե՞ս լավ ընդունեցին իրեն, Վրոնսկիների կենցաղի, լավ ճաշակի և շքեղության մասին, նրանց զվարճությունների մասին, ու ոչ ոքի թույլ չտվեց հակառակ մի խոսք ասելու։

— Պետք է ճանաչել Աննային ու Վրոնսկուն (ես վերջինիս ավելի լավ ճանաչեցի այժմ), հասկանալու համար, թե ինչպե՞ս սիրելի ու հուզիչ են նրանք,— հիմա արդեն բոլորովին անկեղծորեն ասում էր նա, մոռանալով անբավականության ու անհարմար դրության այն զգացումը, որ ինքն ուներ այնտեղ։

XXV

Վրոնսկին և Աննան նույն պայմաններում, նորից ո՛չ մի միջոց ձեռք չառնելով ապահարզանի համար, ապրեցին ամբողջ ամառը և աշնան մի մասը գյուղում։ Նրանք վճռել էին իրենց մեջ, որ ո՛չ մի տեղ չեն գնա. բայց երկուսն էլ զգում էին, որքան ավելի երկար էին ապրում մենակ, մանավանդ աշնանը և առանց հյուրերի, որ չեն դիմանա այդ կյանքին և հարկավոր կլինի փոխել այն։

Թվում էր, թե կյանքն այնպես է, որ ավելի լավը ցանկանալ չէր կարելի. ամեն ինչ առատ էր, կար առողջություն, կար երեխա և երկուսն էլ ունեին իրենց զբաղմունքը։ Աննան առանց հյուրերի էլի նույնպես զբաղվում էր ինքն իրենով և չափազանց շատ կարդում՝ թե՛ վեպեր, թե՛ լուրջ գրքեր, որոնք մոդա էին։ Նա պատվիրում էր այն բոլոր գրքերը, որոնց մասին գովասանքով էին հիշատակում իր ստացած արտասահմանյան թերթերում ու հանդեսներում, և կարդում էր դրանք այնպիսի ուշադրությամբ, ինչպիսի ուշադրությամբ մարդ վերաբերվում է իր կարդացածին միայն առանձնության մեջ։ Բացի դրանից, այն բոլոր առարկաները, որոնցով զբաղվում էր Վրոնսկին,

Աննան ուսումնասիրում էր գրքերով ու մասնագիտական ժուռնալներով, այնպես որ Վրոնսկին հաճախ ուղղակի դիմում էր նրան հողագիտական, ճարտարապետական, նույնիսկ երբեմն ձիաբուծական ու սպորտային հարցերով։ Վրոնսկին զարմանում էր նրա գիտելիքների, նրա հիշողության վրա և սկզբում կասկածելով, ցանկանում էր հավաստիացում, ու Աննան գրքերի մեջ գտնում էր այն, ինչի մասին հարցնում էր նա. և ցույց էր տալիս նրան։

Հիվանդանոցի սարքավորումը նույնպես զբաղեցնում էր Աննային։ Նա ո՛չ միայն օգնում էր, այլև շատ բան մտածում ու կարգավորում էր ինքը։ Բայց Աննայի գլխավոր հոգսը, այսուամենայնիվ, ինքն էր՝ նա ինքը, որչափով ինքը թանկ էր Վրոնսկու համար, որչափով ինքը կարող էր նրա համար փոխարինել այն ամենին, ինչից հրաժարվել էր Վրոնսկին։ Վրոնսկին գնահատում էր այդ, որ դարձել էր Աննայի կյանքի միակ նպատակը, նրա ցանկությունը՝ ո՛չ միայն դուր գալու, այլև ծառայելու Վրոնսկուն, բայց դրա հետ միասին Վրոնսկին նեղվում էր սիրային այն ցանցերից, որոնցով Աննան աշխատում էր պատել նրան։ Որքան ավելի ժամանակ էր անցնում, որքան ավելի հաճախ էր տեսնում Վրոնսկին իրեն այդ ցանցերով կաշկանդված, այնքան ավելի էր ուզում ոչ թե դուրս պրծնել դրանց միջից, այլ փորձել՝ արդյոք չե՞ն խանգարում դրանք իր ազատությանը։ Եթե չլիներ իրեն ազատ զգալու շարունակ ուժեղացող այդ ցանկությունը, եթե չլիներին դժգոհության այն տեսարանները, երբ Վրոնսկին պետք է գնար քաղաք՝ համագումարի, ձիարշավների, նա լիովին գոհ կլիներ իր կյանքից։ Այն դերը, որ ընտրեց Վրոնսկին, հարուստ կալվածատիրոջ դերը, որոնցից պիտի կազմվեր ռուսական արիստոկրատիայի միջուկը, ո՛չ միայն լիովին համապատասխանում էր նրա ճաշակին, այլև այժմ, կես տարի այդպես ապրելուց հետո, պատճառում էր նրան հետզհետե ավելի զորեղացող բավականություն։ Եվ նրա գործը, որ ավելի ու ավելի էր զբաղեցնում ու ներգրավում նրան, առաջ էր գնում հրաշալի։ Չնայած այն խոշոր գումարներին, որ նստում էին իր վրա հիվանդանոցը, մեքենաները, Շվեյցարիայից բերել տված կովերը և ուրիշ շատ բաներ, Վրոնսկին համոզված էր, որ ինքը ո՛չ թե քայքայում, այլ մեծացնում էր իր կարողությունը։ Այնտեղ,

որտեղ հարցը վերաբերում էր եկամուտներին և անտառանյութեր, հացահատիկներ, բուրդ վաճառելուն, հողը գյուղացիներին տալուն, Վրոնսկին ամուր էր կայծքարի պես ու կարողանում էր կայուն պահել գինը։ Խոշոր տնտեսության գործերում՝ թե այս և թե ուրիշ կալվածքներում նա հետևում էր ամենահասարակ, ո՛չ ռիսկոտ եղանակների և վերին աստիճանի խնայող ու հաշվով մարդ էր տնտեսական մանր բաներում։ Չնայած գերմանացու ամբողջ խորամանկությանն ու ճարպկությանը, որը նրան դրդում էր գնումների և ամեն հաշիվ ցուցադրում էր այնպես, թե սկզբում հարկավոր էր շատ ավելի գումար, բայց կշռադատելով, որ միևնույն բանը կարելի է անել և՛ ավելի էժան, և՛ անմիջապես շահ ստանալ, Վրոնսկին չէր ենթարկվում գերմանացուն։ Նա լսում էր կառավարչի ասածը, հարցուփորձ էր անում նրան և համաձայնում էր նրան միայն այն դեպքում, երբ դրսից բերվելիք կամ տեղում շինվելիք բանը ամենաթարմ նորություն էր՝ Ռուսաստանում դեռ անհայտ և կարող էր զարմանք պատճառել։ Բացի դրանից, նա վճռում էր մեծ ծախսեր անել միայն այն ժամանակ, երբ կար ավելորդ դրամ և կատարելով այդ ծախսը, մտնում էր բոլոր մանրամասների մեջ ու պնդում էր, որ ունենա ամենալավը։ Դատելով նրա գործի ընթացքից, պարզ էր, որ նա ո՛չ թե քայքայեց, այլ ավելացրեց իր կարողությունը։

Հոկտեմբեր ամսին նշանակված էին ազնվականության ընտրությունները Կաշինի նահանգում, որտեղ գտնվում էին Վրոնսկու, Սվիյաժսկու, Կոզնիշևի, Օբլոնսկու կալվածքները և Լևինի կալվածքի փոքրիկ մասը։

Այդ ընտրությունները շատ հանգամանքների և ընտրություններին մասնակցող անձնավորությունների շնորհիվ, գրավում էին հասարակական ուշադրությունը։ Շատ էին խոսում ընտրությունների մասին ու պատրաստվում էին նրանց։ Մոսկվայում, Պետերբուրգում և արտասահմանում ապրողները, որոնք առաջ երբեք չէին մասնակցել ընտրություններին, եկել-հավաքվել էին այդ ընտրություններին։

Վրոնսկին վաղուց արդեն խոստացել էր Սվիյաժսկուն, որ կգնա ընտրություններին։

Ընտրություններից առաջ Սվիյաժսկին, որ հաճախ այցելում էր Վոզդվիժենսկոյեն, եկավ Վրոնսկու ետևից։

Դեռ այդ օրվա նախօրյակին Վրոնսկու և Աննայի միջև համարյա վեճ ծագեց առաջիկա այդ ուղևորության առթիվ։ Գյուղում աշնանային ամենաձանձրալի, ծանր ժամանակն էր, այդ պատճառով Վրոնսկին, պատրաստվելով պայքարի, խիստ ու սառն արտահայտությամբ, ինչպես առաջ երբեք չէր խոսել Աննայի հետ, հայտնեց նրան իր գնալու մասին։ Բայց, ի զարմանս նրա, Աննան այդ լուրն ընդունեց շատ հանգիստ ու հարցրեց միայն, թե ե՛րբ կվերադառնա։ Նա ուշադրությամբ նայեց Աննային, չհասկանալով նրա հանգստությունը։ Աննան ժպտաց նրա հայացքին։ Վրոնսկին գիտեր ինքն իր մեջ խորասուզվելու Աննայի այդ ընդունակությունը և գիտեր, որ այդ լինում է միայն այն ժամանակ, երբ Աննան ինքն իր համար մի բան է վճռել, չհայտնելով նրան իր ծրագրերը։ Վրոնսկին վախենում էր դրանից, բայց նա այնպես ուզում էր խուսափել անախորժ տեսարանից, որ ձևացավ և մասամբ անկեղծորեն հավատաց այն բանին, ինչին ուզում էր հավատալ, այսինքն՝ Աննայի խոհեմությանը։

— Հուսամ, որ չես ձանձրանա։

— Հուսով եմ,— ասաց Աննան։— Երեկ ես Գոտյեից մի արկղ գրքեր ստացա։ Ո՛չ, ես չեմ ձանձրանա։

«Նա ուզում է վերցնել այդ տոնը, և ավելի լավ,— մտածեց Վրոնսկին,— թե չէ՝ շարունակ միևնույն բանն է»։

Եվ այդպես էլ, առանց դրդելու նրան անկեղծ բացատրության, Վրոնսկին գնաց ընտրությունների։ Նրանց կապի սկզբից մինչև այդ օրը առաջին անգամ էր, որ Վրոնսկին բաժանվեց նրանից, չբացատրվելով մինչև վերջ։ Մի կողմից՝ այդ անհանգստացնում էր Վրոնսկուն, մյուս կողմից՝ նա այն կարծիքին էր, որ այդպես ավելի լավ է։ «Սկզբում կլինի այնպես, ինչպես հիմա, ինչ-որ անորոշ, քողարկված բան, իսկ հետո նա կվարժվի։ Համենայն դեպս՝ ես ամեն ինչ կարող եմ տալ նրան, բայց ո՛չ տղամարդու իմ անկախությունը», մտածում էր Վրոնսկին։

XXVI

Սեպտեմբերին Լևինը տեղափոխվեց Մոսկվա՝ Կիտիի ծննդաբերության համար։ Արդեն մի ամբողջ ամիս էր, ինչ նա ապրում էր Մոսկվայում առանց գործի, երբ Սերգեյ Իվանո-

վիչը, որ կալվածք ուներ Կաշինի նահանգում և մեծ մասնակցություն էր ցույց տալիս առաջիկա ընտրություններին, պատրաստվեց գնալու ընտրությունների։ Նա առաջարկում էր իր հետ գնալ նաև եղբորը, որ քվե ուներ Սելեզնյովսկու գավառի գծով։ Բացի դրանից, Լևինը չափազանց կարևոր գործ ուներ Կաշինում իր քրոջ համար, որն ապրում էր արտասահմանում. գործը կապված էր խնամակալության և ետ գնման դրամն ստանալու հետ։

Լևինը տակավին տատանվում էր, բայց Կիտին տեսնելով, որ նա ձանձրանում է Մոսկվայում, և խորհուրդ տալով նրան գնալ, առանց ամուսնու գիտության՝ ութսուն ռուբլով պատվիրեց նրա համար աղնվականի համազգեստ։ Եվ համազգեստի համար վճարված այդ ութսուն ռուբլին եղավ գլխավոր պատճառը, որ ստիպեց Լևինին գնալ։ Նա գնաց Կաշին։

Արդեն վեց օր էր, ինչ Լևինը Կաշինում էր. նա ամեն օր հաճախում էր ժողով ու աշխատում էր քրոջ գործի համար, որը տակավին գլուխ չէր գալիս։ Բոլոր պարագլուխներն զբաղված էին ընտրություններով, և հնարավոր չէր կատարել խնամակալության հետ կապված այդ ամենահասարակ գործը։ Մյուս գործը ևս՝ դրամ ստանալը, նույնպես հանդիպում էր արգելքների։ Արգելքը վերացնելու կապակցությամբ գործ դրած երկար աշխատանքից հետո դրամը պատրաստ էր հանձնման համար. բայց նոտարը, ծառայելու պատրաստակամ մի մարդ, չէր կարողանում տալոն տալ, որովհետև հարկավոր էր նախագահի ստորագրությունը, իսկ նախագահը, առանց հանձնելու իր պաշտոնը, գտնվում էր նստաշրջանում։ Այս բոլոր հոգսերը, մի տեղից մյուս տեղ երթևեկելը, խոսակցությունները շատ բարի, լավ մարդկանց հետ, որոնք լիովին հասկանում էին խնդրարկուի դրության անախորժությունը, բայց չէին կարող օգնել նրան, ո՛չ մի արդյունք չտվող այս լարվածությունն առաջ էր բերում տանջալից զգացում Լևինի մեջ, նման սիրտ նեղացնող այն անզորության, որ մարդ զգում է երազում, երբ ուզում է գործադրել ֆիզիկական ուժ։ Նա այդ բանն զգում էր հաճախ, խոսակցելով իր բարեսիրտ հավատարմատարի հետ։ Թվում էր, թե այդ հավատարմատարն անում էր հնարավոր ամեն ինչ ու լարում էր իր մտավոր բոլոր ուժերը, որ Լևինին գուրս բերի դժվարությունից։ «Ահա՛ թե ինչ փորձեցեք,— բաղմիցս ասում էր նա,— գնացեք այսինչ ու այսինչ տեղը»— և հավատարմատարը կազմում էր մի ամբողջ ծրագիր, թե ինչպես խուսափել ճակատագրական այն սկզբունքից, որ խանգարում էր ամեն բանի։ Բայց անմիջապես էլ ավելացնում էր. «Այնուամենայնիվ՝ կուշացնեն, սակայն փորձեցեք»։ Եվ Լևինը փորձում էր, գնում էր ոտքով, գնում էր կառքով։ Ամենքն էլ բարի ու սիրալիր էին, բայց բանից դուրս էր գալիս, որ շրջանցված սկզբունքը նորից հանդես էր գալիս վերջում ու նորից փակում էր ուղին։ Առանձնապես ցավալին այն էր, որ Լևինը ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ում դեմ է պայքարում ինքը, ու՛մ է ձեռնտու, որ նրա գործը չվերջանա։ Թվում էր, թե այդ բանը ոչ ոք չգիտեր. չգիտեր նաև հավատարմատարը։ Եթե Լևինը կարողանար հասկանալ, ինչպես նա հասկանում էր, թե ինչու՛ չի կարելի մոտենալ երկաթուղու դրամարկղին այլ կերպ, քան եթե հերթի կանգնելով, նա չէր սլտնեղի և զայրանա. բայց ոչ ոք չէր կարողանում բացատրել այն խոչընդոտները, որոնց նա հանդիպում էր իր գործի ընթացքում։

Սակայն Լևինը շատ էր փոխվել իր ամուսնությունից հետո. նա շատ համբերատար էր և եթե չէր հասկանում, թե ինչի՛ համար է այդ ամենն այդպես ստեղծված, ապա ասում էր ինքն իրեն, որ չի կարող գտնել, չիմանալով բոլորը, որ ըստ երևույթին այդպես է հարկավոր, և աշխատում էր չվրդովվել։

Այժմ, ներկա լինելով ընտրություններին ու մասնակցելով նրանց, նա աշխատում էր նույնպես չդատապարտել, չվիճել, այլ որքան հնարավոր է՝ հասկանալ այն գործը, որով այնպես լրջորեն ու հափշտակությամբ զբաղվում էին իր հարգած աղնիվ և լավ մարդիկ։ Սկսած այն օրից, երբ նա ամուսնացավ, նրա համար բացվեցին կյանքի այնքան նոր ու լուրջ կողմեր, որոնք առաջ թեթևամիտ վերաբերմունքի պատճառով թվում էին չնչին բան, որ հիմա ընտրությունների գործում ևս նա ենթադրում ու որոնում էր լուրջ նշանակություն։

Սերգեյ Իվանովիչը բացատրեց նրան ընտրությունների ժամանակ ենթադրվելիք հեղաշրջման իմաստն ու նշանակությունը։ Նահանգական պարագլուխը, որի ձեռքին օրենքով գտնվում էին այնքան կարևոր հասարակական գործեր՝ և՛

խնամավալությունները (հենց նրանք, որոնցից այժմ տուժում էր Լևինը), և՛ ազնվականության հսկայական գումարները, և՛ ժողովրդական կրթությունը՝ համաձայն նոր կանոնադրության, և՛ գիմնազիաները՝ աղջիկների, տղաների ու զինվորական, և, վերջապես, զեմստվոն, նահանգական այս պարագլուխը՝ Սնետկովը, հին ազնվական մտակազմի մարդ էր, արդեն հսկայական կարողություն դիզած, բարի անձնավորություն, յուրատեսակ ազնիվ անհատ, բայց մի մարդ, որ բոլորովին չէր հասկանում նոր ժամանակի պահանջները։ Նա ամեն բանում միշտ էլ պահում էր ազնվականության կողմը. նա բացահայտ կերպով դիմադրում էր ժողովրդական կրթության ծավալմանը և դաժային բնույթ էր տալիս զեմստվոյին, որը պետք է ունենար այնպիսի վիթխարի նշանակություն։ Պետք էր նրա փոխարեն դնել ժամանակակից թարմ, գործունյա մարդ, բոլորովին նոր մարդ և գործը տանել այնպես, որ կարելի լիներ քաղել հնարավոր բոլոր օգուտները ինքնավարության ամբողջ օրենքներից, որոնք շնորհված էին ազնվականությանը, ո՛չ որպես ազնվականության, այլ որպես զեմստվոյական տարրի։ Կաշինի հարուստ նահանգում, որը միշտ ամեն բանում ընթանում էր մյուսներից առաջ, այժմ հավաքվել էին այնպիսի ուժեր, որ նա կարող էր օրինակ ծառայել մյուս նահանգներին, ամբողջ Ռուսաստանին, եթե այստեղ գործը տարվեր այնպես, ինչպես հարկն էր։ Այդ պատճառով խոշոր նշանակություն ուներ ամբողջ գործը։ Սնետկովի փոխարեն ենթադրվում էր պարագլուխ ընտրել կամ Սվիյաժսկուն, կամ է՛լ ավելի լավ՝ Նևեղովսկուն, նախկին պրոֆեսոր, զարմանալի խելոք մարդ և Սերգեյ Իվանովիչի մոտիկ բարեկամը։

Ժողովը բացեց նահանգապետը, որը ճառ ասաց ազնվականներին, որպեսզի նրանք պաշտոնատար անձեր ընտրեն ո՛չ ըստ մարդահաճության, այլ ըստ արժանավորության ու հայրենիքի բարիքի համար, և որ ինքը հույս ունի, որ Կաշինի ազնիվ ազնվականությունը սրբությամբ կկատարի իր պարտքը և կարդարացնի միապետի բարձր վստահությունը, ինչպես եղել է նախորդ ընտրություններին։

Վերջացնելով ճառը, նահանգապետը դուրս գնաց դահլիճից, և ազնվականներն աղմկալեն ու աշխուժով, ոմանք նույնիսկ հիացմունքով, հետևեցին նրան ու շրջապատեցին այն պահին, երբ նա հագնում էր մուշտակը և բարեկամաբար խոսում նահանգական պարագլխի հետ։ Լևինը, ցանկանալով ամեն բանի վերահասու լինել ու ոչինչ բաց չթողնել, կանգնած էր այդտեղ՝ ամբոխի մեջ և լսեց, ինչպես նահանգապետն ասաց. «Խնդրեմ, հայտնեք Մարիա Իվանովնային, կինս շատ է ափսոսում, որ գնում է վանք»։ Ու նրանից հետո ազնվականներն ուրախ վերցրին իրենց մուշտակները և գնացին տաճարը։

Տաճարում Լևինը, մյուսների հետ միասին, բարձրացնելով ձեռքը և կրկնելով ավագ հրեցի խոսքերը, երդվում էր ամենասարսափելի երդումով՝ կատարել այն բոլորը, ինչի վրա հույս ուներ նահանգապետը։ Եկեղեցական ժամասացությունը միշտ ազդում էր Լևինի վրա. երբ նա արտասանում էր «համբուրում եմ խաչը» խոսքերը, և նայեց այդ երիտասարդ ու ծեր մարդկանց ամբոխին, որոնք կրկնում էին նույն բանը, նա իրեն հուզված զգաց։

2-րդ ու 3-րդ օրը քննվում էին ազնվականության գումարների և աղջիկների գիմնազիային վերաբերող գործերը, որոնք ո՛չ մի կարևորություն չունեին, ինչպես բացատրեց Սերգեյ Իվանովիչը, և Լևինը, որ զբաղված էր իր գործերի համար վազվզելով, չէր հետևում դրանց։ Չորրորդ օրը նահանգական սեղանի շուրջը կատարվում էր նահանգական գումարների ստուգումը։ Եվ այստեղ առաջին անգամ նոր կուսակցությունն ընդհարվեց հնի հետ։ Հանձնաժողովը, որին հանձնարարված էր ստուգել գումարները, զեկուցեց ժողովին, որ բոլոր գումարներն անվթար են։ Նահանգական պարագլուխը տեղից վեր կացավ, շնորհակալություն հայտնեց վստահության համար, և նրա աչքերը լցվեցին արցունքներով։ Ազնվականները բարձրաձայն ողջունում էին նրան ու սեղմում նրա ձեռքը։ Բայց այդ միջոցին մի ազնվական՝ Սերգեյ Իվանովիչի խմբից՝ ասաց, թե ինքը լսել է, որ հանձնաժողովը չի ստուգել գումարները, ստուգումը համարելով վիրավորական նահանգական պարագլխի համար։ Հանձնաժողովի անդամներից մեկն անզգուշաբար հաստատեց այդ բանը։ Այն ժամանակ մի փոքրիկ պարոն, տեսքով շատ երիտասարդ, բայց շատ թունոտ, սկսեց խոսել, որ նահանգական պարագլխի հա-

մար հավանորեն հաճելի կլիներ հաշիվ տալ գումարների մասին և որ հանձնաժողովի անդամների ավելորդ նրբավարությունը զրկում է նրան այդ բարոյական բավարարությունից։ Այդ ելույթից հետո հանձնաժողովի անդամները հրաժարվեցին իրենց հայտարարությունից, և Սերգեյ Իվանովիչն սկսեց տրամաբանորեն ապացուցել, թե պետք է՝ կամ ընդունել, որ նրանք գումարներն ստուգել են, կամ, որ չեն ստուգել. և նա մանրամասնորեն ղարգացրեց այդ դիլեման։ Սերգեյ Իվանովիչին առարկում էր հակառակ կուսակցության շաղակրատը։ Հետո խոսեց Սվիյաժսկին և նորից թունոտ պարոնը։ Վիճաբանությունները շարունակվեցին երկար և անհետևանք։ Լևինը զարմացած էր, որ դրա մասին այդքան երկար վիճում էին, զարմացած էր մանավանդ այն պատճառով, որ երբ հարցրեց Սերգեյ Իվանովիչից, արդյոք ենթադրո՞ւմ է նա, որ գումարները վատնված են, Սերգեյ Իվանովիչը պատասխանեց.

— Օ՜, ո՜չ, նա ազնիվ մարդ է։ — Բայց հարկավոր էր խախտել ազնվականական գործերը հայրաբար-ընտանեբար կառավարելու այդ հնագույն եղանակը։

Հինգերորդ օրը տեղի ունեցան գավառական պարագլուխների ընտրությունները։ Այդ օրը բավական փոթորկալից էր որոշ գավառներում։ Սեյեզնյովի գավառում Սվիյաժսկին ընտրվեց միաձայն՝ առանց քվեարկության, և այդ օրը ճաշկերույթ կար նրա մոտ։

XXVII

Վեցերորդ օրը նշանակված էին նահանգական ընտրությունները։ Մեծ ու փոքր դահլիճները լեփ-լեցուն էին տարբեր համազգեստներ հագած ազնվականներով։ Շատերը եկել էին միայն ա՛յդ օրվա համար։ Վաղուց իրար չտեսած ծանոթները, ով Ղրիմից, ով Պետերբուրգից, ով արտասահմանից, պատահում էին միմյանց դահլիճներում։ Նահանգական սեղանի շուրջը, թագավորի դիմանկարի տակ, ընթանում էին վիճաբանությունները։

Թե՛ մեծ, թե՛ փոքր դահլիճում ազնվականները խմբավորվում էին բանակ առ բանակ, և հայացքների թշնամականությունից ու անվստահությունից, օտար անձանց մոտենալու դեպքում խոսակցությունը լռելուց և այն բանից, որ ոմանք փսփսալով, գնում-քաշվում էին հեռավոր միջանցքը, երևում էր, որ յուրաքանչյուր կողմը գաղտնիք ուներ մյուսից։ Իրենց արտաքին տեսքով ազնվականները խիստ կերպով բաժանվում էին երկու տեսակի՝ հին և նոր։ Հները մեծ մասամբ հագած ունեին ազնվականական հին կոճկած համազգեստներ, սուսերներով ու գլխարկներով, կամ ծառայությամբ վաստակած իրենց առանձին՝ նավատորմային, հեծելազորային, հետևակազորային համազգեստներ։ Ներ ազնվականների համազգեստները կարված էին հին ոճով, ուսերին փոթեր. համազգեստները հայտնապես կարճ էին մեջքատեղում ու նեղ, կարծես նրանց տերերը աճել, դուրս էին եկել դրանց չափից։ Իսկ երիտասարդները հագել էին ազնվականական չկոճկած համազգեստներ՝ ցած մեջքատեղերով ու լայն ուսերով, սպիտակ ժիլետներով, կամ հագել էին սև օձիքներով ու դարբինների համազգեստներ՝ արդարադատության մինիստրության կարվածքով։ Երիտասարդներին էին պատկանում նաև պալատական համազգեստները, որ տեղ-տեղ զարդարում էին ամբոխը։

Բայց բաժանումն ըստ երիտասարդության ու ծերության չէր զուգադիպում կուսակցությունների բաժանմանը։ Երիտասարդներից ոմանք, Լևինի դիտողությամբ, պատկանում էին հին կուսակցությանը։ Ընդհակառակն, ամենածեր ազնվականներից ոմանք փսփսում էին Սվիյաժսկու հետ ու հայտնապես ջերմ կողմնակից էին նոր կուսակցությանը։

Լևինը կանգնած էր յուրայինների խմբակի մոտ՝ փոքրիկ դահլիճում, որտեղ ծխում ու նախաճաշում էին, ականջ դնելով այն բանին, ինչ խոսում էին և իզուր լարելով իր մտավոր ուժերը՝ հասկանալու եռած խոսակցությունները։ Սերգեյ Իվանովիչն այն կենտրոնն էր, որի շուրջը խմբավորվում էին մյուսները։ Նա այժմ լսում էր Սվիյաժսկուն և Խլյուստովին, ուրիշ գավառի պարագլխին, որ պատկանում էր իրենց կուսակցությանը։ Խլյուստովը չէր համաձայնում իր գավառի հետ գնալ ու խնդրել Սնետկովին, որ քվեարկվի, իսկ Սվիյաժսկին համոզում էր նրան անել այդ բանը, և Սերգեյ Իվանովիչը հավանություն էր տալիս այդ ծրագրին։ Լևինը չէր հաս-

կանում, թե ի՞նչ կարիք ուներ թշնամի կուսակցությունը՝ խնդրել քվեարկվելու այն պարագլխին, որին նրանք ուզում էին սևացնել։

Ստեպան Արկադևիչը, հենց նոր նախաճաշած ու քիչ խմած, բերանը սրբելով երիզավոր բատիստե անուշաբույր թաշկինակով, մոտեցավ նրանց՝ սենեկապետի համազգեստով։

— Դի՞րք ենք բռնում, Սերգեյ Իվանիչ,— ասաց նա, ուղղելով իր բակենբարդները։

Եվ ունկնդրելով խոսակցությանը, նա հաստատեց Սվիյաժսկու կարծիքը։

— Բավական է մի գավառ միայն, իսկ Սվիյաժսկին արդեն ակնհայտորեն օպոզիցիա է,— ասաց նա, Լևինից բացի, ամենքի համար հասկանալի խոսքերը։

— Հը՞, Կոստյա, կարծես դու՛ էլ ես համի ընկել,— ավելացրեց նա, դիմելով Լևինին և թևանցուկ բռնեց նրա ձեռքը։ Լևինը ուրախ կլիներ նույն տրամադրությամբ համակվելու, բայց նա չէր կարողանում հասկանալ, թե բանն ի՞նչ է, և մի քանի քայլ հեռանալով խոսողներից, հայտնեց Ստեպան Արկադևիչին իր տարակուսանքը, թե ինչո՞ւ պետք էր խնդրել նահանգական պարագլխին։

— O sancta simplicitas![1],— ասաց Ստեպան Արկադևիչը և կարճ ու պարզ բացատրեց Լևինին գործի էությունը։

Եթե բոլոր գավառները խնդրեին նահանգական պարագլխին, ինչպես անցյալ ընտրություններին, այդ դեպքում նրան կընտրեին բոլոր սպիտակ քվեներով։ Հարկավոր չէր այդպես անել։ Հիմա ութ գավառներ համաձայն են խնդրելու, իսկ եթե Լոկուսը հրաժարվեն ու չխնդրեն, Սնետկովը կարող է հրաժարվել քվեարկվելուց։ Եվ այն ժամանակ հին կուսակցությունը կարող է ընտրել իրենցից մեկ ուրիշին, որովհետև կկորչի ամբողջ հաշիվը։ Բայց եթե չխնդրի միայն Սվիյաժսկու գավառը, Սնետկովը կքվեարկվի։ Նրան նույնիսկ կընտրեն ու դիտմամբ ավելի քվե կտան, այնպես որ, հակառակ կուսակցությունը հաշիվը կկորցնի, և երբ թեկնածու կդնեն մերոնցից, նրանք էլ նրան ավելի քվե կտան։ Լևինը հասկացավ, բայց ո՞չ բոլորովին և ուզում էր էլի մի քանի հարցեր տալ,

[1] Ով սուրբ անմեղություն։

երբ հանկարծ սկսեցին խոսել, աղմկեցին ու շարժվեցին դեպի մեծ դահլիճ։

— Ի՞նչ բան է, ո՞ւմ։ — Հավատարմագի՞ր, ումմ, ի՞նչ։ — Հերքո՞ւմ են։ — Անվստահություն։ — Ֆլերովին չեն թողնում քվեարկության։ — Ինչ արած, որ դատի տակ է։ — Այդպես ոչ ոքի չեն թողնի։ Դա ստորություն է։ — Օրե՜նք,— լսեց Լևինը զանազան կողմերից և ամենքի հետ միասին, որոնք շտապում էին ինչ որ տեղ ու վախենում էին, չլինի թե մի բան բաց թողնեն, դիմեց դեպի մեծ դահլիճ և նեղվելով ազնվականների կողմից, մոտեցավ նահանգական սեղանին, որի մոտ վիճաբանում էին նահանգական պարագլուխը, Սվիյաժսկին և ուրիշ պարագլուխներ։

XXVIII

Լևինը կանգնած էր բավական հեռու։ Նրա կողքին ծանր խոխոջով շնչող մի ազնվական և մեկ ուրիշը, որ ճռճռացնում էր կոշիկի հաստ ներբանները, խանգարում էին նրան, ու նա պարզ չէր լսում։ Նա հեռվից լսեց միայն պարագլխի փափուկ ձայնը, հետո՝ թունոտ ազնվականի ճչացող և ապա Սվիյաժսկու ձայնը։ Նրանք վիճում էին, որքան նա կարողացավ հասկանալ, օրենքի հարվածի նշանակության և ենթության տակ գտնվող խոսքերի նշանակության մասին։

Ամբոխը ետ քաշվեց, ճանապարհ տալու սեղանին մոտեցող Սերգեյ Իվանովիչին։ Սերգեյ Իվանովիչն սպասեց, մինչև թունոտ ազնվականը վերջացրեց իր ճառը, ապա ասաց, թե իրեն թվում է, որ ամենից ճիշտը կլինի դիմել օրենքի հոդվածին, և խնդրեց քարտուղարին՝ գտնել հոդվածը։ Հոդվածում ասված էր, որ տարաձայնության դեպքում պետք է քվեարկել։

Սերգեյ Իվանովիչը կարդաց հոդվածը և սկսեց բացատրել նրա նշանակությունը. բայց այստեղ բարձրահասակ, հաստ, կուզլիկ, ներկած բեղերով, նեղ համազգեստով մի կալվածատեր, որի օձիքը ետևի կողմից սեղմում էր ծոծրակը, ընդհատեց նրան։ Նա մոտեցավ սեղանին և մատանիով խփելով նրան, բարձրաձայն բղավեց.

— Քվեարկե՛լ։ Քվե՛ի դնել։ Խոսելու կարիք չկա՛։ Քվե՛ի դնել։

Այստեղ հանկարծ սկսեցին խոսել մի քանի ձայներ, և

մատանիով բարձրահասակ ազնվականն ավելի ու ավելի գազազելով, բղավում էր ավելի և ավելի բարձր։ Բայց հնարավոր չէր հասկանալ, թե ի՞նչ էր ասում նա։

Նա ասում էր նույն բանը, ինչ առաջարկում էր Սերգեյ Իվանովիչը. բայց հայտնապես նա ատում էր նրան ու նրա ամբողջ կուսակցությունը և ատելության այդ զգացումը հաղորդվում էր ամբողջ կուսակցությանն ու առաջ էր բերում հենց այդպիսի դիմադարձ, թեպետև ավելի վայելուչ գազազանք՝ մյուս կողմից։ Խվեցին բղավոցներ, ու մի բոպի ամեն ինչ խառնվեց իրար, այնպես որ նահանգական պարագլուխն ստիպված էր կարգի հրավիրել։

— Քվեարկե՞լ, քվեարկե՞լ։ Ով ազնվական է, նա հասկանո՞ւմ է։— Մենք արյուն ենք թափում... Միապետի վստահությունը... Պարագլխին չհաշվե՞լ, նա գործակատար չէ... է՞հ, բանն այդ չէ... բարեհաճեցեք քվեի դնել։ Գարշելի բան...— լսվեցին ամեն կողմից գազազած, մոլեգին բացականչություններ։ Հայացքներն ու դեմքերն ավելի գազազած ու կատաղի էին, քան խոսքերը։ Նրանք արտահայտում էին անհաշտ ատելություն։ Լևինը բոլորովին չէր հասկանում, թե բանն ի՞նչ է, և զարմանում էր այն կրքոտության վրա, որով քննվում էր այն հարցը՝ քվեարկե՞լ արդյոք, թե՞ չքվեարկել Ֆլերովի մասին եղած կարծիքը։ Նա մոռանում էր այն սիլլոգիզմը, որ հետո բացատրեց նրան Սերգեյ Իվանովիչը, թե ընդհանուր բարիքի համար հարկավոր է տապալել նահանգական պարագլխին. իսկ պարագլխին տապալելու համար պետք է շահել քվեների մեծամասնությունը. իսկ ձայների մեծամասնության համար հարկավոր էր քվեի իրավունք տալ Ֆլերովին. իսկ Ֆլերովին ընդունակ համարելու համար պետք էր բացատրել, թե ինչպե՞ս պիտի հասկանալ օրենքի հոդվածը։

— Իսկ մի ձայնը կարող է վճռել ամբողջ գործը, և պետք է լինել լուրջ ու հետևողական, եթե մարդ ուզում է ծառայել հասարակական գործին,— եզրափակեց Սերգեյ Իվանովիչը։ Բայց Լևինը մոռացել էր այդ և նրա համար ծանր էր տեսնել իր հարգած այդ լավ մարդկանց այդպես գազազած, չար ու վրդովված։ Այդ ծանր զգացումից ազատվելու համար, առանց սպասելու վիճաբանությունների վախճանին, նա դուրս եկավ այն դահլիճը, որտեղ ոչ ոք չկար, բացի բուֆետի մոտ եղած

սպասավորներից։ Տեսնելով աշխատող ծառաներին, որոնք սրբում էին ամանեղենը և դասավորում ափսեներն ու գավաթները, տեսնելով նրանց հանգիստ և աշխույժ դեմքերը, Լևինն զգաց անակնկալ թեթևություն, կարծես՝ գարշահոտ սենյակից դուրս եկավ մաքուր օդի։ Նա սկսեց քայլել ետ ու առաջ, գոհունակությամբ նայելով սպասավորներին։ Նրան շատ դուր եկավ, թե ինչպես սպասավորներից մեկը, սպիտակ բակենբարդներով, ցույց տալով իր արհամարհական վերաբերմունքը մյուսներին՝ երիտասարդներին, որոնք ծիծաղում էին նրա վրա, սովորեցնում էր նրանց, թե ինչպե՞ս պետք է ծալել անձեռոցիկներ։ Լևինը պատրաստվում էր խոսակցության բռնվել ծերունի սպասավորի հետ, երբ ազնվականության խնամակալության բարտուղարը՝ ծերուկ մի մարդ, որի մասնագիտությունն էր նահանգի բոլոր ազնվականներին կանչել անունով ու հայրանունով, գրավեց նրա ուշադրությունը։

— Համեցեք, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց նա,— ձեզ փնտրում է ձեր եղբայրը։ Քվեարկվում է կարծիքը։

Լևինը մտավ դահլիճ, ստացավ սպիտակ քվեագնդակ և եղբոր՝ Սերգեյ Իվանովիչի ետևից մոտեցավ այն սեղանին, որի մոտ կանգնած էր Սվիյաժսկին՝ նշանակալից ու հեգնական դեմքով, մորուքը հավաքելով բռան մեջ ու հոտոտելով այն։ Սերգեյ Իվանովիչը ձեռքը մտցրեց արկղի մեջ, դրեց իր քվեագնդակն ինչ-որ տեղ և քաշվելով մի կողմ, տեղ տվեց Լևինին։ Լևինը մոտեցավ, բայց բոլորովին մոռանալով, թե բանն ի՞նչ է, շփոթվեց ու դիմելով Սերգեյ Իվանովիչին, հարցրեց. «ո՞ւր դնել»։ Նա հարցրեց կամաց և հարցրեց այն ժամանակ, երբ մոտիկ եղողները խոսում էին, հույս ունենալով, որ իր հարցը չեն լսի։ Սակայն խոսողները լռեցին, և նրա անվայելուչ հարցը լսվեց։ Սերգեյ Իվանովիչը խոժոռվեց։

— Այդ յուրաքանչյուրի համոզմունքի գործն է,— ասաց նա խիստ։

— Ոմանք ժպտացին։ Լևինը կարմրեց, շտապ խրեց ձեռքը մահուդի տակ և քվեագնդակը դրեց աջ կողմում, որովհետև այն բռնած ուներ աջ ձեռքում։ Դնելուց հետո նա հիշեց, որ պետք էր ներս խրել նաև ձախ ձեռքը, և խրեց այն, բայց արդեն ուշ էր, ու ավելի ևս անհարմար զգալով իրեն, շտապ գնաց դեպի ամենավերջին շարքերը։

— Հարյուր քսանվեց ընտրական ձայն։ Իննսունութ ո՛չ ընտրական,— հնչեց r տառը չարտասանող քարտուղարի ձայնը։ Հետո լսվեց ծիծաղ. արկղի մեջ գտան մի կոճակ և երկու ընկույզ։ Ազնվականին թողին քվեարկության, ու նոր կուսակցությունը հաղթեց։

Բայց հին կուսակցությունն իրեն հաղթված չէր համարում։ Լևինը լսեց, որ Սնետկովին խնդրում են քվեարկվել, և տեսավ, որ ազնվականների ամբոխը շրջապատեց ինչ-որ բան ասող նահանգական պարագլխին։ Լևինն ավելի մոտ գնաց։ Պատասխանելով ազնվականներին, Սնետկովը խոսում էր ազնվականության վստահության մասին, իր հանդեպ տածած սիրո մասին, որին արժանի չէ ինքը, որովհետև իր ամբողջ արժանիքը իր անձնվեր վերաբերմունքն է ազնվականությանը, որին ծառայել է տասներկու տարի։ Մի քանի անգամ նա կրկնեց այս խոսքերը. «Ծառայել եմ, որքան ուժ ունեի, ծառայել եմ հավատարմությամբ ու ճշմարտությամբ, գնահատում եմ և շնորհակալ եմ», ու հանկարծ կանգ առավ իրեն խեղդող արցունքներից և դուրս գնաց դահլիճից։ Այդ արցունքների պատճառը արդյոք նրա նկատմամբ եղած անարդարության գիտակցությո՞ւնն էր, դեպի ազնվականությունը տածած սե՞րն էր, թե՞ լարվածությունն էր այն դրության, որի մեջ գտնվում էր նա, զգալով իրեն շրջապատված թշնամիներով,— բայց նրա հուզմունքը վարակում էր ուրիշներին էլ. ազնվականության մեծ մասը հուզված էր, և Լևինը քնքշություն զգաց իր մեջ դեպի Սնետկովը։

Դռան մեջ նահանգական պարագլուխը դեմ առ դեմ հանդիպեց Լևինին։

— Ներողություն, ներեցեք խնդրեմ,— ասաց նա, որպես անծանոթի. բայց ճանաչելով Լևինին, երկչոտությամբ ժպտաց։ Լևինին թվաց, որ նա ուզում էր մի բան ասել, բայց հուզմունքից չկարողացավ։ Նրա դեմքի և ամբողջ ֆիգուրի արտահայտությունը՝ համազգեստով, խաչերով ու տրիզած սպիտակ շալվարով, և նրա շտապ քայլվածքը հիշեցրեց Լևինին հալածական գաղանի, որը տեսնում է, որ իր գործը վատ է։ Պարագլխի դեմքի այդ արտահայտությունն առանձնապես հուզեց Լևինին, որովհետև դեռ երեկ նա խնամակալության գործով եղավ նրա տանը և տեսավ նրան բարի ու ընտանիքավոր մարդու ամբողջ վեհությամբ։ Մեծ տունը՝ տոհմական հին կահույքով, ո՛չ պճնազարդ, մասամբ կեղտոտ, բայց հարգալից ծերուկ ծառաները, ըստ երևույթին նախկին ճորտերից, որ չէին թողել իրենց տիրոջը. հաստ, բարեսիրտ կինը, ժանեկավոր շեպշիկով ու տաճկական շալով, որ դուրգուրում էր իր լավիկ թոռնիկին՝ աղջկա աղջկանը, վեցերորդ դասարանի գիմնազիստ՝ վայելչակազմ որդին, որը եկել էր գիմնազիայից ու ողջունելով հորը, համբուրեց նրա մեծ ձեռքը. տանտիրոջ ազդու, գորովալից խոսքերն ու շարժումները,— այս բոլորը երեկ բերեց Լևինի մեջ ակամա հարգանքի և համակրանքի զգացում։ Լևինի համար այժմ հուզիչ ու խղճալի էր այդ ծերուկը, և նա ուզեց հաճելի մի բան ասել նրան։

— Ուրեմն դուք էլի մեր պարագլուխն եք,— ասաց նա։

— Հազիվ թե,— ասաց պարագլուխը, վախեցած ետ նայելով։— Ես հոգնել եմ, արդեն պառավել եմ։ Կան ինձնից ավելի արժանավորներ ու երիտասարդներ, թող նրանք ծառայեն։

Եվ պարագլուխը չքվեց կողքի դռան միջով։

Հասավ ամենահանդիսավոր րոպեն։ Պետք էր անմիջապես սկսել ընտրությունները։ Այս և այն կուսակցության պարագլուխները մատների վրա հաշվում էին սև ու սպիտակ քվեները։

Ֆլերովի մասին վիճաբանությունները նոր կուսակցությանը տվին ոչ միայն Ֆլերովի մի ձայնը, այլև ժամանակ շահեցին, որի ընթացքում կարող էին բերվել էլի երեք ազնվականներ, որոնք հին կուսակցության խարդավանքների շնորհիվ զրկվել էին ընտրություններին մասնակցելու հնարավորությունից։ Երկու ազնվականների, որոնք խիստ հակում ունեին դեպի խմիչքները, հարբեցրել էին Սնետկովի համախոհները, իսկ երրորդի՝ համազգեստն էին տարել։

Իմանալով այդ, նոր կուսակցությունը կարողացավ Ֆլերովի մասին վիճաբանությունների ժամանակ կառքով մարդ ուղարկել՝ զգեստավորելու ազնվականին և ժողովի բերելու երկու հարբածներից մեկին։

— Մեկին բերի հետս, սառը ջրով ուշքի բերի,— ասաց նրա հետևից գնացած կալվածատերը, մոտենալով Սվիյաժսկուն։— Ոչի՛նչ, յոլա կտանի։

— Հո շատ հարբած չէ՞, հո չի՞ ընկնի,— հարցրեց Սվիյաժսկին, գլուխն օրորելով։

— Ո՜չ, պինդ է։ Միայն թե այստեղ չմացնեն... Ես բուֆետապետին ասի, որ ո՜չ մի կերպ խմիչք չտա նրան։

XXIX

Նեղ դահլիճը, որտեղ ուտում ու ծխում էին, լցված էր աղնվականներով։ Հուզմունքը հետզհետե ավելանում էր, և ամենքի գեմքերին նկատվում էր անհանգստություն։ Առանձնապես հուզվում էին պարագլուխները, որոնք գիտեին բոլոր մանրամասները և բոլոր ձայների թիվը։ Դրանք առաջիկա ճակատամարտի կարգադրիչներն էին։ Իսկ մնացածները, ինչպես շարքայինները ճակատամարտից առաջ, թեպետև պատրաստվում էին կռվի, բայց առայժմ իրենց համար զանազան զվարճություններ էին փնտրում։ Ոմանք կանգնած կամ նստած սեղանի շուրջը, նախաճաշում էին, ոմանք ետ ու առաջ քայլում էին երկար սենյակում՝ ծխելով և զրուցում էին վազուց չտեսած իրենց բարեկամների հետ։

Լևինն ուտել չէր ուզում, նա չէր ծխում. պատահել յուրայիններին, այսինքն՝ Սերգեյ Իվանովիչին, Ստեպան Արկադևիչին, Սվիյաժսկուն և մյուսներին՝ չէր ցանկանում, որովհետև նրանց հետ կանգնած, աշխույժ զրուցում էր Վրոնսկին, շտալմեյստերական զգեստով։ Դեռ երեկ Լևինը տեսավ նրան ընտրությունների և ամենայն խնամքով խուսափեց նրանից, չկամենալով հանդիպել։ Նա մոտեցավ պատուհանին ու նստեց, գիտելով խմբակները և ականջ դնելով իր շուրջը տեղի ունեցող զրույցներին։ Նա առանձնապես տխուր էր այն պատճառով, որ ինչպես տեսնում էր, ամենքն աշխույժ էին, մտահոգ ու զբաղված. հետաքրքրությունից զուրկ և անգործ էր միայն ինքը և նավատորմային համազգեստով իր մոտ նստած պառավ, շատ պառավ, անատամ այն ծերուկը, որ բլբլացնում էր պոռշներով։

— Դա այնպիսի՞ սատանա է։ Ես ասում էի նրան, բայց ի՞նչ օգուտ։ Ո՞նց կարելի է։ Նա երեք տարում չէր կարողանում պատրաստվել,— եռանդով ասում էր կորամեջք, ո՜չ բարձրահասակ մի կալվածատեր, օծած մազերով, որոնք ծածկում էին

նրա համազգեստի ասեղնագործած օձիքը, ամուր դափելով նոր, ըստ երևույթին, ընտրությունների համար հագած կոշիկների կրունկները։ Եվ կալվածատերը նետելով Լևինի վրա դրժդոհ հայացք, շեշտակի շուռ եկավ։

— Այո՛, խոսք չկա, գործը մաքուր չէ,— ասաց բարակ ձայնով փոքրիկ կալվածատերը։

Դրանց ետևից մի խումբ կալվածատերեր, շրջապատած մի հաստ գեներալի, շտապ մոտեցան Լևինին։ Ըստ երևույթին, կալվածատերերը որոնում էին խոսելու այնպիսի տեղ, որ իրենց լսող չլինի։

— Ինչպե՞ս է համարձակվում նա ասել, որ ես հրամայեցի գողանալ նրա շալվարը։ Ես կարծում եմ, որ նա իր շալվարը ծախել, խմել է։ Թքա՜ծ նրա վրա, նրա իշխանական տիտղոսի վրա։ Նա չպիտի համարձակվի այդպիսի բան ասել, դա խոզություն է։

— Բայց թույլ տվեք, խնդրեմ։ Չէ՞ որ նրանք հիմնվում են հոդվածի վրա,— ասում էին մյուս խմբակում,— կինը պետք է գրվի աղնվականուհի։

— Իմ ինչի՞ս է պետք հոդվածը։ Ես սրտով եմ ասում։ Էլ ի՞նչ աղնիվ աղնվականներ։ Վստահություն ունեցիր։

— Ձերդ գերազանցություն, գնանք fine champagne խմելու։

Մի այլ խումբ գնում էր բարձր ձայնով ինչ-որ բան բղավող աղնվականի ետևից. դա հարբեցրած երեք աղնվականներից մեկն էր։

— Ես միշտ խորհուրդ էի տալիս Մարիա Սեմյոնովնային՝ վարձակալության տալ, որովհետև նա չի շահում,— ասում էր հաճելի ձայնով, ապիտակ թեղերով կալվածատերը, հագած հին գլխավոր շտաբի գնդապետային համազգեստ։ Դա այն կալվածատերն էր, որին Լևինը պատահեց Սվիյաժսկու մոտ։ Անմիջապես ճանաչեց նրան։ Կալվածատերը նույնպես ուշադրությամբ նայեց Լևինին, և նրանք բարևեցին իրար։

— Շատ հաճելի է։ Ինչպե՞ս չէ։ Շատ լավ հիշում եմ, անցյալ տարի Նիկոլայ Իվանովիչի՝ պարագլխի մոտ։

— Ինչպե՞ս է գնում ձեր տնտեսությունը,— հարցրեց Լևինը։

— Է՜հ, առաջվա պես, վնաս է բերում,— պատասխանեց կալվածատերը խոնարհ ժպիտով, բայց հանգիստ ու համոզ-

մունքի այնպիսի արտահայտությամբ, թե այդպես էլ պետք է։ կանգ առնելով Լևինի մոտ։— Իսկ դուք ինչպե՞ս եք ընկել մեր նահանգը,— հարցրեց նա։— Եկել եք մասնակցելո՞ւ մեր coup d'état-ին[1],— ասաց նա, ֆրանսերեն խոսքերն արտասանելով հաստատ, բայց վատ։— Հավաքվել է ամբողջ Ռուսաստանը. սենեկապետներ, քիչ է մնում նույնիսկ մինիստրներ։— Նա նշեց գեներալի հետ քայլող Ստեպան Արկադևիչի վայելչատես ֆիգուրը՝ սպիտակ շալվարով ու սենեկապետի համազգեստով։

— Ես պետք է խոստովանեմ, որ շատ վատ եմ հասկանում ազնվականության ընտրությունների նշանակությունը,— ասաց Լևինը։

Կալվածատերը նայեց նրան։

— Ի՞նչ հասկանալու բան կա այստեղ։ Ո՛չ մի նշանակություն չունի։ Ընկած հիմնարկ, որը շարունակում է իր շարժումը իներցիայի ուժով միայն։ Տեսեք, այդ համազգեստներն էլ ասում են ձեզ, որ դա հաշտարար դատավորների, մշտական անդամների և այլոց ժողով է, ո՛չ թե ազնվականների։

— Ուրեմն էլ ինչո՞ւ եք գալիս,— հարցրեց Լևինը։

— Նախ՝ սովորություն է դարձել։ Հետո՝ պետք է կապեր պահպանել։ Որոշ չափով՝ բարոյական պարտականություն։ Իսկ հետո, ճիշտն ասած, ես ունեմ իմ շահը։ Փեսաս ուզում է քվեարկվել մշտական անդամության համար. նրանք հարուստ չեն, և պետք է անցկացնել նրան։ Ահա այս պարոնները ինչո՞ւ են գալիս,— ասաց նա, նշելով թունոտ այն պարոնին, որը խոսում էր նահանգական սեղանի առաջ։

— Դա ազնվականության նոր սերունդն է։

— Նորը՝ նոր է։ Բայց ազնվականություն չէ։ Դրանք հոզատերեր են, իսկ մենք՝ կալվածատերեր։ Նրանք, որպես ազնվականներ, ինքնասպանություն են գործում։

— Սակայն չէ՞ որ դուք ասում եք, որ դա վերջացած հիմնարկ է։

— Վերջացածը՝ վերջացած է, բայց և այնպես նրա հետ պետք է հարգանքով վարվել։ Թեկուզ հենց Սնետկովը... Լավ

[1] Պետական հեղաշրջում։

ենք մենք, թե վատ, բայց հազար տարի աճել ենք։ Գիտե՞ք, եթե, օրինակ՝ դուք ձեր տան առաջ այգի տնկեք, պլան քաշեք, և այդտեղ աճելիս լինի հարյուրամյա մի ծառ... Այդ ծառը թեպետև ծուռ է, հին է, այսուամենայնիվ ծաղկեթմբերի համար դուք չեք կտրի ծերուկին, այլ ծաղկեթմբերն այնպիսի պլանով կշինեք, որ օգտվեք ծառից։ Ծառը մարդ մի տարում չի հասցնի,— ասաց նա զգույշ և անմիջապես փոխեց խոսակցությունը։— Իսկ ինչպե՞ս է ձեր տնտեսությունը։

— Է՜հ, լավ չէ։ Հինգ տոկոս։

— Այո՛, բայց դուք ձեզ չեք հաշվում։ Չէ՞ որ դուք էլ մի բան արժեք։ Ա՛յ, ես ասեմ իմ մասին։ Մինչև տնտեսությամբ զբաղվելս, պաշտոնիս համար ստանում էի երեք հազար։ Այժմ ես աշխատում եմ ավելի, քան ծառայության մեջ և, ինչպես դուք, ստանում եմ հինգ տոկոս, այն էլ՝ տա՛ աստված։ Իսկ իմ սեփական աշխատանքը չի վարձատրվում։

— Հապա էլ ինչո՞ւ եք անում, եթե ուղղակի վնաս է։

— Այդպես է, բայց անում եմ։ Ի՞նչ արած։ Սովորություն է, և գիտես, որ այդպես է պետք։ Ավելին կասեմ ձեզ,— հենվելով լուսամուտին ու զրույցով տարվելով, շարունակեց կալվածատերը,— որդիս սեր չունի տնտեսության նկատմամբ։ Հավանորեն, գիտնական կդառնա։ Այնպես որ տնտեսությունը շարունակող չի լինի։ Բայց էլի անում եմ։ Ահա այս տարի այգի տնկեցի։

— Այո՛, այո՛,— ասաց Լևինը,— դա միանգամայն իրավացի է։ Ես միշտ զգում եմ, որ հաշիվ չկա իմ տնտեսության մեջ, բայց անում եմ... Մի տեսակ պարտականություն եմ զգում հողի նկատմամբ։

— Ա՛յ, ասեմ ձեզ,— շարունակեց կալվածատերը։— Ինձ մոտ էր իմ հարևան վաճառականը։ Մենք շրջեցինք, նայեցինք տնտեսությունը. այգին։ «Ոչ, ասում է, Ստեպան Վասիլևիչ, ամեն բան ձեզ մոտ լավ է գնում, բայց այգին անուշադրության է մատնված»։ Մինչդեռ իմ այգին կարդին վիճակում է։ «Իմ խելքով, ես այս լորենին կկտրեի։ Հարկավոր է միայն հյութեղ միջոցին։ Չէ՞ որ լորենիները հազար հատ են, յուրաքանչյուրից երկու լավ քրծեն դուրս կգա։ Իսկ հիմա քրծենի գինը բարձր է, ես լորենու կեղանք էլ կպատրաստեի։

— Իսկ այդ դրամով նա կգներ մեծ քանակությամբ անասուն կամ շնչին գնով հող և վարձով կտար մուժիկներին,— վերջացրեց Լևինը ժպիտով, հայտնապես բազմիցս արդեն պատահած լինելով նման հաշիվների։— Եվ նա կարողություն կդիզի։ Իսկ դուք և ես՝ ստված տա միայն, որ մեր ունեցածը պահենք ու թողնենք մեր երեխաներին։

— Լսեցի, ամուսնացե՞լ եք,— հարցրեց կալվածատերը։

— Այո՛,— հպարտ բավականությամբ պատասխանեց Լևինը։— Այո՛, ինչ-որ տարօրինակ բան է,— շարունակեց նա։— Այսպես մենք ապրում ենք առանց հաշվի, կարծես նշանակված ենք, ինչպես հին դարի վեստալուհիներ[1], պահպանելու ինչ-որ կրակ։

Կալվածատերը քմծիծաղեց սպիտակ բեղերի տակ։

— Մեր մեջ էլ կան այնպիսիները, թեկուզ հենց մեր բարեկամ Նիկոլայ Իվանիչը, կամ կոմս Վռոնսկին, որ գյուղ է տեղափոխվել հիմա. նրանք ուզում են գյուղատնտեսական արդյունաբերություն մտցնել։ Բայց այդ մինչև այսօր, դրամագլուխ սպանելուց զատ, ուրիշ բանի չի հանգել։

— Հապա ինչո՞ւ մենք էլ այնպես չենք անում, ինչպես անում են վաճառականները։ Ինչո՞ւ այգին չենք կտրում քրծենի համար,— ասաց Լևինը, վերադառնալով իրեն զարմացնող մտքին։

— Ա՜յ, ինչպես դուք ասիք, պետք է կրակը պահպանել։ Թե չէ՝ ազնվականի գործ չէ դա։ Եվ ազնվականական գործն արվում է ո՛չ թե այստեղ՝ ընտրություններին, այլ այնտեղ՝ մեր անկյունում։ Կա նույնպես մեր դասային բնազդը. այսինքն՝ ի՛նչ պետք է, և ի՛նչ պետք չէ։ Ա՜յ, մուժիկները նույնպես. պատահում է երբեմն, տեսնում եմ, եթե լավ մուժիկ է, սկսում է հող վարձել, ինչքան կարող է։ Թեկուզ անպետք է հողը, բայց վարում է շարունակ։ Նույնպես առանց հաշվի։ Ուղղակի վնաս։

— Ճիշտ և ճիշտ ինչպես մենք,— ասաց Լևինը։— Շատ, շատ հաճելի է, որ հանդիպեցինք,— ավելացրեց նա, տեսնելով իրենց մոտեցող Սվիյաժսկուն։

[1] Հռոմեական Վեստա դիցուհու քրմուհիները, որոնք պարտավոր էին անմար պահպանել մեհյանի կրակը։

— Ձեզ մոտ լինելուց հետո առաջին անգամ հանդիպեցինք,— ասաց կալվածատերը։— Բայց լավ էլ զրուցեցինք։

— Եվ ի՞նչ, հայհոյեցիք նոր կարգե՞րը,— ասաց Սվիյաժսկին ժպիտով։

— Առանց այդ չի լինում։

— Սրտներս թեթևացրինք։

XXX

Սվիյաժսկին թևանցուկ արեց Լևինին ու նրա հետ գնաց յուրայինների մոտ։

Այժմ արդեն չէր կարելի խուսափել Վռոնսկուց։ Նա կանգնել էր Ստեպան Արկադևիչի ու Սերգեյ Իվանովիչի հետ և նայում էր մոտեցող Լևինին։

— Շատ ուրախ եմ։ Կարծեմ ես հաճույք եմ ունեցել հանդիպելու... իշխանուհի Շչերբացկայայի մոտ,— ասաց նա, ձեռքը տալով Լևինին։

— Այո՛, ես լավ հիշում եմ մեր հանդիպումը,— ասաց Լևինը և, կարմրելով անմիջապես շուտ եկավ ու խոսեց եղբոր հետ։

Թեթև ժպտալով, Վռոնսկին շարունակեց խոսել Սվիյաժսկու հետ, ըստ երևույթին ո՛չ մի ցանկություն չունենալով խոսակցության բռնվելու Լևինի հետ։ Բայց Լևինը, խոսելով եղբոր հետ, անընդհատ նայում էր Վռոնսկուն, մտածելով, թե ի՛նչ ասի նրան, որ կոծկի իր կոպտությունը։

— Հիմա գործն ի՞նչ վիճակում է,— հարցրեց Լևինը, նայելով Սվիյաժսկուն ու Վռոնսկուն։

— Սենատկովից է կախված։ Հարկավոր է, որ նա հրաժարվի կամ համաձայնի,— ասաց Սվիյաժսկին։

— Իսկ նա ի՞նչ է ասում, համաձա՞յն է, թե ոչ։

— Բանն էլ հենց այն է, որ ո՛չ այս, ո՛չ այն,— ասաց Վռոնսկին։

— Իսկ եթե հրաժարվի, ո՞վ է քվեարկվելու,— հարցրեց Լևինը, նայելով Վռոնսկուն։

— Ով ուզում է,— ասաց Սվիյաժսկին։

— Արդյոք դո՞ւք,— հարցրեց Լևինը։

— Միայն թե ո՛չ ես,— պատասխանեց Սվիյաժսկին,

շփոթվելով ու վախեցած հայացք գցելով Սերգեյ Իվանովիչի կողքին կանգնած թունոտ պարոնի վրա։

— Հապա էլ ո՞վ։ Նևեդո՞վսկին,— ասաց Լևինը, զգալով, որ խճճվեց։

Բայց ավելի վատ բան ստացվեց։ Նևեդովսկին ու Սվիյաժսկին երկուսն էլ թեկնածուներ էին։

— Համենայն դեպս՝ ես ո՛չ մի դեպքում,— պատասխանեց թունոտ պարոնը։

Դա ինքը Նևեդովսկին էր։ Սվիյաժսկին ծանոթացրեց Լևինին նրա հետ։

— Հը՛, ո՞նց է, քե՞զ էլ գրավեց,— ասաց Ստեպան Արկադևիչը, աչքով անելով Վռոնսկուն։— Դա ձիարշավի պես բան է։ Կարելի է գրաց գալ։

— Սյո՛, դա իրոք որ գրավում է,— ասաց Վռոնսկին։— Եվ, երբ մարդ մի անգամ ձեռք է գարկում գործին, ուզում է մինչև վերջ տանել այն։ Պայքա՛ր,— ասաց նա, մռայլվելով ու սեղմելով իր ուժեղ այտոսկրերը։

— Ի՞նչ գործարար մարդ է Սվիյաժսկին։ Ամեն բան այնպես պարզ է նրա համար։

— Օ՛, այո՛,— ասաց Վռոնսկին ցրված։

Տիրեց լռություն, որի միջոցին Վռոնսկին,— որովհետև պետք էր մի բանի նայել,— նայեց Լևինին, նրա ոտքերին, նրա համազգեստին, հետո դեմքին ու, նկատելով նրա մռայլ, իր վրա ուղղած աչքերը, ասաց, մի բան ասած լինելու համար.

— Այդ ինչպե՞ս է պատահել, որ դուք, գյուղի մշտական բնակիչ, և հաշտարար դատավոր չեք։ Դուք հաշտարար դատավորի համազգեստով չեք։

— Որովհետև ես կարծում եմ, որ հաշտարար դատարանը հիմար հիմնարկ է,— պատասխանեց Լևինը մռայլ, ամբողջ ժամանակ սպասելով Վռոնսկու հետ խոսելու առիթի, որպեսզի հարթեր առաջին հանդիպմանը ցույց տված իր կոպտությունը։

— Ես այդ կարծիքին չեմ, ընդհակառակն,— հանգիստ զարմանքով ասաց Վռոնսկին։

— Դա խաղալիք է,— ընդհատեց նրան Լևինը։— Հաշտարար դատավորները պետք չեն մեզ։ Ութ տարվա ընթացքում

ես ո՛չ մի գործ չեմ ունեցել։ Իսկ ի՞նչ էլ ունեցել եմ, վճռվել է թարս։ Հաշտարար դատավորը գտնվում է ինձնից քառասուն վերստի վրա։ Ես պետք է երկու ռուբլի արժեցող գործի համար ուղարկեմ մի հավատարմատար, որն արժե տասնհինգ ռուբլի։

Եվ նա պատմեց, թե ինչպես մուժիկը ջրաղացպանից այլյուր էր գողացել, և երբ ջրաղացպանն ասաց նրան այդ բանը, մուժիկը հայց հարուցեց ամբաստանության մասին։ Այս բոլորը տխմար ու անտեղի էր. և Լևինն զգում էր այդ բանը հենց խոսելիս։

— Օ՛, նա այնպիսի օրիգինալ մարդ է,— ասաց Ստեպան Արկադևիչն իր ամենաանուշ ժպիտով։ — Սակայն գնանք, կարծեմ, քվեարկում են...

Ու նրանք ցրվեցին։

— Ես չեմ հասկանում,— ասաց Սերգեյ Իվանովիչը, նկատելով եղբոր անհարմար արարքը, ես չեմ հասկանում, թե ինչպե՞ս կարելի է այդ աստիճան զուրկ լինել քաղաքական ամեն տեսակի տակտից։ Ա՛յ թե ինչ չունենք մենք՝ ռուսներս։ Նահանգական պարագլուխը մեր հակառակորդն է, դու նրա հետ ami cochon[1] ես և խնդրում ես նրան, որ քվեարկվի, իսկ կոմս Վռոնսկին... ես նրանից չեմ ուզում բարեկամ սարքել ինձ համար. նա ինձ հրավիրեց ճաշի, ես չեմ գնա, բայց նա մերն է, ի՞նչ կարիք կա հանձին նրա թշնամի վաստակելու։ Հետո, դու հարցնում ես Նևեդովսկուն, արդյոք կքվեարկվի՞ նա։ Այդպիսի բան չեն անում։

— Ա՜խ, ես ոչինչ չեմ հասկանում։ Եվ այս բոլորը դատարկ բան է,— պատասխանեց Լևինը մռայլ։

— Դու ասում ես, որ այս բոլորը դատարկ բան է, բայց երբ ձեռնամուխ ես լինում, ամեն ինչ խճճում ես։

Լևինը լռեց, և նրանք միասին մտան մեծ դահլիճ։

Նահանգական պարագլուխը, չնայած որ օդի մեջ զգում էր իր համար պատրաստվող խարդավանք, և չնայած որ նրան խնդրեցին ո՛չ բոլորը, այնուամենայնիվ վճռեց քվեարկվել։

Ամեն ինչ լռեց դահլիճում, քարտուղարը բարձրաձայն հայտարարեց, որ նահանգական պարագլխի համար քվեարկ-

[1] Մտերիմ բարեկամ։

վում է գվարդիայի ռոտմիստր Միխայիլ Ստեպանովիչ Սնետկովը։

Գավառական պարագլուխները ափսեներով, որոնց մեջ քվեագնդակներն էին, իրենց սեղաններից մոտենում էին դեպի նահանգականը, և սկսվեցին ընտրությունները։

— Դիր ա՛ջ կողմը,— փսփսաց Ստեպան Արկադևիչը Լևինին, երբ նա եղբոր հետ միասին պարագլխի ետևից մոտեցավ սեղանին։ Բայց Լևինն այժմ մոռացավ այն հաշիվը, որ բացատրել էին իրեն, և վախենում էր՝ արդյոք չսխալվե՞ց Ստեպան Արկադևիչը, ասելով «աջ կողմը»։ Չէ՞ որ Սնետկովը թշնամի էր։ Մոտենալով արկղին, նա քվեագնդակը բռնել էր աջ ձեռքին, բայց միտք անելով, որ սխալվեց, արկղի առաջ գնդակն աջ ձեռքից դրեց ձախը և, ըստ երևույթին, հետո գցեց ձախ կողմը։ Գործին գիտակ այն մարդը, որ կանգնած էր արկղի մոտ և արմունկի շարժումից հենց իմանում էր, թե ո՛վ ո՛ւր է դնում, դժգոհ խոժոռվեց։ Նա ուրիշ բան չուներ իր մտքի թափանցողությունը մարզելու համար։

Ամեն ինչ լռեց, և լսվեց քվեագնդակների հաշիվը։ Հետո մեկը հայտարարեց ընտրական և ո՛չ ընտրական քվեների թիվը։

Պարագլուխն ընտրվեց ձայների զգալի մեծամասնությամբ։ Ամենքն աղմկեցին ու շեշտակի ձգվեցին դեպի դուռը։ Ներս մտավ Սնետկովը, և ազնվականությունը շրջապատեց նրան, շնորհավորելով։

— Հիմա վերջացա՞վ,— հարցրեց Լևինը Սերգեյ Իվանովիչին։

— Նո՛ր միայն սկսվում է,— ժպտալով ասաց Սվիյաժսկին Սերգեյ Իվանովիչի դիմաց։— Պարագլխի թեկնածուն կարող է ավելի շատ ձայն ստանալ։

Լևինը դարձյալ բոլորովին մոռացել էր այդ մասին։ Այժմ միայն հիշեց նա, որ այդտեղ կար ինչ-որ նրբություն, բայց նրա համար ձանձրալի էր հիշելը, թե բանն ինչ էր։ Նրան համակեց վհատության զգացումը, և նա ուզում էր դուրս գալ այդ ամբոխի միջից։

Որովհետև ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա վրա, և թվում էր, թե նա ոչ ոքի պետք չէր, ուստի կամացուկ դիմեց դեպի փոքրիկ դահլիճ, որտեղ ուտում-խմում էին, և մեծ

թեթևություն զգաց, նորից տեսնելով սպասավորներին։ Ներունի սպասավորը առաջարկեց նրան մի բան ուտել, և նա համաձայնեց։ Ուտելով մի կոտլետ և լոբի ու խոսելով սպասավորի հետ առաջվա պարոնների մասին, Լևինը չկամենալով այլևս մտնել դահլիճ, որտեղ այնպես անախորժ էր նրա համար, գնաց նայելու վերնահարկը։

Վերնահարկը լիքն էր պճնազարդ կանանցով, որոնք կռացել էին ճաղերի վրայից դեպի ներքև ու աշխատում էին լսողությունից չփախցնել ներքևում արտասանվող ոչ մի խոսք։ Կանանց մոտ նստել ու կանգնել էին վայելչատես փաստաբաններ, գիմնազիայի ակնոցավոր ուսուցիչներ ու սպաներ։ Ամենուր խոսում էին ընտրությունների և այն մասին, թե ինչպե՞ս տանջվեց պարագլուխը և ինչ լա՞վ էին վիճաբանությունները։ Մի խմբում Լևինը գովասանք լսեց իր եղբոր մասին։ Մի տիկին ասում էր փաստաբանին.

— Ի՞նչ ուրախ եմ, որ լսեցի Կոզնիշևին։ Դրա համար արժեր սոված մնալ։ Հիանալի է։ Ինչ պարզ է բոլորը և լսելի։ Ձեզ մոտ դատարանում ոչ ոք այդպես չի խոսում։ Գուցե մենակ Մայդելը, բայց նա էլ բնավ այդպես պերճախոս չէ։

Ազատ տեղ գտնելով ճաղերի մոտ, Լևինը կռացավ ու սկսեց նայել և ականջ դնել։

Բոլորը ազնվականները նստել էին ցածր միջնորմերի ետևում՝ ըստ գավառների։ Դահլիճի մեջտեղում կանգնած էր համազգեստով մի մարդ և բարակ, բարձր ձայնով հայտարարում էր.

— Ազնվականության նահանգական պարագլխի թեկնածության համար քվեարկվում է շտաբ-ռոտմիստր Եվգենիյ Իվանովիչ Ապուխտինը։— Տիրեց մեռելային լռություն և լսվեց ծերունական մի թույլ ձայն.

— Հրաժարվեց։

— Քվեարկվում է արքունի խորհրդատու Պյոտր Պետրովիչ Բոլը,— սկսեց նորից նախկին ձայնը։

— Հրաժարվեց,— լսվեց մի երիտասարդ ճղճղան ձայն։

Նորից սկսվում էր նույն բանը, և նորից՝ «հրաժարվեց»։ Այդպես շարունակվեց մոտ մեկ ժամ։ Լևինը կռացած ճաղերի վրա, նայում էր ու լսում։ Սկզբում նա զարմանում էր և ուզում էր հասկանալ, թե ի՞նչ էր նշանակում այդ, հետո հա-

մոգվելով, որ ինքը դա չի կարող հասկանալ, սկսեց ձանձրանալ։ Ապա մտաբերելով այն բոլոր հուզումն ու գաղգաղանքը, որ ինքը տեսավ ամենքի դեմքին, տխրեց. նա վճռեց վերադառնալ տուն և իջավ ներքև։ Անցնելով վերնահարկի նախասենյակով, նա տեսավ ետ ու առաջ քայլող վհատ մի գիմնազիստի՝ ուռած աչքերով։ Իսկ սանդուղքի վրա նրան հանդիպեց մի զույգ՝ մի տիկին, որ արագ վազում էր կրունկների վրա և դատախազի թեթևաքայլ օգնականը։

— Ես ասում էի ձեզ, որ չեք ուշանա,— ասաց դատախազն այն ժամանակ, երբ Լևինը ետ քաշվեց, ճանապարհ տալով տիկնոջը։

Լևինն արդեն ելքի սանդուղքի վրա էր և ժիլետի գրպանից հանում էր իր մուշտակի համարը, երբ քարտուղարը բռնեց նրան։ — Համեցե՛ք, Կոնստանտին Դմիտրիչ, քվեարկում են։

Թեկնածուի համար քվեարկվում էր սկզբում այնպես եռանդով հրաժարվող Նևեդովսկին։

Լևինը մոտեցավ դահլիճի դռանը. դուռը փակ էր։ Քարտուղարը բախեց, դուռը բացվեց, և Լևինի առաջով ծլկվեցին կարմրած երկու կալվածատերեր։

— Հոգիս դուրս եկավ,— ասաց կարմրկտած կալվածատերերից մեկը։

Կալվածատիրոջ ետևից դուրս ցցվեց նահանգական պարագլխի դեմքը։ Այդ դեմքը սարսափելի էր ուժասպառումից ու վախից։

— Ես չասացի՞ քեզ՝ դուրս չթողնել,— բղավեց նա պահապանի վրա։

— Ես նե՛րս թողի, ձերդ գերազանցություն։

— Աստված իմ,— և ծանր հառաչելով, նահանգական պարագլուխը հոգնած, գլլալով իր սպիտակ շալվարով, գլուխը կախ գցած, գնաց դահլիճի մեջտեղով դեպի մեծ սեղանը։

Նևեդովսկուն տվին ավելի շատ քվե, ինչպես և հույս ունեին, ու նա ընտրվեց նահանգական պարագլուխ։ Շատերն ուրախ էին, շատերը՝ գոհ, երջանիկ, շատերը հիացած էին, շատերը՝ դժգոհ ու դժբախտ էին։ Նահանգական պարագլուխը հուսահատված էր և չէր կարողանում ծածկել այդ։ Երբ Նևեդովսկին գնաց դահլիճից, ամբոխը շրջապատեց նրան ու խանդավառությամբ հետևում էր նրան, ինչպես առաջին օրը հետևում էր ընտրությունները բացող նահանգապետին, ինչպես հետևում էր Սնետկովին, երբ ընտրվեց սա։

XXXI

Նորընտիր նահանգական պարագլուխը և նորերի հաղթանակող պարտիայից շատերն այդ օրը ճաշում էին Վրոնսկու մոտ։

Վրոնսկին եկավ ընտրություններին և՛ այն պատճառով, որ նրա համար ձանձրալի էր գյուղում ու պետք էր իր ազատության իրավունքների մասին հայտարարել Աննային, և՛ այն նկատառումով, որպեսզի աջակցելով Սվիյաժսկուն ընտրությունների ժամանակ, երախտահատույց լինի նրան այն աշխատանքի համար, որ նա գործ էր դրել Վրոնսկու համար զեմստվոյի ընտրություններին, և ամենից ավելի այն պատճառով, որ խստորեն կատարի ազնվականի ու հողատիրոջ իր ընտրած նոր դրության բոլոր պարտավորությունները։ Բայց նա բնավ չէր սպասում, որ ընտրությունների այդ գործն այնպես գրավեր իրեն, այնպես կլաներ իր հետաքրքրությունը, որ ինքը կարողանար այդքան լավ կատարել այդ գործը։ Նա բոլորովին նոր մարդ էր ազնվականների շրջանում, բայց հայտնապես հաջողություն ուներ և չէր սխալվում, կարծելով, որ արդեն ազդեցություն է ձեռք բերել ազնվականների մեջ։ Նրա ազդեցությանը նպաստեցին նրա հարստությունն ու տոհմիկությունը, քաղաքում հիանալի այն շենքը, որ դիջեց նրան իր հին ծանոթը՝ Շիրկովը, որն զբաղվում էր ֆինանսական գործերով ու հիմնել էր Կաշինում բարգավաճող բանկ. Վրոնսկու ընտիր խոհարարը, որին նա բերել էր իր հետ գյուղից, բարեկամությունը նահանգապետի հետ, որը Վրոնսկու ընկերն էր, այն էլ հովանավորվող ընկերը. իսկ ամենից ավելի՝ նրա պարզ, հավասար վերաբերմունքն ամենքին, որը շուտով ստիպեց ազնվականության մեծամասնությանը՝ փոխելու իր դատողությունը նրա կարծեցյալ հպարտության մասին։ Նա ինքն զգում էր, որ բացի այդ խև պարոնից, որն ամուսնացած էր Կիտի Շչերբացկայայի հետ, որն à propos de bottes մոլի զայրույթով

[1] Ոչ տարավ, ոչ բերեց, հանկարծ։

ասաց իրեն մի շարք անտեղի հիմարություններ, յուրաքանչյուր աղնվական, որի հետ ծանոթանում էր ինքը, դառնում էր իր կողմնակիցը։ Նա պարզ տեսնում էր, և ուրիշներն էլ խոստովանում էին այդ, որ Նևեդովսկու հաջողությանը շատ խոշոր չափով նպաստեց ինքը։ Եվ այժմ, իր սեղանի շուրջը, տոնելով Նևեդովսկու ընտրությունը, նա համակված էր հաղթանակի հաճելի զգացումով իր ընտրյալի նկատմամբ։ Ընտրությունները այնպես գրավեցին նրան, որ եթե ինքն ամուսնանա մինչև հետագա եռամսյակը, մտածում էր քվեարկվել,— ինչպես ժոկեի միջոցով մրցանակ տանելուց հետո մարդ ինքն է ուզում ձիարշավել։

Իսկ այժմ տոնվում էր ժոկեի մրցանակաշահումը։ Վրոնսկին նստել էր սեղանի գլխին, նրա աջ կողմում նստած էր երիտասարդ նահանգապետ՝ արքայական շքախմբի գեներալը։ Ամենքի համար սա նահանգի տերն էր, որը հանդիսավորությամբ բացեց ընտրությունները, ճառ ասաց և շատերի մեջ հարուցեց հարգանքի ու ստրկամտության զգացում, ինչպես նկատեց Վրոնսկին. իսկ Վրոնսկու համար սա Մասլով Կատկան էր,— այդպես էր նրա մականունը պաժերի դպրոցում,— որը քաշվում էր Վրոնսկու ներկայությամբ և որին Վրոնսկին mettre à son aise[1]։ Ձախ կողմում նստած էր Նևեդովսկին իր պատանեկան, անհոգդոդդ և թունոտ դեմքով։ Նրա հետ Վրոնսկին պարզ էր ու հարգալից։

Սվիյաժսկին իր անհաջողությունը տանում էր ուրախ։ Դա նույնիսկ անհաջողություն չէր նրա համար, ինչպես ասաց ինքը, բաժակը ձեռքին դիմելով Նևեդովսկուն. ավելի լավ պարագլուխ չէր կարելի գտնել այն նոր ուղղության համար, որին պետք է հետևի աղնվականությունը։ Այդ պատճառով աղնիվ ամեն ինչ և ամեն ոք, ինչպես ասաց նա, կանգնած էր այսօրվա հաջողության ու նրա հաղթանակի կողմը։

Ստեպան Արկադևիչը նույնպես ուրախ էր, որ ուրախ ժամանց ունեցավ և որ ամենքը գոհ են։ Հիանալի ճաշի ընթացքում վերհիշվում էին ընտրությունների միջադեպերը։ Սվիյաժսկին կոմիկորեն վերարտադրեց պարագլխի արտասվաթոր ճառը և նշեց, դիմելով Նևեդովսկուն, թե նորին գերազանցությունն ստիպված կլինի ընտրելու գումարների ստուգման ուրիշ, ավելի բարդ եղանակ, քան արցունքները։ Մի ուրիշ կատակաստեր աղնվական պատմեց, թե ինչպե՛ս նահանգական պարագլխի պարահանդեսի համար բերել էին տվել գուլպաներով սպասավորներ և, թե ինչպե՛ս հիմա պետք է նրանց ետ ուղարկել, եթե նահանգական նոր պարագլուխը պարահանդես չկազմակերպի գուլպաներ հագած սպասավորներով։

Ճաշի ժամանակ անընդհատ դիմելով Նևեդովսկուն, ասում էին «մեր նահանգական պարագլուխ» և «ձերդ գերազանցություն»։

Այդ ասում էին նույնպիսի բավականությամբ, ինչպես երիտասարդ կնոջը կանչում են „madame" և ամուսնու անունով։ Նևեդովսկին ձևացնում էր, որ ինքը ո՛չ միայն անտարբեր է, այլև արհամարհում է այդ կոչումը, բայց ակնհայտ էր, որ նա երջանիկ է և իրեն պահում է սանձահարված՝ չարտահայտելու համար այնպիսի բերկրանք, որը սազական չէր այն նոր, ազատամիտ միջավայրին, ուր գտնվում էին ամենքը։

Ճաշի ժամանակ մի քանի հեռագիր ուղարկեցին այն մարդկանց, որոնք հետաքրքրվում էին ընտրությունների ընթացքով։ Ստեպան Արկադևիչն էլ, որը շատ ուրախ էր, ուղարկեց Դարյա Ալեքսանդրովնային հետևյալ բովանդակությամբ հեռագիր. «Նևեդովսկին ընտրվեց տասներկու ձայնով։ Շնորհավորում եմ։ Հայտնիր»։ Նա հեռագիրը թելադրեց բարձրաձայն, ասելով. «Պետք է ուրախացնել նրանց»։ Իսկ Դարյա Ալեքսանդրովնան ստանալով հեռագիրը, հառաչեց միայն նրա վրա ծախսված ռուբլու առթիվ ու հասկացավ, որ բանը եղել է ճաշի վերջում։ Նա գիտեր, որ Ստիվան ճաշերի վերջում թուլություն ուներ „faire jouer le télégraphe"[1]։

Ամեն ինչ, հիանալի ճաշի և գինիների հետ, որոնք վերցված էին ո՛չ թե ռուս գինեվաճառներից, այլ ուղղակի արտասահմանյան ֆիրմաներից, շատ աղնիվ էր, պարզ և ուրախ։ Մոտ քսան հոգուց բաղկացած այդ մարդկանց ընտրել էր Սվիյաժսկին իրենց համախոհ, ազատամիտ, միաժամանակ սրամիտ ու կարգին նոր գործիչներից։ Բաժակաճառեր էին առաջարկում, նույնպես կես-կատակ, կես-շիտակ, թե՛ նա-

[1] Քաշալեր էր։

[1] Խաղ անելու հեռագրատանը։

հանդիսական նոր պարագլխի կենացը, թե՛ նահանգապետի, թե՛ բանկի դիրեկտորի, թե՛ «մեր սիրալիր հյուրընկալի» կենացը։

Վռոնսկին գոհ էր։ Նա բնավ չէր սպասում գավառում այդպիսի դուրհաճո տոնի։

Հաշի վերջում ավելի զվարճալի դարձավ։ Նահանգապետը խնդրեց Վռոնսկուն՝ դնալ կրոնական եղբայրության օգտին տրվող համերգին, որը կազմակերպում էր նրա կինը և ցանկանում էր ծանոթանալ Վռոնսկու հետ։

— Այնտեղ պարահանդես է լինելու, ու դու կտեսնես մեր դեղեցկուհուն։ Իսկապես, հիանալի է։

— Not in my line[1],— պատասխանեց Վռոնսկին, որը սիրում էր այդ արտահայտությունը, բայց ժպտաց ու խոստացավ գնալ։

Սեղանից վեր կենալուց առաջ, երբ ամենքը վառեցին ծխախոտները, Վռոնսկու կամերդիները մոտեցավ նրան՝ մատուցարանի վրա դրված նամակով։

— Վոդովիժենսկոյեից՝ հատուկ սուրհանդակի ձեռքով,— ասաց նա։ Նշանակալից արտահայտությամբ։

— Զարմանալի բան, ինչքան նման է նա դատախազի օգնական Ավենտիդկուն,— ասաց կամերդիների մասին հյուրերից մեկը ֆրանսերեն, մինչ Վռոնսկին խոժոռված կարդում էր նամակը։

Նամակն Աննայից էր։ Նախքան նամակը կարդալը, Վռոնսկին արդեն գիտեր նրա բովանդակությունը։ Ենթադրելով, որ ընտրությունները կվերջանան հինգ օրում, նա խոստացավ վերադառնալ ուրբաթ։ Այսօր շաբաթ էր, և նա գիտեր, որ նամակի բովանդակությունը կշտամբանք էր այն առթիվ, որ ինքը չվերադարձավ ժամանակին։ Հավանորեն դեռ տեղ չէր հասել այն նամակը, որ նա ուղարկել էր երեկ երեկոյան։

Բովանդակությունը հենց այն էր, ինչ սպասում էր նա, բայց ձևն անսպասելի էր և առանձնապես անախորժ։ «Անին շատ հիվանդ է, բժիշկն ասում է, որ կարող է թոքաբորբ լինել։ Ես մենակ գլուխս կորցնում եմ։ Իշխանազնուհի Վարվառան օդնական չէ, այլ խոչընդոտ։ Ես սպասում էի քեզ երեք օր առաջ, երեկ, և այժմ մարդ եմ ուղարկում իմանալու, թե որտե՛ղ ես դու և ի՛նչ ես անում։ Ես ինքս էի ուզում գալ, բայց մտադրությունս փոխեցի, իմանալով, որ դա տհաճ կլինի քեզ համար։ Որևէ պատասխան տուր, որ ես իմանամ, թե ի՛նչ անեմ»։

[1] Իմ ճաշակին չէ։

Երեխան հիվանդ է, իսկ նա ինքն ուզում էր գալ։ Աղջիկը հիվանդ է, և այս թշնամական տոնը։

Ընտրությունների այդ անմեղ ուրախությունը և այն մռայլ, ծանր սերը, դեպի որը նա պետք է վերադառնար, ցնցեցին Վռոնսկուն իրենց հակադրությամբ։ Բայց հարկավոր էր գնալ, և նա առաջին դնացքով նույն գիշեր մեկնեց տուն։

XXXII

Վռոնսկու՝ ընտրություններին գնալուց առաջ, Աննան կշռադատելով, թե այն անախորժ տեսարանները, որոնք կրկնվում էին իրենց միջև ամեն անգամ, երբ մեկնում էր նա, կարող են միայն սառեցնել և ո՛չ թե կապել նրան, վճռեց ամեն ջանք գործ դնել, որպեսզի կարողանա հանգիստ տանել անջատումը։ Բայց այն սառը, խիստ հայացքը, որով Վռոնսկին նայեց նրան, երբ եկավ հայտնելու իր մեկնումի մասին, վիրավորեց Աննային, և Վռոնսկին դեռ չէր ճանապարհվել, երբ արդեն խախտվեց Աննայի հանգիստը։

Միայնության մեջ հետո վերլուծելով այդ հայացքը, որն արտահայտում էր ազատության իրավունք, Աննան հանգեց, ինչպես միշտ, մի եզրակացության՝ իր նվաստացման գիտակցությանը։ «Նա իրավունք ունի գնալու երբ և ուր կամենա։ Ո՛չ միայն գնալու, այլև ինձ թողնելու։ Նա ունի ամեն իրավունք, իսկ ես ո՛չ մի իրավունք։ Բայց իմանալով այդ, նա չպետք է աներ այդ։ Սակայն ի՞նչ է արել նա... Նա նայեց ինձ սառը, խիստ հայացքով։ Հարկավ այդ անորոշելի է, անշոշափելի է, բայց այդպիսի բան չկար առաջ, և այդ հայացքը շատ բան է նշանակում,— մտածում էր Աննան։— Այդ հայացքը ցույց է տալիս, որ սկսվում է սառնությունը»։

Եվ թեպետ Աննան համոզվեց, որ սկսվում է սառնությունը, այսուամենայնիվ ինքն անելու բան չուներ, չէր կարող ոչ մի բանում փոխել իր վերաբերմունքը դեպի Վռոնսկին։ Ճիշտ այնպես, ինչպես առաջ՝ միայն սիրով ու հրապույրով կարող էր պահել նրան։ Ճիշտ այդպես էլ, ինչպես առաջ՝ ցերեկն զբաղմունքներով ու գիշերը մորֆիով Աննան կարող էր խլացնել այն սարսափելի մտքերը, թե ի՛նչ կլինի, եթե Վռոն-

սկին այլևս չսիրի իրեն։ Ճիշտ է, կար էլի մի միջոց՝ չպահել նրան,— դրա համար Աննան ոչինչ չէր ուզում, բացի նրա սիրուց,— այլ մոտիկ լինել նրա հետ, լինել այնպիսի դրության մեջ, որ նա չլքեր իրեն։ Այդ միջոցը ապահարզանն էր և ամուսնությունը։ Ու Աննան սկսեց ցանկանալ այդ ու վճռեց համաձայնել հենց առաջին դեպքում, երբ Վրոնսկին կամ Ստիվան խոսք բանան այդ մասին։

Այսպիսի մտքերի մեջ Աննան անցկացրեց առանց Վրոնսկու հինգ օր, այն օրերը հենց, երբ Վրոնսկին պետք է բացակա լիներ։

Զբոսանքները, զրույցներն իշխանազնուհի Վարվառայի հետ, այցելությունները հիվանդանոցին, իսկ, որ գլխավորն է՝ ընթերցանությունը, իրար ետևից այս կամ այն գրքի ընթերցանությունը, սպառում էին Աննայի ժամանակը։ Բայց վեցերորդ օրը, երբ կառապանը վերադարձավ առանց Վրոնսկու, Աննան զգաց, որ այլևս անկարող է որևէ բանով խլացնելու իր միտքը նրա և այն մասին, թե ի՞նչ է անում նա այնտեղ։ Հենց այդ ժամանակ հիվանդացավ նրա աղջիկը։ Աննան սկսեց խնամել փոքրիկին, բայց այդ չցրեց նրա մտածմունքները, մանավանդ որ հիվանդությունը վտանգավոր չէր։ Որքան աշխատում էր, չէր կարողանում սիրել այդ աղջկան, իսկ ձևանալ չէր հաջողվում։ Այդ օրը իրիկնադեմին մնալով մենակ, Աննան զգաց իր մեջ Վրոնսկու համար այնպիսի երկյուղ, որ վճռեց գնալ քաղաք, բայց լավ մտածելուց հետո գրեց Վրոնսկու ստացած հակասական նամակը և առանց կարդալու այն, ուղարկեց հատուկ սուրհանդակի ձեռքով։ Հետևյալ առավոտ Աննան ստացավ նրա գրությունը և զղջաց իր նամակի համար։ Աննան սարսափով սպասում էր, թե կկրկնվի այն խիստ հայացքը, որ Վրոնսկին գցեց նրա վրա մեկնելուց առաջ, մանավանդ երբ իմանա, որ աղջկա հիվանդությունը վտանգավոր չի եղել։ Բայց և այնպես Աննան ուրախ էր, որ գրեց նրան։ Այժմ արդեն Աննան խոստովանում էր ինքն իրեն, որ Վրոնսկին նեղվում է իրենից, որ Վրոնսկին ափսոսանքով է թողնում իր ազատությունը՝ Աննայի մոտ վերադառնալու համար, բայց չնայած դրան, նա ուրախ էր, որ Վրոնսկին կգա։ Թող Վրոնսկին նեղվի, բայց կլինի այստեղ, իր հետ, որպեսզի ինքը տեսնի նրան, իմանա նրա յուրաքանչյուր շարժումը։

Աննան նստել էր ընդունարանում, լամպի լույսի տակ, ձեռքին Թենի նոր գիրքը և կարդում էր, ականջ դնելով դրսից լսվող քամու ձայնին ու սպասելով ամեն րոպե կառքի գալուն։ Մի քանի անգամ նրան թվաց, որ անիվների ձայն լսեց, բայց սխալվեց. վերջապես լսվեց ո՛չ միայն անիվների ձայնը, այլև կառապանի կանչը և մի խուլ հնչյուն՝ ծածկոցավոր գլխավոր մուտքի մեջ։ Նույնիսկ իշխանազնուհի Վարվառան, որ պասիանս էր բաց անում, հաստատեց այդ բանը, և Աննան բռնկվելով վեր կացավ, բայց փոխանակ գնալու ներքև, ինչպես առաջ գնացել էր երկու անգամ, կանգ առավ։ Նա հանկարծ ամաչեց իր խաբեության համար, բայց ամեն բանից ավելի սարսափելի թվաց այն, թե ինչպե՞ս կընդունի Վրոնսկին իրեն։ Վիրավորանքի զգացումն անցավ. նա վախենում էր միայն Վրոնսկու դժգոհության արտահայտությունից։ Նա հիշեց, որ արդեն երկրորդ օրն է, ինչ բոլորովին առողջ էր աղջիկը։ Նա նույնիսկ սրտնեղեց, որ փոքրիկն առողջացավ հենց այն ժամանակ, երբ ուղարկվեց նամակը։ Հետո Աննան հիշեց նրան, որ նա այստեղ է, ամբողջովին այստեղ է՝ իր ձեռքերով, աչքերով։ Աննան լսեց նրա ձայնը։ Եվ մոռացած ամեն ինչ, խնդագին վազեց նրան ընդառաջ։

— Ինչպե՞ս է Անին,— երկչոտությամբ հարցրեց Վրոնսկին ներքևում, նայելով վազելով եկած Աննային։

Վրոնսկին նստել էր աթոռին, իսկ ծառան հանում էր նրա տաք կոշիկները։

— Ոչինչ, լավ է։

— Իսկ դո՞ւ,— ասաց Վրոնսկին, թափ տալով զգեստը։

Աննան երկու ձեռքով բռնեց նրա ձեռքը և քաշեց նրան դեպի իր իրանը, աչք չհեռացնելով նրանից։

— Ես շատ ուրախ եմ,— ասաց Վրոնսկին սառը զննելով նրան, նրա սանրվածքը, նրա հագուստը, որը, Վրոնսկին գիտեր, նա հագել էր իր համար։

Այս բոլորը դուր էր գալիս Վրոնսկուն, բայց արդեն քանիքանի՛ անգամ դուր էր եկել։ Եվ Վրոնսկու դեմքի վրա երևաց այն քարե-խիստ արտահայտությունը, որից այնպես վախենում էր Աննան։

— Ես շատ ուրախ եմ։ Իսկ դու առո՞ղջ ես,— ասաց Վրոն-

նկին, թաշկինակով սրբելով թաց մորուքը և համբուրելով Աննայի ձեռքը։

«Միևնույն է,— մտածում էր Աննան,— միայն թե նա լինի այստեղ, իսկ երբ նա այստեղ է, չի կարող, չի համարձակվի չսիրել ինձ»։

Երեկոն անցավ երջանիկ և ուրախ՝ իշխանազնուհի Վարվառայի ներկայությամբ, որը գանգատվում էր Վրոնսկուն, թե Աննան մորֆին էր ընդունում առանց նրան։

— Ի՞նչ պիտի անեի։ Չէի կարողանում քնել... Մտքերը խանգարում էին։ Իր ներկայությամբ ես երբեք չեմ ընդունում։ Համարյա երբեք։

Վրոնսկին պատմեց ընտրությունների մասին, և Աննան կարողանում էր իր հարցերով հարուցել նրա մեջ հենց այն բանը, ինչն ուրախացնում էր նրան, այսինքն՝ նրա հաջողությունը։ Աննան պատմեց նրան այն բոլորը, ինչ հետաքրքրում էր նրան տան մեջ։ Եվ Աննայի բոլոր տեղեկությունները վերին աստիճանի ուրախալի էին։

Բայց ուշ երեկոյան, երբ նրանք մնացին մենակ, Աննան, տեսնելով, որ ինքը նորից լիովին տիրեց նրան, կամեցավ ջնջել նամակի համար իր վրա գցած Վրոնսկու հայացքի ծանր տպավորությունը։

— Խոստովանիր, որ դու բարկացար, ստանալով իմ նամակը և չհավատացիր ինձ։

Հենց որ Աննան ասաց այդ խոսքը, իսկույն հասկացավ, որ ինչքան էլ Վրոնսկին սիրահույզ էր տրամադրված այժմ իր հանդեպ, միևնույն է, չի ներել այդ։

— Այո՛,— ասաց նա։— Նամակն այնպես տարօրինակ էր. մի կողմից հիվանդ է Անին, իսկ մյուս կողմից դու ուզում էիր գալ։

— Այդ բոլորը ճիշտ էր։

— Ես չեմ էլ կասկածում։

— Ո՛չ, դու կասկածում ես. դժգոհ ես, ես տեսնում եմ այդ։

— Ո՛չ մի բոպե։ Ես միայն դժգոհ եմ նրանից, դա ճիշտ է, որ դու կարծես չես ուզում ընդունել, թե կան պարտականություններ...

— Համերգ գնալու պարտականություններ...

— Լավ է, չխոսենք,— ասաց Վրոնսկին։

— Իսկ ինչո՞ւ չխոսենք,— վրա բերեց Աննան։

— Ես միայն ուզում եմ ասել, թե կարող են պատահել անհրաժեշտ գործեր։ Ա՜յ, ահա հիմա ես պետք է գնամ Մոսկվա, տան գործով... Ա՜խ, Աննա, ինչո՞ւ ես դու այդպես ղըրզրված։ Մի՞թե դու չգիտես, որ չեմ կարող ապրել առանց քեզ։

— Իսկ եթե այդպես է,— ասաց Աննան հանկարծ փոխված ձայնով,— ուրեմն դու նեղվում ես այս կյանքից... Այո՛, դու գալիս ես մի օրով և մեկնում ես, ինչպես վարվում են...

— Աննա, դա անգթություն է։ Ես պատրաստ եմ տալու ամբողջ կյանքս...

Բայց Աննան չէր լսում նրան։

— Եթե դու գնաս Մոսկվա, ես էլ կգամ։ Ես չեմ մնա այստեղ։ Կամ մենք պիտի բաժանվենք, կամ ապրենք միասին։

— Դու հո գիտես, որ դա իմ միակ ցանկությունն է։ Բայց դրա համար...

— Հարկավոր է ապահարզա՞ն։ Ես կգրեմ նրան։ Ես տեսնում եմ, որ չեմ կարող այսպես ապրել... բայց ես կգնամ քեզ հետ Մոսկվա։

— Կարծես՝ դու սպառնում ես ինձ։ Ես ո՛չ մի բան այնպես չեմ ցանկանում, ինչպես չանջատվելը քեզանից,— ասաց Վրոնսկին ժպտալով։

Սակայն նրա աչքերում փայլեց հետապնդվող ու կատաղած մարդու ո՛չ սոսկ սառը, այլև չար հայացք, երբ նա ասում էր այս քնքուշ խոսքերը։

Աննան տեսավ այդ հայացքը և ճիշտ գուշակեց նրա նշանակությունը։

«Եթե այդպես է, ուրեմն դա դժբախտություն է», ասում էր Վրոնսկու հայացքը։ Բոպեական տպավորություն էր, բայց Աննան երբեք այլևս չմոռացավ այն։

Աննան նամակ գրեց ամուսնուն, խնդրելով նրան ապահարզանի մասին և նոյեմբերի վերջերին բաժանվելով իշխանազնուհի Վարվառայից, որը պետք է գնար Պետերբուրգ, Վրոնսկու հետ միասին տեղափոխվեց Մոսկվա։ Յուրաքանչյուր օր սպասելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի պատասխանին և այնուհետև ապահարզանին, նրանք այժմ ամուսինների պես բնակություն հաստատեցին միասին։

ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Արդեն երրորդ ամիսն էր, որ Լևիններն ապրում էին Մոսկվայում։ Վաղուց արդեն անցել էր այն ժամկետը, երբ պետք է ծննդաբերեր Կիտին, համաձայն այդ գործերն իմացող մարդկանց ամենաստույգ հաշիվների. իսկ նա դեռ չէր «ազատվել» և ո՛չ մի բանից նկատելի չէր, որ ծննդաբերության ժամանակն այժմ ավելի մոտ էր, քան երկու ամիս առաջ։ Ե՛վ բժիշկը, և՛ մանկաբարձուհին, և՛ Դոլլին, և՛ մայրը, և՛ մանավանդ Լևինը, որն առանց սարսափի չէր կարողանում մտածել մոտալուտ դեպքի մասին, սկսում էին համբերությունից դուրս գալ և անհանգստանալ։ Կիտին էր միայն, որ իրեն զգում էր միանգամայն հանգիստ ու երջանիկ։

Կիտին այժմ պարզ գիտակցում էր իր մեջ սիրո նոր զգացման սաղմնավորում, դեպի ապագա, իր համար մասամբ արդեն ներկա երեխան և հիացմունքով ընտելանում էր այդ զգացումին։ Երեխան այժմ արդեն լիովին Կիտիի մասնիկը չէր, այլ երբեմն ապրում էր իր՝ նրանից անկախ կյանքով։ Հաճախ Կիտին ցավ էր զգում այդ բանից, բայց դրա հետ միասին ուզում էր ծիծաղել այդ տարօրինակ նոր ուրախությունից։

Ամենքը, ում սիրում էր Կիտին, նրա հետ էին, և բոլորն այնպես բարի էին նրա հանդեպ, այնպես փայփայում էին նրան, այնպես ամեն բանում նրան պատկերանում էր միայն հաճելին, որ եթե նա չիմանար ու չզգար, թե այս բոլորը պիտի շուտով վերջանա, նա չէր ցանկանա ուրիշ ավելի լավ և ավելի հաճելի կյանք։ Նրա համար այդ կյանքի հրապույրը փչացնող միակ բանն այն էր, որ նրա ամուսինն այն չէր, որին սիրում էր Կիտին և որպիսին էր նա գյուղում։

Կիտին սիրում էր ամուսնու հանգիստ, գուրգուրալից և հյուրասեր տոնը գյուղում։ Իսկ քաղաքում նա շարունակ թվում էր անհանգիստ ու զգույշ, կարծես վախենալով, չլինի թե մեկը վիրավորի իրեն, և, որ գլխավորն է՝ Կիտիին։ Այնտեղ՝ գյուղում, հայտնապես իրեն զգալով իր տեղում, չէր շտապում գնալ որևէ տեղ ու երբեք առանց զբաղմունքի չէր լինում։ Այստեղ՝ քաղաքում, նա մշտապես շտապում էր, չլինի՞ թե որևէ բան բաց թողնի, բայց իրապես անելիք չուներ։ Եվ Կիտին խղճում էր նրան։ Ուրիշներին, Կիտին այդ գիտեր, նա չէր պատկերանում խղճուկ. ընդհակառակն, երբ հասարակության մեջ Կիտին նայում էր նրան, ինչպես երբեմն նայում են սիրած մարդուն, աշխատելով տեսնել նրան որպես օտարի, որպեսզի կարելի լինի որոշել այն տպավորությունը, որ նա թողնում է ուրիշների վրա,— Կիտին տեսնում էր՝ նույնիսկ իր խանդի համար երկյուղի զգացումով, որ իր ամուսինը ո՛չ միայն խղճուկ չէ, այլ շատ հրապուրիչ է իր մարդավարությամբ, իր փոքր-ինչ հնացած, քաշվող քաղաքավարությամբ կանանց հետ. իր ուժեղ ֆիգուրով և մանավանդ, ինչպես թվում էր Կիտիին, արտահայտիչ դեմքով։ Բայց նա ամուսնուն տեսնում էր ո՛չ թե դրսից, այլ ներսից. նա տեսնում էր, որ իր ամուսինը այստեղ իսկականը չէ. այլ կերպ Կիտին չէր կարողանում որոշել նրա կացությունը։ Երբեմն Կիտին իր հոգում հանդիմանում էր ամուսնուն այն բանի համար, որ նա չի կարողանում ապրել քաղաքում. իսկ երբեմն էլ գիտակցում էր, որ նրա համար իրոք դժվար էր դասավորել այստեղ իր կյանքն այնպես, որ գոհ լինի այդ կյանքից։

Իսկապես, ի՞նչ պիտի աներ նա։ Թղթախաղ չէր սիրում։ Ակումբ չէր հաճախում։ Կապ պահպանել, շփվել ուրախ աղանդարդկանց հետ, ինչպես, օրինակ՝ Օբլոնսկին էր, Կիտին այժմ արդեն գիտեր, թե ի՛նչ է նշանակում... այդ նշանակում էր խմել և խմելուց հետո գնալ ինչ-որ տեղ։ Նա առանց սոսկումի չէր կարողանում մտածել, թե ո՛ւր են գնում աղամարդիկ այդպիսի դեպքերում։ Լինել բարձր հասարակությա՞ն մեջ։ Բայց Կիտին գիտեր, որ դրա համար պետք է բավականություն գտնել երիտասարդ կանանց հետ մոտիկանալու մեջ, իսկ ինքը չէր կարող ցանկանալ այդ բանը։ Նստել տա՞նը կնոջ, մոր և քույրերի հետ։ Բայց որքան էլ հաճելի և ուրախ էին Կիտիի համար

միևնույն խոսակցությունները «Ալինայի-Նադինայի»,— ինչպես անվանում էր ծերունի իշխանը քույրերի միջև տեղի ունեցող այդ խոսակցությունները,— նա գիտեր, որ Լևինի համար դա պիտի ձանձրալի լիներ։ Ուրեմն ի՞նչ էր մնում նրան անել։ Շարունակել գրել իր դի՞րքը։ Նա փորձեց զբաղվել դրանով և սկզբում գնում էր դրադարան՝ քաղվածքներ անելու և տեղեկանքներ հավաքելու իր գրքի համար. բայց, ինչպես ասում էր նա կնոջը, որքան ավելի երկար ժամանակ ոչինչ չէր անում, այնքան ավելի քիչ ժամանակ էր մնում նրան։ Բացի դրանից, նա գանգատվում էր Կիտիին, որ ինքն այստեղ չափազանց շատ է խոսել իր գրքի մասին, ուստի դրա հետ կապված բոլոր մտքերը խճճվել են իր գլխում ու կորցրել իրենց հետաքրքրությունը։

Քաղաքային կյանքի միակ օգուտն այն էր, որ այստեղ, քաղաքում, ո՛չ մի վեճ երբեք տեղի չէր ունեցել նրանց միջև։ Պատճառն ա՞յն էր արդյոք, որ քաղաքային պայմաններն այլ էին, թե՞ այն, որ նրանք երկուսն էլ այդ տեսակետից դարձել էին ավելի զգույշ ու խոհամիտ, բայց Մոսկվայում նրանց մեջ գժտություն չէր ծագել խանդի պատճառով, որից նրանք այնպես վախենում էին, տեղափոխվելով քաղաք։

Այդ տեսակետից պատահեց նույնիսկ մի, նրանց երկուսի համար շատ կարևոր դեպք, այն է՝ Կիտիի հանդիպումը Վրոնսկու հետ։

Ծեր իշխանուհի Մարիա Բորիսովնան, Կիտիի սանամայրը, որը շատ էր սիրում նրան, ցանկացավ անպայման տեսնել նրան։ Կիտին, որն իր այդ դրությամբ ոչ մի տեղ չէր գնում, հոր հետ գնաց հարգելի պառավի մոտ և այնտեղ պատահեց Վրոնսկուն։

Այդ հանդիպումից Կիտին կարող էր իրեն կշտամբել այն բանում միայն, որ մի վայրկյան, երբ աշխարհիկ զգեստի մեջ ճանաչեց երբեմնի իրեն այնքան ծանոթ դիմագծերը, շունչը կտրվեց, արյունը հորդեց դեպի սիրտը, և վառ կարմրությունը, նա զգաց այդ, պատեց իր դեմքը։ Բայց շարունակվեց այդ միայն մի քանի վայրկյան։ Հայրը, որ դիտմամբ բարձր խոսում էր Վրոնսկու հետ, դեռ չէր վերջացրել իր խոսակցությունը, երբ Կիտին արդեն լիովին պատրաստ էր նայելու Վրոնսկուն, խոսելու նրա հետ, եթե պետք է, ճիշտ այնպես,

ինչպես նա խոսում էր իշխանուհի Մարիա Բորիսովնայի հետ, և որ գլխավորն է, այնպես, որպեսզի ամեն ինչ՝ մինչև վերջին առոգանությունն ու ժպիտը՝ հավանության արժանանար ամուսնու կողմից, որի անտեսանելի ներկայությունը նա կարծես զգում էր իր մոտ այդ րոպեին։

Կիտին ասաց Վրոնսկուն մի քանի խոսք, նույնիսկ հանգիստ ժպտաց նրա կատակի առթիվ՝ ընտրությունների մասին, որոնք Վրոնսկին անվանեց «մեր պառլամենտը»։ (Կիտին պետք է ժպտար, որպեսզի ցույց տար, որ հասկացավ կատակը)։ Բայց նա անմիջապես շուռ եկավ դեպի իշխանուհի Մարիա Բորիսովնան և ոչ մի անգամ չնայեց Վրոնսկուն, մինչև վերջինս վեր կացավ՝ հրաժեշտ տալու. այստեղ Կիտին նայեց նրան, բայց հայտնապես այն պատճառով միայն, որ անքաղաքավարություն կլիներ չնայել մի մարդու այն րոպեին, երբ հրաժեշտ է տալիս։

Կիտին շնորհապարտ էր հորն այն բանի համար, որ նա իրեն ոչինչ չասաց Վրոնսկուն հանդիպելու մասին. բայց այցից հետո կատարած սովորական զբոսանքի ժամանակ հոր առանձին քնքշությունից Կիտին տեսնում էր, որ հայրը գոհ էր իրենից։ Նա ինքն էլ էր գոհ իրենից։ Կիտին ո՛չ մի կերպ չէր սպասում, որ ուժ կունենա զսպելու հոգու խորքում դեպի Վրոնսկին տածած նախկին զգացումի բոլոր հիշողությունները և ո՛չ թե միայն թվալ, այլև լիովին լինել անտարբեր ու հանգիստ նրա հանդեպ։

Լևինը կարմրեց Կիտիից շատ ավելի, երբ սա ասաց նրան, որ պատահեց Վրոնսկուն իշխանուհի Մարիա Բորիսովնայի մոտ։ Կիտիի համար շատ դժվար էր այդ բանն ասել ամուսնուն, բայց ավելի դժվար էր շարունակել պատմել հանդիպումի մանրամասների մասին, որովհետև Լևինը ոչինչ չէր հարցնում կնոջը, այլ միայն խոժոռված նայում էր նրան։

— Ես շատ ափսոսում եմ, որ դու չկայիր,— ասաց Կիտին։— Ոչ թե, որ դու սենյակում չէիր... ես այնպես բնական չէի լինի քո ներկայությամբ... Ես այժմ կարմրում եմ շատ ավելի, շատ, շա՜տ ավելի,— ասում էր Կիտին, կարմրելով՝ արտասվելու աստիճան։— Ցավում եմ, որ դու չէիր կարող նայել մի ճեղքից։

Ճշմարտափայլ աչքերն ասում էին Լևինին, որ Կիտին գոհ

էր իրենից, և Լևինը, չնայած որ կինը կարմրում էր, անմիջապես հանգստացավ ու սկսեց հարցուփորձ անել նրան. այն, որ ուզում էր Կիտին։ Երբ Լևինն իմացավ բոլորը, մինչև անգամ այն մանրամասնությունը, որ կինը միայն առաջին վայրկյանին չկարողացավ չկարմրել, բայց որ հետո նա իրեն նույնպես պարզ ու թեթև էր զգում, ինչպես յուրաքանչյուր պատահական մարդու հետ, Լևինն ուրախացավ և ասաց, որ ինքը շատ ուրախ է դրա համար ու այսուհետև այնպես տրխմաբաբար չի վարվի, ինչպես ընտրություններին, այլ կաշխատի առաջին հանդիպման դեպքում լինել Վռոնսկու հետ, որքան հնարավոր է, ավելի սիրալիր։

— Այնպես տանջալից է մտածելը, թե կա մի մարդ, համարյա թշնամի, որին պատահելը ծանր է,— ասաց Լևինը։— Ես շատ, շատ ուրախ եմ։

II

— Ուրեմն խնդրեմ անցնես Բոլերի մոտ,— ասաց Կիտին ամուսնուն, երբ նա ժամը տասնմեկին, տանից դուրս գնալուց առաջ, մտավ կնոջ մոտ։— Ես գիտեմ, որ դու ճաշում ես ակումբում, հայրիկը գրել է քեզ։ Իսկ առավոտյան ի՞նչ ես անում։

— Պիտի գնամ Կատավասովի մոտ միայն,— պատասխանեց Լևինը։

— Իսկ ինչո՞ւ այդքան վաղ։

— Նա խոստացավ ինձ ծանոթացնել Մետրովի հետ։ Ես կուզենայի խոսել նրա հետ իմ աշխատության մասին, նա Պետերբուրգի հայտնի գիտնական է,— ասաց Լևինը։

— Հա՜, այդ նրա հոդվածն էիր այնպես գովում դու։ Իսկ հետո՞,— հարցրեց Կիտին։

— Գուցե մտնեմ նաև դատարան՝ քրոջս գործով։

— Իսկ համերգ չե՞ս գնում,— հարցրեց Կիտին։

— Է՜հ, մենակ ի՞նչ գնամ։

— Ո՛չ, գնա՛, այնտեղ կատարում են այդ նոր բաները... Դա քեզ այնպես հետաքրքրում էր։ Ես անպատճառ կգնայի։

— Համենայն դեպս՝ ճաշից առաջ ես կգամ տուն,— ասաց Լևինը, նայելով ժամացույցին։

— Հազիր սյուրտուկդ, որպեսզի ուղղակի գնաս կոմսուհի Բոլի մոտ։

— Մի՞թե դա հարկավոր է անպայման։

— Ա՜խ, անպայման։ Կոմսը եղավ մեզ մոտ։ Է՜, մի՞թե դժվար է այդ քեզ համար։ Կգնաս, կնստես, մի հինգ րոպե կխոսես եղանակի մասին, վեր կկենաս ու կգաս։

— Կհավատա՞ս, ես այնպես խորթացել եմ դրանից, և հենց այդ բանը ճնշում է ինձ։ Ի՞նչ բան է այդ։ Գալիս է օտար մի մարդ ու նստում, նստեց առանց որևէ գործի, խանգարեց նրանց, փչացրեց իր տրամադրությունը և դուրս գնաց։

Կիտին ծիծաղեց։

— Բայց չէ՞ որ դու այցելություններ անում էիր ամուրի ժամանակդ,— ասաց նա։

— Անում էի, սակայն միշտ ճնշվում էի, իսկ հիմա այնպես եմ ետ վարժվել, որ աստված վկա՝ ավելի լավ է երկու օր չճաշել այդ այցի փոխարեն։ Այնպես ճնշվում, քաշվում եմ։ Ինձ շարունակ թվում է, թե նրանք կվիրավորվեն, կասեն՝ ինչո՛ւ ես եկել առանց գործի։

— Ո՛չ, չեն վիրավորվի։ Դրա համար ես պատասխանատու եմ,— ասաց Կիտին, նայելով նրա դեմքին ծիծաղով։ Նա վերցրեց ամուսնու ձեռքը։— Դե՜հ, գնաս բարով... Գնա՛, խնդրեմ։

Լևինն արդեն ուզում էր դուրս գնալ՝ կնոջ ձեռքը համբուրելուց հետո, երբ Կիտին կանգնեցրեց նրան։

— Կոստյա, գիտե՞ս արդյոք, որ ինձ մոտ մնում է միայն հիսուն ռուբլի։

— Է՜, ի՞նչ կա որ, կգնամ բանկից կվերցնեմ, ինչքա՞ն է պետք,— հարցրեց Լևինը՝ կնոջը ծանոթ դժգոհության արտահայտությամբ։

— Ո՛չ, սպասիր։— Կիտին բռնեց նրա ձեռքից։— Խոսենք, դա ինձ անհանգստացնում է։ Կարծես, ես ավելորդ ոչինչ չեմ ծախսում, մինչդեռ դրամը հալվում է ու հալվում։ Երևի, կա մի բան, որ մենք այնպես չենք անում, ինչպես պետք է։

— Ամենևին,— ասաց Լևինը հազալով ու նայելով նրան աչքի տակով։

Այդ հազը ծանոթ էր Կիտիին։ Այդ ամուսնու խիստ դժգոհության արտահայտությունն էր, դժգոհություն ո՛չ թե կնոջից,

այլ ինքն իրենից։ Լևինը իրոք դժգոհ էր, բայց ո՛չ այն բանից, որ դրամ շատ էր ծախսվում, այլ որ նրան հիշեցնում էին այն, ինչի մասին ինքը կամենում է մոռանալ, իմանալով, որ այստեղ ինչ-որ վատ բան կա։

— Ես հրամայեցի Սոկոլովին վաճառել ցորենը և ջրաղացի համար վերցնել կանխապես։ Համենայն դեպս՝ դրամ կլինի։

— Ո՛չ, բայց ես վախենում եմ, որ առհասարակ շատ...

— Ամենևին, ամենևին,— կրկնեց Լևինը։ — Դե՜հ, մնաս բարով, հոգյա՛կս։

— Չէ՛, իրոք, ես երբեմն ափսոսում եմ, որ լսեցի մայրիկին։ Ինչ լա՜վ կլիներ գյուղում։ Թե չէ՝ ես բոլորիդ տանջեցի, և մենք ծախսում ենք դրամը...

— Ամենևին, ամենևին։ Դեռ երբեք չի պատահել, այն օրից սկսած, երբ ես ամուսնացել եմ, որ ասեի, թե այլ կերպ ավելի լավ կլիներ, քան ինչպես է՛։

— Ճշմարի՞տ,— ասաց Կիտին, նայելով ամուսնու աչքերին։

Լևինը այդ ասաց առանց մտածելու, միայն թե մխիթարեր կնոջը։ Բայց երբ նայելով Կիտիին, տեսավ, որ այդ ճշմարտաշող, սիրելի աչքերը հարցական հառած են իրեն, նույնը կրկնեց ի սրտե։ «Ես վճռականապես մոռանում եմ նրան», մտածեց Լևինը։ Ու հիշեց այն, ինչն այնպես մոտ ապագայում սպասում էր իրենց։

— Իսկ շո՞ւտ կլինի։ Ի՞նչ է ասում քո զգացողությունը,— շշնջաց Լևինը, բռնելով կնոջ երկու ձեռքը։

— Ես այնքան շատ եմ մտածել, որ հիմա ոչինչ չեմ մտածում ու չգիտեմ։

— Եվ սարսափելի չէ՞։

Կիտին արհամարհալից քմծիծաղեց։

— Ամենևին,— ասաց նա։

— Ուրեմն, եթե որևէ բան պատահի, ես Կատավասովի մոտ եմ։

— Ո՛չ, ոչինչ չի լինի, այդ մասին մի՛ մտածիր։ Ես հայրիկի հետ կերթամ այգի զբոսնելու։ Մենք կմտնենք Դոլլիի մոտ։ Ճաշից առաջ սպասում եմ քեզ։ Ա՜խ, հա։ Գիտե՞ս, որ Դոլլիի դրությունը դառնում է բոլորովին անտանելի։ Նա բոլորին պարտք է և դրամ չունի։ Երեկ մենք խոսում էինք մայրիկի և Արսենիի հետ (այդպես էր կանչում նա իր քույր Լվովայի ամուսնուն) և վճռեցինք քեզ ու նրան գցել Ստիվայի վրա։ Այդ միանգամայն անտանելի բան է։ Հայրիկի հետ չի կարելի խոսել դրա մասին... Բայց եթե դու և նա...

— Իսկ ի՞նչ կարող ենք անել մենք,— ասաց Լևինը։

— Համենայն դեպս դու կլինես Արսենիի մոտ, խոսի՛ր նրա հետ. նա քեզ կասի, թե ի՛նչ ենք վճռել մենք։

— Արսենիի հետ ես նախապես ամեն բանի համաձայն եմ։ Ուրեմն ես կերթամ նրա մոտ։ Ի դեպ, եթե ուզենամ գնալ համերգ, կերթամ Նատալիի հետ։ Դե՛, մնաս բարով։

Դրսի սանդուղքների վրա, տակավին ամուրի կյանք վարող ծերունի սպասավոր Կուզման, որ վարում էր քաղաքային տնտեսությունը, կանգնեցրեց Լևինին։

— Սիրունիկը (դա առեղի ձախակողմի ձին էր, որ բերել էին գյուղից) նորից պայտեցին, բայց էլի կաղում է,— ասաց նա։— Ի՞նչ կհրամայեք։

Սկզբում Մոսկվայում Լևինին զբաղեցնում էին գյուղից բերած ձիերը։ Նա ուզում էր տնտեսության այդ մասը սարքել, որքան հնարավոր է, ավելի լավ և աժան. բայց բանից դուրս եկավ, որ սեփական ձիերն ավելի թանկ էին նստում, քան կառապանականները, և այսուամենայնիվ, կառապան վարձում էին։

— Հրամայիր, թող մարդ ուղարկեն ձիաբույժի ետևից, գուցե սմբակի վրա ջարդվածք կա։

— Իսկ Կատերինա Ալեքսա՞նդրովնայի համար,— հարցրեց Կուզման։

Լևինին այժմ այլևս չէր զարմացնում, ինչպես Մոսկվայում նրա կյանքի սկզբնական շրջանում, որ Վոզդվիժենկայից Սիվցև-Վրաժեկ գնալու համար պետք էր ծանր կառեթին լծել մի զույգ ուժեղ ձիեր, տանել այդ կառեթը ձյան միջով քառորդ վերստ ու կանգնել այնտեղ չորս ժամ, վճարելով դրա համար հինգ ռուբլի։ Այժմ արդեն այդ նրան թվում էր բնական։

— Կառապանին հրամայիր, որ մի զույգ ձի լծի մեր կառեթին,— ասաց նա։

— Լսում եմ։

Եվ այսպես պարզ ու թեթև վճռելով, շնորհիվ քաղաքային պայմանների, այն դժվարությունը, որը գյուղում կպահանջեր այնքան անձնական աշխատանք և ուշադրություն, Լևինը դուրս եկավ սանդղամուտք ու կառք կանչելով, նստեց գնաց Նիկիտսկայա։ Ճանապարհին նա այլևս չէր մտածում դրամի մասին, այլ խորհում էր, թե ինչպե՞ս ինքը կծանոթանա Պետերբուրգի գիտնականի հետ, որը զբաղվում էր սոցիոլոգիայով, և կխոսի նրա հետ իր գրքի մասին։

Լևինին զարմացնում էին Մոսկվայում, ամենաառաջին օրերին միայն՝ գյուղական բնակչի համար տարօրինակ, ապարդյուն, բայց անխուսափելի այն ծախսերը, որ պահանջվում էին ամեն կողմից։ Բայց այժմ նա արդեն ընտելացել էր դրանց։ Նրա հետ այդ տեսակետից պատահեց այն, ինչ պատահում է, ասում են, հարբեցողների հետ. առաջին գավաթը՝ քրքռթալով, երկրորդը՝ տրճիկ տալով, իսկ երրորդից հետո՝ խայտալով։ Երբ Լևինը մանրում էր առաջին հարյուր ռուբլիանոցը՝ լիվրեներ գնելու լակեյի և բարապանի համար, նա ակամա հասկացավ, որ այդ լիվրեները ոչ ոքի պետք չեն, բայց անխուսափելիորեն անհրաժեշտ են, նկատի ունենալով այն, թե ինչպես զարմացան իշխանուհին ու Կիտին, երբ ինքն ակնարկեց, որ կարելի է յոլա գնալ առանց լիվրեի, որ այդ լիվրեները կարժենան ամառվա երկու բանվոր, այսինքն՝ մոտ երեք հարյուր աշխատանքային օր, զատկից մինչև պաս, այն էլ առավոտից մինչև ուշ երեկո տևող ծանր աշխատանքի օր, և այդ հարյուր ռուբլիանոցը գնում էր դեռ քրքռթալով։ Բայց հետևյալ հարյուրանոցը, որ մանրվեց ազգականներին տրվելիք ճաշի մթերք գնելու համար (այդ նստեց քսանութ ռուբլի), թեպետև Լևինին հիշել տվեց, թե քսանութ ռուբլին անում է ինը սոմար վարսակ, որ հնձել, կապել, կալսել, էրնել, մաղել ու հավաքել էին քրտնելով և տնքալով,— այսուամենայնիվ գնաց ավելի թեթև։ Իսկ այժմ մանրվող թղթադրամները վաղուց արդեն այլևս չէին հարուցում այդպիսի մտքեր և թռչում էին խայտալով։ Վաղուց արդեն կորել էր այն նկատառումը, թե համապատասխանո՞ւմ է արդյոք դրամ ձեռք բերելու համար գործ դրված աշխատանքն այն բավականությանը, որ պատճառում է դրամով գնածը։ Մոռացված էր նույնպես այն տրնտեսական հաշիվը, թե կա որոշ գին, որից պակաս չի կարելի

վաճառել որոշ հացահատիկ։ Հաճարը, որի գինը նա այնքան երկար ժամանակ հաստատ պահում էր, ծախվեց սոմարը հիսուն կոպեկով ավելի էժան, քան այն գինը, որ տալիս էին մի ամիս առաջ։ Ոչ մի նշանակություն չուներ այլևս նույնիսկ այն հաշիվը, թե այդպիսի ծախսերի դեպքում հնարավոր չի լինի տարին անցկացնել առանց պարտքի։ Պահանջվում էր միայն մի բան. բանկում ունենալ դրամ, առանց հարցնելու, թե որտեղի՞ց է այն, որպեսզի մարդ միշտ իմանար, թե վաղը ինչո՞վ կարելի է գնել տավարի միս։ Եվ այդ հաշիվը մինչև այսօր նա պահպանում էր. նա միշտ դրամ ուներ բանկում։ Բայց հիմա բանկում եղած դրամը ծախսվեց, և նա լավ չգիտեր, թե որտեղի՞ց դրամ վերցնի։ Եվ այդ մի բոպե փչացրեց նրա տրամադրությունը, երբ Կիտին հիշեցրեց դրամի մասին. սակայն նա ժամանակ չուներ դրա մասին մտածելու։ Նա գնում էր, միտք անելով Մետրովի հետ ծանոթանալու և Կատավասովի մասին։

III

Լևինն այս անգամ Մոսկվա գալուն նորից մոտիկ շփման մեջ մտավ իր համալսարանական նախկին ընկերոջ՝ պրոֆեսոր Կատավասովի հետ, որին չէր տեսել իր ամուսնությունից հետո։ Կատավասովը նրան հաճելի էր իր աշխարհայեցողության պայծառությամբ ու պարզությամբ։ Լևինը կարծում էր, որ Կատավասովի աշխարհայեցողության պայծառությունը բխում էր նրա բնության աղքատությունից, իսկ Կատավասովը կարծում էր, որ Լևինի մտքի անհետևողականությունը բխում էր նրա խելքի դիսցիպլինայի պակասից. բայց Կատավասովի պայծառությունը հաճելի էր Լևինին, և Լևինի դիսցիպլինայի չենթարկված մտքերի առատությունը հաճելի էր Կատավասովին, ու նրանք սիրում էին հանդիպել իրար և վիճել։

Լևինը կարդաց իր աշխատության մի քանի տեղերը Կատավասովին, և դրանք դուր եկան նրան։ Երեկ հանդիպելով Լևինին հրապարակական դասախոսության ժամանակ, Կատավասովն ասաց նրան, թե հայտնի Մետրովը, որի հոդվածն այնպես դուր եկավ Լևինին, գտնվում է Մոսկվայում և շատ

հետաքրքրվեց այն բանով, ինչ ասաց նրան Կատավասովը Լևինի աշխատության մասին, և որ Մետրովը վաղը լինելու է իր մոտ, ժամը տասնմեկին, ու շատ ուրախ կլինի նրա հետ ծանոթանալու համար։

— Հայտնապես ուղղվում եք, բարեկամ, հաճելի է տեսնել այդ,— ասաց Կատավասովը, դիմավորելով Լևինին փոքրիկ ընդունարանում։— Ես լսում եմ զանգի ձայն և մտածում, չի կարող պատահել, որ ժամանակին գա... Հը՞, ի՞նչ կասեք, ինչպե՞ս են չերնագորցիները։ Ի բնե ռազմիկներ են։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց Լևինը։

Կատավասովը մի քանի խոսքով հայտնեց նրան վերջին տեղեկությունները և մտնելով առանձնասենյակ, ծանոթացրեց Լևինին ոչ-բարձրահասակ, ամրակազմ, շատ հաճելի արտաքինով մի մարդու հետ։ Դա Մետրովն էր։ Կարճ ժամանակով խոսակցությունը կանգ առավ քաղաքականության և այն բանի վրա, թե ինչպե՞ս են նայում Պետերբուրգի բարձր շրջաններում վերջին դեպքերին։ Մետրովը հաղորդեց հավաստի աղբյուրից իրեն հայտնի այն խոսքերը, որ իբր ասել էր այդ առթիվ թագավորը և մինիստրներից մեկը։ Իսկ Կատավասովը նույնպես լսել էր հավաստիորեն, որ թագավորը բոլորովին այլ բան էր ասել։ Լևինն աշխատեց մտածել այնպիսի մի իրավիճակ, որտեղ կարող էին ասված լինել թե՛ մեկ, թե՛ մյուս խոսքերը, և ընդհատվեց այս թեմայի շուրջն սկսված խոսակցությունը։

— Ա՜յ, ահա գրել է համարյա մի ամբողջ գիրք հողի հանդեպ բանվորի բնական պայմանների մասին,— ասաց Կատավասովը,— ես մասնագետ չեմ, բայց ինձ, որպես բնագետի, դուր եկավ այն, որ նա մարդկությունը վերցնում է ոչ իբրև կենդանաբանական օրենքներից դուրս մի բան, այլ, ընդհակառակն, տեսնում է նրա կախումը միջավայրից ու այդ կախման մեջ փնտրում է զարգացման օրենքները։

— Դա շատ հետաքրքիր է,— ասաց Մետրովը։

— Իսկապես ես սկսեցի գրել գյուղատնտեսական գիրք, բայց ակամա զբաղվելով գյուղատնտեսության գլխավոր գործիքով՝ բանվորով,— ասաց Լևինը կարմրելով,— հասա բոլորովին անսպասելի հետևանքների։

Եվ Լևինը սկսեց զգույշ, կարծես՝ հող շոշափելով, նկարագրել իր հայեցակետը։ Նա գիտեր, որ Մետրովը մի հոդված էր գրել ընդհանուրի կողմից ընդունված քաղաքատնտեսության ուսմունքի դեմ, բայց թե ո՞ր աստիճան կարող էր հուսալ ինքը, որ Մետրովը համակրանքով կվերաբերվի իր նոր տեսակետներին, չգիտեր և չէր կարող գուշակել գիտնականի խելոք ու հանգիստ դեմքից։

— Բայց դուք ինչի՞ մեջ եք տեսնում ռուս բանվորի առանձնորոշ հատկությունները,— հարցրեց Մետրովը. այսպես ասած՝ նրա կենդանաբանակա՞ն հատկությունների մեջ, թե՞ այն պայմանների, որոնց մեջ գտնվում է նա։

Լևինը տեսնում էր, որ այդ հարցի մեջ արդեն արտահայտվում էր այն միտքը, որին համաձայն չէր ինքը. բայց նա շարունակեց իր միտքը, որի էությունն այն էր, թե ռուս բանվորը հողի վերաբերյալ բոլորովին առանձնահատուկ հայեցակետ ունի, քան մյուս ժողովուրդները։ Եվ այդ սկզբունքն ապացուցելու համար նա շտապեց ավելացնել, թե իր կարծիքով ռուս ժողովրդի այդ հայեցակետը բխում է այն գիտակցությունից, որ ինքը կոչված է բնակությամբ գրավելու արևելքում եղած հսկայական ազատ տարածությունները։

— Հեշտությամբ կարելի է մոլորության մեջ ընկնել, եզրակացություն անելով ժողովրդի ընդհանուր կոչումի մասին,— ասաց Մետրովը, ընդհատելով Լևինին։— Բանվոր դասակարգի կացությունը միշտ կախված կլինի նրա վերաբերմունքից դեպի հողը և կապիտալը։

Ու այլևս թույլ չտալով Լևինին վերջացնելու իր միտքը, Մետրովն սկսեց պատմել նրան իր ուսմունքի առանձնահատկությունը։

Թե ի՞նչն էր կազմում նրա ուսմունքի առանձնահատկությունը, Լևինը չհասկացավ, որովհետև չէր էլ աշխատում հասկանալ. նա տեսնում էր, որ Մետրովը, ինչպես և ուրիշները, չնայած իր հոդվածին, որտեղ նա հերքում էր տնտեսագետների ուսմունքը, այսուհանդերձ՝ ռուս բանվորի վրա նայում էր միայն կապիտալի, աշխատավարձի և ռենտայի տեսակետից։ Թեպետև նա ստիպված էր խոստովանել, որ Արևելյան Ռուսաստանի ամենամեծ մասում ռենտան դեռ կազմում էր զրո, որ ութսուն միլիոն ռուս ժողովրդի ինը տասներորդի համար աշխատավարձն արտահայտվում է մի-

այն ինքն իրեն կերակրելու մեջ, և որ կապիտալը տակավին այլ կերպ գոյություն չունի, քան ամենանախնական գործիքների ձևով, բայց նա միայն այդ տեսակետով էր քննարկում յուրաքանչյուր բանվորի, թեպետև շատ բանում համաձայն չէր տնտեսագետների հետ ու աշխատավարձի մասին ուներ իր նոր տեսությունը, որը և նկարագրեց Լևինին։

Լևինը լսում էր դժկամորեն և սկզբում առարկում էր։ Նա ուզում էր ընդհատել Մետրովին, որպեսզի ասի իր միտքը, որը, նրա կարծիքով, պետք է ավելորդ դարձներ հետագա շարադրանքը։ Բայց հետո համոզվելով, որ իրենք այն աստիճան տարբեր հայեցակետով են նայում գործին, որ երբեք իրար չեն հասկանա, այլևս չէր հակաճառում ու միայն լսում էր։ Չնայած որ նրա համար այժմ արդեն բոլորովին հետաքրքիր չէր այն, ինչ ասում էր Մետրովը, բայց և այնպես որոշ բավականություն էր զգում, լսելով նրան։ Լևինի ինքնասիրությունը շոյված էր այն հանգամանքով, որ այդպիսի գիտնական մի մարդ այդքան սիրով, այդքան ուշադրությամբ և առարկան իմանալու տեսակետից Լևինի նկատմամբ այդպիսի վստահությամբ էր արտահայտում նրան իր մտքերը, երբեմն մի ակնարկով նշելով գործի ամբողջ կողմը։ Լևինն այդ վերագրում էր իր արժանիքին, չիմանալով, որ Մետրովը խոսելով իր մոտիկների հետ, առանձնապես հաճույքով խոսում էր այդ առարկայի մասին, մանավանդ նոր մարդու հետ, և առհասարակ սիրով խոսում էր ամենքի հետ՝ իրեն զբաղեցնող, իր համար տակավին ո՛չ պարզ նյութի մասին։

— Սակայն մենք կուշանանք,— ասաց Կատավասովը, նայելով ժամացույցին, հենց որ Մետրովը վերջացրեց իր միտքը։

— Այո՛, այսօր սիրողների ընկերությունում նիստ կա Սվինտիչի հիսնամյա հոբելյանի հիշատակի առթիվ,— ասաց Կատավասովը, պատասխանելով Լևինի հարցին։— Մենք պատրաստվում էինք գնալ այնտեղ Պյոտր Իվանիչի հետ։ Ես խոստացել եմ զեկուցել կենդանաբանության վերաբերյալ նրա աշխատությունների մասին։ Գնանք մեզ հետ, շատ հետաքրքրական է։

— Իսկապես որ ժամանակն է,— ասաց Մետրովը։— Գնանք մեզ հետ, իսկ այնտեղից, եթե կամենաք, ինձ մոտ։ Ես շատ կուզենայի լսել ձեր աշխատությունը։

— Ա՛խ, ի՞նչ կարիք կա։ Դա դեռ այնպես... վերջացած չէ։ Բայց նիստի ուրախությամբ կգամ։

— Էլ ի՞նչ եք ուզում, բարեկա՛մ, լսեցի՞ք։ Առանձին կարծիք հայտնեց,— ասաց Կատավասովը մյուս սենյակում, հագնելով ֆրակը։

Եվ սկսվեց խոսակցությունը համալսարանի հարցի մասին։

Համալսարանի հարցը շատ կարևոր դեպք էր այդ ամեռ Մոսկվայում։ Երեք ծերունի պրոֆեսորներ խորհրդում չընդունեցին երիտասարդների կարծիքը. երիտասարդները ներկայացրին իրենց առանձին կարծիքը։ Ոմանց դատողությամբ՝ այդ կարծիքը սոսկալի բան էր, ուրիշների դատողությամբ՝ ամենահասարակ ու իրավացի կարծիք էր, և պրոֆեսորները բաժանվեցին երկու խմբի։

Ոմանք, որոնց թվին պատկանում էր Կատավասովը, տեսնում էին հակառակ կողմի մեջ ստոր մատնություն ու խաբեություն. մյուսները՝ մանկամտություն և անհարգալից վերաբերմունք դեպի հեղինակությունները։ Լևինը թեպետ չէր պատկանում համալսարանին, բայց մի քանի անգամ իր Մոսկվա եղած ժամանակ արդեն լսել ու խոսել էր այդ գործի մասին և այդ առթիվ կազմել էր իր կարծիքը. նա մասնակցեց խոսակցությանը, որը շարունակվեց նաև փողոցում, մինչև երեքն էլ հասան հին համալսարանի շենքին։

Նիստն արդեն սկսվել էր։ Մահուդով ծածկած սեղանի մոտ, որի առաջ նստեցին Կատավասովը և Մետրովը, նստել էին վեց հոգի, որոնցից մեկը, խիստ կռացած դեպի ձեռագիրը, կարդում էր ինչ-որ բան։ Լևինը նստեց սեղանի շուրջը դրած դատարկ աթոռներից մեկին և շշուկով հարցրեց այդտեղ նստած ուսանողին, թե ի՞նչ են կարդում։ Ուսանողը դժկամությամբ դիտելով Լևինին, ասաց.

— Կենսագրությունը։

Թեև Լևինը չէր հետաքրքրվում գիտնականի կենսագրությամբ, բայց ակամա լսում էր և որոշ հետաքրքրական ու նոր բան իմացավ հռչակավոր գիտնականի կյանքի մասին։

Երբ ընթերցողը վերջացրեց, նախագահը շնորհակալու-

թյուն հայտնեց նրան ու կարդաց այդ հոբելյանի առթիվ բանաստեղծ Մենտի իրեն ուղարկած ոտանավորը և շնորհակալության մի քանի խոսք ասաց հեղինակի հասցեին։ Հետո Կատավասովն իր բարձր, ճչուն ձայնով կարդաց իր դրածը հոբելյարի գիտական աշխատությունների մասին։

Երբ Կատավասովը վերջացրեց, Լևինը նայեց ժամացույցին, տեսավ, որ արդեն երկրորդ ժամն է, և մտածեց, որ մինչև համերգն ինքը չի կարող կարդալ իր երկը Մետրովին, բացի դրանից, այժմ այլևս չէր էլ ուզում անել այդ։ Ընթերցման միջոցին էլ նա մտածում էր եղած խոսակցության մասին։ Նրա համար այժմ պարզ էր, որ թեև Մետրովի մտքերը գուցե և նշանակություն ունեն, բայց իր մտքերն էլ նշանակություն ունեն. այդ մտքերը կարող են պարզվել ու որոշ բանի հանգել այն ժամանակ միայն, եթե իրենցից յուրաքանչյուրը աշխատի առանձին՝ իր ընտրած ճանապարհին, իսկ այդ մտքերի հաղորդումից չի կարող ոչինչ ստացվել։ Ու վճռելով հրաժարվել Մետրովի հրավերից, Լևինը նիստի վերջում մոտեցավ նրան։ Մետրովը Լևինին ծանոթացրեց նախագահի հետ, որի հետ խոսում էր քաղաքական նորությունների մասին։ Ըստ այսմ, Մետրովը պատմեց նախագահին միևնույն բանը, ինչ պատմել էր Լևինին, իսկ Լևինն արեց նույն դիտողությունները, ինչ արդեն արել էր այսօր առավոտյան, բայց զանազանակերպության համար արտահայտեց նաև իր նոր կարծիքը, որ եկավ նրա գլուխը հենց այդտեղ։ Դրանից հետո նորից խոսակցությունն սկսվեց համալսարանի հարցի մասին, որովհետև Լևինն այս բոլորն արդեն լսել էր, ուստի շտապեց ասելու Մետրովին, թե ափսոսում է, որ չի կարող օգտվել նրա հրավերից, հրաժեշտ տվեց ու գնաց Լվովի մոտ։

IV.

Լվովը, Նատալիի՝ Կիտիի քրոջ ամուսինը, ամբողջ կյանքը անց էր կացրել մայրաքաղաքներում ու արտասահմանում, որտեղ և դաստիարակվել ու պաշտոնավարել էր որպես դիվանագետ։

Անցյալ տարի նա թողեց դիվանագիտական ծառայությունը, ոչ թե անախորժության հետևանքով (նա երբեք ոչ ոքի հետ անախորժություններ չէր ունենում), և պաշտոնի անցավ պալատական դերատեսչության մեջ Մոսկվայում, որպեսզի կարողանա լավագույն կերպով դաստիարակել իր երկու մանչուկներին։

Չնայած իրենց սովորությունների ու հայացքների ամենախիստ հակադրությանը և այն բանին, որ Լվովը մեծ էր Լևինից, նրանք այդ ձմեռը շատ մտերմացան ու սիրեցին իրար։

Լվովը տանն էր, և Լևինն առանց զեկուցման մտավ նրա մոտ։

Լվովը տնային գոտկավոր սյուրտուկով, զամշն կոշիկներով, նստել էր բազկաթոռին և աչքերին կապույտ ապակիներով pince-nez, կարդում էր գրակալի վրա դրած գիրքը, գեղեցիկ ձեռքին բավական հեռու բռնած՝ կիսով չափ մոխրակալած սիգարը։

Նրա գեղեցիկ, նուրբ ու տակավին ջահել դեմքը, որին ավելի ևս տոհմիկ արտահայտություն էին տալիս գանգուր, արծաթափայլ, ալեխառն մազերը, պայծառացավ ժպիտից, երբ նա տեսավ Լևինին։

— Հրաշալի է։ Իսկ ես ուզում էի մարդ ուղարկել ձեզ մոտ։ Հը՞, ինչպես է Կիտին։ Նստեք այստեղ. ավելի հանգիստ է...— նա վեր կացավ ու մոտեցրեց ճոճաթոռը։— Կարդացե՞լ եք Journal de St.-Pétersbourg[1]-ի մեջ վերջին շրջաբերականը։ Իմ կարծիքով, հիանալի է,— ասաց նա մի փոքր ֆրանսիական առոգանությամբ։

Լևինը պատմեց Կատավասովից իր լսածն այն մասին, թե ի՞նչ են խոսում Պետերբուրգում, և խոսելով քաղաքականությունից, պատմեց Մետրովի հետ իր ծանոթանալու և նիստին գնալու մասին։ Դա շատ հետաքրքրեց Լվովին։

— Այ, ես նախանձում եմ ձեզ, որ դուք մուտք ունեք այդ հետաքրքրական գիտական աշխարհը,— ասաց նա։ Եվ տարվելով խոսակցությամբ, սովորականի պես, անմիջապես, անցավ իր համար հարմար ֆրանսերեն լեզվին։— Ճիշտն ասած, ես ժամանակ էլ չունեմ։ Իմ թե՛ ծառայությունը, թե՛

[1] Սանկտ Պետերբուրգի ամսագրում։

երեխաների հետ զբաղվելը զրկում են ինձ դրանից. բայց դրանից, ես առանց ամաչելու կասեմ, որ իմ կրթությունը չափազանց անբավարար է։

— Ես այդ կարծիքին չեմ,— ասաց Լևինը ժպտալով և, ինչպես միշտ, հուզվելով Լվովի ինքն իր մասին ունեցած ցածր կարծիքից, որ բնավ շինծու չէր՝ համեստ թվալու կամ նույնիսկ համեստ լինելու ցանկությամբ, այլ միանգամայն անկեղծ էր։

— Ա՜խ, ինչպե՜ս չէ։ Ես այժմ զգում եմ, թե որքան թերի է իմ կրթությունը։ Երեխաների դաստիարակության համար ես ստիպված եմ նույնիսկ շատ բան թարմացնել հիշողությանս մեջ և ուղղակի սովորել։ Որովհետև քիչ է այն, որ լինեն ուսուցիչներ, հարկավոր է, որ լինի հսկող, ինչպես ձեր տնտեսության մեջ հարկավոր են աշխատողներ և վերակացու։ Ահա ես կարդում եմ,— նա նշեց Բուսլաևի քերականությունը, որ դրված էր գրակալի վրա,— պահանջում են Միշայից, և դա այնպես դժվար է... Ա՜յ, հապա բացատրեք ինձ։ Այստեղ նա ասում է...

Լևինն ուզում էր բացատրել նրան, որ չի կարելի հասկանալ այդ, այլ պետք է սովորել. բայց Լվովը համաձայն չէր նրա հետ։

— Ա՜յ, դուք ծիծաղում եք դրա վրա։

— Ընդհակառակն, դուք չեք կարող երևակայել, թե ինչպե՜ս ես, նայելով ձեզ, միշտ սովորում եմ այն, ինչ սպասում է ինձ,— այսինքն՝ երեխաների դաստիարակությունը։

— Է՜, սովորելու բան չկա.— ասաց Լվովը։

— Ես գիտեմ միայն,— ասաց Լևինը,— որ չեմ տեսել ավելի դաստիարակված երեխաներ, քան ձերն են, և չէի կամենա ունենալ ձեր երեխաներից ավելի լավ երեխաներ։

Լվովը հավանորեն ուզում էր զսպել իրեն, որ չարտահայտի իր ուրախությունը, բայց նրա դեմքին ակամա փայլեց մի ժպիտ։

— Միայն թե ինձնից ավելի լավ լինեն։ Ահա այն բոլորը, ինչ ցանկանում եմ ես,— ասաց նա։— Դուք դեռ չգիտեք այն ամբողջ դժվարությունը տղաների հետ, որոնք, ինչպես մեր երեխաները, անուշադրության էին մատնվել արտասահմանյան կյանքի պայմաններում։

Այդ բոլորը տեղը կբերվի։ Նրանք այնպե՜ս ընդունակ երեխաներ են։ Գլխավորը բարոյական դաստիարակությունն է։ Ահա՜ թե ի՜նչ եմ սովորում ես, նայելով ձեր երեխաներին։

— Դուք ասում եք՝ բարոյական դաստիարակություն։ Անկարելի է պատկերացնել, թե որքան դժվար է այդ։ Հենց որ հաղթահարում ես դրա մի կողմը, ծառանում են մյուսները, և՝ նորից պայքար։ Եթե մարդ հենակետ չունենա կրոնը,— հիշո՞ւմ եք, մենք խոսում էինք դրա մասին,— ո՜չ մի հայր, առանց այդ օգնության, չէր կարող դաստիարակել իր ուժերով։

Լևինին միշտ հետաքրքրող այդ խոսակցությունն ընդհատվեց գեղեցկուհի Նատալիա Ալեքսանդրովնայի ներս գալով, որն արդեն հագնված էր դուրս գնալու համար։

— Ես չգիտեի, որ դուք այստեղ եք,— ասաց նա, հայտնապես ոչ միայն չափսոսալով, այլ նույնիսկ ուրախանալով, որ ընդհատեց իրեն վաղուց ծանոթ և արդեն ձանձրացրած այս խոսակցությունը։ — Ինչպե՞ս է Կիտին։ Ես այսօր ճաշում եմ ձեզ մոտ։ Ահա թե ի՜նչ, Արսենի՜,— դիմեց նա ամուսնուն,— դու կվերցնես կառեթը...

Եվ ամուսինները սկսեցին քննարկել, թե ինչպե՜ս անցկացնեն օրը։ Որովհետև Լվովը պետք է գնար դիմավորելու մեկին՝ ծառայության գծով, իսկ կինը՝ Համերգի և Հարավ-Արևելյան կոմիտեի հրապարակական նիստին, ուստի հարկավոր էր շատ բան կշռադատել ու վճռել։ Լևինը, որպես յուրային, ստիպված էր մասնակցել այդ ծրագրերին։ Վճռվեց, որ Լևինը Նատալիի հետ կգնա Համերգ և հրապարակական նիստի, իսկ այնտեղից կառեթը կուղարկի գրասենյակ՝ Արսենիի ետևից, ապա նա կգնա կնոջ ետևից ու կտանի նրան Կիտիի մոտ. կամ, եթե Արսենին չի վերջացնի իր գործերը, կուղարկի կառեթը, և Լևինը կգնա Նատալիի հետ։

— Ա՜յ, սա փչացնում է ինձ,— ասաց Լվովը կնոջը,— հավատացնում է ինձ, որ մեր երեխաները հիանալի են, մինչդեռ ես գիտեմ, որ նրանց մեջ այնքա՜ն վատ գծեր կան։

— Արսենին հասնում է ծայրահեղության, միշտ ասել եմ և ասում եմ,— ասաց կինը։ — Եթե մարդ փնտրում է կատարելություն, երբեք գոհ չի լինի։ Եվ ճիշտ է ասում հայրիկը, թե երբ մե՛զ էին դաստիարակում, կար մի ծայրահեղություն՝

մեզ պահում էին անտրեսոլում, իսկ ծնողներն ապրում էին բելէտաժում. այժմ հակառակն է։ Ծնողներին՝ նկուղ, երեխաներին՝ բելէտաժ։ Ծնողներն այժմ չպիտի ապրեն, այլ ամեն ինչ պիտի լինի երեխաների համար։

— Ի՜նչ արած, եթե այդպես ավելի հաճելի է,— ասաց Լվովը, ժպտալով իր գեղեցիկ ժպիտով ու շոշափելով կնոջ ձեռքը։ — Ով չի ճանաչում քեզ, կկարծի, որ դու ոչ թե հարազատ, այլ խորթ մայր ես։

— Ո՜չ, ծայրահեղությունը ո՜չ մի բանում լավ չէ,— հանգիստ ասաց Նատալին, ամուսնու թղթահատ դանակը դնելով սեղանի վրա իր հատուկ տեղը։

— Ահա՜, եկեք այստեղ, կատարյալ երեխաներ,— ասաց Լվովը ներս եկած գեղեցիկ տղաներին, որոնք ողջունելով Լևինին, մոտեցան իրենց հորը, հավանորեն կամենալով ինչ-որ բանի մասին հարցնել նրան։

Լևինն ուզում էր խոսել նրանց հետ, լսել, թե ի՜նչ կասեն նրանք իրենց հորը, բայց Նատալին սկսեց խոսել իր հետ, և այդ րոպեին սենյակ մտավ Լվովի ծառայության ընկերը՝ Մախոտինը, պալատական համազգեստով, որպեսզի միասին գնան դիմավորելու ինչ-որ մարդու, և սկսվեց արդեն անլռելի մի խոսակցություն Հերցեգովինայի մասին, իշխանազնուհի Կորզինսկայայի, դումայի և Ապրակսինայի հանկարծամահ լինելու մասին։

Լևինը մոռացավ իսկ իրեն արված հանձնարարությունը։ Նա հիշեց այն՝ նախասենյակ դուրս գալիս միայն։

— Ա՜խ, Կիտին հանձնարարեց ինձ՝ խոսել ձեզ հետ Օբլոնսկու մասին,— ասաց նա, երբ Լվովը կանգնեց սանդուղքի վրա, ճանապարհելով կնոջն ու նրան։

— Այո՜, այո՜, maman ուզում է, որպեսզի մենք, les beaux-frères[1], հարձակվենք նրա վրա,— ասաց նա կարմրելով։— Սակայն, ինչո՞ւ ես։

— Ես հո հարձակվելու եմ նրա վրա,— ժպտալով ասաց Լվովան, որն սպասում էր խոսակցության վերջանալուն, չանսպիտակ մորթուց ռոտոնդան հագին։ — Դե՜, գնանք։

1 Քենակալներս։

V

Առավոտյան համերգին տրվում էր երկու շատ հետաքրքրքրական բան։

Մեկը Լիր արքան տափաստանում ֆանտազիան էր, մյուսը՝ Բախի հիշատակին նվիրված կվարտետը։ Այդ երկուսն էլ նոր բան էին ու նոր ոգով, և Լևինն ուզում էր իր կարծիքն ունենալ դրանց մասին։ Առաջնորդելով քենուն մինչև նրա բազկաթոռը, նա կանգնեց սյունի մոտ ու վճռեց, որքան կարելի է, ուշադրությամբ և բարեխղճորեն լսել։ Նա աշխատում էր ուշադրությունը չցրել ու չփչացնել իր տպավորությունը, նայելով ձեռքերը թափահարող սպիտակ փողկապավոր կապելմեյստերին, որը միշտ այնպես անախորժ կերպով գրավում է հանդիսատեսի երաժշտական ուշադրությունը. նա աշխատում էր չնայել գլխարկներով կանանց, որոնք համերգի համար խնամքով կապել էին իրենց ականջները ժապավեններով, ոչ էլ այն դեմքերին, որոնք կամ ոչնչով զբաղված չէին, կամ զբաղված էին ամենաբազմապիսի խնդիրներով, միայն ո՜չ երաժշտությամբ։ Նա աշխատում էր խուսափել երաժշտագետներին ու շաղակրատներին հանդիպելուց և կանգնել ու լսում էր, նայելով ցած՝ իր դիմացը։

Բայց որքան ավելի էր լսում Լիր արքայի ֆանտազիան, այնքան ավելի հեռու էր զգում իրեն որոշակի որևէ կարծիք կազմելու հնարավորությունից։ Անընդհատ սկսվում էր, կարծես հավաքվում էր զգացմունքի երաժշտական արտահայտությունը, բայց անմիջապես բաժանվում էր երաժշտական արտահայտությունների նոր սկզբնավորման կտորների, երբեմն էլ ո՜չ մի բանով, բացի կոմպոզիտորի քմահաճույքից, իրար հետ չկապակցված, սակայն չափազանց բարդ հնչյուններով։ Բայց երաժշտական արտահայտությունների այդ կտորներն ինքնին, երբեմն լավ, թվում էին անախորժ, որովհետև բոլորովին անսպասելի էին ու ոչ մի բանով չնախապատրաստված։ Խնդությունն ու թախիծը, և՛ հուսահատությունը, և՛ քնքշությունը, և՛ հաղթանակը երևան էին գալիս առանց որևէ հիմունքի, որպես խելագարի զգացումներ։ Եվ խելագարի զգացումների պես էլ գնում, անսպասելիորեն անցնում էին։

Կատարման ամբողջ ընթացքում Լևինն ուներ պարոնեն-

ին դիտող խուլ մարդու զգացում։ Նա բացարձակ տարա-
կուսանքի մեջ էր, երբ վերջացավ պիեսը, և զգում էր մեծ
հոգնածություն՝ իր լարված ու ոչնչով չվարձատրված ուշա-
դրությունից։ Ամեն կողմից լսվեցին աղմկալի ծափահարու-
թյուններ։ Բոլորը վեր կացան, գնում-գալիս էին, խոսում էին։
Կամենալով ուրիշների տպավորությամբ պարզել իր տարա-
կուսանքը, Լևինը գնաց շրջելու, որոնելով բանիմաց մարդ-
կանց և ուրախացավ, տեսնելով հայտնի բանիմաց մեկին, որը
խոսում էր նրա ծանոթ Պեսցովի հետ։

— Զարմանալի բան է,— ասում էր Պեսցովը իր թավ, բաս
ձայնով։ — Բարև ձեզ, Կոնստանտին Դմիտրիչ։ Առանձնապես
պատկերավոր և, այսպես ասած, քանդակած ու գույներով հա-
րուստ է այն տեղը, որտեղ դուք զգում եք Կորդելիայի մոտե-
նալը, որտեղ կինը, das ewig Weibliche[1], պայքարի է մըտ-
նում ճակատագրի հետ։ Ճիշտ չէ՞ միթե։

— Այսինքն՝ ի՞նչ կապ ունի այստեղ Կորդելիան,— քաշվե-
լով հարցրեց Լևինը, բոլորովին մոռանալով, որ ֆանտազիան
պատկերում էր Լիր արքային տափաստանում։

— Երևան է գալիս Կորդելիան... ահա՛,— ասաց Պեսցովը,
մատներով խփելով թավշյա ծրագրին, որ բռնած ուներ ձեռ-
քին, և այն հանձնելով Լևինին։

Այստեղ միայն Լևինը հիշեց ֆանտազիայի վերնագիրը և
շտապեց կարդալ Շեքսպիրի ոտանավորի ռուսերեն թարգմա-
նությունը, որ տպված էր ծրագրի մյուս երեսին։

— Առանց դրան չի կարելի հետևել,— ասաց Պեսցովը,
դիմելով Լևինին,— քանի որ նրա զրուցակիցը հեռացավ, և
չկար մեկը, որի հետ նա խոսեր։

Ընդմիջման ժամանակ վիճաբանություն ծագեց Պեսցովի
և Լևինի միջև երաժշտության վագներյան ուղղության արժա-
նիքների ու թերությունների մասին։ Լևինն ապացուցում էր,
թե Վագների և նրա բոլոր հետևորդների սխալն այն է, որ
երաժշտությունն ուզում է մտնել այլ արվեստի բնագավառը,
թե նույնպես սխալվում է պոեզիան, երբ նկարագրում է դի-
մագծեր, որ պիտի անի նկարչությունը, որպես օրինակ այդ-
պիսի սխալի, նա նշեց այն քանդակագործին, որը հանկարծ

[1] Հավերժ կանացիականը։

ուզեցել է քանդակել մարմարից պոետիկ պատկերների ստվեր-
ներ, որոնք բարձրանում են բանաստեղծի ֆիգուրի շուրջը՝
պատվանդանի վրա։ «Այդ ստվերներն ինքնին այնքան քիչ
ստվեր են քանդակագործի մոտ, որ կառչած են սանդուղ-
քից»,— ասաց Լևինը։ Այդ ֆրազը դուր եկավ իրեն, բայց նա
չէր հիշում, արդյո՞ք նախկինում չէր ասել այդ նույնը հենց
նույն Պեսցովին, և հիմա, ասելով, շփոթվեց։

Իսկ Պեսցովն ապացուցում էր, որ արվեստը մեկն է, և որ
այն կարող է հասնել իր բարձրագույն արտահայտություններ-
ին արվեստի բոլոր տեսակների միավորման մեջ միայն։

Համերգի երկրորդ հատվածը Լևինն արդեն չէր կարողանում
լսել։ Պեսցովը, որ կանգնել էր նրա կողքին, համարյա ամ-
բողջ ժամանակ խոսում էր նրա հետ, դատապարտելով այդ
պիեսը՝ նրա ավելորդ, քաղցրությունեզը, շինծու պարզության
համար և համեմատելով այն պրեռաֆայելիստների պարզու-
թյան հետ նկարչության մեջ։ Դուրս գալիս Լևինը պատահեց
էլի շատ ծանոթների, որոնց հետ խոսեց թե՛ քաղաքականու-
թյան, թե՛ երաժշտության, թե՛ ընդհանուր ծանոթների մա-
սին. ի միջի այլոց՝ պատահեց կոմս Բոլին, որին այցելելու
մասին բոլորովին մոռացել էր։

— Ուրեմն գնացեք հիմա,— ասաց նրան Լվովան, որին
Լևինը հայտնեց այդ,— կարող է պատահել, որ ձեզ չեն ըն-
դունի, իսկ հետո եկեք իմ ետևից՝ Նիստի տեղը։ Կարող եք ինձ
գտնել դեռ այնտեղ։

VI

— Գուցե չե՞ն ընդունում,—ասաց Լևինը, մտնելով կոմ-
սուհի Բոլի տան նախասենյակը։

— Ընդունում են, համեցե՛ք,— ասաց բարապանը, վճռա-
կանապես հանելով նրա վրայից մուշտակը։

«Ա՜խ, ափսո՜ս,— մտածում էր Լևինը, հառաչանքով հանե-
լով մի ձեռնոցը և ուղղելով գլխարկը։ — Թե ինչո՞ւ եմ գնում,
ի՞նչ պիտի խոսեմ նրանց հետ»։

Անցնելով առաջին ընդունարանից, Լևինը դռան մեջ պա-
տահեց կոմսուհի Բոլին, որը մտահոգված ու խիստ դեմքով
ինչ-որ բան էր հրամայում ծառային։ Տեսնելով Լևինին, նա
ժպտաց ու հրավիրեց նրան մյուս փոքրիկ ընդունարանը, որ-

տեղից ձայներ էին լսվում։ Այդ ընդունարանում բազկաթոռ-ների մեջ նստել էին կոմսուհու երկու աղջիկը և Լևինին ծանոթ մոսկվացի մի գնդապետ։ Լևինը մոտեցավ նրանց, բարևեց ու նստեց բազմոցի մոտ, գլխարկը բռնած ծնկին։

— Ինչպե՞ս է ձեր կնոջ առողջությունը։ Դուք գնացե՞լ էիք համերգի։ Մենք չկարողացանք։ Մայրիկը պետք է լիներ հոգեհանգստին։

— Այո՛, լսեցի... Ի՞նչ հանկարծահաս մահ,— ասաց Լևինը։

Նկավ կոմսուհին, նստեց բազմոցին և նույնպես հարցրեց նրա կնոջ ու համերգի մասին։

Լևինը պատասխանեց ու կրկնեց իր ասածը Ապրակսինայի հանկարծամահ լինելու մասին։

— Սակայն նա միշտ վատառողջ էր։

— Երեկ դուք կայի՞ք օպերայում։

— Այո՛, կայի։

— Շատ լավն էր Լուկկան։

— Այո՛, շատ լավ,— ասաց Լևինը և, որովհետև նրա համար բոլորովին միևնույն էր, թե ի՛նչ կմտածեն իր մասին, սկսեց կրկնել այն, ինչը հարյուր անգամ լսել էր երգչուհու տաղանդի առանձնահատկության վերաբերյալ։ Կոմսուհի Բոլը ձևանում էր, իբր լսում է։ Հետո, երբ Լևինը բավական խոսեց ու լռեց, խոսել սկսեց գնդապետը, որ մինչ այդ լուռ էր։ Գնդապետը խոսեց նույնպես օպերայի և լուսավորության մասին։ Վերջապես, ասելով Տյուրինի մոտ ենթադրվելիք folle journée-ի[1] մասին, գնդապետը ծիծաղեց, աղմկեց, վեր կացավ ու գնաց։ Լևինը նույնպես վեր կացավ, բայց կոմսուհու դեմքից նկատեց, որ դեռ իր գնալու ժամանակը չէ։ Պետք է էլի մի երկու րոպե։ Նա նստեց։

Բայց որովհետև նա շարունակ մտածում էր այն մասին, թե ի՞նչ տխմար բան է այդ, ուստի խոսակցության նյութ չէր գտնում և լուռ էր։

— Դուք չե՞ք գնում հրապարակական նիստի։ Ասում են, շատ հետաքրքրական է,— սկսեց կոմսուհին։

— Ո՞չ, ես խոստացա իմ belle-soeur-ին[2] գնալ նրա ետևից,— ասաց Լևինը։

[1] Խենթ օր։

[2] Քեռի։

Տիրեց լռություն։ Մայր ու աղջիկ մի անգամ էլ նայեցին իրար։

— «Է՛, կարծեմ հիմա ժամանակ է», մտածեց Լևինը ու վեր կաբավ։ Կանայք սեղմեցին նրա ձեռքը և խնդրեցին կնոջը հաղորդել mille choses[1]։

Բարապանը հարցրեց նրան, տալով մուշտակը,— որտե՞ղ եք բարեհաճում ապրել,— և անմիջապես գրեց լավ կազմով մեծ գրքի մեջ։

«Իհարկե, ինձ համար միևնույն է, բայց և այնպես այդ ամոթալի և հիմար բան է», մտածեց Լևինը, մխիթարելով իրեն այն հանգամանքով, որ բոլորն էլ անում են նույնը, և գնաց կոմիտեի հրապարակական նիստին, որտեղից պիտի վերցներ քեռուն և միասին գնային տուն։

Կոմիտեի հրապարակական նիստին շատ մարդ կար, համարյա ամբողջ հասարակությունը։ Լևինը հասավ համառոտ տեսությանը, որը շատ հետաքրքրական էր, ինչպես ասում էին ամենքը։ Երբ վերջացավ տեսության ընթերցումը, հասարակությունն իրար խառնվեց, և Լևինը տեսավ Սվիյաժսկուն, որը կանչեց նրան այսօր երեկոյան անպայման գալ գյուղատնտեսության ընկերություն, որտեղ կարդացվելու է հռչակավոր զեկուցում. տեսավ նաև Ստեպան Արկադևիչին, որը հենց նոր եկավ վագարշավից, և ուրիշ շատ ծանոթների, և Լևինը խոսեց ու լսեց զանազան դատողություններ նիստի մասին, նոր պիեսի և դատավարության մասին։ Բայց, խոսելով դատավարության մասին, նա սխալվեց, հավանորեն միտքը հոգնած լինելու պատճառով, ինչն սկսում էր զգալ, և այդ սխալը հետո մի քանի անգամ հիշեց սրտնեղությամբ։ Խոսելով Ռուսաստանում դատվող օտարերկրացու առաջիկա պատժի մասին և ասելով, թե ինչպե՛ս սխալ կլիներ՝ նրան պատժելու համար վտարել արտասահման, Լևինը կրկնեց այն, ինչ լսել էր երեկ խոսակցության ժամանակ մի ծանոթից։

— Ես կարծում եմ, վտարել նրան արտասահման միևնույն է, թե պատժել գայլածկանը, նետելով նրան ջուրը,— ասաց Լևինը։ Հետո արդեն նա հիշեց, որ ծանոթից լսած այդ միտքը, որն ինքը հայտնում էր որպես իր սեփականը, Կռիլովի

[1] Հազար ողջույններ։

առակից էր և, որ ծանոթը կրկնել էր այդ միտքը, վերցնելով թերթի ֆելիետոնից։

Քենու հետ գալով տուն և գտնելով Կիտիին ուրախ ու բարեհաջող, Լևինը գնաց ակումբ։

VII

Լևինը եկավ ակումբ ճիշտ ժամանակին։ Նրա հետ միաժամանակ գալիս էին հյուրերը և ակումբի անդամները։ Լևինը ակումբում չէր եղել շատ վաղուց, սկսած այն օրից, երբ համալսարանից դուրս գալուց հետո ապրում էր Մոսկվայում և լինում էր բարձր հասարակության մեջ։ Նա հիշում էր ակումբը, նրա շենքի արտաքին մանրամասները, սակայն բոլորովին մոռացել էր այն տպավորությունը, որ առաջներում զգում էր այնտեղ։ Բայց հենց որ նա մտավ լայն, կիսաշրջանաձև բակը և իջնելով կառքից, ոտք դրեց արտաքին սանդուղքի վրա և լանջագեղ գոտիով բարապանն ընդառաջ գալով, անշշուկ բացեց դուռը ու ողջունեց. հենց որ տեսավ բարապանոցում կրկնակոշիկներն ու մուշտակներն այն անդամների, որոնք հասկացել էին, թե ավելի դյուրին է՝ կրկնակոշիկները հանել ներքևում, քան տանել վերև. հենց որ լսեց իրեն նախորդող զանգի խորհրդավոր ձայնը և տեսավ, ներս մտնելով թեթև զառիվայր սանդուղքով, հարթակի վրա դրված արձանը ու վերևի դռան մեջ իրեն ծանոթ, ծերացած երրորդ բարապանին՝ ակումբային շքազգեստով, որն առանց շտապելու և առանց դանդաղելու բացեց դուռը և նայեց հյուրին,—Լևինին համակեց ակումբի վաղեմի տպավորությունը՝ հանգստի, բավականության ու վայելչության տպավորությունը։

— Հրամմեք ձեր գլխարկը,— ասաց բարապանը Լևինին, որը մոռացել էր ակումբի կանոնը, այսինքն՝ գլխարկները թողնել բարապանոցում։—Վաղուց է, որ չեք եղել։ Իշխանը դեռ երեկ գրեց ձեզ։ Իշխան Ստեպան Արկադևիչը դեռ չկա։

Բարապանը ճանաչում էր ո՛չ միայն Լևինին, այլև գիտեր նրա բոլոր կապերն ու ազգակցությունը, և անմիջապես հիշեցրեց նրան մոտիկ մարդկանց մասին։

Անցնելով շիրմաներ դրած առաջին միջանցիկ դահլիճը և աջ կողմում միջնորմած սենյակը, որտեղ նստում է մրգավաճառը, Լևինն առաջ ընկնելով դանդաղ գնացող ծերուկից, մտավ հավաքվածների աղմուկով լի սեղանատունը։

Նա անցավ համարյա արդեն զբաղեցրած սեղանների երկայնությամբ, դիտելով հյուրերին։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ նրա աչքին էին ընկնում ամենաբազմապիսի՝ և՛ ծեր ու երիտասարդ, և՛ հազիվ ծանոթ ու մոտիկ մարդիկ։ Չկար ո՛չ մի բարկացած և մտահոգ դեմք։ Թվում էր, թե բոլորը թողել էին բարապանոցում իրենց գլխարկների հետ նաև իրենց հուզմունքներն ու հոգսերը և հավաքվել էին՝ անշտապ օգտվելու կյանքի նյութեղեն բարիքներից։ Այդտեղ էին և՛ Սվիյաժսկին, և՛ Շչերբացկին, և՛ Նեեդովսկին, և՛ ծերունի իշխանը, և՛ Վրոնսկին, և՛ Սերգեյ Իվանիչը։

— Ա՜։ Ինչո՞ւ ուշացար,—ժպտալով ասաց իշխանը, ձեռքը մեկնելով նրան ուսի վրայից։—Ինչպե՞ս է Կիտին,—ավելացրեց նա, ուղղելով անձեռոցիկը, որ մտցրել էր ժիլետի կոճակի տակ։

— Ոչի՞նչ, առողջ է, նրանք երեքով ճաշում են տանը։

— Ա՜, Ալինաներ-Նագինաներ։ Մեզ մոտ տեղ չկա։ Գնա այն սեղանի մոտ, և շուտ տեղ բռնիր,—ասաց իշխանն ու շուտ գալով, զգույշ վերցրեց ձկնապուրով լեցուն ափսեն։

— Լևի՛ն, այստե՛ղ,—բղավեց մի փոքր ավելի հեռու բարեսիրտ մի ձայն։ Դա Տուրովցինն էր։ Նա նստել էր մի երիտասարդ զորականի հետ, և նրանց մոտ երկու պիոն շրջված էր։ Լևինը հաճույքով մոտեցավ նրանց։ Նա միշտ էլ սիրում էր բարեսիրտ, խրախճասեր Տուրովցինին,—նրա հետ էր կապված Կիտիի հետ բացատրվելու հիշողությունը, բայց հիմա, լարված բոլոր խելոք խոսակցություններից հետո, առանձնապես հաճելի էր նրան Տուրովցինի բարեսիրտ տեսքը։

— Դա ձեր և Օբլոնսկու տեղն է։ Նա հիմա կգա։

— Իրեն շատ ուղիղ պահող զորականը, ուրախ և միշտ ժպտուն աչքերով, Պետերբուրգցի Գագինն էր։ Տուրովցինը ծանոթացրեց նրանց։

— Օբլոնսկին միշտ ուշանում է։

— Ա՜, ահա և նա։

— Նո՞ր եկար,—ասաց Օբլոնսկին, արագ մոտենալով նրանց։

— Բարև։ Օղի խմե՞լ ես։ Դե՛, գնանք։

Լևինը վեր կացավ ու նրա հետ գնաց դեպի մեծ սեղանը, որի վրա դրված էին զանազան տեսակի օղիներ և ամենաբազմապիսի ուտեստներ։ Թվում էր, թե երկու տասնյակ ուտեստներից կարելի էր ընտրել իր ճաշակին մի բան, բայց Ստեպան Արկադևիչը պահանջեց ինչ-որ առանձնահատուկ ուտեստ, և շքազգեստով կանգնած սպասավորներից մեկն անմիջապես բերեց պահանջածը։ Նրանք խմեցին մի-մի գավաթ և վերադարձան սեղանի մոտ։

Իսկույն, դեռ ձկնապուրի ժամանակ, Գագինին մատուցեցին շամպայն, և նա հրամայեց լցնել չորս բաժակ։ Լևինը չհրաժարվեց առաջարկված գինուց ու խնդրեց էլի մի շիշ։ Նա քաղցած էր և ուտում ու խմում էր մեծ բավականությամբ, իսկ ավելի մեծ բավականությամբ մասնակցում էր զրուցակիցների ուրախ ու պարզ խոսակցությանը։ Գագինը ձայնը ցածրացնելով պատմում էր Պետերբուրգյան նոր անեկդոտ, որը թեև անպատշաճ ու տխմար, այնպես ծիծաղելի էր, և Լևինը քրքջաց այնպես բարձր, որ հարևանները նայեցին նրան։

— Այդ հենց այն կարգի բան է, ինչպես՝ «այդ ես տանել չեմ կարող»-ը։ Գիտե՞ս,—հարցրեց Ստեպան Արկադևիչը։— Ա՜խ, սքանչելիք է։ Տո՛ւր էլի մի շիշ,—ասաց նա սպասավորին ու սկսեց պատմել։

— Պյոտր Իլյիչ Վինովսկին է խնդրում,—ընդհատեց ծերունի սպասավորը Ստեպան Արկադևիչին, մատուցելով երկու բարակ բաժակ խայտուն շամպայն և դիմելով Ստեպան Արկադևիչին ու Լևինին։ Ստեպան Արկադևիչը վերցրեց բաժակը և նայելով սեղանի մյուս ծայրին նստած ճաղատ, բեղավոր շեկ տղամարդուն, գլխով ողջունեց նրան, ժպտալով։

— Ո՞վ է,—հարցրեց Լևինը։

— Դու մի անգամ պատահել ես նրան ինձ մոտ, հիշո՞ւմ ես։ Լավ տղա է։

Լևինն արեց նույնը, ինչ և Ստեպան Արկադևիչը, ու վերցրեց բաժակը։

Ստեպան Արկադևիչի անեկդոտն էլ շատ ծիծաղելի էր։ Լևինը պատմեց իր անեկդոտը, որը նույնպես դուր եկավ։ Հետո խոսք բացվեց ձիերի, այդօրվա վազարշավների և այն մասին, թե ինչպես Վրոնսկու Ատլասնի կոչված ձին խիզախաբար

շահել է առաջին մրցանակը։ Լևինը չնկատեց, թե ինչպես անցավ ճաշը։

— Ա՜, Ահա և նրանք,— արդեն ճաշի վերջում ասաց Ստեպան Արկադևիչը, կռանալով աթոռի թիկնատեղի վրայով և մեկնելով ձեռքը Վրոնսկուն, որ գալիս էր դեպի նա՝ գվարդիայի բարձրահասակ մի գնդապետի հետ։ Վրոնսկու դեմքին ևս շողշողում էր ակումբային ընդհանուր ուրախ բարեսրտություն։ Նա ուրախ հենվեց Ստեպան Արկադևիչի ուսին, ինչ-որ բան փսփսալով նրան, և նույն ուրախ ժպիտով ձեռքը պարզեց Լևինին։

— Շատ ուրախ եմ ձեզ հանդիպելու,—ասաց նա։—Ես այն ժամանակ՝ ընտրություններին, փնտրեցի ձեզ, բայց ինձ ասացին, որ դուք արդեն գնացել եք,—ասաց նա Լևինին։

— Այո՛, ես հենց նույն օրը մեկնեցի։ Մենք այս բոպեիս խոսում էինք ձեր ձիու մասին։ Շնորհավորում եմ ձեզ,— ասաց Լևինը։—Դա շատ արագ ձիավարություն է։

— Հա՜, չէ՞ որ դուք էլ ձիեր ունեք։

— Ո՛չ, հայրս ուներ. բայց ես հիշում եմ և գիտեմ։

— Դու որտե՞ղ էիր ճաշում,—հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Մենք երկրորդ սեղանի շուրջն էինք, սյուների ետևում։

— Նրան շնորհավորում էին,—ասաց բարձրահասակ գընդապետը։—Կայսերական երկրորդ մրցանակը. եթե ես այդպիսի բախտ ունենայի թղթախաղի մեջ, ինչպես նա ունի ձիերի մեջ։

— Դե՜, ինչո՞ւ իզուր կորցնել ոսկի ժամանակը։ Ես գնում եմ ինֆերնալ[1] սենյակը,—ասաց գնդապետը և հեռացավ սեղանից։

— Ցաշվինն է,—ասաց Վրոնսկին Տուրովցինին ու նստեց նրանց մոտ ազատված տեղը։ Խմելով իրեն առաջարկված բաժակը, նա խնդրեց մի շիշ։ Արդյոք ակումբի տպավորությա՞ն, թե՞ խմած գինու ազդեցության տակ՝ Լևինը խոսքի բռնվեց Վրոնսկու հետ անասունների լավագույն ցեղի մասին և շատ ուրախ էր, որ ոչ մի թշնամանք չէր տածում դեպի այդ մարդը։ Նա նույնիսկ ասաց նրան, ի միջի այլոց, թե կնո-

[1] Դիվային, դժոխային։

ջից լսել է, որ նա պատահել է նրան իշխանուհի Մարիա Բորիսովնայի մոտ։

— Ա՜խ, իշխանուհի Մարիա Բորիսովնա, հրաշալիք է նա,— ասաց Ստեպան Արկադևիչը և պատմեց նրա մասին մի անեկդոտ, որն ամենքին ծիծաղեցրեց։ Մանավանդ Վրոնսկին այնպես բարեսրտորեն քրքջաց, որ Լևինն իրեն բոլորովին հաշտված զգաց նրա հետ։

— Է՜հ, վերջացրի՞ք,— ասաց Ստեպան Արկադևիչը, վեր կենալով ու ժպտալով։— Գնանք։

VIII

Վեր կենալով սեղանից, Լևինը, զգալով, որ քսյելիս առանձնապես կանոնավոր ու թեթև են շարժվում ձեռքերը, գնաց Գագինի հետ՝ բարձր սենյակների միջով դեպի բիլիարդանոցը։ Անցնելով մեծ դահլիճից, նա հանդիպեց աներոջը։

— Է՜, ինչպե՞ս է։ Հավանո՞ւմ ես մեր պարապության տաճարը,— հարցրեց իշխանը, թևանցուկ անելով նրան։— Գնա՜նք, մի քիչ անցնենք։

— Ես ինքս ուզում էի շրջել, նայել։ Շատ հետաքրքիր է։

— Այո՜, քեզ համար հետաքրքրական է։ Բայց ինձ համար հետաքրքրությունն արդեն ուրիշ է, քան քեզ համար։ Դու ահա նայում ես այս ծերուկներին,— ասաց նա, նշելով շուրթը կախ ընկած կորամեջք անդամին, որը հազիվ շարժելով ոտքերը փափուկ կոշիկների մեջ, գալիս էր նրանց ընդառաջ,— և մտածում, որ սրանք հենց այդպես էլ ծնվել են ճխլտված։

— Ինչպե՞ս թե ճխլտված։

— Դու նույնիսկ չգիտես այդ անունը։ Դա մեր ակումբային տերմինն է։ Գիտե՞ս ոնց են ձու գլորում. երբ շատ անգամ են գլորում, ձուն ճխլտվում է։ Այդպես էլ մեզ պես մարդիկ. գալիս, գալիս ես ակումբ և դառնում ես ճխլտված։ Այո՜, դու ահա ծիծաղում ես, իսկ ես և իմ նմաններն արդեն նայում ենք, թե ե՞րբ ենք ճխլտվածների դասն ընկնելու։ Դու ճանաչո՞ւմ ես իշխան Չեչենսկուն,— հարցրեց իշխանը, և Լևինը

տեսավ նրա դեմքից, որ նա պատրաստվում է պատմել ծիծաղելի բան։

— Ո՜չ, չեմ ճանաչում։

— Ինչպե՞ս թե։ Օ՜, իշխան Չեչենսկին հայտնի է։ Ասենք, միևնույն է։ Նա միշտ բիլիարդ է խաղում։ Դեռ երեք տարի առաջ նա ճխլտվածների դասում չէր և առույգ էր ձևանում։ Ինքն էլ ուրիշներին անվանում էր ճխլտված։ Մի անգամ նա հենց որ ներս է մտնում, մեր բարապանը... դու ճանաչո՞ւմ ես Վասիլիին։ Դե, այն հաստը։ Նա մեծ բոնմոտիստ[1] է։ Եվ ահա հարցնում է իշխան Չեչենսկին նրան. «Հը՞, ի՞նչ կա, Վասիլի, ովքե՞ր են եկել։ Իսկ ճխլտվածներ կա՞ն»։ Վասիլին էլ պատասխանում է նրան. «Դուք երրորդն եք»։ Այո՜, սիրելիս, այդպիսի բաներ։

Զրուցելով ու ողջունելով պատահող ծանոթներին, Լևինն իշխանի հետ անցավ բոլոր սենյակները. նախ՝ մեծ սենյակը, որտեղ արդեն սեղանները դրել և սովորական խաղընկերները խաղում էին փոքրիկ խաղ. հետո բազմոցասենյակը, որտեղ խաղում էին շախմատ, ու նստած էր Սերգեյ Իվանովիչը և խոսում էր մեկի հետ. ապա բիլիարդանոցը, որտեղ սենյակի ելորտում՝ բազմոցի մոտ կազմվել էր շամպայն խմողների մի ուրախ խմբակ, որին մասնակցում էր Գագինը. մտան և ինֆերնալ-սենյակը, որտեղ մի սեղանի մոտ, որի առաջ արդեն նստել էր Յաշվինը, խռնվել էին բազմաթիվ վրադիրներ[1]։ Աշխատելով աղմուկ չհանել, նրանք մտան և մութ ընթերցարանը, որտեղ լուսամփոփներով լամպերի լույսի տակ նստել էր բարկացկոտ դեմքով մի երիտասարդ, որ մեկը մյուսի ետևից վերցնում էր ամսագրերը, և ճաղատ մի գեներալ, խորասուզված ընթերցանության մեջ։ Մտան նաև այն սենյակը, որն իշխանն անվանում էր խելոք։ Այդ սենյակում երեք պարոններ տաք-տաք խոսում էին վերջին քաղաքական նորության մասին։

— Իշխան, համեցեք, պատրաստ է,— ասաց նրա խաղընկերներից մեկը, գտնելով նրան այդտեղ, և իշխանը գնաց։

[1] Սրամիտ, սրախոս մարդ։

[1] Վրադիր են անվանում այն մարդկանց, որոնք թղթախաղի ժամանակ պաշտոնապես խաղացողների դրած գումարի վրա ավելացնում են իրենց գումարը։

Լևինը նստեց, ականջ դրեց, սակայն հիշելով այսօրվա առավոտյան բոլոր խոսակցությունները, հանկարծ սաստիկ ձանձրույթ զգաց։ Նա շտապ վեր կացավ ու գնաց որոնելու Օբլոնսկուն և Տուրովցինին, որոնց հետ ուրախ էր։

Տուրովցինը նստել էր բիլիարդանոցում, բարձր բազմոցի վրա, ձեռքին մի բաժակ խմիչք, իսկ Ստեպան Արկադևիչը և Վրոնսկին խոսում էին ինչ-որ բանի մասին դռան մոտ՝ սենյակի հեռավոր անկյունում։

— Նա ոչ թե ձանձրանում է, ո՛չ, այլ դրության այդ անորոշությունը, անհաստատությունը,— լսեց Լևինը և ուզում էր շտապ անցնել, բայց Ստեպան Արկադևիչը մոտ կանչեց նրան։

— Լևին,— ասաց Ստեպան Արկադևիչը, և Լևինը նկատեց, որ նրա աչքերում կար ո՛չ թե արցունք, այլ թացություն, որը պատահում էր նրա հետ, երբ նա կամ խմած էր, կամ զգացված։ Այսօր կար թե՛ մեկը, թե՛ մյուսը։ — Լևին, մի՛ գնա,— ասաց նա և ամուր սեղմեց նրա արմունկը, ըստ երևույթին, ո՛չ մի կերպ չկամենալով բաց թողնել նրան։

— Սա իմ անկեղծ, գրեթե իմ լավագույն բարեկամն է,— ասաց նա Վրոնսկուն։ — Դու ինձ համար նույնպես մոտիկ ու թանկ մարդ ես։ Եվ ես ուզում եմ ու գիտեմ, որ դուք պետք է լինեք բարեկամներ ու իրար մոտիկ, որովհետև երկուսդ էլ լավ մարդ եք։

— Որ այդպես է, մեզ մնում է միայն համբուրվել,— բարեսրտորեն կատակելով ասաց Վրոնսկին, ձեռք տալով։

Լևինն արագ բռնեց իրեն մեկնած ձեռքը և ամուր սեղմեց այն։

— Ես շատ, շատ ուրախ եմ,— ասաց Լևինը, սեղմելով նրա ձեռքը։

— Սպասավո՛ր, մի շիշ շամպայն,— ասաց Ստեպան Արկադևիչը։

— Ես էլ շատ ուրախ եմ,— ասաց Վրոնսկին։

Բայց չնայած Ստեպան Արկադևիչի և նրանց փոխադարձ ցանկությանը, նրանք խոսելու բան չունեին, և երկուսն էլ զգում էին այդ։

— Դու գիտե՞ս, որ նա ծանոթ չէ Աննայի հետ,— ասաց Ստեպան Արկադևիչը Վրոնսկուն։ — Եվ ես անպայման ուզում եմ նրան տանել Աննայի մոտ։ Գնանք, Լևին։

— Մի՞թե,— ասաց Վրոնսկին։ — Աննան շատ կուրախանա։ Ես այս րոպեիս կերթայի տուն,— ավելացրեց նա,— բայց Ցավշինն անհանգստացնում է ինձ, և ես ուզում եմ լինել այստեղ, մինչև նա կվերջացնի։

— Իսկ ի՞նչ կա որ, վա՞տ է վիճակը։

— Շարունակ տարվում է, և միայն ե՛ս կարող եմ զսպել նրան։

— Է՛հ, բուրգիկ չխաղա՞նք։ Լևի՛ն, կխաղա՞ս։ Շատ լավ,— ասաց Ստեպան Արկադևիչը։ — Դարսիր բուրգիկ,— դարձավ նա մարկերին։

— Վաղուց պատրաստ է,— պատասխանեց մարկերը, որ խաղագնդակներն արդեն դարսել էր եռանկյունաձև ու ինքն իրեն զբաղվելու համար գլորում էր կարմիր խաղագնդակը։

— Դե՛, սկսենք։

Մի խաղից հետո Վրոնսկին ու Լևինը նստեցին Գագինի սեղանի մոտ, և Լևինը Ստեպան Արկադևիչի առաջարկությամբ սկսեց որոշ գումար դնել տուզերի վրա։ Վրոնսկին մերթ նստում էր սեղանի մոտ, շրջապատված անընդհատ իրեն մոտեցող ծանոթներով, մերթ գնում էր ինֆերնալ-սենյակը՝ սեղեկանալու Ցաշվինի խաղի մասին։ Լևինն զգում էր հաճելի հանգիստ առավոտվա մտավոր հոգնածությունից։ Նրան ուրախացնում էր Վրոնսկու հետ եղած թշնամանքի վերջանալը, և հանգստի, վայելչության ու բավականության տպավորությունը չէր հեռանում նրանից։

Երբ խաղը վերջացավ, Ստեպան Արկադևիչը թևանցուկ արեց Լևինին։

— Ուրեմն, գնանք Աննայի մոտ։ Հենց այժմ, հա՞։ Նա տանն է։ Ես վաղուց եմ խոստացել՝ տանել քեզ նրա մոտ։ Ո՞ւր ես մտադիր գնալու երեկոյան։

— Առանձնապես ո՛չ մի տեղ։ Ես խոստացա Սվիյաժսկուն՝ գնալ գյուղատնտեսական ընկերություն։ Սակայն գնանք,— ասաց Լևինը։

— Հիանալի, գնանք։ Իմացիր, արդյոք եկե՞լ է իմ կառքը,— դիմեց Ստեպան Արկադևիչը սպասավորին։

Լևինը մոտեցավ սեղանին, վճարեց տուզերի վրա իր դրած ու տարված քառասուն ռուբլին, վճարեց դռան մոտ կանգնած ծերունի սպասավորին՝ ակումբի հետ կապված ու նրան միայն

ինչ-որ խորհրդավոր կերպով հայտնի ծախսերը և առանձնապես թափ տալով թևերը, բոլոր դահլիճներով գնաց դեպի ելքի դուռը։

IX

— Օբլոնսկու կառե՞թը,— բարկացած բասով բղավեց բարապանը։ Կառեթը մոտեցավ, և երկուսն էլ նստեցին։ Առաջին րոպեներին միայն, երբ կառեթը դուրս էր գալիս ակումբի դարպասից, Լևինը շարունակում էր զգալ ակումբային հանգստի, բավականության ու շրջապատի անպայման վայելչության տպավորությունը. բայց հենց կառեթը դուրս եկավ փողոց, և նա զգաց կառքի օրորումն անհարթ ճանապարհին, լսեց հանդիպական կառապանի ճիչը, տեսավ աղոտ լույսի մեջ գինետան ու կրպակի կարմիր ցուցանակը, այդ տպավորությունը ոչնչացավ, և նա սկսեց վերլուծել իր վարմունքները ու հարց տվեց իրեն, արդյոք լա՞վ է անում, որ գնում է Աննայի մոտ։ Ի՞նչ կասի Կիտին։ Բայց Ստեպան Արկադևիչը չթողեց նրան մտասուզվելու և կարծես թե գուշակելով նրա կասկածները, ցրեց դրանք։

— Ի՞նչ ուրախ եմ ես, որ դու կճանաչես Աննային,— ասաց նա։ — Գիտե՞ս, Դոլլին վաղուց էր ցանկանում այդ բանը։ Լվովն էլ արդեն եղել է Աննայի մոտ և լինում է։ Թեպետև նա իմ քույրն է,— շարունակեց Ստեպան Արկադևիչը,— բայց ես համարձակ կարող եմ ասել, որ դա զարմանալի կին է... Ա՜յ, կտեսնես։ Նրա դրությունը շատ ծանր է, մանավանդ այժմ։

— Իսկ ինչո՞ւ մանավանդ այժմ։

— Մենք բանակցություններ ենք վարում նրա ամուսնու հետ ապահարզանի մասին։ Եվ նա համաձայն է. բայց այստեղ դժվարություններ կան որդու վերաբերյալ, և այդ գործը, որ պետք է վաղուց արդեն վերջացած լիներ, ձգձգվում է ահա երեք ամիս։ Հենց որ ապահարզան ստացվի, նա կամուսնանա Վրոնսկու հետ։ Ի՞նչ տխմար բան է այդ, պտտեցնելու այդ հին սովորությունը, «ցնծա Եսայի»-ն, որին ոչ ոք չի հավատում և որը խանգարում է մարդկանց երջանկությանը,— ավելացրեց Ստեպան Արկադևիչը։ — Եվ այն ժամանակ նրանց դրությունը կդառնա որոշ, ինչպես իմը, ինչպես քոնը։

— Իսկ ինչո՞ւմն է դժվարությունը,— հարցրեց Լևինը։

— Ա՜խ, դա երկար ու ձանձրալի պատմություն է։ Այս բոլորն այնպես անորոշ է մեզանում։ Բայց բանն այն է, որ Աննան, սպասելով այդ ապահարզանին Մոսկվայում, որտեղ ամենքը ճանաչում են նրան ու Վրոնսկուն, ապրում է արդեն երեք ամիս, ո՛չ մի տեղ չի գնում, ո՛չ ոքի չի տեսնում կանանցից, բացի Դոլլիից, որովհետև, հասկանո՞ւմ ես, նա չի ուզում, որ իր մոտ գան շնորհ անելով. Մոսկվայից հեռացավ նույնիսկ այդ հիմար իշխանազնուհի Վարվառան. համբերելով այդ անպարկեշտ բան։ Այ, ահա, այդ դրության մեջ ուրիշ մի կին չէր կարող գտնել իր մեջ միջոցներ։ Իսկ Աննան, ա՜յ, կտեսնես, թե նա ինչպե՞ս է դասավորել իր կյանքը, ինչպես հանգիստ է և արժանապատվությամբ լի։ Ձախ, դեպի նրբափողոցը, եկեղեցու դիմաց,— ձայնեց Ստեպան Արկադևիչը, կռանալով դեպի կառեթի լուսամուտը։ — Ֆո՜ւ, ինչ շոգ է,— ասաց նա, չնայած 12 աստիճան ցրտին, էլ ավելի բանալով իր մուշտակի կուրծքը, որ առանց այն էլ բաց էր։

— Բայց չէ՞ որ նա աղջիկ ունի, երևի զբաղված է նրանով,— ասաց Լևինը։

— Դու, երևում է, ամեն կնոջ պատկերացնում ես քեզ միմիայն որպես էգ, une couveuse[1],— ասաց Ստեպան Արկադևիչը։ — Եթե զբաղված է, ուրեմն անպայման երեխաներով։ Ո՛չ, Աննան, կարծեմ հիանալի կերպով դաստիարակում է աղջկան, բայց նրա մասին բան չի լսվում։ Նա զբաղված է նախ նրանով, որ գրում է։ Ես արդեն տեսնում եմ, որ դու հեգնորեն ժպտում ես, սակայն իզուր։ Նա գրում է մանկական գիրք և ոչ ոքի ոչինչ չի ասում այդ մասին, բայց ինձ կարդացել է, և ձեռագիրը ես տվել եմ Վորկուևին... գիտես, այն հրատարակիչը... ինքն էլ, կարծեմ, գրող է։ Վորկուևը բանիմաց է և ասում է, որ հիանալի գործ է այդ։ Բայց դու կարծում ես, թե նա կին-հեղինա՞կ է։ Ամենևին։ Նա ամենից առաջ՝ կին է, արտով կին, ա՜յ կտեսնես ինքդ։ Այժմ նա ունի

[1] Թուխս։

անգլուհի մի աղջիկ և ամբողջ մի ընտանիք, որով զբաղված է։

— Ասել կուզի, ինչ-որ մարդասիրական բա՞ն է այդ։

— Ահա՜, դու ուզում ես այժմ ամեն ինչ տեսնել վատ գույներով։ Ո՛չ թե մարդասիրական, այլ սրտաբուխ բան։ Նրանց մոտ, այսինքն՝ Վոռնսկու մոտ, կար անգլիացի մի ձիամարզիչ, իր գործին հմուտ վարպետ, բայց հարբեցող։ Նա իրեն գլխովին տվեց հարբեցողության delirium tremens[1] և լքեց ընտանիքը։ Աննան տեսավ ընտանիքի անդամներին, օգնեց, տարվեց այդ գործով, և այժմ այդ ամբողջ ընտանիքը նրա խնամքին է, բայց ո՛չ այնպես, բարձրից նայելով, դրամով, այլ նա ինքը տղաների հետ պարապում է ռուսերեն՝ գիմնազիայի համար, իսկ աղջկան վերցրել է իր մոտ։ Ա՛յ, հրես ինքդ կտեսնես նրան։

Կառեթը մտավ բակ, և Ստեպան Արկադևիչը բարձր զանգահարեց գլխավոր մուտքից, որի մոտ կանգնած էր մի սահնակ։

Ու առանց հարցնելու դուռը բացող ծախսարարին, թե տա՞նն է, Ստեպան Արկադևիչը մտավ նախասենյակ։ Լևինը գնում էր նրա ետևից, ավելի և ավելի կասկածելով, արդյոք լա՞վ է անում ինքը, թե՞ վատ։

Նայելով իրեն հայելու մեջ, Լևինը նկատեց, որ ինքը կարմրած է, բայց հավատացած էր, որ հարբած չէ, և գորգապատ սանդուղքներով գնաց վերև՝ Ստեպան Արկադևիչի ետևից։ Վերևում իրեն, որպես մոտիկ մարդու, ողջունող ծառային Ստեպան Արկադևիչը հարցրեց, թե ո՞վ կա Աննա Արկադևնայի մոտ և պատասխան ստացավ, որ պարոն Վորկուևն է։

— Որտե՞ղ են նրանք։

— Առանձնասենյակում։

Անցնելով փայտյա պատերով մեծ սեղանատնից, Ստեպան Արկադևիչն ու Լևինը փափուկ գորգի վրայով գնացին, մտան կիսախավար առանձնասենյակը, որ լուսավորված էր մուգ գույնի լուսամփոփ ունեցող մի լամպով։ Ծառագայթաբեկ մյուս լամպը վառվում էր պատին և լուսավորում էր ամբողջ հասակով նկարված մի կնոջ պորտրե, որի վրա Լևինն ակամա ուշադրություն դարձրեց։ Այդ Աննայի պորտրեն էր, որ Իտալիայում նկարել էր Միխայլովը։ Այն միջոցին, մինչ Ստեպան Արկադևիչը մտնում էր տրելյաժի ետևը, և լսեց տղամարդու խոսող ձայնը, Լևինը նայում էր պորտրեն, որը պայծառ լուսավորության մեջ կարկառում էր շրջանակի միջից, և չէր կարողանում աչք կտրել նրանից։ Լևինը նույնիսկ մոռացավ, թե որտե՛ղ է ինքը, և լսելով այն, ինչ խոսում էին, աչք չէր հեռացնում այդ զարմանալի պորտրեից։ Դա ո՛չ թե նկար էր, այլ կենդանի, սքանչելի կին. սև, գանգուր մազերով, մերկ ուսերով ու թևերով և մտածկոտ կիսաժպիտով՝ նուրբ աղվամազով պատած շուրթերին, որ հաղթական ու քնքշորեն նայում էր նրան՝ նրան շփոթեցնող իր աչքերով։ Այդ կինն այն պատճառով միայն կենդանի չէր, որ ավելի գեղեցիկ էր, քան կարող է լինել կենդանի կինը։

— Ես շատ ուրախ եմ,— լսեց հանկարծ Լևինն իր մոտ մի ձայն, որը հայտնապես ուղղված էր իրեն,— հենց այն կնոջ ձայնը, որի պորտրեով հիանում էր նա։ Աննան դուրս եկավ Լևինին ընդառաջ տրելյաժի ետևից, և Լևինն առանձնասենյակի կիսախավարի մեջ տեսավ պորտրեն պատկերող կնոջը՝ մուգ, երփներանգ-կապույտ զգեստով, ո՛չ այն դիրքով, ո՛չ այն արտահայտությամբ, բայց գեղեցկության այն բարձրության վրա, որտեղ նկարիչը վրձինել էր նրա նուրբ էությունը պորտրեի վրա։ Իրականում Աննան ավելի պակաս շքեղաշուք էր, սակայն դրա փոխարեն, այդ կենդանի կնոջ մեջ կար մի այնպիսի նոր հրապուրիչ բան, որը չկար պորտրեի մեջ։

X

Աննան կանգնեց Լևինի դիմաց, չթաքցնելով իր ուրախությունը՝ նրան տեսնելու համար։ Յուրահատուկ հանգստությամբ մեկնեց նրան իր փոքրիկ ու եռանդուն ձեռքը, ծանոթացրեց նրան Վորկուևի հետ և նշեց շիկավուն լավիկ աղջկան, որը հենց այդտեղ նստել էր աշխատանքի, անվանելով նրան իր սանուհի.— այդ հանգստության մեջ երևում էին բարձր հասարակության կնոջ, միշտ հանգիստ ու բնական, Լևինին ծանոթ հաճելի վարվելաձևերը։

— Շատ, շատ ուրախ եմ,— կրկնեց Աննան, և նրա շուր-

[1] Հարբեցողության խելագարություն։

թերին Լևինի համար այդ հասարակ խոսքերը, հայտնի չէ թե ինչո՛ւ, ստացան առանձին նշանակություն։ — Ես ձեզ վաղուց եմ ճանաչում ու սիրում՝ և՛ Ստիվայի հետ բարեկամության համար, և՛ հանուն ձեր կնոջ... ես նրան ճանաչեցի շատ կարճ ժամանակով, բայց նա ինձ վրա թողեց սքանչելի ծաղկի, այո՛, ծաղկի տպավորություն։ Եվ նա շուտով արդեն կլինի մա՛յր։

Աննան խոսում էր ոգևոր և առանց շտապելու, երբեմն հայացքը Լևինի վրայից գցելով եղբոր վրա, ու Լևինն զգում էր, որ իր թողած տպավորությունը լավ է, և նա Աննայի հետ իրեն զգաց թեթև, պարզ ու հաճելի, կարծես մանկությունից ճանաչում էր նրան։

— Մենք Իվան Պետրովիչի հետ տեղավորվեցինք Ալեքսեյի առանձնասենյակում,— ասաց Աննան, պատասխանելով Ստեպան Արկադևիչի հարցին, թե կարելի՞ է արդյոք ծխել,— հենց նրա համար, որ ծխենք,— և նայելով Լևինին, փոխանակ հարցնելու, արդյոք ծխո՞ւմ է նա, մոտ քաշեց իրեն կրիայի ոսկրից ծխախոտատուփը և հանեց մի պախիտոս։

— Ինչպե՞ս է առողջությունդ հիմա՛,— հարցրեց Աննային եղբայրը։

— Ոչինչ։ Ջղերս՝ ինչպես միշտ։

— Արտակարգ լավն է, չէ՞,— ասաց Ստեպան Արկադևիչը, նկատելով, որ Լևինը դիտում էր պորտրեն։

— Ես չեմ տեսել ավելի լավ պորտրե։

— Եվ զարմանալի նման է, այնպես չէ՞,— ասաց Իվան Վորկուևը։

Լևինը պորտրեից նայեց օրիգինալին։ Առանձնահատուկ մի փայլ լուսաշողեց Աննայի դեմքն այն պահին, երբ նա զգաց իր վրա Լևինի հայացքը։ Լևինը կարմրեց և իր շփոթությունը թաքցնելու համար ուզեց հարցնել, թե վաղո՞ւց է արդյոք, ինչ Աննան տեսել է Դարյա Ալեքսանդրովնային, բայց այդ նույն ժամանակ խոսեց Աննան։

— Մենք այս բոպեիս Իվան Պետրովիչի հետ խոսում էինք Վաշչենկովի վերջին նկարների մասին։ Դուք տեսե՞լ եք դրանք։

— Այո՛, տեսել եմ,— պատասխանեց Լևինը։

— Բայց ներողություն, ես ընդհատեցի ձեզ, դուք ուզում էիք ասել...

Լևինը հարցրեց, թե վաղո՞ւց է, ինչ նա տեսել է Դոլլիին։

— Երեկ նա ինձ մոտ էր. նա շատ բարկացած է գիմնազիայի վրա՝ Գրիշայի պատճառով։ Լատիներենի ուսուցիչը կարծեմ անարդար է Գրիշայի նկատմամբ։

— Այո՛, ես տեսել եմ այդ նկարները։ Նրանք այնքան էլ դուր չեկան ինձ,—վերադարձավ Լևինը Աննայի սկսած խոսակցությանը։

Այժմ արդեն Լևինը խոսում էր գործի նկատմամբ բոլորովին ո՛չ այն արհեստական վերաբերմունքով, ինչպես այս առավոտ։ Աննայի հետ խոսակցության մեջ ասված ամեն խոսք ստանում էր առանձին նշանակություն։ Եվ նրա հետ խոսելը հաճելի էր, իսկ ավելի ևս հաճելի էր նրան լսելը։

Աննան խոսում էր ո՛չ միայն բնականորեն, խելացի, այլև խելոք ու անփութորեն, ո՛չ մի արժեք չվերագրելով իր մտքերին, այլ խոշոր արժեք վերագրելով խոսակցի մտքերին։

Խոսք բացվեց արվեստի նոր ուղղության մասին, ֆրանսիացի նկարչի՝ Աստվածաշնչի նոր նկարազարդման մասին։ Վորկուևը մեղադրում էր նկարչին ռեալիզմի մեջ, որ հասցրած էր կոպտության։ Լևինն ասաց, որ ֆրանսիացիները պայմանականություն են մտցրել արվեստի մեջ այնպես, ինչպես ո՛չ ոք և որ այդ պատճառով նրանք առանձին արժանիք են տեսնում դեպի ռեալիզմը վերադարձի մեջ։ Այնտեղ, ուր նրանք արդեն չեն ստում, տեսնում են պոեզիա։

Լևինի ասած ո՛չ մի խելոք բան երբեք դեռ այնպիսի բավականություն չէր պատճառել իրեն, ինչպես այդ։ Աննայի դեմքը մեկեն ամբողջովին պայծառացավ, երբ նա հանկարծ գնահատեց այդ միտքը։ Նա ծիծաղեց։

— Ես ծիծաղում եմ,— ասաց նա,—ինչպես մարդ ծիծաղում է, երբ տեսնում է շատ նման պորտրե։ Այն, ինչ ասացիք դուք, լիովին բնորոշում է ֆրանսիական արվեստն այժմ՝ թե՛ նկարչությունը, թե՛ նույնիսկ գրականությունը։ Zola, Daudet. Բայց, կարող է միշտ այդպես է լինում, որ կառուցում են իրենց conceptions[1] մտացածին, պայմանական ֆիգուրներից, իսկ հետո՝ երբ բոլոր combinaisons[2] արված են, մտացածին ֆիգուրները ձանձրացրել են, սկսում են մտածել, հնարել ավելի բնական, ավելի ճշմարիտ ֆիգուրներ։

[1] Կոնցեպցիաները։
[2] Կոմբինացիաներ։

— Այ դա միանգամայն ճիշտ է,—ասաց Վորկուևը։

— Ուրեմն դուք ակումբո՞ւմ էիք,—դիմեց Աննան եղբորը։

«Այո՛, այո՛, ահա՛ կին»,—մտածում էր Լևինը, ինքնամոռաց և համառորեն նայելով Աննայի գեղեցիկ, շարժուն դեմքին, որն այժմ հանկարծ բոլորովին փոխվեց։ Լևինը չէր լսում, թե ինչի՛ մասին էր խոսում Աննան, թեքված դեպի եղբայրը, բայց նա ապշեց Աննայի արտահայտության փոփոխությունից։ Նրա դեմքը, առաջ այնքա՛ն գեղեցիկ իր հանգստությամբ, հանկարծ արտահայտեց տարօրինակ հետաքրքրություն, ցասում ու հպարտություն։ Բայց դա տևեց միայն մի րոպե։ Նա աչքերը կկոցեց, ասես թե մտաբերելով ինչ-որ բան։

— Է՛, հա, սակայն ո՛չ ոքի համար դա հետաքրքիր չէ,— ասաց նա և դիմեց անգլուհուն.

— Please, order the tea in the drawing room[1].

Աղջիկը վեր կացավ ու դուրս գնաց։

— Ինչպե՞ս է, նա քննություն բռնե՞ց,—հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Հիանալի։ Շատ ընդունակ աղջիկ է և անուշ բնավորությամբ։

— Վերջը այնպես կլինի, որ դու նրան քոնից ավելի կսիրես։

— Այ, տղամարդն է խոսում։ Սիրո մեջ չկա շատ և քիչ։ Աղջկաս սիրում եմ մի սիրով, նրան՝ այլ սիրով։

— Ես ահա ասում եմ Աննա Արկադևնային,—ասաց Վորկուևը,—որ եթե նա իր եռանդի մեկ հարյուրերորդը ներդներ ռուս երեխաների դաստիարակության ընդհանուր գործին, ինչ սպառում է այդ աղջկա վրա, Աննա Արկադևնան կաներ մեծ օգտակար գործ։

— Այո՛, բայց ի՞նչ արած, ես չկարողացա։ Կոմս Ալեքսեյ Կիրիլիչը շատ էր խրախուսում ինձ (արտասանելով կոմս Ալեքսեյ Կիրիլիչ խոսքերը, Աննան աղաչական ու վեհերոտ նայեց Լևինին, և սա ակամա պատասխանեց նրան հարգալից ու դրական հայացքով), խրախուսում էր ինձ՝ զբաղվել դպրոցով։ Ես գնացի մի քանի անգամ։ Նրանք շատ հաճելի են, բայց ես չկարողացա կապվել այդ գործին։ Դուք ասում եք՝ եռանդ։ Եռանդը հիմնված է սիրո վրա։ Իսկ եթե սիրո դրդապատճառ չկա, հրամայել չի կարելի։ Ահա ես սիրեցի այդ աղջկան, ինքս էլ չգիտեմ՝ ինչի՛ համար։

Եվ Աննան նորից նայեց Լևինին։ Նրա թե՛ ժպիտը, թե՛ հայացքը ասում էին Լևինին, որ ինքն իր խոսքը ուղղում է միայն նրան, թանկ գնահատելով նրա կարծիքը և դրա հետ միասին նախապես իմանալով, որ իրենք հասկանում են իրար։

— Ես դա լիովին հասկանում եմ,—պատասխանեց Լևինը,—դպրոցի և առհասարակ նման հիմնարկների վրա չի կարելի սրտանց աշխատել, ու ես կարծում եմ, այդ է պատճառը, որ այդ մարդասիրական հիմնարկները միշտ քիչ արդյունք են տալիս։

Աննան լռեց, ապա ժպտաց։—Այո՛, այո՛,—հաստատեց նա։—Ես երբեք չէի կարող։ Je n'ai pas le coeur sasez large[1], որ կարողանայի սիրել մի ամբողջ ապաստարան՝ իր անպիտան աղջիկներով։ Cela ne m'a jamais réussi[2]. Ինչքա՞ն կանայք կան, որոնք դրանից կարող էին իրենց համար postion sociale[3] ստեղծել։ Ու հիմա առավել և՛ս,— ասաց նա, տխուր, վատահալից արտահայտությամբ դիմելով արտաքուստ եղբորը, բայց հայտնապես միայն Լևինին։— Եվ այժմ, երբ ինձ այնպես պետք է որևէ զբաղմունք, ես չեմ կարող։— Ու հանկարծ մթագնելով (Լևինը հասկացավ, որ նա մթագնեց ինքն իրենից՝ այն բանի համար, որ խոսում է իր մասին), նա փոխեց խոսակցությունը։— Ես գիտեմ ձեր մասին,— ասաց նա Լևինին,— որ դուք վատ քաղաքացի եք, և ես պաշտպանում էի ձեզ, ինչպես կարող էի։

— Իսկ ինչպե՞ս էիք դուք պաշտպանում ինձ։

— Նայած հարձակումներին։ Սակայն չէի՞ք կամենա թեյ։ Նա վեր կացավ ու վերցրեց սաֆյանի կազմով գիրքը։

— Տվե՛ք ինձ, Աննա Արկադևնա,— ասաց Վորկուևը, նշելով գիրքը։— Դա շատ ուշագրավ է։

— Օ՜, ո՛չ, այս բոլորը տակավին մշակված չէ։

— Ես ասացի նրան,— դիմեց Ստեպան Արկադևիչը քրոջը, նշելով Լևինին։

[1] Խնդրեմ, թեյ պատրաստեք ընդունարանում։

[1] Իմ սիրտն այնքան լայն չէ։

[2] Այդ բանն ինձ երբեք չէր հաջողվում։

[3] Հասարակական դիրք։

— Իզո՜ւր։ Իմ գրելը նման է այն զամբյուղներին ու քանդակներին, որ մի ժամանակ վաճառում էր ինձ Լիզա Մերցալովան, բերելով բանտերից։ Նա բանտերի վարիչ էր այդ ընկերության մեջ,— դիմեց Աննան Լևինին։— Եվ այդ դժբախտներն անում էին համբերության հրաշքներ։

Ու Լևինը տեսավ էլի մի նոր գիծ իրեն այդպես արտակարգորեն դուր եկած կնոջ մեջ։ Բացի խելքից, նազանքից, գեղեցկությունից, նրա մեջ կար նաև ճշմարիտի, իսկականի գեղեցկությունը։ Աննան չէր ուզում թաքցնել նրանից իր դրության ամբողջ ծանրությունը։ Ասելով այդ, Աննան հառաչեց, և նրա դեմքը, հանկարծ ստանալով խիստ արտահայտություն, կարծես թե քարացավ։ Դեմքի այդպիսի արտահայտությամբ նա էլ ավելի գեղեցիկ էր, քան առաջ, բայց այդ արտահայտությունը նոր էր. դա դուրս էր երջանկությամբ շողշողացող և երջանկություն առաջացնող այն արտահայտությունների շրջանից, որ վրձինել էր նկարիչը պորտրեի վրա։ Լևինը մի անգամ էլ նայեց պորտրեին և Աննայի ֆիգուրին, թե ինչպես նա, բռնած եղբոր ձեռքից, անցնում էր նրա հետ բարձր դռնից, և զգաց նրա հանդեպ քնքշանք ու խղճահարություն, որոնք զարմացրին իրեն։

Աննան խնդրեց Լևինին ու Վորկուևին անցնել ընդունարան, իսկ ինքը մնաց եղբոր հետ՝ խոսելու ինչ-որ բանի մասին։ «Ա՜խ հարազանի, Վռոնսկու մասին, այն մասին, թե ի՞նչ է անում նա ակումբում, իմ մասին», մտածում էր Լևինը։ Եվ նրան այնպես հուզում էր այն հարցը, թե ի՞նչ էր ասում Աննան Ստեպան Արկադևիչին, որ նա համարյա չէր լսում այն, ինչ պատմում էր Վորկուևը երեխաների համար Աննա Արկադևնայի գրած վեպի արժանիքների մասին։

Թեյի ժամանակ շարունակվեց նույն հաճելի, բովանդակալից խոսակցությունը։ Ոչ միայն չկար ոչ մի բոպե, երբ հարկավոր էր խոսակցության նյութ փնտրել, այլ, ընդհակառակն, զգացվում էր, թե մարդ չի հասցնում ասելու այն, ինչ ուզում է, և սիրով զսպում է իրեն, լսելով ուրիշի ասածը։ Եվ ամեն բան, ինչ ասում էին, ոչ միայն ինքն Աննան, այլև Վորկուևը, Ստեպան Արկադևիչը,— ստանում էր, ինչպես թվում էր Լևինին, առանձին նշանակություն, շնորհիվ Աննայի ուշադրության ու դիտողությունների։

Հետևելով հետաքրքրական խոսակցությանը, Լևինն ամբողջ ժամանակ հիանում էր Աննայով՝ և նրա գեղեցկությամբ, և խելքով ու կրթվածությամբ, և դրա հետ միասին՝ նրա պարզությամբ ու սրտակցությամբ։ Լևինը լսում էր, խոսում և ամբողջ ժամանակ մտածում էր նրա մասին, նրա ներքին կյանքի մասին, աշխատելով հասկանալ նրա զգացումները։ Եվ Լևինը, որ առաջ այնպես դատապարտում էր նրան, այժմ, մաքերի ինչ-որ տարօրինակ ընթացքով, արդարացնում էր նրան և ընդամենը խղճում ու վախենում էր, որ Վռոնսկին նրան ո՛չ լիովին է հասկանում։ Տասնմեկերորդ ժամին, երբ Ստեպան Արկադևիչը վեր կացավ, որ գնա (Վորկուևը գնացել էր ավելի վաղ), Լևինին թվաց, կարծես ինքը հենց նոր եկավ։ Լևինը նույնպես վեր կացավ ափսոսանքով։

— Գնաք բարով,— ասաց Աննան, բռնած պահելով նրա ձեռքը և նայելով նրա աչքերի մեջ գրավիչ հայացքով։— Ես շատ ուրախ եմ, que la glace est rompue[1].

Աննան բաց թողեց նրա ձեռքը ու աչքերը կկոցեց։

— Ասացեք ձեր կնոջը, որ ես սիրում եմ նրան առաջվա պես և եթե նա չի կարող ներել ինձ իմ դրությունը, ապա՝ ես ցանկանում եմ, որ նա երբեք չների ինձ։ Ներելու համար պետք է ապրել, կրել այն, ինչ կրեցի ես, իսկ դրանից թող տերը փրկի նրան։

— Անպայման, այո՛, ես կասեմ...— ասաց Լևինը կարմրելով։

XI

«Ի՜նչ զարմանալի, հաճելի և խղճալի կին», մտածում էր նա, Ստեպան Արկադևիչի հետ դուրս գալով ցուրտ օդին։

— Հը՜, ո՞նց է։ Հո ասում էի քեզ,— ասաց նրան Ստեպան Արկադևիչը, տեսնելով, որ Լևինը բոլորովին հաղթահարված է։

— Այո՜,— մտազբաղ պատասխանեց Լևինը,— արտասովոր կին։ Բանը խելքը չէ, զարմանալի սրտառուչ կին է։ Սաստիկ խղճում եմ նրան։

— Այժմ, ասված տա, շուտով ամեն բան կկարգավորվի։

[1] Որ սառույցը կոտրվեց։

Տե՞ս, այդպես է, ա՜յ, մի՛ դատիր առաջուց,— ասաց Ստեպան Արկադևիչը, բանալով կառեթի դռնակը։— Մնաս բարով, մեր ճանապարհները տարբեր են։

Անդադար մտածելով Աննայի մասին, ամենապարզ այն խոսակցությունների մասին, որ եղան նրա հետ, և մտաբերելով նրա դեմքի արտահայտության բոլոր մանրամասները, ավելի ու ավելի մտնելով նրա դրության մեջ և զգալով նրա հանդեպ խղճահարություն, Լևինը հասավ տուն։

Տանը Կուզման հայտնեց Լևինին, որ Կատերինա Ալեքսանդրովնան առողջ է, որ քիչ առաջ միայն գնացին քույրերը, և հանձնեց երկու նամակ։ Լևինը հենց այդտեղ՝ նախասենյակում կարդաց նամակները, որպեսզի հետո չդրաղվի գրանցով։ Մեկը Սոկոլովից էր՝ գործակատարից։ Սոկոլովը գրում էր, որ ցորենը ծախել չի կարելի, տալիս են միայն հինգուկես ռուբլի, իսկ որևէ տեղից դրամ վերցնել այլևս հնարավոր չէ։ Մյուս նամակը քրոջից էր։ Նա հանդիմանում էր եղբորն այն բանի համար, որ իր գործը տակավին չէր կատարված։

«Է՛հ, կծախենք հինգուկես ռուբլով, եթե ավելի չեն տալիս», անմիջապես անսովոր թեթևությամբ վճռեց Լևինն առաջին հարցը, որն առաջ թվում էր նրան այնքան դժվար։ «Զարմանալի է, թե ինչպես զբաղված է այստեղ իմ ամբողջ ժամանակը», մտածեց նա երկրորդ նամակի կապակցությամբ։ Նա իրեն մեղավոր էր զգում քրոջ հանդեպ այն բանի համար, որ մինչև այսօր չէր արել այն, ինչի մասին քույրը խնդրել էր։ «Այսօր նորից չգնացի դատարան, բայց այսօր արդեն իսկապես ժամանակ չկար»։ Ու վճռելով, որ դա անպայման կանի վաղը, նա գնաց կնոջ մոտ։ Գնալով նրա մոտ, Լևինը մտքով արագ վերհիշեց իր անցկացրած ամբողջ օրը։ Օրվա ամբողջ դեպքերը խոսակցություններ էին. խոսակցություններ, որ նա լսել էր և որոնց մասնակցել էր։ Բոլոր խոսակցություններն այնպիսի նյութերի մասին էին, որոնցով ինքը երբեք չէր զբաղվի, եթե մենակ լիներ դյուղում, իսկ այստեղ նրանք շատ հետաքրքրական էին։ Եվ բոլոր խոսակցությունները լավ էին. միայն երկու դեպքում այնքան էլ լավ չէին։ Մեկն այն էր, ինչ

ասաց նա դայլակոն մասին, մյուսը՝ ինչ-որ բան այն չէր դեպի Աննան տածած իր քնքուշ խղճահարության մեջ։

Լևինը կնոջը գտավ տխուր և ձանձրացած։ Երեք քույրերի ճաշը կարող էր լինել շատ ուրախ. բայց հետո, երբ նրանք երկար սպասեցին Լևինին, ամենքին համակեց ձանձրույթ։ Քույրերը գնացին, և Կիտին մնաց մենակ։

— Իսկ դու, ի՞նչ էիր անում,— հարցրեց Կիտին, նայելով ամուսնու աչքերին, որոնք փայլում էին ինչ-որ առանձնապես կասկածելի կերպով։ Բայց, որպեսզի չխանգարի նրան՝ պատմելու բոլորը, Կիտին թաքցրեց իր ուշադրությունը և հավանության ժպիտով լսում էր նրա պատմածն այն մասին, թե ինչպե՛ս անցկացրեց նա երեկոն։

— Ես շատ ուրախացա, որ պատահեցի Վռոնսկուն։ Ես ինձ զգում էի նրա հետ շատ թեթև ու պարզ։ Հասկանո՞ւմ ես, այժմ ես կաշխատեմ երբեք այլևս չտեսնվել նրա հետ, բայց, որպեսզի վերջ տրվեր այդ անհարմար դրությանը,— ասաց նա և հիշելով, որ ինքը, աշխատելով երբեմ այլևս չտեսնվել, անմիջապես գնաց Աննայի մոտ, կարմրեց։ — Ահա մենք ասում ենք, թե ժողովուրդը խմում է. ես չգիտեմ ո՞վ է ավելի խմում՝ ժողովո՞ւրդը, թե՞ մեր դասը. ժողովուրդը գեթ տոն օրերին, իսկ...

Բայց Կիտիի համար հետաքրքրական չէր դատողությունն այն մասին, թե ինչպե՛ս է խմում ժողովուրդը։ Նա տեսավ, որ իր ամուսինը կարմրեց, և ուզում էր իմանալ, թե ինչո՞ւ։

— Իսկ հետո որտե՞ղ էիր։

— Ստիվան սաստիկ համոզում էր ինձ՝ գնալ Աննա Արկադևնայի մոտ։

Եվ ասելով այդ, Լևինը կարմրեց է՛լ ավելի, ու նրա կասկածն այն մասին, արդյոք ինքը լա՞վ արեց, թե՞ վատ, գնալով Աննայի մոտ, վերջնականապես փարատվեց։ Այժմ նա գիտեր, որ չպետք էր անել այդ բանը։

Կիտիի աչքերն առանձնապես լայն բացվեցին ու փայլեցին Աննայի անունը լսելուց, բայց ուժ գործ դնելով իր վրա, նա թաքցրեց իր հուզմունքը և խաբեց ամուսնուն։

— Ա՜,— ասաց նա միայն։

— Դու, իհարկե, չես բարկանա, որ ես գնացի։ Ստիվան

խեղդեց, հետո՝ Դոլլին ցանկանում էր այդ,— շարունակեց Լևինը։

— Օ՜, ոչ,— ասաց Կիտին, բայց նրա աչքերի մեջ Լևինը տեսավ իր վրա ուժ գործ դնելու ջանք, որը բարի բան չէր խոստանում իրեն։

— Նա շատ հաճելի, շատ, շատ խղճալի, լավ կին է,— ասում էր Լևինը, պատմելով Աննայի մասին, նրա զբաղմունքների և այն մասին, ինչ հանձնարարեց նա ասել։

— Այո՜, իհարկե, նա շատ խղճալի է,— ասաց Կիտին, երբ Լևինը վերջացրեց։— Ումի՞ց նամակ ստացար։

Լևինն ասաց և հավատալով նրա հանգիստ տոնին, գնաց հանվելու։

Վերադառնալով, Լևինը Կիտիին գտավ նույն բազկաթոռի մեջ։ Երբ նա մոտեցավ կնոջը, սա նայեց նրան ու հեկեկաց։

— Ի՞նչ եղավ, ի՞նչ,— հարցրեց Լևինը, նախապես արդեն իմանալով թե՝ ի՛նչ։

— Դու սիրահարվել ես այդ գարշելի կնոջը, նա քեզ կախարդել է։ Ես տեսա քո աչքերից։ Այո, այո՜։ Իսկ ի՞նչ կարող է դուրս գալ դրանից։ Ակումբում դու խմեցիր, խմեցիր, խաղացիր և հետո գնացիր... ո՞ւմ մոտ։ Ոչ, գնա՛նք այստեղից... վաղը ես կմեկնեմ։

Երկար ժամանակ Լևինը չէր կարողանում հանգստացնել կնոջը։ Վերջապես հանգստացրեց, խոստովանելով միայն, որ խղճահարության զգացումը՝ միացած գինու հետ՝ խելքահան արին իրեն, ու ինքը ենթարկվեց Աննայի խորամանկ ազդեցությանը և, որ այսուհետև կխուսափի նրանից։ Մի բան, ինչը Լևինն անկեղծաբար ընդունում էր, այն էր, որ այդքան երկար ապրելով Մոսկվայում և զբաղված լինելով միայն խոսակցություններով, ուտել-խմելով, խելքը կորցրել է։ Նրանք խոսեցին մինչև գիշերվա ժամը երեքը։ Ժամը երեքին միայն նրանք հաշտվեցին այնքան, որ կարող էին քնել։

XII

Հյուրերին ճանապարհ դնելուց հետո Աննան, առանց նստելու, սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։ Նա թեև անգիտակցաբար (ինչպես վերջերս վարվում էր բոլոր երիտասարդ տղամարդկանց հետ) ամբողջ երեկոն անում էր հնարավորին

չափ ամեն ինչ, որպեսզի Լևինի մեջ սեր արթնացնի իր հանդեպ, և թեպետ գիտեր, որ հասավ իր նպատակին, որքան այդ հնարավոր էր ամուսնացած մի ազնիվ մարդու նկատմամբ և մի երեկոյի ընթացքում, ու թեպետ Լևինը շատ դուր եկավ նրան (չնայած այն խիստ տարբերությանը, տղամարդու հայեցակետով, որ կար Լևինի ու Վրոնսկու միջև, նա, որպես կին, տեսնում էր նրանց մեջ հենց այն ընդհանուր բանը, որի համար Կիտին սիրեց և՛ Վրոնսկուն, և՛ Լևինին),— այսուամենայնիվ նա դադարեց մտածել Լևինի մասին, հենց որ սա դուրս գնաց սենյակից։

Մի, շարունակ մի միտք զանազան ձևերով հետամտում էր Աննային, ձեռք չքաշելով նրանից։ «Եթե ես այդպես ազդում եմ ուրիշների վրա, ընտանիքի տեր այդ սիրող մարդու վրա, ապա ինչո՞ւ նա այդպես սառն է իմ հանդեպ... և ոչ թե սառն է, ես գիտեմ, նա սիրում է ինձ։ Բայց այժմ ինչ-որ մի նոր բան բաժանում է մեզ։ Ինչո՞ւ նա չկա ամբողջ երեկո։ Նա պատվիրել է Ստիվային ասել, որ չի կարող թողնել Յաշվինին և պետք է հետևի նրա խաղին։ Ի՞նչ մի երեխա է Յաշվինը։ Սակայն, ենթադրենք, որ դա ճիշտ է։ Նա երբեք սուտ չի ասում։ Բայց այս ճշմարտության մեջ կա ուրիշ բան։ Նա ուրախ է՝ ամեն առիթով ցույց տալու ինձ, որ ունի ուրիշ պարտավորություններ։ Ես գիտեմ այդ, ես համաձայն եմ դրան։ Սակայն ինչո՞ւ ապացուցել ինձ այդ։ Նա ուզում է ապացուցել, որ իմ հանդեպ տածած սերը չպիտի խանգարի իր ազատությանը։ Բայց ինձ պետք չեն ապացույցներ, ինձ պետք է սեր։ Նա պետք է հասկանար իմ այս կյանքի ամբողջ ծանրությունն այստեղ, Մոսկվայում։ Մի՞թե ես ապրում եմ։ Ես չեմ ապրում, ես սպասում են հանգուցաբացին, որը տակավին ձգձգվում է ու ձգձգվում։ Նորից պատասխան չկա։ Եվ Ստիվան ասում է, որ չի կարող գնալ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտ, իսկ ես չեմ կարող գրել երկրորդ անգամ։ Ես չեմ կարողանում ոչինչ անել, ոչինչ սկսել, ոչինչ փոխել, ես զսպում եմ ինձ, սպասում եմ, հնարելով ինձ համար զբաղմունքներ՝ անգլիացու ընտանիք, գրել, ընթերցանություն, բայց այս բոլորը խաբեություն է լոկ, այս բոլորը նույն մորֆին է։ Նա պետք է խղճա ինձ», ասում էր Աննան, զգալով, թե ինչպե՛ս իր աչքերը լցվում են ինքն իրեն խղճալու արցունքներով։

Նա լսեց Վրոնսկու զանգի ուժգին ձայնը և շտապով սրբեց արցունքներն ու ո՛չ միայն սրբեց արցունքները, այլև նստեց լամպի մոտ, բացեց գիրքը, ձևանալով հանգիստ։ Պետք էր ցույց տալ նրան, թե ինքը դժգոհ է այն բանից, որ նա չվերադարձավ, ինչպես խոստացել էր, միայն դժգոհ է, բայց ո՛չ մի կերպ ցույց չտալ նրան իր վիշտը և, որ գլխավորն է, խրոնճահարություն իր հանդեպ։ Աննան ինքը կարող էր խրոնճալ իրեն, բայց ո՛չ Վրոնսկին նրան։ Աննան չէր ուզում պայքար, հանդիմանում էր Վրոնսկուն այն բանի համար, որ նա ուզում էր պայքարել, բայց ակամա ինքը կանգնում էր պայքարի դիրքում։

— Է՜, հո չէի՞ր ձանձրանում,— ասաց Վրոնսկին աշխույժ և ուրախ, մոտենալով նրան։ — Ի՞նչ սարսափելի կիրք է խաղը։

— Ո՞չ, ես չէի ձանձրանում ու վաղուց արդեն սովորել եմ չձանձրանալ։ Ստիվան ու Լևինն էին այստեղ։

— Այո՛, նրանք ուզում էին գալ քեզ մոտ։ Հավանեցի՞ր դու Լևինին,— ասաց նա, նստելով Աննայի կողքին։

— Շատ։ Նրանք նոր գնացին։ Իսկ ի՞նչ արեց Յաշվինը։

— Տարել էր տասնյոթ հազար։ Ես նրան կանչեցի։ Ուզում էր արդեն տուն գնալ։ Բայց վերադարձավ նորից և հիմա տանուլ է տվել։

— Հապա էլ ինչի՞ համար էիր մնում,— հարցրեց Աննան, հանկարծ բարձրացնելով աչքերը նրա վրա։ Աննայի դեմքի արտահայտությունը սառն էր ու թշնամական։— Դու Ստիվային ասել էիր, թե մնում ես, որ դուրս տանես Յաշվինին։ Մինչդեռ դու թողիր նրան։

Պայքարի սառն պատրաստակամության միևնույն արտահայտությունը երևաց նաև Վրոնսկու դեմքին։

— Նախ՝ ես նրան ոչինչ չէի խնդրել հաղորդելու քեզ. երկրորդ՝ ես երբեք սուտ չեմ ասում։ Իսկ, որ գլխավորն է՝ ես ուզում էի մնալ և մնացի,— ասաց նա խոժոռվելով։— Աննա, ինչո՞ւ, ինչո՞ւ,— ասաց նա բոպեական լռությունից հետո, կռանալով դեպի Աննան, և բացեց ձեռքը, հույս ունենալով, որ Աննան իր ձեռքը կդնի նրա ձեռքի մեջ։

Աննան ուրախ էր քնքշության հրավերի համար։ Բայց չարության ինչ-որ տարօրինակ ուժ թույլ չտվեց նրան անձնատուր լինելու այդ հրապույրին, կարծես թե պայքարի պայմանները թույլ չէին տալիս նրան հնազանդվելու։

— Հասկանալի է, որ դու ուզում էիր մնալ ու մնացիր։ Դու անում ես այն, ինչ ուզում ես։ Բայց ինչո՞ւ ես դու այդ բանն ասում ինձ։ Ինչի՞ համար է,— ասում էր Աննան, ավելի և ավելի տաքանալով։— Մի՞թե մեկն ու մեկը վիճարկում է քո իրավունքները։ Բայց դու ուզում ես լինել իրավացի և եղիր իրավացի։

Վրոնսկու ձեռքը փակվեց, նա ինքը ետ քաշվեց, և նրա դեմքն ընդունեց ավելի համառ արտահայտություն, քան առաջ։

— Քեզ համար այդ համառության բան է,— ասաց Աննան, սևեռուն հայացքով նայելով նրան և հանկարծ գտնելով իրեն դրգռող դեմքի այդ արտահայտության անունը,— այո՛, իսկապես համառության բան է։ Քեզ համար հարցը այն է, թե դո՞ւ կլինես ինձ հաղթողը, իսկ ինձ համար...— նա նորից խրոնճաց իրեն և քիչ մնաց, որ արտասվեր։— Եթե դու իմանայիր, թե ի՞նչն է ինձ տանջում։ Երբ ես զգում եմ, ինչպես զգում եմ այժմ, որ դու թշնամաբար, այո՛, իսկապես թշնամաբար ես վերաբերվում ինձ, եթե դու գիտենայիր, թե դա ի՞նչ է նշանակում ինձ համար։ Եթե դու իմանայիր, թե ես այդ բոպեներին որքա՞ն մոտ եմ դժբախտության, թե ինչպե՞ս վախենում եմ, ես վախենում եմ ինձնից,— և նա շուռ եկավ, ծածկելով հեկեկանքը։

— Ինչի՞ մասին ենք վիճում մենք,— ասաց Վրոնսկին, սարսափած Աննայի հուսահատության արտահայտությունից և նորից կռանալով դեպի նա ու վերցնելով նրա ձեռքը, համբուրեց այն։ — Ինչի՞ համար։ Մի՞թե ես տանից դուրս փընտրում եմ զվարճություններ։ Մի՞թե ես չեմ խուսափում կանանց հասարակությունից։

— Իհարկե՞,— ասաց Աննան։

— Դե ա՛յ, ես ի՞նչ պետք է անեմ, որ դու հանգիստ լինես։ Ես պատրաստ եմ անելու ամեն ինչ, որպեսզի դու լինես երջանիկ,— ասում էր Վրոնսկին, զգացված Աննայի հուսահատությունից,— ի՞նչ ասես՝ չեմ անի ես, Աննա, որպեսզի ազատեմ քեզ զոնե մի ցավից, ինչպես այժմ։

— Ոչի՞նչ, ոչի՞նչ,— ասաց Աննան։— Ես ինքս չգիտեմ. արդյոք մենավոր կյա՞նքը, ջղե՞րս... Է՜հ, չխոսենք այդ մա-

սին։ Ինչո՞վ վերջացավ վազարշավը, դու չպատմեցիր ինձ,— հարցրեց Աննան, աշխատելով քողարկել հաղթանակը, որն այնուամենայնիվ մնաց իր կողմը։

Վրոնսկին խնդրեց ընթրիք ու սկսեց պատմել Աննային վազարշավի մանրամասները, բայց Վրոնսկու տոնի, նրա հայացքի մեջ, որոնք հետզհետե դառնում էին ավելի սառը, Աննան տեսնում էր, որ նա չի ների իրեն այդ հաղթանակը, որ նրա մեջ նորից հաստատվում էր համառության այն զգացումը, որի դեմ պայքարում էր ինքը։ Վրոնսկին դեպի Աննան հիմա ավելի սառն էր, քան առաջ, կարծես զղջում էր, որ հնազանդվեց։ Եվ Աննան մտաբերելով այն խոսքերը, որոնք հաղթանակը տվին իրեն, այսինքն՝ «ես մոտ եմ դժբախտության և վախենում եմ ինձնից», հասկացավ, որ այդ զենքը վտանգավոր զենք է և որ չի կարելի գործածել դա ուրիշ անգամ։ Ու Աննան զգում էր, թե այն սիրո կողքին, որը կապում էր իրենց, հաստատվեց իրենց միջև ինչ-որ պայքարի չար ոգի, որին ինքը չէր կարող դուրս վանել ո՞չ նրա, ո՞չ էլ, մանավանդ, իր սրտից։

XIII

Չկան այնպիսի պայմաններ, որոնց մարդ չկարողանա վարժվել, մանավանդ երբ նա տեսնում է, որ իրեն շրջապատող բոլոր մարդիկ ապրում են հենց այդպես։ Երեք ամիս առաջ Լևինը չէր հավատա, որ ինքը կարող է հանգիստ քնել այն պայմաններում, որոնց մեջ գտնվում էր այսօր. որ ապրելով աննպատակ, անմիտ կյանքով, ըստ այսմ, իր միջոցներից վեր կյանքով, որ հարբեցողությունից հետո (նա այլ կերպ չէր կարող անվանել այն, ինչ տեղի ունեցավ ակումբում), որ անհեթեթ բարեկամական հարաբերություններից հետո այն մարդու հետ, որին մի ժամանակ սիրահարված է եղել իր կինը, և առավել ևս անհեթեթ այցելությունից հետո այն կնոջը, որին այլ կերպ չէր կարելի անվանել, քան՝ կորած, ու այդ կնոջով հրապուրվելուց և իր կնոջը վշտացնելուց հետո ինքը կարողանար հանգիստ քնել այս պայմաններում։ Բայց հոգնածության, անքուն գիշերի և խմած գինու ազդեցության տակ նա քնեց ամուր ու հանգիստ։

Ժամը հինգին բացվող դռան ճռնչոցը արթնացրեց նրան։

Նա վեր թռավ ու նայեց շուրջը։ Կիտին անկողնում չէր՝ նրա կողքին։ Բայց միջնորմի ետևում կար շարժուն լույս, և նա լսեց կնոջ ոտների ձայնը։

— Ի՞նչ կա... ի՞նչ,— ասաց նա քնաթաթախ։— Կիտի՛, ի՞նչ է եղել։

— Ոչինչ,— ասաց Կիտին, մոմը ձեռքին դուրս գալով միջնորմի ետևից։— Վատ էի զգում ինձ,— ասաց նա, ժպտալով առանձնապես քաղցր և նշանակալից ժպիտով։

— Ի՞նչ է, սկսվե՞ց, սկսվե՞ց,— վախեցած ասաց Լևինը,— Պետք է ուղարկել,— և նա սկսեց շտապ հագնվել։

— Ո՛չ, ո՛չ,— ասաց Կիտին, ժպտալով ու ձեռքով պահելով նրան։— Հավանորեն, ոչինչ չկա։ Ես մի փոքր միայն վատ էի զգում։ Բայց հիմա անցավ։

Եվ Կիտին մոտենալով մահճակալին, հանգցրեց մոմը, պառկեց ու հանդարտվեց։ Թեպետև Լևինին կասկածելի թվաց կնոջ կարծես զուսպ, խաղաղ շնչառությունը և ամենից ավելի՝ այն առանձին քնքշության ու հուզվածության արտահայտությունը, որով Կիտին նրան ասաց «ոչինչ», դուրս գալով միջնորմի ետևից, բայց նա այնպես ուզում էր քնել, որ անմիջապես քնեց։ Հետո միայն նա հիշեց Կիտիի խաղաղ շնչառությունը և հասկացավ այն բոլորը, ինչ տեղի ուներ նրա թանկագին, սիրելի հոգու մեջ այն ժամանակ, երբ նա, առանց շարժվելու, պառկել էր ամուսնու կողքին, սպասելով կնոջ կյանքում ամենամեծ դեպքին։ Ժամը յոթին Լևինին արթնացրեց Կիտիի ձեռքի հպումը նրա ուսին և խաղաղ շշունջը։ Կիտին կարծես պայքարում էր նրան արթնացնելու ափսոսանքի և նրա հետ խոսելու ցանկության միջև։

— Կոստյա, մի՛ վախենա։ Ոչինչ։ Բայց կարծես... Պետք է մարդ ուղարկել Լիզավետա Պետրովնայի ետևից։

Մոմը նորից վառվեց։ Կիտին նստել էր մահճակալին ու ձեռքին բռնել էր այն գործվածքը, որով նա զբաղվում էր վերջին օրերս։

— Խնդրեմ, մի՛ վախենա, ոչինչ։ Ես ամենևին չեմ վախենում,— տեսնելով ամուսնու վախեցած դեմքը, ասաց Կիտին ու սեղմեց նրա ձեռքն իր կրծքին, ապա՝ շուրթերին։

Լևինն շտապ վեր թռավ, մոռացած ինքն իրեն ու աչք չհեռացնելով Կիտիից, հագավ խալաթը ու կանգ առավ, շարու-

նակ նայելով նրան։ Պետք էր գնալ, բայց նա չէր կարողանում կտրվել կնոջ հայացքից։ Մի՞թե կասկած կարող էր լինել, որ նա սիրում էր Կիտիի դեմքը, գիտեր նրա հայացքը, նրա արտահայտությունը, բայց երբեք չէր տեսել նրան այդպես։ Ի՜նչ գարշելի և սարսափելի էր պատկերանում նա ինքն իրեն, մտաբերելով Կիտիի երեկվա վիշտն ու վիրավորանքը հանդեպ այն Կիտիի, ինչպիսին էր նա այժմ։ Կիտիի կարմրած վարդագույն դեմքը, երիզավորված գիշերվա չեպչիկի տակից դուրս պրծած փափուկ մազերով, փայլում էր ուրախությամբ ու վճռականությամբ։

Որքան էլ քիչ անբնականություն ու պայմանականություն կար Կիտիի ընդհանուր բնավորության մեջ, այսուամենայնիվ Լևինը զարմացած էր այն բանից, ինչը բացվեց այժմ նրա առաջ, երբ հանկարծ վերցվեցին բոլոր ծածկոցները, և կնոջ հոգու միջուկը լուսավորվեց նրա աչքերում։ Եվ այդ պարզության ու մերկության մեջ Կիտին, այն Կիտին, որին սիրում էր Լևինը, ավելի ևս տեսանելի էր։ Կիտին ժպտալով նայում էր ամուսնուն, բայց հանկարծ ցնցվեցին նրա հոնքերը, նա բարձրացրեց գլուխը և արագ մոտենալով Լևինին, բռնեց նրա ձեռքն ու ամբողջ մարմնով սեղմվեց նրան, համակելով նրան իր ջերմ շնչով։ Նա տառապում էր և կարծես թե գանգատվում էր ամուսնուն իր տառապանքներից։ Եվ Լևինին առաջին րոպեին թվաց, ըստ իր սովորության, որ ինքը մեղավոր է։ Բայց Կիտիի հայացքի մեջ կար քնքշություն, որն ասում էր, թե ինքը ո՛չ միայն չի հանդիմանում, այլև սիրում է նրան այդ տառապանքների համար։ «Եթե ոչ ես, ապա ո՞վ է մեղավոր այդ բանում», ակամա մտածում էր Լևինը, փնտրելով այդ տառապանքների նախապատճառին, որպեսզի պատժի նրան, բայց նախապատճառ չկար։ Կիտին տառապում էր, գանգատվում էր ու հաղթահարում էր այդ տառապանքները, և ուրախանում էր նրանց համար ու սիրում էր նրանց։ Լևինը տեսնում էր, որ կնոջ հոգում ինչ-որ գեղեցիկ բան է կատարվում, բայց ինչ, չէր կարողանում հասկանալ։ Դա բարձր էր նրա հասկացողությունից։

— Ես մարդ ուղարկեցի մայրիկի մոտ։ Իսկ դու շուտ գնա Լիզավետա Պետրովնայի ետևից... Կոստյա... ոչինչ, անցավ։

Կիտին հեռացավ ամուսնուց ու զանգահարեց։

— Ա՜յ, հիմա գնա։ Պաշան դալիս է։ Ոչինչ, ես ինձ վատ չեմ զգում։

Եվ Լևինը զարմանքով տեսավ, որ Կիտին վերցրեց գիշերվա բերած ձեռագործը ու նորից սկսեց գործել։

Այդ միջոցին, մինչև Լևինը դուրս էր գալիս մի դռնից, նկատեց, որ մյուսից մտնում էր աղախինը։ Լևինը կանգ առավ դռան մոտ ու լսեց, թե ինչպես Կիտին մանրամասն ցուցմունք էր տալիս աղախնին և նրա հետ ինքն էլ սկսեց տեղաշարժել մահճակալը։

Լևինը հագնվեց ու, մինչև կլծեին ձիերը, որովհետև կառապաններ դեռ չկային փողոցում, նորից ներս վազեց ննջարան, այն էլ ո՛չ թե ոտների ծայրին, այլ թև առած, ինչպես թվաց նրան։ Երկու աղախինները մտահոգված մի բան էին տեղափոխում ննջարանում։ Կիտին քայլում ու գործում էր, արագ գցելով թելի հատիկները և կարգադրություններ էր անում։

— Ես հիմա գնում եմ բժշկի մոտ։ Լիզավետա Պետրովնայի ետևից գնացին, բայց ես էլ կգնամ։ Բան պետք չէ՞։ Հա՞, Դոլլիի մո՞տ։— Կիտին նայեց նրան, ըստ երևույթին, չլսելով այն, ինչ ասում էր նա։

— Այո՛, այո՛։ Գնա՛,— արագ ասաց Կիտին, խոժոռվելով և ձեռքը թափահարելով նրա վրա։

Լևինն արդեն մտնում էր ընդունարան, երբ ննջարանից հանկարծ լսվեց աղիողորմ տնքոց, որն անմիջապես և դադարեց։ Նա կանգ առավ ու երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ։

«Այո՛, դա Կիտին է», ասաց նա ինքն իրեն և գլուխը բռնած, վազեց ներքև։

— Տեր աստված, ողորմի՛ր, ների՛ր, օգնի՛ր,— կրկնում էր նա մի տեսակ հանկարծ անսպասելիորեն իր շուրթերին եկած խոսքերը։ Եվ նա, այդ չհավատացող մարդը, կրկնում էր այդ խոսքերը ո՛չ միմիայն շրթունքներով։ Այժմ, այդ րոպեին, նա գիտեր, որ ո՛չ միայն իր բոլոր կասկածները, այլև բանականությամբ հավատալու այն անհնարինությունը, որ գոյություն ուներ իր մեջ, չէին խանգարում նրան դիմելու աստծուն։ Այդ բոլորն այժմ փոշու պես թռավ, ցնդեց նրա հոգուց։ Էլ ո՞ւմ պիտի դիմեր նա, եթե ոչ նրան, որի ձեռքին էր ինքը, իր հոգին և իր սերը։

Չին դեռ պատրաստ չէր. բայց զգալով իր մեջ առանձին լարվածություն՝ թե՛ ֆիզիկական ուժերի, թե՛ ուշադրության դեպի այն գործը, որ ինքը պետք է կատարեր, առանց մի բոպե կորցնելու և առանց սպասելու ձիուն, նա դուրս եկավ փողոց ոտքով ու հրամայեց Կուզմային՝ հասնել իր ետևից։

Անկյունում նա պատահեց շտապող գիշերային մի կառապանի։ Փոքրիկ սահնակում, թավշյա սալոպով[1], գլխին կապած թաշկինակ, նստել էր Լիզավետա Պետրովնան։ «Փա՜ռք աստծո, փա՜ռք աստծո,— ասաց Լևինը, ցնծությամբ ճանաչելով նրա փոքրիկ, շիկավուն դեմքը, որն այժմ ուներ առանձնապես լուրջ, նույնիսկ խիստ արտահայտություն։ Առանց հրամայելու կառապանին, որ կանգ առնի, նա ետ դարձավ ու վազեց նրա կողքով։

— Ուրեմն, մոտ երկո՞ւ ժամ։ Ո՞չ ավելի,— հարցրեց Լիզավետա Պետրովնան։— Դուք տանը կգտնեք Պյոտր Դմիտրիչին, միայն մի՛ շտապեցրեք նրան։ Դեղատնից էլ ափիոն վերցրեք։

— Ուրեմն դուք կարծում եք, որ կարող է վերջանալ բարեհաջո՞ղ։ Տեր աստված, ողորմի՛ր և օգնի՛ր,— ասաց Լևինը, տեսնելով դարպասից դուրս եկող իր ձին։ Թռչելով սահնակի մեջ՝ Կուզմայի կողքին, նա հրամայեց գնալ բժշկի մոտ։

XIV

Բժիշկը դեռ չէր վեր կացել. ծառան ասաց, որ «ուշ է պառկել և չի՛ հրամայել արթնացնել, բայց շուտով վեր կկենա»։ Ծառան մաքրում էր լամպերի ապակիները և թվում էր, թե սաստիկ զբաղված է դրանով։ Ծառայի այդ ուշադրությունը ապակիներին և անտարբերությունը դեպի այն, ինչ կատարվում էր Լևինի մեջ, սկզբում զարմացրեց նրան, բայց անմիջապես, մտախոհելուց հետո, նա հասկացավ, որ ո՛չ ոք չգիտե և պարտավոր չէ իմանալ իր զգացումները, ուստի ավելի ևս հարկավոր է գործել հանդիստ, մտածված ու վճռականորեն, որպեսզի կարելի լինի խորտակել անտարբերության այդ պատը և հասնել իր նպատակին։ «Շշտապել ու ոչինչ աչքաթող չանել», ասում էր ինքն իրեն Լևինը, զգալով իր մեջ ավելի ու ավելի լեռնացումը ֆիզիկական ուժերի և ուշադրության՝ հանդեպ այն ամենի, ինչ պետք է նա աներ առաջիկայում։

Իմանալով, որ բժիշկը դեռ չի վեր կացել, Լևինն իրեն պատկերացրեց զանազան ծրագրերից կանգ առավ հետևյալի վրա. Կուզմային տոմսով ուղարկել ուրիշ բժշկի մոտ, ինքը գնա դեղատուն՝ ափիոնի և երբ վերադառնա, ու բժիշկը դեռ վեր կացած չլինի, այդ դեպքում՝ կաշառելով ծառային կամ բռնությամբ, եթե նա չհամաձայնի, արթնացնել բժշկին, ինչ էլ լինի։

Դեղատանը նիհար դեղագործը հենց նույն անտարբերությամբ, որով ծառան մաքրում էր ապակիները, կնքում էր դրոշմաթղթով դեղափոշիներն այդտեղ սպասող կառապանի համար և հրաժարվեց ափիոն բաց թողնել։ Աշխատելով չշտապել ու չտաքանալ, տալով բժշկի ու մանկաբարձուհու ազգանունները և բացատրելով, թե ինչի՛ համար է ափիոնը, Լևինն սկսեց համոզել նրան։ Դեղագործը գերմաներեն խորհուրդ հարցնելով, արդյո՞ք բաց թողնել, և միջնորմի ետևից ստանալով համաձայնություն, հանեց սրվակը, ձագարը, դանդաղորեն մեծ ամանից լցրեց փոքրի մեջ, կպցրեց պիտակը, կնքեց, չնայած Լևինի խնդրին՝ չանել այդ, և դեռ ուզում էր փաթաթել։ Այդ բանին Լևինն արդեն չկարողացավ դիմանալ, խլեց նրա ձեռքից սրվակը և վազեց դեպի ապակյա մեծ դուռը։ Բժիշկը դեռ չէր վեր կացել, և ծառան, որ այժմ զբաղված էր գորգը փռելով, հրաժարվեց արթնացնել։ Առանց շտապելու, Լևինը հանեց տասը ռուբլիանոց մի թղթադրամ և դանդաղ արտասանելով բառերը, բայց ժամանակ չկորցնելով, տվեց նրան թղթադրամը ու բացատրեց, որ Պյոտր Դմիտրիչը (ինչպե՜ս մեծ ու նշանակալից էր թվում այժմ Լևինին առաջ այնքան անանուն Պյոտր Դմիտրիչը) խոստացել է գնալ օրվա ամեն ժամին, որ նա հավանորեն չի բարկանա, ուստի սպասավորը կարող է այս բոպեիս արթնացնել նրան։

Ծառան համաձայնեց, գնաց վերև ու Լևինին հրավիրեց ընդունարան։

Լևինը լսում էր դռան ետևից, թե ինչպե՜ս հազում էր, քայլում, լվացվում և ինչ-որ բան էր ասում բժիշկը։ Անցավ երեք բոպե. Լևինին թվում էր, թե անցավ ավելի քան մեկ ժամ։ Նա այլևս չէր կարող սպասել։

[1] Կանացի երկար ու լայն վերարկու։

— Պյո՛տր Դմիտրիչ, Պյոտր Դմիտրիչ,— ադերսագին ձայնով ասաց նա բաց դռան միջից։ Ի սեր աստծո, ներեցեք ինձ։ Ընդունեցեք ինձ այնպես, ինչպես կաք։ Արդեն երկու ժամից ավելի է։

— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն,— պատասխանեց ձայնը, և Լևինը զարմանքով լսեց, որ բժիշկը այդ ասում էր ժպտալով։

— Մի բոպեով...

— Իսկո՛ւյն։

Անցավ էլի երկու բոպե, մինչ բժիշկը հագնում էր կոշիկները, և էլի երկու բոպե, մինչ բժիշկը կհագներ զգեստ և կսանրեր գլուխը։

— Պյո՛տր Դմիտրիչ,— խղճուկ ձայնով նորից սկսեց Լևինը, բայց այդ ժամանակ դուրս եկավ բժիշկը, հագնված ու սանրված։ «Այդ մարդիկ խիղճ չունեն,— մտածեց Լևինը— Սանրվե՛լ այն միջոցին, երբ մենք կործանվում ենք»։

— Բարի լույս,— ասաց բժիշկը, ձեռքը տալով նրան ու կարծես դրգռելով նրան իր հանգստությամբ։— Մի՛ շտապեք։ Ի՞նչ կասեք։

Աշխատելով ըստ հնարավորին հանգամանորեն, Լևինն սկսեց պատմել բոլոր անկարևոր մանրամասները կնոջ վիճակի մասին, անդադար ընդհատելով իր պատմությունը, խընդրելով բժշկին, որ նա անմիջապես գնա իր հետ։

— Մի՛ շտապեք։ Ըստ երևույթին, դուք չգիտեք, որ ես պետք չեմ, բայց խոստացել եմ և, իհարկե, կգամ։ Սակայն շտապելու բան չկա։ Խնդրեմ, նստեցեք, արդյոք չէի՞ք կամենա սուրճ։

Լևինը նայեց նրան, հայացքով հարցնելով, հո չի՞ ծիծաղում իր վրա։ Բայց բժշկի մտքով անգամ չէր անցնում ծիծաղել։

— Դիտե՞մ, դիտե՞մ,— ասաց բժիշկը ժպտալով,— ես ինքս ընտանիքի տեր եմ, բայց մենք, ամուսիններս, այդ բոպեներին ամենաողորմելի մարդիկ ենք։ Ես ունեմ մի կին-պացիենտ, որի ամուսինը նման դեպքերում միշտ փախչում, պահվում է ձիանոցում։

— Բայց ի՞նչ եք կարծում, Պյոտր Դմիտրիչ։ Դուք կարծում եք, որ կարող է վերջանալ բարեհաջո՞ղ։

— Բոլոր տվյալները հօդուտ բարեհաջող ելքի են։

— Ուրեմն դուք հիմա կգա՞ք,— հարցրեց Լևինը, զայրույթով նայելով ծառային, որը սուրճ էր բերում։

— Մի ժամից։

— Ո՛չ, ի սեր աստծո։

— Ուրեմն թողեք, գեթ սուրճ խմեմ։

Բժիշկն սկսեց սուրճ խմել։ Երկուսն էլ լռեցին։

— Բայց թուրքերին լա՞վ են ջարդում։ Կարդացի՞ք երեկվա հեռագիրը,— ասաց բժիշկը, ծամելով բուլկին։

— Ո՛չ, ես չեմ կարող,— ասաց Լևինը, վեր թռչելով։— Ուրեմն քառորդ ժամից դուք կլինեք։

— Կես ժամից։

— Աղնիվ խո՞սք։

Երբ Լևինը վերադառնում էր տուն, պատահեց իշխանուհուն, և նրանք միասին մոտեցան ննջարանի դռանը։ Իշխանուհու աչքերում արցունքներ էին երևում, և ձեռքերը դողում էին։ Տեսնելով Լևինին, նա գրկեց նրան ու լաց եղավ։

— Ինչպե՞ս է, հոգյա՛կս, Լիզավետա Պետրովնա,— ասաց իշխանուհին, բռնելով իրենց ընդառաջ եկող, մտազբաղ ու պայծառ դեմքով Լիզավետա Պետրովնայի ձեռքը։

— Լավ է գնում,— պատասխանեց նա,— համոզեցեք, թող պառկի։ Ավելի հեշտ կլինի։

Այն բոպեից, երբ Լևինը զարթնեց ու հասկացավ, թե բանն ի՞նչ է, պատրաստվեց, որ առանց խորհելու, առանց ոչինչ նախատեսելու, փակելով իր բոլոր մտքերն ու զգացումները, հաստատուն կերպով, չվրդովելով կնոջը, այլ, ընդհակառակն, հանգստացնելով նրան և զորավիգ լինելով նրա քաջությանը,— տանի այն, ինչ սպասում է իրեն։ Թույլ չտալով իրեն նույնիսկ մտածելու այն մասին, թե ի՞նչ կլինի, ինչո՞վ կվերջանա, դատելով հարցափորձից, թե որքա՞ն է տևում այդ սովորաբար, Լևինը երևակայությամբ պատրաստվեց համբերելու և զսպելու իրեն մոտ հինգ ժամ, ու դա նրան թվում էր հնարավոր։ Բայց երբ նա վերադարձավ բժշկից ու նորից տեսավ Կիտիի տառապանքները, սկսեց ավելի ու ավելի հաճախ կրկնել. «Տե՛ր աստված, ների՛ր, օգնի՛ր», սկսեց հառաչել և գլուխը բարձրացնել դեպի երկինք ու վախ զգաց, որ չի դիմանա, լաց կլինի կամ դուրս կփախչի, այնպես տանջվում էր նա։ Իսկ անցել էր միայն մի ժամ։

Սակայն այդ ժամից հետո անցավ էլի մի ժամ, երկու, երեք ժամ, անցան բոլոր հինգ ժամերը, որ դրել էր իր համար որպես համբերության ամենահեռավոր ժամկետ, և դրությունն էլի նույնն էր ու նա համբերում էր, որովհետև անելու ուրիշ բան չկար, քան համբերել, ամեն բոպե մտածելով, որ հասել է համբերության վերջին սահմանագծին, և որ սիրուր հիմա, ուր որ է, կպայթի կարեկցությունից։

Բայց անցնում էին էլի բոպեներ, ժամեր, կրկին ժամեր, և ավելի ևս ուճում ու լարվում էին նրա տանջանքի և սարսափի զգացումները։

Կյանքի այն բոլոր սովորական պայմանները, առանց որոնց չի կարելի ոչինչ պատկերացնել, այլևս գոյություն չունեին Լևինի համար։ Լևինը կորցրել էր ժամանակի զգացողությունը։ Երբեմն բոպեները, այն բոպեները, երբ Կիտին կանչում էր նրան իր մոտ, և Լևինը բռնում էր նրա քրտնած, մերթ արտասովոր ուժով սեղմող, մերթ իրեն վանող ձեռքը, թվում էին նրան ժամեր, երբեմն ժամերը թվում էին բոպեներ։ Լևինը զարմացավ, երբ Լիզավետա Պետրովնան խնդրեց նրան՝ մոմը վառել շիրմայի ետևում, և նա իմացավ, որ երեկոյան ժամը հինգն է արդեն։ Եթե նրան ասեին, որ այժմ առավոտյան ժամը տասն է միայն, նա նույնպես քիչ կզարմանար։ Ինչպես նա համարյա չէր իմանում, թե որտե՞ղ է գտնվում ինքն այդ ժամանակ, նույնպես չէր իմանում, թե երբ ի՞նչ է եղել։ Լևինը տեսնում էր Կիտիի բորբոքված, մերթ տարակուսող ու տառապող, մերթ ժպտացող ու նրան հանգստացնող դեմքը։ Լևինը տեսնում էր և՛ իշխանուհուն, կարմրած, լարված, կախ ընկած սպիտակ մազերի խոպոպիկներով, աչքերին արցունք, որը նա կուլ էր տալիս եռանդով, կծելով շրթունքները. տեսնում էր և՛ Դոլլիին, և՛ բժշկին, որը ծխում էր հաստ պապիրոսներ, և՛ Լիզավետա Պետրովնային՝ հաստատակամ, վճռական ու հանգստացնող դեմքով, և՛ ծերունի իշխանին, որը քայլում էր գահլիճում՝ խոժոռ դեմքով։ Բայց նա չգիտեր, ինչպե՞ս էին նրանք գալիս-գնում, որտե՞ղ էին նրանք։ Իշխանուհին մերթ բժշկի հետ էր՝ ննջարանում, մերթ առանձնասենյակում, որտեղ երևան եկավ հացի պատրաստի սեղան. մերթ լինում էր ոչ թե իշխանուհին, այլ Դոլլին։ Հետո Լևինը հիշում էր, որ

իրեն ուղարկեցին մի տեղ։ Մի անգամ նրան ուղարկեցին, որ բերի սեղանն ու բազմոցը։ Նա ջանասիրությամբ կատարեց այդ, կարծելով, թե դա հարկավոր է Կիտիի համար, և հետո միայն իմացավ, որ իր համար գիշերօթոց էր պատրաստում։ Հետո նրան ուղարկեցին բժշկի մոտ՝ առանձնասենյակ, հարցնելու ինչ-որ բան։ Բժիշկը պատասխանեց, ապա խոսեց դուռմայում եղած անկարգությունների մասին։ Հետո նրան ուղարկեցին ննջարան՝ իշխանուհու մոտ՝ բերելու արծաթապատ, ոսկեզօծ շրջադրվագով սրբապատկերը, և նա իշխանուհու պառավ աղախնի հետ բարձրացավ պահարանի գլուխը՝ իջեցնելու սրբապատկերը և ջարդեց կանթեղը, ու իշխանուհու աղախինը հանգստացնում էր նրան կնոջ և կանթեղի առթիվ, ու նա բերեց նրբապատկերը և դրեց Կիտիի գլխավերևում, խնամքով խրելով այն բարձերի ետևը։ Բայց նա չգիտեր, թե որտեղ, ե՞րբ և ինչի համար էր այդ բոլորը։ Նա չէր հասկանում նույն-ես, թե ինչո՞ւ իշխանուհին բռնում էր իր ձեռքը և խղճահար նայելով իրեն, խնդրում էր հանգստանալ, իսկ Դոլլին համոզում էր մի բան ուտել ու դուրս էր տանում սենյակից. նույնիսկ բժիշկը լուրջ ու կարեկցությամբ էր նայում նրան ու առաջարկում էր կաթիլներ։

Լևինը գիտեր ու զգում էր միայն, թե այն, ինչ կատարվում էր, նման էր այն բանին, որ տեղի ունեցավ մի տարի առաջ նահանգական քաղաքի հյուրանոցում՝ Նիկոլայ եղբոր մահվան անկողնում։ Բայց այն վիշտ էր, իսկ սա՝ ուրախություն։ Սակայն և՛ այն վիշտը, և՛ այս ուրախությունը հավասարապես դուրս էին կյանքի բոլոր սովորական պայմաններից. նրանք սովորական այս կյանքի մեջ կարծես այն անցքերն էին, որոնց միջից երևում էր ինչ-որ գերագույն բան։ Եվ հավասարապես ծանր, տանջալից ձևով էր մոտենում այն, ինչ պետք է կատարվեր. և հավասարապես անհասանելիորեն, մտաբերելով այդ գերագույն բանը, բարձրանում էր հոգին այնպիսի բարձրության վրա, որը նա (հոգին) առաջ երբեք չէր էլ հասկացել, և ուր բանականությունն արդեն չէր հասնում նրան։

«Տեր աստված, ների՛ր և օգնի՛ր», կրկնում էր նա անդադար, չնայած այդքան տեսական ու կատարյալ թվացող օտարությանը, զգալով, որ ինքը դիմում է աստծուն ճիշտ այնպես

վստահ ու պարզորեն, ինչպես մանկության և առաջին երիտասարդության տարիներին։

Այդ ամբողջ ժամանակ նա ուներ երկու, իրարից բաժան տրամադրություն։ Կիտիի ներկայությունից դուրս, բժշկի հետ, որ մեկը մյուսի ետևից ծխում էր հաստ գլանակներ ու հանգցնում էր դրանք լեցուն մոխրամանի եզրին, Դոլլիի և իշխանի հետ, որտեղ խոսում էին ճաշի՝, քաղաքականության, Մարիա Պետրովնայի հիվանդության մասին, և որտեղ Լևինը հանկարծ մի րոպե բոլորովին մոռանում էր այն, ինչ տեղի ուներ, ու կգում էր իրեն ասես արթնացած,— և ուրիշ տրամադրություն՝ Կիտիի ներկայությամբ, նրա սնարի մոտ, որտեղ սիրտն ուզում էր պայթել կարեկցությունից ու չէր պայթում, և նա անդադար աղոթում էր աստծուն։ Ու ամեն անգամ, երբ մոռացության րոպեից նրան հանում էր ննջարանից լսվող ճիչը, նա ընկնում էր հենց այն տարօրինակ մոլորության մեջ, որն առաջին րոպեին համակեց նրան. ամեն անգամ, լսելով ճիչը, նա վեր էր թռչում, վազում էր արդարանալու, բայց ճանապարհին հիշում էր, որ ինքը մեղավոր չէ. և ուզում էր պաշտպանել, օգնել։ Սակայն նայելով Կիտիին, նա նորից տեսնում էր, որ օգնել չի կարելի, սարսափում էր և ասում. «Տեր աստված, ների՛ր և օգնի՛ր»։ Ու որքան շատ ժամանակ էր անցնում, այնքան ավելի ուժեղ էին դառնում այդ երկու տրամադրությունները. այնքան ավելի հանգստանում էր նա Կիտիի ներկայությունից դուրս, բոլորովին մոռանալով նրան, և այնքան ավելի տանջալից էին դառնում թե՛ Կիտիի տառապանքներն ինքնին, թե՛ անճարակության զգացումը նրանց առաջ։ Նա վեր էր թռչում, ցանկանում էր փախչել որևէ տեղ, և վազում էր դեպի Կիտին։

Երբեմն, երբ նորից ու նորից Կիտին կանչում էր նրան, նա մեղադրում էր կնոջը։ Բայց տեսնելով նրա հնաղանդ, ժպտուն դեմքը և լսելով «ես քեզ տանջեցի» խոսքերը, Լևինը մեղադրում էր աստծուն, սակայն, հիշելով աստծո մասին, անմիջապես խնդրում էր ներել ու ողորմալ։

XV

Լևինը չգիտեր, ո՞ւշ էր, թե վաղ։ Բոլոր մոմերն արդեն վառվել, վերջացել էին։ Դոլլին հենց նոր եղել էր առանձնասենյակում և բժշկին առաջարկել էր պառկել։ Լևինը նստած լսում էր բժշկի պատմածները խարդախ հիպնոսացնողի մասին ու նայում էր նրա ծխախոտի մոխրին։ Հանգստի ժամամիջոցն էր, և նա ընկավ ինքնամոռացության մեջ։ Նա բոլորովին մոռացել էր այն, ի՛նչ կատարվում էր այժմ։ Նա լսում էր բժշկի պատմությունը և հասկանում լսածը։ Հանկարծ լսվեց աներևակայելի մի ճիչ։ Ճիչն այնքան սարսափելի էր, որ Լևինը նույնիսկ վեր չթռավ տեղից, այլ շունչը պահած, վախեցած-հարցական հայացքով նայեց բժշկին։ Բժիշկը գլուխը թեքեց մի կողքի, ականջ դնելով, և հավանությամբ ժպտաց։ Բոլորն այնքան արտասովոր էր, որ այլևս ոչինչ չէր զարմացնում Լևինին։ «Երևի այդպես է պետք», մտածեց նա ու շարունակեց նստած մնալ։ Ո՞ւմ ճիչն էր այդ։ Նա թռավ տեղից, ոտների ծայրի վրա վազեց ննջարան, մոտեցավ Լիզավետա Պետրովնային, իշխանուհուն և կանգնեց իր տեղը, Կիտիի սնարի մոտ։ Ճիչը հանդարտվեց, բայց ինչ-որ բան փոխվեց այժմ։ Թե ինչ՝ նա չտեսավ ու չհասկացավ և չէր ուզում տեսնել ու հասկանալ։ Բայց այդ բանը նա տեսավ Լիզավետա Պետրովնայի դեմքից. Լիզավետա Պետրովնայի դեմքը խիստ էր ու գունատ և առաջվա պես վճռական, թեպետ նրա ծնոտները մի փոքր ցնցվում էին ու աչքերը շեշտակի հառած էին Կիտիին։ Կիտիի բորբոքված, տանջված դեմքը, քրտնած երեսին կպած մի փունջ մազերով, դարձած էր դեպի Լևինը և փնտրում էր նրա հայացքը։ Վեր բարձրացրած ձեռքերը փնտրում էին նրա ձեռքերը։ Քրտնած ձեռքերով բռնելով նրա սառը ձեռքերը, Կիտին սկսեց դրանք սեղմել իր դեմքին։

— Մի՛ հեռանա, մի՛ հեռանա։ Ես չեմ վախենում, չեմ վախենում,— արագ ասում էր Կիտին։ — Մայրի՛կ, վերցրեք ականջօղերս։ Նրանք խանգարում են ինձ։ Դու չե՞ս վախենում։ Շուտո՛վ, շուտո՛վ, Լիզավետա Պետրովնա...

Նա խոսում էր արագ, արագ և ուզում էր ժպտալ։ Բայց հանկարծ նրա դեմքը այլայլվեց, նա ետ հրեց ամուսնուն իրենից։

— Ո՛չ, սոսկալի բան է։ Ես կմեռնեմ, կմեռնեմ։ Մո՛տ եկ, մո՛տ եկ,— բղավեց նա, և նորից լսվեց նույն ճիչը, որ ոչ մի բանի հնարավոր չէր նմանեցնել։

Լևինը բռնեց գլուխը ու դուրս փախավ սենյակից։

— Ոչի՜նչ, ոչի՜նչ, ամեն ինչ լավ է,— ասաց Լևինի ետևից Դոլլին։

Բայց ինչ էլ ասեին նրանք, Լևինը գիտեր, որ այժմ ամեն բան կորած է։ Գլուխը հենած դռան շրջանակին, նա կանգնել էր հարևան սենյակում և լսում էր մեկի վնգստոցը, ոռնոցը, որ երբեք չէր լսել և գիտեր, որ բղավում է նա, որ առաջ Կիտի էր։ Վաղուց արդեն էլ երեխա չէր ցանկանում նա։ Բայց այժմ ատում էր այդ երեխային։ Նա այժմ նույնիսկ չէր ցանկանում Կիտիի կյանքը, նա ցանկանում էր միայն, որ դադարեին այդ սոսկալի տանջանքները։

— Բյիշկ, ի՞նչ բան է այդ։ Ի՞նչ բան է այդ։ Աստվա՜ծ իմ,— ասաց Լևինը, բռնելով ներս եկած բժշկի ձեռքը։

— Վերջանում է,— ասաց բժիշկը։ — Եվ բժշկի դեմքն այնպես լուրջ էր, երբ նա ասում էր այդ, որ Լևինը վերջանում է հասկացավ մեռնում է իմաստով։

Գլուխը կորցրած, Լևինը վազեց ննջարան։ Առաջին բանը, որ նա տեսավ, Լիզավետա Պետրովնայի դեմքն էր։ Այն ավելի ևս խոժոռ էր ու խիստ։ Կիտիի երեսին գույն չկար։ Այնտեղ, որտեղ առաջ նրա դեմքն էր, կար ինչ-որ սարսափելի բան՝ թե ըստ լարվածության, թե ըստ այն հնչյունի, որ դուրս էր գալիս այնտեղից։ Նա գլուխը սեղմեց մահճակալի փայտին, զգալով, որ սիրտը կտոր-կտոր է լինում։ Չէր լսում սոսկալի ճիչը, որը դարձավ ավելի ևս սոսկալի և կարծես հասնելով սոսկանքի վերջին սահմանագծին, հանկարծ հանդարտեց։ Լևինը չէր հավատում իր լսողությանը, բայց չէր կարելի կասկածել. ճիչը հանդարտեց; և լսվեց անդորր իրարանցում, շրշյուն ու շտապ շնչառություն, և Կիտիի ընդհատվող, ժիր ու քնքուշ, երջանիկ ձայնը կամաց արտասանեց. «վերջացավ»։

Լևինը բարձրացրեց գլուխը։ Թևերն անզոր իջեցնելով, զցելով վերմակի վրա, անսովոր գեղեցիկ ու խաղաղ, Կիտին լուռ նայում էր ամուսնուն և ուզում էր ու չէր կարողանում ժպտալ։

Ու հանկարծ այն խորհրդավոր ու սարսափելի, ո՜չ այս աշխարհից, որտեղ Լևինն ապրում էր այդ քսաներկու ժամվա ընթացքում, նա վայրկենապես իրեն բերված զգաց առաջվա սովորական աշխարհը. բայց սա այժմ փայլում էր երջանկության այնպիսի նոր լույսով, որ նա չկարողացավ դիմանալ դրան։ Զզված բոլոր լարերը կտրվեցին։ Ինդուիցյան հեկեկանքն ու արցունքները, որոնք նա ո՜չ մի կերպ չէր նախատեսել, բարձրացան նրա մեջ այնպես ուժգնորեն, ցնցելով նրա ամբողջ մարմինը, որ երկար ժամանակ խանգարում էին նրան, և նա չէր կարողանում խոսել։

Մնկի եկած անկողնու առաջ, նա կնոջ ձեռքը բռնել էր շրթունքների մոտ ու համբուրում էր, և այդ ձեռքը մատների թույլ շարժումով պատասխանում էր նրա համբույրներին։ Իսկ մինչդեռ այնտեղ, մահճակալի ոտների կողմը, Լիզավետա Պետրովնայի ճարպիկ ձեռքերում, ինչպես կրակը կանթեղի վրա, օրորվում էր կյանքը մարդկային արարածի, որը երբեք չկար առաջ և որը նույնպես, նույն իրավունքով, իր համար նույնպիսի կարևորությամբ պիտի ապրի ու պտղաբերի իր նման արարածներ։

— Ո՞ղջ է, ո՞ղջ։ Այն էլ տղա՜։ Մի անհանգստանաք,— լսում էր Լևինը Լիզավետա Պետրովնայի ձայնը, որը դողդոջուն ձեռքերով շրմփացնում էր երեխայի մեջքին։

— Մայրի՜կ, ճի՞շտ է,— հարցրեց Կիտիի ձայնը։

Իշխանուհու հեկեկանքները միայն պատասխանեցին նրան։

Ու լռության միջից, որպես աներկբա պատասխան մոր հարցի, լսվեց մի բոլորովին ուրիշ ձայն, քան բոլոր այն ձայները, որոնք զուսպ խոսում էին սենյակում։ Դա ոչինչ հասկանալ չուզեցող, համարձակ, հանդուգն ճիչ էր, հասկանալի չէ, թե որտեղի՜ց՝ հանդես եկած մարդկային նոր արարածի։

Եթե առաջ Լևինին ասեին, որ Կիտին մեռավ և որ ինքն էլ մեռավ նրա հետ, և որ իրենց երեխաները հրեշտակներ են, և որ աստված այստեղ է, իրենց առաջ, նա ո՜չ մի բանի վրա չէր զարմանա, բայց հիմա, վերադառնալով իրական աշխարհ, նա մտքի մեծ ջանքեր էր թափում հասկանալու համար, որ Կիտին ողջ է, առողջ է, և որ այդպես հուսահատորեն ճչացող էակն իր որդին է։ Կիտին ողջ էր, տառապանքները վերջացել էին։ Եվ Լևինն անասելիորեն երջանիկ էր։ Այդ հասկանում էր նա և լիովին երջանիկ էր։ Իսկ երեխա՞ն։ Որտեղի՞ց է, ինչի՞ համար, ո՞վ է նա.. Լևինը ո՜չ մի կերպ

չէր կարողանում վարժվել այդ մտքին։ Դա նրան թվում էր ինչ-որ ավելորդ բան, հավելված, որին նա չէր կարողանում վարժվել երկար ժամանակ։

XVI

Տասներորդ ժամին ծերունի իշխանը, Սերգեյ Իվանովիչը և Ստեպան Արկադևիչը նստել էին Լևինի մոտ ու ծննդկանի մասին խոսելուց հետո՝ խոսք արին նաև կողմնակի բաների մասին։ Լևինը լսում էր նրանց և այս խոսակցությունների միջոցին ակամա մտաբերելով անցածը, ինչ տեղի էր ունեցել մինչև այսօր առավոտ, հիշում էր նաև իրեն, ինչպես էր ինքը երեկ դրանից առաջ։ Կարծես հարյուր տարի էր անցել այդ օրից։ Նա իրեն զգում էր ինչ-որ անհասանելի բարձրության վրա, որտեղից խնամքով ցած էր իջնում, որպեսզի չվիրավորի իր հետ խոսողներին։ Նա խոսում էր և շարունակ մտածում կնոջ մասին, նրա այժմյան կացության մանրամասների ու որդու մասին և աշխատում էր իրեն վարժեցնել նրա գոյության մտքին։ Կանացի ամբողջ աշխարհը, որը նրա համար ստացել էր նոր՝ մինչ այդ նրան անհայտ նշանակություն, այն օրից հետո, երբ նա ամուսնացավ, այժմ նրա հասկացողությունների մեջ բարձրացավ այնքան վեր, որ նա չէր կարող երևակայությամբ ընդգրկել այն։ Նա լսում էր ակումբում երեկվա ճաշի վերաբերյալ խոսակցությունը և մտածում. «Ի՞նչ է կատարվում այժմ Կիտիի հետ, արդյոք քնե՞ց։ Ինչպե՞ս է նա։ Ի՞նչ է մտածում։ Արդյոք բղավո՞ւմ է իր Դմիտրի որդին»։ Եվ խոսակցության կեսին, խոսքը կիսատ նա վեր թռավ ու դուրս գնաց սենյակից։

— Մարդ ուղարկիր ասելու ինձ՝ կարելի՞ է գնալ Կիտիի մոտ,— ասաց իշխանը։

— Լա՜վ, իսկո՛ւյն,— պատասխանեց Լևինը և առանց կանգ առնելու գնաց կնոջ մոտ։

Կիտին քնած չէր ու կամաց խոսում էր մոր հետ, ծրագրեր կազմելով ապագա կնունքի մասին։

Հարդարված, սանրված, կապույտով զուգած շքեղ չեպչիկով, ձեռքերը դրած վերմակին, Կիտին պառկել էր մեջքի վրա և դիմավորելով ամուսնուն հայացքով, հայացքով էլ քաշում,

ձգում էր նրան դեպի ինքը։ Նրա հայացքը, առանց այդ էլ լուսաշող, դառնում էր է՛լ ավելի լուսաշող, որքան ավելի էր մոտենում նրան Լևինը։ Նրա դեմքին կար երկրայինից դեպի դերերկրայինը անցնող նույն այն փոփոխությունը, որ լինում է ննջեցյալների դեմքին, բայց այնտեղ հրաժեշտ է, այստեղ՝ դիմավորում։ Նորից հուզումը հորդեց դեպի Լևինի սիրտը, նման այն հուզումին, որ զգաց նա ծննդաբերության բոպեին։ Կիտին վերցրեց նրա ձեռքը և հարցրեց, արդյոք քնե՞լ է։ Նա չէր կարողանում պատասխանել և շուռ էր գալիս, համոզվելով ինքը իր թուլությանը։

— Իսկ ես նիրհեցի, Կոստյա,— ասաց նա ամուսնուն։ — Եվ հիմա այնպես լավ եմ զգում ինձ։

Նա նայում էր Լևինին, բայց հանկարծ փոխվեց դեմքի արտահայտությունը։

— Տվե՛ք նրան ինձ,— ասաց Կիտին, լսելով երեխայի ծղրտոցը։ — Տվե՛ք, Լիզավետա Պետրովնա, Կոնստանտին Դմիտրիչն էլ կնայի։

— Ա՜յ, ահա, թող հայրիկն էլ նայի,— ասաց Լիզավետա Պետրովնան, բարձրացնելով ու մոտեցնելով ինչ-որ կարմիր, տարօրինակ և տարուբերվող բան։ — Սպասեք, մենք նախ պատրաստվենք,— և Լիզավետա Պետրովնան դրեց մահճակալի վրա այդ տարուբերվող ու կարմիր բանը, սկսեց բանալ ու փաթաթել երեխային, մի մատով բարձրացնելով և շուռ տալով նրան ու վրան շաղ տալով ինչ-որ բան։

Լևինը նայելով այդ խիստ փոքրիկ, ողորմելի էակին, զուր ջանքեր էր թափում՝ գտնելու իր հոգում նրա հանդեպ հայրական զգացումի որևէ հատկանիշ։ Նա միայն զզվանք էր զգում դեպի այդ էակը։ Բայց երբ նրան մերկացրին, ու երևացին բարակ, շատ բարակ թաթիկները, զաֆրանի տոտիկները, նույնպես մատիկներով, ու մինչև անգամ մեծ մատով, որ տարբերվում էր մյուսներից, և երբ նա տեսավ, թե ինչպե՞ս Լիզավետա Պետրովնան սեղմում էր այդ փափուկ ղսպանակների նման չոված թաթիկները, դնելով դրանք քաթանե շորերի մեջ, նրան համակեց այնպիսի խղճահարություն այդ էակի հանդեպ և այնպիսի երկյուղ, թե մանկաբարձուհին կվնասի երեխային, որ Լևինը բռնեց նրա ձեռքը։

Լիզավետա Պետրովնան ծիծաղեց։

— Մի՛ վախենաք, մի՛ վախենաք։

Երբ երեխային փաթաթեցին ու դարձրին կոշտ տիկնիկ, Լիզավետա Պետրովնան ճոճեց նրան, կարծես պարծենալով իր աշխատանքով և մի կողմ քաշվեց, որպեսզի Լևինը կարողանար տեսնել որդուն իր ամբողջ դեղեցկությամբ։

Կիտին, աչք չհեռացնելով, շեղակի հայացքով նայում էր նույն տեղը։ — Տվե՛ք, տվե՛ք ինձ,— ասաց նա և նույնիսկ բարձրացավ։

— Ի՞նչ եք անում, Կատերինա Ալեքսանդրովնա, չի կարելի այդպիսի շարժումներ անել։ Սպասեք, ես կտամ։ Հիմի մենք մեզ ցույց կտանք հայրիկին, թե ի՞նչ կտրիճն ենք։

Եվ Լիզավետա Պետրովնան բարձրացրեց դեպի Լևինը մի ձեռքով (մյուսը մատներով միայն նեցուկ էր եղել ճոճվող ծոծրակին) այդ տարօրինակ, ճոճվող ու կարմիր էակը, որ գլուխը թաքցրել էր բարուրի ծայրի ետևում։ Բայց կար նաև քիթ, կային շեղակի նայող աչքեր և ծծծպացնող շրթունքներ։

— Հիանալի երեխա է,— ասաց Լիզավետա Պետրովնան։

Լևինը տխուր հառաչեց։ Այդ հիանալի երեխան ներշնչում էր նրան միայն զզվանքի և խղճահարության զգացում։ Այդ բոլորովին այն զգացումը չէր, որին սպասում էր նա։

Նա շուտ եկավ, մինչև Լիզավետա Պետրովնան երեխային կհարմարեցներ մոր անսովոր կրծքին։

Հանկարծ մի ծիծաղ ստիպեց նրան՝ բարձրացնել գլուխը։ Ծիծաղում էր Կիտին։ Երեխան սկսեց ծծել։

— Դե՛, հերիք է, հերի՛ք,— ասում էր Լիզավետա Պետրովնան, բայց Կիտին բաց չէր թողնում երեխային։ Նա քնեց մոր ձեռքերին։

— Նայիր հիմա,— ասաց Կիտին, երեխային դարձնելով դեպի Լևինն այնպես, որ նա կարողանար տեսնել նրան։ Ննջոտ պառավական փոքրիկ դեմքը հանկարծ ավելի ևս կնճռոտվեց, ու երեխան փռշտաց։

Ժպտալով ու հաղիվ զսպելով հիացմունքի արցունքները, Լևինը համբուրեց կնոջը և դուրս գնաց մութ սենյակից։

Այն, ինչ զգում էր նա դեպի այդ փոքրիկ էակը, բոլորովին այն չէր, ինչ սպասում էր ինքը։ Այդ զգացումի մեջ չկար ոչինչ ուրախ ու խնդագին. ընդհակառակը, այդ մի նոր տանջալից վախ էր։ Այդ խոցելիության նոր կարգի գիտակցություն էր։ Եվ այդ գիտակցությունն այնպես տանջալից էր սկզբում, այնպես զորեղ էր վախի զգացումը՝ չլինի թե դրանից տուժի այդ անօգնական էակը, որ վախի պատճառով նկատելի չէր անմիտ ուրախության, նույնիսկ պարծանքի այն տարօրինակ զգացումը, որն ունեցավ նա, երբ երեխան փռշտաց։

XVII

Ստեպան Արկադևիչի գործերը վատ էին։

Անտառի երկու երրորդի համար ստացված դրամն արդեն ծախսվել էր, և վերջին երրորդ մասի համար հաստատելիք համարյա ամբողջ գումարը նա նախօրոք վերցրել էր վաճառականից, հանելով տասը տոկոսը։ Վաճառականն այլևս դրամ չէր տալիս, մանավանդ, որ այս ձմեռ Դարյա Ալեքսանդրովնան, առաջին անգամ ուղղակի հայտարարելով իր իրավունքները սեփական կարողության վրա, հրաժարվեց ստորագրել պայմանագիրը՝ անտառի վերջին երրորդ մասի հաշվին դրամ ստանալու համար։ Ամբողջ ռոճիկն ապառվում էր տան ծախսերը հոգալու և վերջ չունեցող մաներ պարտքերը վճարելու վրա։ Դրամ բոլորովին չկար։

Ստեպան Արկադևիչի կարծիքով դա անախորժ, անհարմար բան էր և չպետք է շարունակվեր այդպես։ Դրա պատճառը նրա կարծիքով այն էր, որ ինքն ստանում էր չափազանց քիչ ռոճիկ։ Այն պաշտոնը, որ ուներ նա, հայտնապես շատ լավ պաշտոն էր հինգ տարի առաջ, բայց ոչ այժմ։ Պետրովը՝ բանկի դիրեկտորը, ստանում էր 12 000, Սվենտիցկին՝ ընկերության անդամը, ստանում էր 17 000։ Մյուսներ, հիմնելով բանկ, ստացավ 50 000։ «Հավանորեն ես քնած եմ եղել, և ինձ մոռացել են», մտածում էր ինքն իրեն Ստեպան Արկադևիչը։ Եվ նա սկսեց ականջ դնել, դիտել, աչք ման ածել ու ձմեռվա վերջին գտավ մի շատ լավ պաշտոն, և գրոհեց նրա վրա, սկզբում Մոսկվայից՝ հորաքույր ու մորաքույրների, հորեղբայր ու մորեղբայրների, բարեկամների միջոցով, իսկ հետո, երբ գործը հասունացավ, գաղնանն ինքը գնաց Պետերբուրգ։ Դա մեկն էր այն պաշտոններից, որոնք հիմա, տարբեր չափերի՝ տարեկան 1000-ից մինչև 50 000 ռոճիկով, ավելի շատ

էին, քան առաջ կային կաշառք վերցնելու տաքուկ պաշտոններ. այդ հարավային երկաթուղիների և բանկային հիմնարկների փոխադարձ-վարկային բալանսի միացյալ գործակալության հանձնաժողովի անդամի պաշտոնն էր։ Այդ պաշտոնը, ինչպես սահմանակ նման պաշտոնները, պահանջում էր այնպիսի հսկայական դիտություն ու գործունեություն, որ դժվար էր միավորել մի մարդու մեջ։ Իսկ, որովհետև այս բոլոր հատկություններն իր մեջ միավորող մարդ չկար, ոստի լավ կլիներ, որ այդ տեղն ստանար ազնիվ մի մարդ, քան անազնիվ։ Իսկ Ստեպան Արկադևիչը ո՛չ միայն ազնիվ մարդ էր (առանց շեշտի), այլև նա ազնիվ մարդ էր (շեշտով), այն առանձնահատուկ նշանակությամբ, որն ունի այդ խոսքը Մոսկվայում, երբ ասում են. ազնի՛վ գործիչ, ազնի՛վ գրականագետ, ազնի՛վ ամսագիր, ազնի՛վ հիմնարկ, ազնի՛վ ուղղություն և, որը նշանակում էր ոչ միայն այն, թե այսինչ մարդը կամ հիմնարկն անազնիվ չէ, այլև ընդունակ է, առիթ եղած դեպքում, խայթելու կառավարությանը։ Ստեպան Արկադևիչը Մոսկվայում շփվում էր նաև այն շրջանների հետ, որտեղ մտել էր այդ խոսքը, համարվում էր այնտեղ ազնիվ մարդ, այդ իսկ պատճառով ավելի, քան ուրիշները, իրավունք ուներ գրավելու այդ տեղը։

Այդ պաշտոնը տալիս էր տարեկան յոթից մինչև տասը հազար, և Օբլոնսկին կարող էր գրավել այն առանց թողնելու իր պետական պաշտոնը։ Այդ տեղը կախում ուներ երկու մինիստրությունից, մի տիկնոջից ու երկու հրեայից, և այս բոլոր մարդկանց Ստեպան Արկադևիչը պետք է տեսներ Պետերբուրգում, թեև նրանք ամենքն արդեն նախապատրաստված էին։ Բացի դրանից, Ստեպան Արկադևիչը խոստացել էր իր քույր Աննային՝ վճռական պատասխան ստանալ Կարենինից ապահարդանի մասին։ Եվ խնդրելով ու ստանալով Դոլլիից հիսուն ռուբլի, նա գնաց Պետերբուրգ։

Նստած Կարենինի առանձնասենյակում և լսելով նրա նախագիծը ռուսական ֆինանսների վատ կացության պատճառների մասին, Ստեպան Արկադևիչն սպասում էր միայն այն բոպեին, երբ նա կվերջացնի, որպեսզի խոսեր իր գործի և Աննայի մասին։

— Այո՛, այդ շատ ճիշտ է,— ասաց նա, երբ Ալեքսեյ

Ալեքսանդրովիչը հանելով pince-nez, առանց որի նա այժմ չէր կարողանում կարդալ, հարցական նայեց իր նախկին աներձագին,— այդ ճիշտ է իր մանրամասնությունների մեջ, բայց և այնպես՝ մեր ժամանակի սկզբունքը ազատությունն է։

— Այո՛, բայց ես առաջադրում եմ ուրիշ սկզբունք, որն ընդգրկում է ազատության սկզբունքը,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, շեշտելով «ընդգրկում է» խոսքը, և նորից դնելով pince-nez, որպեսզի ունկնդրի համար կրկին կարդա այն տեղը, որտեղ ասված էր հենց այդ բանը։

Եվ վերցնելով գեղեցիկ գրված, լայն լուսանցքներով ձեռագիրը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նորից կարդաց համոզիչ տեղը։

— Հովանավորության սիստեմը ես չեմ ուզում ո՛չ թե մասնավոր մարդկանց շահի համար, այլ ընդհանուր բարիքի համար, և՛ ստորին, և՛ բարձր դասակարգերի համար միատեսակ,— ասում էր նա, pince-nez-ի վրայից նայելով Օբլոնսկուն։— Բայց նրանք չեն կարողանում հասկանալ այդ, նրանք զբաղված են անձնական շահերով ու տարվում են ֆրազներով։

Ստեպան Արկադևիչը գիտեր, որ երբ Կարենինն սկսում էր խոսել այն մասին, թե ի՛նչ են անում և ի՛նչ են կարծում նրանք, այսինքն՝ այն մարդիկ, որոնք չէին ուզում ընդունել նրա նախագծերը և որոնք ամբողջ շարքի պատճառն էին Ռուսաստանում, ուրեմն արդեն մոտ էր զրույցի վերջը. այդ պատճառով, նա այժմ սիրով հրաժարվեց ազատության սկզբունքից ու լիովին համաձայնեց։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լռեց, մտազբաղ թերթելով իր ձեռագիրը։

— Ա՛խ, ի դեպ,— ասաց Ստեպան Արկադևիչը,— ես ուզում էի խնդրել քեզ, առիթի դեպքում, երբ տեսնվես Պոմորսկու հետ, մի երկու խոսք ասես այն մասին, որ ես շատ կկամենայի ստանալ հարավային երկաթուղիների փոխադարձ վարկի բալանսի միացյալ գործակալության հանձնաժողովի անդամի պաշտոնը։ Ստեպան Արկադևիչի համար այդ պաշտոնի անունը, այնքան մոտիկ իր սրտին, արդեն դարձել էր սովոր բան, և նա առանց սխալվելու արագ արտասանեց այն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հարցրեց, թե ինչո՞ւմ էր կայանում այդ նոր հանձնաժողովի գործունեությունը, և մտա-

սուզվեց։ Նա խորհում էր, արդյոք այդ նոր հանձնաժողովի գործունեության մեջ հակառակ բան չկա՞ր իր նախագծերին։ Բայց, որովհետև այդ նոր հիմնարկի գործունեությունը շատ բարդ էր և նրա նախագծերն ընդգրկում էին շատ մեծ շրջան, նա անկարող էր մեկեն հասկանալ այդ, ուստի հանելով pince-nez, ասաց.

— Անկասկած, ես կարող եմ ասել նրան, սակայն իսկապես դու ինչու՞ ես ուզում գրավել այդ տեղը։

— Ռոճիկը լավ է, մինչև ինը հազար, իսկ իմ միջոցները...

— Ինը հազա՞ր,— կրկնեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և խոժոռվեց։

Այդ ռոճիկի բարձր գումարը հիշեցնում էր նրան, թե այդ տեսակետից Ստեպան Արկադևիչի առաջիկա գործունեությունը դեմ էր իր նախագծերի գլխավոր իմաստին, որոնք միշտ հակված էին դեպի խնայողություն։

— Ես կարծում եմ, և գրել եմ այդ մասին զեկուցում, որ մեր օրերում այդ հսկայական ռոճիկները հատկանիշ են մեր կառավարչության կեղծ տնտեսական assiette[1]-ի։

— Հապա ի՞նչ ես ուզում դու,— ասաց Ստեպան Արկադևիչը։— Ենթադրենք, թե բանկի դիրեկտորն ստանում է տասը հազար,— չէ՞ որ նա արժե դրան։ Կամ ինժեներն ստանում է քսան հազար։ Կենդանի գործ է, բա ո՞նց ես ուզում։

— Ես այն կարծիքին եմ, որ ռոճիկը վճար է ապրանքի համար և պետք է ենթարկվի պահանջի ու առաջարկի օրենքին։ Իսկ եթե ռոճիկ նշանակելը շեղվում է այդ օրենքից, ինչպես օրինակ, երբ ես տեսնում եմ, որ ինստիտուտից դուրս են գալիս երկու ինժեներ, երկուսն էլ միատեսակ բանիմաց ու ընդունակ են, և մեկն ստանում է քառասուն հազար, իսկ մյուսը բավականանում է երկու հազարով, կամ որ ընկերությունները բանկերի դիրեկտորներ են նշանակում հսկայական ռոճիկով՝ իրավագետներին, հուսարներին, որոնք չունեն առանձին մասնագիտական ո՛չ մի գիտելիք, ես եզրակացնում եմ, որ ռոճիկը նշանակվում է ո՛չ պահանջի և առաջարկի օրենքով, այլ ուղղակի կողմնապահությամբ։ Այստեղ ես կա չարաբերություն, որ կարևոր է ինքնաստինքյան և վնասաբար է անդրադառնում պետական ծառայության վրա։ Ես կարծում եմ...

Ստեպան Արկադևիչն շտապեց ընդհատել փեսային։

— Այո՛, բայց համաձայնիր, որ բացվում է նոր, անկասկած օգտակար հիմնարկ։ Ոնց ուզում ես, կենդանի գործ է։ Առանձնապես թանկ են գնահատում այն, որպեսզի գործը ազնվաբա՛ր տարվի,— ասաց Ստեպան Արկադևիչը շեշտով։

Բայց ազնիվի մոսկովյան նշանակությունն անհասկանալի էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

— Ազնվությունը բացասական հատկություն է միայն,— ասաց նա։

— Այնուամենայնիվ, դու շատ կպարտավորեցնես ինձ,— ասաց Ստեպան Արկադևիչը,— եթե մի երկու խոսք ասես Պոմորսկուն։ Հենց այնպես, խոսակցության մեջ...

— Բայց չէ՞ որ դա ավելի կախված է Բոլգարինովից, կարծեմ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Բոլգարինովն իր կողմից միանգամայն համաձայն է,— ասաց Ստեպան Արկադևիչը կարմրելով։

Ստեպան Արկադևիչը կարմրեց Բոլգարինովի անունը տալիս, որովհետև նա հենց այդ օրը առավոտյան եղել էր հրեա Բոլգարինովի մոտ, և այդ այցելությունը թողել էր նրա սրտում անախորժ հիշողություն։

Ստեպան Արկադևիչը հաստատ գիտեր, թե այն գործը, որին ինքն ուզում էր ծառայել, նոր, կենդանի և ազնիվ գործ է, բայց այսօր առավոտյան, երբ Բոլգարինովը հայտնապես դիտմամբ հարկադրեց նրան երկու ժամ սպասել ընդունարանում մյուս խնդրարկուների հետ, նա հանկարծ անհարմար զգաց իրեն։

Արդյոք նրա համար անհարմար էր ա՞յն, որ նա, Ռյուրիկի զարմը, իշխան Օբլոնսկին, երկու ժամ սպասում էր չհուդի ընդունարանում, թե՞ այն, որ իր կյանքում առաջին անգամ չէր հետևում իր նախնիների օրինակին՝ ծառայելով կառավարությանը, այլ մտնում էր մի նոր ասպարեզ, բայց նա իրեն շատ անհարմար էր զգում։ Բոլգարինովի մոտ սպասումի այդ երկու ժամվա ընթացքում Ստեպան Արկադևիչը, կայտառ գնալ-գալով ընդունարանում, ուղղելով բակենբարդները,

[1] Դրություն։

գրույցի բոնվելով ուրիշ խնդրարկուների հետ և մտածելով այն կալամբուրը, որ կասի այդ առթիվ, թե ինչպես սպասում էր ինքը ջհուդի մոտ, խնամքով թաքցնում էր ուրիշներից, մինչև իսկ իրենից՝ իր զգացածը։

Բայց այդ ամբողջ ժամանակ նա անհարմար էր զգում իրեն ու սրտնեղում էր, թեև ինքն էլ չգիտեր, թե ինչի՛ց. արդյոք ա՞յն բանից, որ ոչինչ դուրս չէր գալիս կալամբուրից, «բանը հասավ ջհուդին, սպասել տվեց ինձ յահուդին», թե՞ մի այլ բանից։ Իսկ երբ, վերջապես, Բոլգարինովը վերին աստիճանի քաղաքավարությամբ ընդունեց նրան, հայտնապես հիացած նրա նվաստացումից, և համարյա մերժեց նրան, Ստեպան Արկադևիչն շտապեց մոռանալ այդ, որքան հնարավոր է շուտ։ Եվ հիշելով՝ այժմ միայն կարմրեց։

XVIII

— Այժմ մի գործ էլ ունեմ ես, և դու գիտես՝ ի՛նչ գործ... Աննայի մասին,— ասաց Ստեպան Արկադևիչը, մի փոքր լռելուց և իր վրայից անախորժ տպավորությունը թոթափելուց հետո։

Հենց որ Ստեպան Արկադևիչն արտասանեց Աննայի անունը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դեմքը բոլորովին փոխվեց. առաջվա աշխուժության փոխարեն այն արտահայտում էր հոգնածություն ու անկենդանություն։

— Իսկապես դուք ի՞նչ եք ուզում ինձնից,— ասաց նա, շուռ գալով բազկաթոռի մեջ և շրխկացով փակելով իր pince-nez.

— Վճիռ, որևէ վճիռ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ։ Ես հիմա դիմում եմ քեզ («ոչ որպես վիրավորված ամուսնու», ուզում էր ասել Ստեպան Արկադևիչը, բայց վախենալով, չլինի թե դրանով փչացնի գործը, փոխարինեց այդ այս խոսքերով) ո՛չ որպես պետական մարդու, որ դուրս եկավ ո՛չ ի դեպ, այլ որպես սոսկ մարդու, բարի մարդու և քրիստոնյայի։ Դու պետք է խղճաս Աննային,— ասաց նա։

— Այսինքն՝ իսկապես ի՞նչ բանում,— կամաց հարցրեց Կարենինը։

— Այո՛, պետք է խղճաս նրան։ Եթե դու տեսնեիր նրան, ինչպես ես,— ես ամբողջ ձմեռն անցկացրի նրա հետ,— դու կխղճայիր նրան։ Նրա դրությունը սոսկալի՛ է, իսկապես սոսկալի։

— Ինձ թվում է,— պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ավելի բարակ ձայնով, համարյա ճչոցով,— որ Աննա Արկադևնան ունի այն բոլորը, ինչ ուզում էր ինքը։

— Ա՜խ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ի սեր աստծո, թողնենք փոխադարձ մեղադրանքները։ Ինչ եղավ՝ անցավ, և դու գիտես, թե Աննան ի՛նչ է ցանկանում ու սպասում՝ ապահարզան։

— Բայց ես կարծում էի, որ Աննա Արկադևնան հրաժարվում է ապահարզանից այն դեպքում, եթե ես պահանջում եմ որդուս թողնել ինձ։ Ես այդպես էլ պատասխանեցի և ենթադրում էի, որ այդ գործը վերջացած է։ Ես այն համարում եմ վերջացած,— ճչաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Բայց, ի սեր աստծո, մի՛ տաքանար,— ասաց Ստեպան Արկադևիչը, ձեռքով դիպչելով փեսայի ծնկին։— Գործը չի վերջացել։ Եթե դու թույլ կտաս ինձ համառոտակի կրկնել եղածը, բանն այսպե՛ս էր. երբ դուք բաժանվեցիք, դու վեհանձն էիր, ինչպես հնարավոր է լինել վեհանձն, դու տալիս էիր նրան՝ Աննային, ամեն բան՝ ազատություն, նույնիսկ ապահարզան։ Նա գնահատեց այդ։ Ո՛չ, դու մի՛ կասկածիր։ Իսկապե՛ս գնահատեց։ Եվ այն աստիճան, որ առաջին րոպեներին, զգալով իր մեղքը քո առաջ, նա չկշռադատեց ու չէր կարող կշռադատել բոլորը։ Նա ամեն բանից հրաժարվեց։ Բայց իրականությունը, ժամանակը ցույց տվին, որ նրա դրությունը տանջալից է և անհնարին։

— Աննա Արկադևնայի կյանքը չի կարող հետաքրքրել ինձ,— ընդհատեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, բարձրացնելով հոնքերը։

— Թույլ տուր ինձ չհավատալ քեզ,— մեղմորեն առարկեց Ստեպան Արկադևիչը։— Նրա վիճակը տանջալից է իր համար, և շահեկան չէ ոչ ոքի համար։ Նա արժանի է դրան, կասես դու։ Նա գիտե այդ և չի խնդրում քեզ. նա ուղղակի ասում է, որ չի համարձակվի ոչինչ խնդրել։ Բայց ես, մենք՝ բոլոր հարազատներս, նրան սիրող ամենքս աղաչում ենք

քեզ։ Ինչի՞ համար է նա տանջվում։ Դրանից ո՞ւմ ի՞նչ օգուտ։

— Թույլ տվեք, դուք կարծես ինձ դնում եք մեղադրյալի վիճակում,—թոթովեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Ո՛չ, ամենևին ո՛չ, հասկացիր ինձ,—նորից դիպչելով նրա ձեռքին, ասաց Ստեպան Արկադևիչը, կարծես հավատացած էր, որ այդ հպումը մեղմացնում է փեսային։—Ես ասում եմ միայն հետևյալը. նրա դրությունը տանջալից է, և միայն ո՞ւ կարող ես թեթևացնել ու դու ոչինչ չես կորցնի։ Ես քեզ համար ամեն ինչ այնպես կկազմակերպեմ, որ դու չես նկատի։ Չէ՞ որ խոստացել ես։

— Խոստումն արվել էր առաջ։ Եվ ես ենթադրում էի, որ որդուս հարցը վճռում էր գործը։ Բացի դրանից, ես հույս ունեի, որ Աննա Արկադևնան վեհանձնություն կունենա...— դժվարությամբ ասում էր գունատված Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դողդողացող շրթունքներով։

— Նա ամեն ինչ թողնում է հենց քո վեհանձնությանը։ Նա խնդրում, աղաչում է քեզ մի բանի մասին՝ հանել նրան այն անտանելի վիճակից, որի մեջ գտնվում է ինքը։ Նա այլևս չի խնդրում որդուն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, դու բարի մարդ ես։ Մի վայրկյան մտիր նրա դրության մեջ։ Ապահարզանի հարցը նրա համար, նրա վիճակում, կյանքի ու մահվան հարց է։ Եթե դու առաջ խոստացած չլինեիր, նա կհաշտվեր իր վիճակի հետ, կապրեր գյուղում։ Բայց դու խոստացար, նա գրեց քեզ ու տեղափոխվեց Մոսկվա։ Եվ ահա Մոսկվայում, որտեղ ամեն հանդիպում դաշույնի հարված է նրա սրտին, նա ապրում է վեց ամիս, ամեն օր սպասելով որոշման։ Չէ՞ որ այդ միևնույն բանն է, ինչպես մահվան դատապարտվածին ամիսներ պահեն, օղը գցած վզին, խոստանալով, թե կարող է պատահել մահ, կարող է պատահել ներումն։ Խղճա նրան, և հետո ես հանձն եմ առնում այնպես անել ամեն ինչ... Vos scropules[1]...

— Ես չեմ խոսում այդ մասին, այդ մասին...—գարշանքով ընդհատեց նրան Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։—Բայց, դուցե, ես խոստացել եմ այն, ինչ խոստանալու իրավունք չունեի։

— Ուրեմն դու մերժո՞ւմ ես այն, ինչ խոստացել ես։

[1] Ձեր բծախնդրությունը։

— Ես երբեք չեմ մերժել հնարավորի իրագործումը, բայց ես ուզում եմ ժամանակ ունենալ մտածելու, թե որքա՛ն հնարավոր է խոստացածս։

— Ո՛չ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,—տեղից թռչելով, խոսեց Օբլոնսկին,— ես չեմ ուզում հավատալ դրան։ Նա այնպես դժբախտ է, ինչպես կարող է դժբախտ լինել միայն կինը, և դու չես կարող մերժել այդպիսի...

— Որքան հնարավոր է խոստացածս։ Vous professez d'être un libre penseur[1]։ Սակայն ես, որպես հավատացյալ մարդ, չեմ կարող այդպիսի կարևոր գործում վարվել հակառակ քրիստոնեական օրենքի։

— Բայց քրիստոնեական համայնքներում և մեզանում, որքան գիտեմ ես, թույլատրված է ապահարզանը,—ասաց Ստեպան Արկադևիչը։—Ապահարզան թույլատրել է նաև մեր եկեղեցին։ Եվ մենք տեսնում ենք...

— Թույլատրվել է, բայց ո՛չ այդ իմաստով։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ես դժվարանում եմ ճանաչել քեզ,—ասաց Օբլոնսկին կարճ լռությունից հետո։—Մի՞թե դու չէիր (ու մի՞թե մենք չէինք, որ գնահատեցինք այդ), որ բոլորը ներեցիր և դրդված, իսկապես քրիստոնեական զգացումից, պատրաստ էիր ամեն ինչ զոհաբերելու։ Դու ինքդ ասացիր՝ տալ բաճկոնը, երբ վերցնում են շապիկը, և հիմա...

— Ես խնդրո՛ւմ եմ,—հանկարծ ոտքի կանգնելով, գունատ և դողդոջուն ծնոտով, ծղրտան ձայնով խոսեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,—խնդրում եմ ձեզ՝ վերջ տալ, վերջ տալ... այդ խոսակցությանը։

— Ա՛խ, ոչ։ Դե ների՛ր, ների՛ր ինձ, եթե ես վշտացրի քեզ,—շփոթված ժպտալով ասաց Ստեպան Արկադևիչը, մեկնելով ձեռքը,—բայց ես, այսուամենայնիվ, որպես դեսպան, հայտնեցի քեզ ինձ արված հանձնարարությունը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տվեց իր ձեռքը, միտք արավ և ասաց.

— Ես պետք է խորհեմ ու փնտրեմ ցուցումներ։ Վաղը չէ մյուս օրը ես ձեզ վճռական պատասխան կտամ,—ասաց նա, մտաբերելով ինչ-որ բան։

[1] Դուք ձեզ պահում եք ազատամտորեն։

XIX

Ստեպան Արկադևիչն արդեն ուզում էր դուրս գնալ, երբ Կոռնեյը եկավ զեկուցելու.

— Սերգեյ Ալեքսեևիչը։

— Ո՞վ է այդ Սերգեյ Ալեքսեևիչը,—հարցրեց Ստեպան Արկադևիչը, բայց և անմիջապես հիշեց։

— Ա՜խ, Սերյո՜ժան,—ասաց նա։ «Սերգեյ Ալեքսե՜ևիչ», ես կարծում էի՝ դեպարտամենտի դիրեկտորն է։ Աննան խնդրել է ինձ՝ տեսնել նրան, հիշեց նա։

Եվ նա հիշեց այն երկչոտ, խղճուկ արտահայտությունը, որով Աննան, ճանապարհելով նրան, ասաց. «Համենայն դեպս՝ դու կտեսնես նրան։ Իմացիր մանրամասնորեն, որտե՛ղ է նա, ո՛վ է նրա հետ։ Եվ, Ստիվա... եթե միայն հնարավո՞ր է։ Չէ՞ որ հնարավոր է»։ Ստեպան Արկադևիչը հասկացավ, թե ի՞նչ էր նշանակում այդ «եթե միայն հնարավոր է». եթե միայն հնարավոր է ապահարզանը սարքել այնպես, որ իրեն տրվի որդին... Այժմ Ստեպան Արկադևիչը տեսնում էր, որ դրա մասին մտածել անգամ չի կարելի, բայց և այնպես ուրախ էր տեսնելու քրոջ որդուն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հիշեցրեց աներձագին, որ որդուն երբեք ոչինչ չեն ասում մոր մասին և որ ինքը խնդրում է՝ ո՛չ մի խոսքով չհիշեցնել մոր մասին։

— Նա լուրջ հիվանդացավ՝ մոր հետ այն տեսակցությունից հետո, որը մենք չէինք նա-խա-տե-սել,—ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Մենք նույնիսկ վախենում էինք, որ վտանգ է սպառնում նրա կյանքին։ Բայց խելացի բժշկությունը և ամռանը ծովում լողանալը վերականգնեցին նրա առողջությունը, և այժմ ես՝ բժշկի խորհրդով՝ նրան տվի դպրոց։ Հիրավի, ընկերների ազդեցությունը նրա վրա լավ հետևանք ունեցավ, ու նա բոլորովին առողջ է և լավ է սովորում։

— Ի՜նչ կտրիճ է դարձել։ Այն էլ ո՛չ թե Սերյոժա, այլ ամբողջ Սերգեյ Ալեքսեևիչ,—ժպտալով ասաց Ստեպան Արկադևիչը, նայելով կայտառ ու ազատ ներս եկած գեղեցիկ, լայնակուրծք երեխային՝ կապույտ կուրտկայով ու երկար շալվարով։ Երեխայի տեսքն առողջ էր և ուրախ։ Նա ողջունեց քեռուն, որպես օտարի, բայց ճանաչելով նրան, կարմրեց և

կարծես վիրավորված ու բարկացած ինչ-որ բանի համար, շտապ շուռ եկավ նրանից։ Երեխան մոտեցավ հորը և տվեց նրան դպրոցում ստացած թվանշանները։

— Ոչի՜նչ, լավ է,—ասաց հայրը,—կարող ես գնալ։

— Նա նիհարել ու մեծացել է և այլևս երեխա չէ, այլ համարձակ տղա. ես սիրում եմ այդ,—ասաց Ստեպան Արկադևիչը։—Դու հիշո՞ւմ ես ինձ։

Երեխան արագ նայեց հորը։

— Հիշում եմ, mon oncle[1],—պատասխանեց նա, նայելով քեռուն և նորից աչքերը կախ գցեց։

Քեռին մոտ կանչեց երեխային և բռնեց նրա ձեռքը։

— Հը՜, ինչպե՞ս են գործերդ,—ասաց նա, կամենալով խոսել և չիմանալով, թե ի՜նչ ասի։

Երեխան կարմրելով ու չպատասխանելով, զգուշությամբ քաշում էր իր ձեռքը քեռու ձեռքից։ Հենց որ Ստեպան Արկադևիչը բաց թողեց ձեռքը, նա ազատություն ստացած թռչունի պես, հարցական նայելով հորը, արագ քայլերով դուրս գնաց սենյակից։

Անցել էր մի տարի այն օրից, երբ Սերյոժան վերջին անգամ տեսավ մորը։ Այդ ժամանակից հետո նա երբեք ոչինչ չէր լսել մոր մասին։ Եվ հենց այս տարի նա մտավ դպրոց և ճանաչեց ու սիրեց ընկերներին։ Այժմ այլևս չէին զբաղեցնում նրան այն տենչերն ու հիշողությունները մոր մասին, որոնք տեսակցությունից հետո հիվանդացրին նրան։ Երբ այդ մտքերը գալիս էին, նա եռանդով վանում էր իրենից, համարելով դրանք ամոթալի ու հատուկ միայն աղջիկներին և ո՛չ տղային ու ընկերոջը։ Նա գիտեր, որ հոր ու մոր մեջ կար գժտություն, որը բաժանել էր նրանց, գիտեր, որ իրեն վիճակված է մնալ հոր հետ, և աշխատում էր հաշտվել, վարժվել այդ մտքին։

Քեռուն տեսնելը, որը նման էր մորը, անախորժ էր նրա համար, որովհետև դա արթնացնում էր նրա մեջ հենց այն հիշողությունները, որ նա համարում էր ամոթալի։ Այդ նրա համար անախորժ էր մանավանդ այն մի քանի խոսքերի պատճառով, որոնք նա լսեց, սպասելով առանձնասենյակի դռան մոտ, իսկ առանձնապես այն պատճառով, որ հոր ու քեռու դեմքի արտահայտությունից նա կռահում էր, թե նրանց

[1] Քեռիս։

միջև պետք է խոսք լիներ մոր մասին։ Եվ, որպեսզի չդատապարտի հորը, որի հետ նա ապրում էր ու որից կախում ուներ, և, որ գլխավորն է՝ որպեսզի անձնատուր չլինի այն զգայական կանությանը, որը համարում էր այնքան նվաստացուցիչ, Սերյոժան աշխատում էր չնայել այդ քեռուն, որը եկել էր խախտելու իր հանգիստը, և չմտածել այն մասին, ինչ հիշեցնում էր նա։

Բայց երբ նրա ետևից դուրս եկած Ստեպան Արկադևիչը, տեսնելով նրան սանդուղքի վրա, կանչեց իր մոտ ու հարցրեց, թե ինչպե՞ս է անցկացնում նա ժամանակը դպրոցում՝ դասից մինչև դաս, Սերյոժան, հոր ներկայությունից ազատ, խոսքի բռնվեց քեռու հետ։

— Այժմ մեզ մոտ ընդունված է երկաթուղի խաղալը,— ասաց նա, պատասխանելով քեռու հարցին։— Գիտե՞ք, թե ո՞նց է այդ. երկու հոգի նստում են նստարանին։ Դրանք ուղեվորներ են։ Իսկ մեկը կանգնում է նույն նստարանի վրա։ Եվ ամենքը լծվում են։ Կարելի է և՛ ձեռքերով, կարելի է և՛ գոտիներով, ու սկսում են գնալ բոլոր դահլիճներով։ Դոները նախապես արդեն բացվում են։ Բայց այդտեղ շատ դժվար է լինել կոնդուկտոր։

— Նա, որ կանգնո՞ւմ է,— հարցրեց Ստեպան Արկադևիչը ժպտալով։

— Այո՛, այստեղ պետք է և՛ համարձակություն, և՛ ճարպկություն, մանավանդ, երբ հանկարծ կանգ առնեն կամ մեկն ու մեկն ընկնի։

— Այո՛, դա հանաք բան չէ,— ասաց Ստեպան Արկադևիչը, տխուր ու խորազնին նայելով մայրական այդ աշխույժ աչքերին, որոնք այժմ արդեն տղայական չէին, և ոչ լիովին անմեղ։ Ու թեպետ նա խոստացավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին՝ չխոսել Աննայի մասին, բայց չհամբերեց։

— Իսկ դու հիշո՞ւմ ես մորդ,— հանկարծ հարցրեց նա։

— Ո՛չ, չեմ հիշում,— արագ ասաց Սերյոժան և խիստ կարմրելով, կախ գցեց աչքերը։ Եվ քեռին այլևս ոչինչ չկարողացավ իմանալ նրանից։

Սլավոն դաստիարակը կես ժամ հետո գտավ իր սանիկին սանդուղքի վրա և երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, չարանո՞ւմ է նա, թե՞ լալիս է։

— Ի՞նչ կա, երևի որևէ տեղդ ցավեց, երբ ընկաք,— ասաց դաստիարակը։— Ես ասում էի, չէ՞, որ դա վտանգավոր խաղ է։ Պետք է հայտնել դիրեկտորին։

— Եթե ցավար, ոչ ոք չէր նկատի այդ։ Դա արդեն հաստատ բան է։

— Հապա ի՞նչ։

— Թողեք ինձ։ Հիշում եմ, թե չեմ հիշում... Նրա ի՞նչ բանն է։ Ինչի՞ համար հիշեմ։ Ինձ հանգիստ թողեք,— դիմեց նա արդեն ո՛չ թե դաստիարակին, այլ ամբողջ աշխարհին։

XX

Ստեպան Արկադևիչը, ինչպես միշտ, ժամանակը պարապ չէր անցկացնում Պետերբուրգում։ Պետերբուրգում, բացի գործերից՝ քրոջ ապահարզանի և իր պաշտոնի հարցը լուծելուց, նա, ինչպես միշտ, պետք է թարմանար Մոսկովյան լճացածությունից հետո, ինչպես ասում էր նա։

Մոսկվան, չնայած իր cafés chatants-ին և օմնիբուսներին, այսուամենայնիվ կանգնած ճահիճ էր։ Այդ բանը միշտ զգում էր Ստեպան Արկադևիչը։ Ապրելով Մոսկվայում, մանավանդ ընտանիքին մոտիկ, նա զգում էր, որ հուսալքվում է։ Երկար ժամանակ, առանց տեղ մեկնելու ապրելով Մոսկվայում, նա հասնում էր այն դրության, որ սկսում էր անհանգստություն զգալ կնոջ վատ տրամադրությունից ու հանդիմանություններից, երեխաների առողջական կացությունից, դաստիարակության հոգսից, իր պաշտոնի մանր շահերից. նույնիսկ այն բանը, որ նա պարտքեր ուներ, անհանգստություն էր պատճառում նրան։ Բայց բավական էր միայն գալ և ապրել Պետերբուրգում, այն շրջանում, որի հետ շփվում էր նա, որտեղ ապրո՛ւմ էին, այո՛, իսկապես ապրում էին, ո՛չ թե թթվում, ինչպես Մոսկվայում էր, և անմիջապես բոլոր այդ մտքերը չքանում ու հալվում էին, ինչպես հալվում է մոմը կրակի շնչից։

Կի՞նը... Հենց այսօր նա խոսում էր իշխան Չեչենսկու հետ։ Իշխան Չեչենսկին ուներ կին և ընտանիք՝ հասած պաժ երեխաներ, և ուներ մի այլ, ապօրինի ընտանիք, որից՝ նույնպես երեխաներ։ Թեպետ առաջին ընտանիքը նույնպես լավ էր, բայց իշխան Չեչենսկին իրեն ավելի երջանիկ էր զգում երկ-

որդ ընտանիքում։ Ու նա իր ավագ որդուն տանում էր երկրորդ ընտանիքը և պատմում էր Ստեպան Արկադևիչին, թե իր կարծիքով, դա օգտակար է որդու համար ու զարգացնում է նրան։ Ի՞նչ կասեին այդ մասին Մոսկվայում։

Երեխանե՞րը... Պետերբուրգում երեխաները չէին խանգարում հայրերին՝ ապրել։ Երեխաները դաստիարակվում էին դպրոցական հիմնարկներում, և չկար Մոսկվայում տարածված այն վայրենի հասկացողությունը, լվովն՝ օրինակ, թե երեխաներին՝ կյանքի ամբողջ փարթամությունը, իսկ ծնողներին՝ միայն աշխատանք ու հոգսեր։ Այստեղ հասկանում էին, որ մարդ պարտավոր է ապրել իր համար, ինչպես պետք է ապրի կրթված մարդը։

Ծառայությո՞ւնը... Ծառայությունն էլ այստեղ այն համառ, անհուսալի ծանրաքաշիկը չէր, որ քարշ էին տալիս Մոսկվայում, այստեղ հետաքրքրություն կար դեպի ծառայությունը։ Հանդիպում, սպասարկման պատրաստակամություն, դիպուկ խոսք, հանձին այս կամ այն մարդու զանազան բաներ պատկերացնելու ընդունակություն,— և մարդ հանկարծ կարիերա է ստեղծում, ինչպես Բրյանցևը, որին երեկ պատահեց Ստեպան Արկադևիչը, և որն առաջին բարձրաստիճան պաշտոնատարն էր այժմ։ Այդպիսի ծառայությունը հետաքրքրական է։

Առանձնապես հանգստացուցիչ կերպով էր ազդում Ստեպան Արկադևիչի վրա դրամական գործերի նկատմամբ եղած պետերբուրգյան հայեցակետը։ Բարտնյանսկին, որը ծախսում էր առնվազն հիսուն հազար ըստ այն train-ի[1], որ վարում էր նա, երեկ դրա մասին Ստեպան Արկադևիչին ասաց զարմանալի մի խոսք։

Ճաշից առաջ, խոսակցության մեջ, Ստեպան Արկադևիչն ասաց Բարտնյանսկուն.

— Կարծեմ, դու մոտ ես Մորդվինսկուն, դու կարող ես ինձ լավություն անել, խնդրեմ իմ մասին մի երկու խոսք ասես նրան։ Կա մի պաշտոն, որը ես կուզենայի ստանալ։ Գործակալության անդամ...

— Է՜հ, միևնույն է, ես այդ չեմ հիշի... ինձ միայն ասա, թե ի՞նչ բան ունես դու երկաթուղային գործերում՝ ջհուդների հետ... ինչ ուզում ես ասա, բայց գարշելի բան է։

Ստեպան Արկադևիչը չասաց նրան, որ այդ կենդանի գործ էր. Բարտնյանսկին դա չէր հասկանա։

— Դրամ է պետք, ապրելու հնար չկա։

— Հո ապրո՞ւմ ես։

— Ապրում եմ, բայց պարտքեր ունեմ։

— Ի՞նչ ես ասում։ Շա՞տ,— ասաց Բարտնյանսկին կարեկցությամբ։

— Շատ, շատ, մոտ քսան հազար։

Բարտնյանսկին ուրախ քրքջաց։

— Օ՜, երջանիկ մարդ,— ասաց նա։ — Ես ունեմ մեկ ու կես միլիոնպարտք, իսկ մեջտեղում՝ ոչինչ, և, ինչպես տեսնում ես, դեռ կարելի է ապրել։

Ու Ստեպան Արկադևիչը ո՛չ թե միայն խոսքերով, այլ գործով տեսնում էր դրա իսկությունը։ Ժիվախովն ուներ երեք հարյուր հազար պարտք և՝ ո՛չ մի կոպեկ հոգեպահուստ, ու նա ապրում էր, այն էլ ո՞նց։ Կոմս Կրիվցովին վաղուց էին արդեն թաղել ամենքը, իսկ նա երկու կին էր պահում։ Պետրովսկին կերել էր հինգ միլիոն և դարձյալ ապրում էր ճիշտ առաջվա պես ու նույնիսկ ֆինանսների վարիչ էր և ստանում էր քսան հազար ռոճիկ։ Բայց, դրանից զատ, Պետերբուրգը ֆիզիկապես հաճելի կերպով էր ազդում Ստեպան Արկադևիչի վրա։ Պետերբուրգը երիտասարդացնում էր նրան։ Մոսկվայում նա երբեմն նայում էր իր սպիտակած մազերին, նիրհում էր ճաշից հետո, ճմլկոտում էր, համրաքայլ, ծանր շնչելով էր բարձրանում սանդուղքով, ձանձրանում էր ջահել կանանց հետ, չէր պարում պարահանդեսներում։ Իսկ Պետերբուրգում նա միշտ զգում էր, որ տասը տարի հաշվից դուրս է ընկնում։

Պետերբուրգում նա զգում էր այն, ինչ ասում էր նրան դեռ երեկ վաթսունամյա իշխան Պյոտր Օբլոնսկին, որ նոր էր վերադարձել արտասահմանից։

— Մենք այստեղ ապրելու եղանակը չգիտենք,— ասում էր Պյոտր Օբլոնսկին։— Կհավատա՞ս արդյոք, ամառը ես անցկացրի Բադենում. ճիշտ եմ ասում, ինձ զգում էի բոլորովին երիտասարդ։ Տեսնում եմ ջահել կին, և մտքերս... Ճաշում ես, մի թերև խմում՝ ուժ կա մեջդ, առույգություն։ Եկա

[1] Ապրելակերպ։

Ռուսաստան՝ պետք է գնայի կնոջս մոտ, այն էլ գյուղ։ Ա՜յ, չես հավատա, երկու շաբաթից հետո խալաթ հագա, թողի ճաշի համար հագնվելու սովորությունը։ Էլ ո՞ւր մնաց ջահել կանանց մասին մտածելը։ Կատարյա՜լ ծերունի։ Մնում էր միայն մտածել հոգու փրկության մասին։ Գնացի Փարիզ, նորից կարգի ընկա։

Ստեպան Արկադևիչը ճիշտ նույն տարբերությունն էր զգում, ինչ և Պյոտր Օբլոնսկին։ Մոսկվայում նա այնպես էր ընկնում, որ իրոք, եթե երկար ապրեր այնտեղ, գուցե իսկապես հասներ մինչև հոգու փրկության. իսկ Պետերբուրգում նա նորից իրեն կարգին մարդ էր զգում։

Իշխանուհի Բետսի Տվերսկայայի և Ստեպան Արկադևիչի միջև վաղուցվանից գոյություն ունեին չափազանց տարօրինակ հարաբերություններ։ Ստեպան Արկադևիչը միշտ կատակով սիրաթովում էր նրան և ասում, նույնպես կատակով, ամենաանվայելուչ բաներ, իմանալով, որ այդ ամենից ավելի է դուր գալիս նրան։ Կարենինի հետ ունեցած իր խոսակցության հետևյալ օրը Ստեպան Արկադևիչը գնալով իշխանուհու մոտ, իրեն այնքան երիտասարդ էր զգում, որ կատակով այդ սիրաթովչանքի ու դատարկախոսության մեջ գնաց այն աստիճան հեռու, որ արդեն չգիտեր, ինչպես ետ քաշվեր, որովհետև դժբախտաբար, Բետսին ո՛չ միայն դուր չէր գալիս նրան, այլև զզվելի էր նրա համար։ Իսկ այդ տոնը հաստատվեց այն պատճառով, որ նա շատ էր դուր գալիս իշխանուհուն։ Այնպես որ նա շատ ուրախացավ, երբ եկավ իշխանուհի Մյագկայան ու վերջ դրեց նրանց առանձնացմանը։

— Ա՜, դո՞ւք է՛լ այստեղ եք,— ասաց նա, տեսնելով Օբլոնսկուն։— Ասացեք, ինչպե՞ս է ձեր խեղճ քույրը։ Ինձ մի՛ նայեք այդպես,— ավելացրեց նա։ — Այն օրից, երբ ամենը հարձակվեցին նրա վրա, ամենքը, այսինքն՝ բոլոր նրանք, որոնք հարյուր հազար անգամ վատ են նրանից, ես այն կարծիքին եմ, որ նա շատ լավ արեց։ Ես չեմ կարող ներել Վրոնսկուն, որ նա ինձ իմաց չտվեց, երբ Աննան Պետերբուրգում էր։ Ես կերթայի նրա մոտ և նրա հետ ամենուր։ Խնդրեմ հայտնեք նրան իմ սերը։ Հապա, պատմեք ինձ նրա մասին։

— Այո՛, նրա դրությունը ծանր է, նա... — սկսեց պատմել Ստեպան Արկադևիչը, իր պարզամտությամբ հալած յուղի տեղ

ընդունելով իշխանուհի Մյագկայայի խոսքերը՝ «հապա պատմեցեք ձեր քրոջ մասին»։ Իշխանուհի Մյագկայան, ըստ իր սովորության, անմիջապես ընդհատեց նրան ու սկսեց ի՛նքը պատմել։

— Աննան արեց այն, ինչ անում են ամենքը, բացի ինձնից, բայց թաքցնում են. իսկ նա չէր ուզում խաբել և շատ լավ արեց։ Ավելի ևս լավ արեց, որ թողեց ձեր կիսախելագար փեսային։ Ներեցեք ինձ։ Դուք ասում էիք, թե նա խելո՞ք է, խելո՞ք, ե՛ս էի միայն ասում, որ նա տխմար է։ Այժմ, երբ նա կապվեց Լիդիա Իվանովնայի և Landau-ի հետ, ամենքն ասում են, որ նա կիսախելագար է, և ես ուրախ կլինեի չհամաձայնել ամենքին, բայց այս անգամ չեմ կարող։

— Խնդրեմ բացատրեք ինձ,— ասաց Ստեպան Արկադևիչը,— թե ի՞նչ է նշանակում այդ։ Երեկ ես եղա նրա մոտ քրոջը գործով ու խնդրեցի վճռական պատասխան։ Նա ինձ պատասխան չտվեց և ասաց, թե կմտածի, իսկ այսօր առավոտյան պատասխանի փոխարեն հրավեր ստացա լինել կոմսուհի Լիդիա Իվանովնայի մոտ՝ այսօր երեկոյան։

— Այդպես, այդպե՛ս,— խնդությամբ ասաց իշխանուհի Մյագկայան։— Նրանք կհարցնեն Landau-ին, թե ի՛նչ կասի նա։

— Ինչպե՞ս թե Landau-ին։ Ինչի՞ համար։ Ի՞նչ բան է Landau-ն։

— Ինչպե՞ս դուք չեք ճանաչում Jules Landau-ին. le fameux, Jules Landau, le clairvoyant?[1]։ Նա նույնպես կիսախելագար է, բայց նրանից է կախված ձեր քրոջ բախտը։ Ահա թե ի՛նչ է ստացվում գավառական կյանքից, դուք ոչինչ չգիտեք։ Գիտե՞ք ինչ. Landau commis[2] էր խանութում, Փարիզում և մի անգամ գնում է բժշկի։ Բժշկի ընդունարանում նա քնում է ու քնի մեջ սկսում է խորհուրդներ տալ բոլոր հիվանդներին։ Եվ զարմանալի խորհուրդներ։ Չեմ ճանաչո՞ւմ եք Յուրի Մելեդինսկուն՝ այն հիվանդին. կինն իմանում է այդ Landau-ի մասին ու վերցնում է նրան ամուսնու մոտ։ Landau-ն բժշկում է նրա ամուսնուն։ Ըստ իս, ո՛չ մի օգուտ նրան չի տալիս,

[1] Ժյուռ Լանդոյին։ Հռչակավոր գուշակ Ժյուլ Լանդոյին։
[2] Լանդոն գործակատար էր։

որովհետև նա էլի թույլ է առաջվա պես, բայց նրանք հավատում են նրան ու վերցնում են իրենց հետ։ Եվ բերում են Ռուսաստան։ Այստեղ ամենքը վրա ընկան նրան, ու նա սկսեց բոլորին բժշկել։ Բժշկեց կոմսուհի Բեզզուբովային, և սա այնպես սիրեց նրան, որ որդեգրեց։

— Ինչպե՞ս թե որդեգրեց։

— Այնպե՛ս, որդեգրեց։ Նա հիմա այլևս Landau չէ, այլ կոմս Բեզզուբով է։ Բայց բանն այդ չէ. իսկ Լիդիան,— ես նրան սիրում եմ շատ, սակայն նրա գլուխն իր տեղում չէ,— այժմ վրա է ընկել այդ La d u-ին և առանց նրան ո՛չ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ո՛չ էլ կոմսուհին ոչինչ չեն վճռում, ուստի ձեր քրոջ բախտն հիմա գտնվում է այդ Landau-ի, այլ կերպ ասած՝ կոմս Բեզզուբովի ձեռքին։

XXI

Բարտնյանսկու մոտ հիանալի ճաշից ու մեծ քանակությամբ խմած կոնյակից հետո Ստեպան Արկադևիչը, նշանակված ժամանակից մի փոքր միայն ուշ, մտնում էր կոմսուհի Լիդիա Իվանովնայի բնակարանը։

— Ուրիշ ո՞վ կա կոմսուհու մոտ. ֆրանսիացի՞ն,— հարցրեց Ստեպան Արկադևիչը բարապանին, դիտելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ծանոթ վերարկուն և օղլակներով տարօրինակ ու նաիվ անծանոթ վերարկուն։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ Կարենինը և կոմս Բեզզուբովը,— ասաց բարապանը խիստ տոնով։

«Իշխանուհի Մյագկայան ճիշտ գուշակեց,— մտածեց Ստեպան Արկադևիչը, բարձրանալով սանդուղքներից։— Տարօրինակ բան։ Սակայն վատ չէր լինի մոտիկանալ կոմսուհուն։ Նա հսկայական ազդեցություն ունի։ Եթե նա մի երկու խոսք ասի Պոմորսկուն, հաստատ բան է արդեն»։

Դրսում բոլորովին լույս էր դեռ, բայց կոմսուհի Լիդիա Իվանովնայի փոքրիկ ընդունարանում, վարագույրներն իջեցրած, արդեն վառվում էին լամպերը։

Կլոր սեղանի մոտ, լամպի լույսի տակ նստել էին կոմսուհին ու Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և կամաց խոսում էին ինչ-որ բանի մասին։ Ո՛չ բարձրահասակ, լղար մի մարդ, կանացի

կոնքով, ծնկատեղերում ներս ընկած ոտներով, շատ գոհաաա

որտեղ տեղի ունի կամ պիտի տեղի ունենա առանձին մի բան, որի գաղտնիքի բանալին դեռ չի գտել ինքը։

Տիրեց բոպեական լռություն, որից հետո կոմսուհի Լիդիա Իվանովնան, կարծես թե ձեռնամուխ լինելով խոսակցության գլխավոր նյութին, նուրբ ժպիտով ասաց Օբլոնսկուն.

— Ես ձեզ վաղուց եմ ճանաչում և շատ ուրախ եմ ավելի մոտ ճանաչելու հնարավորության առթիվ։ Les amis de nos amis sont nos amis[1]։ Սակայն բարեկամ դառնալու համար պետք է մտասուզվել բարեկամի հոգու կացության մեջ, իսկ ես վախենում եմ, որ դուք այդ բանը չեք անում Ալեքսեյ Ալեքսանդրովիչի նկատմամբ։ Դուք, իհարկե, հասկանում եք, թե ինչի՛ մասին եմ ասում ես,— ասաց նա, բարձրացնելով իր գեղեցիկ, մտասույզ աչքերը։

— Կոմսուհի, ես մասամբ հասկանում եմ, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վիճակը...— ասաց Օբլոնսկին, լավ չհասկանալով, թե բանն ի՛նչ է և կամենալով մնալ ընդհանուր մտքերի սահմաններում։

— Փոփոխությունը ո՛չ թե արտաքին կացության մեջ է,— խիստ տոնով ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, միաժամանակ սիրահարված հայացքով հետևելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, որը վեր կացավ ու մոտեցավ Landau-ին,— փոփոխվել է նրա սի՛րտը, նրան տրված է նոր սիրտ, և ես վախենում եմ, դուք լիովին չեք հասկանում այն փոփոխությունը, որ կատարվել է նրա մեջ։

— Այսինքն՝ ընդհանուր գծերով ես կարող եմ պատկերացնել այդ փոփոխությունը։ Մենք միշտ եղել ենք բարեկամներ և այժմ... — ասաց Ստեպան Արկադևիչը, քնքուշ հայացքով պատասխանելով կոմսուհու հայացքին, կշռադատելով, թե երկու մինիստրներից որի՛ն ավելի մոտ է Լիդիա Իվանովնան, որպեսզի իմանա, թե նրանցից որի՛ մասին պետք է խնդրել նրան։

— Այն փոփոխությունը, որ տեղի է ունեցել նրա մեջ, չի կարող թուլացնել նրա սիրո զգացումը մերձավորների նկատմամբ. ընդհակառակն, նրա մեջ կատարված փոփոխությունը պետք է ուժեղացնի այդ սերը։ Բայց ես վախենում եմ, որ դուք չեք հասկանա ինձ։ Թեյ չէի՞ք կամենա,— հարցրեց կոմսուհին, աչքերով նշելով ծառային, որ թեյ էր բերում մատուցարանով։

— Ո՛չ, բոլորովին, կոմսուհի՛։ Հասկանալի էր, որ նրա դժբախտությունը...

— Այո՛, դժբախտություն, որը դարձավ գերագույն բախտավորություն, երբ սիրտը դարձավ նո՛ր, լցված այդ բախտավորությամբ,— ասաց Լիդիա Իվանովնան, սիրահարվածի պես նայելով Ստեպան Արկադևիչին։

«Ես կարծում եմ, կարելի է խնդրել՝ բարի խոսք ասել երկուսին էլ», մտածում էր Ստեպան Արկադևիչը։

— Օ՛, իհարկե, կոմսուհի,— ասաց նա,— բայց ես կարծում եմ, այդ փոփոխություններն այնքան ինտիմ են, որ ոչ ոք, նույնիսկ ամենամոտիկ մարդը, չի սիրում խոսել դրանց մասին։

— Ընդհակառակն։ Մենք պետք է խոսենք և օգնենք իրար։

— Այո՛, անկասկած, բայց լինում է համոզմունքների այնպիսի տարբերություն և ընդամին...— քնքուշ ժպիտով ասաց Օբլոնսկին։

— Սրբազան ճշմարտության գործում չի կարող տարբերություն լինել։

— Օ՛, արդարև, իհարկե, բայց...— և շփոթվելով, Ստեպան Արկադևիչը լռեց։ Նա հասկացավ, որ հարցը վերաբերում էր կրոնին։

— Ինձ թվում է, նա այս բոպեիս կքնի,— նշանակալից շշուկով ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, մոտենալով Լիդիա Իվանովնային։

Ստեպան Արկադևիչը ետ նայեց։ Landau-ն նստել էր պատուհանի մոտ, հենված բազկաթոռի բռնակին ու մեջքին, գլուխը կախ։ Նկատելով իր վրա դարձած հայացքները, նա բարձրացրեց գլուխը և ժպտաց մանկական միամիտ ժպիտով։

— Ուշադրություն մի՛ դարձնեք,— ասաց Լիդիա Իվանովնան ու թեթև շարժումով աթոռը մոտ քաշեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։— Ես նկատել եմ...— սկսեց նա ինչ-որ բան, երբ սենյակ մտավ ծառան՝ ձեռքին նամակ։ Լիդիա Իվանովնան արագ կարդաց տոմսը և ներողություն խնդրելով, զարմանալի արագությամբ պատասխանը գրեց, հանձնեց ու վերադար-

[1] Մեր բարեկամների բարեկամները մեր բարեկամներն են։

ձավ սեղանի մոտ։— Ես նկատել եմ,— շարունակեց նա սկըսած խոսակցությունը, որ մոսկվացիք, մանավանդ տղամարդիկ, ամենաանտարբեր մարդիկն են կրոնի խնդրում։

— Օ՛, ո՛չ, կոմսուհի, ինձ թվում է, որ մոսկվացիք ունեն ամենահաստատուն մարդկանց համբավ,— պատասխանեց Ստեպան Արկադևիչը։

— Այո՛, որքան հասկանում եմ ես, դուք դժբախտաբար, անտարբերներից եք,— ասաց հոգնած ժպիտով Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դիմելով Օբլոնսկուն։

— Ինչպե՞ս կարելի է լինել անտարբեր,— ասաց Լիդիա Իվանովնան։

— Այս տեսակետից ես ոչ թե անտարբեր եմ, այլ սպասողականության մեջ եմ,— ասաց Ստեպան Արկադևիչն իր ամենամեղմացնող ժպիտով։— Ես չեմ կարծում, որ ինձ համար հասել է այդ հարցերի ժամանակը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և Լիդիա Իվանովնան իրար նայեցին։

— Մենք երբեք չենք կարող իմանալ, արդյոք մեզ համար հասե՞լ է, թե չի հասել ժամանակը,— ասաց Ասեքսեյ Ալեքսանդրովիչը խիստ տոնով։— Մենք չպետք է մտածենք այն մասին, արդյոք պատրա՞ստ ենք, թե պատրաստ չենք. շնորհը չի ղեկավարվում մարդկային նկատառումներով. երբեմն այն չի իջնում տքնողների վրա, այլ իջնում է չլվատրաստվածների վրա, ինչպես Սավուղն էր։

— Ո՛չ, կարծես հիմա դեռ չէ,— ասաց Լիդիա Իվանովնան, որն այդ ժամանակ հետևում էր ֆրանսիացու շարժումներին։

Landau-ն վեր կացավ ու մոտեցավ նրանց։

— Ցույլ կտա՞ք ինձ լսելու,— հարցրեց նա։

— Օ՛, իհարկե, ես չէի ուզում խանգարել ձեզ,— ասաց Լիդիա Իվանովնան, քնքշությամբ նայելով նրան,— նստեք մեզ հետ։

— Պետք է միայն մարդ աչքերը չփակի, որ չզրկվի լույսից,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Ա՜խ, եթե դուք հասկանայիք այն երջանկությունը, որ համակում է մեզ, զգալով մեր հոգում նրա մշտական ներկայությունը,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, երանությամբ ժպտալով։

— Բայց մարդ երբեմն կարող է իրեն անընդունակ զգալ՝ հասնելու այդ բարձրությանը,— ասաց Ստեպան Արկադևիչը, զգալով, որ ինքը կեղծում է, ընդունելով կրոնական բարձրությունը, միաժամանակ սիրտ չանելով խոստովանելու իր ազատամտությունը մի անձի առաջ, որը Պոմորսկուն ասած իր մի խոսքով կարող է տալ իրեն իր ցանկացած պաշտոնը։

— Այսինքն՝ դուք ուզում եք ասել, որ մեղքը խանգարո՞ւմ է նրան,— ասաց Լիդիա Իվանովնան։— Սակայն թյուր կարծիք է այդ։ Հավատացողների համար մեղք չկա, մեղքն արդեն քավված է։ Pardon,— ավելացրեց նա, նայելով նորից ներս եկած ծառային, որը բերում էր մի ուրիշ տոմս։— Կոմսուհին կարդաց և բերանացի պատասխանեց.— ասացեք վաղը, մեծ իշխանուհու մոտ... Հավատացողի համար մեղք չկա,— շարունակեց նա խոսակցությունը։

— Այո՛, բայց հավատն առանց գործերի մեռած բան է,— ասաց Ստեպան Արկադևիչը, հիշելով այդ ֆրազը հավատի հանգանակից, մի ժպիտով արդեն պաշտպանելով իր անկախությունը։

— Ահա՛ այն, Հակոբ առաքյալի թղթից,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը՝ թեթև կշտամբանքով դիմելով Լիդիա Իվանովնային, հայտնապես որպես մի այնպիսի բանի մասին, որ իրենց մեջ արդեն բազմիցս խոսվել է։ — Ինչքա՞ն վնաս է պատճառել այդ տեղի սխալ մեկնաբանումը։ Ոչինչ այնպես չի վանում կրոնից, ինչպես այդ մեկնաբանումը։ «Ես գործեր չունեմ, ես չեմ կարող հավատալ», մինչդեռ, ո՛չ մի տեղ չի ասված այդ բանը։ Այլ ասված է հակառակը։

— Դեգերել աստծո համար, տքնությամբ, պասով փրկել հոգին,— գարշալից արհամարհանքով ասաց Լիդիա Իվանովնան,— մեր վանականների վայրենի հասկացողությունն է... Այնինչ, այդ ո՛չ մի տեղ ասված չէ։ Դա շատ ավելի պարզ ու հեշտ բան է,— ավելացրեց նա, նայելով Օբլոնսկուն այն ամենաքաջալերիչ ժպիտով, որով արքունիքում նա քաջալերում էր նոր միջավայրից շփոթված, ջահել ֆրեյլինաներին։

— Մենք փրկված ենք Քրիստոսով, որ տանջվեց մեզ համար։ Մենք փրկված ենք հավատով,— հաստատեց Ալեքսեյ

Ալեքսանդրովիչը, իր հայացքով հավանություն տալով կոմսուհու խոսքերին։

— Vous comprenez l'anglais?[1] — հարցրեց Լիդիա Իվանովնան և ստանալով դրական պատասխան, վեր կացավ ու սկսեց ընտրել դարակի դրքերը։— Ես ուզում եմ կարդալ ձեզ „Safe and Happy" կամ „Under the wing?"[2] — ասաց նա, հարցական նայելով Կարենինին։ Եվ գտնելով իր ուզած գիրքը ու նորից նստելով նախկին տեղը, բացեց այն։— Դա շատ կարճ բան է։ Այստեղ նկարագրված է այն ուղին, որով ձեռք է բերվում հավատ, և այն բախտավորությունը, գերերկրային այն բախտավորությունը, որն այդ դեպքում համակում է մարդու հոգին։ Հավատացող մարդը չի կարող դժբախտ լինել, որովհետև նա մենակ չէ։ Ա՜յ, ահա կտեսնեք դուք։— Նա արդեն պատրաստվում էր կարդալ, երբ նորից ներս մտավ ծառան։— Բորոզդինա՞ն։ Ասացեք՝ վաղը, ժամը երկուսին։ Այո՛,— ասաց նա, մատը դնելով գրքի մեջ՝ հարկավոր տեղում ու հառաչանքով նայելով դիմացը՝ իր մտասույզ գեղեցիկ աչքերով։— Ահա թե ինչպե՛ս է ներազդում իսկական հավատը։ Դուք ճանաչո՞ւմ եք Մարի Սանինային։ Դուք գիտե՞ք նրա դժբախտությունը,— նա կորցրեց իր միակ որդուն։ Նա հուսահատության մեջ էր։ Եվ ի՞նչ։ Նա գտավ այդ բարեկամին, և այժմ նա գոհունակություն է հայտնում աստծուն իր երեխայի մահվան համար։ Ահա՜ բախտավորություն, որ տալիս է հավատը։

— Օ՜, իհարկե, այդ շատ...— ասաց Ստեպան Արկադևիչը, գոհ այն հանգամանքից, որ հիմա կկարդան ու հնարավորություն կտան իրեն մի փոքր ուշքի գալու։ «Ո՜չ, ինչպես երևում է, ավելի լավ է այսօր ո՛չ մի բանի մասին չխնդրել», մտածում էր նա, «միայն թե դուրս պրծնեմ այստեղից, առանց խառնաշփոթելու»։

— Ձեզ համար ձանձրալի կլինի,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան, դիմելով Landau-ին,— դուք անգլերեն չգիտեք, բայց դա կարճ բան է։

— Օ՜, ես կհասկանամ,— ասաց նույն ժպիտով Landau-ն ու փակեց աչքերը։

[1] Դուք հասկանո՞ւմ եք անգլերեն։

[2] «Ապահովության ու երջանկության մեջ» կամ «Հովանու տակ»։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ու Լիդիա Իվանովնան նշանակալից նայեցին իրար, և սկսվեց ընթերցումը։

XXII

Ստեպան Արկադևիչը բոլորովին շշմել էր իր համար տարօրինակ այն նոր զրույցներից, որ լսում էր ինքը։ Պետերբուրգյան կյանքի բարդությունն առհասարակ գրգռիչ կերպով էր ազդում նրա վրա, դուրս հանելով նրան մոսկովյան լճացումից. բայց այդ բարդացումները նա սիրում էր և հասկանում իրեն մոտիկ ու ծանոթ շրջաններում. իսկ այդ խորթ միջավայրում նա շշմել էր, շվարել և չէր կարողանում բոլորն ընդգրկել։ Լսելով կոմսուհի Լիդիա Իվանովնային ու իր վրա հառած զգալով Landau-ի գեղեցիկ, նա՞վ, թե՞ խորամանկ— նա ինքն էլ չգիտեր— աչքերը, Ստեպան Արկադևիչն սկսում էր գլխում ինչ-որ առանձին ծանրություն զգալ։

Նրա գլխում իրար էին խառնվել ամենաբազմապիսի մտքեր. «Մարի Սանինան ուրախանում էր, որ մեռավ իր երեխան... Լավ կլիներ հիմա ծխել... Փրկվելու համար պետք է միայն հավատալ, և վանականները չգիտեն, թե ինչպե՞ս պետք է անել այդ. իսկ գիտե կոմսուհի Լիդիա Իվանովնան... Եվ ինչի՞ց է գլուխս այդպես ծանրացել։ Արդյոք կոնյակի՞ց, թե՞ այն բանից, որ այս բոլորն արդեն շատ տարօրինակ է։ Այսուամենայնիվ, կարծեմ, մինչ այժմ ես անվայելուչ ոչինչ չարի։ Բայց և այնպես, այլևս չի կարելի ոչնչի մասին խնդրել կոմսուհուն։ Ասում են, որ նրանք ստիպում են աղոթել։ Չլինի թե ինձ էլ ստիպեն։ Այդ արդեն կլինի չափազանց տխմար բան։ Եվ ի՞նչ դատարկ բան է կարդում կոմսուհին, թեև լավ է արտասանում։ Landau— Բեզզո՛ւբով, ինչո՞ւ է նա Բեզզուբով»։ Հանկարծ Ստեպան Արկադևիչն զգաց, որ իր ներքևի ծնոտն անզսպորեն ծռմռվում է հորանջելու համար։ Նա ուղղեց բակենբարդները, ծածկելով հորանջը, և ցնցվեց։ Բայց դրանից անմիջապես հետո նա զգաց, որ արդեն քնած է ու պատրաստվում է խռմփալու։ Նա ուշքի եկավ այն րոպեին, երբ կոմսուհի Լիդիա Իվանովնայի ձայնն ասաց. «նա քնած է»։

Ստեպան Արկադևիչը վախեցած սթափվեց, զգալով իրեն մեղավոր ու հանցանքի մեջ բռնված։ Բայց նա անմիջապես

մխիթարվեց, տեսնելով, որ «նա քնած է» խոսքերը վերաբերում են ո՛չ թե իրեն, այլ Landau-ին։ Ֆրանսիացին նույնպես քնեց, ինչպես և Ստեպան Արկադևիչը։ Բայց Ստեպան Արկադևիչի քունը, ինչպես կարծում էր նա, կարող էր վիրավորել նրանց (թեպետ նա այդ էլ չէր կարծում, այնպես տարօրինակ էր թվում նրան ամեն ինչ), իսկ Landau-ի քունը չափազանց ուրախացրեց նրանց, մանավանդ կոմսուհի Լիդիա Իվանովնային։

— Mon ami[1],— ասաց Լիդիա Իվանովնան զգույշ, որպեսզի աղմուկ չհանի, շտկելով իր մետաքսե զգեստի ծալքերը և հուզված կանչելով Կարենինին ո՛չ թե Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, այլ „mon ami“,—donnez lui la main. Vous voyez?[2] Սր՛ս,— թշշաց նա նորից ներս եկած ծառայի վրա։— Ո՛չ ոքի չընդունել։

Ֆրանսիացին քնած էր կամ ձևանում էր, թե քնած է, գլուխը հենած բազկաթոռի թիկնատեղին, և քրտնած ձեռքով, որ ընկած էր ծնկին, անում էր թույլ շարժումներ, կարծես որսալով ինչ-որ բան։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր կացավ, ուզում էր շարժվել զգույշ, բայց կարթկելով աթոռը, մոտեցավ ու ձեռքը դրեց ֆրանսիացու ձեռքի մեջ։ Ստեպան Արկադևիչը նույնպես կանգ կացավ և աչքերը լայն բանալով, կամենում էր զարթնեցնել իրեն, եթե քնած է, նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին։ Այս բոլորը տեղի ուներ արթուն կացությամբ։ Ստեպան Արկադևիչն զգում էր, որ գլուխը հետզհետե ավելի ու ավելի վատանում է։

— Que le persone qui est arrivée la dernière, celle qui pemande, qu'elle—sorte. Qu'elle sorte![3]— ասաց ֆրանսիացին, առանց բացելու աչքերը։

— Vous m'excuserez, mais vous voyez... Revenez vers dix heures, encore mieux demain[4].

---

[1] Բարեկամս։

[2] Բարեկամս, տվեք նրան ձեր ձեռքը։ Տեսնո՞ւմ եք։

[3] Թող դուրս գնա այն անձնավորությունը, որը եկավ վերջինը, որը հարցնում է։

[4] Դուք ներեցեք ինձ, բայց դուք տեսնում եք... Եկեք ժամը տասի մոտ, կամ ավելի լավ է վաղը։

Qu'elle sorte[1]! — անհամբերությամբ կրկնեց ֆրանսիացին։

— C'est moi, n'est ce pas[2]? Եվ ստանալով դրական պատասխան, Ստեպան Արկադևիչը, մոռացած թե՛ այն, ինչի մասին ուզում էր ինքը խնդրել Լիդիա Իվանովնային, մոռացած թե՛ քրոջ գործի մասին, համակված մի ցանկությամբ միայն՝ դուրս պրծնել այստեղից՝ որքան հնարավոր է շուտ, դուրս գնաց մատների ծայրին և վազեց փողոց, ինչպես վարակված տնից ու երկար ժամանակ խոսում ու կատակում էր կառապանի հետ, կամենալով շուտափույթ ուշքի գալ։

Ֆրանսիական թատրոնում, որտեղ նա հասավ վերջին արարին, հետո թաթարների մոտ շամպայն խմելիս, Ստեպան Արկադևիչը մի քիչ հանգստացավ իրեն հատուկ մթնոլորտում։ Բայց և այնպես այդ երեկո նա իրեն շատ վատ էր զգում։

Վերադառնալով տուն՝ Պյոտր Օբլոնսկու բնակարանը, որտեղ իջել էր Պետերբուրգում, Ստեպան Արկադևիչը գտավ Բետսիի ուղարկած տոմսը։ Բետսին գրում էր նրան, որ շատ է ցանկանում վերջացնել սկսած խոսակցությունը և խնդրում է նրան՝ վաղը գալ իր մոտ։ Հազիվ նա կարողացավ կարդալ այդ տոմսը և խոժոռվել այդ առթիվ, երբ ներքևում լսվեցին ինչ-որ ծանր բան բերող մարդկանց ծանր քայլեր։

Ստեպան Արկադևիչը դուրս եկավ նայելու։ Դա երիտասարդացած Պյոտր Օբլոնսկին էր։ Նա այնպես հարբած էր, որ չէր կարողանում բարձրանալ սանդուղքներով. բայց հրամայեց կանգնեցնել իրեն, տեսնելով Ստեպան Արկադևիչին, ու կպած նրան, գնաց նրա հետ նրա սենյակը և սկսեց պատմել, թե ինչպե՛ս անցկացրեց երեկոն և տեղն ու տեղը քնեց։

Ստեպան Արկադևիչը հոգեպես լքված էր, որ սակավ էր պատահում նրա հետ, և երկար ժամանակ քունը չէր տանում։ Այն բոլորը, ինչ մտաբերում էր նա, գարշելի էր, բայց ամենից ավելի գարշանքով, որպես ամոթալի բան, մտաբերում էր նա կոմսուհի Լիդիա Իվանովնայի մոտ անցկացրած երեկոն։

Հետևյալ օրը նա Ալեքսեյ Ալեքսանդրովիչից ստացավ Ան-

---

[1] Թող նա դուրս գնա։

[2] Դա ես եմ, այնպես չէ՞։

նային ապահարզան տալու կտրական մերժում և հասկացավ, որ այդ որոշումը հիմնված էր այն բանի վրա, ինչ ասել էր Ֆրանսիացին իր իսկական, թե ձևացրած քնի մեջ։

XXIII

Ընտանեկան կյանքում որևէ բան ձեռնարկելու համար անհրաժեշտ է կամ լիովին պառակտում ամուսինների միջև, կամ սիրահոժար համաձայնություն։ Իսկ երբ ամուսինների հարաբերություններն անորոշ են, և չկա ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ մի գործ չի կարող ձեռնարկվել։

Շատ ընտանիքներ տարիներով մնում են ամուսինների համար զզվելի դարձած նույն պայմաններում այն պատճառով միայն, որ չկա ո՛չ կատարյալ պառակտում, ո՛չ էլ համաձայնություն։

Մոսկովյան կյանքն անտանելի էր դարձել թե՛ Վրոնսկու, թե՛ Աննայի համար շոգի և փոշու մեջ, երբ արևն արդեն փայլում էր ո՛չ գարնան, այլ ամառվա պես, և զբոսայգիներում բոլոր ծառերն արդեն հագել էին տերևներ, ու տերևներն արդեն ծածկվել էին փոշով։ Բայց նրանք, շտեղափոխվելով Վոզդվիժենսկոյե, ինչպես այդ վաղուց որոշված էր, շարունակում էին ապրել իրենց համար զզվելի դարձած Մոսկվայում, որովհետև վերջերս համաձայնություն չկար նրանց միջև։

Նրանց իրարից բաժանող գրգռումները չուներ արտաքին ո՛չ մի պատճառ, և բացատրվելու բոլոր փորձերը ո՛չ միայն չէին վերացնում, այլ ուժեղացնում էին այն։ Դա ներքին գրգռումներ էր, որը Աննայի համար հետևանք էր Վրոնսկու սիրո նվազման, Վրոնսկու համար զզջում, որ ինքն Աննայի պատճառով իրեն դրել է այնպիսի ծանր դրության մեջ, ինչն Աննան թեթևացնելու փոխարեն՝ ավելի ծանրացնում է։ Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չէր ասում իր գրգռումների պատճառը, բայց նրանք փոխադարձաբար իրար հա՛մարում էին անիրավացի և ամեն առիթով աշխատում էին այդ ապացուցել իրար։

Աննայի համար Վրոնսկին ամբողջովին, իր բոլոր սովորություններով, մտքերով, ցանկություններով, իր հոգեկան ու ֆիզիկական ամբողջ կազմով, մի՛ բան էր՝ սեր դեպի կանայք, և այդ սերը, Աննայի կարծիքով, պետք է ամբողջապես կենտրոնացած լիներ միայն իր վրա։ Այդ սերը նվազել էր. հետևաբար, Աննայի դատողությամբ, Վրոնսկին այդ սիրո մի մասը պետք է փոխանցած լիներ ուրիշ կանանց կամ ուրիշ կնոջ վրա,— և Աննան խանդում էր։ Նա խանդում էր ո՛չ թե որևէ կնոջ հանդեպ, այլ Վրոնսկու սիրո նվազման պատճառով։ Խանդի համար տակավին չունենալով ռեալ առարկա, նա փնտրում էր այն։ Ամենաչնչին ակնարկի պատճառով նա իր խանդը մի առարկայից փոխանցում էր մյուսին։ Մերթ նա խանդում էր Վրոնսկուն այն կոպիտ կանանց նկատմամբ, որոնց հետ Վրոնսկին, շնորհիվ իր ամուրի կապերի, կարող էր այնպես հեշտությամբ հարաբերություն ունենալ. մերթ նա խանդում էր Վրոնսկուն բարձր հասարակության կանանց նկատմամբ, որոնց Վրոնսկին կարող էր հանդիպել. մերթ նա խանդում էր Վրոնսկուն երևակայական մի աղջկա նկատմամբ, որի հետ Վրոնսկին կուզենար ամուսնանալ, խզելով իր կապերն Աննայի հետ։ Եվ այս վերջին խանդն ամենից ավելի էր տանջում Աննային, մանավանդ այն պատճառով, որ ինքը՝ Վրոնսկին, անզգուշաբար, անկեղծ մի բոպեի, ասաց Աննային, թե իր մայրն այնպես քիչ է հասկանում իրեն, որ փորձ արեց համոզելու՝ ամուսնանալ իշխանազնուհի Սորոկինայի հետ։

Ու խանդելով նրան, Աննան զայրանում էր նրա վրա և ամեն բանում առիթ էր փնտրում զայրույթի համար։ Իր դրության մեջ եղած բոլոր ծանր պարագաների համար Աննան մեղադրում էր նրան։ Սպասումի տանջալից այն կացությունը, որ ապրեց Աննան Մոսկվայում՝ երկնքի ու երկրի միջև, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դանդաղկոտությունն ու անվճռականությունը, իր մեկուսացումը,— այս բոլորն Աննան վերագրում էր նրան։ Եթե նա սիրեր, կհասկանար Աննայի կացության ամբողջ ծանրությունը և կհաներ նրան այդ վիճակից։ Նա մեղավոր էր նաև այն բանում, որ Աննան ապրում էր Մոսկվայում և ո՛չ թե գյուղում։ Վրոնսկին չէր կարող ապրել, թաղվելով գյուղում, ինչպես ուզում էր Աննան։ Նրա համար անհրաժեշտ էր հասարակություն, և նա Աննային դրեց այդ սոսկալի կացության մեջ, որի ծանրությունը չէր ուզում հասկանալ։ Եվ որ Աննան հավիտյան անջատված է որդուց՝ այդ բանում էլ նա՛ էր մեղավոր։

Աննային չէին հանգստացնում նույնիսկ քնքշության այն

հագվածեպ բոպեները, որ լինում էին նրանց միջև. Վոռնսկու քնքշության մեջ Աննան այժմ տեսնում էր հանգստի, վստահության նրբերանգ, որոնք չկային առաջ և որոնք գրգռում էին Աննային։

Արդեն մթնշաղ էր։ Աննան մենակ, սպասելով Վոռնսկու վերադարձին ամուրիների ճաշից, ուր գնացել էր նա, ետ ու առաջ էր քայլում նրա առանձնասենյակում (այն սենյակը, որտեղ ամենից ավելի քիչ էր լսվում փողոցի աղմուկը) և ամենայն մանրամասնությամբ վերամտորոշում էր երեկվա վեճի արտահայտությունները։ Վեճի անմոռանալի վիրավոր կան խոսքերից ետ դալով դեպի այն, ինչն առիթ տվեց այդ խոսքերին, նա հասավ վերջապես խոսակցության սկզբին։ Երկար ժամանակ նա չէր կարողանում հավատալ, թե պառակտումն սկսվեց այդպիսի անմեղ խոսակցությունից, որը մոտ չէր ոչ ոքի սրտին։ Իսկ իրոք, դա այդպես էր։ Ամբողջն սկսվեց այն բանից, որ Վոռնսկին ծիծաղեց կանանց գիմնազիաների վրա, համարելով դրանք անպետք, իսկ Աննան պաշտպանեց։ Վոռնսկին անհարգալից վերաբերվեց կանանց կրթությանն առհասարակ և ասաց, որ Գաննան, Աննայի հովանավորած անգլուհին, բնավ կարիք չունի ֆիզիկայի գիտության։

Այդ գրգռեց Աննային։ Նա այդ բանում տեսավ արհամարհական ակնարկ իր պարապմունքների առթիվ։ Եվ նա մտածեց ու ասաց այնպիսի մի ֆրազ, որը կհատուցեր Վոռնսկուն՝ Աննային պատճառած ցավի փոխարեն։

— Ես չեմ սպասում, որ դուք հիշեիք ինձ, հիշեիք իմ գաղցումները ինչպես կարող է հիշել դրանք սիրող մարդը, բայց ես սպասում էի սոսկ քաղաքավարի վերաբերմունքի,— ասաց Աննան։

Եվ իրոք, Վոռնսկին կարմրեց սրտնեղությունից ու ասաց ինչ-որ անախորժ բան։ Աննան չէր հիշում, թե ինքն ի՞նչ պատասխանեց նրան, բայց այստեղ Վոռնսկին, ինչ-որ բանի առթիվ, Աննային հայտնապես նույնպես ցավ պատճառելու ցանկությամբ, ասաց.

— Ինձ հետաքրքիր չէ ձեր աշառու վերաբերմունքն այդ աղջկան, այդ ճիշտ է, որովհետև ես տեսնում եմ, որ դա անբնական է։

Վոռնսկու այդ խստասրտությունը, որով նա կործանում էր այն աշխարհը, որ այնպիսի դժվարությամբ Աննան ստեղծել էր իր համար, որպեսզի կարողանա տանել իր ծանր կյանքը, Վոռնսկու այդ անարդարությունը, որով նա Աննային մեղադրում էր կեղծարարության, անբնականության մեջ, հանեցին Աննային ինքնատիրապետումից։

— Շատ ցավում եմ, որ ձեզ համար հասկանալի է ու բնական միայն կոպիտը և նյութականը,— ասաց Աննան ու դուրս գնաց սենյակից։

Երբ երեկ երեկոյան Վոռնսկին եկավ Աննայի մոտ, նրանք հիշատակություն չարին եղած վեճի մասին, սակայն երկուսն էլ զգում էին, որ վեճը հարթված է, բայց չի մոռացվել։

Այսօր Վոռնսկին տանը չէր ամբողջ օրը. և Աննան իրեն զգում էր այնպես միայնակ ու այնպես ծանր էր իր համար, որ կռված է նրա հետ, որ ուզում էր բոլորը մոռանալ, ներել և հաշտվել նրա հետ, ուզում էր մեղադրել իրեն ու արդարացնել նրան։

«Ես ի՞նքս եմ մեղավոր։ Ես դյուրաբորբոք եմ, ես անմտորեն խանդոտ եմ։ Ես կհաշտվեմ նրա հետ, և կերթանք գյուղ, այնտեղ ես կլինեմ ավելի հանգիստ», ասում էր Աննան ինքն իրեն։

«Անբնական է,— հիշեց հանկարծ Աննան իրեն ամենից ավելի վիրավորած ո՛չ այնքան այդ խոսքը, որքան իրեն ցավ պատճառելու դիտավորությունը։— Ես գիտեմ, թե նա ի՞նչ էր ուզում ասել. նա ուզում էր ասել՝ անբնական է, չսիրելով սեփական աղջկան, սիրել օտարի երեխային։ Ի՞նչ է հասկանում նա դեպի երեխաները տածած սիրուց, իմ սիրուց դեպի Սերյոժան, որին ես զոհաբերեցի նրա համար։ Բայց դա ինձ ցավ պատճառելու ցանկություն է միայն։ Ո՛չ, նա սիրում է ուրիշ կնոջ, այլ կերպ լինել չի կարող»։

Եվ տեսնելով, որ ինքն իրեն հանգստացնելու ցանկությամբ նա նորից կատարեց այնքան անգամներ անցած իր շրջանը ու վերադարձավ առաջվա գրգռմունքին, սոսկաց ինքն իրենից։ «Մի՞թե չի կարելի։ Մի՞թե ես չեմ կարող վերցնել ինձ վրա,— ասաց Աննան ինքն իրեն և նորից սկսեց սկզբից։— Նա արդարամիտ է, նա ազնիվ է, նա սիրում է ինձ։ Ես սիրում եմ նրան, մոտ օրերս կստացվի ապահարզանը։ Էլ ի՞նչ է պետք։

Պետք է հանգիստ, վստահություն, և ես դա կվերցնեմ ինձ վրա։ Այո՛, հիմա, երբ նա գա, կասեմ, որ մեղավորը ես էի, թեպետև մեղավոր չէի, ու մենք կգնանք այստեղից»։

Ու որպեսզի այլևս չմտածի և անձնատուր չլինի գրգռումներին, Աննան զանգահարեց ու հրամայեց բերել սնդուկները՝ իրերը դարսելու՝ գյուղ գնալու համար։

Ժամը տասին եկավ Վռոնսկին։

XXIV

— Է՛, ինչպե՞ս էր, ուրա՞խ էր,— հարցրեց Աննան, գեմքի մեղավոր ու հեզ արտահայտությամբ դուրս գալով նրան ընդառաջ։

— Սովորականի պես,— պատասխանեց նա, Աննայի վրա զցած մի հայացքից անմիջապես հասկանալով, որ նրա լավ տրամադրության պահերից մեկն է։ Վռոնսկին արդեն վարժվել էր այդ անցումներին և այսօր առանձնապես ուրախ էր դրա համար, որովհետև ինքն էլ ամենալավ տրամադրության էր։

— Ի՞նչ եմ տեսնում։ Այ դա լավ է,— ասաց նա, նշելով նախասենյակում դրած սնդուկները։

— Այո՛, պետք է գնալ։ Ես գնացել էի զբոսնելու, և այնպես լավ էր, որ ուզեցի գյուղ գնալ։ Հուսամ, ոչինչ չի խանգարում գնալու, չէ՞։

— Մի բան կուզենայի միայն։ Ես իսկույն կգամ, և կխոսենք, միայն հագուստս փոխեմ։ Հրամայիր, թող թեյ տան։

Եվ Վռոնսկին գնաց իր առանձնասենյակը։

Վիրավորական մի բան կար նրա ասածի մեջ՝ «Այ դա լավ է». այդպես ասում են երեխային, երբ նա վերջ է տալիս իր կամակորություններին. առավել ևս վիրավորական էր հակադրությունը Աննայի մեղավոր և Վռոնսկու ինքնավստահ տոնի միջև։ Ու Աննան մի վայրկյան զգաց իր մեջ բարձրացող պայքարի ցանկությունը. բայց ուժ գործ դնելով իր վրա, նա հաղթահարեց այն և Վռոնսկուն դիմավորեց նույնպես ուրախ։

Երբ Վռոնսկին վերադարձավ, Աննան պատմեց նրան իր անցկացրած օրը և գյուղ գնալու իր ծրագրերը, մասամբ կրկնելով նախապես պատրաստած խոսքերը։

— Գիտե՞ս, ես համարյա ներշնչված, ոգևորված եմ,—

ասում էր Աննան։— Ի՞նչ կարիք կա այստեղ սպասելու ապահարզանի։ Մի՞թե միևնույն բանը չէ գյուղում։ Ես չեմ կարող այլևս սպասել։ Ես չեմ ուզում հուսալ, ես ոչինչ չեմ ուզում լսել ապահարզանի մասին։ Ես վճռեցի, որ դա այլևս չպիտի ազդի իմ կյանքի վրա։ Համաձա՞յն ես դու։

— Օ՛, իհարկե,— ասաց Վռոնսկին, անհանգիստ նայելով նրա հուզված դեմքին։

— Ի՞նչ էիք անում դուք այնտեղ, ո՞վ կար,— հարցրեց Աննան, քիչ լռելուց հետո։

Վռոնսկին թվեց հյուրերի անունները։— Ճաշը հիանալի էր, և՛ նավամրցումը, և՛ մյուս բոլոր բաները բավական հաճելի էին, բայց Մոսկվայում չեն կարող առանց ridicule-ի[1]։ Հանդես եկավ ինչ-որ տիկին, շվեդական թագուհուն լողալ սովորեցնող ուսուցչուհին, և ցույց էր տալիս իր արհեստը։

— Ինչպե՞ս, լողո՞ւմ էր,— հարցրեց Աննան խոժոռվելով։

— Ինչ-որ կարմիր costume de natatons-ով[2], պառավ, այլանդակ մի կին։ Ուրեմն, ե՞րբ ենք գնում։

— Ի՞նչ տխմար ֆանտազիա։ Եվ ի՞նչ, նա ինչ-որ առանձնահատո՞ւկ էր լողում,— ասաց Աննան, առանց պատասխանելու։

— Բացարձակապես առանձին ոչինչ։ Դրա համար էլ ես ասում եմ, սոսկալի հիմար բան էր։ Ուրեմն դու ե՞րբ ես մտադիր գնալու։

Աննան ցնցեց գլուխը, կարծես կամենալով վանել իրենից անախորժ միտքը։

— Ե՞րբ գնալ։ Որքան շուտ, այնքան լավ։ Վաղը չենք հասցնի։ Մյուս օրը։

— Այո՛... ո՛չ, կաց։ Մյուս օրը կիրակի է, ես պետք է լինեմ maman-ի մոտ,— ասաց Վռոնսկին շփոթվելով, որովհետև հենց որ արտասանեց մոր անունը, իր վրա զգաց Աննայի սեռուն, կասկածելի հայացքը։ Նրա շփոթությունը հաստատեց Աննայի կասկածները։ Նա բռնկեց ու մեկդի քաշվեց Վռոնսկուց։ Այժմ արդեն Աննային պատկերացավ ո՛չ շվեդական թագուհու ուսուցչուհին, այլ իշխանազնուհի Սո-

[1] Տիծազելի բան։

[2] Լողանալու է-սայամ։

բակինան, որն ապրում էր կոմսուհի Վրոնսկայայի հետ՝ Մոսկվայի մոտ գտնվող գյուղում։

— Դու կարո՞ղ ես գնալ վաղը,— ասաց Աննան։

— Ո՛չ։ Այն գործով, որի համար ես գնում եմ, հավաստարմագրերն ու դրամը չեն կարող ստացվել վաղը,— պատասխանեց Վրոնսկին։

— Եթե այդպես է, մենք բոլորովին չենք գնում։

— Իսկ ինչո՞ւ։

— Դրանից ավելի ուշ չեմ գնա ես։ Երկուշաբթի կամ երբեք։

— Բայց ինչո՞ւ,— ասաց Վրոնսկին, կարծես զարմացած։— Չէ՞ որ դա իմաստ չունի։

— Քեզ համար իմաստ չունի, որովհետև դու գործ չունես ինձ հետ, չես հետաքրքրվում ինձնով։ Դու չես ուզում հասկանալ իմ կյանքը։ Միակ բանը, որ գրավում էր ինձ այստեղ, Դաննան էր։ Դու ասում ես, որ դա կեղծարարություն է։ Չէ՞ որ դու երեկ ասում էիր, որ ես չեմ սիրում աղջկաս, իսկ ձևանում եմ, իբր սիրում եմ այդ անգլուհուն, որ այդ անբնական է. ես կուզենայի իմանալ, թե կյանքի ի՞նչ եղանակ կարող է այստեղ ինձ համար լինել բնական։

Մի վայրկյան Աննան ուշքի եկավ ու սարսափեց, որ դավաճանեց իր մտադրությանը։ Բայց իմանալով հանդերձ, որ ինքը կործանում է իրեն, անկարող էր զսպել իրեն, անկարող էր ցույց չտալ Վրոնսկուն, թե ինչպես անիրավացի է նա, և թե ինչպես ինքը անկարող է հնազանդվել նրան։

— Ես երբեք այդպիսի բան չեմ ասել. ես ասում էի, որ չեմ համակրում այդ անակնկալ սերը։

— Ինչո՞ւ դու, որ պարծենում ես քո ուղղամտությամբ, չես ասում ճշմարտությունը։

— Ես երբեք չեմ պարծենում և երբեք սուտ չեմ ասում.— ասաց Վրոնսկին կամաց, զսպելով իր մեջ բարձրացող ցասումը։— Շատ ափսո՞ս, եթե դու չես հարգում...

— Հարգանքը հնարել են նրա համար, որպեսզի թաքցնեն այն դատարկ տեղը, որտեղ պետք է լինի սերը... Իսկ եթե դու այլևս չես սիրում ինձ, ավելի լավ և ազնիվ կլինի ուղղակի ասել այդ։

— Ո՛չ, այդ դառնում է անտանելի,— ճչաց Վրոնսկին, վեր կենալով աթոռից։ Ու կանգնելով Աննայի դիմաց, նա

դանդաղորեն ասաց.— Ինչի՞ համար ես դու փորձում իմ համբերությունը,— հարցրեց նա այնպիսի տոնով, կարծես կարող էր ասել էլի շատ բան, բայց զսպում էր իրեն։— Համբերությունը սահման ունի։

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով,— ճչաց Աննան, սոսկումով զննելով ատելության այն բացահայտ արտահայտությունը, որ կար նրա դեմքին, մանավանդ նրա դաժան, ահարկու աչքերում։

— Ես ուզում եմ ասել,— սկսեց Վրոնսկին, բայց կանգ առավ։— Ես պետք է հարցնեմ ձեզ՝ ի՞նչ եք ուզում ինձնից։

— Ի՞նչ կարող եմ ուզենալ ես։ Ես կարող եմ ուզենալ միայն մի բան, որ դուք չլքեք ինձ, ինչպես մտադիր եք,— ասաց Աննան, հասկանալով այն բոլորը, ինչ մինչև վերջ չասաց Վրոնսկին։— Բայց ես ա՛յդ չեմ ուզում, դա երկրորդական բան է։ Ես սեր եմ ուզում, իսկ սեր չկա։ Հետևաբար, ամեն ինչ վերջացել է։

Աննան դիմեց դեպի դուռը։

— Կա՛ց։ Սպա... սի՛ր,— ասաց Վրոնսկին, առանց բանալու հոնքերի մոայլ կնճիռը, բայց կանգնեցնելով Աննային, բռնելով նրա ձեռքից։— Բանն ի՞նչ է։ Ես ասացի, թե մեր մեկնումը պետք է հետաձգել երեք օրով, դու, որպես դրան պատասխան, ասացիր, որ ես ստում եմ, որ ես անազնիվ մարդ եմ։

— Այո՛ և կրկնում եմ. այն մարդը, որը կշտամբում է ինձ, թե ամեն ինչ զոհաբերել է ինձ համար,— ասաց Աննան, մտաբերելով առաջվա վեճի խոսքերը,— ավելի վատ է, քան անազնիվ մարդը,— նա մարդ է՝ առանց սրտի։

— Ո՛չ, համբերությունը սահման ունի,— ճչաց Վրոնսկին և արագ բաց թողեց նրա ձեռքը։

«Նա ատում է ինձ, այդ պարզ է», մտածեց Աննան և լուռ, առանց ետ նայելու, երերուն քայլերով դուրս գնաց սենյակից։ «Նա սիրում է ուրիշ կնոջ, այդ ավելի ևս պարզ է», մտածեց Աննան, մտնելով իր սենյակը։ «Ես սեր եմ ուզում, իսկ սեր չկա։ Հետևաբար, ամեն ինչ վերջացած է,— կրկնեց նա իր ասած խոսքերը,— և պետք է վերջացնել»։

«Բայց ինչպե՞ս»,— հարցրեց Աննան ինքն իրեն ու նստեց բազկաթոռին՝ հայելու առաջ։

Այն միտքը, թե ո՞ւր կգնա այժմ ինքը,— արդյոք հորաքրո՞ջ, որի մոտ դաստիարակվել էր, Դո՞լլիի մոտ, թե՞ ուղղակի մենակ կգնա արտասահման, և ի՞նչ է անում նա հիմա, մենակ առանձնասենյակում, արդյոք վերջնակա՞ն է այդ գժտությունը, թե՞ հնարավոր է դեռ հաշտություն, ի՞նչ կասեն այժմ իր մասին պետերբուրգյան իր նախկին բոլոր ծանոթները, ինչպե՞ս կնայի դրա վրա Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, և ուրիշ շատ մտքեր այն մասին, թե ի՞նչ կլինի այժմ խզումից հետո, խուժում էին նրա գլուխը, բայց նա այդ մտքերին անձնատուր էր լինում ո՛չ ամբողջ հոգով։ Նրա հոգում կար ինչ-որ աղոտ միտք, միակ միտքը, որ հետաքրքրում էր նրան, սակայն նա չէր կարողանում գիտակցել այն։ Մի անգամ էլ հիշելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մասին, նա հիշեց նաև իր ծննդաբերությանը հաջորդող ժամանակը և այն զգացումը, որն այն ժամանակ չէր հեռանում նրա սրտից։ «Ինչո՞ւ չմեռա ես», մտաբերեց նա իր այն ժամանակվա խոսքերը և այն ժամանակվա զգացումը։ Ու հանկարծ նա հասկացավ այն, ինչ կար իր հոգում։ Այո՛, այդ այն միտքն էր, միակ միտքը, որ լուծում էր ամեն ինչ։ «Այո՛, մեռնե՛լ»...

«Ալեքսեյ Ալեքսանդրովիչի և Սերյոժայի ամոթն ու խայտառակությունը, և իմ սոսկալի ամոթը՝ բոլորը, բոլորը փրկվում է մահվամբ։ Մեռնե՛լ՝ և նա կզղջա, կափսոսա, կսիրի, կտանջվի ինձ համար»։ Դեպի ինքն իրեն ունեցած կարեկցության սառած ժպիտով Աննան նստել էր բազկաթոռին, հանելով ու նորից դնելով ձախ ձեռքի մատանիները, վառ կերպով զանազան կողմերից պատկերացնում էր իր մահից հետո նրա զգացումները։

Մոտեցող քայլերը, նրա քայլերը, ուշադրավեցին Աննային։ Իբրև թե զբաղված իր մատանիների դասավորությամբ, Աննան նույնիսկ շուռ չեկավ դեպի նա։

Վրոնսկին մոտեցավ Աննային ու վերցնելով նրա ձեռքը, կամաց ասաց.

— Աննա, գնանք վաղը չէ մյուս օրը, եթե ուզում ես։ Ես համաձայն եմ ամեն բանի։

Աննան լուռ էր։

— Ի՞նչ կասես,— հարցրեց նա։

— Դու գիտես,— ասաց Աննան և հենց նույն րոպեին, անկարող լինելով այլևս դիմանալու, հեկեկաց։

— Գցի՛ր ինձ, գցի՛ր,— ասում էր Աննան հեկեկանքների միջից։— Վաղը ես կգնամ, կհեռանամ... Ես կանեմ ավելին։ Ո՞վ եմ ես. անառակ մի կին։ Քո վզից կախած քար։ Ես չեմ ուզում տանջել քեզ, չեմ ուզում։ Ես կազատեմ քեզ։ Դու ինձ չես սիրում, դու սիրում ես ուրիշին։

Վրոնսկին ազաչում էր նրան հանգստանալ և հավատացնում էր, որ նրա խանդը չունի հիմքի նշույլ անգամ, որ ինքը երբեք չի դադարել ու չի դադարի նրան սիրելուց, որ սիրում է ավելի, քան սիրում էր առաջ։

— Աննա, ինչի՞ համար ես այդպես տանջում քեզ և ինձ,— ասում էր Վրոնսկին, համբուրելով նրա ձեռքերը։ Վրոնսկու դեմքին այժմ արտահայտվում էր քնքշություն, և Աննային թվում էր, որ ինքը լսում է նրա ձայնի մեջ արցունքների հնչյուն ու իր ձեռքի վրա զգում էր նրանց թացությունը։ Եվ Աննայի հուսահատական խանդը վայրկենապես փոխվեց հուսահատական, մոլի քնքշության. նա գրկում էր Վրոնսկուն, համբույրներով ծածկում էր նրա գլուխը, պարանոցը, ձեռքերը։

XXV

Զգալով, որ հաշտությունը լիակատար էր, Աննան առավոտվանից սկսեց աշխուժորեն պատրաստվել գյուղ գնալու համար։ Թեպետև վճռված չէր, արդյոք իրենք գնում են երկուշաբթի՞, թե՞ երեքշաբթի, որովհետև երկու կողմերն էլ երեկ պիջում էին իրար, Աննան եռանդով պատրաստվում էր ճանապարհվելու, միանգամայն անտարբեր զգալով՝ մի օրով շո՞ւտ կմեկնեն, թե՞ ուշ։ Նա կանգնած էր իր սենյակում բաց սնդուկի առաջ, ջոկելով իրերը, երբ Վրոնսկին, արդեն պատրաստ, սովորականից ավելի վաղ մտավ նրա մոտ։

— Ես հիմա կգնամ maman-ի մոտ, նա կարող է ինձ դրամ ուղարկել Յգորովի հետ։ Եվ վաղը ես պատրաստ եմ գնալու,— ասաց Վրոնսկին։

Որքան էլ Աննան լավ էր տրամադրված, այնուամենայնիվ՝ մոր մոտ՝ ամառանոց գնալու հիշատակությունը խոցեց նրան։

— Ո՛չ, ես ինքս էլ չեմ հասցնի,— ասաց նա և անմիջապես մտածեց. «ուրեմն կարելի էր դասավորել այնպես, որպեսզի լիներ այն, ինչ ե՛ս կի ուզում»։— Ո՛չ, ինչպես դու ուզում էիր, այնպես էլ արա։ Գնա սեղանատուն, ես իսկույն կգամ, ջոկեմ միայն այս անպետք իրերը,— ասաց նա, էլի մի բան գցելով Աննուշկայի թևին, որի վրա արդեն բարձրացել էր հին ու մին կտորների ամբողջ սար։

Վրոնսկին ուտում էր իր բիֆշտեքսը, երբ Աննան մտավ սեղանատուն։

— Չես հավատա, թե ինչպես զզվելի են դարձել ինձ համար այս սենյակները,— ասաց նա, նստելով Վրոնսկու կողքին, իր սուրճի առաջ։— Չկա ոչինչ ավելի սոսկալի բան, քան այս chambres garnies-ը[1]։ Սրանք չունեն դեմք, չունեն արտահայտություն, հոգի։ Այդ ժամացույցը, վարագույրները, և, որ գլխավորն է՝ պաստառները՝ սոսկալի են։ Ես մտածում եմ Վոզդվիժենսկոյի մասին, որպես ավետյաց երկրի մասին։ Դու դեռ չե՞ս ուզարկում ձիերը։

— Ո՛չ, նրանք կգնան մեզնից հետո։ Իսկ դու գնալո՞ւ ես որևէ տեղ։

— Ես ուզում էի գնալ Վիլսոնի մոտ։ Հարկավոր է զգեստներս տանել նրան։ Ուրեմն վճռականապես վա՞ղը,— հարցրեց Աննան ուրախ ձայնով. բայց հանկարծ նրա դեմքը փոխվեց։

Վրոնսկու կամերդիները եկավ խնդրելու Պետերբուրգից ուղարկված հեռագրի ստացականը։ Առանձին ոչինչ չկար այն բանում, որ Վրոնսկին հեռագիր էր ստացել, բայց նա, կարծես թե կամենալով մի բան թաքցնել Աննայից, ասաց, որ ստացականն առանձնասենյակում է, և շտապ դիմեց Աննային.

— Անպայման վաղը կվերջացնեմ ամեն բան։

— Ումի՞ց է հեռագիրը,— հարցրեց Աննան, լսելով նրան։

— Ստիվայից,— պատասխանեց նա ո՛չ սիրահոժար։

— Հապա ինչո՞ւ ցույց չտվիր ինձ։ Ի՞նչ գաղտնիք կարող է լինել իմ ու Ստիվայի միջև։

Վրոնսկին ետ կանչեց կամերդիներին և հրամայեց բերել հեռագիրը։

[1] Կահավորված սենյակներ։

— Ես չէի ուզում ցույց տալ, որովհետև Ստիվան հեռագրելու սիրահար է. ի՞նչ հեռագրելու բան կա, երբ ոչինչ որոշված չէ։

— Ապահարզանի մասի՞ն է։

— Այո՛, բայց նա գրում է՝ դեռ ոչինչ չի արել։ Խոստացել է այս օրերս տալ վճռական պատասխան. Ահա՛, կարդա՛։

Աննան դողդոջուն ձեռքերով վերցրեց հեռագիրը և կարդաց այն, ինչ ասաց Վրոնսկին։ Վերջում ավելացրած էր. «քիչ հույս կա, բայց ես կանեմ հնարավոր և անհնարին ամեն ինչ»։

— Երեկ ես ասացի, որ ինձ համար բոլորովին միևնույն է, թե երբ կստանամ ապահարզան, և նույնիսկ կստանա՞մ արդյոք,— ասաց Աննան կարմրելով։— Ո՛չ մի կարիք չկար ինձնից ծածկելու։ «Այդպես նա կարող է ծածկել ու ծածկում է ինձնից իր նամակագրությունը կանանց հետ», մտածեց Աննան։

— Ցաշվինն ուզում էր գալ այսօր առավոտյան Վոյտովի հետ,— ասաց Վրոնսկին.— կարծեմ, նա Պեցովից տարել է բոլորը. նույնիսկ ավելի, քան Պեցովը կարող է վճարել,— մոտ վաթսուն հազար։

— Ո՛չ,— ասաց Աննան, զրգռված այն հանգամանքից, որ Վրոնսկին խոսակցությունն այդպես փոխելով ցույց էր տալիս, թե նա՝ Աննան գրգռված է,— իսկ ինչո՞ւ ես կարծում, թե այդ լուրն այնպես հետաքրքրում է ինձ, որ հարկավոր է նույնիսկ ծածկել։ Ես ասացի, որ չեմ ուզում մտածել այդ մասին ու կկամենայի, որպեսզի դու ևս այնպես քիչ հետաքրքրվեիր դրանով, ինչպես ես։

— Ես հետաքրքրվում եմ այն պատճառով, որ սիրում եմ պարզություն,— ասաց Վրոնսկին։

— Պարզություն ո՛չ թե ձևի մեջ, այլ սիրո,— վրա բերեց Աննան, ավելի ու ավելի գրգռվելով ո՛չ թե նրա խոսքերից, այլ այն սառը, հանգիստ տոնից, որով խոսում էր նա։— Ինչի՞ համար ես կամենում այդ։

«Աստվա՛ծ իմ, դարձյալ սիրո մասին», մտածեց Վրոնսկին կնճռոտվելով։

— Չէ՞ որ դու գիտես, թե ինչի՞ համար. բե՛ղ համար և երեխաների համար, որոնք կլինեն,— ասաց Վրոնսկին։

— Երեխաներ չեն լինի։

— Շատ ափսո՛ս,— ասաց նա։

— Քեզ այդ պետք է երեխաների համար. իսկ իմ մասին դու չե՞ս մտածում,— ասաց Աննան, բոլորովին մոռանալով ու չլսելով, որ նա ասաց՝ քեզ համար և երեխաների համար։

Երեխաներ ունենալու հնարավորության հարցը վաղուց դարձել էր վիճելի ու գրգռում էր Աննային։ Երեխաներ ունենալու նրա ցանկությունն Աննան բացատրում էր այն հանգամանքով, որ Վրոնսկին չէր խնայում, ափսոսում նրա գեղեցկությունը։

— Ա՜խ, ես ասացի՝ քե՛զ համար։ Ամենից ավելի քե՛զ համար,— կրկնեց նա, կնճռոտվելով կարծես ցավից,— որովհետև ես համոզված եմ, որ քո գրգռվածությունը մեծ մասամբ առաջանում է վիճակի անորոշությունից։

«Այո՛, ահա նա դադարեց ձևանալուց, և երևում է նրա գլխի ինձ տածած ամբողջ սառն ատելությունը», մտածեց Աննան, լսելով նրա խոսքերը, բայց սոսկումով գննելով այն սառն ու դաժան դատավորին, որը նրա աչքերի միջից նայում էր Աննային, բորբոքելով նրան։

— Պատճառն ա՛յդ չէ,— ասաց Աննան,— և նույնիսկ ես չեմ հասկանում, թե ինչպե՛ս կարող է իմ գրգռմունքի պատճառը լինել, ինչպես դո՛ւ ես ասում, այն, որ ես կատարելապես գտնվում եմ քո իշխանության տակ։ Վիճակի ի՞նչ անորոշություն կա այստեղ, ընդհակառակն։

— Շատ ցավում եմ, որ դու չես ուզում հասկանալ,— ընդհատեց նա Աննային, համառորեն կամենալով մինչև վերջ արտահայտել իր միտքը.— անորոշությունն այն է, որ դու կարծում ես, թե ես ազատ եմ։

— Այդ առթիվ կարող ես բոլորովին հանգիստ լինել,— ասաց Աննան և, երեսը շուռ տալով նրանից, սկսեց խմել ուրբը։

Աննան ազատելով ճկույթը, բարձրացրեց գավաթը և մոտեցրեց բերանին։

Մի քանի կում խմելուց հետո նա նայեց Վրոնսկուն և նրա դեմքի արտահայտությունից պարզ հասկացավ, որ նրա համար զզվելի էին իր ձեռքը, շարժումը և այն հնչյունը, որ ինքն առաջացնում էր շրթունքներով։

— Ինձ համար բոլորովին միևնույն է, թե ի՞նչ է մտածում քո մայրը և ինչպե՞ս է ուզում ամուսնացնել քեզ,— ասաց Աննան դողդոջուն ձեռքով ցած դնելով գավաթը։

— Բայց մենք խոսում էինք ո՞չ դրա մասին։

— Ո՞չ, հենց դրա՛ մասին։ Եվ հավատա, որ ինձ համար հետաքրքրական չէ անսիրտ կինը, լինի նա պառավ, թե ո՞չ պառավ, լինի նա քո մայրը, թե օտար մի կին, և ես չեմ ուզում ճանաչել նրան։

— Աննա, ես խնդրում եմ քեզ անհարգալից չխոսել իմ մոր մասին։

— Մի կին, որ իր սրտով չզուշակեց, թե ինչի՛ մեջ է իր որդու երջանկությունն ու պատիվը, նա սիրտ չունի։

— Ես կրկնում եմ իմ խնդիրը. անհարգալից չխոսել իմ մոր մասին, որին ես հարգում եմ,— ասաց Վրոնսկին, բարձրացնելով ձայնը և նայելով նրան խստահայաց։

Աննան չպատասխանեց։ Շեշտակի նայելով նրան, նրա դեմքին, ձեռքերին, Աննան ամենայն մանրամասնությամբ հիշեց երեկվա հաշտության տեսարանը և նրա մոլեկիրք շոյանքները։ «Այդ և ճիշտ այդպիսի գգվանքներ նա շռայլաբար վատնել է, կվատնի և ուզում է վատնել ուրիշ կանանց վրա», մտածում էր Աննան։

— Դու չե՞ս սիրում մորդ։ Այս բոլորը ֆրազներ են, ֆրազներ և ֆրազներ,— ասաց նա, ատելությամբ նայելով Վրոնսկուն։

— Իսկ եթե այդպես է, ուրեմն հարկավոր է...

— Հարկավոր է վճռե՛լ, ու ես վճռե՛լ եմ,— ասաց Աննան և ուզում էր դուրս գնալ, բայց այդ րոպեին սենյակ մտավ Ցաշվինը։ Աննան բարևեց նրան ու կանգ առավ։

Ինչի՞ համար,— երբ Աննայի հոգում մոլեգնում էր փոթորիկը և նա զգում էր, որ կանգնած է կյանքի շրջադարձի վրա, որը կարող է ունենալ սոսկալի հետևանքներ,— ինչի՞ համար նա այդ րոպեին պիտի ձևանար օտար մի մարդու առաջ, որը վաղ թե ուշ իմանալու է բոլորը,— Աննան չգիտեր. բայց անմիջապես ճնշելով իր մեջ ներքին փոթորիկը, նա նստեց ու սկսեց խոսել հյուրի հետ։

— Ինչպե՞ս են ձեր գործերը, ստացա՞ք ձեր պարտքը,— հարցրեց նա Ցաշվինին։

— Ոչի՞նչ. երևում է ամբողջը չեմ ստանա, մինչդեռ չորեքշաբթի պետք է գնալ։ Իսկ դո՞ւք երբ,— հարցրեց Յաշվինը, խոժոռված նայելով Վռոնսկուն և, ըստ երևույթին, կռահելով տեղի ունեցած վեճի մասին։

— Կարծեմ, վաղը չէ մյուս օրը,— ասաց Վռոնսկին։

— Սակայն դուք վաղուց արդեն պատրաստվում եք։

— Բայց այժմ արդեն վճռականապես,— ասաց Աննան, ուղիղ նայելով Վռոնսկու աչքերին այնպիսի հայացքով, որն ասում էր նրան, որ նա բնավ չմտածեր հաշտության հնարավորության մասին։

— Մի՞թե դուք չեք խղճում այդ դժբախտ Պետրովին,— շարունակեց Աննան իր խոսակցությունը Յաշվինի հետ։

— Երբեք հարց չեմ տվել ինձ, Աննա Արկադևնա, խղճո՞ւմ եմ, թե չեմ խղճում։ Չէ՞ որ իմ ամբողջ կարողությունն այստեղ է,— նա նշեց իր կողքի գրպանը,— և այժմ ես հարուստ եմ, իսկ այսօր կգնամ ակումբ և, կարող է պատահել, որ այնտեղից դուրս գնամ աղքատացած։ Չէ՞ որ ով նստում է ինձ հետ խաղալու, նույնպես ուզում է ինձ թողնել առանց շապկի, ես էլ՝ նրա՛ն։ Եվ մենք պայքարում ենք, ու հենց դրա մեջ է բավականությունը։

— Իսկ եթե դուք ամուսնացած լինեիք,— ասաց Աննան,— ինչպե՞ս կզգար իրեն ձեր կինը։

Յաշինը ծիծաղեց։

— Երևի, այդ է պատճառը, որ չեմ ամուսնացել և երբեք էլ մտադրություն չեմ ունեցել։

— Իսկ Հելսինգֆո՞րսը,— ասաց Վռոնսկին, մասնակցելով խոսակցությանը և նայեց ժպտացող Աննային։

Հանդիպելով նրա հայացքին, Աննայի դեմքը հանկարծ ընդունեց սառը-խիստ արտահայտություն, կարծես նա ասում էր Վռոնսկուն. «Չի՛ մոռացվել. էլի նույնն է»։

— Մի՞թե դուք սիրահարված եք եղել,— ասաց Աննան Յաշվինին։

— Օ՜, աստված իմ, այն էլ քանի՜, քանի անգամ։ Բայց, հասկանո՞ւմ եք, մեկը կարող է նստել թղթախաղի, սակայն այնպես, որ միշտ վեր կենա, երբ rendez vous-ի[1] ժամանակը

[1] Ժամադրություն։

հասնի։ Իսկ ես կարող եմ զբաղվել սիրով, բայց այնպես, որ երեկոյան չուշանամ թղթախաղին։ Այդպես էլ անում եմ։

— Ո՛չ, ես այդ մասին չեմ հարցնում, այլ հարցնում եմ ներկայի մասին։— Աննան ուզում էր ասել Հելսինգֆորս, բայց չէր ուզում արտասանել Վռոնսկու ասած խոսքը։

Եկավ Վոյտովը, որ գնել էր հովատակը. Աննան վեր կացավ ու դուրս գնաց սենյակից։

Տանից դուրս գնալուց առաջ Վռոնսկին մտավ Աննայի մոտ։ Աննան ուզում էր ձևանալ, իբր մի բան է որոնում սեղանի վրա, բայց ամաչելով ձևանալուց, ուղիղ նայեց նրա դեմքին սառը հայացքով։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց Աննան ֆրանսերեն։

— Ուզում եմ վերցնել Գամբետի վկայագիրը. ծախեցի ձին,— ասաց Վռոնսկին այնպիսի տոնով, որը բառերից ավելի պարզ էր արտահայտում հետևյալը. «Ես բացատրվելու ժամանակ չունեմ, և դա ոչնչի էլ չի հանգի»։

«Ես ո՛չ մի բանում մեղավոր չեմ նրա առաջ,— մտածում էր Վռոնսկին։— Եթե նա ուզում է ինքն իրեն պատժել, tant pis pour elle[2]։ Բայց դուրս գնալիս՝ Վռոնսկուն թվաց, որ Աննան մի բան ասաց, և հանկարծ նրա սիրտը ցնցվեց Աննային կարեկցելու զգացումից։

— Ի՞նչ, Աննա,— հարցրեց նա։

— Ոչինչ,— պատասխանեց Աննան նույնպես սառը և հանգիստ։

«Ա՜, ոչինչ այդպես tant pis», մտածեց Վռոնսկին, նորից սառելով, շուտ եկավ և դուրս գնաց։ Դուրս գնալիս նա հայելու մեջ տեսավ Աննայի դեմքը՝ գունատ, դողդոջուն շուրթերով։ Նա ուզում էր կանգ առնել ու մխիթարական խոսք ասել Աննային, բայց ոտքերը նրան դուրս տարան սենյակից ավելի շուտ, քան նա կմտածեր, թե ի՛նչ ասի։ Այդ ամբողջ օրը նա անցկացրեց տանից դուրս և երբ եկավ ուշ երեկոյան, աղախինն ասաց, որ Աննա Արկադևնայի գլուխը ցավում է, և նա խնդրել է չմտնել իր մոտ։

[2] Ավելի վատ իր համար։

XXVI

Երբեք դեռ չէր պատահել, որ ամբողջ օրն անցներ զբաղված դրությամբ։ Այսօր այդ առաջին անգամ էր։ Եվ դա զբաղություն չէր։ Դա բացահայտ խոստովանք էր կատարված սառնության։ Մի՞թե կարելի էր նրան նայել այնպես, ինչպես նայեց Վռոնսկին, երբ մտնում էր սենյակ՝ վկայագրի համար. նայել նրան, տեսնել, որ նրա սիրտը կտոր-կտոր է լինում հուսահատությունից և լուռ անցնել-գնալ այդպիսի անտարբերհանգի՞ստ դեմքով։ Վռոնսկին ոչ թե սառել էր դեպի Աննան, այլ ատում էր նրան, որովհետև սիրում էր ուրիշ կնոջ, դա պարզ էր։

Ու մտաբերելով բոլոր այն դաժան խոսքերը, որ ասաց նա, Աննան հնարում էր այն խոսքերն էլ, որոնք նա, հավանորեն, կամենում էր ու չէր կարող ասել, և գրգռվում էր ավելի ու ավելի։

«Ես ձեզ չեմ պահում,— կարող էր ասել նա՝ Վռոնսկին։— Դուք կարող եք գնալ, ուր ուզում եք։ Դուք չէիք ուզում բաժանվել ձեր ամուսնուց երևի նրա համար, որ վերադառնաք նրա մոտ։ Վերադարձեք։ Եթե ձեզ դրամ է պետք, ես կտամ։ Ձեզ քանի՞ ռուբլի է պետք»։

Բոլոր այն դաժան խոսքերը, որ կարող էր ասել կոպիտ մարդը, Վռոնսկին ասաց նրա երևակայության մեջ, և Աննան չէր ներում այդ խոսքերը, կարծես թե նա իրոք ասել էր։

«Մի՞թե հենց երեկ չէր, որ նա հավաստիացնում էր սիրո մեջ, նա՝ այդ արդարամիտ և ազնիվ մարդը։ Մի՞թե ես իզուր չեմ հուսահատվել արդեն շատ ու շատ անգամ», ասում էր դրանից հետո Աննան ինքն իրեն։

Այդ ամբողջ օրը, չհաշված Վիլսոնի մոտ գնալը, որը նրանից խլեց երկու ժամ, Աննան անցկացրեց կասկածների մեջ այն մասին, արդյոք ամեն բան վերջացա՞ծ է, թե՞ կա հաշտության հույս, արդյոք պետք է որ ինքն իսկույն գնա-հեռանա՞, թե՞ էլի մի անգամ տեսնի նրան։ Աննան սպասում էր նրան ամբողջ ցերեկը և երեկոն, գնալով իր սենյակը, հրամայելով հայտնել նրան, թե իր գլուխը ցավում է, ուզում էր դուշակել. «Եթե նա գա, չնայած աղախնի խոսքերին, ուրեմն դեռ սիրում է։ Իսկ եթե չգա, ուրեմն ամեն ինչ վերջացած է, և այն ժամանակ ես կվճռեմ, թե ի՞նչ պիտի անեմ»...

Աննան երեկոյան լսեց կանգ առնող նրա կառքի թխկոցը, նրա տված զանգի ձայնը, նրա քայլերը և խոսակցությունն աղախնի հետ. նա հավատաց այն բանին, ինչ ասացին նրան, չէր ուզում ուրիշ ոչինչ իմանալ ու գնաց իր սենյակը։ Ուրեմն ամեն բան վերջացած էր։

Եվ մահը, որպես միակ միջոցը՝ վերականգնելու Վռոնսկու սրտում իր հանդեպ սերը, պատժելու Վռոնսկուն ու հաղթանակելու այն պայքարում, որ մղում էր Վռոնսկու դեմ իր սրտում բույն դրած չար ոգին, պարզ ու վառ կերպով պատկերացավ Աննային։

Այժմ արդեն միևնույն էր՝ գնա՞լ, թե՞ չգնալ Վոզդվիժենսկոյե, ապահարզան ստանա՞լ, թե՞ չստանալ ամուսնուց,— բոլորը, բոլորը պետք չէր այլևս։ Պետք էր միայն մի բան՝ պատժել նրան։

Երբ Աննան լցրեց իր համար սովորական ափիոնի կաթիլները և մտածեց այն մասին, թե հերիք է միայն խմել ամբողջ սրվակը, ու մահը պատրաստ է, նրան այդ թվաց այնքան հեշտ ու հասարակ բան, որ նա նորից սկսեց հրճվանքով մտածել այն մասին, թե Վռոնսկին ինչպես կտանջվի, կզղջա և կսիրի իր հիշատակը, երբ արդեն ուշ կլինի։ Աննան պառկել էր անկողնում բաց աչքերով և մարելամոտ մի մոմի լույսի տակ դիտում էր առաստաղի ծեփովի կառնիզներն ու սրա մի մասը ծածկող շիրմայի ստվերը և վառ կերպով պատկերացնում իրեն, թե ի՞նչ կզգա Վռոնսկին, երբ ինքը (Աննան) այլևս չի լինի ու կդառնա նրա համար հիշողություն միայն։ «Ինչպե՞ս կարող էի ես ասել նրան այդ դաժան խոսքերը», կասի Վռոնսկին։ «Ինչպե՞ս կարող էի ես դուրս գնալ սենյակից, ոչինչ չասելով նրան։ Բայց այժմ արդեն նա չկա։ Նա ընդմիշտ հեռացավ մեզանից։ Նա այնտեղ է»... Հանկարծ շիրմայի ստվերն օրորվեց, ծածկեց բոլոր կառնիզները, ամբողջ առաստաղը, մյուս կողմից ուրիշ ստվերներ թափով վազեցին նրան ընդառաջ, մի վայրկյան ստվերները փախան, բայց հետո նոր թափով եկան, վրա ընկան, օրորվեցին, միացան իրար, ու խավարը պատեց ամեն ինչ։ «Մա՜հ», մտածեց նա։ Եվ նրան համակեց այնպիսի մի սարսափ, որ նա երկար

ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե որտե՞ղ է ինքը, և երկար ժամանակ չէր կարողանում դողդոջուն ձեռքերով գտնել լուցկին ու վառել ուրիշ մոմ՝ վառված ու մարած մոմի փոխարեն։ «Ո՜չ, ինչ ուզում լինի, միայն թե ապրել։ Չէ՞ որ ես սիրում եմ նրան։ Չէ՞ որ նա սիրում է ինձ։ Այդ եղավ ու կանցնի»,— ասում էր Աննան, զգալով, որ իր այտերից հոսում են դեպի կյանք վերադառնալու ցնծության արցունքներ։ Եվ որպեսզի աղատվի այդ վախից, նա շտապ գնաց Վրոնսկու առանձնասենյակը։

Վրոնսկին պինդ քնած էր առանձնասենյակում։ Աննան մոտեցավ ու վերևից լուսավորելով նրա դեմքը, երկար նայում էր նրան։ Այժմ, երբ նա քնած էր, Աննան սիրում էր նրան այնպես, որ տեսնելով նրան, անկարող էր զսպելու քնքշության արցունքները, բայց նա գիտեր, որ եթե Վրոնսկին զարթներ, կնայեր իրեն սառը, իր իրավացի լինելը գիտակցող հայացքով, և որ, նախքան ասելու նրան իր սիրո մասին, ինքը պետք է ապացուցեր նրան, թե ինչպես մեղավոր է նա, Վրոնսկին իր առաջ։ Աննան, առանց արթնացնելու նրան, վերադարձավ իր սենյակը և երկրորդ անգամ ափիոն ընդունելուց հետո՝ առավոտյան դեմ քնեց ծանր, կիսատ քնով, որի ամբողջ տևողության ընթացքում նա չէր դադարում զգալ իրեն։

Առավոտյան սոսկալի այն կոշմարը, որը մի քանի անգամ կրկնվել էր երազի մեջ՝ Վրոնսկու հետ կապվելուց դեռ առաջ, նորից պատկերացավ ու արթնացրեց նրան։ Գզգզված մորուքով ծերուկն ինչ-որ բան էր անում, կռացած երկաթի վրա, ասելով անմիտ ֆրանսերեն խոսքեր, և Աննան, ինչպես միշտ՝ այդ կոշմարի դեպքում (որը նրա սոսկանքն էր) զգում էր, որ այդ մուժիկն ուշադրություն չի դարձնում իր (Աննայի) վրա, բայց անում է ինչ-որ սոսկալի բան երկաթի մեջ՝ իր հետ։ Եվ Աննան զարթնեց պաղ քրտինքի մեջ։

Երբ նա վեր կացավ, հիշեց, ասես՝ մուժի մեջ, երեկվա օրը։

«Վեճ կար։ Եղավ այն, ինչ արդեն եղել էր մի քանի անգամ։ Ես ասացի, որ գլուխս ցավում է, և նա չեկավ ինձ մոտ։ Վաղը մենք գնում ենք, պետք է տեսնել նրան ու պատրաստվել ճանապարհվելու համար», մտածեց Աննան։ Եվ իմանալով, որ Վրոնսկին առանձնասենյակումն է, Աննան գնաց նրա մոտ։

Անցնելով ընդունարանից, Աննան լսեց, որ գլխավոր մուտքի առաջ կանգնեց մի կառք, և նայելով պատուհանից դուրս, տեսավ կառքը, որի միջից կիսով չափ երևում էր ջահել մի աղջիկ՝ մանուշակագույն գլխարկով ու ինչ-որ բան էր հրամայում զանգահարող ծառային։ Նախասենյակում տեղի ունեցած բանակցություններից հետո մեկը բարձրացավ վերև, ու ընդունարանի կողքին լսվեցին Վրոնսկու քայլերը։ Նա արագ քայլերով իջնում էր սանդուղքներից։ Աննան նորից մոտեցավ լուսամուտին։ Ահա Վրոնսկին առանց գլխարկի դուրս եկավ մուտքի դռնից և մոտեցավ կառքին։ Մանուշակագույն գլխարկով ջահել աղջիկը տվեց նրան մի ծրար։ Վրոնսկին ժպտալով մի բան ասաց աղջկան։ Կառքը գնաց-հեռացավ։ Վրոնսկին արագ վազեց, ետ դարձավ սանդուղքներով։

Հանկարծ ցրիվ եկավ այն մառախուղը, որ ամեն բան քողարկել էր Աննայի հոգում։ Երեկվա զգացումները նոր ցավով ճմլեցին նրա հիվանդ սիրտը։ Նա չէր կարողանում հասկանալ այժմ, թե ինչպե՞ս կարող է ինքն ստորանալ այն աստիճան, որ ամբողջ օրն անցկացնի Վրոնսկու հետ՝ Վրոնսկու տանը։ Նա գնաց Վրոնսկու առանձնասենյակը, որ հայտնի նրան իր որոշումը։

— Սորոկինան էր եկել դստեր հետ, ինձ դրամ ու գրություններ բերեց maman-ից։ Երեկ ես չկարողացա ստանալ։ Ինչպե՞ս է գլուխդ, լա՞վ է,— ասաց Վրոնսկին հանգիստ, չկամենալով տեսնել և հասկանալ Աննայի դեմքի մռայլ ու հաղթական արտահայտությունը։

Աննան լուռ, շեշտակի նայում էր նրան, կանգնած սենյակի մեջտեղում։ Վրոնսկին նայեց նրան, մի վայրկյան խոժոռվեց ու շարունակեց կարդալ նամակը։ Աննան շուռ եկավ ու սկսեց դանդաղ դուրս գնալ սենյակից։ Վրոնսկին դեռ կարող էր վերադարձնել նրան, բայց Աննան մոտեցավ դռանը, Վրոնսկին տակավին լուռ էր, և լսվում էր միայն շուռ տրվող թղթի թերթի շրշյունը։

— Հա՜, ի դեպ,— ասաց Վրոնսկին այն ժամանակ, երբ Աննան արդեն դռան մեջ էր,— վճռականապես վաղը գնո՞ւմ ենք. այնպես չէ՞։

— Դո՜ւք, բայց ո՜չ ես,— ասաց Աննան, շուռ գալով դեպի նա։

— Աննա, այդպես անհնարին է ապրել...

— Դո՛ւք, բայց ո՛չ ես,— կրկնեց նա։

— Այդ անտանելի է դառնում։

— Դուք... դուք կզգաք այդ բանում,— ասաց Աննան և դուրս գնաց։

Վախեցած հուսահատական այն արտահայտությունից, որով ասվեցին այդ խոսքերը, Վրոնսկին թռավ տեղից և ուզում էր վազել նրա ետևից, բայց սթափվելով, նորից նստեց ու ատամներն ամուր սեղմելով, մթագնեց։ Այդ անվայելուչ սպառնալիքը, ինչպես կարծում էր Վրոնսկին, մի տեսակ գրգռեց նրան։ «Ես փորձեցի ամեն ինչ,— մտածեց նա,— մնում է մի բան՝ ուշադրություն չդարձնել», և նա սկսեց պատրաստվել՝ գնալ քաղաք ու նորից մոր մոտ, որը պետք է ստորագրեր հավատարմագրերը։

Աննան լսում էր նրա քայլերի ձայնն առանձնասենյակում ու սեղանատանը։ Ընդունարանի մոտ նա կանգ առավ։ Բայց նա չգնաց դեպի Աննան, այլ միայն կարգադրեց, որ առանց իրեն բաց թողնեն հովատակը Վոյտովին։ Հետո Աննան լսեց, թե ինչպես բերին կառքը, ինչպես բացվեց դուռը, և նա նորից դուրս գնաց։ Բայց ահա նա կրկին մտավ նախասենյակ, և մեկը վազեց վերև։ Դա կամերդիներն էր, որ վազ տվեց մոռացված ձեռնոցները բերելու։ Աննան մոտեցավ լուսամուտին և տեսավ, թե ինչպես նա, առանց նայելու, վերցրեց ձեռնոցները և ձեռքը դիպցնելով կառապանի մեջքին, մի բան ասաց նրան։ Հետո առանց նայելու պատուհաններին, Վրոնսկին իր սովորական դիրքով նստեց կառք, ոտքը գցելով ոտքին և հագնելով ձեռնոցը, գնաց անհետացավ անկյունադարձին։

XXVII

«Գնա՞ց։ Վերջացա՞ծ է», ասաց Աննան ինքն իրեն, կանգնած լուսամուտի մոտ. ու որպես այդ հարցին պատասխան, խավարի տպավորությունները հանգած մոմի և սոսկալի երազի առկայությամբ, սառը սարսափով համակեցին նրա սիրտը, ի մի ձուլվելով։

— Ո՛չ, այդ լինելու բան չէ,— ճչաց Աննան և անցնելով

նենյակը, ամուր զանգահարեց։ Նա այնպես սարսափում էր այժմ մենակ մնալուց, որ չսպասելով սպասավորի գալուն, ի՛նքը գնաց նրան ընդառաջ։

— Իմացեք, ո՛ւր գնաց կոմսը,— ասաց Աննան։

Սպասավորը պատասխանեց, որ կոմսը գնաց ձիախոռ։

— Կոմսը հրամայեց զեկուցել, եթե դուք տեղ եք գնալու, կառքը իսկույն կվերադառնա։

— Լավ։ Կացե՛ք։ Այս րոպեիս ես տոմս կգրեմ։ Միխայլին այս տոմսով ուղարկեք ձիախոռ։ Որքան հնարավոր է՝ շուտ։

Նա նստեց ու գրեց։

«Ես մեղավոր եմ։ Վերադարձիր տուն, պետք է բացատրվել։ Խնդրում եմ, եկ, ես սարսափում եմ»։

Նա կնքեց ու տվեց սպասավորին։

Նա վախենում էր այժմ մենակ մնալուց և սպասավորի ետևից դուրս գնաց սենյակից ու մտավ մանկասենյակ։

«Է՛, ի՛նչ, սա այն չէ, սա նա չէ։ Որտե՞ղ են նրա կապույտ աչքերը, անուշ և երկչոտ ժպիտը», եղավ Աննայի գլխում ծագած առաջին միտքը, երբ նա տեսավ իր փամփլիկ, կարմրաթուշ աղջկան՝ սև գանգուր մազերով՝ Սերյոժայի փոխարեն, որին նա սպասում էր տեսնել մանկասենյակում, իր խճճված մտքերի ժխորի մեջ։ Աղջիկը, նստած սեղանի մոտ, համառորեն և ամուր խփում էր սեղանին ձեռքի խցանը և անիմաստորեն նայում էր մորը երկու հաղարջներով՝ իր սև աչիկներով։ Պատասխանելով անգլուհուն, որ ինքը բոլորովին առողջ է. և որ վաղը գնում է գյուղ, Աննան նստեց աղջկա մոտ և սկսեց նրա առաջ պտտեցնել ջրամանի խցանը։ Բայց երեխայի բարձրաձայն, զրնգուն ծիծաղը և այն շարժումը, որ նա արավ հոնքերով, այնպես վառ կերպով հիշեցրին Աննային Վրոնսկուն, որ նա արագ վեր կացավ ու դուրս գնաց, զսպելով հեկեկանքները։ «Մի՞թե բոլորը վերջացած է։ Ո՛չ, լինելու բան չէ այդ,— մտածում էր Աննան։— Նա կգա։ Բայց նա ինչպե՞ս կբացատրի ինձ այն ժպիտը, այն աշխուժությունը, երբ խոսում էր նա այն աղջկա հետ։ Սակայն եթե չբացատրի էլ, ես դարձյալ կհավատամ։ Եթե չհավատամ, ապա ինձ մնում է մի բան... Իսկ ես չեմ ուզում»։

Աննան նայեց ժամացույցին։ Անցել էր տասներկու րոպե։ «Այժմ արդեն նա ստացել է տոմսը և ետ է գալիս։ Շատ չի քաշի, էլի տասը րոպե... Իսկ եթե նա չգա՞։ Ո՛չ, չի կարող պատահել։ Պետք է, որ նա ինձ չտեսնի լացակումած աչքերով։ Գնամ լվացվեմ։ Այո՛, այո՛. արդյոք սանրվե՞լ եմ ես, թե՞ ոչ», մտածեց նա։ Եվ չէր կարողանում հիշել։ Նա ձեռքով շոշափեց գլուխը։ «Այո՛, ես սանրված եմ, բայց երբ՝ բոլորովին չեմ հիշում»։ Նա նույնիսկ չէր հավատում իր ձեռքին ու մոտեցավ տրյումոյին, որ տեսնի, իրո՞ք սանրված է, թե ոչ։ Նա սանրված էր և չէր կարողանում հիշել, ե՞րբ էր սանրվել։ «Ո՞վ է դա,— մտածում էր նա, դիտելով հայելու մեջ բոցավառ այն դեմքը, տարօրինակ փայլուն աչքերով, որոնք վախեցած նայում էին իրեն։— Ա՜խ, դա ե՛ս եմ, հանկարծ հասկացավ նա ու զննելով իրեն ամբողջովին, հանկարծ զգաց իր վրա Վռոնսկու համբույրները և ցնցվելով, շարժեց ուսերը։ Ապա ձեռքը մոտեցրեց շուրթերին ու համբուրեց այն։

«Ի՞նչ բան է այդ, ես խելագարվում եմ», և նա գնաց ննջարան, որտեղ Աննուշկան հավաքում էր սենյակը։

— Աննուշկա,— ասաց նա, կանգնելով աղախնի դիմաց ու նայելով նրան, ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ կասի նրան։

— Դուք ուզում էիք գնալ Դարյա Ալեքսանդրովնայի մոտ,— կարծես հասկանալով, ասաց աղախինը։

— Դարյա Ալեքսանդրովնայի մո՞տ։ Այո՛, կգնամ։

«Տասնհինգ րոպե այնտեղ գնալը, տասնհինգ՝ ետ գալը։ Նա գալիս է արդեն, նա կգա հիմա»։ Աննան հանեց ժամացույցը և նայեց։ «Բայց ինչպե՞ս կարող էր նա գնալ, թողնելով ինձ այսպիսի կացության մեջ։ Ինչպե՞ս կարող է նա ապրել, չհաշտված ինձ հետ»։ Աննան մոտեցավ պատուհանին ու սկսեց նայել դեպի փողոց։ Ըստ ժամանակի նա արդեն կարող էր վերադառնալ։ Բայց հաշիվը կարող էր սխալ լինել, և Աննան նորից սկսեց մտաբերել, թե ե՛րբ գնաց նա, և հաշվել րոպեները։

Այն միջոցին, մինչ Աննան մոտենում էր մեծ ժամացույցին, որ ստուգի իր ժամացույցը, մեկը կառքով մոտեցավ տանը։ Պատուհանից նայելով դուրս, նա տեսավ Վռոնսկու կառքը։ Բայց ոչ ոք չէր բարձրանում սանդուղքներով, ու ներքևում լսվում էին ձայներ։ Դա ուղարկված լրատարն էր, որ վերադարձավ կառքով։ Աննան իջավ, գնաց նրա մոտ։

— Կոմսին չգտանք։ Նա գնացել էր Նիժեգորոդյան ճանապարհի ուղղությամբ։

— Ի՞նչ ես ուզում։ Ի՞նչ...— դիմեց Աննան կարմրաթուշ, ուրախ Միխայլին, որը վերադարձրեց նրան իր տված տոմսը։

«Բայց չէ՞ որ նա չի ստացել տոմսը», հիշեց Աննան։

— Այս տոմսի հետ գնա գյուղ՝ կոմսուհի Վռոնսկայայի մոտ, իմանո՞ւմ ես։ Եվ անմիջապես պատասխան բեր,— ասաց Աննան լրատարին։

«Հապա ե՞ս, իսկ ի՞նչ եմ անելու ես,— մտածեց նա։— Այո՛, ես կգնամ Դոլլիի մոտ, իսկապես. թե չէ կխելագարվեմ։ Հա՜, ես կարող եմ նաև հեռագրել»։ Եվ նա գրեց հեռագիրը։

«Ինձ անհրաժեշտ է խոսել ձեզ հետ, անմիջապես եկեք»։

Հեռագիրն ուղարկելուց հետո նա գնաց հագնվելու։ Արդեն հագնված ու գլխարկը դրած, նա նորից նայեց հաստատած, հանգիստ Աննուշկայի աչքերին։ Այդ փոքրիկ, բարի թուխ աչքերի մեջ պարզ երևում էր կարեկցություն։

— Աննուշկա, սիրելիս, ի՞նչ անեմ ես,— թոթովեց Աննան հեկեկալով, անճարակորեն ընկնելով բազկաթոռի մեջ։

— Ինչո՞ւ եք այդպես անհանգստանում, Աննա Արկադևնա, դա հո պատահում է։ Գնացեք, մտածմունքներդ ցրիվ կգան,— ասաց աղախինը։

— Այո՛, ես կգնամ,— սթափվելով ու վեր կենալով ասաց Աննան։— Իսկ եթե առանց ինձ հեռագիր ստացվի, ուղարկեցեք Դարյա Ալեքսանդրովնայի մոտ... Ո՛չ, ես ինքս կվերադառնամ։

«Այո՛, պետք չէ մտածել, պետք է մի բան անել, գնալ, որ գլխավորն է՝ հեռանալ այս տանից», ասաց նա, սարսափով ականջ դնելով հուզմունքի այն կկլթոցին, որ տեղի ուներ իր սրտում, և շտապ դուրս գնաց ու նստեց կառք։

— Ո՞ւր կհրամայեք,— հարցրեց Պյոտրը՝ նստիքին տեղավորվելուց առաջ։

— Դեպի Ջնա՛մենկա, Օբլոնսկիների մոտ։

XXVIII

Եղանակը պարզ էր։ Ամբողջ առավոտ տեղում էր մանրակաթիլ թավ անձրև, ու հիմա՝ քիչ առաջ երկինքը պարզեց։ Թիթեղապատ կտուրները, մայթերի սալաքարերը, փողոցի կոպիճները, կառքերի անիվներն ու կաշին, պղինձն ու թիթեղը,— բոլորը, բոլորը պայծառորեն փայլում էր մայիսյան արևի տակ։ Ժամը երեքն էր. փողոցների ամենաեռուն ժամանակը։

Նստած հանգիստ կառքի անկյունում, որը թեթևակի օրորվում էր իր առաձիգ զսպանակներով՝ գորշ ձիերի արագ վազքից, Աննան անիվների անլռելի դղրդոցի և մաքուր օդի մեջ արագորեն իրար փոխարինող տպավորությունների ազդեցության տակ նորից մտորելով վերջին օրերի դեպքերը, տեսավ իր դրությունը բոլորովին այլ կերպ, քան թվում էր նրան տանը։ Այժմ մահվան միտքն էլ չէր թվում նրան այլևս այնպես սարսափելի ու պարզ, և մահն ինքնին այլևս չէր պատկերանում անխուսափելի։ Այժմ նա հանգիստանում էր իրեն այն նվաստացման համար, որ հասել էր ինքը։ «Ես աղաչում եմ նրան՝ ներել ինձ։ Ես հնազանդվեցի նրան։ Ընդունեցի, որ մեղավոր եմ ես։ Ինչի՞ համար։ Մի՞թե ես չեմ կարող ապրել առանց նրա»։ Եվ չպատասխանելով այն հարցին, թե ինչպե՞ս կապրի ինքն առանց նրա, Աննան սկսեց կարդալ ցուցանակները։ «Գրասենյակ և պահեստ։ Ատամնաբույժ»։ Այո՛, բոլորը ես կպատմեմ Դոլլիին։ Նա չի սիրում Վրոնսկուն։ Կամաչեմ, սիրտս կցավի, բայց ամեն բան կասեմ Դոլլիին։ Դոլլին սիրում է ինձ, և ես կհետևեմ նրա խորհրդին։ Ես չեմ հնազանդվի Ալեքսեյին. ես թույլ չեմ տա նրան դաստիարակելու ինձ։ Ֆիլիպով, կալաշներ։ Ասում են, որ նրանք խմորը տանում են Պետերբուրգ։ Այնպես լա՞վ է Մոսկվայի ջուրը։ Հապա Միտիշչինյան ջրհորներն ու բլիննե՞րը»։ Եվ նա հիշեց, թե ինչպե՞ս վաղուց, շատ վաղուց, երբ ինքը դեռ տասնյոթ տարեկան էր, հորաքրոջ հետ գնաց Տրոյիցե վանքը։ «Գնացինք ձիերով։ Մի՞թե դա ե՞ս էի, կարմիր ձեռքերով։ Որքան շատ բան դարձավ աննշան այն բոլորից, ինչն այն ժամանակ ինձ թվում էր այնպես գեղեցիկ և անմատչելի, իսկ այն, ինչ կար այն ժամանակ, այժմ անմատչելի է հավիտյան։ Արդյոք կհավատայի՞

ես այն ժամանակ, որ կարող եմ հասնել այսպիսի նվաստացման։ Ինչպե՞ս կպարծենա և գոհ կլինի նա, ստանալով իմ տոմսը։ Բայց ես կապացուցեմ նրան... Ի՞նչ վատ հոտ ունի այդ ներկը։ Ինչի՞ համար են նրանք շարունակ ներկում ու կառուցում։ «Մողաներ և զարդեր», կարդաց Աննան։ Մի տղամարդ բարևեց նրան։ Դա Աննուշկայի ամուսինն էր։ «Մեր ձրիակերները,— հիշեց նա, ինչպես ասում էր Վրոնսկին։— Մե՞ր, ինչո՞ւ մեր։ Սոսկալին այն է, որ չի կարելի արմատախիլ անել անցյալը։ Չի կարելի արմատախիլ անել, բայց կարելի է թաքցնել հիշողությունը նրա մասին։ Եվ ես կթաքցնեմ»։ Ու այստեղ նա հիշեց իր անցյալի մասին՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ, այն մասին, թե ինչպես ինքը չնչեց նրան իր հիշողությունից։ «Դոլլին կմտածի, որ ես թողնում եմ երկրորդ ամուսնուս և որ այդ պատճառով անկասկած ես իրավացի չեմ։ Մի՞թե ես ուզում եմ լինել իրավացի։ Ես չեմ կարող», մրմնջաց նա և ուզեց լաց լինել։ Բայց նա անմիջապես սկսեց մտածել այն մասին, թե ինչի՞ համար կարող էին այդպես ծպտալ այդ երկու աղջիկը... «Իրևի սիրո մասին, հա՞։ Նրանք չգիտեն, թե ինչպես տխուր, ինչպես ստոր բան է այդ... Զբոսայգի և երեխաներ։ Երեք տղա վազում են, պատկերացնելով ձիուկախաղ։ Սերյո՞ժա։ Եվ ես բոլորը կկորցնեմ ու չեմ վերադարձնի նրան՝ Ալեքսեյին։ Այո՛, ես բոլորը կկորցնեմ, եթե նա չվերադառնա։ Նա գուցե ուշացավ գնացքին և հիմա արդեն վերադարձել է։ Նորից ուզում ես նվաստացո՞ւմ,— ասաց Աննան ինքն իրեն։— Ո՛չ, ես կմտնեմ Դոլլիի մոտ և ուղղակի կասեմ նրան. ես դժբախտ եմ, ես արժանի եմ դրան, ես մեղավոր եմ, բայց վերջ ի վերջո՝ դժբախտ եմ, օգնիր ինձ։ Այդ ձիերը, այդ կառքը՝ ինչպես զզվելի եմ ես ինքս ինձ համար այդ կառքի մեջ. այս բոլորը նրա՛նն է. բայց ես այլևս չեմ տեսնի դրանք»։

Հնարելով այն խոսքերը, որոնցով ինքը բոլորը կպատմի Դոլլիին, և դիտմամբ թունավորելով իր սիրտը, Աննան բարձրացավ սանդուղքներով։

— Ուրիշ մարդ կա՞,— հարցրեց նա նախասենյակում։

— Կատերինա Ալեքսանդրովնա Լևինան,— պատասխանեց սպասավորը։

«Կի՛տին. նույն այն Կիտին, որին սիրահարված էր Վրոն-

սկին,— մտածեց Աննան։— Այն կինը, որի մասին Վրոնսկին հիշում էր սիրով։ Վրոնսկին ափսոսում է, որ չամուսնացավ Կիտիի հետ։ Իսկ իմ մասին նա հիշում է ատելությամբ և ափսոսում է, որ կապվեց ինձ հետ»։

Այն միջոցին, երբ եկավ Աննան, քույրերը խորհրդակցում էին երեխային կերակրելու մասին։ Դոլլին մենա՛կ դուրս եկավ դիմավորելու հյուրին, որն այդ րոպեին խանգարեց նրանց զրույցը։

— Ա՜, դու դեռ չե՞ս գնացել։ Ես ի՛նքս ուզում էի գալ քեզ մոտ,— ասաց նա,— այսօր ես նամակ ստացա Ստիվայից։

— Մենք էլ հեռագիր ստացանք,— պատասխանեց Աննան, ետ նայելով, որ տեսնի Կիտիին։

— Նա գրում է, որ չի հասկանում, թե իսկապես ի՞նչ է ուզում Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, բայց որ ինքը Պետերբուրգից չի հեռանա առանց պատասխանի։

— Ես կարծում էի, քեզ մոտ մարդ կա։ Կարելի՞ է կարդալ նամակը։

— Այո՛, Կիտին է,— ասաց Դոլլին շփոթվելով,— նա մնաց մանկասենյակում։ Նա սաստիկ հիվանդ էր։

— Ես լսել եմ։ Կարելի՞ է կարդալ նամակը։

— Իսկույն կբերեմ։ Բայց նա չի մերժում, ընդհակառակն, Ստիվան հույս ունի,— ասաց Դոլլին, կանգ առնելով դռան մեջ։

— Ես հույս չունեմ, բացի այդ, չեմ էլ ցանկանում,— ասաց Աննան։

«Ի՞նչ բան է այդ, Կիտին իր համար նվաստացուցի՞չ է համարում տեսնվել ինձ հետ,— մտածում էր Աննան, մնալով մենակ։— Դուցե նա իրավացի է։ Բայց նա՛ չէ, Վրոնսկուն սիրահարված կի՛նը չէ, որ պիտի ցույց տա ինձ այդ բանը, թեպետև իրավացի է նա։ Ես գիտեմ, որ իմ այս դրությամբ ինձ չի կարող ընդունել ոչ մի կարգին կին։ Ես գիտեմ, որ հենց առաջին րոպեից ես զոհաբերեցի նրա համար ամեն ինչ։ Եվ ահա՛ իմ վարձատրությունը։ Օ՜, ինչպես ատում եմ ես նրան։ Եվ ինչո՞ւ եկա ես այստեղ։ Ես ինձ ավելի վատ, ավելի ծանր եմ զգում»։ Աննան լսում էր մյուս սենյակից իրար հետ խոսող քույրերի ձայնը։ «Ու ի՞նչ պիտի ասեմ ես հիմա Դոլլիին։ Մխիթարել Կիտիին նրանով, որ ես դժբա՞խտ եմ,

ենթարկվել նրա հովանավորությա՞նը։ Ո՛չ, Դո՛ւլլին էլ ոչինչ չի հասկանա։ Եվ ես նրան ասելու բան չունեմ։ Հետաքրքրական էր միայն տեսնել Կիտիին ու ցույց տալ նրան, թե ինչպես ես արհամարհո՛ւմ եմ ամենքին և ամեն ինչ, թե ինչպե՛ս ինձ համար այժմ միևնույն է»։

Դոլլին եկավ, բերեց նամակը։ Աննան կարդաց և լուռ վերադարձրեց այն։

— Ես գիտեի այս բոլորը,— ասաց նա։— Ու այդ բնավ չի հետաքրքրում ինձ։

— Իսկ ինչո՞ւ։ Ես, ընդհակառակն, հույս ունեմ,— ասաց Դոլլին, հետաքրքրությամբ դիտելով Աննային։ Նա երբեք չէր տեսել նրան այդպես տարօրինակ, զրգռված դրությամբ։— Դու ե՞րբ ես գնում,— հարցրեց նա։

Աննան աչքերը կկոցած նայում էր դիմացը և չպատասխանեց նրան։

— Ի՞նչ է, Կիտին թաքնվո՞ւմ է ինձնից,— ասաց նա, նայելով դռանը և կարմրելով։

— Ա՜խ, ինչ դատա՞րկ բան։ Նա կերակրում է, և այդ գործը նրա մոտ կարգի չի ընկնում, ես նրան խորհուրդ էի տալիս... Նա շատ ուրախ է։ Նա հիմա կգա,— ասում էր Դոլլին շփոթված, չկարողանալով սուտ ասել։— Ա՜յ, ահա և նա։

Իմանալով, որ եկել է Աննան, Կիտին ուզում էր դուրս չգալ, բայց Դոլլին համոզեց նրան։ Ուժերը հավաքած, Կիտին դուրս եկավ ու կարմրելով, մոտեցավ նրան և ձեռք տվեց։

— Ես շատ ուրախ եմ,— ասաց նա դողդոջուն ձայնով։

Կիտին շփոթված էր իր ներսում կատարվող պայքարից, որ տեղի ուներ դեպի այդ վատ կինը տածած թշնամանքի և նրա նկատմամբ ներողամիտ լինելու ցանկության միջև, բայց հենց որ նա տեսավ Աննայի գեղեցիկ, համակրելի դեմքը, անմիջապես չքացավ ամբողջ թշնամանքը։

— Ես չէի զարմանա, եթե դուք չկամենայիք տեսնվել ինձ հետ։ Ես ամեն բանի վարժվել եմ։ Դուք հիվա՞նդ էիք։ Այո՛, դուք փոխվել եք,— ասաց Աննան։

Կիտին զգում էր, որ Աննան թշնամանքով է նայում իրեն։ Նա այդ թշնամանքը բացատրում էր այն անհարմար դրությամբ, որի մեջ այժմ զգում էր իր առաջ մի ժամանակ իրեն հովանավորող Աննան, և խղճաց նրան։

Նրանք խոսում էին հիվանդության, երեխայի, Ստիվայի մասին, բայց հայտնապես ոչինչ չէր հետաքրքրում Աննային։

— Ես եկա հրաժեշտ տալու քեզ,— ասաց Աննան, վեր կենալով։

— Ուրեմն ե՞րբ եք գնում։

Բայց Աննան նորից չպատասխանելով, դիմեց Կիտիին.

— Այո՛, ես շատ ուրախ եմ, որ տեսա ձեզ,— ասաց նա ժպիտով։— Ես այնքան շատ բան եմ լսել ձեր մասին ամեն կողմից, նույնիսկ ձեր ամուսնուց։ Նա եղավ ինձ մոտ և շատ դուր եկավ ինձ,— հայտնապես վատ դիտավորությամբ ավելացրեց Աննան։— Որտե՞ղ է նա։

— Գնաց գյուղ,— պատասխանեց Կիտին կարմրելով։

— Բարևեցեք նրան ինձնից, անպայման բարևեցեք։

— Անպայմա՛ն,— միամտաբար կրկնեց Կիտին, կարեկցությամբ նայելով նրա աչքերին։

— Այսպես, մնաս բարով, Դոլլի։ — Եվ համբուրելով Դոլլիին ու սեղմելով Կիտիի ձեռքը, Աննան շտապ դուրս գնաց։

— Էլի նույնն է և էլի նույնպես գրավիչ։ Շատ լավիկն է,— ասաց Կիտին, մենակ մնալով քրոջ հետ։ — Բայց ինչ-որ խրդճալի բան կա նրա մեջ։ Ծայր աստիճան խղճալի։

— Ո՛չ, այսօր նրա մեջ ինչ-որ առանձնահատուկ բան կա,— ասաց Դոլլին։ — Երբ ես ճանապարհ էի դնում նրան նախասենյակում, ինձ թվաց, որ նա ուզում է լաց լինել։

XXIX

Աննան կառք նստեց էլ ավելի վատ տրամադրությամբ, քան այն ժամանակ, երբ դուրս գնաց տանից։ Առաջվա տանջանքներին ավելացավ այժմ վիրավորանքի և մերժվածության զգացումը, որը նա պարզորոշ զգաց Կիտիին հանդիպելուց։

— Ո՞ւր կհրամայեք, դեպի տո՞ւն,— հարցրեց Պյոտրը։

— Այո՛, դեպի տուն,— ասաց Աննան, այժմ չմտածելով անգամ այն մասին, թե ո՛ւր է գնում։

«Ինչպե՞ս էին նայում նրանք ինձ, որպես սոսկալի, անհասկանալի և հետաքրքրաշարժ մի բանի։ Ինչի՞ մասին կարող է նա այդպես տաք-տաք պատմել մյուսին,— մտածում էր

Աննան, նայելով երկու հեծյալներին։ — Մի՞թե կարելի է պատմել ուրիշին այն, ինչ զգում է մարդ։ Ես ուզում էի պատմել Դոլլիին և լավ է, որ չպատմեցի։ Ի՞նչ կուրախանար նա իմ դժբախտության համար։ Նա կթաքցներ այդ։ Բայց գլխավոր զգացումը կլիներ ուրախությունն այն առթիվ, որ ես պատժված եմ այն բավականությունների համար, որոնց պատճառով նա նախանձում էր ինձ։ Ավելի ևս կուրախանար Կիտին։ Ինչպե՞ս տեսնում եմ ես նրան ամրողջովին։ Նա գիտե, որ ես իր ամուսնու հետ եղել եմ սովորականից շատ ավելի սիրալիր։ Եվ նա խանդում ու ատում է ինձ։ Նաև արհամարհում է։ Նրա աչքին ես անբարոյական կին եմ։ Եթե ես լինեի անբարոյական կին, ես կարող էի նրա ամուսնուն սիրահարեցնել ինձ... եթե ուզենայի։ Ասենք, ես ուզում էի։ Ահա՛ դա զոհ է իրենից», մտածեց Աննան այն հաստ, կարմիր-երես պարոնի մասին, որը կառքով անցավ նրա մոտով, ընդունելով նրան ծանոթ կնոջ տեղ ու բարձրացրեց խունացպղուն գլխարկը ճաղատ պլպլան գլխի վրա և հետո համոզվեց, որ սխալվել է։ «Նա կարծում էր, որ ճանաչում է ինձ։ Բայց նա ճանաչում է ինձ նույնպես քիչ, ինչպես աշխարհիս երեսին ուրիշ որևէ մարդ։ Ես ինքս էլ չեմ ճանաչում, չգիտեմ ինձ։ Ես գիտեմ իմ ախորժակները, ինչպես ասում են ֆրանսիացիք։ Ահա՛ նրանք ուզում են այդ կեղտոտ պաղպաղակը։ Դա նրանք գիտեն հաստատապես», մտածում էր Աննան, նայելով այն երկու տղային, որոնք կանգնեցրին պաղպաղակավաճառին, որը գլխից իջեցրեց կիսատակառը և սրբիչի ծայրով տրորում էր քրտնած երեսը։ «Մենք ամենքս ուզում ենք քաղցր, համեղ բան։ Կոնֆետ չկա, ուրեմն՝ կեղտոտ պաղպաղակ։ Կիտին էլ նույնպես, Վրոնսկին չեղավ, ուրեմն՝ Լևինը։ Եվ նա նախանձում է ինձ։ Եվ ատում է ինձ։ Ու մենք ամենքս ատում ենք իրար։ Ես՝ Կիտին, Կիտին՝ ինձ։ Ա՜խ, դա ճիշտ է։ Տյուտկին Coiffeur... Je me fais coiffer par[1] Տյուտկինը... Ես այդ կասեմ նրան, երբ նա տուն գա», մտածեց Աննան և ժպտաց։ Բայց հենց նույն րոպեին նա հիշեց, որ չկա ոչ ոք, որին ծիծաղելի բան ասի ինքը։ «Ասենք, ոչինչ էլ չկա ծիծաղելի, ոչինչ ուրախալի։ Ամեն բան գարշելի է։ Ջանգահարում են երեկոյան ժա-

[1] Վարսավիրը... ինձ սանրում է Տյուտկինը (ֆրանս.)։

մասացության համար, և այդ վաճառականն այնպես խնամքով, զգույշ խաչակնքում է երեսը, կարծես վախենում է, չլինի թե մի բան վայր գցի։ Ինչի՞ համար են այդ եկեղեցիները, այդ զանգահարությունը և այդ սուտը։ Նրա համար միայն, որպեսզի քողարկեն, որ մենք ամենքս ատում ենք իրար, ինչպես այդքան մոլեգնաբար իրար հայհոյող այդ կառապանները։ Ցաշվինն ասում է. նա ի՞նձ է ուզում թողնել առանց շապիկի, ես էլ՝ նրա՛ն։ Ա՛յ, դա ճիշտ է»։

Այս մտքերի մեջ, որոնք այնպես հրապուրեցին Աննային, որ նա նույնիսկ դադարեց իր դրության մասին մտածելուց, նա կանգ առավ իր տան արտաքին սանդուղքի մոտ։ Տեսնելով իրեն ընդառաջ եկող բարապանին, նա նո՛ր միայն հիշեց, որ ինքն ուղարկել էր տոմս և հեռագիր։

— Պատասխան կա՞,— հարցրեց նա։

— Իսկույն կնայեմ,— պատասխանեց բարապանը և նայելով բարձրասեղանի վրա, վերցրեց ու տվեց նրան հեռագրի քառակուսի բարակ ծրարը։ «Ես չեմ կարող գալ ժամը տասից վաղ։ Վրոնսկի»,— կարդաց նա։

— Իսկ լրատարը չի՞ վերադարձել։

— Բնավ ո՛չ,— պատասխանեց բարապանը։

«Իսկ եթե այդպես է, ես գիտեմ, թե ի՛նչ կանեմ,— ասաց Աննան և զգալով իր մեջ բարձրացող անորոշ ցասում ու վրեժխնդրության պահանջ, նա վազեց վերև։— Ես ի՛նքս կերթամ նրա մոտ։ Նախքան ընդմիշտ հեռանալը, ես կասեմ նրան բոլորը։ Որբեք ոչ ոքի չեմ ատել այնպես, ինչպես այդ մարդուն», մտածում էր նա։ Տեսնելով Վրոնսկու գլխարկը կախարանի վրա, Աննան ցնցվեց զզվանքից։ Աննան չէր հասկանում, որ Վրոնսկու հեռագիրը իր հեռագրի պատասխանն էր և որ նա դեռ չէր ստացել տոմսը։ Աննան այժմ պատկերացնում էր նրան մոր ու Սորոկինայի հետ հանգիստ խոսելիս և իր տանջանքների համար ուրախ։ «Այո՛, հարկավոր է շուտ գնալ», մտածում էր նա, դեռ չիմանալով, թե ո՛ւր գնա։ Նա ուզում էր շուտով դուրս գալ, հեռանալ այն զգացումների շրջանից, որ համակել էին նրան այս սարսափելի տանը։ Սպասավորները, պատերը, իրերն այս տան մեջ,— բոլորը, բոլորը հարուցում էին նրա սրտում զզվանք ու դայրույթ և ճնշում նրան ինչ-որ ծանրությամբ։

«Այո՛, պետք է գնալ երկաթուղու կայարան, իսկ եթե կայարանում չէ, ապա գնալ այնտեղ և բռնել նրան հանցանքի մեջ»։ Աննան նայեց թերթերում գնացքների ցվացուցակը։ Երեկոյան մեկնում է ժամը 8-ից 2 րոպե անց։ «Այո՛, կհասնեմ»։ Նա հրամայեց լծել ուրիշ ձիեր և սկսեց դարսել ճանապարհորդական պայուսակի մեջ մի քանի օրվա համար անհրաժեշտ իրերը։ Նա գիտեր, որ այլևս չի վերադառնա այստեղ։ Իր գլուխն եկող ծրագրերի թվում նա աղոտորեն վճռեց և այն, թե այն բանից հետո, ինչ տեղի կունենան այնտեղ՝ կայարանում կամ կոմսուհու կալվածքում, կերթա Նիժեգորոդյան ճանապարհով մինչև առաջին պատահած քաղաքը և կմնա այնտեղ։

Ճաշը դրված էր սեղանին. նա մոտեցավ, հոտ քաշեց հացից ու պանրից և համոզվելով, որ ամեն ուտելիքի հոտ զզվելի է իրեն, հրամայեց բերել կառքն ու դուրս գնաց։ Տան ստվերն արդեն ընկել էր ամբողջ փողոցի վրա, և արևի տակ տակավին պարզ ու տաք երեկո էր։ Ե՛վ Աննուշկան, որ ուղեկցում էր նրան սիրով, և՛ Պյոտրը, որ դնում էր իրերը կառքի մեջ, և՛ կառապանը, որ հայտնապես դժգոհ էր,— ամենքը, ամենքը զզվելի էին նրան իրենց խոսքերով ու շարժումներով։

— Դու պետք չե՛ս ինձ, Պյոտր։

— Բա ո՞նց կլինի տոմսը։

— Է՜հ, ինչպես կուզես, ինձ համար միևնույն է,— սրտնեղությամբ ասաց Աննան։

Պյոտրը թռավ նստիքին և ծռվելով մի կողքի, հրամայեց գնալ կայարան։

XXX

«Ահա էլի նա։ Ես դարձյալ հասկանում եմ բոլորը»,— ասաց Աննան ինքն իրեն, հենց որ շարժվեց կառքը և օրորվելով դղրդաց, գնաց մանր կոպճարկի վրայով, ու կրկին մեկը մյուսի ետևից սկսեցին փոխվել տպավորությունները։

«Հա՜, վերջին անգամ ինչի՞ մասին էի ես այնպես լավ մտածում», աշխատում էր հիշել նա։ «Տյուտկինի՞— coiffeur-ի։ Ո՛չ, դա չէր։ Հա՜, այն մասին, թե ի՛նչ էր ասում Ցաշվինը. գոյության պայքար և ատելություն՝ միակ բանը, որ մարդկանց կապում է իրար հետ։ Ո՛չ, դուք զուր եք գնում,—

մտքով դիմեց նա քառաձի կառքով գնացող խմբին, որը հավանորեն գնում էր քաղաքից դուրս՝ ուրախ ժամանցի։ — Ձեզ չի՛ օգնի և այն շունը, որ դուք տանում եք ձեզ հետ։ Ձեզ փախչի ձեզանից»։ Հայացքը գցելով այն կողմ, ուր շուռ էր գալիս Պյոտրը, նա տեսավ գործարանային կիսամեռ-հարբած ճոճուն գլխով բանվորին, որին գորոդովոյը կառքով տանում էր ինչ-որ տեղ։ «Այ, ավելի շուտ, դա՛,— մտածեց նա։ — Ես ու կոմս Վռոնսկին նույնպես չգտանք այդ բավականությունը, թեպետև շատ բան էինք սպասում դրանից»։ Եվ Աննան այժմ առաջին անգամ դարձրեց այն պայծառ լույսը, որի մեջ նա տեսնում էր ամեն բան, Վռոնսկու հետ ունեցած իր հարաբերությունների վրա, որոնց մասին առաջ խուսափում էր մտածել։ «Ի՞նչ էր փնտրում նա իմ մեջ։ Ո՛չ այնքան սեր, որքան սնապարծության բավարարում»։ Նա մտաբերեց Վռոնսկու խոսքերը, նրա դեմքի արտահայտությունը, որ հիշեցնում էր հնազանդ որսաշուն, իրենց կապի առաջին շրջանում։ Եվ այժմ ամեն բան հաստատում էր դա։ «Այո՛, նրա մեջ կար սնապարծ հաջողության հաղթանակ։ Հասկանալի է, կար նաև սե՛ր, բայց մեծ մասը հաջողության պարծանքն էր։ Նա պարծենո՛ւմ էր ինձանով։ Այժմ անցավ այդ։ Պարծենալու բան չկա։ Պետք է ո՛չ թե պարծենալ, այլ ամաչել։ Նա վերցրեց ինձնից այն բոլորը, ինչ կարող էր, և հիմա ես պետք չե՛մ նրան։ Նա նեղվում է ինձնից և աշխատում է անազնիվ չլինել իմ հանդեպ։ Նա երեկ խոսք թոցրեց բերնից՝ նա ուզում է ապահարզան և ամուսնություն, որպեսզի այրի իր նավերը։ Նա սիրում է ինձ, բայց ինչպե՞ս։ The zest is gone[1]։ Սա ուզում է ամենքին զարմացնել ու շատ գոհ է ինքն իրենից», մտածեց Աննան, նայելով կարմրաթուշ գործակատարին, որ գնում էր ձիամարզարանային ձիով։ «Այո՛, նրա համար իր մեջ այլևս չկա այն համը։ Եթե ես հեռանամ նրանից, նա կուրախանա իր հոգու խորքում»։

Դա ենթադրություն չէր,— Աննան այդ բանը պարզ տեսնում էր այն թափանցող լույսի մեջ, որն այժմ բացում էր նրա համար կյանքի և մարդկային հարաբերությունների իմաստը։

«Իմ սերը դառնում է ավելի ու ավելի բուռն և ինքնասեր,

[1] Համն անցավ։

իսկ նրանը՝ հանգչում է ու հանգչում, և ահա թե ինչո՛ւ մենք տարամիտում ենք,— շարունակում էր մտածել Աննան։— Ու չի կարելի օգնել դրան։ Ինձ համար ամեն ինչ նրա՛ մեջ է միայն, և ես պահանջում եմ, որ նա ամբողջովին ավելի ու ավելի նվիրվի ինձ։ Իսկ նա շարունակ ավելի ու ավելի ուզում է հեռանալ ինձնից։ Մենք իրոք գնում էինք իրար ընդառաջ մինչև մեր կապը, իսկ հետո անզսպորեն տարամիտում, գնում ենք տարբեր կողմեր։ Ու այդ բանը չի կարելի փոխել։ Նա ասում է ինձ, որ ես անմտորեն խանդոտ եմ, ես ինքս էլ ասում եմ ինձ, որ ես անմտորեն խանդոտ եմ, բայց դա ճիշտ չէ։ Ես խանդոտ չեմ, ես դժգոհ եմ։ Սակայն»... Աննան բերանը բացեց ու տեղափոխվեց կառքի մեջ հուզմունքից, որ բարձրացավ նրա կրծքում՝ հանկարծ իր գլուխն եկած մտքից։ «Եթե ես կարողանայի լինել մի ա՛յլ բան, բացի սիրուհի լինելուց, որը բուռն կերպով սիրում է միայն նրա շոյանքները. բայց ես չեմ կարող և չեմ ուզում լինել այլ բան։ Ու ես իմ այդ ցանկությամբ հարուցում եմ նրա մեջ միայն զզվա՛նք, իսկ նա իմ մեջ՝ զայրո՛ւյթ, և դա չի կարող լինել ուրիշ կերպ։ Մի՞թե ես չգիտեմ, որ նա չի խաբի ինձ, որ նա աչք չունի Սորոկինայի վրա, որ նա սիրահարված չէ Կիտիին, որ նա չի դավաճանի ինձ։ Այս բոլորը ես գիտեմ, բայց դրանից չի թեթևանում իմ վիճակը։ Եթե նա, չսիրելով ինձ, պարտքի գիտակցությունից դրդված՝ իմ նկատմամբ կլինի բարի, քնքուշ, իսկ չի լինի այն, ինչ ուզո՞ւմ եմ ես։— Ա՜խ, դա հազար անգամ ավելի վատ է նույնիսկ, քան զայրույթը։ Դժոխք է դա։ Իսկ եղածը հենց դա է։ Նա վաղուց արդեն չի սիրում ինձ։ Իսկ որտեղ վերջանում է սերը, այնտեղ սկսվում է ատելությունը։ Ինձ բոլորովին անծանոթ են այս փողոցները։ Ինչ-որ լեռներ են և տներ, անվերջ տներ... Ու տների մեջ մարդիկ, շարունակ մարդիկ... Ինչքա՞ն են նրանք, վերջ չունեն, և ամենքը ատում են իրար։ Է՜հ, թող ես հնարեմ ինձ համար այն, ինչ ուզում եմ, որպեսզի երջանիկ լինեմ։ Հետո՞։ Ես ստանում եմ ապահարզան, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տալիս է ինձ Սերյոժային, և ես ամուսնանում եմ Վռոնսկու հետ»։ Հիշելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մասին, Աննան անմիջապես արտասովոր պարզությամբ պատկերացրեց նրա կենդանի կերպարանքը՝ նրա հեզ, տենդենդան, մարած աչքերով, սպիտակ ձեռքերի կապույտ երակ-

ներով, ինտոնացիաներով ու մատների ճոթճոթոցով, և մտաբերելով այն զգացումը, որը կար իրենց մեջ և որը նույնպես կոչվում էր սեր,— ցնցվեց զզվանքից։ «Է՜հ, ես կստանամ ապահարզան, ես կդառնամ Վրոնսկու կինը։ Հետո ի՞նչ, արդյոք Կիտին այլևս չի՞ նայի ինձ վրա այնպես, ինչպես նայում էր այսօր։ Ո՛չ։ Իսկ Սերյոժան այլևս չի՞ հարցնի, կամ չի՞ մտածի իմ երկու ամուսինների մասին։ Իսկ իմ և Վրոնսկու միջև ի՞նչ նոր զգացում կստեղծեմ ես։ Արդյոք հնարավո՞ր է այժմ ո՛չ թե երջանկություն, այլ, որ գոնե չլինի տանջանք։ Ո՛չ ու ո՛չ»,— պատասխանեց նա իրեն՝ այժմ առանց որևէ տատանման։ «Անհնարին է։ Կյանքն է բաժանում մեզ, և նրա դժբախտությունն իմ ձեռքի գործն է, իմ դժբախտությունը՝ նրա ձեռքի, և փոխել չի՛ կարելի ո՛չ նրան, ո՛չ ինձ։ Բոլոր փորձերը եղան, արվեցին, պտուտակն ամրապնդվեց։ Հա՜, աղքատ կին երեխայի հետ։ Նա կարծում է, որ խղճում են իրեն։ Մի՞թե մենք ամենքս նետված չենք աշխարհ նրա համար միայն, որ ատենք իրար, այդ իսկ պատճառով՝ տանջենք ինքներս մեզ և ուրիշներին։ Գիմնազիստները գնում ու ծիծաղում են։ Սերյո՞ժան, հիշեց Աննան։ «Ես նույնպես կարծում էի, որ սիրում եմ նրան, և խանդաղատանքով հուզվում էի իմ ինքշությունից։ Իսկ չէ՞ որ ես ապրում էի առանց նրան, չէ՞ որ փոխանակեցի նրան ուրիշ սիրո հետ և չէի գանգատվում այդ փոխանակությունից, քանի դեռ բավարարվում էի այն սիրով»։ Եվ նա զզվանքով հիշեց այն բանի մասին, ինչն անվանում էր այն սեր։ Ու Աննային ուրախացնում էր այն պարզությունը, որով նա տեսնում էր այժմ իր և բոլոր մարդկանց կյանքը։ «Այդպես էլ ե՛ս, և՛ Պյոտրը, և՛ կառապան Ֆյոդորը, և՛ այդ վաճառականը, և՛ բոլոր այն մարդիկ, որոնք ապրում են այնտեղ՝ Վոլգայի ափերին, ուր հրավիրում են այդ հայտարարությունները, և՛ ամենուր, և՛ միշտ», մտածում էր Աննան, երբ արդեն մոտեցավ Նիժեգորոդյան կայարանի ցած շենքին, և արտելականները վազեցին նրան ընդառաջ։

— Կհրամայեք տոմս վերցնել մինչև Օբիրա՞լովկա։— հարցրեց Պյոտրը։

Աննան բոլորովին մոռացել էր, թե ո՛ւր և ինչո՛ւ է գնում ինքը և մեծ ջանք թափելով միայն կարողացավ հասկանալ իրեն տրված հարցը։

— Այո՛,— ասաց Աննան, տալով նրան դրամով քսակը և ձեռքն առնելով փոքրիկ, կարմիր պայուսակը, դուրս եկավ կառքից։

Ամբոխի միջից դիմելով դեպի առաջին կարգի դահլիճը, Աննան կամաց-կամաց մտաբերում էր իր վիճակի բոլոր մանրամասները և այն որոշումները, որոնց մեջ տատանվում էր ինքը։ Ու նորից մերթ հույսը, մերթ հին ցաված տեղերի հետ կապված հուսահատությունը սկսեցին մորմոքել նրա տանջված, սոսկալիորեն թպրտացող սրտի վերքերը։ Նստած աստղաձև բազմոցին ու սպասելով գնացքին, Աննան զարշանքով նայում էր դուրս ու ներս անողներին (նրանք ամենքը զզվելի էին նրա համար) և մտածում էր մերթ այն մասին, թե ինչպե՛ս ինքը կգա կայարան, տոմս կգրի Վրոնսկուն ու ի՛նչ կգրի, մերթ այն մասին, թե ինչպես հիմա նա գանգատվում է մորը (չհասկանալով Աննայի տանջանքները) իր վիճակից, և ինչպես ինքը կմտնի սենյակ ու ի՛նչ կասի նրան։ Մերթ Աննան մտածում էր այն մասին, թե ինչպե՛ս կարող էր կյանքը դեռ լինել երջանիկ, և թե ինչպե՛ս ինքը տանջալից սիրում է ու ատում է նրան, և ինչպե՛ս սաստիկ բաբախում է իր սիրտը։

XXXI

Լսվեց զանգի ձայնը, անցան ինչ-որ երիտասարդ տղամարդիկ, այլանդակ, լկտի ու շտապող մարդիկ, միաժամանակ ուշադիր դեպի այն տպավորությունը, որ թողնում էին իրենք։ Դահլիճից անցավ նաև Պյոտրը՝ իր լիվրեով ու շտիբլետներով, անասնական բութ դեմքով, և մոտեցավ Աննային, որ առաջնորդի նրան մինչև վագոն։ Աղմկահույզ տղամարդիկ հանդարտեցին, երբ Աննան անցնում էր նրանց մոտով՝ պլատֆորմով, և մեկը մի բան փսփսաց մյուսին, իհարկե, գարշելի բան։ Աննան բարձրացավ սանդուղքով ու մենակ նստեց կուպեում՝ զսպանակավոր, կեղտոտ, մի ժամանակ սպիտակ բազմոցին։ Պայուսակը ցնցվելով զսպանակների վրա, տեղավորվեց։ Պյոտրը տխմար ժպիտով բարձրացրեց լուսամուտի առաջ իր տրեզով գդակը՝ որպես հրաժեշտի նշան, լկտի կոնդուկտորը թրխկացրեց դուռն ու մզդակը։ Տուռնյուրով անճոռնի մի տիկին (Աննան մտովի մերկացրեց այդ կնոջը և սարսափեց նրա

այլանդակությունից) ու մի աղջիկ, անբնականորեն ծիծաղելով, վազելով անցան ներքևում։

— Կատերինա Անդրեևնայի մոտ է, բոլորը նրա մոտ է, ma tante[1],— բղավեց աղջիկը։

«Աղջիկը՝ նա՛ էլ այլանդակված է և կոտրատվում է», մտածեց Աննան։ Որպեսզի ոչ ոքի չտեսնի, նա արագ վեր կացավ ու նստեց հակադիր պատուհանի մոտ՝ դատարկ վագոնում։ Կեղտոտված, այլանդակ մի մուժիկ՝ գդակով, որի տակից դուրս էին ցցվել զզղված մազերը, անցավ այդ լուսամուտի մոտով, կռանալով դեպի վագոնի անիվները։ «Ինչ-որ ծանոթ բան կա այս այլանդակ մուժիկի մեջ», մտածեց Աննան։ Եվ հիշելով իր երազը, նա գնաց դեպի հակադիր դուռը, դողալով վախից։ Կոնդուկտորը բացեց դուռը, ներս թողնելով մարդ ու կնոջը։

— Դուք ուզում եք դո՞ւրս գալ։

Աննան չպատասխանեց։ Կոնդուկտորը և ներս եկած զույգը դիմաքողի տակ չնկատեցին սարսափը նրա երեսին։ Նա վերադարձավ իր անկյունը և նստեց։ Զույգը նստեց հակադիր կողմում, ուշադրությամբ, բայց թաքուն դիտելով նրա զգեստը։ Ծ՛վ տղամարդը, և՛ կինը թվում էին Աննային զզվելի։ Ամուսինը հարցրեց, արդյոք թույլ կտա՞ Աննան ծխել, հայտնապես ո՛չ նրա համար, որ ծխի, այլ որպեսզի խոսի նրա հետ։ Ստանալով Աննայի համաձայնությունը, տղամարդը խոսեց կնոջ հետ ֆրանսերեն այն բանի մասին, ինչն ասելը նրան ավելի քիչ էր պետք, քան ծխելը։ Զևանալով, նրանք խոսում, ասում էին հիմարություններ նրա համար միայն, որպեսզի Աննան լսեր։ Աննան պարզ տեսնում էր, թե ինչպե՛ս նրանք ձանձրացրել են իրար և ինչպես ատում են միմյանց։ Ու չէր կարելի չատել այդպիսի ողորմելի հրեշներին։

Լավեց երկրորդ զանգը և դրանից հետո ուղեբեռի տեղաշարժումը, աղմուկ, ճիչ ու ծիծաղ։ Աննայի համար այնպես պարզ էր, որ ոչ ոք ուրախանալու բան չուներ, որ այդ ծիծաղը վրդովեց նրան։ Նա ցավ պատճառելու աստիճան, և նա ուզում էր փակել ականջները, որպեսզի չլսի այն։ Վերջապես զնգաց երրորդ զանգը, հնչեց շոգեկաթսայի ճիչը, ձգվեց շղթան և

[1] Մորաքույր, հորաքույր։

մարդը խաչակնքեց երեսը։ «Հետաքրքրական է հարցնել նրան, թե ինչ է հասկանում նա այդ բանի տակ», մտածեց Աննան, զայրույթով նայելով նրան։ Աննան տիկնոջ կողքից նայեց պատուհանից դուրս՝ պլատֆորմի վրա կանգնած և գնացքը ճանապարհ դնող մարդկանց, որոնք կարծես գլորվում էին ետ-ետ։ Վագոնը, որի մեջ նստել էր Աննան, հաստատորեն ցնցվելով ռելսերի միացման կետերում, անմաշափորեն ցնցվելով ռելսերի միացման կետերում, անցավ կառամատույցի քարե պատի, ուղենիշ սկավառակի և մյուս վագոնների մոտով։ Անիվներն ավելի սահիկ, ավելի անդարտ, թեթև զնգոցով զնգացին ռելսերի վրա, պատուհանը լուսավորվեց երեկոյան պայծառ արևից, և հովիկը խաղաց վարագույրի հետ։ Աննան մոռացավ վագոնում նստած իր հարևանների մասին և գնացքի թեթև օրորումով, ներշնչելով թարմ օդ, նորից սկսեց մտածել։

«Հա՛, ինչի՞ վրա կանգ առա ես։ Այն բանի վրա, որ չեմ կարող մտածել մի վիճակ, որի մեջ կյանքը տանջանք չլիներ։ Մենք ամենքս ստեղծված ենք նրա համար, որ տանջվենք, և որ ամենքս էլ գիտենք դա ու ամենքս էլ միջոցներ ենք մտածում, թե ինչպե՛ս խաբենք ինքներս մեզ։ Իսկ երբ մարդ տեսնում է ճշմարտությունը, ի՞նչ պիտի անի»։

— Բանականությունը տրված է մարդուն նրա համար, որ ազատվի այն բանից, ինչն անհանգստացնում է իրեն,— ասաց տիկինը ֆրանսերեն, հայտնապես զոհ իր ֆրազից ու ծամածռություն անելով լեզվով։

Այդ խոսքերը կարծես պատասխանեցին Աննայի մտքին։

«Ազատվել այն բանից, ինչն անհանգստացնում է», կրկնեց Աննան։ Եվ նայելով կարմրաթուշ մարդուն ու լղար կնոջը, նա հասկացավ, որ հիվանդոտ կինը համարում է իրեն չհասկացված կին, և մարդը խաբում է նրան ու հաստատում է նրա մեջ այդ կարծիքն իր մասին։ Աննան կարծես տեսնում էր նրանց պատմությունը և նրանց հոգու բոլոր ծակուծուկը, և նա շարունակեց իր միտքը, փոխանցելով լույսը նրանց վրա։ Բայց հետաքրքրական ոչինչ չկար, ու նա շարունակեց իր միտքը։

«Այո՛, շատ է անհանգստացնում ինձ, և բանականությունը տրված է մարդուս նրա համար, որ ազատվի. ուրեմն պետք է ազատվել։ Էլ ինչո՞ւ չհանգցնել մոմը, երբ այլևս նայելու

բան չկա, երբ զարշելի է այս բոլորի վրա նայելը։ Բայց ինչպե՞ս։ Ինչո՞ւ այդ կոնդուկտորը վազեց այդպես զգույշ, ինչո՞ւ են բղավում նրանք՝ այդ ջահել մարդիկ՝ այն վագոնում։ Ինչո՞ւ են խոսում նրանք, ինչո՞ւ են ծիծաղում։ Չկա ճիշտ բան, բոլորը սուտ է, բոլորը խաբեություն, բոլորը չարիք է»...

Երբ գնացքը մոտեցավ կայարանին, Աննան դուրս եկավ վագոնից մյուս ուղևորների ամբոխի մեջ և խուսափելով նրանցից, ինչպես բորոտներից, կանգնեց կառամատույցում, աշխատելով հիշել, թե ինչի՞ համար ինքն եկավ այստեղ և ի՞նչ է մտադիր անելու։ Այն բոլորը, ինչն առաջ նրան թվում էր հնարավոր, այժմ այնպես դժվար էր հասկանալ, մանավանդ այս այլանդակ մարդկանց աղմկող ամբոխի մեջ, որոնք հանդիստ չէին թողնում իրեն։ Մերթ մոտ էին վազում նրան արտելականները, առաջարկելով իրենց ծառայությունը, մերթ զննում էին նրան ջահել տղամարդիկ, կրունկները թխկթխկացնելով կառամատույցի տախտակներին և բարձրաձայն զրուցելով, զննում էին նրան, մերթ քաշվում էին ո՛չ այն կողմը՝ նրան ընդառաջ եկող անցորդները։ Մտաբերելով, որ ինքն ուզում էր շարունակել ճանապարհը, եթե պատասխան ստացված չլիներ, Աննան կանգնեցրեց մի արտելականի և հարցրեց, արդյոք այստեղ կառապան չկա՞՝ կոմս Վրոնսկուն հասցեագրած տոմսով։

— Կոմս Վրո՞նսկուն։ Նրանից այս րոպեիս մարդ կար այստեղ։ Դիմավորում էին իշխանուհի Սորոկինային՝ իր աղջկա հետ։ Իսկ կառապանն ի՞նչ տեսակ մարդ է։

Այն միջոցին, մինչ Աննան խոսում էր արտելականի հետ, կառապան Միխայլան, կարմիր-երես, ուրախ, կապույտ պըճնամոլի վերնազգեստով ու շղթայով, հայտնապես հպարտ այն գիտակցությամբ, որ ինքն այնպես լավ կատարեց իրեն արված հանձնարարությունը, մոտեցավ Աննային ու տվեց նրան մի տոմս։ Աննան բացեց տոմսը, և նրա սիրտը ճմլվեց ավելի շուտ, քան նա կկարդար այն։

«Շատ եմ ցավում, որ տոմսը ժամանակին չհասավ ինձ։ Ես կլինեմ ժամը տասին», գրում էր Վրոնսկին անփույթ ձեռագրով։

«Այդպե՞ս։ Ես սպասում էի դրան», մտածեց Աննան չար քմծիծաղով։

— Լա՜վ, որ այդպես է, գնա տուն,— կամաց ասաց նա, դիմելով Միխայլային։ Նա կամաց ասաց, որովհետև սրտի բաբախման արագությունը խանգարում էր նրան շնչել։ «Ո՛չ, ես չեմ թողնի, որ դու տանջես ինձ», մտածեց Աննան, սպառնալիքով դիմելով ո՛չ թե նրան՝ Վրոնսկուն, ո՛չ թե ինքն իրեն, այլ այն անձնավորությանը, որ ստիպում էր իրեն տանջվել, և գնաց կառամատույցով՝ կայարանի մոտից։

Երկու աղախին, որոնք ման էին գալիս կառամատույցում, գլուխները ետ դարձրին, նայելով Աննային և բարձրաձայն քննարկելով տուալետը. «իսկական է», ասացին նրանք՝ նրա վրա եղած ժանյակի մասին։ Երիտասարդները հանգիստ չէին թողնում նրան։ Նրանք նորից նայելով նրա դեմքին և ծիծաղելով, ինչ-որ բան բղավեցին անբնական ձայնով, ու անցան նրա մոտով։ Կայարանապետն անցնելով նրա կողքից, հարցրեց, թե մեկնո՞ւմ է նա։ Կվաս ծախող տղան աչք չէր հեռացնում նրանից։ «Աստված իմ, ո՞ւր գնամ ես», մտածում էր Աննան, ավելի ու ավելի հեռանալով կառամատույցով։ Կառամատույցի ծայրին նա կանգ առավ։ Ակնոցավոր պարոնին դիմավորող կանայք ու երեխաները, որոնք բարձրաձայն ծիծաղում և խոսում էին, լռեցին, նայելով Աննային, երբ հավասարվեց իրենց։ Նա արագացրեց քայլերը և հեռացավ նրանցից՝ դեպի կառամատույցի պլատֆորմի ափը։ Մոտենում էր ապրանքատար գնացքը։ Կառամատույցը ցնցվեց, և նրան թվաց, որ ինքը կրկին գնում է վագոնի մեջ։

Ու հանկարծ հիշելով Վրոնսկու հետ իր առաջին հանդիպման օրը ջախջախված մարդու մասին, նա հասկացավ, թե ի՞նչ պիտի անի ինքը։ Արագ, թեթև քայլերով իջնելով այն աստիճաններից, որոնք ջրհանոցից տանում էին դեպի ռելսերը, նա կանգնեց համարյա կպած իր մոտով անցնող գնացքին։ Նա նայում էր վագոնների ներքնամասին, պտուտակներին ու շղթաներին և դանդաղ գլորվող առաջին վագոնի չուգունե բարձր անիվներին և աշխատում էր աչքաչափով որոշել մեջտեղը առջևի ու ետևի անիվների միջև, ու այն րոպեն, երբ այդ մեջտեղը կլինի իր դիմաց։

«Այնտե՞ղ,— ասում էր նա ինքն իրեն, նայելով վագոնի ստվերին, կոճերի վրա լցրած ածխախառն ավազին,— այն-

տե՞ղ, ճիշտ մեջտեղը, և դրանով կպատժեմ նրան ու կազատվեմ ամենքից և ինքս ինձնից»...

Նա ուզում էր ընկնել մեջտեղով իրեն հավասարված վագոնի տակ. բայց կարմիր պայուսակը, որը նա սկսեց հանել թևից, կասեցրեց նրան, և արդեն ուշ էր. մեջտեղն անցավ նրանից։ Պետք էր սպասել հետևյալ վագոնին։ Նրան համակեց մի զգացում, նման այն զգացումին, երբ լողանալիս պատրաստվում էր մտնել ջուրը, և նա խաչակնքեց երեսը։ Խաչակնքելու սովորական շարժումը հարուցեց նրա հոգում մի ամբողջ շարք կուսական ու մանկական հիշողություններ, և հանկարծ պայթեց խավարը, որ նրա համար ծածկում էր ամեն ինչ, ու մի վայրկյան կյանքը պատկերացավ նրան՝ իր անցած բոլոր պայծառ ուրախություններով։ Բայց նա աչք չէր հեռացնում մոտեցող երկրորդ վագոնի անիվներից։ Եվ ճիշտ այն րոպեին, երբ անիվների միջև եղած տարածության մեջտեղը հավասարվեց նրան, նա դեն գցեց կարմիր պայուսակը ու ներս քաշելով գլուխն ուսերի մեջ, ձեռքերի վրա ընկավ վագոնի տակ և թեթև մի շարժումով, կարծես պատրաստվելով անմիջապես վեր կենալու, ընկավ ծնկների վրա։ Ու հենց նույն վայրկյանին նա սարսափեց այն բանից, ինչ արեց։ «Որտե՞ղ եմ ես։ Ի՞նչ եմ անում, ինչո՞ւ համար»։ Նա ուզում էր վեր կենալ, ետ քաշվել. բայց ինչ-որ վիթխարի, անողոք բան հրեց նրան գլխից ու ձգեց մեջքից։ «Աստվա՞ծ իմ, ներիր բոլորը», մրմնջաց նա, զգալով, որ անհնարին է պայքարը։ Մուժիկն աշխատում էր երկաթի վրա, մռթմռթալով ինչ-որ բան։ Եվ մոմը, որի լույսի տակ Աննան կարդում էր տագնապներով, խաբեություններով, վշտով ու չարիքով լի գիրքը, բոցավառվեց ավելի պայծառ լույսով, քան երբևիցե, լուսավորեց նրա համար այն բոլորը, ինչն առաջ խավարի մեջ էր, ճռթճռթաց, սկսեց հանգչել ու հանգավ ընդմիշտ։

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Անցել էր համարյա երկու ամիս։ Շոգ ամառվա կեսն էր արդեն, բայց Սերգեյ Իվանովիչը դեռ նոր էր պատրաստվում մեկնել Մոսկվայից։

Այդ ժամանակամիջոցին Սերգեյ Իվանովիչի կյանքում էլ իրադարձություններ եղան։ Արդեն մի տարի առաջ ավարտված էր նրա գիրքը, վեց տարվա աշխատանքի պտուղը, որ կոչվում էր Պետականության հիմունքների ու ձևերի տեսության փորձը Եվրոպայում և Ռուսաստանում։ Այդ գրքի որոշ բաժինները և ներածությունը տպագրվել էին պարբերական հրատարակություններում, իսկ մյուս մասերը Սերգեյ Իվանովիչը կարդացել էր իր շրջանի մարդկանց, այնպես որ այդ հեղինակության մտքերն արդեն չէին կարող լիովին նորություն լինել հասարակության համար։ Այսուամենայնիվ, Սերգեյ Իվանովիչը սպասում էր, որ իր գրքի երևան գալը լուրջ տպավորություն կթողնի հասարակության վրա և եթե հեղաշրջում չառաջացնի գիտության մեջ, համենայնդեպս, ուժեղ իրարանցում կբարձրացնի գիտական աշխարհում։

Այդ գիրքը խնամքով մշակելուց հետո տպագրվեց անցյալ տարի և ուղարկվեց գրավաճառներին։

Ոչ ոքի ոչինչ չհարցնելով գրքի մասին, դժկամորեն ու շինծու անտարբերությամբ պատասխանելով իր բարեկամների հարցերին, թե արդյոք ինչպե՞ս է գնում գրքի վաճառքը, նույնիսկ հարցում չանելով գրավաճառներին, թե ինչպե՞ս է ծախվում այն, Սերգեյ Իվանովիչն աշխարհորեն, լարված ուշադրությամբ հետևում էր այն առաջին տպավորությանը, որ կառաջացնի իր գիրքը հասարակության ու գրականության մեջ։

Բայց անցավ մի շաբաթ, երկու, երեք շաբաթ, և հասարակության մեջ նկատելի չէր ոչ մի տպավորություն. նրա բարեկամները, մասնագետներ ու գիտնականներ, երբեմն հայտնապես քաղաքավարությունից դրդված խոսք էին անում գրքի մասին։ Իսկ նրա մնացած ծանոթները, չհետաքրքրվելով գիտական բովանդակություն ունեցող գրքով, բնավ չէին խոսում նրա մասին։ Եվ հասարակության մեջ, որը մանավանդ այժմ զբաղված էր ուրիշ բանով, տիրում էր բացարձակ անտարբերություն։ Գրականության մեջ ևս մի ամբողջ ամիս ո՛չ մի խոսք չկար գրքի մասին։

Սերգեյ Իվանովիչը մանրամասնորեն հաշվեց այն ժամանակը, որը հարկավոր էր ռեցենզիա գրելու համար, բայց անցավ մի ամիս, երկու ամիս, տիրում էր նույն լռությունը։

Միայն Սևերնի ժուկ-ի մեջ, ձայնը կորցրած Դրաբանտի երգչին նվիրված ծաղրական ֆելիետոնում կար ի դեպ ասած մի քանի արհամարհական խոսք Կոզնիշևի գրքի մասին, որոնք ցույց էին տալիս, որ այդ գիրքը վաղուց արդեն դատապարտել են ամենքը և ենթարկել են ընդհանուր ծաղրի։

Վերջապես երրորդ ամսին մի լուրջ հանդեսում տպվեց քննադատական հոդված։ Սերգեյ Իվանովիչը ճանաչում էր նաև հոդվածի հեղինակին։ Մի անգամ հանդիպել էր նրան Գոլուբցովի մոտ։

Հոդվածագիրը շատ երիտասարդ ու հիվանդոտ ֆելիետոնիստ, որպես գրող՝ ուներ շատ կայտառ գրիչ, բայց չափազանց քիչ կրթված և անձնական հարաբերությունների մեջ երկչոտ մարդ էր։

Չնայած հոդվածագրի հանդեպ ունեցած իր լիովին արհամարհանքին, Սերգեյ Իվանովիչն ամենայն հարգանքով սկսեց կարդալ հոդվածը։ Հոդվածը սարսափելի էր։

Հայտնապես, ֆելիետոնիստն ամբողջ գիրքը հասկացել էր այնպես, ինչպես անհնարին էր հասկանալ այն։ Բայց նա այնպես ճարպկորեն էր կատարել քաղվածքները, որ գիրքը չկարդացողների համար (իսկ հավանաբար համարյա ոչ ոք չէր կարդացել այն) միանգամայն պարզ էր, որ ամբողջ գիրքը ո՛չ այլ ինչ էր, բայց եթե վերամբարձ բառերի կուտակում, այն էլ գործածված ո՛չ տեղին (դա ցույց էին տալիս հարցական նշանները), և որ գրքի հեղինակը կատարելապես համ-

բակ է։ Ու այս բոլորն այնպես սրամիտ էր, որ Սերգեյ Իվանովիչն ինքն էլ չէր հրաժարվի այդ սրամտությունից։ Բայց սարսափելին հենց այդ էր։

Չնայած այն կատարյալ բարեխղճությանը, որով Սերգեյ Իվանովիչն ստուգում էր ռեցենզենտի փաստարկների արդարացիությունը, նա ո՛չ մի բոպե կանգ չառավ այն թերությունների և սխալների վրա, որոնք ենթարկվել էին ծաղրի, բայց անմիջապես ակամա սկսեց մտաբերել ամենայն մանրամասնությամբ իր հանդիպումն ու խոսակցությունը հոդվածի հեղինակի հետ։

«Արդյոք ես որևէ բանով չե՞մ վիրավորել նրան», մտածում էր Սերգեյ Իվանովիչը։

Եվ մտաբերելով, թե ինչպես ինքն այդ երիտասարդին հանդիպելիս ուղղեց նրա տգիտությունը ցույց տվող մի բառ, Սերգեյ Իվանովիչը գտավ հոդվածի իմաստի բացատրությունը։

Այդ հոդվածից հետո գրքի մասին տիրեց մեռյալ լռություն՝ թե՛ տպագրական, թե՛ բանավոր, և Սերգեյ Իվանովիչը տեսավ, որ իր վեցամյա երկը, մշակված այնպիսի սիրով ու աշխատանքով, անցավ անհետ։

Սերգեյ Իվանովիչի վիճակն ավելի ևս ծանր էր այն պատճառով, որ գիրքը վերջացնելուց հետո նա այլևս չուներ կաբինետային աշխատանք, որն առաջ կլանում էր նրա ժամանակի մեծ մասը։

Սերգեյ Իվանովիչը խելոք էր, կրթված, առողջ, գործունյա և չգիտեր, թե ինչի՞ վրա սպառի իր գործունեությունը։ Խոսակցությունները համագումարներում, ընդունարաններում, ժողովներում, կոմիտեներում, ամենուր, որտեղ կարելի էր խոսել, գրավում էին նրա ժամանակի մի մասը միայն. բայց նա, քաղաքի հին բնակիչ, թույլ չէր տալիս իրեն ամբողջովին տարվելու այդ խոսակցություններով, ինչպես անում էր նրա անփորձ եղբայրը, երբ լինում էր Մոսկվայում. էլի մնում էր շատ ազատ ժամանակ և մտավոր շատ ուժ։

Նրա բախտից, գրքի անհաջողության պատճառով նրա համար այդ ամենածանր ժամանակ օտարազգիների, ամերիկյան բարեկամների, Սամարայի սովի, ցուցահանդեսի, սպիրիտիզմի հարցերին սկսեց փոխարինել սլավոնական հարցը, որը մինչ այդ միայն մարմրում էր հասարակության մեջ, և Սեր-

գեյ Իվանովիչը, առաջ էլ լինելով այդ հարցը հարուցողներից մեկը, ամբողջովին տարվեց դրանով։

Այն մարդկանց շրջանում, որին պատկանում էր Սերգեյ Իվանովիչը, ուրիշ բանի մասին չէին խոսում ու գրում, բացի՝ սլավոնական հարցից և սերբական պատերազմից։ Այն բոլորը, ինչ անում է սովորաբար պարապ ամբոխը, ժամանակ սպանելով, արվում էր այժմ հօգուտ սլավոնների։ Պարահանդեսներ, համերգներ, ճաշեր, հանդիսավոր ճառեր, կանացի արդուզարդեր, գարեջուր, գինետներ,— բոլորը, բոլորը վկայում էր սլավոններին կարեկցելու մասին։

Սերգեյ Իվանովիչը համաձայն չէր տվյալ հարցի շատ մանրամասնություններին, ինչ ասում և գրում էին այդ առթիվ։ Նա տեսնում էր, որ սլավոնական հարցը դարձել է մեկն այն մոդայիկ հրապուրանքներից, որոնք միշտ փոխարինելով իրար, հանդիսանում են հասարակության համար զբաղմունքի առարկա։ Տեսնում էր նաև այն, որ շատ մարդիկ նույն գործով զբաղվում են շահախնդրական, սնափառ նպատակներով։ Նա ընդունում էր, որ թերթերը տպագրում են շատ անպետք ու չափազանցրած բաներ մի նպատակով միայն՝ ուշադրության արժանանալու և ուրիշներին ձայնախեղդ անելու համար։ Նա տեսնում էր, որ հասարակության տրամադրության այդ ընդհանուր բարձրացման պայմաններում առաջ էին վազում և մյուսներից ավելի բարձրաձայն բղավում բոլոր ձախողակ ու անհատապես վիրավորված մարդիկ. գլխավոր հրամանատարներ՝ առանց բանակների, մինիստրներ՝ առանց մինիստրությունների, ժուռնալիստներ՝ առանց ամսագրերի, պարտիզանական խմբերի պետեր՝ առանց պարտիզանների։ Նա տեսնում էր, որ այդտեղ կար թեթևամիտ ու ծիծաղելի շատ բան. բայց տեսնում և համարում էր աներկբա ծավալված այն խանդավառությունը, որը միավորում էր հասարակության բոլոր դասակարգերը, և որը չէր կարելի չհամակրել։ Դավանակիցների ու սլավոն եղբայրների կոտորածը առաջացրեց կարեկցություն դեպի տառապողները և վրդովմունք դեպի հարստահարիչները։ Եվ վեհ գործի համար պայքարող սերբերի ու չերնոգորցիների հերոսությունը ամբողջ ժողովրդի մեջ ցանկություն հարուցեց օգնելու իր եղբայրներին արդեն ո՛չ թե խոսքով, այլ գործով։

Բայց միաժամանակ կար մի այլ, Սերգեյ Իվանովիչի համար

ուրախալի երևույթ. դա հասարակական կարծիքի երևան գալն էր։ Հասարակությունը որոշակիորեն արտահայտեց իր ցանկությունը։ Ժողովրդական հոգին ստացավ արտահայտություն, ինչպես ասում էր Սերգեյ Իվանովիչը։ Ու որքան ավելի էր նա զբաղվում այդ գործով, այնքան ավելի բացահայտորեն թվում էր նրան, թե դա մի գործ է, որ պետք է հասնի հսկայական չափերի, պետք է դարաշրջան կազմի։

Նա իրեն գլխովին նվիրեց այդ մեծ գործին ու մոռացավ, այլևս չէր մտածում իր գրքի մասին։

Նրա ամբողջ ժամանակն այժմ զբաղված էր, այնպես որ չէր հասցնում պատասխանելու իրեն ուղղված բոլոր նամակներին ու պահանջներին։

Աշխատելով ամբողջ գարունը և ամառվա մի մասը, նա հուլիս ամսին միայն պատրաստվեց գնալ գյուղ՝ եղբոր մոտ։

Նա գնում էր և՛ հանգստանալու երկու շաբաթով, և՛ ժողովրդի սրբության սրբոցի մեջ՝ գյուղական խուլ անկյունում՝ հրճվելու ժողովրդական ոգու այն բարձրացման տեսքով, որի մեջ լիովին համոզված էին նա ինքը և մայրաքաղաքների ու քաղաքների բոլոր բնակիչները։ Նրա հետ գնաց Կատավասովը, որը վաղուց էր պատրաստվում կատարելու Լևինին արած իր խոստումը՝ այցելելու նրան։

II

Սերգեյ Իվանովիչն ու Կատավասովը հազիվ կարողացան մոտենալ ժողովրդով այսօր առանձնապես եռուն Կուրսկի երկաթուղու կայարանին և դուրս գալով կառեթից, հազիվ տեսան իրենց ետևից իրերը բերող ծառային, երբ կայարանին մոտեցան նաև կամավորները՝ չորս կառքով։ Ծաղկեփնջերով կանայք դիմավորեցին կամավորներին ու սրանց ետևից հորդած ամբոխի ուղեկցությամբ մտան կայարան։

Կամավորներին դիմավորող տիկիններից մեկը դուրս գալով դահլիճից, դիմեց Սերգեյ Իվանովիչին։

— Դուք է՞լ եք եկել ճանապարհ դնելու,— հարցրեց տիկինը ֆրանսերեն։

— Ո՛չ, ես ի՛նքս գնում եմ, իշխանուհի, հանգստանալու եղբորս մոտ։ Իսկ դուք մի՞շտ ճանապարհ եք դնում,— ասաց Սերգեյ Իվանովիչը հազիվ նկատելի ժպիտով։

— Այլ կերպ չի՛ կարելի,— պատասխանեց իշխանուհին։ — Ճի՞շտ է, որ մեր կողմից արդեն ուղարկված է ութ հարյուր։ Մալվինակին չէր հավատում ինձ։

— Ութ հարյուրից ավելի։ Եթե հաշվենք նաև նրանց, ովքեր գնացել են ո՛չ ուղղակի Մոսկվայից, արդեն հազարից ավելի է,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ա՜յ, ահա։ Ես էլ էի ասում,— ուրախ արձագանքեց տիկինը։ — Հո ճի՞շտ է, որ այժմ արդեն նվիրաբերված է մոտ մի միլիոն։

— Ավելին, իշխանուհի։

— Իսկ ի՞նչ հեռագիր է այսօրվա հեռագիրը։ Նորից ջարդել են թուրքերին։

— Այո՛, ես կարդացի,— պատասխանեց Սերգեյ Իվանովիչը։ Նրանք ասում էին վերջին հեռագրի մասին, որը հաստատում էր, որ երեք օր շարունակ թուրքերը ջարդվել են բոլոր կետերում ու փախչում են և որ վաղն սպասվում է վճռական ճակատամարտ։

— Ա՜խ, հա, գիտե՞ք, մի հիանալի երիտասարդ խնդրում էր՝ գնալ կամավոր։ Չգիտեմ, ինչո՞ւ էին դժվարացնում։ Ես ուզում էի խնդրել ձեզ, ճանաչում եմ նրան, բարի եղեք մի տոմս գրել։ Նա ուղարկված է կոմսուհի Լիդիա Իվանովնայի կողմից։

Հարցնելով այն մանրամասները, որ գիտեր իշխանուհին կամավոր գնացող երիտասարդի մասին, Սերգեյ Իվանովիչը, անցնելով առաջին կարգի սրահը, տոմս գրեց այն անձին, որից կախված էր այդ գործը, և տվեց իշխանուհուն։

—Գիտե՞ք, կոմս Վռոնսկին, հայտնի... գնում է այս գնացքով,— ասաց իշխանուհին հանդիսավոր ու բազմանշանակալից ժպիտով, երբ Կոզնիշևը նորից գտավ իշխանուհուն ու հանձնեց տոմսը։

— Ես լսեցի, որ նա գնում է, բայց չգիտեի ե՛րբ։ Ա՞յս գնացքով։

— Ես տեսա նրան։ Նա այստեղ է. նրան ճանապարհ է գցում մայրը միայն։ Այսուամենայնիվ՝ դա լավագույն բանն է, որ կարող էր նա անել։

— Օ՜, իհարկե։

Այն միջոցին, մինչ խոսում էին նրանք, ամբոխը նրանց մոտով հորդեց դեպի ճաշի սեղանը։ Նրանք նույնպես մոտ գնացին ու լսեցին մի պարոնի բարձր ձայնը, որ ճառ էր ասում կամավորներին, բաժակը ձեռքին։ «Ծառայել հանուն հավատի, հանուն մարդկության, հանուն մեր եղբայրների,— ասում էր պարոնը, հետզհետե ավելի բարձրացնելով ձայնը։ — Մայր Մոսկվան օրհնում է ձեզ վեհ գործի։ «Ժի՛վիո»,—բարձրաձայն և արտասվալից եղրափակեց նա։

Ամենքը բղավեցին՝ ժիվիո, և էլի մի նոր ամբոխ խուժեց դահլիճ ու քիչ մնաց, որ գետին գլորեր իշխանուհուն։

— Ա՜, իշխանուհի, ինչպես է,— փայլելով պայծառ ժպիտով, ասաց Ստեպան Արկադևիչը, որը հանկարծ հայտնվեց ամբոխի մեջտեղը։ — Իսկապես փառավոր խոսեց, ջերմ շնչով ասաց, այնպես չէ՞։ Բռա՛վո։ Սերգեյ Իվա՛նովիչն էլ։ Եթե դուք էլ ձեր կողմից այդպես մի քանի խոսք ասեիք, գիտե՞ք, քաջալերական խոսք. դուք դա այնպես լավ կարող եք անել,— ավելացրեց նա քնքուշ, հարգալից և զգույշ ժպիտով, թեթև առաջ շարժելով Սերգեյ Իվանովիչին, բռնած նրա ձեռքից։

— Ո՛չ, ես գնում եմ։

— Ո՞ւր։

— Գյուղ, եղբորս մոտ,— պատասխանեց Սերգեյ Իվանովիչը։

— Ուրեմն, դուք կտեսնեք իմ կնոջը։ Ես գրել եմ նրան, բայց դուք ավելի շուտ կտեսնեք, խնդրեմ, ասացեք նրան, որ տեսաք ինձ և որ all right[2]. Նա կհասկանա։ Սակայն բարի եղեք ասել նրան, որ ես նշանակվել եմ միացյալ հանձնաժողովի... Մի խոսքով, նա կհասկանա։ Գիտե՞ք, Les petites misères de la vie humaine[3],— կարծես ներողություն խնդրելով, դիմեց Օբլոնսկին իշխանուհուն։— Իսկ Մյագկայան, ո՛չ թե Լիզան, այլ Բիբիշը, այսուամենայնիվ ուղարկում է հազար հրացան և տասներկու գթության քույր։ Ես չէի՞ ասում ձեզ։

— Այո՛, ես լսեցի,— պատասխանեց Կոզնիշևը դժկամորեն։

— Ափսո՛ս, որ դուք գնում եք,— ասաց Ստեպան Արկադևիչը։ — Վաղը մենք ճաշ ենք տալիս երկու գնացողի՝ Դիմեր-

---

1 Կեցցե։

2 Ամեն ինչ կարգին է։

3 Մարդկային կյանքի փոքրիկ թուլություններ։

Բարոնյանսկուն Պետերբուրգից և մեր Վեսլովսկուն՝ Գրիշային։ Երկուսն էլ գնում են։ Վեսլովսկին նորերս ամուսնացավ։ Ա՛յ, կտրիճ տղա։ Այնպես չէ՞, իշխանուհի,— դիմեց նա տիկնոջը։

Իշխանուհին չպատասխանելով նրան, նայեց Կոզնիշևին։ Բայց բնավ չէր շփոթեցնում Ստեպան Արկադևիչին այն հանգամանքը, որ Սերգեյ Իվանովիչը և իշխանուհին կարծես թե ուզում էին ազատվել նրանից։ Նա ժպտալով նայում էր մերթ իշխանուհու գլխարկի փետուրին, մերթ իր շուրջը, ասես մի բան մտաբերելով։ Տեսնելով հանգանակության տուփ տանող տիկնոջը, նա մոտ կանչեց նրան և դրեց տուփի մեջ հինգ ռուբլիանոց մի թղթադրամ։

— Չեմ կարող հանգիստ տեսնել այդ տուփերը, քանի դրամ ունեմ,— ասաց նա։ — Իսկ ո՞նց է այսօրվա հեռագիրը։ Ապրե՞ն չերնոգորցիք։

— Ի՞նչ եք ասում,— ճչաց նա, երբ իշխանուհին ասաց նրան, որ Վրոնսկին գնում է այդ գնացքով։ Մի վայրկյան Ստեպան Արկադևիչի դեմքն արտահայտեց տխրություն, բայց մի րոպեից հետո, երբ թեթև ցատկոտելով յուրաքանչյուր ոտի վրա և ուղղելով բակենբարդները, նա մտավ այն սենյակը, որտեղ գտնվում էր Վրոնսկին, Ստեպան Արկադևիչն արդեն մոռացավ իր հուսահատական հեկեկանքը քրոջ դիակի առաջ ու տեսավ հանձին Վրոնսկու միայն հերոսի և վաղեմի բարեկամի։

— Իր բոլոր թերություններով հանդերձ չի կարելի նրան արժանին չհատուցել,— ասաց իշխանուհին Սերգեյ Իվանովիչին, հենց որ Օբլոնսկին հեռացավ նրանցից։ — Հիրավի, լիովին ռուսական, սլավոնական բնավորություն։ Միայն ես վախենում եմ, որ Վրոնսկու համար անախորժ լինի նրան տեսնելը։ Ինչ կուզեք ասեք, ինձ հուզում է այդ մարդու ճակատագիրը։ Ճանապարհին խոսեք նրա հետ,— ասաց իշխանուհին։

— Այո՛, կարող է պատահել, որ խոսեմ, եթե առիթ լինի։

— Ես երբեք չեմ սիրել նրան։ Բայց այս արարքը շատ բան է քավում։ Նա ո՛չ միայն ինքն է գնում, այլև իր հաշվին տանում է մի էսկադրոն։

— Այո՛, ես լսեցի։

Լսվեց զանգի ձայն։ Ամենքը խռնվեցին դեպի դռները։

— Ահա նա,— ասաց իշխանուհին, ցույց տալով Վրոնսկուն՝ երկար վերարկուով և լայնեզր սև գլխարկով, մոր հետ թևանցուկ գնալիս։ Օբլոնսկին գնում էր նրա կողքից, աշխուժությամբ պատմելով ինչ-որ բան։

Վրոնսկին խոժոռված նայում էր իր դիմաց, կարծես չլսելով այն, ինչ ասում էր Ստեպան Արկադևիչը։

Երևի, Օբլոնսկու ցուցմունքով, նա նայեց այն կողմ, որտեղ կանգնել էին իշխանուհին ու Սերգեյ Իվանովիչը, և լուռ բարձրացրեց գլխարկը։ Նրա ծերացած ու տառապանք արտահայտող դեմքը թվում էր քարացած։

Դուրս գալով կառամատույց, Վրոնսկին լուռ առաջ գցելով մորը, գնաց մտավ վագոնի բաժանմունքը։

Կառամատույցում լսվեցին տե՛ր, պաճիր կայսրին, հետո ուռռա՝ և ժի՛վիո բացականչությունները։ Կամավորներից մեկը՝ բարձրահասակ, շատ ջահել մի երիտասարդ, ներս ընկած կրծքով, առանձնապես նկատելի կերպով գլխաողջույն էր տալիս, թափահարելով օդի մեջ թաղիքե գլխարկը և ծաղկեփունջը։ Նրա ետևից գլուխները դուրս էին հանում, նույնպես ողջունելով, երկու սպա և մի հասակավոր մարդ՝ մեծ մորուքով, ճարպոտած գդակով։

III

Հրաժեշտ տալով իշխանուհուն, Սերգեյ Իվանովիչը մոտ եկած Կատավասովի հետ մտավ ծայրեծայր լեցուն վագոնը, և գնացքը շարժվեց։

Ցարիցին կայարանում գնացքը դիմավորեցին մի խումբ երիտասարդներ, որոնք երգում էին «Ցնծա՛»։ Կամավորները նրանից ողջունում էին և գլուխները դուրս ցցում պատուհաններից, բայց Սերգեյ Իվանովիչը ուշադրություն չէր դարձնում նրանց վրա. նա այնքան շատ գործ էր ունեցել կամավորների հետ, որ արդեն գիտեր նրանց ընդհանուր տիպը, և դա չէր հետաքրքրում նրան։ Իսկ Կատավասովը տարված իր գիտական զբաղմունքներով, առիթ չէր ունեցել դիտելու կամավորներին, այժմ շատ հետաքրքրվում էր նրանցով և հարցուփորձ էր անում նրանց մասին Սերգեյ Իվանովիչին։

Սերգեյ Իվանովիչը խորհուրդ տվեց նրան՝ գնալ երկրորդ

կարգի վագոն և անձամբ խոսել նրանց հետ։ Հետևյալ կայարանում Կատավասովը կատարեց այդ խորհուրդը։

Առաջին կանգառում նա անցավ երկրորդ կարգը և ծանոթացավ կամավորների հետ։ Նրանք նստել էին վագոնի անկյունում, բարձրաձայն զրուցելով ու հայտնապես իմանալով, որ ուղևորների և ներս մտած Կատավասովի ուշադրության կենտրոնն իրենք են։ Ամենքից ավելի բարձր էր խոսում ներս ընկած կրծքով բարձրահասակ պատանին։ Նա, ըստ երևույթին, հարբած էր և պատմում էր իրենց հիմնարկում պատահած ինչ-որ դեպքի մասին։ Նրա դիմաց նստել էր արդեն ո՛չ երիտասարդ մի սպա, ավստրիական գվարդիայի համազգեստի զինվորական ֆուֆայկայով։ Նա ժպտալով լսում էր պատմողին ու կանգնեցնում էր նրան։ Երրորդը, հրետանային համազգեստով, նստել էր նրանց մոտ, ճամպրուկի վրա։ Չորրորդը քնած էր։

Խոսակցության բռնվելով պատանու հետ, Կատավասովն իմացավ հետևյալը. դա մոսկվացի հարուստ վաճառական էր, որը մինչև քսաներկու տարեկան հասակը վատնել էր մեծ կարողություն։ Նա դուր չեկավ Կատավասովին այն պատճառով, որ փափկակեցության ընտելացած, երես առած ու վատառողջ մեկն էր։ Նա հայտնապես հավատացած էր, մանավանդ այժմ՝ խմելուց հետո, որ կատարում է հերոսական գործ, և պարծենում էր ամենատհաճ ձևով։

Մյուսը՝ պաշտոնաթող սպան, նույնպես անախորժ տպավորություն թողեց Կատավասովի վրա։ Ինչպես երևում է, ամեն բան փորձած մարդ էր։ Նա ծառայել էր և՛ երկաթուղու վրա, եղել էր և՛ կառավարիչ, ինքն էլ հիմնել էր ֆաբրիկաներ, խոսում էր ամեն բանի մասին, առանց որևէ կարիքի և անտեղի գործածելով գիտական բառեր։

Երրորդը, հրետանավորը, ընդհակառակն՝ շատ դուր եկավ Կատավասովին։ Նա համեստ, հանգիստ մարդ էր, որ հայտնապես խոնարհվում էր գվարդիայի պաշտոնաթող սպայի գիտության ու վաճառականի հերոսական անձնազոհության առաջ և իր մասին ոչինչ չէր խոսում։ Երբ Կատավասովը հարցրեց, թե ի՞նչը դրդեց նրան գնալ Սերբիա, նա համեստորեն պատասխանեց.

— Է՞հ, ի՞նչ առած. ամենքը գնում են։ Պետք է օգնել նաև սերբերին։ Մեղք են։

— Այո՛, մանավանդ, որ հրետանավորներ այնտեղ քիչ կան,— ասաց Կատավասովը։

— Բայց ես քիչ եմ ծառայել հրետանում. գուցե ինձ նշանակեն հետևազորի կամ հեծելազորի մեջ։

— Ո՞նց թե հետևազորի մեջ, երբ ամենից ավելի հրետանավորների կարիք կա,— ասաց Կատավասովը, նրա տարիքից ենթադրելով, որ նա արդեն պետք է ունենա բավական բարձր աստիճան։

— Ես քիչ եմ ծառայել հրետանազորում, ես հրաժարական տվի յունկեր եղած ժամանակս,— ասաց նա և սկսեց պատմել, թե ինչո՛ւ քննություն չբռնեց։

Այս բոլորը միասին վատ տպավորություն թողեցին Կատավասովի վրա, և երբ կամավորները դուրս եկան կայարան խմելու, Կատավասովն ուզում էր մեկն ու մեկի հետ զրուցելով ստուգել իր աննպաստ տպավորությունը։ Զինվորական վերարկուով մի ծերունի ուղևոր ամբողջ ժամանակ ականջ էր դնում կամավորների հետ Կատավասովի սկսած խոսակցությանը։ Մնալով նրա հետ մենակ, Կատավասովը դիմեց նրանու

— Այո՛, դրությունների ի՞նչ բազմապիսություն կա բոլոր այս մարդկանց մեջ, որոնք ուղևորվում են այնտեղ,— անորոշ ասաց Կատավասովը, կամենալով արտահայտել իր կարծիքը և միաժամանակ իմանալ ծերունու կարծիքը։

Ծերուկը եղել էր զինվորական և մասնակցել երկու ռազմարշավի։ Նա գիտեր, թե ի՞նչ բան է զինվորական մարդը, և այդ պարոնների տեսքից ու խոսակցությունից, և այն քաջեռանդից, որով նրանք ճանապարհին ծծում էին օղիով լի տափաշշերը, նա նրանց համարում էր վատ զինվորական։ Բացի դրանից, նա գավառական քաղաքի բնակիչ էր և ուզում էր պատմել, թե ինչպես իրենց քաղաքից անժամկետ, հարբեցող ու գող մի զինվոր գնաց կամավոր, որին ոչ ոք այլևս աշխատանքի չէր վերցնում։ Բայց փորձից իմանալով, թե հասարակության այժմյան տրամադրությամբ վտանգավոր է ընդհանուր կարծիքին հակառակ կարծիք հայտնել և, մանավանդ, դատապարտել կամավորներին, նա նույնպես դիտում, հետաքրքրում էր Կատավասովին։

— Ի՜նչ արած. չէ՞ որ այնտեղ մարդիկ են պետք,— ասաց նա, ծիծաղելով աչքերով։ Եվ նրանք խոսեցին վերջին ռազմական նորությունների մասին, ու երկուսն էլ իրարից թաքցրին իրենց տարակուսանքն այն առթիվ, թե ո՛ւմ հետ է վաղը ճակատամարտ սպասվում, երբ թուրքերը, համաձայն վերջին տեղեկությունների, ջարդված են բոլոր կետերում։ Եվ այսպես բաժանվեցին նրանք իրարից, առանց հայտնելու իրենց կարծիքը։

Կատավասովը մտնելով իր վագոնը, ակամա կեղծելով, պատմեց Սերգեյ Իվանովիչին իր դիտողությունները կամավորների մասին, որից երևաց, որ նրանք հիանալի տղաներ էին։

Մեծ կայարանում՝ քաղաքում, նորից դիմավորեցին կամավորներին երգով ու բացականչություններով, նորից հանդես եկան տուփերով հանգանակություն անող կանայք ու տղամարդիկ, և նորից նահանգական տիկինները ծաղկեփնջեր մատուցեցին կամավորներին ու նրանց ետևից գնացին բուֆետ. այս բոլորն արդեն շատ ավելի թույլ էր և փոքր ծավալով, քան Մոսկվայում։

IV

Նահանգական քաղաքում կանգառի միջոցին Սերգեյ Իվանովիչը չգնաց բուֆետ, այլ սկսեց ետ ու առաջ քայլել կառամատույցում։

Առաջին անգամ անցնելով Վռոնսկու բաժանմունքի մոտով, նա նկատեց, որ լուսամուտի վարագույրը փակ էր։ Բայց անցնելով երկրորդ անգամ, նա տեսավ լուսամուտի առաջ պառավ կոմսուհուն։ Վերջինս կանչեց իր մոտ Կոզնիշևին։

— Ահա գնում եմ, ճանապարհ եմ դնում նրան մինչև Կուրսկ,— ասաց կոմսուհին։

— Այո՛, ես լսեցի,— ասաց Սերգեյ Իվանովիչը, կանգ առնելով կոմսուհու պատուհանի մոտ ու ներս նայելով։— Ի՜նչ հիանալի բնութագիծ նրա կողմից,— ավելացրեց նա, նկատելով, որ Վռոնսկին բաժանմունքում չէ։

— Այո՛, այո՛, այն դժբախտությունից հետո էլ ի՜նչ պիտի աներ նա։

— Ի՜նչ սոսկալի դեպք,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ա՜խ, ի՜նչ ապրումներ ունեցա ես։ Ներս եկեք... Ա՜խ, ի՜նչ ապրումներ ունեցա ես,— կրկնեց կոմսուհին, երբ Սերգեյ Իվանովիչը ներս մտավ ու նստեց նրա կողքին, բազմոցին։— Դա անկարելի է երևակայել։ Վեց շաբաթ նա չէր խոսում ոչ ոքի հետ և ուտում էր միայն այն ժամանակ, երբ ես աղաչում, աղերսում էի նրան։ Եվ ո՛չ մի րոպե չէր կարելի նրան թողնել մենակ։ Մենք վերցրինք, թաքցրինք ամեն բան, որով նա կարող էր ինքնասպանություն գործել։ Մենք ապրում էինք ներքևի հարկում, բայց չէր կարելի ոչինչ նախատեսել։ Դուք հո գիտեք, որ նա մի անգամ ինքնասպանության փորձ արեց այդ նույն կնոջ պատճառով,— ասաց կոմսուհին, և նրա հոնքերը կիտվեցին այդ հիշողությունից։— Այո՛, նա վերջացրեց այնպես, ինչպես պետք է վերջացներ այդպիսի կինը։ Մինչև անգամ մահն էլ նա ընտրեց ստոր, անարգ։

— Մե՛նք չէ, որ պիտի դատենք, կոմսուհի,— ասաց Սերգեյ Իվանովիչը հառաչանքով,— բայց ես հասկանում եմ, թե ձեզ համար որքա՜ն ծանր էր այդ։

— Ա՜խ, էլ մի ասեք։ Ես ապրում էի իմ խալվածքում, և Ալեքսեյն ինձ մոտ էր։ Բերում են մի տոմս։ Նա պատասխան գրեց և ուղարկեց։ Մենք ոչինչ չգիտեինք, որ նա այդ ժամանակ եղել է կայարանում։ Երեկոյան, երբ ես գնացի իմ սենյակը, իմ Մերին հայտնում է ինձ, որ կայարանում մի տիկին իրեն գցել է գնացքի տակ։ Կարծես մի բանով խփեցին գլխիս։ Ես հասկացա, որ դա նա է։ Առաջինը, ինչ ասացի ես՝ ոչինչ չհայտնել Ալեքսեյին։ Բայց նրանք արդեն ասել էին։ Նրա կառապանն այնտեղ էր ու տեսել էր բոլորը։ Երբ ես վազեցի նրա սենյակը, նա արդեն գլուխը կորցրել էր, սոսկալի էր նրա վրա նայելը։ Նա ո՛չ մի խոսք չասաց ու վազեց այնտեղ։ Ես չգիտեմ, թե ի՜նչ էր կատարվել այնտեղ, բայց նրան բերեցին մեռածի պես։ Ես չէի կարող ճանաչել նրան։ Prustration complète[1] ասում էր բժիշկը։ Հետո սկսվեց գրեթե կատաղություն։ Ա՜խ, ի՜նչ ասեմ,— ասաց կոմսուհին, անելով ձեռքի հուսահատական շարժում։— Սոսկալի՜ ժամանակ. ո՛չ, ի՜նչ կուզեք ասեք, վատ կին էր, վա՜տ։ Ի՜նչ վայրենի, հուսահատական կիրք։ Ինչ-որ հասարակ բան ապացուցելու մոլություն։ Եվ նա

[1] Ուժերի լիակատար անկում։

ապացուցեց։ Նա կործանեց իրեն և երկու հիանալի մարդու՝ իր ամուսնուն և իմ դժբախտ որդուն։

— Իսկ ինչպե՞ս է նրա ամուսինը,— հարցրեց Սերգեյ Իվանովիչը։

— Նա վերցրեց այդ կնոջ աղջկան։ Ալյոշան սկզբում ամեն բանի համաձայն էր։ Բայց հիմա նրան սաստիկ տանջում է այն, որ նա իր աղջկան տվեց օտար մարդու։ Բայց չի կարող ետ վերցնել տված խոսքը։ Կարենինը եկել էր Թաղմանը։ Բայց մենք աշխատում էինք, որ նա չհանդիպեր Ալյոշային։ Նրա համար, այսինքն՝ ամուսնու համար դա, այսուամենայնիվ, ավելի թեթև էր։ Այդ կինը նրան ազատեց կաշկանդումից։ Բայց իմ խեղճ որդին գլխովին անձնատուր եղավ այդ կնոջը։ Թողեց ամեն ինչ՝ կարիերա, ինձ, և այս բոլորից հետո էլ այդ կինը չխղճաց նրան, այլ դիտմամբ բոլորովին խորտակեց նրա կյանքը։ Ո՞չ, ինչ ուզում եք ասեք, նրա մահն ինքնին անկրոն, գարշելի կնոջ մահ է։ Թող ների ինձ աստված, բայց ես չեմ կարող չատել այդ կնոջ հիշատակը, տեսնելով որդուս կործանումը։

— Սակայն հիմա ինչպե՞ս է նա։

— Աստված մեզ օգնեց, որ սկսվեց այդ սերբական պատերազմը։ Ես ծեր կին եմ, ոչինչ չեմ հասկանում այդ բանից, բայց դա աստված ուղարկեց նրա՛ համար։ Հասկանալի է, որ ինձ համար, որպես մոր, դա սարսափելի է. և որ գլխավորն է, ասում են, իբր ce n'est pas très bien vu à Pétersburg[1]։ Բայց ի՞նչ արած։ Միակ բանը, որ կարող էր բարձրացնել նրան։ Ցաշվինը՝ նրա ընկերը, բոլորը տանուլ տվեց թղթախաղում և պատրաստվում էր գնալ Սերբիա։ Նա եկավ մոտն ու համոզեց։ Այժմ դա՛ է զբաղեցնում նրան։ Խնդրեմ խոսեք նրա հետ, կուզենայի որ ցրվեր մի քիչ։ Նա այնպես տխո՞ւր է։ Հակառակի պես՝ ատամներն էլ ցավում են։ Իսկ ձեզ հետ տեսնվելուց նա շատ կուրախանա։ Բարի եղեք, խնդրեմ, խոսել նրա հետ, նա ման է գալիս այս կողմից։

Սերգեյ Իվանովիչն ասաց, որ շատ ուրախ է, և անցավ գնացքի մյուս կողմը։

[1] Այդ բանին խեթ աչքով են նայում Պետերբուրգում։

IV

Կառամատույցում թափած պարկերի երեկոյան շեղակի ստվերում Վրոնսկին, հագած երկար վերարկու և գլխարկը քաշած աչքերին, ձեռքերը գրպաններում, քայլում էր, ինչպես գազանը վանդակում, արագ ետ դառնալով քսաներորդ քայլից։ Սերգեյ Իվանովիչին թվաց, երբ մոտենում էր նրան, որ Վրոնսկին տեսնում է իրեն, բայց ձևանում է, իբր չի տեսնում։ Սերգեյ Իվանովիչի համար դա միևնույն էր։ Նա բարձր էր կանգնած Վրոնսկու հետ եղած ամեն անձնական հաշիվներից։

Այդ րոպեին Վրոնսկին Սերգեյ Իվանովիչի աչքերում կարևոր գործիչ էր մի մեծ գործի համար, և Կոզնիշևն իր պարտքն էր համարում քաջալերել ու խրախուսել նրան։ Նա մոտեցավ Վրոնսկուն։

Վրոնսկին կանգ առավ, խորազնին նայեց, ճանաչեց և մի քանի քայլ ընդառաջելով Սերգեյ Իվանովիչին, ամուր սեղմեց նրա ձեռքը։

— Գուցե դուք չէիք կամենում տեսնվել ինձ հետ,— ասաց Սերգեյ Իվանովիչը.— բայց արդյոք ես չե՞մ կարող օգտակար լինել ձեզ։

— Ամենից քիչ անախորժ է ինձ համար ձեզ հետ հանդիպելը, քան ուրիշ մեկի,— ասաց Վրոնսկին։ Ներեցեք ինձ։ Կյանքում ինձ համար հաճելի ոչինչ չկա։

— Ես հասկանում եմ և կուզենայի առաջարկել ձեզ իմ ծառայությունը,— ասաց Սերգեյ Իվանովիչը, խորազնին նայելով Վրոնսկու հայտնապես տանջվող դեմքին։— Արդյոք ձեզ նամակ պե՞տք է, ուղղված Ռիստիչին, Միլանին։

— Օ՜, ո՛չ,— ասաց Վրոնսկին, կարծես դժվարությամբ հասկանալով։— Եթե ձեզ համար միևնույն է, ապա քայլենք այստեղ։ Վագոններում այնպես տոթ է։ Նամա՞կ։ Ո՛չ, շնորհակալ եմ. մեռնելու համար հանձնարարականներ պետք չեն։ Գուցե հանձնարարական թուրքերի՞ն...— ասաց նա, ժպտալով միայն բերանով։ Աչքերի մեջ նկատվում էր էլի նույն բարկացած-տառապող արտահայտությունը։

— Այո՛, բայց թերևս ձեզ համար ավելի հեշտ կլինի նախապատրաստված մարդու հետ հաստատել հարաբերություններ, որոնք, այսուամենայնիվ, անհրաժեշտ են։ Սակայն ինչ-

պես կամենաք։ Ես շատ ուրախ էի, լսելով ձեր որոշման մասին։ Առանց այդ էլ հարձակումներն այնքան շատ են կամավորների վրա, որ ձեզ նման մարդը կբարձրացնի հասարակական կարծիքը նրանց հանդեպ։

— Ես, որպես մարդ, լավ եմ այն տեսակետից,— ասաց Վրոնսկին,— որ կյանքն ինձ համար ոչինչ չարժե։ Իսկ որ իմ մեջ կա բավարար չափով ֆիզիկական եռանդ, որպեսզի մրխվեմ կառեի մեջ և տրորեմ կամ ընկնեմ,— այդ ես գիտեմ։ Ես ուրախ եմ, որ կա մի բան, ինչի համար արժե զոհաբերել կյանքը, որը ոչ թե պետք չէ ինձ, այլ դարձել է զզվելի։ Մեկն ու մեկին պետք կգա։— Եվ նա այտոսկրով արեց անհամբեր շարժում ատամի տնքացող ցավից, որը խանգարում էր նրան նույնիսկ խոսելու այն արտահայտությամբ, որով ուզում էր խոսել։

— Դուք կվերածնվեք, նախագուշակում եմ ես,— ասաց Սերգեյ Իվանովիչը, զգալով իրեն հուզված։— Իր եղբայրների ազատումը բռնության լծից մի նպատակ է, արժանի և՛ մահվան, և՛ կյանքի։ Տա՛ աստված ձեզ արտաքին հաջողություն և ներքին խաղաղություն,— ավելացրեց նա ու պարզեց ձեռքը։

Վրոնսկին ամուր սեղմեց Սերգեյ Իվանովիչի մեկնած ձեռքը։

— Այո՛, որպես գործիք, ես կարող եմ որևէ ղանի պետք գալ։ Բայց որպես մարդ, ես ավերակ եմ,— ասաց նա հատընդհատ։

Ամուր ատամի մորմոքիչ ցավը լցնելով նրա բերանը թքով, խանգարում էր խոսել։ Նա լռեց, խորազնին նայելով ռելսերի վրայից դանդաղ ու սահիկ գլորվող տենդերի անիվներին։

Ու հանկարծ, բոլորովին մի ուրիշ բան, ո՛չ թե ցավը, այլ ընդհանուր տանջալից ներքին անհարմար ինքնազգացումը ստիպեց նրան մի վայրկյան մոռանալ ատամի ցավը։ Տենդերին ու ռելսերին նայելիս, ծանոթի հետ խոսակցելու ազդեցության տակ, ծանոթի, որին չէր պատահել իր դժբախտությունից հետո, Վրոնսկին հանկարծ մտաբերեց նրան, այսինքն այն, ինչ դեռ մնացել էր նրանից, երբ ինքը խելագարի պես ներս վազեց երկաթուղու կայարանի զորանոցը. զորանոցի սեղանի վրա օտար մարդկանց մեջ անամոթաբար ձգված էր արնաշաղախ մարմինը, դեռ երեկ լի կյանքով. անվթար

գլուխը ետ էր գցած իր ծանր ծամերով ու գանգրահյուս մազերով քունքերին, և կիսաբաց վարդագույն բերանով սքանչելի դեմքին սառել էր մի արտահայտություն,— տարօրինակ ու խղճուկ՝ շուրթերին, սոսկալի՝ պաղած բաց աչքերին, որը կարծես խոսքերով ասում էր այն սարսափելի բառը, ինչ ասաց Աննան վեճի ժամանակ այն մասին, թե կզղջա Վրոնսկին։

Եվ Վրոնսկին աշխատում էր հիշել նրան այնպես, ինչպիսին էր նա այն ժամանակ, երբ ինքն առաջին անգամ պատահեց նրան նույնպես կայարանում, խորհրդավոր, գեղանի, սիրող, երջանկություն փնտրող ու երջանկություն տվող, և ո՛չ թե դաժանորեն վրեժխնդիր, ինչպես հիշում էր ինքը նրան վերջին րոպեին։ Վրոնսկին աշխատում էր հիշել իր լավագույն րոպեները նրա հետ. բայց այդ րոպեները թունավորված էին ընդմիշտ։ Վրոնսկին հիշում էր նրա հաղթական, ոչ ոքի համար պետքական, բայց անջնջելի զղջման կատարված սպառնալիքը։ Վրոնսկին այլևս չէր զգում ատամի ցավը, և հեկեկանքը ծռմռեց նրա դեմքը։

Մի երկու անգամ լուռ անցնելով պարկերի մոտով ու տիրապետելով իրեն, նա հանդիստ դիմեց Սերգեյ Իվանովիչին.

— Հեռագիր չունե՞ք երեկվա հեռագրից հետո։ Այո՛, ջարդել են երրորդ անգամ, բայց վաղվա համար սպասվում է վճռական ճակատամարտ։

Ու խոսելով նաև Միլանին թագավոր հայտարարելու և այն հնկայական հետևանքների մասին, որ կարող է ունենալ դա, նրանք երկրորդ զանգից հետո գնացին իրենց վագոնները։

VI

Չիմանալով, թե ե՛րբ կարող է ինքը մեկնել Մոսկվայից, Սերգեյ Իվանովիչը չհեռագրեց եղբորը, որպեսզի կառք ուղարկեն իր ետևից։ Լևինը տանը չէր, երբ Կատավասովն ու Սերգեյ Իվանովիչը, կայարանում վերցրած տարանտասով, փոշոտված՝ ինչպես նեգր, ցերեկվա ժամը 12-ին մոտեցան Պոկրովսկոյեի տան արտաքին սանդուղքներին։ Կիտին, հոր և քրոջ հետ նստած պատշգամբում, ճանաչեց տագրի՛ն ու վազեց ներքև, դիմավորելու նրան։

— Ամոթ չէ՞, որ իմաց չեք տվել,— ասաց նա, ձեռքը տալով Սերգեյ Իվանովիչին ու դեմ անելով նրան ճակատը։

— Մենք հիանալի տեղ հասանք և ձեզ չանհանգստացրինք,— պատասխանեց Սերգեյ Իվանովիչը։— Այնպես փոշոտած եմ, որ վախենում եմ դիպչել ձեզ։ Ես այնքան զբաղված էի, որ չէի էլ իմանում, թե երբ կազատվեմ։ Իսկ դուք առաջվա պես հրճվում եք խաղաղ երջանկությամբ՝ ձեր խաղաղ գետախորշում՝ հոսանքներից դուրս,— ասաց նա ժպտալով։— Ահա մեր բարեկամ Ֆյոդոր Վասիլիչն էլ շնորհ բերեց վերջապես։

— Բայց ես նեգր չեմ, ես կլվացվեմ, կդառնամ մարդու նման,— ասաց Կատավասովն իր սովոր կատակաբանությամբ, ձեռք տալով ու ժպտալով ատամներով, որոնք առանձնապես փայլում էին սևացած դեմքի շնորհիվ։

— Կոստյան շատ կուրախանա։ Նա գնաց ագարակ։ Պետք է որ հիմա գա։

— Շարունակ զբաղվում է տնտեսությամբ։ Իրոք որ գետախորշում,— ասաց Կատավասովը։— Իսկ մենք քաղաքում, բացի սերբական պատերազմից, ուրիշ բան չենք տեսնում։ Հը՞, ինչպե՞ս է վերաբերվում դրան իմ բարեկամը։ Երևի, ո՞չ այնպես, ինչպես առհասարակ մարդիկ։

— Նա՝ ոչինչ, այնպես, ինչպես ամենքը,— պատասխանեց Կիտին, մի փոքր շփոթված, նայելով Սերգեյ Իվանովիչին։— Ես մարդ կուղարկեմ նրա ետևից։ Մեզ մոտ հյուր է եկել հայրիկս։ Նա նորերս վերադարձավ արտասահմանից։

Ու կարգադրելով, որ մարդ ուղարկեն Լևինի ետևից և ջուր բերեն փոշոտած հյուրերին լվացվելու՝ մեկին առանձնասենյակում, մյուսին Դոլլիի նախկին սենյակում, նաև նախաճաշ պատրաստեն հյուրերի համար, Կիտին օգտվելով արագ շարժումների իրավունքից, որոնցից նա զրկված էր իր հղիության ժամանակամիջոցին, վազեց պատշգամբ։

— Սերգեյ Իվանովիչն է և Կատավասովը՝ պրոֆեսորը,— ասաց նա։

— Օ՜խ, շատ ծանր է,— ասաց իշխանը։

— Ո՜չ, հայրի՛կ, նա շատ հաճելի մարդ է, և Կոստյան շատ սիրում է նրան,— ասաց Կիտին ժպտալով, կարծես խնդրելով հորն ինչ-որ բանի մասին, նկատելով նրա դեմքին ծաղրախոսելու արտահայտություն։

— Չէ՛, բան չեմ ասում։

— Դու գնա նրանց մոտ, հոգյա՛կս,— դիմեց Կիտին քրոջը,— և զբաղեցրու։ Նրանք կայարանում տեսել են Ստիվային, նա առողջ է։ Իսկ ես վազեմ Միտյայի մոտ։ Հակառակի պես թեյից հետո մինչև հիմա դեռ չեմ կերակրել։ Նա այժմ զարթնել է և երևի բղավում է։— Ու Կիտին զգալով կրծքում կաթի հորդում, արագ քայլերով գնաց մանկասենյակ։

Իսկապես, Կիտին ոչ թե գլխի ընկավ (նրա կապը երեխայի հետ դեռ խզված չէր), նա կաթի հորդումից իր կրծքում՝ ստույգ իմացավ, որ մանչուկը կերակրի կարիք ունի։

Նախքան մանկասենյակ հասնելը, մայրը գիտեր, որ երեխան բղավում է։ Եվ իրոք, նա բղավում էր։ Կիտին լսեց նրա ձայնը և արագացրեց քայլերը։ Բայց որքան ավելի արագ էր գնում մայրը, այնքան ավելի բարձրաձայն էր բղավում երեխան։ Ձայնը լավ էր, ուժգին, միայն սոված էր և անհամբեր։

— Վաղո՞ւց է, դայակ, վաղո՞ւց,—շտապ ասում էր Կիտին, նստելով աթոռին ու պատրաստվելով կերակրելու։— Դե՛ շուտ տվեք նրան ինձ։ Ա՜խ, դայակ, ի՞նչ ձանձրալին եք դուք, է՛հ, չեպչիկը հետո կկապեք։

Երեխան ճաքում էր սաստիկ բղավոցից։

— Հո այդպես չի՛ կարելի, անուշիկս,— ասաց Ագաֆյա Միխայլովնան, որ համարյա միշտ ներկա էր լինում մանկասենյակում։— Պետք է կարդին հագցնել նրան։ Աղո՛ւ, աղո՛ւ,— երգում էր Ագաֆյա Միխայլովնան երեխայի գլխին, ուշադրություն չդարձնելով մոր վրա։

Դայակը երեխային տարավ մորը։ Ագաֆյա Միխայլովնան գնում էր նրա ետևից՝ քնքշանքից պայծառացած դեմքով։

— Ճանաչում է, ճանաչում։ Աստծո անունը վկա, անուշիկ Կատերինա Ալեքսանդրովնա, ճանաչեց ինձ,— ասում էր Ագաֆյա Միխայլովնան, ձայնախեղդ անելով երեխային։

Բայց Կիտին չէր լսում նրա խոսքերը։ Կիտիի անհամբերությունն աճում էր նույնպես, ինչպես և երեխայի անհամբերությունը։

Անհամբերությունից գործը երկար ժամանակ կարգի չէր ընկնում։ Երեխան բռնում էր ո՛չ այն, ինչ հարկավոր էր, ու բարկանում էր։

Վերջապես հուսահատական շնչակտուր ճչոցից, դատարկ ծծոցից հետո, գործը կարգի ընկավ, և մայրն ու երեխան

միաժամանակ զգացին իրենց հանգստացած և երկուսն էլ հանդարտվեցին։

— Սակայն խեղճ մանչուկս ամբողջովին քրտնած է,— ասաց Կիտին շշուկով շոշափելով երեխային։— Իսկ դուք ինչո՞ւ եք կարծում, որ ճանաչում է,— ավելացրեց նա, շեղակի նայելով խորամանկորեն,— ինչպես թվում էր նրան,— առաջ սողացած չեպչիկի տակից նայող երեխայի աչքերին, համաչափորեն փքվող նրա թուշիկներին և կարմիր ափով թաթիկին, որով նա անում էր շրջանաձև շարժումներ։

— Չի՛ կարող պատահել։ Եթե ճանաչել կարողանար, ի՛նձ պիտի ճանաչեր,— ասաց Կիտին Ագաֆյա Միխայլովնայի պնդումի առթիվ ու ժպտաց։

Կիտին ժպտաց այն բանի համար, որ թեպետ ինքն ասում էր, թե մանչուկը չի կարող ճանաչել, բայց սրտով գիտեր, որ նա ճանաչում է ո՛չ միայն Ագաֆյա Միխայլովնային, այլև գիտե ու հասկանում է ամեն ինչ, և գիտե ու հասկանում է էլի շատ այնպիսի բան, ինչը ոչ ոք չգիտե և ինչն ինքը՝ նրա մայրը, իմացավ ու սկսեց հասկանալ միայն մանչուկի շնորհիվ։ Ագաֆյա Միխայլովնայի համար, դայակի, պապի, նույնիսկ հոր համար Միտյան կենդանի էակ էր, որ պահանջում էր միայն նյութական հոգս ու խնամք. բայց մոր համար վաղուց արդեն նա բարոյական էակ էր, որի հետ արդեն կար հոգեկան հարաբերությունների մի ամբողջ պատմություն։

— Ա՜յ. ահա աստված տա զարթնի, դուք ինքներդ կտեսնեք։ Հենց որ ես էսպես եմ անում, նա, աղունիկս, ամբողջովին պայծառանում է։ Հենց էդպես էլ պայծառանում է, ոնց որ պայծառ օր,— ասում էր Ագաֆյա Միխայլովնան։

— Դե՛, լա՛վ, լա՛վ, կտեսնենք,—շշնջաց Կիտին։— Հիմա գնացե՛ք, նա քնում է։

VII

Ագաֆյա Միխայլովնան դուրս գնաց ոտների ծայրերի վրա. դայակն իջեցրեց վարագույրները, դուրս քշեց մահճակալի մարմաշե առագաստի տակից ճանճերը և ձիապիծակը, որ թպրտում էր շրջանակի ապակու վրա, ու նստեց,

թափահարելով կեչիի թառամող ոստը մոր և երեխայի գլխին։

— Շոգ եմ ասում, հա՜, շոգ. երնեկ, աստված մի անձրև տար,— ասում է նա։

— Հա՛, ճա՜, շը՜-շը՜-շը՜... — լոկ պատասխանեց Կիտին, թեթև օրորվելով ու քնքշաբար սեղմելով, դաստակին կարծես թել կապած, փամփլիկ թաթիկը, որը Միտյան շարժում էր ավելի ու ավելի թույլ, մերթ փակելով, մերթ բանալով աչիկները։ Այդ թաթիկը շփոթեցնում էր Կիտին. նա ուզում էր համբուրել այն, բայց վախենում էր, չլինի թե արթնացնի երեխային։ Թաթիկը վերջապես դադարեց շարժվելուց, և աչքերը փակվեցին։ Երբեմն, միայն, շարունակելով իր գործը, երեխան բարձրացնում էր իր երկար, ծալ առած արտևանունքները, նայում էր մորը կիսախավարի մեջ սև թվացող թաց աչքերով։ Դայակը դադարեց ոստը թափահարելուց ու նիրհեց։ Վերևից լսվեց ծերունի իշխանի ձայնի որոտը և Կատավասովի քրքիջը։

«Երևի, զրույցի բռնվեցին առանց ինձ,— մտածում էր Կիտին,— բայց ափսոս, որ Կոստյան չկա։ Հավանորեն նորից գնացել է մեղվանոց։ Թեպետև տխուր է, որ նա հաճախ է լինում այնտեղ, այնուամենայնիվ՝ ես ուրախ եմ։ Դա բավականություն է պատճառում նրան։ Այժմ նա ավելի ուրախ է և ավելի լավ, քան գարնանը։ Թե չէ՝ նա այնպես մռայլ էր ու այնպես տանջվում էր, որ ես սկսում էի սոսկալ նրա համար։ Եվ ի՞նչ ծիծաղելին է նա», շշնջաց Կիտին, ժպտալով։

Նա գիտեր, թե ի՞նչն էր տանջում իր ամուսնուն։ Դա Լևինի անհավատ լինելն էր։ Չնայած այն բանին, որ եթե հարցնեին Կիտիին, արդյոք ենթադրո՞ւմ է ինքը, որ ապագա կյանքում կկործանվի իր ամուսինը, եթե մնա անհավատ, Կիտին պիտի համաձայներ, որ նա կկործանվի, Բայց և այնպես ամուսնու անհավատ լինելը դժբախտություն չէր պատճառում կնոջը. և Կիտին, ընդունելով հանդերձ, որ անհավատի համար չի կարող փրկություն լինել, ու աշխարհիս երեսին ամենից ավելի սիրելով իր ամուսնու հոգին, ժպիտով էր մտածում նրա անհավատության մասին և ասում էր ինքն իրեն, թե նա ծիծաղելի մարդ է։

«Ինչի՞ համար է նա ամբողջ տարի շարունակ կարդում ինչ-որ փիլիսոփայություններ,— մտածում էր Կիտին։— Եթե այդ

բոլորը գրված է այդ գրքերում, ուրեմն նա կարող է հասկանալ։ Իսկ եթե ճիշտ չէ գրված այնտեղ, էլ ինչո՞ւ կարդալ։ Նա ինքն ասում է, որ կուզենար հավատալ։ Հապա էլ ինչո՞ւ չի հավատում։ Երևի պատճառն այն է, որ շատ է մտածում։ Իսկ շատ է մտածում մեկուսացումից։ Շարունակ մենակ է ու մենակ։ Մեզ հետ նա չի կարող ամեն բանի մասին խոսել։ Ես կարծում եմ, նրա համար հաճելի կլինեն այս հյուրերը, մանավանդ Կատավասովը։ Նա սիրում է դատողություններ անել նրա հետ», մտածեց Կիտին և անմիջապես մտքով անցավ այն հարցին, թե որտե՞ղ ավելի հարմար է Կատավասովին տեղավորել քնելու՝ առանձի՞ն, թե՞ Սերգեյ Իվանովիչի հետ։ Ու այդտեղ հանկարծ նրա գլուխն եկավ մի միտք, որը ստիպեց նրան ցնցվել հուզմունքից և նույնիսկ անհանգստացնել Միտյային, որը դրա համար նայեց մորը խիստ հայացքով։ «Կարծեմ լվացարարուհին դեռ չի բերել սպիտակեղենը, իսկ հյուրերի համար անկողնի սպիտակեղեն չկա։ Եթե կարգադրություն չարվի, Ագաֆյա Միխայլովնան գործածված սպիտակեղեն կտա Սերգեյ Իվանովիչին, և դրա մասին մտածելուց հենց՝ արյունը խփեց Կիտիի երեսին։

«Այո՛, ես կկարգադրեմ», վճռեց նա ու վերադառնալով իր առաջվա մտքերին, հիշեց, որ հոգեկան ինչ-որ կարևոր բան դեռ մինչև վերջ չի մտածված, և սկսեց մտաբերել, թե ի՞նչ է այդ։ «Հա՞, Կոստյան անհավատ է», հիշեց նա նորից ժպիտով։

«Է՞հ, անհավա՞տ է։ Ավելի լավ է, թող նա միշտ այդպես լինի, քան տիկին Շտալը, կամ ինչպես ես էի ուզում լինել այն ժամանակ՝ արտասահմանում։ Ո՞չ, ինչ էլ լինի, նա չի՛ ձևանա»։

Եվ մոտիկ անցյալում ամուսնու բարությունը բնորոշող գիծը վառ կերպով պատկերացավ Կիտիին։ Երկու շաբաթ առաջ ստացվեց Ստեպան Արկադևիչի զղջացող նամակը, ուղղած Դոլլիին։ Օբլոնսկին խնդրում էր կնոջը՝ փրկել իր պատիվը, ծախել կալվածքը՝ պարտքերը վճարելու համար։ Դոլլին հուսահատության մեջ էր, ատում էր ամուսնուն, արհամարհում էր, խղճում էր, ուզում էր բաժանվել նրանից, մերժել, բայց այս բոլորը վերջացավ նրանով, որ համաձայնեց ծախել իր բաժին կալվածքը։ Դրանից հետո Կիտին հիացքի

ակամա ժպիտով հիշեց իր ամուսնու ամաչկոտությունը, նրա բազմիցս անհարմար մոտեցումն իրեն զբաղեցնող գործին և այն, թե ինչպե՛ս նա վերջապես մտածեց Դոլլիին օգնելու միակ միջոցը, առանց վիրավորելու նրան, այսինքն՝ առաջարկել Կիտիին՝ իր բաժին կալվածքը տալ քրոջը, ինչի մասին ինքը գլխի չէր ընկնում առաջ։

«Էլ ի՞նչ անհավատ է նա։ Այդպիսի սրտո՞վ, վախի այդպիսի զգացումո՞վ, չլինի թե վշտացնի մեկն ու մեկին, նույնիսկ երեխայի։ Ամեն բան ուրիշների համար, ոչինչ ի՞ր համար։ Սերգեյ Իվանովիչը հենց այդպես էլ կարծում է, թե Կոստյայի պարտավորությունն է լինել նրա գործերի կառավարիչը։ Նույնը և քույրը։ Այժմ Դոլլին երեխաների հետ նրա խնամքին է։ Հապա այն մուժիկները, որ ամեն օր գալիս են նրա մոտ, կարծես նա պարտավոր է ծառայել նրանց»։

«Այո՛, եղի՛ր միայն այնպես, ինչպես քո հայրն է, միայն այնպե՛ս»,— ասաց Կիտին, Միտյային տալով դայակին ու շրթունքը դիպցնելով նրա թուշիկին։

VIII

Այն րոպեից, երբ տեսնելով իր մեռնող սիրելի եղբորը, Լևինն առաջին անգամ նայեց կյանքի ու մահվան հարցերին այն նոր, ինչպես ինքն էր անվանում, համոզմունքների միջոցով, որոնք իր համար աննկատելիորեն, քսանից մինչև երեսունչորս տարեկան հասակի ժամանակաշրջանում, փոխարինեցին իր մանկական ու պատանեկան հավատալիքներին,— նա սոսկաց ո՛չ այնքան մահից, որքան կյանքից, ո՛չ մի հասկացողություն չունենալով այն մասին, թե որտեղի՛ց, ինչի՛ համար, ինչո՛ւ և ի՛նչ բան է այն։ Օրգանիզմ, օրգանիզմի քայքայում, նյութի անքնաջնջելիություն, ուժի պահպանման օրենք, զարգացում,— ահա այն բառերը, որոնք փոխարինեցին նրա առաջվա հավատին։ Այդ բառերը և դրանց հետ կապված հասկացողությունները շատ լավ էին մտավոր նպատակների համար. բայց կյանքի համար նրանք ոչինչ չէին տալիս։ Եվ Լևինը հանկարծ իրեն զգաց այն մարդու դրության մեջ, որը տաք մուշտակը կփոխեր թափանցիկ մարմաշե զգեստի հետ ու առաջին անգամ սառնամանիքի

ժամանակ աներկբայորեն կհամոզվեր,— ո՛չ թե դատողություններով, այլ իր ամբողջ էությամբ,— որ ինքը միևնույն է թե մերկ է և որ ինքն անխուսափելիորեն պետք է մեռնի տանջանքներով։

Այդ րոպեից սկսած, առանց հաշիվ տալու իրեն դրա մասին ու շարունակելով ապրել առաջվա պես, Լևինը անընդհատ զգում էր այդ երկյուղը իր անգիտության համար։

Բացի դրանից, նա աղոտ կերպով զգում էր, որ այն, ինչ ինքը համարում էր իր համոզմունքները, ո՛չ միայն անգիտություն էր, այլև մտքի այնպիսի կազմ, որի շնորհիվ անհնարին էր ունենալ այն գիտելիքը, ինչ նրան հարկավոր էր։

Ամուսնության սկզբնական շրջանում, նոր ուրախությունները ու պարտականությունները, որ իմացավ ու ճանաչեց նա, բոլորովին խլացրին այդ մտքերը։ Բայց վերջերս, կնոջ ծննդաբերությունից հետո, երբ նա ապրում էր Մոսկվայում առանց գործի, լուծում պահանջող այդ հարցը սկսեց ավելի ու ավելի հաճախ, ավելի ու ավելի համառորեն պատկերանալ Լևինին։

Նրա համար այդ հարցը հետևյալն էր. «եթե ես չեմ ընդունում այն պատասխանները, որ տալիս է քրիստոնեությունն իմ կյանքի հարցերին, հապա ի՞նչ պատասխաններ եմ համարում ընդունելի»։ Եվ նա իր համոզմունքների բոլոր ամբարներում չէր կարողանում գտնել ո՛չ միայն որևէ պատասխան, այլև պատասխանի նման մի բան։

Նա գտնվում էր այն մարդու դրության մեջ, որ կերակուր էր փնտրում խաղալիքների և զենքերի խանութներում։

Ակամա, իր համար անգիտակցաբար, այժմ ամեն գրքի մեջ, յուրաքանչյուր մարդու մեջ, ամեն խոսակցության մեջ նա փնտրում էր առնչություն այդ հարցերի հետ, փնտրում էր նրանց լուծումը։

Ամենից ավելի նրան զարմացնում ու վշտացնում էր այն, որ իր շրջանի և իր տարիքի մարդկանց մեծ մասը փոխարինելով, ինչպես ինքը, առաջվա հավատալիքները նոր համոզմունքներով, ինչպես ինքը, ոչ մի չարիք չէր տեսնում դրանում և լիովին գոհ էր ու հանգիստ։ Այնպես որ, գլխավոր հարցից զատ Լևինին տանջում էին նաև ուրիշ հարցեր. արդյոք անկե՞ղծ են այդ մարդիկ. արդյոք չե՞ն ձևանում նրանք, կամ

որևէ այլ կերպ, իրենից ավելի պարզ ձևով չե՞ն հասկանում այն պատասխանները, որ տալիս է գիտությունը իրեն զբաղեցնող հարցերին։ Ու նա ջանասիրությամբ ուսումնասիրում էր և՛ այդ մարդկանց կարծիքները, և՛ այն գրքերը, որոնք ձևակերպում էին այդ պատասխանները։

Առաջին բանը, որ նա գտավ՝ սկսած այն օրից, երբ այս հարցերն սկսեցին զբաղեցնել նրան, այն էր, որ ինքը սխալվում էր, իր պատանեկան համալսարանական շրջանի հիշողությունների հիման վրա ենթադրելով, իբր անցել է կրոնի ժամանակը, ու կրոնն այլևս գոյություն չունի։ Բոլոր լավ, իրենց կենցաղով նրան մոտիկ մարդիկ հավատում էին։ Ե՛վ ծերունի իշխանը, և՛ Լվովը, որոնք այնպես սիրելի էին Լևինին, և՛ Սերգեյ Իվանովիչը, և՛ բոլոր կանայք հավատում էին, հավատում էր նաև իր կինն այնպես, ինչպես հավատում էր ինքն իր առաջին մանկության տարիներին. հավատում էր ռուս ժողովրդի իննսունինը հարյուրերորդը, ամբողջ այդ ժողովուրդը, որի կյանքը ներշնչում էր նրան մեծագույն հարգանքի զգացում։

Երկրորդ բանն այն էր, որ կարդալով շատ գրքեր, նա համոզվեց, թե իր հայեցակետի մարդիկ ուրիշ ոչինչ չէին հասկանում այդ հայեցակետերի տակ ու ոչինչ չբացատրելով, բացասում էին միայն այն հարցերը, որոնց մինչև պատասխան չտրվեր, նա զգում էր, որ ապրել չի կարող ինքը. այդ մարդիկ աշխատում էին լուծել իր համար ո՛չ մի հետաքրքրություն չունեցող հարցեր, ինչպես օրինակ՝ օրգանիզմների զարգացումը, հոգու մեքենական բացատրությունը և այլն։

Բացի դրանից, կնոջ ծննդաբերության ժամանակ նրա հետ պատահեց արտասովոր դեպք։ Նա, չհավատացող մի մարդ, սկսեց աղոթել և այն րոպեին, երբ աղոթում էր, հավատում էր։ Բայց անցավ այդ րոպեն, ու նա չէր կարողանում տեղ տալ իր կյանքի մեջ այն ժամանակվա տրամադրությանը։

Նա չէր կարող ընդունել, որ այն ժամանակ ինքը գիտեր ճշմարտությունը, իսկ հիմա սխալվում է, որովհետև հենց որ սկսում էր հանգիստ մտածել դրա մասին, ամեն ինչ քանդվում, ջարդուփշուր էր լինում։ Նա չէր կարող ընդունել նաև

այն, որ այն ժամանակ ինքը սխալվում էր, որովհետև բարձր էր գնահատում այն ժամանակվա իր հոգեկան կացությունը և համարելով այդ թուլության արգասիք, պղծած կլիներ այդ բոպեները։ Նա ինքն իր հետ տանջալից պառակտման մեջ էր և լարում էր իր հոգեկան բոլոր ուժերը՝ դուրս գալու այդ վիճակից։

IX

Այդ մտքերը հոգնեցնում ու տանջում էին նրան մերթ ավելի թույլ, մերթ ավելի ուժեղ կերպով, բայց երբեք ձեռք չէին քաշում նրանից։ Նա կարդում ու մտածում էր և որքան ավելի էր կարդում ու մտածում, այնքան ավելի հեռու էր զգում իրեն իր հետամտած նպատակից։

Վերջերս Մոսկվայում և գյուղում, համոզվելով, որ մատերիալիստների մեջ ինքը պատասխան չի գտնի, նա նորից կարդաց, մեկ էլ կարդաց և՛ Պղա՛տոն, և՛ Սպինոզա, և՛ Կանտ, և՛ Շելլինգ. և՛ Հեգել, և՛ Շոպենհաուեր, այսինքն՝ այն փիլիսոփաներին, որոնք կյանքը բացատրում էին ո՛չ մատերիալիստորեն։

Մտքերը թվում էին նրան բեղմնավոր, երբ նա կամ կարդում էր, կամ հերքումներ էր մտածում ուրիշ ուսմունքների, մանավանդ մատերիալիստական գիտության դեմ. բայց հենց որ նա կարդում էր, կամ ինքն էր հնարում հարցերի լուծումը, միշտ կրկնվում էր միևնույն բանը։ Հետևելով այնպիսի անորոշ բառերի ձևավորմանը, ինչպես օրինակ՝ ոգի, կամք, աղատություն, սուբստանցիա, դիտմամբ ընկնելով բառերի այն թակարդի մեջ, որ դնում էին նրա համար փիլիսոփաները կամ նա ինքը, կարծես սկսում էր մի բան հասկանալ։ Բայց բավական էր, որ նա մոռանար մտքի արհեստական ընթացքը և կյանքից վերադառնար դեպի այն, ինչը բավարարում էր նրան, երբ մտածում էր, հետևելով տվյալ մտքի թելին,— և ահա այդ արհեստական ամբողջ շենքը հանկարծ փուլ էր գալիս, ինչպես խաղաթղթից շինած տուն, ու պարզվում էր, որ շենքը կառուցվել է հենց միևնույն վերադասավորված բառերից, անկախ բանականությունից, ավելի կարևոր՝ կյանքի ինչ-որ բանից։

Մի ժամանակ, կարդալով Շոպենհաուեր, վերջինիս կամքի տեղ նա դրեց սերը, և այդ նոր փիլիսոփայությունը մխիթարում էր նրան մեկ-երկու օր, մինչև նա կհեռանար նոր ուսմունքից. սակայն սա նույնպես փուլ եկավ, երբ նա հեռակյանքի միջով նայեց նրա վրա, ու դուրս եկավ, որ դա թափանցիկ մարմաշից կարված, չտաքացնող զգեստ է։

Եղբայրը՝ Սերգեյ Իվանովիչը, խորհուրդ տվեց նրան կարդալ Խոմյակովի աստվածաբանական գրվածքները։ Լևինը կարդաց Խոմյակովի հեղինակությունների երկրորդ հատորը և զարմացավ, ապշեց եկեղեցու մասին այնտեղ զետեղված ուսմունքից, չնայած սկզբում հեղինակի վանող, բանավեճային, պճնալից ու սրամիտ տոնին։ Նրան սկզբում զարմացրեց այն միտքը, որ մարդուն տրված չէ աստվածային ճշմարտություններին հասու լինելու կարողություն, այլ դա տրված է սիրով միավորված մարդկանց համակեցությանը՝ եկեղեցուն։ Նրան ուրախացրեց այն միտքը, թե ավելի հեշտ է հավատալ գոյություն ունեցող, այժմ ապրող եկեղեցուն, որը կազմում է մարդկանց բոլոր հավատալիքները և որին գլխավորում է աստված, հենց այդ պատճառով ուրեմն սուրբ և անմեղանչական եկեղեցուն ու դրանից արդեն ընդունել հավատ՝ աստծո, ստեղծագործության, անկման, քավության վերաբերյալ, քան սկսել աստծուց՝ հեռավոր, խորհրդավոր աստծուց, ստեղծագործությունից և այլն։ Սակայն հետո կարդալով կաթոլիկ հեղինակի եկեղեցական պատմությունը և ուղղափառ հեղինակի եկեղեցական պատմությունն ու տեսնելով, որ երկու եկեղեցիներն էլ, անմեղանչական ըստ իրենց էության, փոխադարձաբար բացասում են միմյանց, նա հիասթափվեց եկեղեցու խնդրում նաև Խոմյակովի ուսմունքից, ուստի այդ շենքն էլ փուլ եկավ, փոշիացավ, ինչպես և փիլիսոփայական շենքերը։

Այդ ամբողջ գարունը նա նման չէր ինքն իրեն և ունեցավ սոսկալի բոպեներ։

«Չի կարելի ապրել, առանց իմանալու, թե ի՞նչ եմ ես և ինչի՞ համար եմ այստեղ։ Իսկ քանի որ իմանալ չեմ կարող այդ, հետևաբար չի կարելի ապրել», մտածում էր Լևինը։

«Անվախճան ժամանակի մեջ, նյութի անսահմանության մեջ, անհուն տարածության մեջ զատվում, աչքի է ընկնում մի

պղպջակ— օրգանիզմ, և այդ պղպջակը մի պահ կդիմանա ու կպայթի, և այդ պղպջակը ե՛ս եմ»։

Դա մի տանջալից սուտ էր, բայց դա այդ ուղղությամբ մարդկային մտքի կատարած դարավոր աշխատանքների միակ, վերջին արգասիքն էր։

Դա վերջին այն հավատալիքն էր, որի վրա հիմնվում էին մարդկային մտքի համարյա բոլոր ճյուղերում կատարված բոլոր հետախուզումները։ Դա՛ էր գերիշխող համոզմունքը, և Լևինը, ինքն էլ չիմանալով, թե ե՛րբ ու ինչպե՛ս, մյուս բոլոր բացատրություններից ակամա յուրացրեց հենց դա, որպես, այսուամենայնիվ՝ ամենից ավելի պարզ բացատրություն։

Բայց դա ո՛չ միայն սուտ էր, դա դաժան ծաղր էր ինչ-որ շար ուժի, շար, զզվելի ու այնպիսի ուժի, որին չէր կարելի ենթարկվել։

Պետք էր ազատվել այդ ուժից։ Եվ յուրաքանչյուր մարդու ազատումն իր ձեռքին էր։ Պետք էր դադարեցնել կախումն այդ չարիքից։ Եվ կար միայն մի միջոց՝ մահը։

Ու երջանիկ ընտանիքատեր, առողջ մարդ, Լևինը մի քանի անգամ այնքան մոտ էր ինքնասպանության, որ թաքցնում էր պարանը, որպեսզի չկախվի նրանով, և վախենում էր հրացանով մահ գալ, չլինի թե անձնասպանություն գործի։

Բայց Լևինը ո՛չ հրացանով սպանեց իրեն, ո՛չ էլ կախվեց և ապրում էր առաջվա պես։

X

Երբ Լևինը մտածում էր, թե ի՛նչ է ինքը և ինչի՛ համար է ապրում, պատասխան չէր գտնում ու հուսահատվում էր, բայց երբ նա դադարում էր ինքն իրեն դրա մասին հարց տալուց, կարծես թե գիտեր, թե ի՛նչ է ինքը և ինչի՛ համար է ապրում, որովհետև գործում էր հաստատապես ու որոշակի և ապրում էր. նույնիսկ այս վերջերս նա ապրում էր շատ ավելի հաստատապես ու որոշակի, քան առաջ։

Հունիսի սկզբներին վերադառնալով գյուղ, նա վերադարձավ նաև իր սովորական զբաղմունքներին։ Գյուղական տնտեսությունը, հարաբերությունները մուժիկների և հարևանների հետ, տնային տնտեսությունը, քրոջ ու եղբոր գործերը,

որոնք նրա ձեռքին էին, հարաբերությունները կնոջ, ազգականների հետ, հոգատարությունը երեխայի մասին, մեղվի նոր որսը, որով նա հրապուրվեց ընթացիկ գարնանից, կլանում էին նրա ամբողջ ժամանակը։

Այդ գործերը նրան զբաղեցնում էին ո՛չ այն պատճառով, որ նա արդարացնում էր դրանք իր համար ինչ-որ ընդհանուր հայեցակետերով, ինչպես անում էր առաջ, ընդհակառակն, մի կողմից հիասթափվելով ընդհանուր օգտի համար առաջվա ձեռնարկությունների անհաջողությունից, մյուս կողմից՝ չափազանց զբաղված լինելով իր մտքերով ու գործերի քանակով հենց, որոնք ամեն կողմից թափվում էին նրա գլխին, նա բոլորովին թողեց ամեն նկատառում ընդհանուր օգտի մասին, և այդ գործերը նրան հետաքրքրում էին լոկ այն պատճառով, որ նրան թվում էր, թե ինքը պետք է անի այն, ինչ անում էր,— թե ինքն էլ այլ կերպ չի կարող վարվել։

Առաջ (դա սկսվեց համարյա մանկությունից և շարունակ աճում էր մինչև կատարյալ հասունություն), երբ նա աշխատում էր անել այնպիսի բան, որը բարիք կլիներ ամենքի համար, մարդկության համար, Ռուսաստանի, ամբողջ գյուղի համար, նկատում էր, որ դրա հետ կապված մտքերը հաճելի էին, բայց հենց ինքը՝ գործունեությունը միշտ լինում էր անհարիր, չկար լիովին վստահություն այն բանում, թե գործն անհրաժեշտաբար հարկավոր է, և սկզբում այնքան մեծ թվացող գործունեությունն ինքնին՝ շարունակ նվազելով ու նվազելով՝ հասնում էր զրոյի։ Իսկ հիմա, երբ ամուսնությունից հետո նա սկսեց ավելի ու ավելի սահմանափակվել իր կյանքով,— թեև ո՛չ մի ուրախություն չէր զգում իր գործունեության մասին մտածելիս, բայց վստահ էր, որ իր գործն անհրաժեշտ է, տեսնում էր, որ այն շատ ավելի հաջող է առաջ գնում, քան առաջ էր, և որ այն ավելի ու ավելի մեծանում է։

Այժմ նա կարծես իր կամքի հակառակ, ավելի ու ավելի խոր էր խրվում հողի մեջ, ինչպես գութանը, այնպես որ այլևս չէր կարող դուրս գալ, առանց ակոս բանալու։

Անհասկած հարկավոր էր ապրել ընտանիքում այնպես, ինչպես սովոր էին ապրել հայրերն ու պապերը, այսինքն՝ կրթության միևնույն պայմաններում և երեխաներին էլ դաստիարակել միևնույն պարագաներում։ Դա հարկավոր էր նույն

քան, ինչքան հաշիվը, երբ ուտելու պահանջ կա. և դրա համար նույնպես հարկավոր էր, ինչպես ճաշ պատրաստելը, լարել տնտեսության մեքենան Պոկրովսկոյում այնպես, որպեսզի եկամուտ ստացվեր։ Ինչպես անկասկած է, թե պետք է վերադարձնել պարքը, այնպես էլ հարկավոր էր տոհմական հողը պահել այն վիճակում, որ հողը ժառանգություն ստացած որդին նույնպես շնորհակալություն հայտներ հորը, ինչպես շնորհակալություն էր հայտնում իր պապին Լևինն այն բոլորի համար, ինչ կառուցել և տնկել էր նա։ Ու դրա համար հարկավոր էր հողը ո՛չ թե վարձով տալ, այլ անձամբ մշակել, անասուն պահել, պարարտացնել արտերը, տնկել անտառներ։

Չէր կարելի չանել Սերգեյ Իվանովիչի, քրոջ և բոլոր այն մուժիկների գործերը, որոնք գալիս էին խորհուրդ հարցնելու և սովորել էին դրան, ինչպես չէր կարելի վայր գցել արդեն ձեռքին բռնած երեխային։ Պետք էր հոգ տանել երեխաների հետ հրավիրված քենու և կնոջ ու երեխայի մասին և չէր կարելի չլինել նրանց հետ օրվա գեթ մի փոքր մասը։

Ու այս բոլորը թոչնորսության և նոր մեղվորսության հետ լցնում էր Լևինի ամբողջ կյանքը, որը կորցնում էր իր իմաստը, երբ նա մտածում էր։

Սակայն բացի այն բանից, որ Լևինը հաստատապես գիտեր, թե ի՛նչ է հարկավոր անել, ճիշտ նույն կերպ էլ նա գիտեր, թե ինչպե՛ս պետք է անել այդ բոլորը և ո՛ր գործն ավելի կարևոր է մյուսից։

Նա գիտեր, որ պետք է բանվորներ վարձել՝ որքան հնարավոր է էժան. բայց, նախապես դրամ տալով, ստրկացնել նրանց, ավելի էժան, քան արժեն նրանք,— չպետք էր անել, թեպետև դա շատ շահեկան էր։ Կերի սպակասության դեպքում կարելի էր դարմանը ծախել մուժիկներին, թեպետև մեղք էին նրանք. բայց պետք էր ոչնչացնել պանդոկը և գինեկրպակը, թեպետև նրանք եկամուտ էին բերում։ Անտառից ծառ կտրելու համար պետք էր պատժել ըստ հնարավորին խիստ, բայց արտ ու արոտի մեջ թողած անասունի համար չպետք էր տուգանք վերցնել։ Ու թեև դա վշտացնում էր պահապաններին և ոչնչացնում էր վախի զգացումը, բայց չէր կարելի բաց չթողնել այդ կապակցությամբ գրված անասունը։

Գյոտրին, որը վաշխառուին վճարում էր ամիսը տասը տոկոս, պետք էր փոխարինաբար դրամ տալ, նրան փրկելու համար, բայց չէր կարելի պակասեցնել և տարկետել չվճարող մուժիկների բահրան։ Չէր կարելի ներել կառավարչին այն, որ փոքրիկ մարգագետինը չի հնձվել, և իզուր տեղը կորավ խոտը, բայց կարելի էր չհնձել և ութսուն դեսյատին, որտեղ տնկված էր մատղաշ անտառ։ Չէր կարելի ներել բանվորին, որ աշխատանքի ժամանակ գնացել էր տուն, որովհետև մեռել էր հայրը,— ինչքան էլ ափսոս էր նա,— և պետք էր նրա հաշիվն անել ավելի էժան՝ գործալքած թանկ ամիսների համար. բայց չէր կարելի ամսապարեն չվճարել ծերացած, ոչ մի բանի պետքական տերունական սպասավորներին։

Լևինը գիտեր նույնպես, որ վերադառնալով տուն, պետք էր ամենից առաջ գնալ կնոջ մոտ, որը տկար էր. իսկ մուժիկները, որոնք արդեն երեք ժամ սպասում էին նրան, կարող էին էլի սպասել։ Գիտեր նաև, որ չնայած այն բավականությանը, որ նա զգում էր պարսը տեղավորելիս, պետք էր զրկվել այդ բավականությունից և պարսի տեղավորման գործը թողնելով ծերունուն, գնալ զրուցել մուժիկների հետ, որոնք իրեն գտել էին մեղվանոցում։

Լա՞վ էր վարվում ինքը, թե՞ վատ, նա չգիտեր, և ո՛չ միայն չէր սկսի այժմ ապացուցել այդ, մինչև իսկ խուսափում էր դրա մասին խոսակցություններից ու մտքերից։

Դատողությունները նրան գցում էին կասկածների մեջ և խանգարում էին նրան տեսնելու, թե ի՛նչը պետք է և ի՛նչը պետք չէ։ Իսկ երբ նա չէր մտածում, այլ ապրում էր, անդադար զգում էր իր հոգում ներկայությունն անսխալական դատավորի, որը վճռում էր, թե հնարավոր երկու վարմունքից ո՛րն ավելի լավ է և ո՛րն ավելի վատ։ Ու հենց որ նա վարվում էր ո՛չ այնպես, ինչպես պետք էր, անմիջապես զգում էր այդ բանը։

Այդպես ապրում էր նա, չիմանալով և իմանալու հնարավորություն չտեսնելով, ի՛նչ է ինքը, ինչի՞ համար է ապրում աշխարհում և այդ անգիտությունից տանջվելով մինչ այն աստիճան, որ վախենում էր ինքնասպանությունից ու միաժամանակ հաստատապես բաց էր անում իր սեփական, որոշակի ուղին կյանքում։

XI

Այն օրը, երբ Սերգեյ Իվանովիչը եկավ Պոկրովսկոյե, Լևինը գտնվում էր իր ամենատանջալից օրերից մեկում։

Աշխատանքների ամենաշտապ, թունդ ժամանակն էր, երբ ամբողջ ժողովրդի մեջ երևան է գալիս աշխատանքի հանդեպ այնպիսի արտասովոր լարված անձնազոհություն, որպիսին չի արտահայտվում կյանքի այլ պայմաններում և որպիսին բարձր կգնահատվեր, եթե այդ հատկությունները դրսևորող մարդիկ իրենք գնահատեին դրանք, եթե այդ լարվածությունը չկրկնվեր ամեն տարի և եթե դրա հետևանքները չլինեին այդպիսի հասարակ։

Հնձել ու քաղել վարսակն ու հաճարը և կրել, հնձել կիսատ մնացած մարգագետինները, վերահերկել արոսը, ծեծել սերմացուն ու ցանել աշնանացանը,— այս բոլորը թվում է հասարակ և սովորական, իսկ այս բոլորը ժամանակին անելու համար հարկավոր է, որ գյուղի բոլոր մարդիկ, մեծից մինչև փոքրը, աշխատեն այդ երեք-չորս շաբաթը եռակի ավելի, քան աշխատում են սովորաբար, սնվելով կվասով, սոխով ու սև հացով, կալսելով ու տուն կրելով դեզերը գիշերով և օրվա մեջ քնին հատկացնելով երկու-երեք ժամից ո՛չ ավելի։ Ու ամեն տարի այդ բանն արվում է ամբողջ Ռուսաստանում։

Իր կյանքի մեծ մասն ապրելով գյուղում և մոտիկ հարաբերության մեջ լինելով ժողովրդի հետ, Լևինը եռուն աշխատանքի ժամանակաշրջանում միշտ զգում էր, որ ժողովրդական այդ ընդհանուր հուզմունքը հաղորդվում է նաև իրեն։

Առավոտվանից նա գնացել էր հաճարի առաջին ցանքսին, գնացել էր վարսակի, որը կրում, դիզում էին, և վերադառնալով տուն՝ կնոջ ու քեռու վեր կենալու ժամին, նա սուրճ խմեց նրանց հետ միասին ու ոտով գնաց ագարակ, որտեղ պետք է գործի դնեին նոր հաստած կալսիչը՝ սերմացու պատրաստելու համար։

Այդ ամբողջ օրը Լևինը խոսելով կառավարչի և մուժիկների հետ, իսկ տանը խոսելով կնոջ հետ, Դոլլիի, նրա երեխաների, աներոջ հետ, մտածում էր միշտ միևնույն խնդրի մասին, ինչը տնտեսական հոգսերից զատ զբաղեցնում էր նրան այդ ժամանակ ու ամեն բանում կապ էր փնտրում իր

հարցի հետ. «Ի՞նչ եմ ես, որտե՞ղ եմ ես և ինչի՞ համար եմ այստեղ»։

Կանգնած հացահատիկների նոր ծածկած ծեծարանի շվաքում, ծղոտե կտուրի բարդենու կեղևահան թարմ գերաններին կպած կաղնյա վանդակապատի մոտ, հոտավետ տերևները դեռ վրան, Լևինը նայում էր բաց դարբասի միջից, որտեղ խռնվում ու խաղում էր կալսման շոր ու դառն փոշին, մերթ վառ արևով լուսավորված կալի կանաչ խոտին և մարագից հենց նոր դուրս բերած թարմ ծղոտին, մերթ խայտաբղետ գլխով սպիտակակուրծք ծիծեռնակներին, որոնք ծվծվոցով թռչում, մտնում էին կտուրի տակ ու թևերը թպրտացնելով, կանգնում էին դարբասի գլխաձողի վրա. մերթ նայում էր մարդկանց բազմությանը, որը վխտում էր մութ ու փոշոտ ծեծարանում, և մտածում էր տարօրինակ բաների մասին։

«Ինչի՞ համար է արվում այս բոլորը,— մտածում էր նա։ — Ինչի՞ համար եմ ես կանգնել այստեղ ու ստիպում եմ նրանց աշխատել։ Ինչո՞ւ են նրանք ամենքն աշխատում ու ջանք են թափում՝ ցույց տալու ինձ իրենց եռանդը։ Ինչո՞ւ է այդպես չարչարվում այդ պառավ Մատրյոնան, իմ ծանոթ կինը (ես բժշկում էի նրան, երբ հրդեհի ժամանակ առաստաղակալ գերանն ընկավ նրա վրա),— մտածում էր նա, նայելով այն նիհար կնոջը, որը փոցխով քաշելով հացահատիկը, արևից սևացած բոբիկ ոտներով լարված քայլում էր անհավասար կոշտ կալում։ Այն ժամանակ Մատրյոնան առողջացավ, բայց եթե ո՛չ այսօր, ապա վաղը, կամ տասը տարուց հետո նրան կթաղեն, ու ոչինչ չի մնա ո՛չ նրանից, ո՛չ էլ կարմիր շրջազգեստով այն պճնամոլ կնոջից, որն այնպիսի ճարպիկ, նուրբ շարժումով զատում է հասկը մղեղից։ Շատ շուտով կթաղեն նրան էլ, այդ ճարտուկ մալած ձին էլ,— մտածում էր նա, նայելով փորը դժվարությամբ տանող և ուռած քթածակերով շուտշուտ շունչ քաշող ձիուն, որը քարշ էր գալիս իր տակից շարժվող թեք անվի գծով։ — Նրան էլ կթաղեն, թափուլատու Ֆյոդորին էլ կթաղեն մղեղով լեցուն իր գանգուր մուրուքով և սպիտակ ուսի վրա պատռված շապիկով։ Իսկ նա ճեղքում էր խրձերը, ինչ-որ բան էր հրամայում, բղավում էր կնիկների վրա և արագ շարժումով ուղղում թափանվի փոկը։ Եվ, որ

գլխավորն է, ո՛չ միայն նրանց, այլև ինձ կթաղեն, ու ոչինչ չի մնա։ Ինչի՞ համար»։

Նա մտածում էր և միաժամանակ նայում էր ժամացույցին, որպեսզի հաշվի, թե ինչքա՛ն կծեծեն մի ժամում։ Նա պետք է գիտենար այդ, որ ըստ այնմ պատվեր տար մի օրվա համար։

«Շուտով կլինի ժամը մեկը, այնինչ նոր միայն սկսեցին երրորդ բարդը»,— մտածեց Լևինը, մոտեցավ Թափուլատուին և իր բղավոցով խլացնելով մեքենայի դղրդոցը, ասաց նրան, որ ավելի դանդաղ տա։

— Շատ ես տալիս, Ֆյոդոր։ Տեսնո՞ւմ ես՝ խցկվում է, դրա համար էլ լավ չի բանում։ Հավասարեցրու։

Քրտնած երեսին նստած փոշուց սևացած Ֆյոդորը բղավեց ինչ-որ բան, որպես պատասխան, բայց էլի անում էր ո՛չ այնպես, ինչպես ուզում էր Լևինը։

Լևինը մոտենալով մեքենայի թմբուկին, հեռացրեց Ֆյոդորին ու ինքն սկսեց տալ։

Աշխատելով մինչև մուժիկների ճաշի ժամը, որին արդեն մնացել էր քիչ ժամանակ, նա Թափուլատուի հետ դուրս եկավ կալսարանից և խոսքի բռնվեց, կանգ առնելով կալում սերմացուի համար կանոնավոր դրած հաճարի դեղին դեզի մոտ։

Թափուլատուն հեռավոր գյուղից էր, այն գյուղից, որտեղ Լևինը հողը տալիս էր արտելային սկզբունքով։ Այժմ հողն այնտեղ վարձով տրված էր բակասպանին։

Լևինը խոսեց Թափուլատու Ֆյոդորի հետ այդ հողի մասին ու հարցրեց, թե արդյոք եկող տարի հողը չի՞ վերցնի Պլատոնը, նույն գյուղի հարուստ և լավ մուժիկը։

— Դինը թանկ է, Պլատոնը տակից դուրս չի գա, Կոնստանտին Դմիտրիչ,— պատասխանեց մուժիկը, հասկերը հանելով քրտնած թևի տակից։

— Հապա ո՞նց է Կիրիլլովը դուրս գալիս։

— Միտյուխայի (այդպես արհամարհալից կոչեց մուժիկը բակասպանին) համար ի՞նչ կա որ, Կոնստանտին Դմիտրիչ։ Նա հուպ կտա, իրենը կստանա։ Քրիստոնյային նա չի մեղքանա։ Համա քեռի Ֆոկանիչը (այդպես կոչեց նա ծերունի Պլատոնին) մի՞թե կաշի կպլոկի մարդու մեջքից։ Մի տեղ

պարտք կթողնի, մի տեղ կբախշի ու էսպես տակից դուրս չի գա։ Կարճ ասած՝ մարդ է։

— Բայց ինչո՞ւ պիտի բախշի։

— Հենց էնպես, ասել կուզի՝ մարդը տարբեր է լինում. մեկն ապրում է միայն իր համար, ոնց որ Միտյուխան, միայն իր փորն է լցնում, իսկ Ֆոկանիչը շիտակ ծերունի է։ Նա ապրում է հոգու համար։ Աստծուն չի մոռանում։

— Ո՞նց թե աստծուն չի մոռանում։ Ո՞նց թե ապրում է հոգու համար,— համարյա ճչաց Լևինը։

— Հայտնի բան է, թե ո՞նց. ապրում է շիտակությամբ, աստծով։ Մարդը տարբեր է լինում, չէ՞։ Վերցնենք թեկուզ հենց ձեզ, դուք էլ մարդու չեք գրկի...

Այո՛, այո՛, մնաս բարով,— ասաց Լևինը, շնչահեղձ լինելով հուզմունքից ու շուռ գալով, վերցրեց իր փայտը և արագ գնաց դեպի տուն։ Լսելով մուժիկի խոսքերն այն մասին, թե Ֆոկանիչն ապրում է հոգու համար, շիտակությամբ, աստծով,— աղոտ, բայց նշանակալից մտքերը խուռն երամով դուրս պրծան ինչ-որ փակ տեղից ու շարունակ մղվելով դեպի մի նպատակ, պտտվեցին նրա գլխում, շլացնելով նրան իրենց լույսով։

XII

Լևինը մեծ քայլերով գնում էր մեծ ճանապարհով, ականջ դնելով ո՛չ այնքան իր մտքերին (նա դեռ չէր կարողանում հասկանալ դրանք), որքան հոգեկան այն կացությանը, որը առաջ երբեք չէր ունեցել։

Մուժիկի ասած խոսքերն առաջացրին նրա հոգում էլեկտրական կայծի գործողություն, որը հանկարծ կերպարանափոխեց և ամբողջական մի պարսի մեջ միավորեց ցաքուցրիվ, անզոր, առանձին այն մտքերը, որոնք մշտապես զբաղեցնում էին նրան նաև այն ժամանակ, երբ նա խոսում էր հողը տալու մասին։

Նա զգում էր իր հոգում ինչ-որ նոր բան և հիացմունքով շոշափում էր այդ նորը, դեռ չիմանալով, թե ի՛նչ է այդ։

«Ապրել ո՛չ թե իր կարիքների համար, այլ աստծո համար։ Բայց ի՞նչ աստծո։ Եվ կարելի՞ էր ասել ուրիշ ավելի անի-

մաստ բան, քան այն, ինչ ասաց նա։ Նա ասաց, թե չպետք է ապրել իր կարիքների համար, այսինքն՝ չպիտի ապրել այն բանի համար, ինչը մենք հասկանում ենք, ինչը գրավում է մեզ, ինչը մենք ուզում ենք, այլ պիտի ապրել ինչ-որ անհասկանալի բանի համար, աստծո համար, որին ոչ ոք չի կարող ո՛չ հասկանալ, ո՛չ էլ որոշել, ձևակերպել։ Եվ հետո ի՞նչ։ Ես չհասկացա՞ Ֆյոդորի այդ անիմաստ խոսքերը։ Թե՞ հասկանալով հանդերձ, կասկածեցի նրանց ճշմարտության վերաբերյալ, համարեցի դրանք տիմա՞ր, անորո՞շ, անճշգրի՞տ։

«Ո՛չ, ես հասկացա նրան ու հասկացա միանդամայն այնպես, ինչպես նա է հասկանում, հասկացա լիովին և ավելի պարզորոշ, քան հասկանում եմ ուրիշ որևէ բան կյանքում ու երբեք իմ կյանքում ես չեմ կասկածել և չեմ կարող կասկածել այդ բանում։ Ու ո՛չ թե միայն ես, այլ ամենքը, ամբողջ աշխարհը լիովին հասկանում են միմիայն այդ և միայն դրանում չեն կասկածում ու միշտ համամիտ են իրար։

«Ֆյոդորն ասում է, որ Կիրիլլով բակապանն ապրում է փորի համար։ Դա հասկանալի է, խոհական։ Մենք ամենքս, որպես բանական էակներ, չենք կարող այլ կերպ ապրել, քան եթե՝ փորի համար։ Ու հանկարծ նույն այդ Ֆյոդորն ասում է, որ փորի համար ապրելը վատ է, որ պետք է ապրել ճշմարտության համար, աստծո համար, և ես մի ակնարկից հասկանում եմ նրան։ Ե՛վ ես, և՛ միլիոնավոր այն մարդիկ, որոնք ապրել են դարեր առաջ ու ապրում են այժմ, մուժիկները, հոգով աղքատները և իմաստունները, դրա մասին մտածող ու գրող անձնավորությունները, որոնք իրենց անորոշ լեզվով ասում են միևնույն բանը,— մենք ամենքս համաձայն ենք միայն այդ բանում, այսինքն՝ ինչի համար ապրել և ի՞նչն է լավ։ Բոլոր մարդկանց հետ միասին ես ունեմ միայն մի հաստատուն, աներկբա և պարզորոշ գիտելիք. ու այդ գիտելիքը չի կարող բացատրվել բանականությամբ. այդ գիտելիքը բանականությունից դուրս է և չունի ո՛չ մի պատճառ ու չի կարող ունենալ ո՛չ մի հետևանք։

«Եթե բարությունն ունի դրդապատճառ՝ նա այլևս բարություն չէ, եթե նա ունի հետևանք՝ վարձատրություն, այլևս բարություն չէ։ Բնականաբար, բարությունը դուրս է պատճառների և հետևանքների շղթայից։

«Եվ հենց այդ գիտեմ ես, գիտենք մենք ամենքս։

«Իսկ ես փնտրում էի հրաշքներ, ափսոսում էի, որ հրաշք չեմ տեսել, որը կարողանար համոզել ինձ։ Եվ ահա՛ հրաշքը, միակ հնարավոր, մշտապես գոյություն ունեցող, ամեն կողմից ինձ շրջապատող հրաշքը, իսկ ես չէի նկատում այն։

«Էլ դրանից ավելի ի՞նչ հրաշք կարող է լինել։

«Մի՞թե ես գտա ամեն բանի լուծումը, մի՞թե վերջացան այժմ իմ տանջանքները»,— մտածում էր Լևինը, քայլելով փոշոտ ճանապարհով ու չնկատելով ո՛չ շոգ, ո՛չ հոգնածություն և զգալով երկար տառապանքի ամոքում։ Նրա զգացումն այնպես խնդագին էր, որ նրան անհավանական էր թվում։ Նա շնչասպառ էր լինում հուզմունքից և անկարող էր այլևս առաջ գնալ, ուստի ճանապարհից դուրս եկավ, մտավ անտառ և նստեց բարդիների ստվերում, չքաղած կանաչ խոտերի վրա։ Նա հանեց գլխարկը քրտնած գլխից ու պառկեց, հենվելով թևին, անտառային հյութեղ, լայնատերև խոտերի մեջ։

«Այո՛, պետք է սթափվել և կշռադատել», մտածում էր նա, շեշտակի նայելով իր դիմացի չտրորած կանաչ խոտին ու հետևելով կանաչ այն բզեզի շարժումներին, որը բարձրանում էր սեզի ցողունով և իր վերելքի միջոցին դեմ առավ այծախոտի տերևին։ Բոլորն սկզբի՞ց,— ասում էր նա ինքն իրեն, շուռ տալով սեզի տերևը, որպեսզի այն չխանգարեր բզեզին, և կոացնելով մի ուրիշ տերև, որ բզեզն անցներ նրա վրա։ — Ի՞նչն է ուրախացնում ինձ։ Ի՞նչ հայտնաբերեցի ես։

«Առաջ ես ասում էի, որ իմ մարմնի մեջ, այդ խոտի և այդ բզեզի մարմնի մեջ (բզեզը չուզեց անցնել խոտի վրա, նա ուղղեց թևերն ու թռավ) կատարվում է նյութի փոխանակություն՝ ֆիզիկական, քիմիական, բնախոսական օրենքների համաձայն։ Իսկ մեր ամենքիս մեջ, բարդիների, ամպերի և միգաբծերի հետ տեղի է ունենում զարգացում։ Զարգացում ինչի՞ց, դեպի ի՞նչը։ Անվերջ զարգացում ու պայքա՞ր, կռի՞վ... Կարծես թե կարող է լինել որևէ ուղղություն և պայքար անհունության մեջ։ Ու ես զարմանում էի, չնայած այդ ուղղությամբ իմ մտքի ամենամեծ լարվածությանը, որ այսուամենայնիվ ինձ համար չի բացվում կյանքի իմաստը, իմ դրդումների և ձգտումների իմաստը։ Իսկ իմ դրդումների իմաստն իմ մեջ այնպես պարզ է, որ ես մշտապես ապրում եմ նրա համե-

մատ, ու ես զարմացա և ուրախացա, երբ մուժիկն ասաց ինձ՝ ապրել աստծո համար, հոգու համար։

«Ես ոչինչ չհայտնաբերեցի։ Ես միայն իմացա այն, ինչ գիտեմ։ Ես հասկացա այն ուժը, որը կյանք է տվել ինձ ո՛չ Ծիմիայն անցյալում, այլև կյանք է տալիս ինձ այժմ։ Ես ազատվեցի խաբեությունից, ես ճանաչեցի տիրոջը»։

Եվ նա ինքն իրեն կարճառոտ կրկնեց իր մտքի ամբողջ ընթացքը վերջին երկու տարվա ժամանակաշրջանում, որի սկիզբն էր մահվան մասին պարզ, բացահայտ միտքը, երբ տեսավ անհուսալի հիվանդ իր սիրելի եղբորը։

Առաջին անգամ այն ժամանակ պարզորեն հասկանալով, որ յուրաքանչյուր մարդու համար, ինչպես նաև իր համար, ապագայում ոչինչ չկար, բացի տառապանքից, մահից ու հավիտենական մոռացությունից, նա վճռեց, որ այդպես ապրել չի կարելի, որ պետք է կամ ի՛ր կյանքը մեկնաբանի այնպես, որպեսզի այն չպատկերանա որպես ինչ-որ դևի չար ծաղր, կամ պետք է ինքնասպանություն գործի։

Սակայն նա չարավ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, այլ շարունակում էր ապրել, մտածել ու զգալ, նույնիսկ հենց այդ ժամանակ ամուսնացավ և ճաշակեց շատ ուրախություն ու երջանիկ էր, երբ չէր մտածում իր կյանքի նշանակության մասին։

Իսկ ի՞նչ էր նշանակում դա։ Դա նշանակում էր, որ նա ապրում էր լավ, բայց մտածում էր վատ։

Նա ապրում էր (առանց գիտակցելու այդ) այն հոգեկան ճշմարտություններով, որ ծծել էր իր մեջ կաթի հետ, իսկ մտածում էր՝ ո՛չ միայն չընդունելով այդ ճշմարտությունները, այլև ուշի-ուշո՛վ խուսափելով դրանցից։

Այժմ նրա համար պարզ էր, որ ինքը կարող էր ապրել միայն շնորհիվ այն հավատալիքների՛, որոնցով դաստիարակվել էր։

«Ի՞նչ կլինեի ես և ինչպե՞ս կապրեի, ինչպե՞ս կանցկացնեի իմ կյանքը, եթե չունենայի այդ հավատալիքները, եթե չիմանայի, որ պետք է ապրել աստծո համար, ոչ թե իր կրքերի։ Ես կթալանեի, կստեի, կսպանեի։ Ինձ համար գոյություն չէր ունենա ոչինչ այն բանից, ինչը կազմում է իմ կյանքի գլխավոր ուրախությունը»։ Եվ երևակայությամբ գործ դնելով ամենամեծ ջանքեր, նա այսուամենայնիվ չէր կարո-

զանում պատկերացնել այն գազան էակը, որ կլիներ ինքը, եթե չիմանար այն, ինչի համար ապրում է։

«Ես փնտրում էի իմ հարցի պատասխանը։ Իսկ հարցիս պատասխան տալ չէր կարող միտքը, միտքն անհամաչափ է հարցին։ Ինձ պատասխան տվեց ինքը՝ կյանքը, իմ իմացությամբ այն բանի, թե ի՛նչը լավ է և ի՛նչը վատ։ Իսկ այդ իմացությունը ես ձեռք չեմ բերել ոչնչով, այլ այն տրված է ինձ ամենի հետ, տրված է այն պատճառով, որ ո՛չ մի տեղից ես չէի կարող ձեռք բերել այն։

«Ես որտեղի՞ց ձեռք բերի այն։ Արդյոք բանականությա՞մբ հասա այն բանին, որ պետք է սիրել մերձավորին ու չխեղդել նրան։ Դա ինձ ասացին մանկության ժամանակ, և ես ուրախությամբ հավատացի, որովհետև ինձ ասացին այն, ինչը կար իմ հոգում։ Իսկ ո՞վ հայտաբերեց դա։ Ո՛չ բանականությունը։ Բանականությունը հայտաբերեց գոյության կռիվը և այն օրենքը, որը պահանջում էր՝ խեղդել բոլոր նրանց, ովքեր խանգարում են իմ ցանկությունների բավարարմանը։ Դա բանականության հետևությունն է։ Իսկ բանականությունը չէր կարող հայտաբերել ուրիշին սիրելու գիտակցություն, որովհետև դա բանական, խոհական բան չէ»։

«Այո՛, գոռոզություն», մտածեց նա, շուռ գալով փորի վրա և սկսեց հանգուցաձև կապել խոտերի ցողունները, աշխատելով չկոտրել դրանք։

«Ու ո՛չ միայն խելքի գոռոզություն, այլև խելքի տխմարություն։ Իսկ, որ գլխավորն է՝ խելքի սրիկայություն, այո՛, իսկապես սրիկայություն։ Իսկապես խելքի խարդախություն», կրկնեց նա։

XIII

Եվ Լևինը մտաբերեց նորերս Դոլլիի ու նրա երեխաների հետ պատահած դեպքը։ Երեխաները մնալով մենակ, սկսում են մորին խորովել մոմերի վրա և կաթը շատրվանի պես լցնել բերանները։ Մայրը վրա հասնելով նրանց այդ բանն անելիս, Լևինի ներկայությամբ սկսեց ներշնչել նրանց, որ մեծերը ծանր աշխատանքով են ձեռք բերում այն, ինչը փչացնում են երեխաները, որ այդ աշխատանքն արվում է նրա՞նց համար, որ եթե նրանք ջարդոտեն գավաթները, թեյ

խմելու ման չեն ունենա, իսկ եթե այդպես թափեն կաթը, ուտելու բան չեն ունենա և կմեռնեն սովից։

Ու Լևինին ապշեցրեց այն հանգիստ, տխուր անվստահությունը, որով երեխաները լսում էին իրենց մոր այդ խոսքերը։ Նրանք վշտացած էին միայն այն բանից, որ վերջացավ իրենց ուշագրավ խաղը, և չէին հավատում իրենց մոր ասածներին։ Նրանք չէին էլ կարող հավատալ, որովհետև չէին կարողանում պատկերացնել ամբողջ ծավալն այն բանի, որից օգտվում էին իրենք, ուստի չէին կարողանում պատկերացնել, որ իրենց ոչնչացրածը հենց այն է, ինչով ապրում են իրենք։

«Այդ բոլորը լինում է ինքն իրեն,— մտածում էին նրանք,— և նրա մեջ ոչինչ չկա հետաքրքրական ու կարևոր, որովհետև դա միշտ եղել է և կլինի։ Ու միշտ նույնն է, միևնույնն է։ Դրա մասին մենք մտածելու կարիք չունենք, դա պատրաստ է. այնինչ, մենք ուզում ենք հնարել մերը, ինչ-որ նոր բան։ Ահա մենք մտածեցինք՝ մորենու պտուղները դնել գավաթի մեջ և տապակել մոմի վրա, իսկ կաթը շատրվանի պես ուղղակի լցնել իրաբ բերան։ Դա ուրախ ու նոր բան է և ամենևին վատ չէ գավաթից խմելուց»։

«Մի՞թե միևնույն բանը չենք անում մենք, չէի՞ անում ես, բանականության միջոցով փնտրելով բնության ուժերի նշանակությունը և մարդու կյանքի իմաստը»,— մտածում էր Լևինը։

«Եվ մի՞թե նույն բանը չեն անում բոլոր փիլիսոփայական տեսությունները, մտքի՞ տարօրինակ, մարդուն ո՛չ հատուկ եղանակով բերելով նրան այն բանի իմացությանը, ինչը վաղուց գիտե մարդը և գիտե այնպես ստույգ, որ առանց դրան չէր էլ կարող ապրել։ Մի՞թե պարզ չի երևում յուրաքանչյուր փիլիսոփայի տեսության զարգացման մեջ, որ ինքը նույնպես աներկբայորեն, ինչպես նաև մուժիկ Ֆյոդորը, և նրանից բնավ ոչ ավելի պարզ կերպով նախապես գիտե կյանքի գլխավոր իմաստը ու մտավոր կասկածելի եղանակով միայն ուզում է վերադառնալ այն բանին, ինչը հայտնի է ամենքին։

«Հապա՞, թողնենք միայն երեխաներին, որպեսզի նրանք իրենք ձեռք բերեն, իրենք շինեն ամանեղենը, իրենք կաթ

կթեն և այլն։ Արդյոք չարաճճիություն կանեի՞ն նրանք նրանք սովից կմեռնեին։ Հապա՞, մեզ թողնեին մեր կրքերով, մտքերով, առանց միասնական աստծո և արարչի հասկացողության։ Կամ առանց բարու հասկացողության, առանց բարոյական չարիքի բացատրության։

«Հապա՞, շինեցեք որևէ բան առանց այդ հասկացողությունների։

«Մենք միայն քանդում, ավերում ենք, որովհետև մենք հոգեպես կուշտ ենք։ Իսկապես երեխանե՞ր։

«Որտեղի՞ց է իմ բերկրալից մուժիկի հետ ընդհանուր գիտելիքը, որը միմիայն տալիս է ինձ հոգու հանգիստ։ Որտեղի՞ց ես վերցրի դա։

«Ես, աստծո հասկացությամբ դաստիարակված քրիստոնյաս, լցնելով ամբողջ իմ կյանքը հոգևոր այն բարիքներով, որ տվել է ինձ քրիստոնեությունը, ամբողջապես տոգորված այդ բարիքներով ու դրանցով ապրող, ես, ինչպես երեխաները, չհասկանալով դրանք, քանդում եմ, այսինքն՝ ուզում եմ քանդել, ոչնչացնել այն, ինչով ապրում եմ։ Իսկ հենց որ հասնում է կյանքի կարևոր բոպեն, ինչպես երեխաները, երբ նրանք զգում են ցուրտ ու քաղց, ես գնում եմ նրա մոտ, և ավելի պակաս, քան երեխաները, որոնց նախատում է մայրը նրանց մանկական չարաճճիությունների համար,— զգում եմ, որ աչքաթող են անում, հաշվի չեն առնում փարթամ կյանքից առաջացած իմ խենթությունները։

«Այո՛, այն, ինչ գիտեմ ես, գիտեմ ո՛չ բանականությամբ, այլ դա տրված է ինձ, հայտնաբերված է ինձ համար, և դա ես գիտեմ սրտով, հավատով առ այն, ինչը դավանում է եկեղեցին։

«Եկեղեցի՞։ Եկեղեցի՞», կրկնեց Լևինը, շուռ եկավ մյուս կողքին և հենվելով թևի վրա, սկսեց նայել հեռուն, այն կողմից գեպի գետն իջնող հոտին։

«Արդյոք չե՞մ կարող ես հավատալ այն բոլորին, ի՞նչ դավանում է եկեղեցին», մտածում էր նա, փորձելով իրեն ու մտաստեղծելով այն բոլորը, ի՞նչը կարող էր այժմ խորտակել իր այժմյան հանգիստը։ Նա դիտմամբ սկսեց մտաբերել եկեղեցու այն ուսմունքները, որոնք միշտ թվում էին նրան ամենից ավելի տարօրինակ ու գայթակղեցնում էին նրան։

«Ստեղծագործությո՞ւնը։ Իսկ ես ինչո՞վ էի բացատրում գոյությունը։ Գոյությա՞մբ։ Ոչնչո՞վ։ Սատանա և մեղք։— Իսկ ինչո՞վ եմ ես բացատրում չարիքը... Փրկի՞չը...

Բայց ես ոչինչ, ոչինչ չգիտեմ ու չեմ կարող իմանալ, քան եթե միայն այն, ինչ ասված է ինձ ամենքի հետ միասին»։

Եվ նրան թվում էր այժմ, թե եկեղեցու հավատալիքներից չկար մեկը, որ չխորտակեր գլխավորը՝ հավատն առ աստված, հավատ առ բարին, որպես մարդու միակ կոչումը։

Եկեղեցու յուրաքանչյուր հավատալիքի տակ կարող էր գրվել ճշմարտությանը ծառայելու հավատը՝ կարիքների փոխարեն։ Եվ յուրաքանչյուր հավատալիք ո՛չ միայն չէր խախտի այդ, այլ անհրաժեշտ կլիներ, որպեսզի կատարվեր այն գլխավոր, երկրի վրա մշտապես երևացող հրաշքը, որ հանգում է այն բանին, որպեսզի հնարավոր լիներ յուրաքանչյուրի համար, միլիոնավոր ամենաբազմապիսի մարդկանց՝ իմաստունների ու խենթերի, երեխաների ու ծերերի հետ միասին, ամենքի՝ մուժիկի, Լվովի, Կիտիի, աղքատների և թագավորների հետ միասին, հասկանալու աներկբայորեն միևնույն բանը և կազմելու հոգու այն կյանքը, միայն որի համար արժե ապրել ու որը միայն մենք գնահատո՛ւմ ենք։

Պառկած մեջքի վրա, նա այժմ նայում էր բարձր, անամպ երկնքին։ Մի՞թե ես չգիտեմ, որ դա անհուն տարածություն է և որ դա կլոր երկնակամար չէ։ Բայց որքան էլ ես կկոցեմ աչքերս ու լարեմ տեսողությունս, չեմ կարող այն չտեսնել ո՛չ-կլոր ու ո՛չ-սահմանափակ և չնայած անհուն տարածության մասին ունեցած իմ իմացությանը, ես անպայման իրավացի եմ, երբ տեսնում եմ կայուն կապույտ երկնակամարը, ես այս դեպքում ավելի իրավացի եմ, քան այն ժամանակ, երբ լարվում եմ՝ տեսնելու նրանից ավելի հեռուն»։

Լևինն արդեն դադարեց մտածելուց և կարծես ականջ էր դնում միայն այն խորհրդավոր ձայներին, որոնք խոսում էին իրար հետ ինչ-որ բանի մասին՝ խնդագին ու մտահոգ։

«Մի՞թե հավատ է դա»,— մտածում էր նա, վախենալով հավատալ իր երջանկությանը։— «Ասված իմ, շնորհակալ եմ քեզանից»,— ասաց նա, կուլ տալով կրծքում բարձրացած հեկեկանքը և երկու ձեռքով սրբելով արցունքով լեցուն աչքերը։

XIV

Լևինը նայում էր իր դիմաց ու տեսնում հոտը, հետո տեսավ իր սայլակը, որին լծել էին Վորոնոյ ձին, տեսավ նաև կառապանին, որը մոտենալով հոտին, ինչ-որ բան ասաց հովվին։ Հետո Լևինը լսեց արդեն իրեն մոտիկ անիվների ձայնը և գեր ձիու փնչոցը. բայց նա այնպես տարված էր մտքերով, որ չմտածեց անգամ, թե ինչո՛ւ է գալիս իր մոտ կառապանը։

Նա հիշեց դա միայն այն ժամանակ, երբ կառապանը բոլորովին մոտենալով, ձայնեց նրան։

— Տիկի՛ն ուղարկեց, եկել է ձեր եղբայրը, հետն էլ մի ուրիշ պարոն։

Լևինը նստեց սայլակի մեջ ու վերցրեց երասանը։

Կարծես քնից արթնացած, Լևինը երկար ժամանակ չէր կարողանում սթափվել։ Նա նայում էր շաղ ձիուն՝ քրտինքը զիստերի միջև ու վզի վրա, որտեղ քսվում էր երասանակը. նա դիտում էր կառապան Իվանին, որը նստել էր կողքին, ու մտաբերում էր, որ ինքը սպասում էր եղբորը, որ կինը հավանորեն անհանգիստ է իր երկար բացակայության պատճառով, և աշխատում էր գուշակել, թե ո՛վ կլիներ եղբոր հետ եկած անհայտ հյուրը։ Ե՛վ եղբայրը, և՛ կինը, և՛ անհայտ հյուրը պատկերանում էին նրան այժմ այլ կերպ, քան առա՛ջ։ Նրան թվում էր, որ իր հարաբերությունները բոլոր մարդկանց հետ այժմ արդեն ուրիշ կլինեն։

«Եղբորս հետ հիմա չի լինի այն խորթացումը, որ միշտ կար մեր միջև, վեճեր չեն լինի։ Կիտիի հետ երբեք ո՛չ մի գժտություն, հյուրի հետ կլինեմ սիրալիր ու բարի, ով էլ լինի նա, սպասավորների, Իվանի հետ ամեն ինչ կլինի ուրիշ»։

Զիգ տված երասանով պահելով անհամբերությունից փնչացող ու կարծես քայլքն ավելացնելու մասին խնդրող լավ ձին, Լևինը նայում էր կողքին նստած Իվանին, որը չգիտեր, թե ի՛նչ անի անգործ մնացած իր ձեռքերը, և շարունակ սեղմելով մարմնին իր փքվող շապիկը, առիթ էր փնտրում խոսակցություն սկսելու նրա հետ։ Նա ուզում էր ասել, որ Իվանը զուր է այդքան բարձրից կապել լծաթամբի միջից անցնող փոկը, բայց դա նման էր հանդիմանության,

մինչդեռ, ինքն ուզում էր սիրալիր խոսակցություն անել։ Իսկ ուրիշ ո՛չ մի բան չէր գալիս նրա մտքին։

— Հրամմեք վերցնել դեպքի աչ, թե չէ՝ քոթուկ է,— ասաց կառապանը, ուղղելով Լևինի բռնած երասանը։

— Խնդրեմ ձեռք չտաս ու չսովորեցնես ինձ,— ասաց Լևինը, սրտնեղած կառապանի այդ միջամտությունից, ճիշտ այնպես, ինչպես միջամտությունը միշտ սրտնեղություն էր պատճառում նրան, և անմիջապես տխրությամբ զգաց, թե ինչպե՛ս սխալ էր իր ենթադրությունը, իբր իր հոգեկան կացությունը կարող էր անմիջապես փոխել իրեն, հենց որ ինքը շփվեր իրականության հետ։

Տանից քառորդ վերստ հեռավորության վրա Լևինը տեսավ իրեն ընդառաջ վազող Գրիշային ու Տանյային։

— Քեռի Կոստյա։ Գալիս են և՛ մայրիկը, և՛ պապիկը, և՛ Սերգեյ Իվանովիչը, և՛ մի ուրիշ մարդ,— ասում էին նրանք, բարձրանալով սայլի վրա։

— Ո՞վ է նա։

— Շատ սարսափելին է։ Ու ձեռքերով ա՛յ, այսպես է անում,— ասաց Տանյան, կանգնելով սայլի մեջ և նմանակելով Կատավասովին։

— Ե՞ր մարդ է, թե՞ չահել,— ծիծաղելով հարցնում էր Լևինը, որին Տանյայի ներկայացնելը հիշեցնում էր մեկին։

«Ա՜խ, միայն թե տհաճ մարդ չլինի», մտածեց Լևինը։ Թեքվելով ճանապարհի ոլորտից ու տեսնելով ընդառաջ եկողներին, Լևինը ճանաչեց ծղոտե գլխարկով Կատավասովին, որը քայլում էր, թևերը թափ տալով ճիշտ այնպես, ինչպես ներկայացնում էր Տանյան։

Կատավասովը շատ էր սիրում խոսել փիլիսոփայությունից, դրա մասին պատկերացում ունենալով այն բնագետների աշխատություններից, որոնք երբեք չէին զբաղվել փիլիսոփայությամբ։ Եվ Մոսկվայում վերջերս Լևինը շատ էր վիճում նրա հետ։

Ու այդպիսի խոսակցություններից մեկը, որի մեջ Կատավասովը հայտնապես կարծում էր, թե ինքը հաղթանակեց, առաջին բանն էր, ինչ հիշեց Լևինը՝ ճանաչելով նրան։

«Ո՛չ, այլևս ո՛չ մի կերպ չեմ վիճի ու թեթևամտորեն չեմ արտահայտի իմ մտքերը», մտածեց նա։

Դուրս գալով սայլակից ու բարևելով եղբորը և Կատավասովին, Լևինը հարցրեց կնոջ մասին։

— Կիտին Միտյային տարավ Կոլոկ (դա տան մոտի անտառն էր։) Ուզում էր երեխային քնացնել այնտեղ, տանը շոգ է,— ասաց Դոլլին։ Լևինը երբեք խորհուրդ չէր տալիս կնոջը՝ երեխային տանել անտառ, համարելով դա վտանգավոր բան, և այդ լուրն անախորժ էր նրա համար։

— Կիտին երեխայի հետ քարշ է գալիս մի տեղից մյուսը,— ասաց իշխանը ժպտալով։— Ես խորհուրդ տվի նրան փորձել երեխային տանել սառցարան։

— Նա ուզում էր գալ մեղվանոց։ Կարծում էր, որ դու այնտեղ ես։ Մենք գնում ենք այնտեղ,— ասաց Դոլլին։

— Հը՜, դո՛ւ ի՞նչ ես անում,— ասաց Սերգեյ Իվանովիչը, ետ մնալով մյուսներից ու հավասարվելով եղբորը։

— Առանձնապես ոչինչ։ Ինչպես միշտ, զբաղվում եմ տնտեսությամբ,— պատասխանեց Լևինը։— Իսկ դո՞ւ ոնց ես, երկա՞ր ժամանակով։ Մենք այնպես վաղուց սպասում էինք քեզ։

— Մի երկու շաբաթով։ Շատ գործ կա Մոսկվայում։

Այս խոսքերն ասելիս եղբայրների աչքերը հանդիպեցին իրար, և Լևինը զգաց, որ իր համար անհարմար է նայել եղբորը, չնայած իր մշտական և այժմ առանձնապես ուժեղ ցանկությանը՝ լինել նրա հետ բարեկամական, իսկ որ գլխավորն է՝ լինել պարզ հարաբերությունների մեջ։ Նա աչքերը ցած գցեց ու չգիտեր, թե ի՞նչ ասի։

Մտորելով խոսակցության այնպիսի նյութեր, որոնք հաճելի լինեին Սերգեյ Իվանովիչին ու հեռացնեին նրան խոսակցությունից, կապված սերբական պատերազմի և սլավոնական հարցի հետ, որի մասին նա ակնարկեց՝ հիշատակելով իր զբաղմունքները Մոսկվայում,— Լևինը խոսեց Սերգեյ Իվանովիչի գրքի մասին։

— Ինչպե՞ս է, ռեցենզիաներ եղա՞ն գրքիդ մասին,— հարցրեց նա։

Սերգեյ Իվանովիչը ժպտաց հարցի կանխամտածվածության համար։

— Ոչ ոք զբաղված չէ դրանով, և ես ուրիշներից ավելի ես,— ասաց նա։— Տեսե՛ք, Դարյա Ալեքսանդրովնա, անձրև

կգա,— ավելացրեց նա, հովանոցով նշելով բարդիների կատարին երևացող սպիտակ ամպերը։

Եվ բավական էին այդ խոսքերը, որպեսզի եղբայրների միջև նորից հաստատվեր իրար նկատմամբ ոչ թե թշնամական, այլ սառը հարաբերությունը, որից այնպես ուզում էր խուսափել Լևինը։

Լևինը մոտեցավ Կատավասովին։

— Ի՜նչ լավ արիք, որ վճռեցիք գալ,— ասաց նրան։

— Վաղուց էի պատրաստվում։ Հիմա կզրուցենք, կվիճենք։ Սպենսեր կարդացի՞ք։

— Ո՛չ, մինչև վերջ չկարդացի,— ասաց Լևինը։— Սակայն նա այժմ պետք չէ ինձ։

— Ինչպե՞ս թե. դա հետաքրքրական է։ Ինչո՞ւ։

— Այսինքն՝ ես վերջնականապես համոզվեցի, որ ինձ հետաքրքրող հարցերի լուծումը չեմ գտնի ո՛չ նրա, ո՛չ էլ նրա նմանների մեջ։ Այժմ...

Բայց Կատավասովի դեմքի հանգիստ և ուրախ արտահայտությունը հանկարծ զարմացրեց նրան, ու նա այնպես ափսոսաց իր տրամադրությունը, որը հայտնապես խախտում էր այդ խոսակցությամբ, որ մտաբերելով իր դիտավորությունը, կանգ առավ։

— Սակայն հետո կխոսենք,— ավելացրեց նա։— Եթե ուզում եք գնալ մեղվանոց, ապա՝ ա՛յս կողմը, ա՛յս շավիղով,— դիմեց նա ամենքին։

Նեղ արահետով հասնելով չհնձած փոքրիկ մարգագետնին, ծածկված մի կողմից ամբողջապես շողշողուն լորահատիկ ծաղկով, որի մեջ հաճախ երևում էին եղեբորոսի մուգ-կանաչ բարձր թփերը, Լևինն իր հյուրերին տեղավորեց մատաղ բարդիների թանձր զով շվաքում, նստարանների և գերանահատածների վրա, որոնք հատուկ պատրաստված էին մեղվանոց եկող, բայց մեղուներից վախեցող այցելուների համար,— ինքը գնաց փեթականոցը, որ երեխաների և մեծերի համար բերի հաց, վարունգ ու թարմ մեղր։

Աշխատելով, որքան հնարավոր է, անել ավելի քիչ արագ շարժումներ և ականջ դնելով ավելի ու ավելի հաճախ իր մոտով թռչող մեղուներին, Լևինը կածանով հասավ խրճիթին։ Նախասենյակի մոտ մի մեղու տզզաց, խճճվեց նրա

մորուքի մեջ, բայց նա զգուշությամբ հանեց, բաց թողեց նրան։ Մտնելով ստվերաշատ նախասենյակը, նա վերցրեց պատի մեջ խփած բրիկից իր դիմացանցը, հագավ այն և ձեռքերը դնելով գրպանները, դուրս եկավ ցանկապատած մեղվանոցը, որտեղ ուղիղ շարքերով, քերծեններով կապված ցցերից, դրված էին հնձած բացատի մեջտեղում հին փեթակները, բոլորն էլ նրան իրենց պատմությամբ ծանոթ, իսկ ցանկապատի տակ շարված էին նոր, այս տարի զատած փեթակները։ Փեթակների անցքերի առաջ աղոտ երևում էին մի տեղում պտույտ եկող և իրար հրնդող, խաղացող մեղուներն ու անաշխատ արուները, և նրանց միջին շարունակ նույն ուղղությամբ՝ դեպի անտառ, դեպի ծաղկած լորենին ու ետ՝ դեպի փեթակները, թռչում էին աշխատավոր մեղուները՝ ծաղկեփոշով և ծաղկեփոշու։

Ականջների մեջ անընդհատ հնչում էին մերթ գործով զբաղված արագ թռչող աշխատավոր մեղվի տզզոցը, մերթ պորտաբույծ արուի դոինչը, մերթ հուզված, իրենց ունեցածը թշնամուց պաշտպանող, խայթելու պատրաստ պահապան մեղուների բզզոցը։ Ցանկապատի այն կողմում ծերունին ոանդում էր հեցը և չէր տեսնում Լևինին։ Լևինն առանց ձայնելու նրան, կանգնեց մեղվանոցի մեջտեղում։

Նա ուրախ էր իր մենակ մնալու համար, որպեսզի ուշքի գար այն իրականությունից, որն արդեն կարողացավ այնպես ճնշել նրա տրամադրությունը։

Նա հիշեց, որ ինքը բարկացավ Իվանի վրա, սառնություն ցույց տվեց եղբորը և թեթևամտորեն խոսեց Կատավասովի հետ։

«Մի՞թե դա միայն բոպեական տրամադրություն էր և կանցնի, առանց հետք թողնելու», մտածեց նա։

Բայց հենց նույն բոպեին վերադառնալով իր տրամադրությանը, նա ուրախությամբ զգաց, որ իր մեջ կատարվել է մի նոր ու կարևոր բան։ Իրականությունը միայն առ ժամ քողապատեց հոգեկան այն հանգիստը, որ գտել էր նա. բայց այն անվթար էր նրա մեջ։

Ճիշտ այնպես, ինչպես մեղուները, որոնք այժմ ոլորտհյուսվում էին նրա շուրջը, սպառնում էին և ուշագրավում նրան, զրկում էին նրան ֆիզիկական լիովին հանգստից.

ստիպում էին նրան կծկվել, խուսափելով նրանցից,— ճիշտ այդպես էլ հոգսերը, շրջափակելով նրան այն բոպեից, երբ նա նստեց սայլակը, զրկում էին նրան հոգեկան ազատությունից. բայց դա շարունակվեց այնքան ժամանակ, մինչ նա նրանց մեջ էր։ Ինչպես մարմնական ուժն ամբողջապես անվթար էր նրա մեջ, չնայած մեղուներին, այնպես էլ անվթար էր նոր գիտակցած նրա հոգեկան ուժը։

— Գիտե՞ս, Կոստյա, թե Սերգեյ Իվանովիչը ո՞ւմ է տեսել այստեղ գալիս,— հարցրեց Դոլլին, երեխաներին բաժանելով վարունգ և մեղր։— Վռոնսկուն։ Նա գնում է Սերբիա։

— Այն էլ ոչ թե մենակ, այլ հետը տանում է մի էսկադրոն իր հաշվին,— ասաց Կատավասովը։

— Դա սազում է նրան,— ասաց Լևինը։— Բայց մի՞թե դեռ էլի գնում են կամավորներ,— ավելացրեց նա, նայելով Սերգեյ Իվանովիչին։

Սերգեյ Իվանովիչը չպատասխանելով, զգուշությամբ դանակի բութ բերանով գավաթից, որտեղ անկյունաձև ընկած էր ասպիտակ մեղրախորիսխը, հանում էր ծորած մեղրի մեջ թաղված դեռ կենդանի մեղուն։

— Այն էլ ինչքա՞ն։ Տեսնելու բան էր, թե ի՞նչ էր՞ կատարվում երեկ կայարանում,— ասաց Կատավասովը, խրթոցով կծելով վարունգը։

— Ինչպե՞ս հասկանալ այդ երևույթը։— Ի սեր Քրիստոսի, բացատրեք ինձ, Սերգեյ Իվանովիչ, ո՞ւր են գնում այդ բոլոր կամավորները, ո՞ւմ հետ են պատերազմում,— հարցրեց ծերունի իշխանը, հայտնապես շարունակելով այն զրույցը, որ սկսվել էր առանց Լևինի։

— Թուրքերի հետ,— հանդարտ ժպտալով պատասխանեց Սերգեյ Իվանովիչը, ազատելով ոտիկներն անճարակորեն շարժող, մեղրից սևացած մեղուն և նստեցնելով նրան դանակի վրայից բարդու ամուր տերևի վրա։

— Իսկ ո՞վ է պատերազմ հայտարարել թուրքերին։ Իվան Իվանովիչ Ռադո՞զովը և իշխանուհի Լիդիա Իվանովնան ու տիկին Շտա՞լը։

— Ո՛չ ոք պատերազմ չի հայտարարել, այլ մարդիկ կարեկցում են իրենց մերձավորների տառապանքներին ու կամենում են օգնել նրանց,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Բայց իշխանն ասում է ո՛չ թե օգնության, այլ պատերազմի մասին,— ասաց Լևինը, պաշտպան կանգնելով անհարազատը։— Իշխանն ասում է, որ մասնավոր մարդիկ չեն կարող մասնակցել պատերազմին առանց կառավարության թույլտվության։

— Կոստյա, տե՛ս, այս մեղո՞ւն։ Իսկապես մեզ կխայթոտեն,— ասաց Դոլլին, ձեռքերի թափահարությամբ պաշտպանվելով պիծակից։

— Դա մեղու չէ, պիծակ է,— ասաց Լևինը։

— Հապա՛, հապա՛, ինչպե՞ս է ձեր տեսությունը,— ժպիտով ասաց Կատավասովը Լևինին, հայտնապես վիճաբանության հրավիրելով նրան։— Ինչո՞ւ մասնավոր մարդիկ իրավունք չունեն։

— Իմ տեսությունն այս է. պատերազմը մի կողմից այնպիսի անասնական, դաժան ու սոսկալի բան է, որ ո՛չ մի մարդ, էլ չեմ ասում՝ քրիստոնյա, չի կարող անձամբ իր պատասխանատվությամբ վերցնել պատերազմ սկսելու նախաձեռնությունը, այլ կարող է միայն կառավարությունը, որը կոչված է դրա համար և հանգում է պատերազմի անխուսափելիորեն։ Մյուս կողմից՝ թե՛ համաձայն գիտության, թե՛ համաձայն առողջ դատողության, պետական գործերում, մանավանդ պատերազմի գործում, քաղաքացիները հրաժարվում են իրենց անհատական կամքից։

Սերգեյ Իվանովիչը և Կատավասովը պատրաստի առարկություններով խոսեցին միաժամանակ։

— Բանն էլ հենց այդ է, բարեկամս, որ կարող են լինել դեպքեր, երբ կառավարությունը չի կատարում քաղաքացիների կամքը, և այն ժամանակ հասարակությունը դրսևորում է իր կամքը,— ասաց Կատավասովը։

Սակայն բացահայտ էր, որ Սերգեյ Իվանովիչը հավանություն չէր տալիս այդ առարկությանը։ Նա խոժոռվեց Կատավասովի խոսքերը լսելիս և ասաց ա՛յլ բան։

— Զուր ես դու հարցը դնում այդպես։ Այստեղ չկա պատերազմի հայտարարում, այլ կա ուղղակի մարդկային քրիստոնեական զգացման արտահայտություն։ Սպանում են եղբայրակիցներին, արյունակիցներին ու դավանակիցներին։

Ենթադրենք, նույնիսկ ո՞չ եղբայրակիցներին, ո՞չ դավանակիցներին, այլ ուղղակի երեխաների, կանանց, ծերերի. զգացմունքը վրդովվում է, և ռուս մարդիկ վազում, գնում են, որպեսզի օգնեն՝ դադարեցնելու այդ սարսափելի չարագործությունը։ Երևակայի՛ր, որ դու գնում ես փողոցով ու տեսնում, որ հարբած մարդիկ ծեծում են մի կնոջ կամ երեխայի. կարծում եմ, դու չես սկսի հարցեր տալ՝ արդյոք պատերազմ հայտարարվա՞ծ է այդ մարդուն, թե՞ չի հայտարարված, այլ վրա կընկնես ու կպաշտպանես տուժողին։

— Այո՛, բայց չէի սպանի,— ասաց Լևինը։

— Ո՛չ, կսպաներիր։

— Չգիտեմ։ Սթե ես տեսնեի այդպիսի բան, ես կզեկավարվեի իմ անմիջական զգացումով, բայց նախապես չեմ կարող ասել։ Եվ այդպիսի անմիջական զգացում սլավոնների հարստահարման վերաբերյալ չկա ու չի կարող լինել։

— Գուցե քե՛զ համար չկա։ Բայց ուրիշների համար կա այդ զգացումը,— դժգոհ խոժոռվելով ասաց Սերգեյ Իվանովիչը։— Ժողովրդի մեջ ողջ են, ապրում են ավանդույթներն այն ուղղափառ մարդկանց մասին, որոնք տառապում են «պիղծ հազարացիների» լծի տակ։ Ժողովուրդը լսեց իր եղբայրների տառապանքների մասին և խոսեց։

— Կարող է պատահել,— խուսափողական տոնով ասաց Լևինը,— բայց ես չեմ տեսնում այդ բանը. ես ինքս ժողովուրդ եմ, և ես չեմ զգում այդ։

— Ես նույնպես,— ասաց իշխանը։ — Ես ապրում էի արտասահմանում, կարդում էի թերթեր և խոստովանում եմ, դեռ բուլղարական արհավիրքներից առաջ ո՛չ մի կերպ չէի հասկանում, թե ինչո՛ւ բոլոր ռուսները հանկարծ այդպես սիրեցին եղբայրակից սլավոններին, իսկ ես ո՛չ մի սեր չեմ զգում իմ մեջ նրանց հանդեպ։ Ես շատ վշտանում էի, մտածում էի, որ այլանդակ մարդ եմ, կամ որ Կարլսբադն է այդպես ներգործում ինձ վրա։ Բայց գալով այստեղ, ես հանգրստացա. ես տեսնում եմ, որ ինձնից զատ՝ կան ուրիշ մարդիկ էլ, որոնք հետաքրքրվում են միայն Ռուսաստանով, ո՛չ թե եղբայր-սլավոններով։ Ահա Կոնստանտինն էլ։

— Անձնական կարծիքներն այստեղ ոչինչ չեն նշանակում,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Ի՞նչ արժեք ունեն անձնական կարծիքները, երբ ամբողջ Ռուսաստանը՝ ժողովո՛ւրդն, արտահայտեց իր կամքը։

— Ներեցեք ինձ։ Ես չեմ տեսնում այդ։ Ժողովուրդը ոչինչ չգիտե, չի էլ ուզում իմանալ,— ասաց իշխանը։

— Ո՛չ, հայրիկ... ինչպե՞ս չէ։ Հապա կիրակի եկեղեցո՞ւմ,— ասաց Դոլլին, որ լսում էր խոսակցությունը։— Խնդրեմ, տաս սրբիչը,— ասաց նա ծերունուն, որը ժպիտով նայում էր երեխաներին։— Հո չի կարող պատահել, որ ամենքը...

— Է՞, ի՞նչ էր կիրակի օրը եկեղեցում։ Քահանային հրամայել էին կարդալ. նա էլ կարդաց։ Նրանք ոչինչ չհասկացան, հառաչում, ախ ու վախ էին անում, ինչպես ամեն քարոզ կարդալիս,— շարունակեց իշխանը։— Հետո նրանց ասացին, թե հոգեփրկիչ գործի համար դրամ են հավաքում եկեղեցում, նրանք էլ մի-մի կոպեկ հանեցին ու տվին։ Իսկ թե ինչի՞ համար՝ նրանք իրենք էլ չգիտեին։

— Ժողովուրդը չի կարող չիմանալ. իր վիճակի գիտակցությունը միշտ կա ժողովրդի մեջ, և ներկայիս նման բոպեներին այդ գիտակցությունը պարզվում է նրա համար,— համոզված ասաց Սերգեյ Իվանովիչը, նայելով՝ ծերունի-մեղվապահին։

Սպիտակախառն սև մորուքով և արծաթափայլ խիտ մազերով գեղեցիկ ծերունին կանգնած էր անշարժ, ձեռքին մեղրով լի գավաթը, իր հասակի բարձրությունից գուրգուրանքով ու հանգիստ նայելով պարոններին, հայտնապես ոչինչ չհասկանալով և չուզենալով հասկանալ։

— Դրուստ էդպես է,— նշանակալից օրորելով գլուխը, ասաց նա Սերգեյ Իվանովիչի խոսքերի առթիվ։

— Ա՛յ, ահա, հարցրեք նրան։ Նա ոչինչ չգիտե, ոչինչ չի կարծում,— ասաց Լևինը։— Միխայլիչ, լսե՞լ ես պատերազմի մասին,— դիմեց նրան։— Հապա ասա, ինչ էին կարդում եկեղեցում։ Ի՞նչ ես կարծում դու։ Պե՞տք է, որ մենք պատերազմենք քրիստոնյաների համար։

— Մեր ի՞նչ կարծելու բանն է։ Ալեքսանդր Նիկոլաևիչ կայսրը մեր տեղակ մտածել է, մեր տեղակ էլ կմտածի ամեն բանում։ Նա մեզնից լավ է տեսնում։ Էլի հաց բերեմ, հա՞։ Երեխանցը էլի տամ, չէ՞,— դիմեց նա Դարյա Ալեքսանդրովնային, նշելով Գրիշային, որն ուտում, վերջացնում էր հացի կեղևը։

— Ես հարցնելու կարիք չունեմ,— ասաց Սերգեյ Իվանովիչը,— մենք տեսանք և տեսնում ենք հարյուր-հարյուրավոր մարդկանց, որոնք թողնում են ամեն ինչ, որպեսզի ծառայեն արդար գործին. նրանք գալիս են Ռուսաստանի բոլոր ծայրերից և ուղղակի ու պարզապես արտահայտում են իրենց միտքն ու նպատակը։ Նրանք նվիրաբերում են իրենց դրոշները կամ իրե՛նք են գնում և ուղղակի ասում են, թե ինչի համար։ Հապա ի՞նչ է նշանակում դա։

— Ըստ իս, նշանակում է,— ասաց տաքանալ սկսող Լևինը,— որ ութսուն միլիոն ժողովրդի մեջ միշտ կգտնվեն ո՛չ թե հարյուրավոր, ինչպես այժմ է, այլ տասնյակ հազարավոր մարդիկ, հասարակական իրենց դիրքը կորցրած, թեթևամիտ, անհոգ մարդիկ, որոնք միշտ պատրաստ են մրտնելու Պուգաչովի ավազակախումբը, գնալու Խիվա, Սերբիա...

— Ես ասում եմ քեզ, ո՛չ թե հարյուրավոր և ո՛չ թե թեթևամիտ անհոգ մարդիկ, այլ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները,— ասաց Սերգեյ Իվանովիչն այնպիսի գրգռմունքով, կարծես նա պաշտպանում էր իր վերջին կարողությունը։— Հապա նվիրաբերությունն՞երը։ Այստեղ արդեն ուղղակի ամբողջ ժողովո՛ւրդն է արտահայտում իր կամքը։

— Այդ «ժողովուրդ» խոսքն այնպես անորոշ է,— ասաց Լևինը։— Վոլոստի գրագիրները, ուսուցիչները, մուժիկներից հազարից մեկը գուցե գիտեն, թե ինչի՞ն է վերաբերում բանը։ Իսկ մնացած ութսուն միլիոնը, Միխայլիչի պես, ո՛չ միայն չի արտահայտում իր կամքը, այլև ոչ մի հասկացողություն չունի, թե ինչի՛ նկատմամբ նա պիտի արտահայտի իր կամքը։ Մենք ի՞նչ իրավունք ունենք ասելու, իբր դա ժողովրդի կամքն է։

XVI

Դիալեկտիկայի մեջ փորձված Սերգեյ Իվանովիչն, առանց առարկելու, անմիջապես խոսակցությունը շրջեց ուրիշ ուղղությանն։

— Եթե դու ուզում ես թվաբանական եղանակով իմանալ ժողովրդի ոգին, հասկանալի է, որ դա շատ դժվար գործ է։ Ձայնատվության օրենք մտցված չէ մեզանում և չի կարող մտցվել, որովհետև այն չի արտահայտում ժողովրդի կամքը, բայց դրա համար կան ուրիշ միջոցներ։ Դա զգացվում է օդի մեջ, դա զգում է սիրտը։ Ես չեմ ասում ստորջրյա այն հոսանքների մասին, որոնք շարժվեցին ժողովրդի կանգնած ծովում և որոնք պարզ են յուրաքանչյուր անկանխակալ մարդու համար. նայիր հասարակությանը բառիս նեղ իմաստով։ Ինտելիգենցիայի շրջանի հազար ու մի կուսակցություններ, առաջ իրար թշնամի, միացել են, միավորվել։ Ամեն տարաձայնություն վերջացած է, հասարակական բոլոր օրգաններն ասում են նույն և միևնույն բանը, ամենքն զգացին տարերային այն ուժը, որ վերցրեց իրենց ու տանում է մի ուղղությամբ։

— Է՜հ, թերթերն են, որ ասում են նույն բանը,— հարեց իշխանը։— Դա ճիշտ է։ Բայց այդ բոլորն արդեն նույնն է, ինչ գորտերը փոթորկից առաջ։ Դրանց պատճառով էլ ոչինչ չի լսվում։

— Արդյոք գորտե՞ր են, թե գորտեր չեն, չգիտեմ, ես թերթեր չեմ հրատարակում և չեմ ուզում նրանց պատշպանել։ Բայց ես ասում եմ ինտելիգենցիայի շրջանում տիրող համամտության մասին։— ասաց Սերգեյ Իվանովիչը, դիմելով եղբորը։ Լևինն ուզում էր պատասխանել, բայց ծերունի իշխանն ընդհատեց նրան։

— Այդ համամտության մասին դեռ կարելի է ուրիշ բան ասել,— խոսեց իշխանը։— Ա՜յ, ես ունեմ մի փեսա, Ստեպան Արկադևիչը, դուք ճանաչում եք նրան։ Նա այժմ ստանում է հանձնաժողովի կոմիտեի և էլի ինչ-որ բանի, ես չեմ հիշում, անդամի պաշտոն։ Միայն անելու բան չկա այնտեղ,— հը՞, Դոլլի, դա գաղտնիք չէ,— իսկ ռոճիկը՝ 8000։ Հապա փորձեցեք, հարցրեք նրան, արդյոք օգտակա՞ր է նրա ծառայությունը, նա ձեզ կապացուցի, որ ամենահարկավոր ծառա-

յությունն է։ Եվ արդարամիտ մարդ է, բայց հո չէ՞ կարելի չհավատալ ութ հազարի օգտակարությանը։

— Հա՜, նա խնդրեց ինձ հայտնել Դարյա Ալեքսանդրովնային՝ այդ պաշտոնն ստանալու մասին,— դժկամորեն ասաց Սերգեյ Իվանովիչը, ենթադրելով, որ իշխանը խոսում է ոչ ի դեպ։

— Այդպես էլ թերթերի համամտությունն է։ Ինձ դա պարզաբանեցին. հենց որ պատերազմ է սկսվում, նրանց եկամուտը կրկնապատկվում է։ Էլ ինչպե՞ս կարող են նրանք չհաշվել, որ ժողովրդի ու սլավոնների վիճակը... և այս բոլորը։

— Շատ թերթեր ես չեմ սիրում, բայց դա անիրավացի է,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ես կդնեի միայն մի պայման,— շարունակեց իշխանը։— Alphonse Karr-ը հիանալի կերպով գրել է դա Պրուսիայի հետ պատերազմ սկսվելուց առաջ։ «Ձեր կարծիքով պատերազմն անհրաժե՞շտ է։ Հրաշալի։ Ովքեր քարոզում են պատերազմ, թող կազմեն առանձին, առաջավոր ջոկատ, և դիմեն գրոհի, հարձակման, ամենքից առաջ անցնելով»։

— Լա՜վ օրի կընկնեն խմբագիրները,— բարձրաձայն ծիծաղելով ասաց Կատավասովը, նրևակայելով իր ծանոթ խմբագիրներին այդ ընտիր լեգիոնի մեջ։

— Ի՞նչ կստացվի դրանից, նրանք կփախչեն,— ասաց Դոլլին,— նրանք կխանգարեն միայն։

— Իսկ եթե կփախչեն, ետևներից կարտեչ կամ կոզակներ դնել , մտրակը ձեռքերին,— ասաց իշխանը։

— Է՜հ, դա կատակ է և վատ կատակ, ներեցեք ինձ, իշխան,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ես չեմ տեսնում, որ դա կատակ լիներ, դա...— սկսեց Լևինը, բայց Սերգեյ Իվանովիչն ընդհատեց նրան։

— Հասարակության յուրաքանչյուր անդամ կանչված է անելու իրեն հատուկ գործը,— ասաց նա։— Եվ մտքի մարդիկ կատարում են իրենց գործը, արտահայտելով հասարակական կարծիքը։ Թե՛ համամտությունը, թե՛ հասարակական կարծիքի լիովին արտահայտությունը մամուլի արժանիքն է և միաժամանակ ուրախալի երևույթ։ Քսան տարի սրանից առաջ մենք կլռեինք, իսկ հիմա լսվում է ռուս ժողովրդի ձայնը, այն ժողովրդի, որը պատրաստ է մի մարդու պես ոտքի կանգնելու և պատրաստ է զոհաբերելու իրեն իր հարստահարված եղբայրների համար. դա խոշոր քայլ է և ուժի առհավատչյա։

— Բայց չէ՞ որ չպետք է միայն զոհաբերել, այլև թուրքեր սպանել,— ասաց Լևինը վեհերոտ։— Ժողովուրդը զոհաբերում է ու պատրաստ է զոհաբերելու իր հոգու համար, և ո՛չ թե սպանության,— ավելացրեց նա, ակամա կապելով խոսակցությունն այն մտքերի հետ, որոնք այնպես զբաղեցնում էին իրեն։

— Ինչպե՞ս թե հոգու համար։ Դա, հասկանո՞ւմ եք դուք, դժվարին արտահայտություն է բնագետի համար։ Այդ ի՞նչ է հոգի ասածդ,— ժպտալով հարցրեց Կատավասովը։

— Ախ, դուք գիտե՞ք։

— Աստված վկա, ո՛չ մի հասկացողություն չունեմ,— բարձր քրքիջով ասաց Կատավասովը։

— Ես բերի ո՛չ թե խաղաղություն, այլ սուր, ասում է Քրիստոսը,— առարկեց Սերգեյ Իվանովիչը, պարզորեն, կարծես ասում էր հասկանալի մի բան, մեջ բերելով ավետարանից այն տեղը, որը միշտ ամենից ավելի էր շփոթեցնում Լևինին։

— Դրուստ էդպես է,— նորից խոսեց նրանց մոտ կանգնած ծերունին, պատասխանելով պատահմամբ իր վրա գցած հայացքին։

— Ո՛չ, բարեկամս, պարտված եք, պարտված, բոլորովին պարտված,— ուրախ բղավեց Կատավասովը։

Լևինը կարմրեց սրտնեղությունից ոչ այն պատճառով, որ ինքը պարտվեց, այլ նրա համար, որ չհամբերեց ու սկսեց վիճել։

«Ո՛չ, չի՛ կարելի, որ ես վիճեմ նրանց հետ,— մտածեց նա,— նրանք հագած են անթափանցելի զրահ, իսկ ես մերկ եմ»։

Նա տեսնում էր, որ չէր կարելի համոզել եղբորն ու Կատավասովին, ավելի ևս քիչ հնարավորություն էր տեսնում իր համար, համաձայնելու նրանց։ Այն, ինչ քարոզում էին նրանք, խելքի այն գոռոզությունն էր հենց, որը քիչ մնաց կործաներ իրեն։ Նա չէր կարող համաձայնել այն բանին, որպեսզի

տասնյակ մարդիկ, դրանց թվում նաև իր եղբայրը, իրավունք ունենային ասելու,— հիմնվելով մայրաքաղաքները եկած հարյուրավոր ճոռոմախոս կամավորների պատմածի վրա,— իբր իրենք թերթերի հետ միասին արտահայտում են ժողովրդի կամքն ու միտքը, և այնպիսի միտքը, որն արտահայտվում է վրեժխնդրությամբ ու սպանությամբ։ Նա չէր կարող համաձայնել դրան, որովհետև չէր տեսնում այդ մտքերի արտահայտությունը ո՛չ ժողովրդի մեջ, որի շրջանում ապրում էր ինքը, ո՛չ էլ այդ մտքերը գտնում էր իր մեջ (իսկ նա իրեն ուրիշ բան համարել չէր կարող, բայց եթե ռուս ժողովուրդը կազմող մարդկանցից մեկը), իսկ, որ գլխավորն է՝ այն պատճառով, որ ժողովրդի հետ միասին ինքն էլ չգիտեր, չէր կարող իմանալ, թե ի՛նչն է ընդհանուր բարիքը։ Բայց հաստատ գիտեր, որ այդ ընդհանուր բարիքին հասնելը հնարավոր է միայն բարու այն օրենքի խստիվ կատարմամբ, որը հայտնի է յուրաքանչյուր մարդու, ուստի չէր կարող ցանկալ պատերազմ ու քարոզել այն ինչ-որ ընդհանուր նպատակների համար։ Նա ասում էր Միխայլիչի և ժողովրդի հետ միասին, որն իր միտքն արտահայտել էր վայրագներին կանչելու հետ կապված ավանդության մեջ. «Ելեք և տիրեցեք մեզ։ Մենք ուրախությամբ խոստանում ենք լիովին հնազանդություն։ Ամբողջ աշխատանքը, բոլոր նվաստացումները, բոլոր զոհաբերությունները մենք վերցնում ենք մեզ վրա. բայց դատում ու վճռում ենք ո՛չ մենք»։ Իսկ հիմա ժողովուրդը, Սերգեյ Իվանովիչի ասելով, հրաժարվել է այնքան թանկ գնով ձեռք բերված այդ իրավունքից։

Նա ուզում էր էլի ասել, որ եթե հասարակական կարծիքը անսխալական դատավոր է, ապա ինչո՞ւ հեղափոխությունը, կոմունան նույնպես օրինական չեն, ինչպես օրինական է շարժումը հօգուտ սլավոնների։ Բայց այս բոլորն այնպիսի մտքեր էին, որ ոչինչ չէին կարող վճռել։ Մի բան անհերքայորեն կարելի էր տեսնել, դա այն էր, որ վիճաբանությունը տվյալ րոպեին գրգռում էր Սերգեյ Իվանովիչին, ուստի դժվար էր վիճելը։ Եվ Լևինը լռեց ու հյուրերի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ ամպերը կիտվեցին և որ ավելի լավ է խուսափել անձրևից ու գնալ տուն։

XVII

Իշխանն ու Սերգեյ Իվանովիչը նստեցին սայլակը և գնացին. մնացած հասարակությունը, արագացնելով քայլերը, ոտքով գնաց դեպի տուն։

Բայց ամպը, մերթ սպիտակելով, մերթ սևանալով, վրա էր գալիս այնպես արագ, որ հարկավոր էր քայլերն էլի ավելացնել, անձրևից առաջ տուն հասնելու համար։ Առաջատար ամպերը, ցածրընթաց ու սև, ինչպես մրախառն ծուխ, արտասովոր արագությամբ վազում էին երկնքով։ Մինչև տուն դեռ կար երկու հարյուր քայլ, բայց արդեն բարձրացավ քամի, և ամեն վայրկյան կարելի էր սպասել անձրևի տարափ։

Երեխաները վախեցած ու ուրախ ճչոցով վազում էին առջևից։ Դարյա Ալեքսանդրովնան դժվարությամբ սլայքարելով իր ոտքերին կպած շրջազգեստի հետ, ո՛չ թե քայլում, այլ վազում էր, աչք չհեռացնելով երեխաներից։ Տղամարդիկ ձեռքով գլխարկները բռնած, գնում էին խոշոր քայլերով։ Նրանք արդեն արտաքին սանդուղքի մոտ էին, երբ մի մեծ կաթիլ զարնվեց երկաթե ճոռի ափին ու փշրվեց։ Երեխաները, նրանց ետևից նաև մեծերը, խինդ ու խոսքով վազեցին, մտան տանիքի պաշտպանության տակ։

— Ո՞ւր է Կատերինա Ալեքսանդրովնան.— հարցրեց Լևինը Ագաֆյա Միխայլովնային, որը, ձեռքին աղլուխներ ու պլեդներ, հանդիպեց նախասենյակում։

— Մենք կարծում էինք, ձեզ հետ է,— ասաց Միխայլովնան։

— Իսկ Մի՞տյան։

— Կոլոկում է, երևի, դայակն էլ նրանց հետ է։

Լևինը խլեց պլեդները ու վազեց դեպի Կոլոկ։

Այդ կարճ միջոցին տարափարեր ամպն իր մեջտեղով այնքան առաջացավ ու ծածկեց արևը, որ մթնեց, ինչպես խավարման ժամանակ։ Քամին համառաբար, կարծես թե պընդելով իրենը, կանգնեցնում էր Լևինին և պոկելով լորենիների տերևներն ու ծաղիկը և այլանդակորեն ու տարօրինակաբար մերկացնելով կեչիների սպիտակ ճյուղերը, կռացնում էր դեպի մի կողմ ամեն ինչ՝ ակացիաները, ծաղիկները, կռատուկնե-

ը, կանաչ խոտը և ծառերի կատարները։ Այգում աշխատող աղջիկները վժժոցով վազեցին, մտան ծառայանոցի տանիքի տակ։ Տեղատարափ անձրևի սպիտակ վարագույրն արդեն բռնեց ամբողջ հեռավոր անտառն ու մոտիկ դաշտի կեսը և արագ մոտենում էր Կոլոկին։ Օդի մեջ զգացվում էր մանր կաթիլների փոխված անձրևի խոնավությունը։

Գլուխը կռացնելով առաջ ու պայքարելով քամու դեմ, որը խլում էր նրանից գլխաշորերը, Լևինն արդեն մոտեցել էր Կոլոկին և արդեն տեսնում էր կաղնու ետևում սպիտակին տվող ինչ-որ բան, երբ հանկարծ բռնկվեց, բոցավառվեց ամբողջ երկիրը ու կարծես նրա գլխի վրա ճաքեց երկնակամարը։ Բացելով շլացած աչքերը, Լևինն անձրևի թանձր վարագույրի միջից, որն այժմ բաժանում էր նրան Կոլոկից, սարսափով տեսավ ամենից առաջ տարօրինակաբար իր դիրքը փոխած՝ նրան ծանոթ կաղնու կանաչ կատարը անտառի մեջտեղում։ «Մի՞թե շարժեց», հազիվ կարողացավ մտածել Լևինը, երբ կաղնու կատարը շարունակ արագացնելով ու արագացնելով իր շարժումը, ծածկվեց մյուս ծառերի ետևում, և նա լսեց ուրիշ ծառերի վրա ընկած մեծ ծառի թրխկոցը։

Կայծակի լույսը, որոտի ձայնը և մի անթարթում սառնությամբ համակված մարմնի զգացողությունը Լևինի համար միախառնվեցին սարսափի տպավորության մեջ։

— Աստվա՜ծ իմ, աստված իմ, միայն թե ո՞չ նրանց վրա,— բացականչեց նա։

Ու թեև նա անմիջապես մտածեց այն մասին, թե այժմ իմաստ չունի իր խնդիրը, որպեսզի նրանք չսպանվեին արդեն ընկած կաղնուց, բայց նա կրկնում էր խնդիրը, իմանալով, որ այդ անիմաստ աղոթքից բացի ուրիշ ոչինչ անել չի կարող ինքը։

Վազելով մինչև այն տեղը, որտեղ սովորաբար լինում էին նրանք, Լևինը նրանց չգտավ։

Նրանք անտառի մյուս ծայրին էին, հին լորենու տակ, և կանչում էին նրան։ Երկու ֆիգուրներ մուգ զգեստներով (նրանք առաջ բացգույն զգեստով էին), կռացած մի բանի վրա, կանգնել էին։ Կիտին և դայակն էին դրանք։ Անձրևն արդեն դադարում էր և սկսում էր լուսանալ, երբ Լևինը մոտ վազեց նրանց։ Դայակի զգեստի ցածի մասը չոր էր, բայց

Կիտիի զգեստը բոլորովին թաց էր ու ամբողջովին կպել էր մարմնին։ Թեև այլևս անձրև չկար, բայց նրանք դեռ կանգնած էին նույն դիրքով, ինչ դիրքով կանգնեցին, երբ պայթեց փոթորիկը։ Երկուսն էլ կանգնել էին, կռացած դեպի ձեռնասայլակը՝ կանաչ հովանոցով։

— Ո՞ղջ եք։ Առո՞ղջ եք։ Փա՜ռք աստծո,— ասաց նա, ջրով լի կոշիկը շփփացնելով դեռ կանգուն ջրի մեջ ու մոտ վազելով նրանց։

Կիտիի կարմիր ու թաց դեմքը դարձած էր դեպի նա և երկչոտությամբ ժպտում էր ձեր փոխած գլխարկի տակից։

— Բա խիղճ չունե՞ս դու։ Ես չեմ հասկանում, ինչպե՜ս կարելի է այդպես անզգույշ լինել,— սրտնեղությամբ հարձակվեց նա կնոջ վրա։

— Աստված վկա, ես մեղավոր չեմ։ Հենց որ ուզեցի հեռանալ այստեղից, երեխան շուռումուռ եկավ։ Պետք էր փոխել նրա բարուրները։ Մենք հենց որ...— սկսեց ներողություն խնդրել Կիտին։

Միտյան անվնաս էր, չոր և քնել էր անխռով։

— Է՜հ, փառք աստծո, ես չգիտեմ, ինչ եմ ասում։

Հավաքեցին թաց բարուրները, դայակը հանեց երեխային ու տարավ ձեռքի վրա։ Լևինը գնում էր կնոջ կողքից, մեղավոր զգալով իրեն իր սրտնեղության համար և դայակից թաքուն սեղմեց Կիտիի ձեռքը։

XVIII

Ամբողջ օրվա ընթացքում, ամենաբազմապիսի խոսակցությունների միջոցին, որոնց Լևինը մասնակցում էր իր խելքի կարծես միայն արտաքին կողմով, շարունակ լսում էր ուրախ զգացումով իր սրտի լիությունը, չնայած իր հիասթափությանն այն փոփոխության նկատմամբ, որ պետք էր տեղի ունենար իր մեջ։

Անձրևից հետո գետինը չափազանց թաց էր, ուստի չէր կարելի գնալ զբոսանքի. բացի դրանից, մրրկաբեր ամպերն էլ չէին հեռանում հորիզոնից և անցնում էին երկնքի ափերով.

մերթ այնտեղ, մերթ այստեղ, գոռգոռալով ու սևանալով։ Ամբողջ հասարակությունը օրվա մնացած մասն անցկացրեց տանը։

Վիճաբանություններ այլևս չէին ծագում, ընդհակառակն, ճաշից հետո ամենքը շատ լավ տրամադրության էին։

Կատավասովն սկզբում ծիծաղեցնում էր կանանց իր օրիգինալ կատակներով, որոնք միշտ այնպես դուր էին գալիս՝ նրա հետ առաջին ծանոթության միջոցին, բայց հետո, Սերգեյ Իվանովիչի դրդմամբ, նա սկսեց պատմել իր հետաքրքրքրական դիտողությունները տնային արու և էգ ճանճերի բնավորության, նույնիսկ կերպարանքի տարբերության ու նրանց կյանքի մասին։ Սերգեյ Իվանովիչը նույնպես ուրախ էր, և թեյի ժամանակ, եղբոր դրդմամբ, նկարագրեց իր հայեցակետն արևելյան հարցի ապագայի վերաբերյալ, և այնպես պարզ ու լավ, որ ամենքը հրապուրված լսում էին նրան։

Կիտին միայն չկարողացավ մինչև վերջ լսել Սերգեյ Իվանովիչին, նրան կանչեցին Միտյային լողացնելու։

Կիտիի դուրս գնալուց մի քանի րոպե հետո Լևինին էլ կանչեցին նրա մոտ՝ մանկասենյակ։

Թողնելով իր թեյը և նույնպես ափսոսալով հետաքրքրական խոսակցությունն ընդհատելու համար, միաժամանակ անհանգստանալով, թե ինչո՞ւ էին կանչում իրեն, որովհետև դա պատահում էր միայն կարևոր դեպքերում, Լևինը գնաց մանկասենյակ։

Չնայած որ Լևինին չափազանց հետաքրքրեց, որպես նրա համար կատարյալ նորություն, Սերգեյ Իվանովիչի մինչև վերջ չլսած ծրագիրն այն մասին, թե ինչպես սլավոնների քառասուն միլիոնանոց ազատագրված աշխարհը պետք է նոր զարաշրջան սկսի պատմության մեջ, չնայած որ նրան հուզում էր և՛ հետաքրքրությունը, և՛ անհանգստությունն այն մասին, թե ինչո՞ւ կանչեցին իրեն, բայց հենց որ նա մնաց մենակ, դուրս գալով ընդունարանից, անմիջապես հիշեց առավոտվա իր մտքերը։ Եվ բոլոր այդ նկատառումները սլավոնական տարրի նշանակության մասին համաշխարհային պատմության մեջ՝ թվացին նրան այնքան չնչին իր հոգում կատարվող հեղաշրջման համեմատությամբ, որ նա վայրկենապես մոռացավ այդ բոլորը և մտափոխվեց նույն տրամադրության մեջ, որով համակված էր այսօր առավոտյան։

Նա այժմ չէր հիշում իր մտքերի ամբողջ ընթացքը (դա պետք չէր նրան), ինչպես լինում էր առաջ։ Նա մեկեն փոխադրվեց այն զգացումի մեջ, որը ղեկավարում էր իրեն, որը կապված էր այդ մտքերի հետ, և գտավ իր հոգում այդ զգացումն է՛լ ավելի ուժեղ ու որոշակի, քան առաջ։ Այժմ նրա հետ չպատահեց այն, ինչ լինում էր առաջվա մտացածին հանդարտեցումների դեպքում, երբ պետք էր վերականգնել մտքի ամբողջ ընթացքը, որպեսզի կարելի լիներ գտնել զգացումը։ Այժմ, ընդհակառակն, ուրախության ու հանգստացման զգացումն ավելի վառ էր, քան առաջ, և միտքը չէր հասնում զգացման ետևից։

Նա գնում էր տեռասով ու նայեց արդեն մթնած երկընքում երևացած երկու աստղերին և հանկարծ հիշեց. «Այո՞, նայելով երկնքին, ես մտածում էի, թե երկնակամարը, որ տեսնում եմ, սուտ բան չէ, միևնույն ժամանակ ինչ-որ բան ես չէի մտածում մինչև վերջ, ինչ-որ բան թաքցնում էի ինքս ինձնից,— մտածեց նա։ — Բայց ինչ էլ լինի, առարկություն չի կարող լինել։ Բավական է միայն մտածել,— և ամեն բան կպարզվի»։

Արդեն մտնելով մանկասենյակ, նա հիշեց, թե ի՞նչն էր այն, որն ինքը թաքցնում էր իրենից։ Այդ այն էր, որ եթե աստվածության գլխավոր ապացույցը նրա հայտնությունն է բարու մասին, ապա ինչո՞ւ այդ հայտնությունը սահմանափակվում է միայն քրիստոնեական եկեղեցով։ Ի՞նչ կապ ունեն այդ հայտնության հետ հավատալիքները բուդդայականների, մահմեդականների, որոնք նույնպես դավանում և անում են բարություն։

Նրան թվում էր, որ ինքը պատասխան ունի այդ հարցին, բայց չհասցնելով ինքն իր համար պարզելու այն, արդեն մտավ մանկասենյակ։

Կիտին, թևերը քշտած, կանգնել էր վաննայի մոտ, կռացած նրա մեջ ճղփացող երեխայի վրա և լսելով ամուսնու քայլերը, երեսը շուռ տալով դեպի նա, ժպիտով կանչում էր նրան իր մոտ։ Մի ձեռքով Կիտին տակի կողմից բռնել էր մեջքի վրա լողացող ու փամփլիկ տոտիկները կորացրած երեխային,

մյուսով՝ համաչափորեն լարելով մկանը, մզում էր նրա վրա սպունգը։

— Ա՜յ, ահա, տե՛ս, տե՛ս,— ասաց նա, երբ ամուսինը մոտեցավ նրան։ — Ագաֆյա Միխայլովնան իրավացի է, ճանաչում է։

Խոսքը նրա մասին էր, որ Միտյան այսօրվանից արդեն անկասկած ճանաչում էր բոլոր յուրայիններին։

Հենց որ Լևինը մոտեցավ վաննային, նրան անմիջապես ցույց տվին փորձը, և փորձը լիովին հաջողվեց։ Խոհարարուհին, որին դիտմամբ կանչեցին նրա համար, կռացավ դեպի երեխան։ Վերջինս խոժոռվեց ու բացասաբար ճոճեց գլուխը։ Կիտին կռացավ դեպի նա,— երեխայի դեմքին փայլեց մի ժպիտ, նա իր թաթիկներով բռնեց սպունգը և շրթունքները ճպպացրեց, արձակելով այնպիսի գոհունական ու տարօրինակ ձայն, որ անակնկալ հիացան ո՛չ միայն Կիտին ու դայակը, այլև Լևինը։

Երեխային հանեցին վաննայից, բռնած նրան մի ձեռքով, վրան չուր լցրին, փաթաթեցին սավանի մեջ, սրբեցին և սուր ճչոցից հետո տվին մորը։

— Ես ուրախ եմ, որ դու սկսում ես սիրել նրան,— ասաց Կիտին ամուսնուն, երբ երեխային սեղմած կրծքին, հանգիստ նստեց սովորական տեղը։ — Ես շատ ուրախ եմ, Թե չէ՝ դա արդեն սկսում էր վշտացնել ինձ։ Դու ասում էիր, որ ոչինչ չես զգում երեխայի հանդեպ։

— Ո՛չ, մի՞թե ասում էի, որ չեմ զգում։ Ես միայն ասում էի, որ հիասթափվեցի։

— Ինչպե՞ս, հիասթափվե՞լ նրանից։

— Ոչ թե հիասթափվեցի նրանից, այլ մի զգացումից, ես ավելին էի սպասում։ Ես սպասում էի, որ սյուրպրիզի պես կբացվի իմ մեջ մի նոր, հաճելի զգացում, Եվ հանկարծ դրա փոխարեն՝ զարշանք, խղճահարություն...

Կիտին, երեխան գրկում, ուշադրությամբ լսում էր ամուսնուն, դնելով բարակ մատներին մատանիները, որ հանել էր Միտյային լողացնելու ժամանակ։

— Ու, որ գլխավորն է, շատ ավելի մեծ էր վախի և խղճահարության, քան բավականության զգացումը։ Այսօր փոթորկի ժամանակ իմ զգացած վախից հետո ես հասկացա, թե ինչպես սիրո՞ւմ եմ նրան։

Կիտիի դեմքը փայլեց ժպիտով։

— Շատ վախեցար, հա՞,— հարցրեց նա։— Ես էլ, բայց ինձ համար ա՛յժմ ավելի սարսափելի է, երբ արդեն վտանգն անցել է։ Ես կգնամ, կնայեմ կաղնին։ Ի՞նչ լավն է Կատավասովը։ Եվ առհասարակ ամբողջ օրն այնպես հաճելի էր։ Դու էլ այնպես լավ ես լինում Սերգեյ Իվանովիչի հետ, երբ ուզում ես... Դե՞, գնա՛ նրանց մոտ։ Թե չէ վաննայից հետո այստեղ այնպես շոգ է և գոլորշի...

XIX

Դուրս գալով մանկասենյակից ու մնալով մենակ, Լևինն անմիջապես նորից համակեց այն միտքը, որի մեջ կար անորոշ մի բան։

Փոխանակ գնալու ընդունարան, որտեղից լսվում էին ձայներ, նա կանգնեց տեռասում և հենվելով ճաղերին, սկսեց նայել երկնքին։

Արդեն բոլորովին մթնել էր, և հարավում, դեպի ուր նայում էր նա, ամպեր չկային։ Ամպերը կուտակված էին հակառակ կողմում։ Այնտեղ բոցկլտում էր կայծակը և լսվում էր հեռավոր որոտ։ Լևինը ականջ էր դնում լորենիների վրայից այգու մեջ համաչափորեն թափվող կաթիլների ծլծլթոցին ու նայում էր աստղերի իրեն ծանոթ եռանկյունուն և նրա մեջտեղով անցնող ծիր-կաթինն՝ իր ճյուղավորումներով։ Ամեն անգամ կայծակը բոցկլտալիս չքանում էր ո՛չ միայն ծիր-կաթինը, այլև չքանում էին պայծառ աստղերը, բայց հենց որ հանգչում էր շանթը, կրկին նրանք երևում էին նույն տեղում, կարծես նրանց շաղ էր տալիս մի դիպուկ ձեռք։

«Հապա ի՞նչն է շփոթեցնում ինձ», ասաց ինքն իրեն Լևինը, նախապես զգալով, որ հոգում արդեն պատրաստ է իր կասկածների լուծումը, թեև ինքը դեռ չգիտե այդ։

«Այո՛, աստվածության միակ ակներև, աներկբա արտահայտումը բարու օրենքներն են, որոնք ցույց են տրված աշխարհին հայտնության միջոցով և որոնք ես զգում եմ իմ մեջ ու որոնց ընդունումով ես ոչ թե միանում եմ, այլ կամա-ակա-

մա միացած եմ մյուս մարդկանց — հավատացողների մի համայնքի մեջ, որ կոչում են եկեղեցի։ Է՞, հապա հրեանե՞րը, մահմեդականնե՞րը, կոնֆուցիականնե՞րը, բուդդայականները՝ ի՞նչ են նրանք,— տվեց նա ինքն իրեն այն հարցը, որը նրան թվում էր նաև վտանգավոր։ — Մի՞թե այդ հարյուր միլիոնավոր մարդիկ զրկված են այն լավագույն բարիքից, առանց որի իմաստ չունի կյանքը»։ Նա մտասուզվեց, բայց և անմիջապես ուղղեց իրեն. «Սակայն, ինչի՞ մասին եմ ես հարցնում,— մտածեց նա։ — Ես հարցնում եմ աստվածության նկատմամբ ամբողջ մարդկության բազմապիսի բոլոր հավատալիքների վերաբերմունքի մասին։ Ես հարցնում եմ աստծո ընդհանուր հայտնության մասին ամբողջ աշխարհի համար՝ այս բոլոր միգապատ բծերով։ Իսկ ի՞նչ եմ անում ես։ Անձամբ ինձ համար, իմ սրտի համար աներկբայորեն գտնված է այն իմացությունը, որ անհասանելի է բանականությանը, իսկ ես համառաբար ուզում եմ բանականությամբ ու բառերով արտահայտել այդ իմացությունը»։

«Մի՞թե ես չգիտեմ, որ աստղերը չեն շրջում,— ասաց նա ինքն իրեն, նայելով այն պայծառ մոլորակին, որն արդեն փոխել էր դիրքը դեպի կեչիի բարձրագույն ճյուղը։ — Բայց ես, դիտելով աստղերի շարժումը, չեմ կարող պատկերացնել ինձ երկրի պտույտ գալը, ուստի իրավացի եմ, ասելով, թե շրջում են աստղերը։

«Ու մի՞թե աստղագետները կարող էին հասկանալ և հաշվել որևէ բան, եթե նրանք նկատի ունենային երկրի բարդ, բազմապիսի բոլոր շարժումները։ — Երկնային մարմինների տարածության, քաշի, շարժումների և խոտորումների մասին նրանց հանած բոլոր զարմանալի հետևությունները հիմնված են անշարժ երկրի շուրջը լուսատուների տեսանելի շարժման վրա միայն, հենց այն շարժման վրա, որը հիմա իմ առաջ է և որն այդպես էր միլիոնավոր մարդկանց համար դարերի ընթացքում ու եղել է և կլինի միշտ միակերպ ու միշտ կարող է ստուգվել։ Եվ ճիշտ այնպես, ինչպես պարապ ու խախուտ կլիներին աստղագետների՝ տեսանելի երկնքի դիտողությունների վրա չհիմնված եզրակացությունները միջօրեագծի ու մի հորիզոնի վերաբերյալ, այդպես էլ պարապ ու խախուտ կլիներին նաև իմ եզրակացությունները, չհիմնված բարու այն

հասկացողության վրա, որն ամենքի համար միշտ եղել է և կլինի միակերպ ու որը հայտագործվել է ինձ համար քրիստոնեության միջոցով և միշտ կարող է ստուգվել իմ հոգում։ Իսկ մյուս հավատալիքների ու աստծո հանդեպ նրանց վերաբերմունքի հարցը լուծելու իրավունք և հնարավորություն չունեմ ես»։

— Ա՜, դու չգնացի՞ր,— լսվեց հանկարծ Կիտիի ձայնը, որը նույն ճանապարհով գնում էր ընդունարան։ — Ի՞նչ կա, հո ոչինչ չի՞ վրդովել քեզ,— հարցրեց նա, աստղերի լույսով ուշադրությամբ պննելով ամուսնու դեմքը։

Բայց Կիտին կարգին չէր տեսնի նրա դեմքը, եթե կայծակը նորից չլուսավորեր այն, ծածկելով աստղերը։ Կայծակի լույսով Կիտին պննեց նրա դեմքը և տեսնելով, որ նա հանգիստ է ու խնդագին, ժպտաց նրան։

«Նա հասկանում է,— մտածում էր Լևինը,— նա գիտե, թե ինչի՞ մասին եմ մտածում ես։ Ասե՞մ նրան, թե՞ չասեմ։ Այո՛, կասեմ»։ Բայց այն բոպեին, երբ Լևինը ուզում էր խոսել, խոսեց նաև Կիտին։

— Ահա՜, թե ի՞նչ, Կոստյա։ Բարի եղիր,— ասաց նա,— գնա անկյունի սենյակը և տես, արդյոք ամեն ինչ պատրաստե՞լ են Սերգեյ Իվանովիչի համար։ Ինձ անհարմար է։ Արդյոք դրե՞լ են նոր լվացարան։

— Լա՜վ, անպայման կգնամ,— ասաց Լևինը, վեր կենալով ու համբուրելով կնոջը։

«Ո՛չ, պետք չէ ասել,— մտածեց Լևինը, երբ Կիտին առաջ անցավ նրանից։ — Դա գաղտնիք է, միայն ինձ համար պետքական, կարևոր և բառերով անարտահայտելի գաղտնիք։

«Այդ նոր զգացումը չփոխեց ինձ, չերջանկացրեց, չլուսավորեց ինձ հանկարծ, ինչպես փափագում էի ես,— այնպես, ինչպես և դեպի որդիս տածած զգացումը։ Չկար նույնպես ո՛չ մի սյուրպրիզ։ Իսկ դա հավատ է, թե հավատ չէ, ես չգիտեմ, բայց այդ զգացումը նույնպես աննկատելիորեն մուտք գործեց իմ հոգու մեջ տառապանքներով և ամուր նստեց այնտեղ։

«Այսուհետև էլ նույնպես կբարկանամ Իվան կառապանի վրա, նույնպես կվիճեմ, ո՛չ ի դեպ կարտահայտեմ իմ մըտ-

քերը, նույնպես պատնեշ կլինի իմ հոգու սուրբ սրբոցի և ուրիշների, նույնիսկ իմ կնոջ միջև, նույնպես կմեղադրեմ նրան իմ սարսափի համար ու ապա կզղջամ, նույնպես չեմ հասկանա բանականությամբ, թե ինչի՞ համար եմ աղոթում և կաղոթեմ, բայց իմ կյանքը, այժմ իմ ամբողջ կյանքը, անկախ այն բոլորից, ինչ կարող է պատահել ինձ հետ, նրա յուրաքանչյուր թոպեն ո՛չ միայն անիմաստ չէ, ինչպես առաջ էր, այլ ունի բարու աներկբա իմաստ, որպիսին նրա մեջ ամփոփելու իշխանություն ունեմ ես։

ՎԵՐՋ

1873—1877

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ մաս 5
Վեցերորդ մաս 159
Յոթերորդ մաս 318
Ութերորդ մաս 451

ԼԵՎ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ ՏՈԼՍՏՈՅ

Աննա Կարենինա

Վեպ

Հատոր երկրորդ

ТОЛСТОЙ ЛЕВ НИКОЛАЕВИЧ
Анна Каренина
Роман
Том второй
(На армянском языке)

Издательство «Советакан грох»,
ЕРЕВАН—1979

Խմբագիր՝ Դ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Գ. Գասպարյան

ИБ № 2290

Հանձնված է շարվածքի 12.02.79։ Ստորագրված է տպագրության 17.07.79։ Ձևաչափ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 27,3 պայմ. տպագր. մամ., հրատ. 23,7 մամ.։

Գատվեր 550։ Տպաքանակ 50 000։ Գինը՝ 2 ռ. 30 կ.։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван—9,
ул. Теряна, 91.

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван—9, ул. Теряна, 91.

Ռուս դասականների գրադարան մատենաշարով տուտով լույս են տեսնելու.

Վ. Գ. Բելինսկի, Ն. Ա. Դոբրոլյուբով, Ն. Գ. Չերնիշևսկի — *Հատընտիր*

Ֆ. Մ. Դոստոևսկի — *Ոճիր և պատիժ*

Ի. Ա. Գոնչարով — *Օբլոմով*

Ի. Ս. Տուրգենև — *Ընտիր երկեր*

Մ. Յու. Լերմոնտով — *Ընտիր երկեր*

Ա. Ա. Բլոկ, Ս. Ա. Եսենին — *Բանաստեղծություններ*